9(47.925)1
Դ-52

ԴԻՒԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Ժ.

ՄԱՆՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ԺԵ—ԺԹ ԴԱՐ

3108
A III/2436

Կենսագրական տեղեկութիւններով եւ ծանօթութիւններով

Հրատարակեց

ԳԻՒՏ ԱՂԱՆԵԱՆՑ Ա. ՔՀ.

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԻՄԱՏԻՊ ԿՈՆԴԱԿՈՎ

Տպուած բարեյիշատակ Աղէքսանդր Ե. Մանթաշեանի կտակած գումարով

Թ Ի Ֆ Լ Ի Ս
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՕԼԻՑ. 7.
1912

Архивъ Армянской Исторіи

Собраніе историческихъ документовъ

Издается съ 1893 года подъ редакціей прот. Гюта АГАНЬЯНЦА

Вышли

Книга I—II. Исторія происшествій 1780—1834 г. и возникновенія Эчміадзинскаго Синода.

„ III. Дневникъ Католикоса Семена ч. I. съ біографическимъ очеркомъ.

„ IV. Католикосъ Гукасъ ч. I. 1780—1800 съ біогр. очеркомъ.

„ V. Католикосъ Даніилъ 1800—1808.

„ VI. Католикосъ Давидъ, ч. I. 1801—2.

„ VII. Тоже, ч. II. 1803—4. съ историческимъ очеркомъ.

„ VIII. Дневникъ Католикоса Семена ч. II. 1767—1776.

„ IX. Католикосъ Іосифъ Аргутинскій ч. I. 1778—1800.

„ X. XV—XIV вѣковъ исторіи мемуары.

Всѣ книги снабжены копіями рисунковъ и историческихъ документовъ съ примѣчаніями и приложеніями.

Готовы для печати

Книга XI. Дневникъ Католикоса Симена ч. III и последняя.

„ XII. Католикосъ Гукасъ ч. II.

„ XIII. Тоже ч. III.

„ XIV. Тоже ч. IV.

„ XV. Іосифъ Аргутинскій ч. II.

„ XVI. Католикосъ Ефремъ ч. I.

„ XVII. Мануэлъ Кюмюшханеци.

„ XVIII. Мемуары 14—18 вѣковъ.

„ XIX и XX 19-й вѣкъ.

Каждый томъ будетъ заключать въ себѣ 500—700 столбцовъ даннаго формата.

АРХИВЪ
Армянской исторіи

ТОМЪ X

ИСТОРІИ И МЕМУАРЫ
XV—XIX вѣковъ

съ біографическими очерками и приложеніями

ИЗДАЛЪ

ГЮТЪ АГАНЬЯНЦЪ
Протоіерей

ТИФЛИСЪ
Электропеч. Н. Аганьянъ, Полиц. 7.
1912

ԳԻՒՏ ԱՂԱՆԵԱՆՑ Ա· Ք–ի

Աշխատութիւններ

1 Աղօթատետր ե. տպ. 1903. . . . —10
2 Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպառուած). —15
3 » » բ. տ. գ. տպ. 1891. . —25
4 » » դ. ա. գ. տպ. . . —20
5 Տօմար և տօնացոյց Հայ. եկ. ր. տպ. 1894. —50
6 Կարնոյ գաղթը. պատմական տեսութիւն. 1891. . . . . . . —10
7 Դիւան Հայոց պատմութեան. գիրք Ա.—Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893 . . . 2 —
8 Նոյն. գիրք Դ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսր. մրց. արժ. 1894. . . . 7 —
9 Նոյն. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800. 1899. . . . . . . 4 —
10 Նոյն. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. 1902. . . . . . . 4 —
11 Նոյն. գիրք Զ. Դաւիթ կաթ. մ. I. 1801—2. 1904. . . . . . . 4 —
12 Նոյն. գիրք Է. Դաւիթ կաթ. մ. II. 1803—4 1909. . . . . . . 4 —
13 Նոյն. գիրք Ը. Սիմէօն կաթող. մ. II. 1767—1776.1908. . . . . . 4 —
14 Նոյն գիրք Թ. Յովսէփ կաթող. մ. I 1778-1800. 1911 . . . 4 —
15 Նոյն. գիրք Ժ. Մանր մատենագիրք ԺԵ—ԺԹ դար 1912 . . . . . 4 —
16 Կարգ սատուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 36 նկարով. Է. տպ. 1911 . . . . . . —50
17 Հնից-նորից, հնախօս. ուղևոր. պրակ Ա. 1900. —30
18 Պատի օրացոյց 1902 ժամանակագր. ԺԴ տ. —50
19 Նամակադիր[illegible] 1910 . . . —60
20 Մոցի օր[illegible] 1902 [illegible] յաւելուած.— Առողջ[illegible] [illegible]. . —15
21 Զաքար [illegible] . . — 5
22 Եկէք մեր [illegible] 1908 . — 5
23 Աւետիս Ղո[illegible] [illegible] 1911 . —25

Թարգմանութիւններ

24 Հաւատարմութիւնը ամեն արգելքների յաղթում է Ֆ. Հոֆմանի 1877 . . . —40
25 Խաւարից դէպի լոյս Ֆ. Հոֆմ. 1888 (սպ.) —40
26 Դոն Քիշօտ լամանշեցի, Մ. Սէրվ. 1878 (սպ.) —70
27 Դէորգ Ռօլլէստօն, 1879 (սպառ). . . —60
28 Երրորդ ոսկի, առակ. Լակիդէի բ. տպ. 1893. —10
29 Ռօբինզօն (հրատ. Թիֆլ. ապադր. ընկերութեան) (սպ.) . . . . —60
30 Զէստէրաօնի ժառանգը, պատկերազարդ, 1882. (սպ). . . . . . 1 —
31 Ակաէա. ա. Միսօեվայի. 1885. (սպառ.) . —50
32 Եան Էրնստ Սմօլեար. Ն. Եանչուկի, 1885 (սպ) —20
33 Արծուի մտածմունքը. պրօֆ. Բողդան. 1892. — 5
34 Դիւղի սուրբը. Սվետ. Չէխի, 1892. . —10
35 Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892 . . 1 —
36 Դէպի Աթէնք, Հ. Սենկևիչի ր. տպ. 1901. —15
37 Մի կտոր հաց, Պոտապէնկօի ր. տպ. 1901. —10
38 Որսորդ, Օ. Շրայնէրի . . . . —10
39 Մատուռի աւերակներում, Օ. Շրայների. . —10
40 Կարա. Իրլանդական զրոյց 1904 . . — 5
41 Անտառապետ Ֆրեդերիկ. Էրկման Շատրիանի. 1903 . . . . . . —40
42 Տնային բժշկարան, պրակ Ա. (գրքի ամբողջ կէսը) . . . . . 1 —
43 Նոյն պրակ. Բ. գրքի ամբ. կէսը . . 1 60
44 Նոյն պրակ Դ. գրքի ամբողջ կէսը.
45 Եղիշէ. Վարդանանց պատմութիւն 1910 . —60

Հրատարակութիւններ

46 Հայոց գիրը 1893 . . . . . . 1 50
47 Մուխ. 1893 . . . . . . —15
48 Ռանգաբէ, Էմաէ, վէպ . . . . —20
49 Ալբէր Այնօ, Քուրդի լեառն, 1894 . . —20
50 Յ. Ճաղարբէգեան Հայոց լեզու ա. տ. 1904. —30
51 Խրիմեան Հայրիկ, ժամանակ 1805 . . —15
52 Սպիրի, Այծարած Մօնի 1885. . . —15
53 Բակ. (Բաքգէն եպս.) Կիլիկիա 1896. . —10
54 Պեստալոցցի, Լինհարդ և Գերտրուդ. 1896. 1 50
55 Մելքիսեդեկ արք. Մուրատեան Պետրոս Շանշեան պատկերով. 1897 . . . —50
56 Թ. Ա. Խոհարարուհի, բ. տպ. ճոխացրած 1904. —50
57—68 Լումայ, գրական հանդէս 1891—1901. իւր. գիրքը . . . . . 2 —
69—71 Լումայ երկամսեայ հանդէս 1902—1904 տարեկան. . . . . 6 —
72—73 Լումայ ամսագիր 1905—1906 իւր. տար. 8 —
74 Լումայ ամսագիր 1907 2 գիրք. . . 2 —

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ԱՂԷՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԱՆԹԱՇԵԱՆՑԻ

ՅԱՒԵՐԺ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԳԻՒՏ ՊԱՊԱՆԵԱՆՑ Ա. Ք.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Երբ մենք 1893 թուին մամուլին յանձնեցինք «Դիւան Հայոց պատմութեան» ժողովածուի Ա.-Բ. գիրքը, աչքի առաջ ունենալով մեր թոյլ ուժերն ու Հայ հասարակութեան ոչ մի բանով չհետաքրքրուող բնաւորութիւնը, երբէք յոյս չունէինք, որ այս ծանր գործը պիտի ունենայ իր շարունակութիւնը։ Բայց Տէրը զօրաւիգ եղաւ մեզ և քսան տարուայ տաժանելի աշխատանքից յետոյ այսօր բարեբախտութիւն ունինք հայկական մտաւոր անդաստանին մատուցանել մեր չնչին նուէրը—«Դիւան Հայոց Պատմութեան» ժողովածուի տասներորդ հատորը։

Թէ ինչքան կեանք է մաշել աշխատասիրողը քսան տարում այս ծովածաւալ հրատարակութեան վրայ, ինչ սրտամաշ աշխատանք թափել, նիւթական զրկանքներ կրել, այդ կարող է իմանալ նա, ով երբ և իցէ թափառել է երկրէ երկիր նիւթեր հաւաքելու, ջանք է գործ դրել կարգաւորելու այդ նիւթերը, արտագրելու, մշակելու, տպագրելու և դեռ մտածել է նիւթական միջոցներ ձեռք բերելու տպագրական ծախքերը հոգալու համար։

Չենք տրտնջում, որ քսան տարի աշխատել ենք այս գործի վրայ, մանաւանդ աչքի առաջ ունենալով, որ եթէ ոչ հասարակութիւնը, գէթ անհատներ և մամուլի հետաքրքրուող մասը խրախուսել են մեր գործունէութիւնը և նրա շարունակութիւնը ցանկացել։

Իբրև ապացոյց ներքև հրատարակում ենք Վիեննայի պատուարժան Մխիթարեանց «Հանդէս ամսօրեայի» յօդուածը «Դիւանների» մասին, յայտնելով միանգամայն, որ յարգելի յօդուածագրի գովեստները բարձր են մեր արժանիքներից։

«Դիւան Հայոց Պատմութեան» տասն գրքերը դնելով հայ հասարակութեան առաջ, մենք յոյս ենք տածում, որ նա կմտածէ ապահովել այս խոշոր հրատարակութեան ապագան, ինչ որ մեզանից աւելի քաղաքակիրթ ազգերի մէջ իրականանում է ամբողջ ընկերութիւնների շնորհիւ։

Գիւտ Աղանեանց ա. ք.

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» ԹԵՐԹԻ ԿԱՐԾԻՔԸ «ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

Տակաւ թէև, բայց յարատևաբար կը բարձրացընէ Աղանեանց իւր այնչափ օգտակար Դիւաններու շէնքը։ 1893է մինչև այսօր ինը ստուար պատկառելի հատորներ շարունեցաւ քովէքով, մին միւսէն աւելի հետաքրքրական բովանդակութեամբ. դեռ 10 ուրիշ հատորներ պատրաստ կը սպասեն մեղուաջան հեղինակին գրասեղանին վրայ առատաձեռն մեկենասներու ձեռնտուութեանց։ Մեծանձն մեկենասի մը Մեծաշուք Իշխան Բորիս Ն. Երկայնաբազուկ-Արղութեանի առատաձեռնութեան արդիւնք է արդէն առաջիկայ իններորդ գիրքս՝ Նուիրուած Յովսէփ Արղութեանի կենաց։ Գրագէտներէ ոմանք, ստոյգ է, զբաղեցան Յովսէփ կաթուղիկոսի կենսագրութեամբ, բայց չենք համարձակիր կարծել թէ անոնք այս իր ժամանակին, իր լայնածաւալ յարաբերութիւններովն և ռուսական արքունեաց մէջ ունեցած հզօր ազգեցութեամբը նշանաւոր արքեպիսկոպոս—Կաթողիկոսի մասին, իրենց վերջին պատմական խօսքն ըսած ըլլան։

Աղանեանցի Դիւանները ժամանակին շատ սխալ ըմբռնումներն ուղղեցին Ղուկաս և Դաւիթ կաթողիկոսաց մասին։ Ներկայ հատորս կոչուած է Յովսէփ կաթողիկոսի ազգօգուտ գործունէութիւնը լուսաւորելու։ Ջանազան յիշատակարաններ, Յովսէփ Կ. ի գրութիւնները և նամակները, ժամանակակից գործիչներու գրութիւնները, որչափ իր սեպհական դիւանին մէջ ունեցած է կամ կրցած է ձեռք բերել, այս հատորիս մէջ հաւաքած է Գ. ա. ք. Աղանեանց և ծանօթութիւններով ճոխացուցած։ Դեռ շատ բան դուրս մնացած է, սակայն ասոնք անտեսուած՝ անգիտացուած չեն, այլ յաջորդ հատորներու վերապահուած, այսպէս տէրութեան դիւանին տեղեկութիւնները, Յովսէփ Կ. ի ինքնագիր յիշատակարանները, վերջինս Էջմիածին կը գտնուի հիմայ, և անկարելի եղած է օգտուիլ ասկէ։ Այս ամէնուն «ամբողջական հրատարակութիւնից յետոյ միայն կարելի է բազմակողմանի կերպով ուսումնասիրել և քննութեան ենթարկել այդ խոշոր մարդու ընդարձակ գործունէութիւնը» (Յառաջաբան)։

Ապահովաբար կրնանք ըսել թէ այսուհետև անկարելի է ԺԸ—ԺԹ դարու ազգային պատմութեան միջամուխ ըլլալ առանց այս հոյակապ Դիւանները աչքի առջև ունենալու. իսկ առաջիկայ հատորս անհրաժեշտ աղբիւր մըն է Նոր-Նախիջևանի գաղթականութեան և ժամանակակից ուրիշ հարցերու համար։ Ոյժը և զօրութիւնը, բայց մանաւանդ մեծանձն մեկենասները թող անպակաս ըլլան բազմաջան վաստակաւորին, որպէս զի իւր յարատև աշխատութեան ամենալաւ պտուղը, 20 հատորէ բաղկացեալ Դիւանը, օր մը լրացեալ առջևնիս ունենանք, և այս մշտատև յուշարձան մը պիտի ըլլայ յաբգպ. Գ. ա. ք. Աղանեանցին։

Հ. Մ. Հապոզեան

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՈՎՄԱՅ ՄԻՆԱՍԵՆՑ

Աղթամարի վանքի միաբան Թովմա վարդապետ Մինասենցը ծաղկում էր ԺԵ դարում Աղթամարի Դաւիթ Գ. Զաքարիա Գ. և Ստեփաննոս Բ. կաթողիկոսների ժամանակ։ Նա բուն Աղթամարցի էր և Ստեփաննոս կաթողիկոսի մօրեղբայրը։ Նրա ծնողներն էին Սիմէոն և Արղունը, քոյրը՝ Էմնա խաթունը, յայտնի գրչագրագիր Ներսէս աբեղայի մայրը. քեռին էր Թումայ միայնակեացը, որ և եղած է իր ուսուցիչն ու դաստիարակը. իսկ նրա միւս քրոջ՝ Ոսկետիկինի որդին՝ էր Աղթամարցի քաջ գրագէտ Հայրապետ կամ Հերապետ կրօնաւորը, որ Ստեփաննոս կաթողիկոսի օրօք յայտնի գիտնականներից մէկն էր համարւում։ Թովմայի հօրեղբայրն էր Վարդանը, իսկ սրա որդին Մկրտիչ կրօնաւորը։ — Այսպիսով մենք տեսնում ենք, որ Թովմայ Մինասենցը մի տոհմից էր, որի անդամներից և ազգականներից շատերը գրական մարդիկ էին։ Նրանցից ամեն մէկի անունով կան զանազան գրչագրերի օրինակութիւններ։

Թովման աշակերտեցաւ նոյնպէս իր հօրեղբայր Մկրտիչ կրօնաւորին և հռչակուեց իր ժամանակ որպէս հմուտ գրագէտ և փիլիսոփայ։ Աղթամար գըտնուած մի բոլորգիր մաշտոցի յիշատակարան նրան անուանում է «ընտրեալ և հռչակաւոր փիլիսոփայ Մինասենց Թոմայ». Թումայ կրօնաւորը Վան պահուած Ցայսմաւուրքի յիշատակարանում կոչում է նրան «մեծ փիլիսոփայ». նոյնպէս և Ռշտունեաց ս. Յակոբի վանքի յիշատակարան գրողը. իսկ Ներսէս աբեղան իր գրած աւետարանի յիշատակարանում համարում է նրան «իր հոգևոր հայր և անյաղթ փիլիսոփայ»։

Մեզ չէ հասել Մինասենցի աշխատութիւններից այնպիսի մի երկ, որի համար կարելի լինէր նրան «անյաղթ փիլիսոփայ» անուանել. հասել են միայն բազմաթիւ գրչագիրներ նրա ձեռքով գրուած, որոնց վերջերում կան պատմական յիշատակարաններ և այդ յիշատակարանների ժողովածուն է, որ տալիս ենք այստեղ։ Այդ յիշատակարանները բնագիրներից արտագրել է Ղևոնդ վ. Փիրղալէմեանը, այդ քրտնաջան, բայց անհմուտ բանահաւաքը, որ սովոր է արտագրել յիշատակարանները ըստ քմաց, շատ տեղ յապաւելով, առանց որևէ կէտադրութեան և տարբեր ընթերցուածներով։ Այս յիշատակարանի մասերը նա տպել է իր «Նօտարք հայոց» գրքի մէջ։

Բացի յիշատակարաններից Թովմայ Մինասենցը ունի գրած բազմաթիւ գանձեր և տաղեր տէրունական տօների և Աղթամարի խաչի վրայ, որոնց ինքնագիր օրինակը մինչև այժմ

էլ պահւում է Աղթամարի վանքում։

Թովմայ Մինասենցը վախճանուեց 1471 թուին։

ՍԻՄԷՕՆ ՌՇՏՈՒՆՑԻ

Սիմէօնը աշակերտ էր Ռշտունեաց կապուտկողի ս. Յակովբ վանքի շինող և նորոգող Բախվանցի Փիր մականուանած Ստեփաննոս աստուածաբան վարդապետի, որի մահից յետոյ Երուսաղէմում, ՊՀԶ 1427 թուին ստանալով վարդապետական գաւազան, դառնում է վանահայր վերը յիշած ուխտի և ականատես Թովմայ Մինասենցի ասելով, այդ մենաստանի բարեկարգութեան և շատ բարութեան պատճառ է լինում։ Նոյն պատմիչն ասում է, որ Սիմէօն Ռշտունցին «տուեալ զինքն յընթերցումն աստուածաշունչ կտակարանաց, եղև աշակերտ գրոց և սպասաւոր բանի»։

Սիմէօնի այս հակիրճ պատմութիւնը Փիրղալէմեանը հանել է մի բոլորգիր գրչագիր ժողովածուից, որի մէջ կան նաև Նարեկ, Յիսուս որդի և ուրիշ գրուածքներ, և որ գրել և միասին էր ժողովել Ռշտունցի Յակովբ նահատակ վարդապետը։

Հեղինակը բացի սրանից ունի գրած շատ գանձեր տէրունական և սրբերի վրայ, որոնց սկզբնատառերը իր անունն են կազմում և որոնց հրատարակութիւնը ներկայ հատորի նպատակից դուրս է։

ՅՕՀԱՆՆԷՍ ՔԱՀ. ԱՐՃԻՇԵՑԻ

Յովհաննէս քահ. Արճիշեցին չպէտք է շփոթել Ոսպնակեր կոչուած Յովհաննէս վարդ. Արճիշեցու հետ, որ ծաղկում էր ԺԴ դարում և ունի գրած պատարագի մեկնութիւն. սա վախճանուել է ՉՀԶ 1327 թուին Արճէշի սուրբ Յարութիւն գիւղում, ուր երբեմն վանք էլ կար և թաղուած է նոյնտեղ, որի տապանի վրայ գրած է. «այս է յարկ տապանի Յովհաննէս վարդապետի ի թուին ՉՀԶ»։

Յովհաննէս քահանայի ծնողներն էին Յակոբ քահանան և Սալչուկ խաթունը. աշակերտել էր նշանաւոր Թովմայ Մեծոփեցուն, որից և սովորել գրչութեան արհեստը։

Արճիշեցու ժամանակագրութիւնը վերաբերում է Դահմազի յարձակումներին և կատարած աւերածութեան անօրէն և անբարիշտ ուլամէի պատճառով, որին զոհ գնացին Վանը և Հայաստանի շատ գաւառներ։ Այս ժամանակագրութիւնը հանուած է ՋՁ 1531 թուին գրուած մի ինքնագիր յայսմաւուրքից, որ այժմ գտնւում է Վանի ս. Վարդան եկեղեցում։

Բացի սրանից Արճիշեցին ունի արտագրած բազմաթիւ գրչագիրներ. բայց ամենից տարօրինակն այն է, որ Յովհաննէս քահանայ Արճիշեցու գրած գրչագիրներ կան ինչպէս 1547 թուին, այնպէս էլ 1495-ին (աւետարան) և մինչև իսկ 1490 թուին (գանձարան)։ Արդեօք այնքան երկար է ապրել Արճիշեցին, որ նրա գրական աշխատանքները տևել են 1490—1547-ը, այսինքն 57 տարի—յայտնի չէ։

Արճիշեցու լեզուն մի լաւ նմոյշ է միջնադարեան աղաւաղ գրաբարի, որ միևնոյն ժամանակ աշխարհաբարի ու գրաբարի խառնուրդ է։

Ծանօթ. Յովհ. Արճիշեցու յիշատա-

կարանում, Դիւան Ժ. եր. 22 տպուած է 1433, պէտք է լինի 1533։

ԲԱՐՍԵՂ ՎԱՐԱԳԵՑԻ

Ցայտնի չէ Բարսեղ Վարագեցու ծննդեան տարին. ապրում էր ԺԶ գարի վերջին կիսում։

Նրա ծնողներն էին Ստեփաննոսը և Բէկկիջան խաթունը։

Աշակերտեց տէր Ցովհաննէսին և «քաջ և արի քարտուղար (ինչպէս ինքն է ասում Վանի ս. Սահակ եկեղեցում պահուած Ցայսմաւուրքի յիշատակարանում) Մարաիրոս սարկաւագին, իսկ մանր ուսմունք (քրիստոնէական վարդապետութիւն) սովորցնող իր մեծ վարպետը եղել է Վարագում հռչակաւոր անուն ունեցող Արարքեցի «փիլիսոփայ» Կարապետ եպիսկոպոսը, որի մականունը Ջամալ էր։ Սրա եղբօրորդի էր Բարսեղը, որի քեռին էր տէր Ցովհաննէս քարտուղարը։

Բարսեղ Վարագեցու ներկայ յիշատակարանը, որ մի համառօտ նկարագրութիւն է 1581—4 թ. Խոնդքարի արշաւանքի Կարնոյ վրայ և ժամանակակից դրութեան, հանուած է Խուլուշ կոչուած մի ինքնագիր բոլորգիր աւետարանից, որ կայ Աւանց գիւղաքաղաքի եկեղեցում. և արտադրել է Փիրղալէմեանը ըստ իւր սովորութեան դարձեալ յապաւումներով։ Այդ յիշատակարանում եղել է նաև երեսունից աւելի մեծատուն տանուտէրների մի ցանկ, որոնք Բարսղի օրով Աւանց գիւղաքաղաքի պարծանքն են կազմել. բայց ընդօրինակողը չէ արտագրել անհետաքրքիր համարելով։

Բարսեղը գրագէտ մարդ է եղել ու գրասէր և մեծ ջանքով ու աշխատութեամբ արտագրել է և ուրիշներին արտագրել տուել գրչագիրներ, որ նշան է նրա ուսումնասէր լինելուն։

Մի տեղ յիշատակարանում (Վան ս. Սահակ եկ. Ցայսմ. յիշ.) վերջը աւելացնում է նա.

«Վայ ինձ հազար բերան.
զի Աստուած բարկացաւ մեր մեղաց.
և զվաստակն ժանգն առեց.
որ գրիւ մի ցորեն ցանեցինք.
նա երեք կապիճ եղաւ։
Վայ ինձ ասեմ ի յիմ մեղաց
զի վշտացայ 'ի յայլազգաց,
զամիսն ի լեառն եղէ բնակած։

Բայց Բարսղի ուսումնասիրութիւնըն աւելի լաւ բնորոշում է Վանի Հայկավանքում պահուած գրչագիր Ոսկեփորի այս յիշատակարանը, որ բերում ենք խիստ հետաքրքիր բովանդակութեան համար.

«Փառք քեզ հայր և որդի և սուրբ հոգի... Եւ արդ՝ ես յետնեալս յամենայն բարեաց և յանարժանս յուխտէ եկեղեցւոյ Աւետիս քահանայ՝ և ոչ գործովք... զոր վստահացեալ յօղնականութիւն հոգւոյն սրբոյ ձեռնարկեալ գրեցի զսա ի սուրբ ուխտս որ կոչի Վարագ ընդ հովանեաւ կենսատու խաչին Քրիստոսի. ի թուականիս հայոց ՌԾԱ (1602) ամին. ի յառաջնորդութեան սուրբ ուխտին Վարագայ տէր Ստեփաննոս արքեպիսկոպոսին. և 'ի դասաւորութիւն տէր Բարսեղ վարդապետին. որ զկէս գրոցս գրեր էր. զքաղցրաձայն երաժիշտն. զբանաւոր ծիծեռն. Աստուած զինքն անսայթաքելի պահեսցէ ի պարծանս մեր։ Եւ զիս զանարժան զտէր Աւետիս Մոկացիս՝ որ զկէս գրոցս գրեցի ե աւարտեցի ի քաղաքս Վան. ընդ հովանեաւ Տիրամայր սուրբ Աստուածածնին, ե Գաբրիէլ հրեշտակապետին, որ է պահապան քրիստոնէից։ Աղաչեմ անմեղադիր լերուք սխալանաց և խոշորութեան դրիս՝ և պակասութեան արհեստից՝ զի կար մեր այս էր. և էր ժամանակս դառն ի ձեռաց այլ-

ազգաց... Եւ արդ՝ ես պարոն Մլխամս ստացայ զսուրբ գիրքս... և եդի յիշատակ ի դրունս կենդանանից սուրբ Աստուածածնին... և զՅոհաննէս եպիսկոպոսն Վարդեցի՝ որ զօրինակն շնորհեաց... Եւ զԲարսեղ գծող վարաղեցին, որ զժղ տետր ճառքս գրեցի ըստ կարի իմում. և Աստուած ողորմի ասացէք ինձ և ծնողաց իմոց, Ստեփաննոսին և խաթունն Բէկիջանին. և քեռուն իմոյ Կարապետ րաբունապետ փիլիսոփային. մականուն Ջամալ Արաբքեցուն. և միւս քեռուն տէր Յոհաննէս քարտուղարին... և զտէր Ստեփաննոս զառաջնորդ սուրբ ուխտիս Վաբագայ, և զմիաբանսն առհասարակ. և զտէր Ստեփաննոս Ղաւղաջի մահգասին...

Կաշառ երէտ ինձ սէր.
Թէ մեղրով խառնեա ու կեր,
ապա զիմ բաժինն բեր,
դու առողջ լեր.
ես գրագիր ու մեղրակեր.
յաչաց լուսոյ եմ պակասեր.
ապսպրանք ինչ եմ ասեր.
Թէ հետ լուսոյն բեր.
դու գլրդլմած փուտ ալևոր,
որ ի ժուժէ ես պակասեր.
և յաչաց լուսոյ չի մնացեր.
եկեղեցպան ես դու կացեր.
զաւզէն քեզնէ չի պակասեր.
զքեզ ի գիրս եմ յիշատակեր,
զահ բէգահ ինձ սեր բեր.
որ ես ուտեմ զքեզ օրհնեմ.
դու. գնա սև սև ըռինգ կեր։

Գրեցաւ ի ՌԾԱ (1602) թուականին հայոց, ի վրդովման ժամանակիս, որ այլազգիքն կու կոտորեն զմիմեանս. ըստ այնմ որ հրամայէ սուրբ աւետարան թէ յարիցէ ազգ ի վերայ ազգի, յորոց փրկեսցէ զմեզ Քրիստոս Աստուած։

Բարսեղը վախճանուել է 1615 թուին Ամրաօլու վանքում։

ԴԱՒԻԹ ԲԱՂԻՇԵՑԻ

Դաւիթ Բաղիշեցին, ըստ Կուլիկցի Պետրոս երէցի՝ քաջ րաբունապետն ու անյաղթ գրիչը աշխարհական ծաղումից էր. Նրա ծնողների անունները՝ Ալէքսիանոս և Խանում։ Իր ժամանակագրութեան մէջն ինքն ասում է, որ մանկութիւնից ուսում է ստացել «Մեսրոպ վարդ. անյաղթ փիլիսոփայ և քաջ քարտուղարի» մօտ, որից և 1641-ին ձեռնադրուել կուսակրօն քահանայ, վեց տարուց յետոյ էլ ստացել է իշխանութեան գաւազան. 1651 թուին նշանակւում է վանահայր Բաղէշի Ամրդօլու վանքի և նորոգում է ինքը։

Դաւիթ Բաղիշեցու գլխաւոր գործերից մէկը լինում է նախնեաց մատենագիրներ արտագրելը և արտագրել տալը։ Յայտնի են այժմս 1664 թուին նրա ձեռքով գրել տուած Յօբի լուծմանց գիրքը—Կտուց անապատում, մի աւետարան Վանի ս. Պօղոս եկեղեցում, գրուած 1667 թուին Կուլիկցի Պետրոս երէցի ձեռքով, որ նրան ի միջի այլոց վարդապետաց վարդապետ է անուանում, և դարձեալ այն գրչագիրները, որոնց յիշատակարանները հրատարակել ենք Դաւթի ժամանակագրութեան կից։

Բայց Դաւթի աշխատութիւնների մէջ աւելի կարևոր է նրա ժամանակագրութիւնը, որ մի ընդարձակ գործ է։ Ինքը հետևեալ տեղեկութիւններն է տալիս իր այդ աշխատութեան մասին. «Արդ եղև գրաւ սորա ի թուին ՌԺԺԲ 1663... ծաղկաքաղ և համառօտ արարի ի պատմագրաց բազում աշխատութեամբ յԱդամայ մինչև ցարդ, զկարգս նահապետաց, և մարգարէից և թագաւորաց, և հայրապետաց. և ի յերկուս հատորս բաժանեցի. առաջինն յԱդամայ մինչ ցԱբէթ մեր նախնին. և ի յԱբեթէ զթագաւորս Հայկազանց և զԱր-

շակունեաց, և զԲագրատունեաց, և զԱրծրունեաց, և զալի Օսմանեանց. զգալ Թաթարին. և Լանկ Թամուրին...»։

Ժամանակագրութիւնը օրինակել է Գրիգոր երէցը իրա՝ Գաւթի հրամանով Մխիթար Գօշի Երեմիայի մարգարէութեան մեկնութեան հետ, որ Լիմ կղզումն է, ուր բերել է ինքը, երբ իր մահից առաջ իր աշակերտակից Աւետիք վարդապետի և իր վարժապետ Մեսրոպ արքեպիսկոպոսի հետ գնացել էր այցելելու այդ վանքը, ուր և վախճանւում է 1673-ին Որդւոց Որոտման տօնին և այնտեղ իսկ թաղւում։

Փիրղալէմեանը, որի հաւաքածոյքից է վերցրած մեր հրատարակութեան օրինակը, դժբախտաբար, միմիայն մի մասն է օրինակել նրանից. և ցանկալի է որ այս կարևոր աշխատութիւնը ամբողջութեամբ էլ հրատարակուի։

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԱԳԵՑԻ

Շատ տեղեկութիւններ չունինք Վարագեցի Գրիգոր դպրի մասին, որ տասնեօթերորդ դարում յայտնի գրող է համարւում Վարագի վանքում։ Նրա անունով մեզ հասել է մի ժամանակագրութիւն, որ գտնւում է Վանի ս. Վարդան եկեղեցում պահուած ինքնագիր Յայսմաւուրքի վերջը և նրա վերջում այս յիշատակարանը.—«փառք ամենասուրբ երրորդութեան... Արդ գրեցաւ Այսմաւուրս այս յերկիրս Վասպուրականի յԱստուածախնամ մայրաքաղաքս որ ասի Վան, առ ոտս Վարագայ կենսատու և տիեզերահամբաւ սուրբ նշանին, ի հայրապետութեան ամենայն Հայոց տեառն Եղիազարու կաթողիկոսին որ տիրէր երկուց գահիցն Երուսաղէմայ և Էջմիածնի, և յառաջնորդութեան սրբոյ ուխտիս մերոյ Վարագայ Կարապետ քաջ վարժապետի և անյաղթ փիլիսոփայի ի խնդրոյ աստուածասէր և բարեպաշտ ղասապ Շարխօշին... և ետ զսա անջինջ յիշատակ ի դուռն սրբոյն Վարդանայ զօրավարին հայոց. ի թուականիս մերոյ ՌՃԼԳ 1684, գրեցաւ ձեռամբ Գրիգոր անարժան դպրի...»։

Ժամանակագրութիւնն ընդգրկում է 1308—1682 ժամանակաշրջանը և խիստ համառօտ կերպով թւում է գլխաւորապէս Վանի և մասամբ Հայաստանի ուրիշ գաւառների կրած հալածանքն ու նահատակութիւնը տաճիկ իշխողներից։ Վերջը կայ և նրա մի բանաստեղծութիւնը «Ծուխ քաշող»-ների մասին։

Փիրղալէմեանի ժողովածոյքի մէջ գտնւում են մի քանի գրչագիրների յիշատակարաններ, գրուած նոյն ժամանակ նոյն վանքում «խալիֆայ Գրիգորի» ձեռքով, որ, ինչպէս երևում է ոճից, պէտք է որ պատկանելիս լինին նոյն Գրիգոր Վարագեցուն։ Այդ յիշատակարաններից մէկը տալում ենք իբր նմոյշ։

Վան, Տիրամայր եկ. արծաթապատ փոքր աւետարան.— «փառք և պատիւ...

Արդ՝ գրեցաւ սա ի թուին
հազար հարիւր երեսունին.
երեք թիւ այլ վերաբարդին,
ՌՃԼԳ(1684) յունիս ամսոյ երրորդ օրին։
Ասեմ քեզ թէ որ ժամանակ
Փարաւոնէ առ օրինակ.
որ զԻսրայէլ ազգն անքանակ,
տանջեալ նեղէր որակ որակ.
նոյնքան և այլ յաւել չարին,
և անողորմ զմեզ չարչարեն,
որպէս պշուն լիրբ յօժար են.

ծծեն զարիւն հայոցս որ են։
Եւ 'ի հայրապետութեան տեառն
Եղիազար անուանի առն.
որ այժմս է ի գահ եւ ի փառն.
փայլէ որպէս ղլոյս ի վառն։
Եւ Վարագայ զահոյս յաջորդ.
րաբունապետ քարոզող յորդ,
Կարապետ քաջ և ինքն ուղղորդ.
զոր համբաւեալ է ընդ ոլորտ։
Զտրուպ խալիֆայս յիշէք գթով
և ողորմի ասէք յոլով,
որ զսա գրեցի մատամբ իմով,
անմեղադիր լերուք սիրով։
Եւ զծաղկողս մտամոլոր,
յիշէք յաղօթըս շահաւոր,
տէր անուանիմ բայց մեղաւոր,
և իմ անունն է Գրիգոր»։

ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑԻ

Մեծ Վարդանը ծնուած է Բաղէշ քաղաքում. Նրա ծնողներն էին Եղիան և Ղարիպը, եղբայրները՝ Ղաբիպջանը, Խաչատուրն ու Խօշխապարը։ Նա իր ուսումը ստացաւ ժամանակի յայտնի ուսուցիչ Խաչատուրի մօտ, որին ժամանակակից յիշատակադիրներն անուանում են «անյաղթ փիլիսոփայ, գիտնական և հռետոր, և քաղցրաբան վարժապետ»։ Եւ իր ընդունակութիւնների շնորհիւ շուտով յայտնի դարձաւ Ամրտօլի վանքում ինչպէս հռետոր վարդապետ, արդիւնական վարժապետ և ընտիր ճարտասան։ Դաւիթ Բաղիշեցին նրան անուանում է ճարտասան և բանիբուն, իսկ Յարութիւն Խալֆայեանը իր տարեգրութեան մէջ ասում է՝ սուրբ Վարդան վարդապետ Բաղիշեցին վախճանուել է 1704 թուին։

Վարդանը Բաղէշի Ամրտօլու վանքի հռչակաւոր դպրոցի ուսուցչութեան պաշտօնը յանձն առաւ և արտադրեց բազմաթիւ շնորհալի աշակերտներ, որոնցից նշանաւորներն են՝ Խօշապեցի Աբրահամ Բ. կաթողիկոսը, Գրիգոր շըղթայակիր և Յովհաննէս Կօլօտ Երուսաղէմի և Կ. Պօլսի պատրիարքները, այնուհետեւ գրչագրաղէտներ՝ Աբրահամը, Յովհաննէս դրիչը ևն։ Թէ որքան ծաղկած էր Վարդանի տեսչութեան յանձնուած դպրոցը, երեւում է այն հանգամանքից, որ նա մինչեւ իսկ դպրոցական ճանապարհորդութիւններ էր կատարում նոյն իսկ շատ հեռաւոր երկրներ. «1684 ին իմ ուսուցիչ Բաղիշեցի Վարդան վարդապետը, գրում է Յովհաննէս գրիչը Աշի Զգրաշէն թաղի ս. Կիրակոս եկեղեցու Ճաշոցի յիշատակարանում, այս տարի գնաց Երուսաղէմ իր տասնեեօթն աշակերտներով իր այնտեղ գտնուած հոգևոր և մարմնաւոր եղբայրներին մխիթարելու՝ տուրքերով և ուսումով. և իր ուխտը կատարելուց յետոյ՝ յետ դարձաւ իր բնիկ աթոռը, Ամրտօլ կոչուած ս. Յովհաննէս Մկրտչի վանքը»։

Որ Ամրաօլու վանքը եղել է գիտութեան մի կենտրոն, այդ ցոյց է տալիս և նրա ձեռագիրների ընդարձակ մատենադարանը, որ կազմուած է Վարդանի շնորհիւ։

Շատ գրչագիրների յիշատակարաններ վկայում են, որ Վարդան Բաղիշեցին թէ ինքն է իր ձեռքով արտագրել բազմաթիւ գրչադիրներ, թէ իր աշակերտներին է արտագրել տուել և թէ նշանաւոր ծաղկողներ է ժողովել իր դպրոցը, դըչագիրները զարդանկարելու համար։ Առաջ ենք բերում նըրանցից մի քանի հետաքրքրական յիշատակարաններ։

Վանի Մեծոփայ վանքում գտնուած Տաթեւացու աւետարանի քաղուածի յիշատակարան.

Զվերջին նուրողող լուսազարդ աւետարանչաց քաղուածուխս զՎարդան լոկ պիտակ անուն բանի սպասաւորս աղաչեմ յիշել ի տէր. ով լուսերամ դասք վարդապետաց և խումբ քահանայից, որ բազում աժանմամբ և յոլով աշխատութեամբ սրբաքերեալ և ղթերին լցեալ, յանկ ե յաւարտ հանի... դարձեալ և զայս աղերսալի ժտեմք ի ձէնջ եղբարք բարի, որք ընթեռնուք յօժար սրտիւ յիշման առնէք զիս արժանի՝ զՎարդան վարդապետս բազիշեցի, որ յոյժ երկօք զայս նորոգեցի. այլ և ծնողաց իմոց զարմի Եղիայի և Ղարիպի, այլ և եղբարցն իմոց Ղարիպջանի, Խաչատրի և Խօշխապարի. ով մանկունք նոր սիոնի մի՛ յաչաղէք դուք զողորմին. զի և ձեզ մասն կրկին ի տեառնէ ընձեռեսցի ամէն: Գրեցաւ վերջոյ գիծս ի թուականիս հայոց ՌՃԺԲ 1663 ի հայրապետութեան տեառն Յակոբայ Էջմիածնի, ի Բաղէշ քաղաքի ընդ հովանեաւ սուրբ ուխտիս՝ որ Ամիրդօլու վանք վերաձայնի, օրհնեալ է Աստուած:

Մուշի Գլակի վանքում գտնուած աւետարանի յիշատակարան.

...Ի վերադիտողութեան սուրբ ուխտիս Յովհաննու որ է Ամիրտօլու վանք ի Բաղէշ քաղաքի տէր Վարդան քաջ և արի վարդապետի, որ յաւուրս և ի ժամանակիս յայսմիկ ոչ ոք է նման նմա. զի է անձանձիր ուսուցանող, շինող և հաստատող սրբոց եկեղեցեաց Հայաստանեայց. զի զբազում եկեղեցիս վերստին շինեալ կանգնեաց. և զոչ եղեալսն ի բազում տեղիս նորոգ հիմնարկեաց ե շինեալ աւարտեաց. ե ելից զնոսա քահանայիւք և սարկաւագօք. աւետարանաւ և արծաթի սկօք. շուրջառով և մաշտոցով և այլ բազում ուղղութիւնս արար. զոր ոչ կարեմ մի ըստ միոջէ ի շար քարտիսիս արկանել. բայց զկատարեալ վարս նորա թողումք ամենագիտին Աստուծոյ, որ նա գիտակ է բարի գործոց նորա... յիշեցէք յաղօթս ձեր՝ զիս զՊօղոս գծող սուրբ աւետարանիս, որ եմ յերկրէն Բաղիշոյ, ի գաւառէն Նըչայ և Անձունից, ի ձորու Նախիայից, ի փոքրիկ դեղջէն Կորկտնոյ:

Լիմ գտնուած մի աւետարանի յիշատակարան.

Փառք եռանձնեայ եզակի.. Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց.. Յովհաննէս քահանայ. շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ աւետարանս. ի թուականիս հայոց ՌՃԻԳ 1674 ամին. ի յարքայանիստ քաղաքն Ըստամբօլ. ընդ հովանեաւ սրբոյն Նիկողայոսի ե այլ սրբոց որ աստ կան հաւաքեալ. ի հայրապետութեան տեառն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Յակոբայ սրբազան կաթողիկոսի: Ի խրնդրոյ Գրիգոր քահանայի... Եւ արդ՝ ես մեղուցեալ և անպիտան ծառայս ձեր վանեցի Սահակ դպիրս. եկեալ իմ ի քաղաքն Բաղէշ. ե. ստացայ զսուրբ աւետարանս ի քահանայէն Վարդանայ տետր միայն սեաւ գրով. և իմ բնակեալ ի Վանս Ամիրդօլու. առ ոտս եռանաշնորհ և Աստուածաբան վարդապետին Վարդանայ. ամ մի ե. հինգ ամիս. ե. ծաղկեցի վարդապետին երկու աւետարան ոսկեզօծ պատուական ե. գեղեցիկ յօրինուածով. և այլ բազում գրեանս ետ ծաղկել. և զհնացեալ գրեանս ետ վերստին նորոգել. թուով եօթանասուն և ութ գիրք. զոր տէր Աստուած անփորձ և անսայթաք պահեսցէ զՎարդան րաբունապետն և զԱստուածաբան դիտապետն. և զհարազատն իւր Աբրահամ վարդապետն.. Ես մեղապարտ Սահակ վանեցիս՝ ծաղկեցի զսուրբ աւետարանս ի վանս Ամրդօլ. ի դուռն սրբոյն Յօհաննու. և սրբոյն Ստեփաննոսի. և սուրբ Աստուածածնի տաճարիս. և այլ սրբութեանցս բազում աշխատութեամբ. ծաղկեալ ոսկով և լաջվարդով և այլ երփն երփն գունով զարդարեցի զոր տեսեալ մեծահաւատ... տէր Գրիգոր ջերմ սիրով ստացաւ սուրբ աւետարանս... ի յիշատակ հոգոյ իւրոյ... յիշել աղաչեմ միով տէր ողորմեայիւ զտառապեալ վանեցի Սահակ ծաղկօղս. և ղծնողսն իմ զԱմիրջանն և զՁինարն. և զուսուցիչն իմ զմեծ Րաբունին զՍիմէօն Էջմիածնեցին. և Աստուած ձեզ յիշէ ամէն:

Լիմի Միքայէլ պատմագրի յիշատակարանից

Նորոգեցաւ սուրբ գիրքս, որ է պատմագիր ասացեալ տեառն Միքայէլի Ասորոց ուղղափառաց պատրիարգի, թարգմանեալ հոգաբարձութեամբ Վարդան վարժապետի հայոց փիլիսոփայի, ձեռամբ իմ մեղապարտ Վարգան պիտակ անուն բանասիրի....1658.

Վան առաքելոց վանքի տօնապատճառ Նորոգողի յիշատակարանից

Զդերաղանցեալն բանիւ իմաստութեան ըրաղիշեցի Վարգան րաբունապետն յիշեսջիք առ յոյսն ամենեցուն Քրիստոս հանդերձ հարազատիւ իւրով Դաւիթ վարգապետիւ նաև... զԱբրահամ բանի սպասաւորս և աշակերտն տեառն Վարդանայ... Կազմեցաւ սուրբ տառս ի թուաբերութեան հայկազեան տոմարիս ՌՃԻ 1671 ի վանս Եղիազարու ի հայրապետութեան տեառն Յակոբայ կաթուղիկոսի և յառաջնորդութեան սրբոյ ուխտիս տէր Դաւիթ ճգնազգեաց վարդապետի, ձեռամբ անարհեստ Սահակայ վանեցւոյ։

Վան առաքելոց վանքի Յովհ. Որոտնեցու քարոզգրքի յիշատակարանից

Զգերազանցեալն հոգով զպերճացեալն բանիւ իմաստութեան զբաղիշեցի Վարգան րաբունապետն յիշեսջիք առ յոյսն ամենեցուն Քրիստոս հանդերձ հարազատաւ իւրով Դաւիթ վարդապետիւ. զի Եղիազարու վանաց գրքերն Ժ հին փտեալ գիրք վերստին եւտուն նորոգել և կազմել. և զեկեղեցոյ սագերն և զդումբէթն վերստին նորոգեաց և զեկեղեցի սրբոյն Ստեփաննոսի ի հարաւոյ կուսէ եկեղեցոյն վերստին ի հիմանց շինեաց և պայծառացոյց զսուրբ մենաստանս ժամակարգութեամբ. թվ. ՌՃԻԲ 1673։

Բացի այդ բոլոր աշխատութիւններից՝ այժմ Լիմ պահուած Միքայէլ Ասորու պատմութեան վերջում նա գրած ունի պատմագրական մի ընդարձակ յիշատակարան, որ քաղուածաբար արտագրել է Փիրղալէմեանը—ոչ ամբողջութեամբ։ Այդ մասը, որ լոյս է տեսնում ներկայ հատորում, ընդգրկում է իր մէջ 1170—1654 Հայաստանի զանազան անցքերի պատմութիւնը համառօտիւ, իսկ վերջին տարուայ անցքերն աւելի մանրամասն, այն է Բաղէշի Աւղալ բէկ ամիրայի Վանի փաշայութեան ձեռքով անկումն ու երկաբնակ Հոռոմոց ազգից՝ Հայոց ս. Յակոբ վանքի յափշտակելու պատմութիւնը։

Այսպիսի արդիւնական կեանքից յետոյ Վարդանը կնքեց իր մահկանացուն 1704 թուին Բաղէշի Ամիրտօլու վանքում և նրա մարմինն ամփոփուեց եկեղեցու դարպասում խորանի առաջ Ամիրտօլի վանքի նորինորոյ շինող Բարսեղ Բաղիշեցու և հէնց իր Վարդանի դաստիարակ նշանաւոր Խաչատուր փիլիսոփայի գերեզմանների կողքին։

Յետնորդները ի պատիւ նրա ընդարձակ գրական գործունէութեան կնքեցին նրան «մեծ» տիտղոսով։

ԻՆՉ ԻՆՉ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Այս ժամանակագրութիւնը հանել ենք մեր անտիպ ժողովածուի զանազան հնացած թղթերից, որոնց հեղինակներն անյայտ են։

ԹՈՒՂԹ ՏԵԱՌՆ ՓԻԼԻՊՊՈՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ՊԱՊՆ ԻՆՆՕՑԷՆՏԻՈՍ.

Փիլիպպոս կաթողիկոսը Էջմիածնի ԺԷ դարի կաթողիկոսներից ամենափայլուն դէմքն է։ Որովհետև Փիլիպպոսի, ինչպէս նաև Էջմիածնի Հայրապետական դիւանի գրագրութեանց փշրանքներն են միայն հրատարակուած, իսկ մեծագոյն մասը անյայտ է մնում պատմագրողին, յայտնի չէ նաև մե-

ծաւ մասամբ բոլոր վերջին դարերի կաթողիկոսների գործունէութեան մանրամասնութիւնները և ինչ որ յայտնի է մեզ, օրինակ, Փիլիպպոսի գործունէութեան մասին, այդ ամենն էլ դասում են նրան ժողովրդասէր և հայ եկեղեցու շահերին նուիրուած կաթողիկոսների շարքը։

Փիլիպպոս կաթողիկոսի այն թուղթը, որ մենք տպում ենք ներկայ հատորում, ուղղուած Հռոմի Իննովկենտիոս պապին, շօշափում է վաղուց յայտնի մի ցաւալի խնդիր, այն է Լեհահայերի դաւաճան Նիկոլ եպիսկոպոսի անխղճաբար հալածելը հայերին և նրանց ստիպելը թողնել իրանց հայրենի կրօնը և դիմել մի օտար և խորթ կրօն՝ կաթոլիկական դաւանութիւնը։ Փիլիպպոսը հեռուից անկարող լինելով օգնել յուսահատութեան դուռը հասած ժողովրդին, դառնապէս գանգատւում է Հռովմի պապին Նիկոլի ոտնձգութիւնների մասին և նկարագրելով, թէ ինչպէս նա եկեղեցիներն ու սրբազան սպասները խլել է հայերից՝ առաջարկում է անմիջապէս անդառնալի մի հրաման դրել Լեհաց թագաւորին, որ իսկոյն դատաստան անելով՝ արդարութիւնը պաշտպանէ և հայոց եկեղեցիները վերադարձնէ իրենց. զարմանալով հարցնում է նա, թէ ինչպէս է, որ այլազգիները, չնայելով որ հարկապահանջութեան կողմից նեղութիւն ենք կրում նրանցից, երբ խնդիրը գալիս է հաւատին և եկեղեցուն, երբէք ոչ մի հակառակութիւն չեն ցոյց տալիս, այլ ամենայն համարձակութեամբ պաշտում ենք մեր հաւատը. իսկ քրիստոնեայ տէրութեան մէջ այսպիսի դժնդակ խարդախութիւններ է գործւում դէպի մերայինները։ Միևնոյն ժամանակ Փիլիպպոսը պատասխանում է պապի հարցման, թէ հայոց կրօնը նոյնն է, ինչ որ Քրիստոս, նրա աշակերտները և հայրապետներն աւանդել են Հայաստանեայց եկեղեցուն, առանց երբէք խոտորուելու նախնական կրօնից։

Ցաւում ենք, որ մեզ չէ հասել Փիլիպպոս կաթողիկոսի մնացեալ դրագրութիւնները. բայց այս մի թուղթը մի խոշոր ակտ է, որ բոլորովին բնորոշում է նրա սիրտը և հոգին, նրա գործունէութիւնը։

Այս թուղթը յաջողեց մեզ հրատարակել շնորհիւ մեր բարեկամ պատմաբան պ. Ստեփան Լիսիցեանի, որ սիրայօժար կերպով մեզ յանձնեց մի գրչագիր. դա Յովհան Ոսկեբերանի Յովհաննէս աւետարանի մեկնութեան և Սարգիս Շնորհալու կաթուղիկեայց թղթի մեկնութեան քաղուածքն է, որի վերջը գտնւում է Փիլիպպոսի այս նշանաւոր թուղթը։

Գրչագիրը գրուած է թղթի վրայ, ընտիր նօտրգիր, և լուսանցազարդերը ծաղկանկար, գրողը Ստեփանոս քահանան, ստացողը Աղէքսանդր եպիսկոպոսը, գրուած ՌՃԽԲ 1693 ապրիլ 1-ին։

Ունի յիշատակարաններ.

Յովհան Ոսկեբերանի ա. գրքի վերջը.

Քրիստոսի կարողութեամբն և օգնականութեամբն աւարտեցաւ առաջին գիրքս մեկնութեան սրբոյ աւետարանին Յովհաննու, զոր բարձր քարոզն տիեզերաց բերանն ոսկի արտայայտեաց, ի զմայլումն մանկանց եկեղեցւոյ և ի կարկումն հերձուածողաց։ Որք ընթեռնոյք զսա և կամ լսէք, սրտի մտօք թողութիւն մեղաց խնդրեցէք զստացօղի գրոյս, և ընթերցողացդ։ Եւ ինձ մեղսամած և անպիտան անարհեստ սուտ ա-

նուն Ստեփաննոս քահանայս յիշեցէք, անմեղադիր լերուք գրիս, զի այս է կար մեր թողութիւն շնորհեցէք։

Սարգիս շնորհալու գ. գրքի վերջը.

Քրիստոս Աստուած բարեխօսութեամբ քո սուրբ առաքելոյս Յոհաննու ողորմեա ստացողի սուրբ դրոցս, տէր Աղէքսանդր եպիսկոպոսի և ծնողաց նորին։ Եւ ինձ անիմաստ գրչի ողորմեա տէր։

Սարգիս շնորհալու կաթուղիկեայց Յուղայի թղթի մեկնութեան վերջը.

Զմեղուցեալ և զբազմամեղ ծրողս զարիսաաքէս քահանայս, յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր ով սուրբ ընթերցողք և Աստուած զձեզ յիշէ։

Գրքի վերջը.

Արդ՝ ես նուաստս յամենից. և ոչինչս յէացելոց. յոգնամեղ և եղեռնագործ. բազմասղալ անձն Տէր Աղէքսանդր վատնօղ բանի. և անարժան այցելու. ցանկացօղ եղէ. գեղեցկագուարճ, սաղարթափթիթ և ծաղկածաւալ բուրաստանիս հոգէնուագ երգաբանիս. և աստուածախօս քնարիս. և առեալ զսա ի բանից սրբոյն Յոհաննու ոսկիբերանի, ի մեկնութենէ գլխոյ աւետարանին. որ ըստ Յոհաննու գերամբարձ և սրաթռիչ աւետարանչի. այլ և ի մեկնութենէ կաթուղիկեաց թղթոյն. արարեալ սրբոյն Սարգսի շնորհալից և տիեզերալոյս վարդապետի. ոչ թէ զբոլոր գիրսն. այլ միայն զվերջ պրակին բնաբանն ընդ մեկնութեան. հանդերձ յորդորակաւն, նա և ի տեղիս յոգունս զպրակն իւման հանդերձ մեկնութեամբն. եթէ յաւետարանին. և եթէ կաթուղիկէին. զոր ընթերցողացն է քաջայայտ. և այս ըստ հաճութեան մտաց իմոց. և ըստ ախորժական կամաց իմոց, առիթս կրկին ունելով.

Նախ անկարէր մեզ ստանալ զերկոսեանն կատարեալ յաղագս ծանրագնութեանն ոչ ունելով գոյս բաւական ծախուցն։ Երկրորդ իսկապէս պատճառ զի լինէր զգիրսն կարի մեծ և անհեթեթ. նա և անշարժ տեղոջէ ի տեղ. վասնորոյ սոյնպէս արարաք ըստ հաճութեան սրտից մերոց, իսկ թէ և հաճեսցին անձինք ձեր պատուական. տեառն շնորհք. և թէ ոչ ներեսջիք յաղագս Աստուծոյ։

Դարձեալ յիշեսջիք ի Քրիստոս զստացօղ սորա. զբարեպաշտ և Քրիստոսասէր. մեծահաւատ օրիորդն. զարժանին յիշատակի զՄարիամ տատիկն. և զծնօղսն իւր. զհայրն Ծատուրն. և զմայրն Աօլթանվուռն. և զկենակիցն հանգուցեալ ի Քրիստոս զՄխիթարն. և զդուստրն զՌէբզատէն. և զամենայն արեան մերձաւորսն իւր զկենդանիսն և զհանգուցելոյսն ամէն։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զբարեպաշտ Մարիամ տաաիկն. որ ստացաւ զսուրբ գիրքս յիշատակ հոգոյ իւրոյ. ի հալալ ընչից իւրոց. և յարդար գոյից առ զմայլումն և ի զբօսանս Տէր Աղէքսանդր վարդապետին և որք հանգիպիք սմա կարդալով կամ օրինակելով. և կամ հարևանցի իսկ զբօսնլով. յիշեսջիք լրութեամբ սրտի. և բանիւ Հայր մերիւ. զպատճառք և զաշխատօղք սորին. և որք ունին մասն բարեաց ի սմին. մանաւանդ զվերոյ դրեալ աղախինն Քրիստոսի զՄարիամ տատիկն հանդերձ ծնօղօք. զարմօք և զաւակօք. ազգօք և ընտանեօք։ Եւ որ յիշէ. յիշեսցի ինքն. իւրովքն ամենայնիւ յաւուր յարութեան. և այցելութեան առաջի ահեղ ատենին Քրիստոսի. ուր բանքն սպառին և գործքն թագաւորեն. լսելով զերանականն բարբառ. որ ասէ արդարոցն եկայք աւրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զանճառ բարիսն. որոց մեզ ամենեցուն լիցի հասանիլ. տերամբ մերով Յիսուսիւ Քրիստոսիւ. որ է աւրհնեալ ընդ Հօր իւրում. և սուրբ Հոգոյն անպայման կէտահարութեամբ և անսպառ յաւիտենիւ ամէն։

Եղև կատարումն գրոյս. յամի թուահաշութեան առհմիս Արամեան, ՌՃԽԲ։ Եւ յամսեան Ապրիէլի. աւուր առաջնում. ի տօնի սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի. յոքնեբանեան և երից երջանիկ Հայրապետի հայոց և բազմաչարչար Նահատակի Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի աղօթիւք նորա Քրիստոս Աստուած մեզ ողորմեսցի և ստացողի գրոյս Ամէն և եղիցի եղիցի»։

ԸՆԹՑՔ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Վասպուրականի այլ և այլ անցքերի ժամանակագրութիւնը քաղել ենք Փիրղալէմեանի հաւաքածոյքից, և մասամբ մեր Դիւանի նիւթերից և պարունակում է 1386—1707 թուի պատմութիւնը, սկսած Լանկթամուր բռնաւորի արշաւանքներից։ Իսկականը, որ ոչ յիշատակարան է ունեցել և ոչ հեղինակն է յայտնի, Փիրղալէմեանին տուել է արտագրելու Վանի Նորաշէն եկեղեցու Միքայէլ քահանան։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽԱԼՖԱՅԵԱՆ, ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ

Յարութիւն քահանայ Խալֆայեանը ծնուել է 1775 թուի փետրուար ամսին Վանում. Նրա մկրտութեան անունը Մարտիրոս էր. նախ քան քահանայանալը կոչւում էր խալիֆայ Մարտիրոս, նրա համար արդեօք, որ ուսուցչութեամբ (ժամանակակից կոչմամբ խալիֆա) էր պարապում. Թէ ազգանունն էր Խալֆայեան՝ ճիշտ յայտնի չէ. Թէպէտ յաջորդ գրողներ նրան պարզապէս անուանում են Յարութիւն քահ. Խալֆայեան։

Այս ժամանակագրութիւնը, որ պարունակում է իր մէջ 623—1800 թուերի զանազան անցքերի նկարագրութիւնը, գրել է մինչև իր քահանայանալը և դրա ինքնագիր օրինակը Լիմի վանահայր Յակովբ Թօփուզեան եպիսկոպոսը տուել է Փիրղալէմեանին, որ սակայն, ըստ իր սովորութեան, արտագրել է ոչ ամբողջութեամբ։

Խալֆայեանի ժամանակագրութեան մէջ ամենից հետաքրքրականը նրա լեզուն է. գրաբար խառը աշխարհաբարի հետ, խճողուած բազմաթիւ գաւառաբարբառ դարձուածներով և բառերով և մասամբ տաճկերէնի հետ խառը, որոնց թարգմանութիւնները դրինք ծանօթութեանց շարքում։

ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ ՇՈՒՇԱՆՑԻ

Այս մասնաւոր ժամանակագրութիւնը, որ հանել է Փիրղալէմեան Ղ. վարդապետը Լիմ գտնուած Սարգիս Շնորհալու գրչագրի վերջից և վերագրում է Բարդուղիմէոս Շուշանցուն, ինչպէս երևում է գրութեան եղանակից, ոչ թէ նրա գրածն է, այլ անշուշտ իր ստորագրեալ միաբաններից մէկի ձեռքով, որ դրուատում է նրա շինարար և ուսումնասէր գործունէութիւնը։

Բարդուղիմէոսը Վասպուրականի առաջնորդ էր և Վարագի վանքի բարերարը. աշակերտել էր Կալոյ մականուանած Կարապետ «քաջ և անյաղթ» վարդապետին։ Վարագի վանքը երկու անգամ ամայութիւնից հանելով նորոգել է նա և նախանձելի դարձրել։ Վարագի վանքի վրայի արձանագրութիւնը վկայում է նրա շինարարութիւնը 1721 թուին Համատանցի Աստուածատուր կաթողիկոսի և Վանի Աւտուլլահ փաշայի բդեշխութեան ժամանակ։

ՎԷՊ ՋՊԱՐՄԻՑ

Այս պատմութիւնը անանուն հեղինակի գործ է, որի բնագիրը գտնւում է մեր Դիւանում։ Բնագիրը գրուած է կապիտ թղթի քառորդ թերթի վրայ գեղեցիկ գրչութեամբ Արարատեան ոճի տառերով, հաւանօրէն գրուած ԺԹ դարի երեսնական կամ քառասնական թուականներին. մեր կար-

ծիքով Շահխաթունեանց Յովհաննէս եպիսկոպոսի ձեռքով։

Գրաբարը մաքուր է ու ոճաւոր, զերծ խորթութիւններից և սխալներից, հակառակ, վերը յիշած Վանում ծաղկած մատենագիրների լեզուին, որոնք ըստ մեծի մասին գրուած են աղճատ գրաբարով, խառը աշխարհաբարի, գաւառաբարբառի և թուրքերէնի հետ։

Պարսից վէպը պարունակում է քառասուն տարուայ պատմութիւն, 1745 թուից մինչև 1785, առաջին 39 տարուանը խիստ համառօտ, իսկ վերջին տարուանը հանգամանապատում նկարագրութիւններով պարսկական խժդըժութիւնների, ի թիւս որոց և Ջուղայի Ամենափրկիչ վանքի աւերման։

ՎԱՐՔ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԴԱՐ ՄՈԿԱՑԻՈՅ

Լիմ անապատի միաբան Յովհաննէս Մոկացին, Արդար մականուանած, Մոկաց Գետեզեր գիւղացի էր Պօղոսեանց տոհմից. նա ծնուել է 1716 թըւին և իւր ժամանակ Վասպուրականի եզակի հայրերից մէկն է եղած թէ իր աստուածաբանական գիտութեամբ, թէ ուսուցչական և թէ շինարարական գործունէութեամբ։

Նրա աշակերտներից յայտնի են Մաբղուանի Զարխափան ս. Աստուածածնի վանքի բարերար Բաղդատցի Յովհաննէս արքեպիսկոպոսը, Լիմի Յովհաննէս աբեղան (1770-ին գրած Առակաց ժողովածու. գրչ.), Ստեփաննոս և Սիմէոն վարդապետները. և այլն։

Իր մաքուր և ճգնազգեաց կեանքի համար ժամանակակիցները նրան անուանել են Արդար. յիշեալ Յովհաննէս արքեպիսկոպոսը իր՝ Փռանկ հայերի դէմ գրած «բացայայտ և պարզ հարցումն և պատասխանի վասն դաւանութեան հաւատոյ ուղղափառ և լուսաւորչածին ազգիս Հայոց» աշխատութեան մէջ իրան կոչում է «Արդար Յովհաննիսի աշակերտ»։ Այս աշխատութիւնը, ինչպէս և սրա տաճկերէն մի ուրիշ գործ դարձեալ նոյն հեստեալների դէմ՝ մնում են անտիպ։

Նրա շինարարական գործերից յայտնի են.

Արճէշի Ականց աւանի եկեղեցու նորոգութիւնը.—«Նորոգեցաւ տաճարս և շինեցաւ ժամատունս ձեռամբ Մոկացի Յովհաննէս վարդապետին թուին ՌՄԺԷ 1768» (Արձ. աջ խորանի պատում)։

Լիմի դարպասի շինութիւնը.—«Ի հայրապետութեան տեառն Սիմէոնի և Թումայի (Աղթամարի) և յառաջնորդութեան տեառն Յակոբայ ճգնազգեաց վարդապետին Վանեցւոյ և ի թուականութեան Հայոց ՌՄԺԵ 1766 քակեցաւ փայտեղէն ժամատունս և շինեցաւ դարպասս ի հիմանց նորինոբոյ ձեռամբ Մոկացի Յովհաննէս վարդապետին. որք հանդիպիք, միաբան եղբարց Աստուած ողորմի ասացէք, ղի բազում աշխատանս կրեցին»։

Նորոգել է Հոգւոց վանքի տաճարն ու պարիսպը, որ հազիւ երեք տարումն է աւարտել. և այդ ժամանակ մինչև աւարտելը ժամանակաւորապէս վարել է այդ վանքի վանահայրութեան պաշտօնը։

Արդար Յովհաննէս վարդապետը իր արդիւնական կեանքը կնքել է Լիմ անապատում 1769 թուին, ուր և թա-

դուել և նրա գերեզմանի վրայ գրուել է այս արձանագիրը. «Կանգնեցաւ սուրբ խաչս վասն փրկութեան հոգւոյն Մոկացի Յովհաննէս փիլիսոփայի՛ն աստուածաբան վարդապետին, որ ղրադում մեծամեծ եկեղեցիս նորոգեաց. նաև սուրբ Անապատի դարպասն շինեաց. Թուին ՌՄԺԹ 1770 ձեռամբ Թլեցի Նազար վարդապետին կառուցաւ»։

Նրա այս կենսագրութիւնը, որ քաղուածօրէն արտագրել է բնագրից Փիրղալէմեանը, գրել են իր ձեռնասուն աշակերտներ՝ Ստեփաննոսն ու Սիմէօն վարդապետները։

ՅԱԿՈՎԲ ԴՊԻՐ

1757 թուին Տիգրանակերտ պատահած մեծ աղէտի - խիստ սովի այս սրտաճմլիկ նկարագրութիւնը դրել է ոմն Յակովբ դպիր մի Յայսմաւուրքի վերջում, որ գտնւում է Տիգրանակերտի ս. Կիրակոս եկեղեցում և որի օրինակը հանգ. Սրուանձտեանցի հաւաքածոյքից արտագրելով՝ ուղարկել է մեզ հանգուցեալ բանասէր Յովհաննէս ա. ք. Մկրեանը։

ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆՔ ՎԱՆԱՅ ԲԴԵՇԽԻՑ

Այս հատուածը Փիրղալէմեանը թերթի արտագրել է 1866 թուին Վան ուսկերիչ Ղազարի տետրից, որի հեղինակը անծանօթ է։

ՊՕՂՈՍ ԿԱՂԶՈՒԱՆՑԻ

Ինչպէս «Գիրք պատմութեանց» գործի յառաջաբանից էլ երևում է, Փոքուղեանց Պօղոս Կաղզուանցի դպիրը նոյն Զաքարիա պատրիարքի եղբօր որդին էր, որի կենսագրութիւնը տալիս է նա։ Պօղոսի մասին շատ տեղեկութիւններ չունինք. ինքը՝ նախերգանքի վերջը դրած մի փոքր ոտանաւորում ակնարկում է, թէ աշակերտել է Զաքարիա պատրիարքին և ուսումն է ստացել նրա ծախքով և անուանում է իրան տէր Պօղոս քահանայ։ Յայտնի է նոյնպէս, որ երբ կառավարութիւնը աքսորեց Զաքարիային, եղբօրորդի Պօղոսն էլ նրա հետ է եղել աքսորուած, ուր երկուսն էլ մեծ նեղութիւններ են կրել։

Պօղոսի «Գիրք պատմութեանց»-ը գլխաւորապէս նշանաւոր Զաքարիա պատրիարքի կենսագրութիւնն է, որի մէջ հեղինակը խիստ մանրամասն կերպով նկարագրում է Զաքարիայի մաքառումը Հայոց եկեղեցուց հեստեալների դէմ, որին վերջ ի վերջոյ զոհ գնաց նա՝ աքսորի մատնուելով կառավարութիւնից։ Բացի դրանից պատմութեան կից կան մի քանի ուրիշ հատուածներ ժամանակակից անցքերի վերաբերեալ և հեղինակի մի քանի չափական դըրուածները։

Բացի մեր հրատարակած նիւթերից՝ բնագրի մէջ կան՝ պատմութեանս մէջ առաջ բերուած ֆէրմանների տաճկերէն օրինակները և վերջն էլ մի բաւական մեծ ժողովածու հայատառ և տաճկերէն երգերի ու բանաստեղծութիւնների, որ մենք աւելորդ համարեցինք տալ այս հատորում։

«Գիրք պատմութեանց» գրչագիր օրինակը պատկանում էր գիտնական բանասէր Ամենապատիւ տ. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանին, որ սիրայօժար կերպով յանձնեց մեզ այն հրատարակութեան համար։

ՍԵՐՕԲԷ ԴՐԻՉ

Յայտնի է արդէն, որ Աղա Մահմադ խան (Խադում շահ) նշանաւոր աւերիչը մեծաքանակ զօրքով 1795 սեպտեմբերի 11-ին արշաւեց Թիֆլիսի վրայ և քարուքանդ արաւ քաղաքը, որի ապստամբութեան զոհ գնաց Թիֆլիսի հայ ազգաբնակութիւնը, աւերուեցան նրանց տները, եկեղեցիները, բոլոր հաստատութիւնները և աւարի մատնուեց նրանց բոլոր գոյքն ու ինչքը. եկեղեցիները մերկացան իրանց զարդ ու անօթներից և ովքեր յանգգնում էին ցոյց չտալ եկեղեցու հարստութիւնը՝ մահուան էին դատապարտւում նրանցից. այսպէս՝ նահատակուեց Բեգղեհէմի եկ. ժամանակի նշանաւոր աւագերէց և Հաղբատի գործակալ տէր Մխիթարը, որ մերժեց ցոյց տալ անօրէններին եկեղեցու թանկագին սպասներն ու անօթները։

Այս աւերածութեան մանրամասն նկարագրութիւնը տուել է մեզ Սերոբէ անունով մի երիտասարդ, որ իր պատմութիւնը դրել է 1796 մարտ 26-ին «յամայի Փայտակարանի»։ Վերջին դարի մի քանի գրողներ սխալմամբ Թիֆլիս քաղաքն անուանում էին Փայտակարան։

Պատմութեան վերջը Սերոբէն ունի մի պատմագրական բանաստեղծութիւն, որի սկզբի տառերը հայկական այբբենի բոլոր տառերն են և «Սերոբէ» բառը։

Բնագիրը պատկանում է մեր անձնական մատենադարանին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ

Սեբաստիայի ս. Նշան վանքի վանահայր և Սեբաստիայի առաջնորդ Յովհաննէս Սեբաստացի արքեպիսկոպոսը միակն է վերջին դարերի առաջնորդների մէջ, որ հոգացել է դրել իր վանքի և վանահայրների աւելի քան 800 տարուայ պատմութիւնը ժամանակակից անցքերի բաւական ընդարձակ և հետաքրքրական մանրամասներով։

Պատմութեան վերջը առանձին մի գլուխ կայ՝ իր Յովհաննէս Սեբաստացու գործունէութեան համառօտ նկարագիրը, որ անշուշտ նրանից յետոյ աւելացրել է նրա աշակերտներից մէկը։

Յօհաննէսի աշխարհական անունը Յօնան էր, նա Սեբաստիայի Յակոբ արքեպիսկոպոսի աշակերտներից էր, որից և 1797 հոկտ. 25-ին ձեռնադրուեց վարդապետ, անուանակոչուելով Յովհաննէս։ Իսկ եպիսկոպոս ձեռնադրուեց Էջմիածնի Եփրեմ կաթողիկոսից 1812 նոյեմբեր 14-ին։

Յովհաննէս Սեբաստացու պատմութեան ինքնագիր օրինակը գտնւում է Սեբաստիայի ս. Նշանի վանքում, որից Փիրղ. արտագրել է յապաւումներով։

Սեբաստացին վախճանուեց 1830 թուին և թաղուեց ս. Նշան աւագ եկեղեցու դրան հանդէպ իր հոգևոր ծնող Սլմտանցի Յակոբ արքեպիսկոպոսի շիրմի մօտ։

ԻՍԱՀԱԿ ՍԱՀՐԱԴԵԱՆ

Ինչպէս երևում է պատմութեանս վերնագրից՝ Իսահակ քահանայ Սահրադեանը ղօշավանքցի էր. նրա պատմութիւնը սկսւում է 1700 թուից և շարունակւում մինչև 1848. պարունակում է իր մէջ Շիրակի, Ղարսի և մասամբ այլ տեղերի ժամանակակից ազգային և

քաղաքական անցքերը, վերջին դարինը, իբրև ժամանակակից, աւելի մանրամասն կերպով։

Ուրիշ տեղեկութիւններ պակասում են մատենագրիս մասին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ

Էջմիածնի միաբանների մէջ տասնեւիններորդ դարի առաջին կիսին ամենաշնորհալի եպիսկոպոսը Յովհաննէս Շահխաթունեանցն էր և իր ժամանակ ամենաազգեցիկ մարդը Էջմիածնի հոգեւոր վարիչների մէջ։

Նրա դէմքը բաւական պարզ է հայ գրականութեան մէջ։ Յայտնի է նրա երկհատոր «Ստորագրութիւն Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» հոյակապ աշխատութիւնը, որ այսօր էլ անսպառ նիւթ է մատակարարում հայ բանասէրին։

Շահխաթունեանցի մի ուրիշ աշխատութիւն տպուեց «Դիւան»-ի Ա.-Բ. հատորում։ Եւ այժմ էլ ապում ենք այս վերջին աշխատութեան կից ցաք ու ցրիւ գրած նրա ժամանակագրութիւնը ժամանակակից անցքերի վերաբերեալ։

Մեր ձեռքին են նաև նրա ձեռքով արտադրած մի քանի դրչագիրների ընդօրինակութիւններ։

Այսպիսով Շահխաթունեանը ներկայանում է իբրև մի բազմակողմանի կրթուած մարդ, նման Կարապետ վ. Շահնազարեանի, որ իր բոլոր կեանքը նուիրել է ազգային գրականութեան բարգաւաճման։ Բայց մենք աւելի երկար կըխօսենք այդ համակրելի հեղինակի մասին, երբ հրատարակութեան կտանք մեր «Դիւան»-ների ԺԹ դարը, ուր կմտնեն Շահխաթունեանցի նամակներն և գրագրութիւններ նրա մասին։

ՂԵՒՈՆԴ ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ

Երջանկայիշատակ Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսը երկարամեայ վանահայրութեան ժամանակ Վարագայ վանքի դպրոցում իր հայրենասիրական հոգին ներշնչեց իր բոլոր աշակերտներին, որոնցից շատերը փայլեցին դրականութեան և պաշտօնների մէջ. դրանցից մէկն էր և Ղևոնդիկ կամ Ղեւոնդ Փիրղալէմեանը։

Ղևոնդը Տոսպեցի էր, իր հայրը՝ Աւետիս (իր ասելով տոհմական իշխան) և մայրը Իսղարիէր՝ Կարսեանց տոհմից։ Տղայ հասակից աշակերտեցաւ Վարագի վանքում և ձեռք բերեց հմտութիւն հայկական գիտութիւնների. և ձեռնադրուելով Խրիմեան Հայրիկից վարդապետ՝ մօտ քսան տարի ճանապարհորդեց Տաճկա-Հայաստանի մի քանի նահանգներ, ուր և ժողովեց բազմաթիւ նիւթեր—յիշատակարաններ, արձանագրութիւններ և հայրենի աւանդութեանց ցուցադրներ, որոնց մի մասը տպեց իր «Նօտարք Հայոց» աշխատութեան մէջ, իսկ մեծագոյն մասը 1898 թուին 3 մեծ կապոցների մէջ կնքած հանգ. Յովհ. ա.ք. Մկրեանի յանձնարարականով Կ. Պօլսից բերելով յանձնեցինք հանգ. Տ. Մկրտիչ կաթողիկոսին և այժմ գտնւում է Էջմիածնի մատենադարանում։

Հ. Փիրղալէմեանը մի անդուլ և եռանդուն հաւաքող էր հնագրական և տեղագրական նիւթերի, բայց, դժբաղտաբար, նրան պակասում էր հաւաքելու հմտութիւն և այդ պատճառով նրա ժողոված նիւթերը մեծ մասամբ կըրճատուած են, անընտրողաբար, մէջ ընդ

մէջ յապաւումներով, շատ տեղ աղճատուած, տպած թէ անտիպ ամեն պատահածը արտագրող, իսկ նրա արտագրութիւնների մէջ կէտագրութիւն բնաւ գոյութիւն չունի։ Մինչդեռ բանտհաւաքի ամենամեծ գործն այն է, որ նա հարազատութեամբ արձանագրէ իր ձեռքն ընկած ամեն մի նիւթ։

Երկարամեայ ճանապարհորդութիւնից յոգնելով՝ նա տեղափոխուեց Կ. Պօլիս, ուր կարգուեց քարոզիչ Սամաթիայի Նոր Թաղի ս. Յակոբի եկեղեցում, իսկ ապա ուղարկուեց հովուելու Մանչեստրի հայ գաղութը։

Իր ճանապարհորդութեան մի մասը նա տպագրեց Թիֆլիս առանձին գրքով հանգ. խմբագիր Աբգար Յովհաննիսեանի աստարութեամբ։

Ա. ԿԱՐԱՊԵՏԻ ՄԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մշու ս. Կարապետի վանքի այս համառօտ պատմութիւնը, որ սկսւում է հայոց ՌՄԼԳ 1784 թուին և վերջանում 1869 թուին մինչև Խրիմեան Մկրտիչ արքեպիսկոպոսի վանահայրութիւնը, անծանօթ հեղինակի գործ է, որ հանգ. Յովհաննէս ա. ք. Մկրեանը օրինակելով Գարեգին արքեպիսկոպոս Սրուանձտեանցի հաւաքածոյքից՝ ուղարկել էր մեզ հրատարակութեան համար։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. 1. «Դիւան»-ի Թ. գրքում Տ. Յովսէփ Արղութեանի վիմագրած ինքնագիր կոնդակի բնագիրը շնորհակալութեամբ ստացել ենք Լազարեան ճեմարանի տեսուչ գիտնական պ. Կ. Կոստանեանից։

2. Նոյն գրքում էջ 513 ծան. 62 պէտք է կարդալ иностранная коллегія և
» 69 » » подданный.

Շնորհակալութիւն ենք յայտնում Կարնեցի պ. Յակովբ Վարդանեանցին, որ օգնեց մեզ այս գրքում պատահած թուրքերէն բառերն ու հատուածները հայերէնի վերածելու։

ԺԵ ԴԱՐ

Ա. ԹՈՎՄԱՅ ՄԻՆԱՍԵՆՑԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. Ոստանի Նշիշէի վանքի աւետարանից

Փառք անպարագիծ էին... Ու ես մեղուցեալ և անարժան ծառայս Թումայ անուամբ և եթ միայն աբեղայ Մինասենց... և ամենակարող զօրութեամբ նորին կատարեցի զսա յԱստուծով նախախնամեալ կղզիս Աղթամար ընդ հովանեաւ գմբէթյարդ և երկնանման սուրբ խաչին. և սուրբ Աստուածածնին. և այլ բազմահաւաք սրբոց նշխարաց որ աստ կան հաւաքեալ. ի հայրապետութեան տեառն Դաւթի, և ի ղանութեան ազգին Նետողաց Ամիրզա սքանդարին Թուրք ազգաւ։ Որ և տիրեաց աշխարհիս մերում. և էառ բռնութեամբ զանառիկ ամրոցք աշխարհիս մերոյ. Այս է զանմատչելիս և զանկոխ ոտից Թշնամեաց. և զտեղիս ապաստանի բոլոր աշխարհացս. զկղզիս Աղթամարոյ. և զանառիկ ամրոցս և զմայրաքաղաքս երկրիս զՈստան և զպարանոցատանջն զԱմուկ. և մինչ ի Հէշատ և ի Նրւան. զբոլոր աշխարհս բռնակալեաց ընդ ձեռամբ իւրով. և ընդ իշխանութեամբ։ Ու բազում և անթիւ չարիս և դառնութիւն անասելիս և անպատմելիս լեզուաց անցոյց ընդ աշխարհս մեր. զոր ոչ կարեմ մի ըստ միոջէ ընդ գրով արկանել զաւեր աշխարհիս մերոյ. և սպառումն բնակչաց սորին. վասն զի այս Ժ ամ է, որ մրրիկ բարկութեան Աստուծոյ ի յաշխարհիս մերում յաճախագոյն երեեցաւ վասն ծովացեալ մեղաց իմոց։ Ու պատմեցից ձեզ զգըլխաւորսն կարճ ի կարճոյ բանիւ. զոր տեսաք աչօք մերովք. զի առ յապա եկեալքդ լսելով զաղէտս մեր՝ երկնչելով յԱստուծոյ դադարեսջիք ի մեղաց ձերոց։ Ի ՊԿԸ 1419[1] Թուականին եկն մարախ ըստ անչափութեան աւազոյ ծովու. բայց ի յաւուրս հնձոցն եկն, և իբր մի կերաւ զվաստակն և իբք մի մնաց. և ձգեաց զսերմն իւր յերկիր. և միւս այլ տարին ձագն ելաւ և խիստ աւեր էած. բայց ի յԱստուծոյ խնա-

մոցն ի գութ շարժեալ Իշխան աշխարհիս մերոյ ամիր Էգգինն՝ տուաքեաց մարդ․ և երեր ջուր․ և հաւ եկն զկնի ջրոյն [2]․ և սատակեաց զմարախսն․ և ազատեցաւ երկիրս։ Իսկ ի ՊՀ 1421 թվին, շարժեցաւ թագաւորն արևելից Ամիրզա Շաղռուխն անթիւ հեծելով․ և սատակեցաւ Ղարայ Յուսուֆն աէրն Թավրիզոյ իւրով մահուամբ և որդի նորա Ամիրզա սքանդարն՝ մարտ պատերազմի եղեալ ընդ Ջաղաթային կոտորեալ եգև ի նմանէ․ և սատակեցան բազումք ի զօրաց նոցա․ և ինքն մազապուրծ փախեաւ ի ձեռաց նոցա։ Իսկ թագաւորն արևելից առեալ զամենայն աւար և անբաւ բարիս ի զօրուն Թուրքաց՝ դարձաւ յաշխարհն իւր․ և մնաց թաղթն անտէր։ Ապա վերստին դարձաւ սքանդարն ի Թավրէզ․ և տիրեաց նմա․ և ժողովեաց բազում զօրս։ Եւ ի միւս այլ տարին եկն բազում զօրօք ի վերայ Խլաթայ․ և բազում անձինք քրիստոնէից ի գերութիւն վարեցան ի ձեռաց նոցա․ և բազումք սրոյ ճա…ւին… գարն եկն ա…մելոփ * ի վերայ երկրիս մեր խաղաղութեամբ և գնաց ի Թավրէզ տանելով ընդ իւր զգերիսն։

Իսկ ի ՊՀԲ 1423 թվին գնաց նոյն սքանդարն բազում զօրօք ի վերայ Ավրէլայ և էառ զնա։ Եւ իշխան աշխարհիս մերոյ գնացեալ առ նա բազում ընծայիւք ի գործ պատերազմին․ և նորա դեղ մահու արբուցեալ իշխանին մերոյ մէլիք Մահմատին սպան զնա․ և անհնարին սուգ և անմխիթար տրտմութիւն եհաս աշխարհիս մերոյ։ Եւ ի սոյն ամի եկն սաստիկ մահտարաժամ ի յաշխարհս մեր․ և մնաց երկու տարի ի բոլոր ծովուս․ և բազում տունք աւերեցան․ և ծնօղք անզաւակ մնացին։

Իսկ ի ՊՀԳ 1424 թվին կոչեաց նոյն սքանդարն զտէրն Ոստանայ զսուլթան Ահմատն, և զտէրն Բաղիշոյ զՇըմրգգինն խաբանօք առ ինքն․ և կալաւ զերկոսինն զՇըմրգգինն սպան ի Խլաթ․ և ինքն յանդուգն յարձակմամբ և լի դառնութեամբ, և անթիւ զօրօք եկեալ նըստաւ ի վերայ անառիկ ամրոցին Վանայ․ ընդ իւր ունելով երկաթի կապանօք զսուլթան Ահմատն։ Եւ զերկիրս մեր ի յառ և յաւար և ի գերութիւն տուեալ երկու տարի․ զոր ոչ է բաւական քարտէզս ընդ դրով ընդունել յինքեան զաւեր աշխարհիս մերոյ․ և զնեղութիւն զոր կրեցաք մարմնով․ և վշտացաք հոգով ի կղզիս Աղթամար։

Ի ՊՀԳ 1425 թվին էառ Ամիրզա սքանդարն զՎան և զայլ բերդորայքն և մելքեց զաշխարհս մեր։ Եւ ի միւս այլ տարին գնաց ի վերայ Բաղիշոյ․ և այս երեք տարի է, որ Բաղէշ ի խըսար է․ և զվերջն Աստուած գիտէ։

Իսկ ի ՊՀԶ 1427 թվին էառ նոյն սքանդարն զանառիկ բերդն Մակուայ ի ձեռաց քրիստոնէից և տիրեաց նմա․․ ըթ․․քկըս․․հատ * բոլոր ազգացս քրիստոնէից․․․ զի ի բոլոր աշխարհացս՝ այն մին բերդն միայն էր մնացեալ ի ձեռս քրիստոնէից, և այն ևս առաւ ի մէնջ։ Արդ՝ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց մերոց․ և այսքան բաւական է առ այս։

Եւ արդ՝ ես ունայնս… անյիշելիս ի գրչաց անուամբ միայն աբեղայս Թումայ… յիշման արժանի առնել զիմ անարժանութիւնս, և թողութիւն մեղաց խնդրել ի Քրիստոսէ․ ինձ և ծնողացն իմոց Սիմէօնին և Արղունին… այլ և երախտաւոր քեռոյն իմոյ և ու-

* Երկերկու տող մաշուած էր գրածը։

սուցչին Թումայ միայնակեցին. և հօրեղբօրն իմոյ Վարդանին և որդոյ նորա Մկրտիչ կրօնաւորին հանգուցելոցն ի Քրիստոս. և նորաբողբոջ քուեր որդոյ իմոյ Հայրապետ կրօնաւորի..գծագրեցաւ և աւարտեցաւ սուրբ աւետարանս ի ՊՀԷ 1428 թուականին, և ընծայեցաւ ի դուռն Պատրկայ վանից սուրբ Աստուածածնին, և սուրբ Գէորգ զօրավարին։

Ստացողի յաւելումը.

Ես մեղուցեալս յամենայնի Աբրահամ սուտ անուամբ կրօնաւորս ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց. և ետու զսա ընծայ և նուէր ի մեծ և ի հռչակաւոր ուխտս Պատրկի վանք [3] կոչեցեալ. որ կայ հանդէպ Ոստան քաղաքի, ի դուռն սուրբ Աստուածածնին և սուրբ Գէորգ զօրավարին.. յիշել ի Քրիստոս զսպասաւորք սուրբ եկեղեցւոյս, որք վայելողք են սուրբ աւետարանիս. զքաջ և զարիաբան զսրբազան և զուղղադաւան վարդապետն ՝մեր զՅովանէս և զԱստուածատուր վարպետն... * զՄարտիրոս և զՅովաննէս, զՅովսէփ և զԱստուածատուր, զՄկրտիչն և զՎարդան, զԿարապետ և զՍտեփաննոս, զՎարդան և զԱտոմ միայնակեացն. այլ և զխրատիչքն մեր և զուսուցիչքն և զառհասարակ երախտաւորքն որք ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս հանգուցեալ կան։ ՊՀԷ 1428։

2. Ռշտունեաց ս. Յակոբայ վանքի մի մաշտոցից.

Փառք և պատիւ.. զոր տեսեալ զսորայս զհոգեոր փարթամութիւնս սրբասէր կրօնաւորն Յոհաննէս, ի գեղջէն Գաւաշից, ըստ նախնեաց Բրծոնց կոչեցեալ [4]. Եւ նուիրեաց զսա ընծայ սուրբ տաճարիս, որ է շինեալ գումբէթաձև և երկնանման ի գերահռչակ ուխտս. և ի հրեշտակաբնակ կրօնաստանս՝ որ կոչի սուրբ Յակոբ։ Զոր շինեալ է յառաջին թագաւորացն Հայոց ի գլուխ երկրիս Ռշտունեաց յարևմտից կուսէ, առաջի Կապոտ կողան բերդին, ի պահպանութիւն աշխարհիս Հայոց։.. Ստացող սուրբ կտակիս ընծայեաց զսա սուրբ Յակոբայ գերահռչակ տաճարիս, յիշատակ հոգւոյ իւրոյ. և ծնողացն իւրոց Բաղդասարին և Շնոհվորին.. և եղբօրն իւրոյ Թումային.. որ յաւուրս ձմերայնոյ ի բքաբեր ուսի անկեալ մեռանի յերկիրն Կեցնայ։... Եւ արդ՝ ես փծուն ի գրչաց... Մինասենց Թումայ եղկելի հոգիս։.. Եւ ի սիրոյ և ի հարկեցուցիչ հրամանէ սրբազան անձինն և Աստուածաբան վարդապետին Սիմէօնի՝ առաջնորդին և շինողին սուրբ Յակոբայ գերահռչակ ուխտին, որ յորդորեաց զՅոհաննէս ի բարին. յաղթեցայ և ես... կատարեցի զսա յԱստուածախնամ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ գմբէթաձև և երկնանման տաճարիս, և սուրբ Փրկչիս. և սուրբ Սարգիս զօրավարիս. յաշխարհակալ թագաւորութեան Ամիրզայ Ջհանշային. և ի կողմնապետութեան մերոյ աշխարհիս, որ տիրէ Վանայ և Ոստանայ Ղըլիճ Ասլան պարոնին. որք են ազգաւ թուրք՝ յոյժ հարկապահանջողք և կեղեքիչք քրիստոնէից, ի հայրապետութեան մերոյ նահանգիս տեառն Զաքարիայի. և ի թուականութեան Հայկազեան տօմարիս ՊՂԴ 1445 ի յամսեան մարերի յինն յաւուր շաբաթու գծագրեցաւ և աւարտեցաւ սուրբ տառս այս։

* 4 տող մաշուած է.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՈՒՑ

Եւ այժմ սակաւ ինչ պատմութիւնս արժանիս յիշատակի՝ գծագրեցից յայսմ տառի· ես Մինասեանց Թումայս եղկելիս ոգի· զի զկնի մեր եկողքն գիտասցեն՝ թէ յորոց ոմանց շինեցաւ և յորում ժամանակի սուրբ ուխտս այս, ե հանդիսաւոր կրօնաստանս՝ որ կոչի սուրբ Յակոբ, որ ի վաղուց ժամանակաց ամայի էր լեալ և անբնակ ի մարդկանէ։ Արդ՝ որպէս լուաք ի պատմութեանց՝ առաջին սկիզբն շինութեան սորա եղև յառաջին թագաւորացն Հայոց ի Սենեքերիմայ և յորդւոց նորա, ի ժամանակին յորում գնաց քոյրն Մանաճիրհի հետևոտն՝ Ջերմեռանդ հաւատով և յորդաբուխ արտասուօք ի Նըսէբինն, և եբեր զսուրբ Յակոբ հայրապետի ճկոյթն մինչ ի տեղիս այս, և աստ հանգեցաւ սուրբ մատն հայրապետին Յակոբայ բնակիլ· և աղատեցաւ յերկիրս Ռոշտունեաց յանիծիցն սուրբ հայրապետին. վասն որոյ աշխարհաժողով արարեալ թագաւորն Հայոց շինէ զփառաւոր եկեղեցիքս, զսուրբ Աստուածածինն. և զսուրբ Յակոբն, և զսուրբ Յոհաննէս, և զսուրբ Մանկունքն, և ժողովեալ բազում կրօնաւորս՝ առնէ զսա վանս միաբնակեցաց բազմաց, մինչզի ասի աւանդութեամբ՝ թէ քան զերեք հարիւրն աւելի աբեղայ եղեալ է ի վանքս այս։ Եւ հաստատէ թագաւորական հրամանաւ ի բոլոր ծովուս ընդ ամենայն իշխանութեամբ իւրով· գեօղս ե արտօրայս· այգիս և դրախտս և ծառատունկս ոխվ և մուլք վանացս։ Եւ մնայ բազում ժամանակ շէն այնպիսի փարթամութեամբ. մարդով և մլքով· ե այս առաջի շինութիւնս յառաջ էր քան գհայ Թուականն։ Բայց զկնի ժամանակաց աւերեալ տեղիքս՝ լինի անմարդաբնակ՝ իբր գհողաբլուր մի մեծ՝ ոչ ինչ մնացեալ նշան շինութեան. բայց միայն եկեղեցիքն անշարժ մնացին։ Եւ թէ զի՞նչ եղև պատճառ աւերմանն, և քանի ամ մնաց աւերակ՝ ոչ գիտեմ հաստատ. բայց կարծեօք թուի թէ քան զերկու հարիւր տարին աւելի աւերակ մնաց։

Իսկ ՊԿԱ 1412 ամի թուականութեան Հայկազեան տօմարիս, ի թագաւորութեան թաղթին Ղարայ Յուսուֆին, և ի կողմապետութեան մերոյ աշխարհիս Ամիր Էզդինին, և որդւոյն իւրոյ Մելիքին, որ էր յոյժ խնամածու և բարեկամ քրիստոնէից. և ի կաթողիկոսութեան մերոյ վիճակիս տեառն Դաւթի, վարդապետ ոմն երևելի՝ բարեսէր և աստուածային ձրիւքն բարգաւաճեալ՝ որոյ անուն Ստեփաննոս ճանաչի, մականուն Փիր, յերկրէս Ռշտունեաց ի գեղջէ Բախվանից, աշակերտ գոլով Յովհաննու Որոտնեցոյ մականուն Կանխիկ կոչեցելոյ. սորա վարդապետական քարոզութեամբ շրջագայեալ ի վերայ ամենայն երկրի ընդ կողմամբ աշխարհի հռոմոց ամս բազումս, երթայ միանգամ երկիցս յԵրուսաղէմ. և ապա դառնայ վերստին և գայ յաշխարհս Հայոց ի բնիկ և ի սեպհական երկիրս իւր՝ մեծաւ ընծայիւք ամենայն եկեղեցեացս՝ շուրջառ և սկիհ, և աւետարան բերելով վանօրէից և գիւղօրէից եկեղեցեացս։ Եւ յորդորեալ զքրիստոնեայս և ինքն գլխաւոր լեալ՝ քան զտասն աւելի եկեղեցիք կրամածք և կամարօք շինել տայ յերկիր Ռշտունեաց, յամիրապետութեան Մելիքին և հօրն իւրոյ։ Եւ ապա խորհրդակից և գործակից ինքեան կրօնա-

ւորս աստուածասէրս՝ որոց անուանք յորջորջեալ կոչին Մկրտիչ և Կիրակոս, Յովաննէս և Յոհաննէս, Սիմէոն և Գրիգոր, և եկեալ ի մեծահռչակ Թագաւորաշէն ուխտս՝ որ կոչի սուրբ Յակոբ, որ էր ի բազում ժամանակաց աւերակ լեալ և անմարդաբնակ. և ընկիզըն առնէ շինութեան տեղոյս, և յաջողութեամբն Աստուծոյ ժողովին ի տեղիս և այլ կրօնաւորք և աշխարհական գործաւորք վանացս, որոց անուանք գրեալ են ի դպրութիւն կենաց, և շինեն զվանքս ծագէ ի ծագ. Նորոգեն կղմնտրաշէն և կրամած զսուրբ Յակոբայ գումբէթս, որոյ ճարտարապետ և շինող էին կրօնաւորքն Գրիգորն և Յոհաննէսն և Յովաննէսն, որք մաքրական վարուք զկնի ամաց ինչ անցելոց փոխեցան յաշխարհէս, որոց ողորմի Քրիստոս յօր դատաստանին ամէն։ Իսկ Սիմէոն սրբասէր՝ արբանեակ և սպասաւոր լեալ վարդապետին Ստեփաննոսի, և տուեալ զինքն յընթերցումն Աստուածաշունչ կտակարանաց, եղև աշակերտ գրոց և սպասաւոր բանի։ Եւ մնացեալ վարդապետն Ստեփաննոս ամս ինչ ի Նորաշէն սուրբ Յակոբ, յանձն առնէ զաշակերտն իւր և զընակիչք տեղոյս շնորհացն Աստուծոյ, և ինքն դէմ եդեալ՝ երթայ դարձեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. և վախճանի անդ, որ և հանգուցիչն Աստուած հանգուսցէ զհոգի նորա ընդ Աստուածաբան վարդապետացն ի խորանսն լուսեղէն ամէն։ Իսկ ապա զկնի գնալոյ նորա, Սիմէոն սպասաւոր բանի, առնու գաւազան և իշխանութիւն վարդապետութեան ի ՊՀԶ 1427 թուականին և լինի խնամածու և հոգաբարձու և առաջնորդ սուրբ Յակոբայ հանդիսաւոր կրօնաստանիս. և ծնօղ և դայեակ, խնամիչ և դարմանիչ, սնուցանող և սփոփիչ սուրբ Յակոբայ միաբանիցս, իբր զգորովագութ ծնող զաւակաց իւրոց։ Վասն զի յաւուրս սորա և մեր, բազում վրդովմունք եղև աշխարհիս մերոյ. և էառ անիծեալն սքանդար զաշխարհս մեր և զանառիկ բերդորայքս քրդստանաց. զՎան և զՈստան, և զայլսն ամենայն ի ձեռաց բնիկ պարոնանց մերոց. և անցոյց զտունն Շամօանից, և մնաց երկիրս շատ աւերակ։

Ի ՊՀԴ 1425 թուին էառ զՎան։ Եւ ի ՊՁ 1431 թուականին, էառ Փիր բէկն զԱղթամար կղզին և անպատմելի տրտմութիւն եհաս աշխարհիս և ազգիս հայոց. և երկիրս աւերակ մնաց երկու տարի։ Եւ յՊՁԴ 1435 թուականին, Շահռուհն ի դուրս եկն, և սքանդարն փախեաւ, և երկիրս սասանեալ կայր, և զՋհանշէն եդիր պարոն Շահռուհն. և ապա խաղաղացաւ երկիրս։ Եւ յՊՁԸ 1439 թուին գողացան զԼուսաւորչի աջն ի Սիս. և առին վրացիքն զԳողգոթայ ի Հայոցս. և հուր անկաւ յերկնից ի Մըմրուտ սարն և շատ տարի այրեց զայն սարերն։ Եւ յՊՂ 1441 թիւն յէջմիածին կաթողիկոս նստուցին։ Եւ յայս ամենայն նեղութիւնքս և ի հալածանքս՝ հեղահոգի և Աստուածաբան վարդապետն Սիմէոն, զսուրբ Յակոբայ միաբանքս իբր զգորովագութ ծնող պահեաց զսոսա, յայլ և այլ տեղիս շրջելով, ի հոգեորսն խրատելով. և զմարմնաւոր զպէտսն լիակատար պատրաստելով։ Սա ստացաւ և բազում մուլք և արտորայք, այգի և ծառատունկք վանիցս, զոր ինքեամբ գնեաց տրօք քրիստոնէից, և զոր յորդորեալ զքրիստոնեայս, զքահանայս և զաշ-

խարհականս, եա դնել նոցա ի հալալ արդեանց իւրեանց մուլք և անդասաանս վանիցս, որոց տացէ..Քրիստոս Աստուած ընդ միոյն հարիւրապատիկ։

Եւ արդ այսոքիկ են նոր տուած, և արծաթագին մուլք վանացս։ Զինչ որ բնական մուլք է վանացս՝ թէ կաղամախի պրակն, և թէ արտ, և թէ ափն, որքան և է ի յԸնձաքու դաշտս[5], յայտնի է ամենեցուն։ Եւ երկու արտ ի Շատվան[6], և ծառ ի Գանձակ[7], և երկու արտ ի Գեզձիմն[8]։ Եւ հինգ արտ և Սաղաթիէլ երեցանց ագոյ կէսն ի Մոխբաբերդ[9]։ Եւ Օմար Շամշանի բաժին հողն ԺԳ արտ. և խտունձն. և փադախն. և կալն. և Մանդուկանց Ամիրպէկի այգին ծառերովն ի Մոխրաբերդն։ Սոքա ամենեքեան Սիմէոն վարդապետին արծաթագին մուլք են վանացս, զոր ստացաւ տրօքն քրիստոնէից. և յորդորեաց վարդապետական քարոզութեամբ զայլս ոմանս՝ ստանալ ընչիւք իւրեանց, և նուիրել մուլք և ոխվ սուրբ Յակոբայ վանացս։ Եւ երկու արտ ի Նարեկ, և մէկ արտ ի Բախվանց[10]. դարձեալ աղաչեմ յիշել ի Քրիստոս զլերթահատոր հարազատքս մեր. զսրբակրօն աբեղայքս՝ որք վայելողք են այս տաուխս. և սպասաւորք սուրբ տաճարիս, զՊողոսենց Կիրակոսն, և զԳաւաշեցի Ստեփաննոսն, զԿիրակոս և զՄկրտիչ Մահդասիքն, զՍարգիս և զԿիրակոս,ն զՀայրապետ և զերկու Թումայն, և զԱռաքելն, և լի բերանով.. Աստուած ողորմի ասել։

Ուրիշ գրչի յաւելում

Յիշեցէք ի Քրիստոս զբարեմիտ տանուտէրն զԳուլազիզն, և զամենայն ազգականս իւր. որ ետ վերստին նորոգել զՄաշտոց գիրքս. և ետ ի դուռն սուրբ Յակոբայ տաճարին.. ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս Ստեփաննոս եպիսկոպոսին և այլ կրօնաւորացն տէր Գրիգորին, տէր Մարտիրոսին, տէր Մովսէսին. տէր Յովաննէսին, տէր Վարգանին, որ բազում աշխատեն ի դուռն սուրբ Յակոբայ տաճարին, Աստուած ողորմի ասացէք Ստեփաննոս եպիսկոպոսին, որ զպարիսպն և զտներն նորոգեաց և զչորս եկեղեցիք սալահատակ արար..

3. *Աղթամար գտնուած Աւետարանից.*

..Իսկ գծագրեցաւ սուրբ աւետարանս ի թագաւորութեան Ամիրզա Ջհանշային, և ի կողմնապետութեան մերոյ աշխարհիս Ղըլիճ Ասլան պարոնին. ի խնդրոյ երկուց հարազատաց Ծերուն աբեղային սուրբ Վարդանայ հէրպետին, և եղբօր իւրոյ Թումային.. Եւ արդ՝ ես ունայնս..Մինասենց Թումայ անուամբ և եթ աբեղայս..ձեռամբ իմով և կազմեցի յԱստուածապահ կղզիս Աղթամար. ընդ հովանեաւ սուրբ Խաչի տաճարին. ի հայրապետութեան տեառն Զաքարիայի, և ի թուականութեան Հայկազեան տօմարիս ՊՂԳ 1444 ի դառն և ի չար ժամանակի, յորում տառապեցուցանեն և նեղեն զազգս քրիստոնէից, ազգի ազգի կեղեքմամբ և անօրէն հարկապահանջութեամբ, և յաշխարհէ յաշխարհ վտարմամբ իբր զգերի տամբ և ընտանեօք անիրաւ ազգն նետողաց, որք են տեարք և թագաւորք և իշխանք աշխարհաց մերոց ազգաւ թուրք։

4. *Նոյն տեղի մի Գանձարանից.*

Արդ... անկարգս ի կարգաւորաց.. և անյիշելիս ի գրչաց Մինասենց

Թումայս եղկելի ողիս՝ անուամբ և եթ աբեղայս.. գծագրեցի զսա՝ մեծաւ աշխատութեամբ յԱստուածախնամ կրղզիս յԱղթամար, ընդ հովանեաւ.. սուրբ խաչի տաճարիս, ե Ամենափրկչիս, և սուրբ Աստուածածնիս, և սուրբ Սարդիս զօրավարիս. ի հայրապետութեան տեառն Զաքարիայի. և ի թուականութեան Հայկազեան տօմարի ՊՂԴ 1445 և նուիրեցի զսա ընծայ...ի սուրբ Խաչս Աղթամարայ...յիշեցէք ի Քրիստոս զերախտաւոր քեռին իմ զուսուցիչն զԹումայ միայնակեացն, որ բազում ջան և աշխատութիւն կրեալ է ի վերայ իմ.. և քուերցն իմոց Ոսկի տիկնայ և Անդալատի. և որդոց նոցին Հայրապետի սրբակրօն աբեղայի լերդահատոր հարազատին իմոյ...

5. *Ռշտունեաց Բէլուփ մի Աւետարանից.*

..Իսկ ես ունայնս.. և անարժան ծառայս ծառայեցդ Աստուծոյ Մինասենց Թումայս անուամբ և եթ աբեղայս լուայ զփափագ և զսէր ե եսու գծագրել զԱստուածախօս սուրբ աւետարանս քուեր որդոյ իմոյ Հայրապետի սրբակրօն աբեղայի,, յԱստուածախնամ կղզիս Աղթամար կոչեցեալ. ընդ հովանեաւ երկնանման և գումբէթաձև սուրբ խաչի տաճարիս. և Ամենափրկչիս, և սուրբ Սարդիս զօրավարիս. ի հայրապետութեան տեառն Զաքարիայի. և ի թուականութեան Հայկազեան տումարիս ՊՂԵ 1446. և ընծայեաց զսա նուէր և ընծայ Աստուածաբնակ սուրբ տաճարիս. որ է շինեալ յանուն սրբոյն Յակոբայ հայրապետին. և սուրբ Աստուածածնին. և սուրբ Յոհաննէս աւետարանչին. առաջի Կապուտ կողան բերդին։ Եւ է հռչակաւոր վանք և հրեշտակաբնակ կրօնաստան. յայսմ ամի էառ Ամիրզա Ջըհանշէն զԲաղդատ, որ է Բաբելոն, և էր թիւ ՊՂԵ 1446։

6. *Վանի տիրամայր եկեղեցու մի Նարեկից.*

..Արդ եղև գրաւ գրչութեան սորա յԱստուածապահ կղզիս Աղթամար. ընդ հովանեաւ գմբէթաձև և երկնանման սուրբ խաչի տաճարիս։ ՋԱ 1452 թուականիս. ի հայրապետութեան տեառըն Զաքարիայի.. ձեռամբ Մինասենց Թումայ անուամբ և եթ աբեղայի...

Բ. ՍԻՄԷՈՆ ՌՇՏՈՒՆՑԻ

ՊԽԱ 1392 թուին հայոց. էառ ամիր Էգդին զՈստան քաղաք յեղբօրէն իւրմէ Նաւասարդի ամիս. ի յայտնութեան պահոց երեքշաբթի և շատ պակասութիւն էած քրիստոնէից։

Ո՛վ սուրբ մանկունք հոգևոր եղբարք՝ զայս Նարեկացիս Յակոբ վարդապետ[11] ինձ Սիմէօն վարդապետիս ետուր. զՈստանայ երկիրս աւերեցին. այս յԱղթամար էր. բերաւ Յակոբ վարդապետն ի Վան. յորժամ զօրքն Թուրքացն կոտորեցան վարդապետն փախեաւ ի Վանայ և երեկ ի Նարեկ հեծելէն նահատակեցաւ. գիրքս մնաց ի Վան մօտ յաշխարհական էրէց մի. նա փախուց և տարաւ յԱղթամար. տէր Զաքարէն խաշրը տարաւ. ես Սիմէօն վարդապետս. Լ 30 թանկայ տուի ու թափեցի...

ՊԾ 1401 թուին. սաստիկ և թանձրը մարախ երեկ ի շամբէն ի վեր դեղին և չորս թևեան՝ ի գարնանային ժամանակն՝ ի համբարձման աւուրքն։ Եւ Աստուածային գթական ողորմութիւն հասաւ. և զամենսեան կոտորեաց ի ծովս Ռշտունեաց. զոր ալիք ծովուն դէզադէզ իբր զշիղջս աւազաց յեզրն կուտեաց. և ի նեհոյն մարդիկ ձանձրանային յանցանելն։ Ի սոյն ամի Թամուր բէկն էառ զՍևաստ քաղաք. և քանդեաց և աւերեաց. և սրախողող արար զամենսեան. և զբազումս գերեաց ի կանաց և ի տղայոց. և երեք հազար մարդ զերկիր բացեալ և կենդանոյն թաղել ետ. զայնոսիկ որ նետ արձակեցին ի նա։ Եւ զայս արարեալ բազմութեամբ զօրօք գնացեալ ի շարն ի վերայ Հալբայ և Դամասկոսի. և մատնեաց Աստուած ի ձեռս նորա, էառ և անչափ կոտորումն արար ի Հալպայ քաղաք. որ երեք գլխէ մնիբրայ շինեաց ի տաճկականաց։ Եւ էանց ի վերայ Դամասկոսի և էառ. և երեսուն օր թալան արար. զոսկի զարծաթ՝ և զմարգարիտ. և տասներկու հազար ուղտ իւրն հասայ եբարձ։ Եւ յետ այն հրաման եհան և հրով այրեցին զքաղաքն առ հասարակ և մղեղեցին։ Եւ զմեծ մսքիթն փակել երետ՝ յորում էր գերեզման Անանիայ առաքելոյն։ Եւ զինչ մնիբրայ և մզկիթ կայր յերկու քաղաքին զամէն քանդել էրէտ և քակել. և զգերելոց համարն որ էառ ոչ ոք կարէ ի թիւ արկանել. նոյնպէս և զսպանելոցն։ Եւ եկեալ մեծաւ յաղթութեամբ ի վերայ Մէրդնայ, և տապալեաց զքաղաքն ի հիմանց. և արար որպէս զհողս արտավարաց. բայց զբերդն ոչ կարաց առնուլ. այլ յերկրէն շատ գերի եբեր ի քրիստոնէից։ Եւ Թամուրեցիքն և մարախն հետ իրերաց հասան յերկիրն մեր. այսինքն յՈստան և ի գաւառն իւր։

Գ. ՄԱՆՐՈՒՆՔ

ՅՈՀԱՆՆԷՍ ԿՐՕՆԱՒՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Վանի ս. Նշան եկեղեցում պահուած Նրա գրած աւետարանի սկզբում

Ի ՊՁԹ 1440 Թուականին Ջհանշայ Ամիրզէն ի վրաց տուն մտաւ. և շատ աւեր արար և զեկեղեցիքն քակեց. և քան զտասն երկու հազար աւելի ի հայոցս. զորս սպան և զորս գերի վարեաց. և ՊՂԲ 1446 զԲաղդատն էառ։

Ի ՊՂԹ 1450 էառ Ջհանշայ Ամիրզէն զՇզրնկէն. և անթիւ քրիստոնէից կանայք և մանկունք գերի կալաւ։

Եւ Ջ 1451 Թւին. զՂլաթայ երկիրն և զԲազիշուն արար գերի և գետին. վա՜յ հազար բերան. որ զայս խրգճերս տեսաք աչօք մերօք ի ժամանակին մերում։

A III/Ձ436 3108

ԺԶ ԴԱՐ

Դ· ՅՈՀԱՆՆԷՍ ՔԱՀ· ԱՐՃԻՇԵՑՈՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

1. Ինքնագիր յայսմաւուրքից, գրած 1531 թուին.

Դարձեալ աղաչեմ զձեզ սուրբ քահանայք. ե աստուածասէր ժողովուրդք. ոչ ձանձրանայք կարդալով կամ լսելով զգանգատ ե զտապալումն աշխարհաց. ես առաւել զսաստիկ պատուհասն՝ որ ի Վան եղև և յիւր բոլորն. զի պարտ է մեզ գծողացս՝ սակաւ մի ճառել զպակասումն ազգաց և զպատուհասն յանցանաց մերոց. ե ձեզ ընթեռնուլ և մեզ մեղաց թողութիւն խնդրել. և ձեզ խաղաղութիւն հայցել ի բարերարէն. զոր մաղթեմք հանապազ զմարդասէրն Աստուած. որ զխնդրուածս ձեր կատարէ. և զայս պատուհաս ձեզ տեսնուլ ոչ տայ ամէն։

Ի յայս ժամանակս՝ որ հայ թուական ՋՁ 1531 աշխարհաւեր Ուլամէն ինքնագլուխ դարձաւ ի Թաւրէզ. ե շատ չարիք գործեաց. ճանապարհորդ կոտորեաց և թալանեաց. և բազում մեծունեայք տուգանեաց. զի շահ Դահմասն ի Խորասան էր. և ինքն էր Իէկլարբէկի. երբ լսեց զգոլ շահին փախուստ առաւ և ամրացաւ ի գղեակն Վանայ. և ձեռք ձգեց ի փաթշահն Հռոմոց [13] թէ ես քեզ հնազանդ եմ և գու ծառայ ղաբուլ անես. շուտ հեծեալ ուղարկես որ զբերդս պահէ. և ես գամ ի քոյ ծառայութիւնդ։ Զոր լուեալ խոնդքարն յոյժ ուրախացաւ, և առաքեաց բազում ենգիչարի. և շատ խալաթ ուլամին. ե իբրև հասան ի Վանայ դաշտն՝ ի գեօղն որ ասի Արտամետ, ելեալ գոռոզաբար գնաց ի դէմ հեծելյին և խալաթին. դարձոյց Աստուած զսիրտս իւր հեծելյին որ ի բերդին. յիշեցին զաղ ու հացն շահին. և փակեցին զդուռն բերդին ի դէմ ուլամին. և նորին չար խորհուրդ խափանեցաւ. զի այն էր միտքն՝ որ զէնգիչարիքն ի բերդն դնէր, և ինքն զծովու բոլորս թալանէր, և գերի վարէր. և քաջութեամբ ի խոնդքարն գնէր։ Երբ զայն տեսան զօրք հռոմոց՝ որ ամէն բան

ուլամին սուտ եղև. առեալ զնա իբրև զչար դերի՝ և տարան ի խոնդքարն. և նա սակաւ մի ընդունեց. և զշահի բանն հարցաւ. թէ ո՞նց գնանք ի վերայ նորա. և նա չտրախօսեց զամիր Շարաֆն թէ ամէն չարութիւն ի նմանէ է. և նա տուեալ վաթսուն հազար հեծեալ՝ որ եկեալ պաշարեաց զդղեակն Բաղիշու. երբ իմացաւ ամիր Շարաֆն զբերդն ամրացոյց. թողեալ ի մէջն զորդի Շխամիրն. և ինքն գնաց ի Թավրէզ մօտ ի շահն. և գանգատ արար յուլամիցն. և ելեալ շահն երթայր ի վերայ. Նա լուեալ զգալն նորին փախեաւ ի Դիարբէկն. և շահն ի Խլաթայ ի յետ դարձաւ. և դարձեալ շինեցաւ Բաղէշ, Մուշ և Խլաթ. զի լուան զգալն Ուլամին և ամենեքեան ցրուեցան. և դարձեալ ժողովեցան. և էր թուական ՋՁԱ 1532։ Եւ դարձեալ միւս ամին մահտարաժամ եղև ի վերայ աշխարհի և բազում մարդիկ խոցեցան ի հրեշտակացն Աստուծոյ և մեռան. քանի հայր և մայր անորդի եղան և անզաւակ. և քանի քոյր առանց եղբայր և եղբայր առանց քոյր մնացին. քանի սիրուն հարսն ու փեսայ բաժանեցան. և քանի քոյր ու եղբայր ի մէկ գիշերի մեռան. և ո՞վ կարէ պատմել զաղէտ և զկսկիծն ծնողացն և զընտանեացն. սիրելեացն և զբարեկամացն. բայց Աստուծոյ միայն է գիտելի որ ստեղծ զնոսա. և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Եւ յորժամ եղև այս պատուհասս՝ նա զայն աչօք տեսաք՝ որ ո՞վ ոք փախաւ՝ ապրեցաւ. ըստ բանի մարգարէին, որ հրամայէ թէ փախիր և թագիր առ ժամանակ մի մինչև անցցէ բարկութիւն տեառն. զի այս երեք ցասումս մի են. հեծելշարժութիւն. սով և մահ. ի հեծեալէն փախիս կուխալիսիս. ի սովուն գնաս ի լիութիւն ապրիս. ի մահուն փախիս ազատիս։ Ճշմարիտ է ի բնական մահուն մարդն փախչիլ ոչ կարէ. բայց մահտարաժամն պատուհաս է. ես մեղաւոր Յօհաննէս զայս դառն օրս աչօքս եմ տեսեր. և զայս կսկիծս քաշեր. զփախածն ճոխ ի շուռ եկեր. և դաչ փախածն ի հողն աճրաեր։ Եւ դարձեալ ի միւս ամին ՋՁԲ 1433 էր թիւն. առեալ ուլամէն հեծեալ և եկեալ ի Խիզան. և գնացեալ Ամիրշարաֆն ի վերայ. և պատերազմեցան ի Տաճկոյ դաշտն. և Ամիրշարաֆն սպանաւ. և հեծեալքն որն սպանաւ. և որն փախեաւ. և ուլամէն զհետ մտեալ մինչ ի Խլաթ. և սկսաւ ի չարիս. շատ սպանեց և թալանեց. և բազում գերիս վարեաց. ասելով դուք անցեալ տարի յինէ փախեայք և հետ Շարաֆին ի Ղըզլպաշն գնացիք. և էառ զառ և զաւար և նստեալ ի Թուխայ Ջուրն զօրդուն ի տեղն եթող. և սուրայ[14] հեծելով ի լղար[15] արար ի վերայ Վանայ. և նոքա իմացեալ ամրացան ի բերդն. և գնացեալ զօրքն ի յԱմկոյ երկիրն զԱլուր դերի արարին շատ հայ ու տաճիկով ի ձեռն անկաւ. և կամէր որ զԲերկրի ու զԱրճէշ գայր գերեցուցէր. և մեք լուեալ ահաբեկ եղաք. և փախեալ ի յԵրիձոր և յԱլատաղն սակաւ մի ամրացաք. զմահն մոռացաք և զկենդանիքն լայեաք. լալով և ողբով զԱստուած աղաչէաք. և ինքն Քրիստոս ազատեաց. յանկարծ լուաւ թէ ի Թավրիզոյ հեծեալ եկաւ. ելեալ ուլամէն ի Վանայ և փախեաւ. զի Աստուած խնայեաց զքրիստոնեայքն. շահն ի Խորասան էր և անտէր էաք. և Քրիստոս իւր ժողովուրդն ազատեաց. և զուլամի չար խորհուրդն

խափանեաց, և գնաց դարձեալ ի Թուխայ Ջուրն. և սակաւ մի գերի ազատեաց աղաչանօք տանուտէրանց. և առ զառ և զաւար և գնաց քաջութեամբ ի Դիարբէկն. զի Ջամիր Շարաֆն առեալ էր և զխոնդքարի սիրտն ուրախացուցեալ. և այնչափ չարիք գործեաց որ չեմ բաւական ճառել. զի շատք ի գերելոցն ի յԱկթուն քօփրուն ի վայր վաթեցան ի չարութենէ զօրացն. և ի պղծութենէ էնդիչարեացն. և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Եւ դարձեալ ասէ գիրն. թէ մեղք մեր խնդիր գտան և բարկութիւն Աստուծոյ առ մեզ բերին. մեր մեղքն յուղարկեց զՈւլամէն. որ էառ զխոնդքարն ի միւս տարին և երեր ի վերայ շահին բազում հեծելով և անթիւ արապով, թօփով և զարպաղանգով. և վաթսուն հազար թըւանգչով. զոր մարդ ոչ կարէ պատմել զնորին թագաւորութիւնն. թէ որպէս. և կամ զիարդ. ոսկին և արծաթ զոր մխսէին այնչափ էր. և գնացեալ առին զշահնիստ քաղաքն՝ որ է Թավրէզ. և սփռեալ տաբածեաց զզօրսն իւր ի չորս կողմն. աւերեցին զբազում քաղաքս աւարաւ և գերութեամբ։ Եւ լուեալ շահ Դահմանին զգալ խոնդքարին, և ելեալ ՚ի Խորասանայ ի լղար, և եկեալ ի Դարդազին. և տեսեալ զբազմութիւն հռոմոց հեծելին՝ զարմացաւ և ասաց. թէ զդոցա ոտքն ու զձեռքն կապեն մեք յամիս մի չեմք կարեր ի սուր քարշել. թող թէ կռուով, միայն թէ Աստուած բարկանայ և դոցա պատուհաս տայ։ Եւ յայնմ գիշերին շատ անձրև եկաւ. և սաստիկ ձիւն և ցուրտ եղև, և երեք հազար մարդ մեռաւ ի զօրաց խոնդքարին. և շահն կամք ունէր զի յերեք դիմաց ի վերայ գայր. Մահմադ սուլթան տասն հազար մարդով ի խոնդքարն գնաց. և զթաճն ձգեց և շատք ի զօրաց շահին խօսք էին տուեր ուլամին ի փախուստ գնաց դէպի Խորասան, և խոնդքարն ի յետ դարձաւ և գնաց ի Բաղդատ. և զուլամէն եթող՝ ի Թավրէզ. շահն լուաւ զմահուն ուլամին շուտ ի վերայ դարձաւ. և նա լուաւ զգալ շահին փախաւ ի Թավրիզոյ և ամրացաւ ի Վանայ բերդն. և Մահմատ սուլթան ի յԱրծկէ փախուստ գնաց ի Թավրիզոյ. և լուեալ շահին ի Վան լինելն դաշխարհաւեր ուլամին, շուտ ի վերայ հասաւ. և պաշարեաց զքաղաքն և զբերդն, և ի յուժ ձգել[16] կարմիր գլխին[17], թողին ըզքաղաքն և ամրացան ի բերդն. և ի յառնուլ քաղաքին երեք հարիւր մարդ ի սուր քարշեցին, և ի յահէ կարմիր գլխին, աբեղայ մի և շատ մարդ ներքև յոտից մնացին և մեռան ի կտրած քարին. և ով կարէ ճառել զպատուհասն եղև. և սկսաւ քակել զքաղաքն և զերկիրն, զի զշէնսն քակէին և մինչև ի լոյս հազար տեղ կրակ ՚վառէին և զճանապարհներն պահէին, որ մարդ ի բերդէն չիջանէր, և հեծեալքն ցուրեալ ի չորս դիմաց աւերեցին և անմարդաբնակ արարին. զՎանայ երկիրն. զՈստանայ և զԱմկուն, և զինչ մարդ որ ի ձեռքն անկանէր այնչափ սանջէին, որ զիւր տեղն և զգեղն ի խոստ գայր. և տարեալ ի յիւր շէն չարչարէին, մինչ որ ի խոստ գայր ապաթանքն և դայլոցն. և սաստկացաւ պատուհասն, որև զհրաշալի վանօրայքն և զեկեղեցիքն քակեցին. և բազում սուրբ նշաններ խաչ և աւետարան, շուրջառ և սուրբ գրեանք ի ձեռս անօրինաց մատնեցան. և անսուրբ ձեռօք շօշա-

փեցան, և գերեցան. յաշխարհէ յաշխարհ մոլորեցան վասն մեղաց մերոց որ ասէ գիրն թէ սկիզբն աւերման ի տանէ իմմէ արարից։ Եւ օր մի շաւաղաթ արար շահն թէ բազամաքին[18] թող իջնու, բան չեմ. ասեր. իմ գըլուխս և ուպամէն դաստուր ետուր և շատ ժողովուրդք իջան. և դաստուր երետ կարմիր գլուխն. թէ գնացէք ի Մահմտանք. և Ամիրայ րէկին հրաման արար՝ թէ մարդ դիր, որ տանեն ի քո յաշխարհն. և նա այնպէս արար. և միւս առաւօտին այլ շատք իջին ի բերդէն, և տեսին երկու ենդիչարի հետ բռխաթին[19] աղքատի կերպիւ. դի ի Բաղդատ կուգնային. զայն իմացեալ շահին և զամենեսեան ճարակ արար սրի. և կոտորեաց յառջև բերդին, և անդ էր տեսանել զաղիողորմ ձայնս նոցին որ աղաղակէին դիմաց բերդին, և հառաչէին թէ օգնեցէք մեզ, և թափեցէք զմեզ յանօրէն կարմիր գլխի սրէն։ Եւ նոքա դառն լային և գոռային ի բարձր բերդին և օգնել ոչ կարէին, և նոքա լալով ի սուրն մաշէին, և չէր կաբ մեր բաւական պատմել զխիղճս նոցին, և այնքն, որ ի Մահմլտանք կուգնային, ի հասանել յոտն Վարադայ եղև սաստիկ ձիւն և բուք, և վեց հարիւր այր և կին, երիտասարդ և տղայ՝ մեռան ի սարին. և այնոքիկ որ յառաջն էին գնացեալ յօտաբ երկիր ամենեքեան ևս ցաւօք մեռանէին, և ի մէկ գեօղն ի Մահմրտանք ութսուն հոգի մեռան վանեցի, և բնականքն մէկ ոչ պակասեցաւ, և քանի գնայր պատուհասն սաստկանայր. և սիրտ բռնաւորին ի բարկութիւն շարժէր, զի պատուհասն յԱստուծոյ էր. ի յամէն օր տասն մեծ թօփ ձըգէին ի բերդն՝ և զարպազանգին և թըւագին թիւ չկայր, և ծովու բոլորս ի մեծ թօփի ձայնէն կուսասանէր. ապա բերդի մարդ ոնց կուդիմանայր, աւազ, զիմ հոգւոյս, թէ քանի մարդ մեռաւ սրով և թրով, թօփով և թուանկով, սովով և ծարաւով, ահիւ և դողալով, ի սուրբ Սարգսի պահոցէն մինչև ի համբարձումն աասնուհինգ հազար մարդ մեռան ի բերդն ի քաղաքն և ի սարն. և շատ պատուհաս գրած կայ ի Լանկ Թամուրէն, և յայլ չար թագաւորաց. բայց քան զայս մարդ չէր լսեր. մենք զամէն աչօք տեսանք. և զկսկիծն քաշեցինք. պատուհասն այն էր՝ որ մեծատունք որ ի բերդին տուն կայր որ քսան հոգի ի վերն ելան. մէկն ի վար չեկաւ. ամէն մեռան. ոչ հացն էր պակաս և ոչ ջուրն. և ամենայն բարիք առատ էր ի տներ, որ երկու տարի ուտէին ոչ պարապէր. բայց պատուհաս էր որ պիտի կատարէր, փառք ներողութեան Աստուծոյ որ ստեղծ զնոսա. և մատնեաց ի ձեռս անօրինաց. և դարձեալ այլ պատուհաս, որ երբ ի բերդէն ի վայր իջան՝ վաղուց գնացած ճանապարհորդներ եկան ի քաղաքն և շատք մեռան։ Եւ լուաւ խոնդքարն ի Բաղդատայ ի Թավրէզ դիմեց. և ապա լսեց շահն և գնաց բերդէն ի յետ. և մնացեալքն ելեալ ի բերդէն նուաղեալ և նուաղեալ. խոց սիրտ և կալոտ աչօք. որոց հայրն և մայրն մեռեալ. և որոց դուստր և որդին ի սուրն քարշեալ. և որոց տունն անցեալ. և սիրտք սիրելեացն և բարեկամացն խորովեալ. և մարդ հողեղէն ոչ կարէ ճառել, կամ լեզւով պատմել. բայց աղաչեմ զամենեսեանդ՝ լիով Աստուած ողորմի ասել նոցա հոգւոյն. թէ յայս կեանքս նեղութեամբ և փորձութեամբ մեռան, նա ի Քրիստոսի յարդար գա-

տաստան պարզերես լինին. և օրհնեալ ձայնին արժանի եղէն որ ասէ եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զանսպառ ուրախութիւնն ամէն։ Մանաւանդ զստացող գրոցս զդարբին Շահապն. և զեղբայրն զԲրահիմն, և զծնողս նոցին զդարբին Թումէն և զՇամամն. և զամենայն արեան մերձաւորքն՝ զկենդանիքն և զհանգուցեալքն ամէն։ Եւ զիս անարժան գծողս Յօհաննէս. և զիմ հօրքուրն Զինախ փաշէն զՋնձելենց հարսն, որ քսան ընտանեօք ի բերդն ելաւ. մէկ ի վայր չեկաւ. տուն անցաւ, ե շատ մուլք ու մէրէթն անտէր մնաց. Աստուած ողորմի ասացէք առհասարակ ամենեցուն. և ով կարդայ այս բաներս և լսէ, Քրիստոս ողորմի ասէ, նա Յիսուս միածին զիւր մեղքն թողու. և զիւր ննջեցելոցն ոչ յիշէ ամէն։ Եւ դարձեալ զմնացուած չարիքն, որ եղև ի յերկուց թագաւորացն, շահն գնաց ի վերին աշխարհն ե խոնդքարն յետև, մինչև յաշուն ի շուռ եկին. շահն գնայր՝ ու խոնդքարն յետևն. ոչ պատերազմեցան, և ոչ հաշտեցան, այլ խոնդքարն ի հետ դարձաւ. և շահն զկնի մինչև ի Խոյ. հռոմոց թագաւորն գնաց ի Խլաթ, և Ուլամէն ի Վան ի ներս գնաց. մեծ փաշէն որ խոնդքարն ուղարկեց թէ զՎանայ տիրէ, եկաւ տեսաւ աւերն կարմիր գլխոյն. որ այլ զօրութիւն չէր թողեր թօփն ի բերդն. շուտով փախաւ ի Գաւաշն ի ներս և գնաց ի խոնդքարն, այն լալի ժողովուրդն Վանայ, որ զայս ամենայն չարիք տեսեալ էին, տեսին որ հռոմեցիք թողին զբերդն ու փախեան, նոքա այլ փութով ելան զկնի հեծելին և գնացին ի Մոկս դառն արտասուօք, զի զրկեցան ի յընտանեաց որ ի բերդն մեռան, և յապրանաց որ թալան գնաց. և դարձեալ լալոտ աչօք ելան, որ յօտար երկիր վտարան։ Եւ եկեալ շահն ի Վան, և տեսաւ զբերդն անմարդարնակ և զքաղաքն աւերեալ՝ խիստ ուրախացաւ ի բերդին անկռիւ առնուլն, և դառն տրտմեցաւ ի վերայ աշխարհի աւերմանն. երդուաւ թէ՝ յօրէս ի յետ Վանայ շաղաւաթ առնեմ. թէ զիմ որդին են սպաներ՝ այլ բան չեմ ասեր, խուդէն վկայ։ Ապա լսեց թէ խոնդքարն զուլտմէն երեք փաշայով ի յետ դարձոյց ի Վանայ բերդն, գիշերով ի լղար գնաց մինչև ի Կապուտ կողն՝ Ուլամէն փախաւ. զերեք փաշէն հեծելովն ջարդեց և դարձաւ ի Վան. և եկեալ ի յԱրճէշ, տեսաւ զի Իբրահիմ փաշէն և Մահմադ սօլթան ի յետ էին դարձեր, զԱրճիշու բերդի թուանգչիքն հաներ ու զժողովուրդն սուրգուն [20] արեր մինչև յԱրծկէ. և դարձեալ քրիստոնէութիւն արար էն օրհնեալ փաշէն. ու զամէն ազատ արար որ եկին յաշխարհն իւրեանց. և ինքն առաւ զխոնդքարն և գնաց ի Դիարբէկն։ Եւ շահ Դահման առաւ զիւր եղբայրն. և զՄանթաշայ սօլթան՝ որ ի յԱրճիշոյ կողմեր դէմ հռոմոց թաղաւորին գնաց զՍարուսուն թալանեց, զԽլաթ՝ զՄուշ, և դարձեալ ի յՕստան ի ներս գնաց ի Թավրէզ։ Եւ մնաց Սահրատ ի ձեռն հռոմոց զօրացն Բաղդատ՝ Արծկէ՝ և Աղթամար։ Աւաղ զիմ հոգիս հայրք և եղբայրք, թէ քանի չարիք գործեցաւ ի յայս հեծեալ շարժութեանցս և ի վրդովմանցս. քանի քաղաք և գաւառ աւերեցան, և քանի վանօրայք և եկեղեցիք քակտեցան. քանի մեծատունք աղքատացան, և վաճառականք թալանեցան. քանի քրիստոնեայք գերի վարեցան, և անմեղ տղայքն ի յանօրէնքն խառնեցան. և չեմ կարնար գրել չարիքն, զոր վե-

րին աշխարհն քաշեց. ևս առաւել ծովու բոլորս. և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Որ զաղօթքն և զժամատեղն մոռացեալ ենք. և զամենայն բարեգործութիւնս միմեանց չար կամենամք. և զամենայն չարիս գործենք, զգիրս բան ատենք, և զմեր կամքս կատարենք. հազար վայ մեզ մեղաւորիս։

ՅՈՀԱՆՆԵՍ ԱՐՃԻՇԵՑԻՈՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ·

Արի՛ գնա ի ժամատեղ, որ զգիրս բան լսես,
Թէ քահանայն խրատ մի տայ՝ զքո մեղքն լաս ւապաշխարես.
Եւ թէ չերթաս յեկեղեցին, և Աստուծոյ ծունր ոչ գնես,
Ի Քրիստոսի ահեղ դիվան քո ստեղծողին ի՞նչ կու ասես։
Գնա ի դուռն եկեղեցւոյն՝ որ զգիրս բան լսես,
Հօն զՔրիստոս ու զառաքեալսն ու զմարգարէսն է գրած ի ներս.
զԱւետարան երբ որ կարդան՝ զՔրիստոս յայն տեղ տեսանես,
Մեզանէ երես էր դարձուցեր ձգեր է սոփն ու զսուրն ի ներս.
Շատ աւերեց զեղ ու քաղաք, զայդ վանօրայքդ որ դու գիտես,
Որն է ընկեր գոնէ ի դուռն, որն գնաց յաշխարհ ի ներս.
Տիրամայր Աստուածածին քո միածին բարեխօսես,
Որ զէգ ցասումն ի յաշխարէս, ու զպատուհասդ վերուցես.
Եւ Յոհաննէս Արճիշեցի բանդ խրատ որ կու ասես,
Երբ մարդ այդոր ականջ չաներ՝ դու զգլուխդ յէր կուցացունես։

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ զձեզ սուրբ քահանայք և Քրիստոսի արեամբ գնեալ ժողովուրդք. յորժամ կարդայք և լսէք զայս բաներս, միամիտ մտօք և լի սրտիւ Քրիստոս ողորմի ասացէք ամենայն դրելոյս ի սմա. և որք ի յայս դառն տարիս մեռան ի սար ի ձոր, ի բերդ և ի քաղաք, ևս առաւել անյիշատակ մեռելոցն մանաւանդ ստացողի սուրբ գրոցս.. ընդ նոսին յիշեցէք զանարժան յետին դրիչս զՅոհաննէս էրէցս. զծնօղսն իմ զմահդասի Կարապետն, և զՓարիխան, և զեղբայրք իմ զտէր Աւետիս զծաղկող սորին. զԳուլազան և զՄանկասարն. և իմ վարպետացն Յոհաննէս աբեղային բաղիշեցւոյն, և տէր Թագէսսին, և տէր Մարգարայ Արճիշեցւոյն։

2. Վանի Տիրամայր եկեղեցու Մայր մաշտոցից.

..Կազմեցաւ սուրբ մաշտոցս ձեռամբ Յոհաննիսի Արճիշեցւոյ. ի թուին ՋՂԶ 1547, ի դառն ժամանակիս. որ խիստ նեղացեալ ենք ի հարկապահանջութենէ անօրինացն. և ահաբեկ եղեալ եմք ի շահ Դահմանէն. որ յայս աշունս շարժեցաւ անհուն զօրօք ի վերայ եղբօրն Ալխասի միրզին, որ էր նստեալ ի Շրուան և ինքնագլուխ դարձեալ. գնաց բռնութեամբ ի վերայ շահն, և մտեալ ի Վրաստուն. և բազում ոճիրս գործեաց. և բազում անմեղ քրիստոնեայս սպան, և անթիւ բերին և դեռ ևս նստեալ է ի վերայ Կուր գետոյն. և զխորհուրդն ոչ ոք գիտէ. բայց միայն Քրիստոս որ շար-

ժեաց զնա ի վերայ քրիստոնէից՝ յաւուրս ձմերայնոյ, որ ոչ նստիլ կարեն, և ոչ փախչիլ. այս ամենայն եղև վասն ծովացեալ մեղաց մերոց, որ թողեալ եմք ղուղորդ ճանապարհն. և ընդ (թիւրն) կու գնամք. զկամս մեր պաշտելով. և զպատուիրանն Աստուծոյ անարգելով. բայց յոյս և ապաւէն զՔրիստոս ունիմք. որ ըստ մեղաց մերոց ոչ առնէ. այլ իւր ըստ առատ մարդասիրութեամբն քաղցր աչօք հայի ի մեզ. և չտայ մեր անմեղ տղայքն ի ձեռն անօրինաց, այլ շուտով գթայ ի մեզ և գարձուցէ զչարն ի բարին. և ազատէ զքրիստոնեայքն ի ձեռաց անօրինաց. մանաւանդ զՄէլիք Սօլթան խօջէն և զիւր որդիքն զԱմիր աղէն...»։

Ե. ԲԱՐՍԵՂ ՎԱՐԱԳԵՑՈՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յառաջ Աստուծոյ լուսոյն մեծի.. Եւ դըրեցաւ սա ի Թուաբերութեանս հայոց ՌԽ 1591 ի հայրապետութեան տեառն Մելքիսեդի, ե մերոյ աթոռակալի և առաջնորդի սուրբ ուխտիս Վարագայ Ստեփաննոսի. և Կարապետ վարդապետի. ի մայրաքաղաքս վանօրէից ի Վարագ, ընդ հովանեաւ սուրբ Նշանին, ձեռամբ անարժան և սուտ անուն աբեղայի Բարսեղի անարհեստ դըրչի... յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զստացող սուրբ աւետարանիս զպարոն Հայրապետն.. և զիս զանարժան գծող զԲարսեղ և զծնողքն զՍտեփաննոսն և զՊէկիջանն. և զհոգեւոր հայրն ե զքեռին իմ զԿարապետ րաբունապետ փիլիսոփայն, մականուն Ջամալն.. այլ ե զաշակերտս մեր յիշեցէք ի Քրիստոս զտէր Զաքարէն, զտէր Յօհաննէսն զտէր Ներսէսն, զՂազար սարկաւագն, զոնտես Կակոսն, որ աշխատեցան ի կոկել թղթին, և զտէր Փիլիպպոս վարդապետ, որ կազմեաց զսուրբ աւետարանս յիշեցէք առ Քրիստոս... Աստուած ողորմի ասացէք խուս Սարգսին, որ բազում աշխատանք ունի սուրբ եկեղեցեաց վերայ, որ երեր ղեկեղեցւոյ ղրանդին և եղև պատճառ որ դոներն ամէն քարէ շինեցին. զերկու եկեղեցւոյ սալարս. զերկու ժամտան զերկու խորանն, զսան քարերն, զղաթարի քարերն, որ յառաջ չկայր նոր արարին. Ջաֆար փաշէն Թաւրէզ կու նստէր, քէհից դաստուր առանք շինեցինք. քէհէն ի Վան կու նստէր. սուպաշին երէկ թէ կուքակեմ, ժամատուն ի դուրս էր դրեր. նոր խորան էք շիներ. Խոսրով աղէն Իսքանտար փաշի ղուլն Ջաֆար փաշին խզմաթ կանէր, մէջն անկաւ չեթող. ու զմարդիկ յափսէն եհան. թէ չի քակուէր նա շատ տուգանք կառուէր. փառք ներողութեան Աստուծոյ յամենայն ժամ ամէն։

Իսկ ի վերջին գարուս. ե ի նսեմ ժամանակիս մեր, եղև բարկութիւն ե պատուհաս ի վերայ աշխարհիս վասն ծովացեալ մեղաց մերոց, քանզի մեծ թագաւորն խոնդքար զօրաժողով արար հեծելոց եօթն հարիւր հազար և ետ նոցա գլուխ զոմն անուն Օսման փաշայ. ե եկեալ բազմութեամբ զօրօք ի Թէոդուպօլիս որ է Արզրում. և զչարիսն զոր արար ով կարէ պատմել. կամ ընդ գրով արկանել. կացեալ անդ ա-

ւուրս բազում, որ և զայր մարդիկ ի դուրս ձգէին. և զկանայս և զկոյս աղջկունս և զտղայս խայտառակէին. այնպիսի պիղծ գործովք էին անօրէն ազգն Մահմէտի. որև մինչզի զգեղեցիկ կանայք և զտղայքն իհետ բերէին և յօտար երկիր ձգէին. և չուեալ գնաց ի շահաստան ի Թաւրէզ քաղաք. և ելեալ ընդդէմ նոցա ազգն Պարսից որդի թագաւորին Խուտապանտայի Ամիր Համզա Միրզայ. և բանակեցան ճակատ առ ճակատ և զօրքն խոնդքարին հրաձգութեամբ հարկանէին զնոսա. և նոքա յետոյս քարշէին զինքեանս. և սոքա հետամուտ լինէին պարսից. և նոքա ի յետ դառնային սաստիկ ձիընթաց արշաւմամբ հարկանէին սրով, նետիւ, և նիզակաւ. զբազումս ի վայր թափէին. և դիակունք արիւնաշաղախ թաւալէին. անդ էր տեսանել զվրնջիւն քաջ երիվարացն. ի շողել սուսերացն, և ի ճոճել ճապուկ նիզակացն, վայ և ճչիւ աղիողորմ կսկծանացն և տագնապել հոգւոցն ելանելոցն. շատ ոք առ ոտս ձիոց սատակէին, և այլք ահաբեկ մեռանէին. բազում և անթիւ սատակեցան յերկուս կողմանցն. և արք երեւելիք փաշայք, պարոնայք, սուլթան, և խանք ի փառս սատանայի։

Եւ յետոյ ոչ կարաց զդէմ ունել որդի շահին ընդդէմ բազմութեան զօրացն և կրակին. վասն զի ոչ էին միաբան զօրք շահին, թէ մին պատերազմէր՝ նայ շատ ոք ի յետ դառնային վասն չմիաբանութեան. յայնժամ զօրացան զօրք խոնդքարին, և մտին ի քաղաքն Դաւրէժ (ՌԼԳ 1584) առ և աւար արարին. զայրս ի սուր սուսերի մաշեցին, զկանայս զաղջկունս և ըզտղայս գերի վարեցին. բերդիւ ամբացուցին զքաղաքն, և զբոլորն խանդակ արարին ի յահէ կարմիր գտակին. և եղին անդ երեք փաշայ երեք հազար աբամբք, յոլով պատրաստութիւն արարին մտին ի ներս՝ և ամուր փակեցին։ Եւ ապա միտ եղեալ գլուխ զօրաց խոնդքարին երթալ դէպ յարևելս առ և աւար հարկանել, զգեղ և զքաղաք տապալել ի հիմանց. իսկ համբերողն Աստուած ոչ կարաց ժուժել պղծոյն, այլ յարոյց ի վերայ նորա մի ի պիղծ տղայոց իւրոց, որ ետ դեղ մահու և սատակեաց զնա չարաչար, և ի յահէ զօրաց կարմիր գտակին, ոչ համբաւեցին զմահ պղծոյն, այլ գաղտ եդին՝ գլուխ զօրացն զՎանայ փաշէն զՋղալ օղլին որ էր յազգէն ֆռանկաց. թողին զքաղաքն և դարձան. և լուեալ զօրաց շահին զհետ մտին և կոտորեցին զբազումս. և դարձան ի վերայ քաղաքին բոլորեցին և նստան. և զօրքն խոնդքարին որ ի յետս դարձան յոլով չարիս գործեցին. բազում գիւղ և գաւառ անընակ արարին. կար որ յիւրեանց հարկատուացն գերի վարեցին. և յՍտամպօլ հասուցին։ Եւ դարձեալ զօրք կազմեցին յայսմ ամի անթիւ. և չուեալ գնացին յօգնականութիւն նեղելոցն՝ որ ի Թաւրէզ. և էր գլուխ զօրացն, ոմն անուն Ֆահրատ փաշայ. և էր անդ կռիւ սաստիկ. և մեք ոչ գիտեմք պատմել զաղէտ և զկսկիծ. զողբումն և զկոծումն և զսրածութիւն. զսով և զգերութիւն. զսասանութիւն, և զայլ ազգի ազգի պատուհաս, որ եկն ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց մերոց։ Երևանայ աշխարհն, քաղաքն և երկիրն, և ամենայն շուրջագայ գաւառքն ի յանօրէն ազգացն Պարսից և Իսմայէլացւոց սրբաջինջ եղև ամենայն աշխարհս քրիստոնէից. զվերջ և զկատարած ոչ գիտեմք. միայն Աստուծոյ է

դիտելի։ Եղև այս պատուհաս ՌԼ 1581 թուին։ Փառք մարդասիրին Աստուծոյ։

Փառք հրաշագործողին Աստուծոյ, որ յայսմ գիշերի արեգի ամսոյ 22-ին, որ է ապրիլ 6, ի վերև դրախտին[21] մեծ դար մի տակէն ի բաց ոստեաւ քարընկէց մի. եկաւ ելից զդրախտն երկու ջիտայ[22] ունի բարձրութիւն. ընկուզի ծառ մի ահագին սակաւ մի տեղ հետ երեր. ապա յարմատէ ոչ անկաւ, և ոչ ճիւղ մի. ըղխեցան աղբերակունք բազում օրհնեալ է Աստուած։ Դարձեալ յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զգիւղաքաղաքի[23] տանուտէրայքն. նա և առաջին զպարոն Հէրապետն, որ եղև պատճառ վերստին նորոգման սուրբ եկեղեցեացն. և զերկու ժամատունն ի հիմանց նոր շինեցին. զխցերն և զերեսբացներն, զվարոցն, զՄկրտիչն, զՄելիք Բարուլն..։

Դ. ՄԱՆՐՈՒՆՔ

1. ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲԵՂԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Վարդան վարդապետի սաղմոսի մեկնութիւնից

Ի թուաբերութեանս հայկազեան տումարիս, ՌՀԱ 1522 կամօքն Աստուծոյ եկաք ի Կոստանդնուպօլիս ընդ վարժապետին իմոյ Մելքիսէթ վարդապետին, յայսմ ամի սկիզբն աբարաք այս հոգելից բուրաստանիս ի Ղալաթիայ ի դուռն սուրբ Լուսաւորչին. և սուրբ Խաչին. զիբրև կանոն կատարեցի։ զՏէր ապաւէն և զխոստովան ի Կարակոմրուկն ի դուռն սուրբ Նիկողայոսին կատարեցի։ զՆեղութեան կանոնն Էտիրնէ ի դուռն սուրբ Թորոսի եկեղեցւոյն կատարեցի։ Երանեալէն ի վեր զչորս կանոնն ի Սօֆիայ կատարեցի.. դարձեալ յայսմ ամի էր, որ ծառայքն յարեան ի վերայ սուլթան Օսմանին և սպանեցին զխոնդքարն ի Կոստանդնուպօլիս. բազում աղմուկ կայր յայսմ ամի. զի բազում փաշաներու և իշխանաց տներ թալանեցին. և բազում արիւնհեղութիւն եղև. չորս փաշայի գլուխ կտրեցին. և զսուլթան Մուստաֆան թագաւորեցուցին, մինչ որ Մարա Հիւսէյին փաշան վէզիր եղաւ. ապա սակաւ մի խաղաղեցաւ։

Դարձեալ ի միւսում ամի Ապազա անուն փաշայ մի կայր՝ որ Կարնոյ քաղաքին իշխան էր. մինչ զՍեբաստիոյ գաւառն բռնութեամբ տիրեաց, և վրէժխնդիր եղև արեան թագաւորին. ի յուր որ թագաւորի ծառայ գըտանէր կու սպանանէր. թէ դուք զձեր թագաւորն սպանեցիք..

2. ԿԱՄԱԽԵՑԻ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Վերը յիշած գրքում նոյն Խաչատուր աբեղայի ձեռքով գրած

ՋՂԷ 1548 Թավրէզի շահ Տահմանն եկեալ աւերեաց զՄուշ, զԲասեն, զԱրզրում, զԴերջան, զԿեղի, զԲաբերդ, զԵզընկան, զՇապեր։ Ի թուին ՌԸ 1559։

Որդիքն խոնդքարին կռուեցան ի Կոնիա․ Սէլիմն զԲայազիդն փախուց մինչև յԱրզրում. և նա գնաց ի շահն երեք որդովն անդ սպանին ի թուին ՌԺԲ 1563.

Մահ տարածեցաւ. ՌԺԷ 1568.

ՌԻԸ 1579 Երևան գերեցին։

ՌԼ 1581 զՏուլպանոտն ի գլխնուս ի վար ձգել տուին եասախով սուլթան Մուրատին։

ՌԼԴ 1585 Օսման փաշան գնաց էառ զԹավրէզ։

ՌԽԱ 1592 Սևաստու տաճկնին չարացան. առին զԼուսաւորիչ եկեղեցին։

ՌԽԳ 1594 մեռաւ սուլթան Մուրատ. և թագաւորեաց սուլթան Մահումատն։

Ի թուին ՌՀԳ 1524 ի Թէքիրտաղն գտայ գայս բանս և գրեցի։



ԺԷ ԴԱՐ

Է. ԴԱՒԻԹ ԲԱՂԻՇԵՑԻ

Այս Լևոն կացեալ իշխան ամս տասն և այժմ Քրիստոսիւ զօրացեալ եղև թագաւոր տանըս Արամեանս ի Սիսքաղաքին. սա ընկալեալ եղև թագ ի Հռոմայեցւոց և Յունաց. և սա շինեաց զմեծափառ վանքն ակներև. և օծեալ եղև ի Գրիգորէ կաթողիկոսէ։ Ի սորա յաւուրս էին երևելի վարդապետք ի կողմանս Աղուանից. մեծ վարդապետն Մխիթար Գոշն կոչեցեալ. որ շինեաց զնոր Գետկայ եկեղեցիքն, և Ներսէս Լամբրոնացին. և Յովսէփ ի կողմանցն Անտիոքու. և Յովհաննէս որ յապա եղև կաթողիկոս. և Աստուածատուր վարդապետ Աղբաէրկայ յԱրճէշ քաղաքէ. այր սուրբ և մեռել յարուց. և այլ բազում անուանի վարդապետք... ի յուլթ ամի թագաւորութեան սորա վախճանեցաւ Գրիգոր կաթողիկոսն. և նստաւ յաթոռն տէր Յօհաննէս Խճկըտորն. թուին ՈԾԳ 1204 ամս ինն. և ընկեցեալ եղև հրամանաւ Լևոնի. և եղին զԴաւիթ Արքակաղնցին յԱթոռն, որ կացեալ յամս երկու վախճանի։.. Եւ թուին ՈԿԹ 1220 նստաւ կաթողիկոս մեծաշուք պատուով իմաստնացեալն յԱստուծոյ Կոստանդին. որ եկաց ամս քառասուն և եօթն. յայսմ ժամանակի փայլէր իմաստութեամբ մեծ վարդապետն Վանական՝ ի վերին կողմանս և յԱղուանս. սա աշակերտ էր մեծին Մխիթարայ, որ վախճանեցաւ ՈԿԸ 1219 թուին։ Էին աշակերտք Վանականայ՝ Թորոս վարդապետ ի սահմանաց Մելիտինոյ հայոց. և Կիրակոս պատմագիր. որ ի մանկութենէ կրթեալ էր յոտս նորա ի նորին Գետիկ. զոր շինեաց Մխիթար յԱղուանս. և Վարդան վարդապետ Հաղպատեցի, որ մեկնեաց զսաղմոսն։.. Եւ յայսմ ժամանակի էր Յօհաննէս Գառնեցի այր սուրբ և ընտրեալ.. և յԵրուսաղէմէ եկեալ ի քաղաքն Կողոնիայ քարոզել. և զբազումս անհաւատից դարձոյց ի Քրիստոս. ընդ որ նախանձեալ պարսից իշխանաց, արկին ի խիստ բորբոքեալ հուր. և կացեալ բազում՝ ել ամբողջ, որ և մազ մի ոչ էր խան-

ձեալ. և եկեալ առ կաթողիկոսն Կոստանդին. և ոչ եա թոյլ նմա գնալ. այլ կացեալ բազում ժամանակս առ նմա հանգեաւ ՉԺԲ 1263 ի Հռոմկլայն, և այլ բազում վարդապետք, եպիսկոպոսք և կրօնաւորք, զոր ոչ թուել կարեմ յառաջ և յետոյ ի ժամանակս սոցա..

Թուին ՉԺԴ 1265 սուլտանն Մսրայ եկն յաշխարհն Կիլիկեցւոց, զկէս երկրին գերեաց. և զԼևոն որդի Հեթմոյ ծառայ տարաւ յԵգիպտոս. և զԹորոս կրտսեր որդին սպան. յայսմ ժամանակի փայլէր իմաստութեամբ և առաքինութեամբ սուրբն Ստեփաննոս վարդապետ, որդի Յուսկայ քահանայի՝ ի կողմանս Բերկրու և Վասպուրականի: ՉԺԵ 1266 վախճանեցաւ կաթողիկոսն Կոստանդին անփուտ ի մեղաց..

Թվին ՉՀ 1321 կացեալ թագաւոր Լևոն որդի Օշնի.. յայսմ ժամանակի փայլէր իմաստութեամբ Մխիթար վարդապետն ի Մեծոփ հանդերձ աշակերտօք.. վախճանեցաւ յապա ի վանս Մեծոփայ ՉՁԶ 1337..

Թուին ՊԼԴ 1385 նստաւ ի տեղին սուլթան Մահմատն ամս քսան.. ի սորա աւուրս փայլէր յարևելս մեծ վարդապետաց վարդապետն Յովհաննէս Կանխիկն՝ կախեալ ի սէր Քրիստոսի ի գաւառէն Որոտու ի գեղջէն Վաղընդու որդի մեծ իշխանին Իւանոյ, որ ի զարմէ Վասակայ. էր սա յոյժ իմաստուն և անյաղթ փիլիսոփայ. աշակերտ մեծին Եսաեայ և Տիրատրոյ վարժապետացն մերոց: Առ սա ժողովեցան բազում աշակերտք և եղեն անյաղթ փիլիսոփայք. որոց գլխաւորք Գրիգոր Տաթևացին. Սարգիս Աորբեցին. Յօհաննէս Մեծոփայ. և անթիւ պարք վարդապետաց, որք ի նմանէ առին գաւազան. Յակոբ. Գէորգ. Մխիթար. և եգև վախճան մեծ վարդապետին Յովհաննու Որոտնեցու. ՊԼԵ 1386: Եւ հաւանութեամբ ամենայն եղբարցն եդին ի տեղին զԳրիգոր Տաթևացին. և զմարմին Յօհաննու եդին ի վանս Երնջակոյ, ընդ Մաղաքիայ ճգնաւոր վարդապետի, որ էր ի ծովահայեաց քաղաքէն Ղրիմայ աշակերտ սորին, և հօգաբարձու երկու դասատանցն Յօհաննու և Սարգսի: Ի ժամանակս սոցա պայծառացան ամենայն եկեղեցիք Հայաստանեաց. զի երեք վարդապետք անուանիք և գլխաւորք կային. մեծն Գրիգոր Տաթևացին ի Տաթև և յամենայն արևելս. և երկրորդ Սարգիս. որ էր տեսուչ Աստապայ. և ՊԼԸ 1389 եկն բնակեցաւ ի սուրբ ուխտն Խառապաստու Սուխարայ վանք կոչեցեալ. և Աստուածածին վերաձայնեալ. և կացեալ անդ ամս տասնևինն. և աշակերտք բազում էին սորա. Գրիգոր Ծերենց. Յակոբ. Մարգարէ. Յօհաննէս. Մկրտիչ. Կարապետ. Մելքիսէթ. Սարգիս. Մատթէոս. Կարապետ. Թումաս. և սա բազում հակառակութիւն կրեաց յաշակերտաց իւրոց: Եւ յետ վախճանի սորա եկաց ի տեղի նորա Վարդան վարդապետ ամս չորս. և ապա Գրիգոր Խլաթեցին. ոչ ի նոյն վանս, այլ ի սուրբ ուխտն Ծիպնայ. որ ի ՊՀԴ 1425 նահատակեցաւ ի Բաղիշու կողմանց Մարաց. և Յակոբ վարդապետ ճգնաւորն ամփոփեաց զսուրբ մարմին ի Ծիպնայ վանից ներքոյ. և ամ մի սպասաւորեալ տապանին անդէն վախճանեցաւ. և յետ երկու ամի նոյն քուրթքն գնացեալ ի Տոսպ գաւառ, սպանին զմեծ առաքինի վարդապետն Յակոբ. ի սոյն ամի սպանին Ղազար Բաղիշեցին ի Ասանոյ լեառն: Այլ մեք

դարձցուք ի վեր ի մեծ Գրիգոր Տաթևացին. որ ի վրդովմանց վերին աշխարհին առեալ զաշակերտս իւր երկոտասան. և զաշակերտս մեծին Սարգսի. որ յետ վախճանի նորա գնացեալ էին առ նա ի Տաթև երկոտասան որպէս ցուցաք. և այժմ ասացից զիւր աշակերտսն, որ էին վարդապետք. Մխիթար Տաթևու. Յօհաննէս ի Հերմոնի վանիցն. Գալուստ ի Վաղընդու. Սիմէոն ի Սիւնեաց. Յակոբ Բոստացի. Գրիգոր Արարատեան, Գրիգոր, Մատթէոս Ջուղայեցի. Աւետիս Աստապատցի. Եղիա Յոծոպու, Յակոբ ի Վաղնդու. Յունան ի Շամախու. Յոհաննէս Կարմիր. երեք աշակերտ այլ յայլ տեղիս. Մովսէս Տփխեցի. Մկրտիչ Փայտարանցի, Ստեփաննոս Թաւրիզոյ. և սոքօք հանդերձ եկն յերկիր Քաջբերունեաց ի թուին ՊԾԸ 1409 ի սուրբ ուխտն Մեծոփայ, առ հոգևոր եղբայրն իւր և որդին Յոհաննէս Արճիշեցին առաջնորդ սուրբ ուխտին.. և սուրբ Յոհաննէս մեծապէս սիրով ընկալաւ զնոսա. իբրև զհարազատ որդի հպատակ կայր սուրբ վարդապետին Գրիգորի և որոց ընդ նմա. զի աւելի էին քան զութսուն ոգի. քան և չորս վարդապետք և այլքն աբեղայ և խարազնազգեաց կրօնաւորք. զի Տաթևացու հայր յԱրճիշոյ կողմանց էր. վասնորոյ արձակեաց զկողմանս Արճիշոյ և ղամենայն Բզնունիս ի կապանացն Աղթամարայ, և կոչեաց զկաթողիկոսն Աղթամարայ՝ զի գայցէ ի հնազանդութիւն սուրբ Աթոռոյս ըստ տեսլեան իւրոյ. և նոքա ոչ կամեցան լսել սրբոյն.. և յետ ամի միոյ գնացեալ ի յԱրարատ և անտի յաթոռն իւր ի Տաթև, և անդ վախճանեցաւ. թուին ՊԿԲ 1413: Եւ ընդ նմա գնացեալ Յոհաննէս վարդապետն մինչև ի յԱյրարատ երկիրպագանել Աստուածածնուս սուրբ Գեղարդեան և պատկերի Փրկչին. և անդ եղև վախճան ի սմին ամի. և զայս կարճ ի կարճոյ ասացի. ոչ թէ այս կատարեալ պատմագիր է. այլ համառօտ իբրև ծաղկաքաղ արարի վասն դիւրութեան:

Թուին ՊԾԳ 1405 նստաւ սուլթան Մուրատ որդի Մահմատի ամս երեսուն և եօթն:

Թուին ՊՂԱ 1442 գողացան զսուրբ Գրիգոր Լուսաւորչի աջն ի Սսայ և տարան յէջմիածին. և վերստին շինեցին և սրբեցին զսուրբ Էջմիածին..և եդին զկաթողիկոս զտէր Կիրակոս. որ էր յերկրէն Քաջբերունեաց, ի գեղջէն Խառաբաստայ. և ելեալ յերկրէ բնակեցաւ ի կենդանաթաղ վիրապն Լուսաւորչին յամս երեսուն երկու. էր սա յաշակերտաց Սարգսի և Վարդանայ վարժապետաց. այր ճգնաւոր սուրբ և ընտրեալ. որ թուին ՊԽԶ 1397 եղև քահանայ ձեռամբ տէր Պետրոս եպիսկոպոսի Թադէոսի առաքելոյն. մինչ ի թուին ՊՂ 1441 միս ոչ եկեր. և գինի ոչ արբ. և ոչ կիթ անասնոց. և այժմ հաւանութեամբ ամենեցուն եդին կաթողիկոս: Եւ այս են ժողովեալ վարդապետք և եպիսկոպոսք. Յոհաննէս մեծ վարդապետն Հերմոնայ վանից. և աշակերտք իւր Գաւիթ և Ստեփաննոս վարդապետք. Շմաւօն վարդապետ ի Տաթևու, Գրիգոր վարդապետ ի սուրբ Թադէոսէ. Գրիգոր միւս վարդապետ Հաղբատու. Կիրակոս վարդապետ Ռշտունցի. Սարգիս վարդապետ Ջորվանից. Տիրացու վարդապետ Վանանդայ Սիւնեաց. և ի կողմանէ Վասպուրական Թումայ վարդապետ Քաջբերունեաց յԱղիովտայ. կա-

ցեալ առ ոտս Յոհաննէս վարդապետին Մեծոփայ. և ժամանակ ինչ առ Սարգիս վարդապետ ի Խառաբաստ. և ընկալաւ գաւազան ի Գրիգորէ Տաթեւացւոյ ի յԵրևան քաղաքի հանդերձ ընկերօք. Մկրտիչ, Կարապետ, միւս Մկրտիչ Ողբեկենց, Մկրտիչ Հողեցի, Սարգիս և այլք. և եկեալ վարդապետն Թումայ միւսանգամ ի Մեծոփ և սրբագրեաց զսաղմոսն և զաղօթամատոյց և վաթսուն ամ կացեալ անդ ի Թուին ՊՂԵ 1446 վախճանեցաւ. այլ մեք դարձցուք ի վեր. Կարապետ վարդապետ. Յովսէփ վարդապետ Խառաբաստու. Ղազար վարդապետ Բաղիշեցի. Սարգիս և Յոհան վարդապետք յԱրծկու. Զաքարիայ վարդապետ Վարագայ. և այլ բազում եպիսկոպոսք, քահանայք, կրօնաւորք և դօլւաթաւորք, որք յօժարեցան ի շինումն և ի նորոգումն մօրն լուսոյ քրիստոսադիր սուրբ Աթոռոյն Էջմիածնի բազում աշխատութեամբ. և կամեցողութեամբն Աստուծոյ. որ արկ ի սիրտ բռնաւորին Այրարատայ պարոն Աղուպ բէկին. որ ետ հրաման վերստին նորոգելոյ զսուրբ Էջմիածին..

Թուին ՋԺԲ 1463 սուլթան Մահմատն զՏրապիզոն էառ. և մահ բազում անկաւ յաշխարհ ամենայն, և Նաղաշ վարդապետն ասաց զողբն. և յայսմ ամի շարժ եղև յԵզնկայն, և մեռան երեսուն հազար մարդ։ Թուին ՋԾ 1501 շահ Իսմայիլն զԵզնկան առաւ...

Թուին ՌԺԸ 1569 աղջիկ ժողովեցին ի քրիստոնէից..

Թուին ՌԻԸ 1579 զԵրևան գերեցին։

Թուին ՌԼ 1581 զդօլպատն ի հայոց վերուցին։

Թուին ՌԼԴ 1585 Օսման փաշայն էառ զԹաւրէզ։

Թուին ՌԽԱ 1592 Սևաստու տաճիկն էառ զլուսաւորչի եկեղեցին..

Թուին ՌԽԷ 1598 ել ոմն զօրավար ներքինի Ջաֆար փաշայ անուն ի յարևելս. նստաւ ի Թաւրէզ երեք ամ և տարածեաց զթոյն դառնութեան իւրոյ յամենայն տեղիս. անմարդաբնակ արար զամենայն. և յետ երեք ամաց բարձաւ չարն ի միջոյ։

Թուին ՌԽԸ 1599 երաշտացաւ երկիր և սերմանիքն չորացան։

Թուին ՌԽԹ 1600 եղև մեծ սով ընդ ամենայն երկիր. և մահտարաժամ յաւուրս սուլթան Մահմատին։

Թուին ՌԾ 1601 մեծ թագաւորն պարսից շահ Աբաս եկն էառ ըզԹաւրէզ և զԵրևան. և տարեալ սուրգուն զմարդիկք Երևանայ և զամենայն կողմանց նորա ի յԱսպահան բնակեցուցեալ. և յայլ կողմանց անդր լցեալ, և աստի ի վեր աճեաց և ծաղկեցաւ քրիստոնէութիւն ի բուն աշխարհն պարսից ի Շօշ և յամենայն շրջակայս նորա..

Թուին ՌՀ 1621 մահ տարածեցաւ յարևելից մինչև յարևմուտս անասելի և անպատմելի. մինչ զի փոս հատեալ, քսան, երեսուն, քառասուն, և յիսուն մարդ ի ներքս լնուին։ Եւ յայսմ ամի հաստատեցաւ Լմայ Սնապատ ձեռամբ տէր Ներսէս վարդապետի անյաղթ փիլիսոփայի Բէղլու կոչեցեալ վասն ահարկութեան դիմաց. ժողովելով բազում եղբարս խարազնազգեստս աւելի քան եօթանասուն ոգի. սա հինգ ամ ի Տաթևու անապատն կացեալ և ուսեալ ի նոցանէ զվարս միակեցութեան հրեշտակական կարգի. և զվեց եղբարքք ելեալ անտի և եկեալ ի Լիմ կղզին. և արար զնա Անապատ ընդ հովանեաւ սրբոյն Գէորգայ զօրավարին.

աշակերտ ունելով զՄելքիսեթ վարդապետ և զՍտեփաննոս վարդապետ, որ յետ չորս ամի փոխման նորա նա եկաց գլուխ եղբարց։ Էին յայսմ ժամանակի անուանի վարդապետք. նախ և առաջին Մովսէս վարդապետ Տաթևացին. որ յետ չորս ամի եղև կաթողիկոս, ի տեղի որբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին, և վերստին նորոգեաց զսուրբ Էջմիածին զեկեղեցին բովանդակ. զպարիսպն, զխցեներն, և զխաւարեալ ազգս հայոց, լուսաւորեաց կրկին լուսաւորիչն մեր. զոր եղծեալ էր բնաւ ի Թուլամորթ և ի մարմնասէր առաջնորդաց. զի չորս կաթողիկոսք կային. Աւետիս, Մելքիսեթ, Դաւիթ և միւսն անյիշելի. զմիմեանս փոփոխեալ՝ կաշառս տալով պարսից Թագաւորին. և մի ի սոցանէ յԱթոռն ոչ նստէին, այլ յԱսպահան. և սուրբ Աթոռն խարխալեալ և խրթնացեալ ի բարեզարդութենէ, և գոմս խաշանց եղեալ. զի եթէ մայրն բազմաորդի և Աթոռն Քրիստոսադիր՝ այսպէս կայր որպէս ասացաք, որչափ ևս առաւել ծնեալքն ի նմանէ նսեմացեալ կային նստեալ ի սգի. ըստ այնմ եթէ լոյսդ որ ի քեզ խաւար է, խաւարն որչափ ևս։ Օրհնեալ է Աստուած, որ ոչ ցանկ բարկանայ և ոչ պահէ ոխս յաւիտեան. այլ յարոյց մեզ եղջիւր փրկութեան զհամանման նախամարգարէին զՄովսէս Տաթևացին. որ վերստին նորոգեաց զսուրբ Էջմիածինն որպէս յաւուրս Լուսաւորչին. վերակացութեամբ աշակերտաց իւրոց ճգնաւորաց և անյաղթ փիլիսոփայից. տէր Փիլիպպոս սրբազան վարդապետի, որ յետ սորա նստաւ կաթողիկոս. և Յակոբ մաքրամիտ վարդապետի. որ յետ Փիլիպպոսի նստաւ կաթողիկոս. Խաչատուր վարդապետ Ասպահանցի, միւս Խաչատուր վարդապետ Դողթան գաւառէն, Եսայի Երընջակոյ. Զաքարիայ Վաղարշապատսւ. Սիմոն վարդապետ. ամենեքեան սոքա դըլխաւորք և անյաղթ փիլիսոփայք. և սիւնք եկեղեցւոյ, աշակերտք Մովսէսի. որք աշխատեցան ի շինումն սուրբ Էջմիածնի. ո ի սոցանէ եղեն բազում հոյլք վարդապետաց. և լցաւ ամենայն երկիր գիտութեամբ տեառն։ Եւ այժմ ասացից կարգաւ զկաթողիկոսունս. զի յՋՁԴ 1335 Թուականէն մինչև ՌՀԴ 1625 Թուին խառն և շփոթեալ տեսանեմք. և էր վասն. ի ծուլութենէ և յանուսումն բարուց մերոց· զի Թէպէտ կային կաթողիկոսք՝ այլ աննշանք աստ և անդ շրջեալք. և բազումք զմիմեանս փոփոխելով. զոր դսոքա ի միում տեղւոջ ասացի յետ Կիլիկեցւոց Թագաւորութեան կարգաւ մինչև Թուին ՊՂԱ 1442 որ նստաւ կաթողիկոս Կիրակոս յԷջմիածին, և աստի մինչև Թուին ՌՀԴ 1625 որ ի մերում ժամանակի կարգաւ գրեցից...

Թուին ՌՀԴ 1624 Ապազայ փաշայն ելաւ յԱրզրումայ և գնաց յԱնկուրիայ, շատ էնգիչարի ջարդեց. և գնաց դարձեալ ի յԱրզրում։

Թուին ՌՀԴ 1625 Ուռուզն առաւ զՏրապիզոն երկու հարիւր քառասուն դայեխներով..

Թուին ՌՀԹ 1630 կացեալ յԱթոռ սուրբ Լուսաւորչին, տէր Փիլիպպոս կաթողիկոս ի վիճակէ Բարդուղիմէոսի առաքելոյն ամս քսան և հինգ. սա զարդարեալ էր ամենայն առաքինութեամբ. և ել համբաւ սքանչելեաց նորա ընդ ամենայն տիեզերս. մինչ զի պատարագս գայր նմա ի պապէն Հռոմայ բազում անդամ. և ի Կոստանդնուպօլսէ. և ի Վրաց Թագաւորէն. էին յաւուրս սորա անուանի վարդապետք.

նախ Յակոբ վարդապետ Ջուղայեցի, որ յետոյ եղև կաթողիկոս. Զաքարիայ Վաղարշապատու. Խաչատուր Ադուլեցի. Եսայի Երնջակայ. միւս Խաչատուր Ասպահանցի. Գրիգոր Կեսարացի. Կարապետ Մոկացի օծեալ ձեռամբ սորա. Յովհաննէս Ուրհայեցի. Բարսեղ առաջնորդ Ամթայ Գաւռացի. Խաչատուր վարդապետ աշակերտ Բուժիկ Յովհաննիսի աշակերտի Բարսղի, որ շինեաց զԱմիրդոլու սուրբ Յովհաննէսն. այս Խաչատուր և Յովհաննէս Բաղիշեցի, և Մեսրովբ վարդապետ քաջ քարտուղարն և լցեալ շնորհօք հոգւոյն սրբոյ Բաղիշեցի, որ թուին ՌՁԷ 1638 օծեալ եղև եպիսկոպոս և ի նոյն աւուր ընկալեալ գաւազան վարդապետութեան ձեռամբ այս Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի, և շնորհեալ առաջնորդ մայրաքաղաքին Բաղիշու.. այլ և զթիւ վարդապետաց ժամանակի սորա ո՛ կարէ ընդ գրով արկանել. զի ձեռնադրեաց սա աւելի քան զչորս հարիւր եպիսկոպոս և վարդապետ, որոց ամենեցուն վերակացու և գլուխ Յակոբ վարդապետ Ջուղայեցին էր..

Թուին ՌՃ 1651 երկրորդ լուսաւորիչ սուրբ հայրապետն Փիլիպպոս, գնացեալ յԵրուսաղէմ մեծաւ փափագանօք ընդ իւր ունելով բազում վարդապետս և կրօնաւորս. և թագաւորն Կոստանդնուպօլսի սուլթան Մահմատ առաքեաց առաջի նորա երկու մեծ զօրագլուխս. զի ուր և մտցէ անկասկած լիցի ի բռնաւորաց. և յոր քաղաք մտանէր գրոհ տուեալ ընթանային ընդ առաջ նորա. զի գոնէ միայն ի քղանցս հանդերձի նորա մերձեսցին. ոչ միայն հաւատացեալք, այլ և անհաւատք և բռնաւորք ևս. և այնպէս շքեղութեամբ եմուտ յԵրուսաղէմ. և ամենայն դըլխաւոր ազգք քրիստոնէից և պատրիարգունքն ընկալան զնա որպէս զԳրիգոր Լուսաւորիչ. և սարսէին ի սրբութենէ նորա… և կատարեաց ուխտ իւր, դարձաւ փառօք եմուտ ի Կ. Պօլիս. և մեծապէս պատուեցաւ ի սուլթանէն՝ վասն նորահրաշ սքանչելեացն. զի յայնմ ամի երաշտութիւն էր, և առաջի ամենեցուն աղօթեաց. և ի նոյն ժամ եկն անձրև սաստիկ. և անտի դարձաւ յԱթոռն իւր ի սուրբ Էջմիածին..

Թուին ՌՃԳ 1655 նստաւ կաթողիկոս Յակոբ Ջուղայեցին. այր սուրբ և ընտրեալ յար և նման մեծին Մովսէսի և Փիլիպպոսի. և ի ժամանակս սորա էին վարդապետք և միաբանք ի սուրբ Էջմիածին. Յովհաննէս վարդապետ, Սահակ վարդապետ Աթոռակալ, Միքայէլ. Մովսէս. միւս Մովսէս. Գաբրիէլ. Երեմիայ. Առաքել վարդապետ պատմագիր. Ստեփաննոս. Աւետիս. սոքա ամենեքեան սիւնք եկեղեցւոյ և անօթք հոգւոյն սրբոյ, անյաղթ փիլիսոփայք. այլ և Ղազար վարդապետ. Սարգիս վարդապետ ի Թէոդուպօլիս. և Ստեփաննոս վարդապետ մեր սիրելի եղբայր ի Զմիւռին քաղաք. և որչափ քաղաքաց առաջնորդք այժմ, աշակերտք սորա են Յակոբ կաթողիկոսին։

Թուին ՌՃԶ 1657 եկն Մալաք փաշայն Վանայ ի վերայ Բաղշու Աւտալխանին քսան հազար սպառազինօք. և ի հուպ լինել քաղաքին փախեաւ խանն հանդերձ կանամբք և ամենայն ախուն յանձաւս լերանց՝ որ Մօտկան կոչի առ Ալի աղա նախարար կողմանց։ Եւ Մալաք որ յառաջ ոզիր և այժմ փաշայ՝ զմեծագոյն որդին Գիատին անուն ամիրայ եդ ի տեղի հօր և թալանեաց զմնացեալ ախն նորա, և զքաղաքն, և տասն և եօթն ոգի քրիստոնեայ սպա-

նին. և շատ վնաս գործեցին ի սադրելոյ Վանայ զուլոց։ Եւ ամի միոյ Նուրատին. միւս որդին Աւտալ խանին քսութեամբ հօրն սպան զեղբայրն իւր զԳիադին. և հայրն իբր ի չքմեղս լեալ սպան և զՆուրատին կամեցողութեամբ նախարարացն. և ինքն դարձեալ եղև ամիրայ հրամանաւ Հասան փաշային որ նստէր ի Տիգրանակերտ. և այս ԽԳ ամ. է՝ որ ամիրայ է Բաղշու քաղաքին. և ղանբաւ չարիս զոր անցուցանէ, ո՛ կարէ ծրել ի քարտիղի. զհարկապահանջութիւն, ղկեղեքել, ղթալանել, զտուգանսն, որ հասուցեալ է զմեզ ի յետին չքաւորութիւն, զվարդապետք, զքահանայք, զեկեղեցիք, զվանքերն, և զառհասարակ ժողովուրդ։ Զի քսան ըէկզատայ մեծամեծք, թող զաղջկունս և զմանր տղայք։

Եւ կան ի քաղաքիս Բաղշու չորս անուանի վանք. առաջին Գոմաց վանք. առաջնորդարան Բաղշու քաղաքին և երկրին. վերատեսուչ և հովիւ հոգևորն այժմ. Մեսրոբ վարդապետ. օծեալ ձեռամբ Փիլիպպոս կաթողիկոսի. ՌՁԷ 1638. որպէս յառաջ ասացի. և այս քսանհինգ ամ. է, որ նստեալ է յաթոռ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին. և սուրբ Գէորգայ զօրավարին.. Եւ երկրորդ վանք խնդրակատար վերաձայնեալ յանուն ամենասրբուհւոյ կուսին. շինեալ յառաջ ձեռամբ Թադէոսի սուրբ առաքելոյն. դանբարան վարդապետացն Ներսէսի Բաղիշեցւոյ. միւս Ներսէսի, Հայրապետի, Կարապետի Փարխնցոյ. և Պետրոսի վարժապետացն. և ի սոցանէ վարժեալք անթիւ ջոկք վարդապետաց, որք եղեալ են ի շիրմի ընդ հովանեաւ Աստուածածնին և այժմ. ծառայ սուրբ կուսին կարգեալ խնամատար. ես արուպ անարժան մեղուցեալ Դաւիթ բանասէր, սնեալ ի մանկութենէ առ ոտս երջանիկ և երիցս երանեալ հօրս մերոյ Մեսրոբ վարդապետի անյաղթ փիլիսոփայի և քաջ քարտուղարի, թուին ՌՂ 1641 ընկալայ ի նմանէ զաստիճան քահանայութեան. և յետ վեց ամի զաւազան իշխանութեան. թէպէտ թափուր և տգէտ գոլով իմ. յուսմանէ. և ՌՃ 1651 եդին զանարժանս ծառայ խնդրակատար սուրբ Աստուածածնին։ Երրորդ վանք Աւեխու սուրբ Աստուածածնին. հիմնարկեալ ի Թադէոսէ սուրբ առաքելոյն։ Չորրորդ Ամիրդօլու վանք, որ յանուն սրբոյն Յոհաննու, դամբարան և դասատուն Բարսեղ վարդապետի, Յոհաննէս վարդապետի, Խաչատուր վարդապետի հանգուցեալոյ ի Քրիստոս. և այժմ. տեսուչ և գլուխ ի նմա հոգևոր եղբայրն մեր Վարդան վարդապետ, ճարտասան և բանիբուն, օծեալ քահանայ կուսակրօն ձեռամբ Մեսրոբ վարդապետի. և ընկալեալ զաւազան իշխանութեան ի Խաչատուր վարդապետէն. որ ի մանկութենէ առ ոտս նորա սնեալ և վարժեալ ի նոյն վանս։ Եւ այժմ. վասն ծովացեալ մեղաց մերոց ի ներքոյ բազում. և անտանելի հարկի և նեղութեան եմք ամենքս, զոր տէր Աստուած այց արասցէ։

Թուին ՌՃԺԱ 1662 գրդռեաց չարն սատանայ Աղթամարցիք.. կաշառս ետուն Վանայ փաշային ութ հարիւր կարմիր ոսկի. ձեռամբ Աղթամարայ աղին, որ զուլ է. և արզ առին ի փաշայէն գնացին ամբ հանին ի Ստամբօլայ, թէ Վանայ քաղաք և Բաղէշ Աղթամարայ լինի. և գրոհ տուեալ արբանեակք չարին մարդիկ և տանուտէր Ոստանայ, և միաբանութեամբ չայու-

շով եկեալ ի Բաղէշ քաղաք. իբր այսուհետև մի ոք իշխեսցէ զանուն էջմիածնայ տալ՝ այլ Աղթամարայ։ Եւ զայն տեսեալ մեծ վարդապետին Մեսրոբայ՝ հանդերձ մեօք զմահ յանձն առեալ. և մի տեսանել զարհամարհանս մօրն լուսոյ. և ոչ թողաք յեկեղեցի. և գնացեալ իջևանեցան ի խանութսն և ի խանսն. և էջ հոգևոր հայրն մեր ի քաղաքն և խրատեաց զժողովուրդն և ծանոյց զառաջին կապանս նոցա. և թէ ոք նոցա հնազանդին ուրացողք կոչին. զի ուրանան զաթոռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. և հաւանեալ ամենայն ժողովրդեանն բռնութեամբ Աւտալ խանին արտաքսեցին զնոսա ի քաղաքէն. զինչ երկարեցից. այս երկու ամ եօթն անգամ եկին. Մարտիրոս Փշրուկ անուանեալ կաթողիկոսն Աղթամարայ, և չՍահակ վարդապետ. և Մովսէս դոզ չեպիսկոպոս, և շէկ անիծեալ աշխարհական մի. և Գաւաշու պիղծ մելիք աւելի քան զքսան այր. և զինչ ասացից Քրիստոսի շնորհն յաղթեաց նոցա. և ոչ կարացին մուծանել զաղանդն իւրեանց յաշխարհն մեր. այլ թափեցաք յընչից և աղքատացաք. զի գնաց աւելի քան զերկու հազար ղուրուշ սաղ ղրամ. փաշին, խանին, չավուշին, հազար ղուրուշ կարդացողին, հազար ղուրուշ քաղաքն յետոյ եկն ամբ ի Կոստանդնուպօլսէ, և կրկին հաստատեալ ի վերայ սուրբ էջմիածնի օրհնեալ է Աստուած։

Արդ՝ եղև գրաւ սորա ի թուին ՌՃԺԲ 1663 ի հայրապետութեան սուրբ էջմիածնի տէր Յակոբ կաթողիկոսին, և յառաջնորդութեան Բաղէշ քաղաքի տէր Մեսրոբ վարդապետի, ձեռամբ յոգնամեղ փծուն և անարժան բանասիրի. ծաղկաքաղ և համառօտ ա-

բարի ի պատմագրաց բազում աշխատութեամբ. յԱդամայ մինչև ցարդ, զկարգս նահապետաց, և մարգարէից և թագաւորաց, և հայրապետաց. և ի յերկու հատորս բաժանեցի. Առաջինն յԱդամայ մինչ յԱբէթ մեր նախնին. և ի յԱբեթէ զթագաւորս Հայկազանց և զԱրշակունեաց, և զԲագրատունեաց, և զԱրծրունեաց, և զալի Օսմանեանց. զգալ թաթարին. և Լանկ Թամուրին...

1. Լիմ կղզում պահուած մի Հարանց վարքից

Ես նուաստ Գաւիթ բանի սպասաւորս ի քաղաքէն Բաղիշու եկի ի Լմայ սուրբ անապատս, և տեսեալ զպայծառութիւն սուրբ եկեղեցւոյ, և զմշտամատոյց աղօթս միեղէն եղբարց սրբակրօնից, վասնորոյ ջերմեռանդ սիրով լցեալ և յօժար սրտիւ ետու պատուական սկիհ մի ոսկեզօծ և ականակուռ ընդելուզեալ յօրինուածով... Եւ արդ՝ եղիցի սա անջինջ յիշատակ ի դուռն Լմայ անապատին սրբոյն Գէորգայ զօրավարին. ի մաքրումն մեղաց իմոց և ծնողացս, Ալէքսանին և Խանազին, և եղբօրս մհսի Մելքիսէթին. և նորա որդոյն համբակատիպ Իսահակ գրոց աշակերտի.. յիշեցէք ի Քրիստոս զՄեսրոբ վարդապետն, որ լաւ հարցմունք մի ետ յիշատակ Լմայ սուրբ անապատին.. դարձեալ յիշեցէք զՄեսրովպ վարդապետն, և զիս զմեղաւորս զԳաւիթ տրուպս, և զՎարդան վարդապետն, որ ի միասին եկինք ի Լմայ սուրբ անապատս ուխտ։ Թվին ՌՃԺԸ 1669։

2. Մի նոտրագիր Ղուկասու մեկնութեան յիշատակարանից

..Եւ ես հէգս և թշուառականս և թափուրս ամենայն գործոց բարեաց,

տրուպ Դաւիթ բանասէրս, տեսի զանկողոպտելի գանձս, զանշիջանելի ճրագրս։ Եւ յանկեալ աւարտեցաք ի Թուաբերութեան յաբեթական տումարի ՌՃԺԸ 1669. ի հայրապետութեան Էջմիածնի Յակոբ սրբազան կաթողիկոսի. և յառաջնորդութեան մայրաքաղաքիս Բաղիշու Մեսրոպ աստուածաբան վարդապետի.. Ես Դաւիթ բանասէր ծառայ խնդրակատար սուրբ Աստուածածնին աջողութեամբ Քրիստոսի սկսայ և կատարեցի։

Ես Բաղիշու քաղաքի վերատեսուչ տառապեալ տրուպ Մեսրոպ վարդապետս, ի թվին ՌՃԻԲ 1673 ելի ի ծովաշուրջ Անապատն Լմայ, հանդերձ հոգևոր որդւովք իմովք, Դաւիթ վարդապետաւ և Աւետիք բանասիրաւ. Դաւիթ վարդապետն վախճանեաց զկեանս իւր և գնաց առ Քրիստոս յոյսն ամենայնի որդւոց Որոտման տօնին. մինչ զէր ընդ եղբայրս կարդային. և մարմին եդեալ եղև ընդ հովանեաւ սուրբ Դէորդայ զօրավարին. և այս աւետարանչացս մեկնիչս Ղուկասուն և Մատթէոսին Դաւիթ վարդապետին էր իւր ձեռաց գրածն. եղաք յիշատակ բարի ի դուռն սրբոյն Դէորգայ զօրավարին ի վերայ իւր գերեզմանին փակեալ։

3. Խաչարձան Դաւիթ վարդապետի ի Լիմ կղզին

Կանգնեցաւ սուրբ խաչս բարեխօս առ Աստուած. Բաղիշեցի Դաւիթ վարդապետին, և ամենայն աշխատողացն. յիշեցէք ի Քրիստոս։ Թուին ՌՃԻԲ 1673։

Ը· ԳՐԻԳՈՐ ԳՊԻՐ ՎԱՐԱԳԵՑԻ

Թվին ՉԾԷ 1308 ի գաւառն Մշոյ Ղարապանտայ խանն հրովարտակ եհան ի վերայ քրիստոնէիցն՝ որք ընդ իշխանութեամբ իւր էին. կամ դառնալ ի մոլար օրէնսն Մահմետի և կամ տալ խարաջ ամէն մարդ իւրոյ գլխոյն ութ դահեկան. և ի վերայ տջ թևին՝ կաբել սև կարկտան. և առնուլ թուք և ապտակ յերեսն. և ճողուլ զմօրուսն. իսկ բանաւոր հօտքն Քրիստոսի անխախտելի մնացին ի հաւատս. և ետուն զամենայն հարկսն զոր խնդրեցին. և յանձն առին զնախատինս և զտանջանս. և զլուծն Քրիստոսի ի վերայ տջոյ ուսոցն իւրեանց. որ է սև կարկտանն. իսկ ամբարիշտ խանն Ղարապասայ՝ իբրև ետես թէ այնու ոչ կարէ յաղթել քրիստոնէիցս. հրամայեաց կամ դառնալ ի պիղծ օրէնսն Մահմետի. և կամ զամենեսեան ներքինիս առնել. և զմի աչքն հանել. յորմէ հարուածոյ բազումք մեռան վասն սիրոյն Քրիստոսի։

Թուին ՊԼԳ 1384 Բուրհան ղատին Սևաստայ զԱտեփաննոս եպիսկոպոսն նահատակեաց. և զորբոց քառասնից վանքն քակեաց։

Թվ. ՊԼԵ 1386 Լակ Թամուրն եկաւ ի Վան. և կոտորեաց աւելի քան զերեք հազար մարդ. և ելեալ գնաց ի Սևաստ և աւերեաց զնա. և անտի գրնաց ի յԱնկուրիայ. զխոնդքարի եղբայր զԻլտրում պայազիան եառ ի ղաֆասն։

Դարձեալ ՊԾԵ 1406 Ղարսայ Ուսուֆն, որ փախաւ ի Լանկ Թամուրէն, գնաց յԱրճէշ և յԱրծկէ. և զՄէգդինն ընկերեալ նմա. արարին շատ աւեր Վանայ և Ոստանայ, և զՄէգդնի հեծեալքն եկին և այրեցին զԼատուան. և բարկացեալ Ամիր Էզգինն, գնաց և այրեաց զեօղս վաթսուն ի Բաղիշոյ։

Թուին ՊՂ 1441 զԼուսաւորչի սուրբ աջն գողացան ի Սըսայ և բերին յէջմիածին։

Ի թուին ՋԲ 1453 սուլթան Մուհամատն էառ զԱտամպօլ, և զԿաֆայն, զԱղքրման, և զՏրապիզոն, և զայլ բազում քաղաքս և գաւառս։

Թուին ՋԺԱ 1462 Զաքարիայ կաթողիկոսն տարաւ զսուրբ աՋն Լուսաւորչին յԱղթամար կղզին։

Թվին ՋԺԶ 1467 զՊարոն լոյսն նահատակեցին ի Կաֆայ։

Ի թուին ՋԼԳ 1485 նոր վկայն

Քրիստոսի սուրբ Մուրատ՝ որ Թարգմանի Պարգև, նահատակեցաւ ի քաղաքն Վան, յաւուրս կաթողիկոսութեան սրբոյ Աթոռոյն Էջմիածնայ տեառն Սարգսի. և զմարմին երանելոյն ամփոփեն ի հող առ. ոտս սուրբ Առաքելոյն Պօղոսի սաղմոսիւք և օրհնութեամբ։

Ի Թուին ՋԽ 1491 Վրգանէս եպիսկոպոսն դարձեալ գողացաւ զսուրբ աջն Աղթամարայ, և եբեր յԷջմիածին։

Թվին ՋԿԵ 1516 սուլթան Սէլիմն էառ զՑամիթ։

Թվին ՋՁԲ 1533 զՏևու վանից Հայրապետ աբեղայն այրեցին հրով։

Թվիս ՋՁԴ 1535 ի Շնքուռկուգեղէն երէց մի այրեցին հրով։

Ի Թվին ՋՁԴ 1535 սուլթան Սուլէյման էառ զԲաբիլոն, որ է Բաղդատ։

Թվին ՋՁԵ 1536 զԽօջայ Օդջայն նահատակեցին ի Սևաստ։

Թվին ՋՁԸ 1539 Հռոմք ծռազատիկ արարին։

Դարձեալ ՋՂԹ 1550 Թվին, սուլթան Սուլէյման եկ ի վերայ Շամիրամակերտու և էառ զնա։

Թվին ՌԾ 1601 ամին Ղարայ Եազիճին սաստիկ չարչարեաց յՈւրհայ քահանայ մի Աբրահամ անուն. և այր մի Աքանդար անուն. և յետոյ դլխատեաց զնոսա վասն անուան Քրիստոսի։

Ի Թուին հայոց ՌԾԵ 1606 ամին. սաստիկ սով եղև ի քաղաքն Վան և յԱրզրում. այնչափ մինչ՚ի կապիճ կորեկ դահեկան մի եղև. վասնորոյ հայր զորդին եկեր. և զորդին զհայր, մայրն զդուստր և դուստրն զմայրն. զողայս խաբեալ տանէին ՚ի տուն, և զմիսն զենեալ ուտէին. այլ և ոմանք կերան զշուն և զկատուն. և ոմանք զմիս իշուն և զձիուն. և յետոյ մեռան ի սովուն. զի ոմն երթայր ի ճանապարհ և ի ճանապարհին մեռանէր. և ոմն ի փողոցս և ի հրապարակս քաղաքին նըստեալ և անդ մեռանէր. և ոմանք ի յարկս և ի բնակութիւնս իւրեանց նըստեալ անդէն մեռանէին. և այնչափ մարդ ջարդեցաւ ի սովուն որ ոչ կարէին թաղել. այլ վիհ մեծ փորէին և ի ներս լնուին. և զհողն ի վերայ կուտէին։ Դարձեալ ի սոյն Թուին սաստիկ սով եղև յԸստանպօլու մինչև ի Թավրէզ, ի Բաղդատայ մինչև ի Դամուր Ղափին. որ զշուն և զկատու, զմեռեալ մարդ և զկենդանի մարդ կերան ի սաստիկ սովոյն. վասնորոյ գայլք զօրացան ի վերայ մարդկան, որ զկենդանի մարդիկ պատառեալ ուտէին. մինչև զի մարդագայլ անուանեցին զնոսա։

Դարձեալ ի Թուին ՌԿԴ 1614 Շահ Աբազ շահն տարաւ զսուրբ աջն յԱսպահան։

Դարձեալ ՌԿԷ 1618 Թուին. մահ անկաւ ի Կումուշխանէն. և մէկ օր 140 տղայ մեռան։

Թվին ՌՀԵ 1626 օսմանցիք երեք ոսկի խարաջ առին ի Հայոցս։

Թվին ՌՀԷ 1638 Փիլիպպոս կաթողիկոսն զաջ սուրբ Լուսաւորչին ի Նոր Ջուղայէն եբեր յԷջմիածին։

Ի Թուին ՌՂԱ 1642 կատարեցաւ վկայական մահուամբ նոր նահատակն Քրիստոսի Համթեցի սուրբն Նիկողայոս ի քաղաքն յԱմիթ, յաւուրս կաթողիկոսութեան տեառն Փիլիպպոսի, և ի կուսակալութեան տեղւոյն Մուստաֆայ բդեշխի։

Դարձեալ ՌՂԷ 1648 ապրիլ ամսոյ երկուք յաւագ ուրբաթու գիշերն, սաստիկ և ահագին շարժ եղև ի քաղա-

քըն Վան և յիւր երկիրն. և փլաւ մասըն ինչ պարսպին և յոլով եկեղեցիք և մաչիթներ և բաղում շինուածք կործանեցան, և անթիւ մարդիկ մնացին ի ներքև հողին. և եկեղեցիք Վարագայ վանիցն աւերեցան. և ամենայն վանօրայք գաւառին աւերեցան. և յաւուրս ութ ի շարժման եկաց երկիր որպէս դնաւ ի վերայ երեսաց ջրոյ, և ապա հանդարտեցաւ, որ ի չորս օրն և ի հինգ օրն՝ և ի տասն օրն մի անգամ շարժէր. և այնպէս մնաց մինչ յունիս ամիսն կատարեցաւ. և ապա հաստատեցաւ երկիրն ողորմութեամբն Աստուծոյ։

Թվին ՌՃ 1651 պիղծն Զօմար թալանեաց դանուանի վանքն Վարագ. և դսուրբ նշանն Վարագայ տարաւ գերի ի Խօշաբ. և յետ չորս տարոյ դարձեալ բերին զսուրբ նշանն ի քաղաքն Վան ձեռամբ խօճայ Մարխասին և եդին ի Տիրամայր եկեղեցին։

Թվին ՌՃԱ 1652 ամին, կատարեցաւ վկայական մահուամբ նոր վկայն Քրիստոսի սուրբն Խաչատուր Ամթեցի յօգոստոսի 20-ին, յաւուրս կաթողիկոսութեան Փիլիպպոսի Աղբակեցւոյ. և թաղեցին զնա մեծաւ պատուով ի շիրիմս նահատակաց քաղաքին։

Ի թուին ՌՃԴ 1654 յօգոստոսի ամսոյ երկու յաւուր չորեքշաբթի ի կէս աւուրն արեգակն խաւարեցաւ. և աստեղք յերկնից երևեցան որպէս ի գիշերի։

Ի թուին ՌՃԴ 1655 Ալիւրցի նոր վկայն Աֆրուն նահատակ, բազում տանջանօք կատարեցաւ ի քաղաքն Վան յաւուրս կաթողիկոսութեան տեառն Ցակոբայ Ջուղայեցւոյ յօգոս. 5-ին։

Թվին ՌՃԵ 1656 Ոստանցի Աւետիս նահատակն վասն սիրոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ կատարի վկայական մահուամբ ի մոլեռանդ ազգէն Հագարու հանդէպ Փիզանայ բերդին, որ է ի սահմանս Ջուլամէրկայ, յաւուրս կուսակալութեան Խոսրով բդեշխին Վանայ, և թաղեցին դնա ի գիւղն Առակ ի դիրս սրբոց, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և աղօթիւք նորա տէր Յիսուս մեզ ողորմեսցի. ի մարտի ամսեան երկրորդ աւուրն եղև կատարումն սուրբ վկային. ի կաթողիկոսութեան սրբոյ գահին Էջմիածնի տեառն Ցակոբայ Ջուղայեցւոյ։

Թվին ՌՃԵ 1656 ամին. նահատակեցաւ ի Վան քաղաքի երանելի նոր վկայն Քրիստոսի սուրբն Մխիթար ի նոյեմբեր ամսոյ 12-ին. յաւուրս կաթողիկոսութեան տեառն Ցակոբայ Ջուղայեցւոյ և ամփոփեցին մարմին մարտիրոսին ի նշանաւոր տեղւոջ ի փառս Քրիստոսի։

Եւ դարձեալ ՌՃԺԴ 1665 երևեցաւ յերկինս գիսաւոր աստղ մի ի մէջ գիշերին և ունէր զվարսն իւր ձգեալ դէպ յարևմուտս, և յառաւօտուն հասեալ դարձոյց զվարսն իւր և ձգեաց դէպ յարևելս. և օր աւուր յուշ ելանէր. և այնպէս եհաս մինչև յերեկոյեան լոյսն և անյայտ եղև։

Ի թուին ՌՃԻԷ 1678 Ռաքըր փաշան Վանայ զԽօջայ Ալխասն կախեաց անմեղ և ոչ եթող թաղել. սորա մականունն Լէշկեր ասէին. սա բազում հարկս վերացոյց ի Հայոցս։

Թվին ՌՃԻԸ 1679 Վանայ քաղաքի փաշէն, որոյ անունն էր Մուսլի, հրամայեաց հայոց մորուս թողուլ։

Դարձեալ ի միւս ամին ՌՃԻԹ 1680 Ջանփօլատ օղլի փաշայն հրամայեաց հայոցն զգօտին առնուլ ի գլխոցն և գտակ դնել։ Դարձեալ ի սոյն թուին Թուխատցի Վարգան վարդա-

պետն զհայոց կանաց բէչի սըմայն վերացոյց։

Թվին ՌՃԼԱ 1682 Ալի փաշան Վանայ զԳրիգորն և զՍտեփաննոսն անմեղ կախեաց, յորոց վերայ լոյս ծագեցաւ։

Թվին ՌՃԼԱ 1682 սուրբ Յակոբ եկեղեցին նորոգեցաւ ի Վան, ի ժամանակս Ալի փաշային։ Փիղք 300 տարի ապրին. և անգեղք բազում կեանս ունին վասն ողջախոհութեան։

Ի ՆՈՅՆ ԳՐԻԳՈՐ ԴՊՐԷ ՍԱԿՍ ԾՈՒԽ ՔԱՇՈՂԱՑ

Պատմեմ ձեզ բան յոյժ զանազան, չարատեսակ և անպիտան.
Զոր գեք գործեն յաղօթից ժամ, առ ժողովուրդն և քահանայն։
Զի ոմանք ի ժամ գան և նստին. կէսք մի ննջեն և մըրափին.
Ոմանք կցեալ ձեռօք կանգնեն, խաչ չի հանեն ի յերեսին.
զԱստուած չյիշեն ամենևին։ Ոմանք կանգնեն նման փայտի, ծունր չի դնեն յեկեղեցի.
Անկնին ի վերայ գաւազանի, զթիկունքն տան ընդդէմ պատի և զրուցեն ընդ ընկերի։
Ոմանք զրոյց տան ընդ միմեանս, չունին զականջն յԱստուծոյ բանս.
Զի չեն եկեալ յուսով ի ժամս, նայ յԱստուծոյ ոչ առնուն վարձս։
Ոմանք չունին սէր առ Աստուած, և ոչ ունին յոյս և հաւատ.
Այնպէս նեղին ի ժամտեղաց. զինչ զընտանեալ կամ տուգանած. նա Աստուծոյ է դիմադարձ։
Սարկաւագներ ամենեքեան ի յաղօթից խիստ ծուլանան.
Վազեն երթան ի մէյխանան ուտեն խմեն և արբենան.
Ապա ելեալ ի ժամ գնան. հագնեն շապիկ կանչեն անհամ,
Զիւրեանց բոյերն ի ցոյց կուտան. վերայ միմեանց յոյժ փքանան։
Ոհ կանչէ ձայնիւ ուժգին. զի յաղթեսցէ զձայն ընկերին.
Յորժամ լինի զինքն առանձին զԱստուած չյիշէ ամենևին.
Բնաւ չառնէ դիրք յիւր ձեռին և ոչ ասէ զհայր մեր յերկինս,
Այլ ծուլացեալ որպէս և զէս։ Զի լաւ է մանկան լինել ժիր և անփառ, քան թէ ծոյլ և խոնարհ։
Ոմանք սովոր են ի թուլթուն. և հետևող այն պիղծ գործոյն.
Վնաս կառնեն իւրեանց հոգւոյն, հաց մի չունին ի յիւրանց տուն.
Փող մի չունին որ տան հոգոյն. երթան պարտեօք գնեն թուլթուն.
Յօժար խմեն հետ թուրքերուն. զմուխըն տան յիւրեանց գլխոյն.
Կամաւ լինին ընկեր դիւուն. և կեր լինին անքուն որդուն։

Թ. ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑԻ

Յանուղի Մահմէտն մարգն անօրէնութեան և որդին կորստեան, և հարապետնեւինն ի յԱրաբիոյ ի յԱթրար քաղաքէ. որդի Աբդլայի, ի ՀԸ Թուին Հայոց 619 տիրացաւ սակաւ աշխարհի. այլ և Շամայ ևս կալաւ զիշխանութիւն օգնականութեամբն Հրէից. ամս Է. մեռանի. տուեալ հնազանդելոց իւրոց մոլար պատուէրս և օրէնս. զոր և ինքն ունէր։ Եւ յետոյ այնք որ զնա փոխեցին Բուբաքր և Օմար, յետ սակաւու զօրացեալ՝ առեալ զԵգիպտոս և զԲաբիլոն ևս, այլ և զՊարսս, և բարձին զԹագաւորութիւն Պարսից. և յաղթեցին Պարսից և Յունաց, անուանեցան Թագաւորք և սուլթանք իսմայէլացւոց և տաճկաց։ Եւ զկնի պառակտեալ ի միմեանց, եղէն սուլտանք և խալիֆայք և ամիրայք, բազումք անհնազանդ միմեանց և զմիմեամբք ելանելով։ Սակայն լցաւ աշխարհն ամենայն և տուն Պարսից և Հնդկաց, և Պարթևաց և Միջերկրայք ամենայն, չար օրէնօք և կրօնիւք զոր Մահմէտն ետ. զի լայն է ճանապարհ որ տանի ի կորուստ զգնացողսն. և բազումք գնան և մտանեն ի նայ ըստ անսուտ հրամանին Քրիստոսի. զի գնեշտութիւն և զմեղս քարոզէ, որք դիւրինք են մարմնոյ առ ի կատարել։ Եւ յետոյ կոչեցան Աբդլմունիք, և զկնի սակաւու բարձեալ իշխանութիւն տաճկաց՝ տիրեցին Թուրքք ի յազգէն Թուրքմանաց, և յետոյ դանիշ մանիք և մսլիմանք։ Իսկ այժմ կոչին Օսմանլուք. զի յետ բազում ժամանակաց անցելոց ի Թուին ՉԽ 1291 ոմն Օսման անուն ի նոյն ազգէ Թուրքաց, նովին օրէնօք ի յԱսիոյ ի Ծոխ անուն գեղջէ շինական աղքատ. և ժամանակ ինչ Թողեալ գհողագործութիւն և գող եղև, և սակաւ սակաւ զօրացաւ, և գնացեալ յարեցաւ ի սուլտան Ալայտինն, որ տիրէր հապաւղոկացւոց աշխարհին, և առեալ զօրս ի նմանէ գնաց էառ զԲուրսայ քաղաքն, որ է Եփեսոս, և առանձակ ինքնագլուխ իշխանութիւն ստացաւ, և սուլտանութիւն։ Եւ այս է Օսմանցւոց առաջին Թագաւոր. զոր դիրք Աստուածային օծ կոչեցին զնոսա, և այս է օսմանցի կոչման պատճառն։

Իսկ յետ մեռանելոյ Օսմանի Թագաւորեաց որդի նորա Սուլտան Ոհրանի. սա էառ զՅնգիշահարն, որ Թարգմանի նոր քաղաք, և եբարձ և ընդարձակեաց զիշխանութիւն։

Եւ յետ նորա Թագաւորեաց զորդի նորա սուլթան Մուհամատն։

Եւ յետ նորա որդի նորա Մուրատ Թագաւորեաց։

Եւ յետ նորա որդի իւր սուլթան

Պայազիտ, որ Իլտուրումն կոչիւր, և զայս ևս իմա՝ զի զորքանն ամաց թագաւորացս ոչ կարացի գտանել· բայց զանուանս թագաւորացս որդի ի հօրէ յաջորդելով։ Ի սորա ժամանակս ՊԼԳ 1384 թուին, Յոհան վարդապետն Որոտնեցին, որ մակ անուն Կանխիկ կոչիւր վախճանեցաւ ի նոյն աւուր յորում ծնեալն էր։ Եւ ի սոյն ամի Բուրհան զատին սպան զտէրն Սեբաստիոյ. և զՍտեփաննոս եպիսկոպոս նահատակեաց, և զսուրբ քառասնից վանս քակեաց· զայս Պայազիտս ՊԼԶ 1387 թվին, Լանկթամուրն եւ ի Ամրղընգայ· և աւերելով և գերելով զամենայն աշխարհն մինչև ի յԱնկիւրիայ, և զսա ի յերկաթի զաֆասն եդ զԽոնդքար Իլտրում Պայազիտս և անդ մեռաւ։

Եւ յետ նորա թագաւորեաց միւս այլ Մուրատ։

Եւ յետ նորա միւս այլ Մուհամատ մեծ. ի սորա ժամանակս ՊՂ 1441 թուին այրեցին զԽրդըրշայն ի Մարզուան. և զսպիտակ գօտին բարձին ի քրիստոնէից։ Եւ ի միւս ամին ՊՂԱ 1442 սուրբ աջ Գրիգորի մեր Լուսաւորչին դողացեալ եղև ի Սիսայ. և տարեալ ի Հայս ի յէջմիածին, նորոգեցին զնա, և նոր կաթողիկոս նստուցին Կիրակոս անուն. զայս Թումայ վարդապետն յիշէ ի մէջ Լանկթամուրի պատմութեան. որ նա է շարագրեալ Թումայ վարդապետն Մեծոփեցին. զսա թաղեաց Յակոբ վարդապետ Ղրիմեցին՝ հրեղէն լեզուն, որ զտումարի մեկնութիւն է արարեալ։ Այս սուլթան Մուհամատս էառ զմայրն մայրաքաղաքաց, զմեծն Կոստանդնուպօլիս ի ձեռաց Հռոմոց վասն մեղաց նոցա, և այնուհետև կոչեցան աշխարհակալ և ինքնակալ կայսերք և թագաւորք· ի թուին Հայոց ՋԲ 1453։ Եւ այսպէս բարձին զթագաւորութիւնս և զտէրութիւնս բազում ազգաց և աշխարհաց· այսինքն զՀայոց, զՎրաց, և զԱղուանից, և զՄարաց և զԱսորոց, և զԱրաբացւոց, ուստի էր օրինագիրն իւրեանց, և զԵգիպտացւոցն, և զնուպեացն, և զՀոռոմոց, և զՀոնաց, և զԲուլղարաց, և զՄազքթաց, և զԱփխազաց, և զՄակեդոնացւոց, և զՀիւսիսականաց, և զԹաթարաց, և զսակաւ ինչ զՖռանկաց, և զՊարսից, և ընդարձակետլ զթագաւորութիւն ինքեանք միայն տիրապետեցին. բարձեալ զշինուածս եկեղեցեաց, և զուրախութիւն և զպաշտօն եկեղեցականաց, և տրտմազգեացս արարին զամենայն ազգս քրիստոնէից. Աստուծոյ զայս մեզ հատուցեալ անմիտ ազգաւ զկծեցուցանել. և մեզ ոչ ինչ է փոյթ դառնալ ի մեղաց։ Քանզի են ոմանք ի հնազանդելոց իշխանաց մեծի թագաւորին ամիրայք ի յերկիրս Մարաց, ի յեզերս թագաւորութեան իւրոյ սահմանաց և սահրաթաց, որ են անփոխադրելի տեղակալք, և սեպհական են յիշխանութեան, զի մնան մինչ ի մահ, և յաջորդեն զնոսա որդիք իւրեանց, սակայն հարկատու են թագաւորին մեծի։ Իսկ ի մայրաքաղաքս ոչ այնպէս, այլ փաշայք մեծամեծք և զօրեղք առեալ զիշխանութիւն արծաթավաճառութեամբ, և ահարկու ձևով զան, և դողացուցանեն զամենեսեան. սակայն փոփոխականք են, զի զկնի Զ և Է ամսոյ, և կամ ամի միոյ, կամ աւելի կամ պակաս անկանին ի փառաց և յիշխանութենէ իւրեանց, զի հնազանդ են տէրութեան իւրեանց, և այնպէս տևեցին մինչև ցայժմ, և այժմ 206 ամ է թագաւորութիւն նոցա, յորժամ առին զՍտամպօլ։

Դարձեալ ՋԷ 1458 թվին, շարժ եղև յԵրզնկայն. 32 հազար մարդ մեռաւ, և այսչափ միայն, այլ ԺՁ անգամ շարժ եղեալ է յԵզնկայն, քան զայս առաւել սաստիկ։

Ի ՋԺԸ 1469 թուին սաստիկ մահտարաժամ անկաւ յաշխարհս, և Նաղաշ վարդապետն առաջնորդ Համթայ որ էր ի Պոլ գեղջէն մերձ Բաղիշոյ զողըն ասաց։

Իսկ ի ՋԼԱ 1482 մեռաւ սուլտան Մուհամատն, որ էառ զԸստանպօլ, և թագաւորեաց սուլտան Պայազիտն, և շարժ եղև յԵրզնկայ երեսուն հազար մարդ ներքոյ հողոյն մնաց. ի սորա ժամանակս էր Մատթէոս վարդապետն ի Սևաստու վանքն։

Եւ ի ՋԿԲ 1513 թուին, ամբարիշտն Սէլիմ սպան զհայրն իւր զթագաւորն զՊայազիտ, որ թագաւորեաց ամս երեսուն և մէկ. և նստաւ ինքն թագաւոր սուլթան Սէյլիմ ամս տասներեք, որ սահմանեաց զտգայքն ժողովել։ Եւ յետ նորա թագաւորեաց Սուլայման խոնդքարն ՋՀԵ 1526 թուին, որ քան զամէն շատ թագաւորեաց ամս քառասուն և շուրջ երեք զերկրաւն. սա յառաջին ամի թագաւորութեան իւրոյ գնաց էառ զթաղտն Ունկռուզաց, որ է Պուտունն։

ՋՀԶ 1527 Տաւուլու հոռոմն գլուխ քաշեց. Հուսէն փաշան ի վերայ գնաց, զհոռոմն ջարդեց և դերեցոյց։ ՋՁԴ 1535 ի Շնկուռու գեղէն էրէց մի այրեցին, և ի միւս ամին զԹօջայ Կոջկան նահատակեցին ի Սևաստ։

Իսկ ի ՋՂԷ 1548 թուին, Ալխասն երեկ հանցեց զխոնդքարն Սուլէյման տարաւ ի Թաւրէզ ի վերայ եղբօր իւրոյ և աւերեաց զԹաւրէզ. իսկ տէրն Թաւրիզոյ շահ Դահմազն՝ եկեալ աւերեաց զՄնուս, զԲասէն, զԱրզրում, զԴէրջան, զԴեղի, զԲաբերթ, զԵզնկայն, զԸսպեր, և զայլ գաւառս և դարձաւ։

Թուին ՌԶ 1557 Կեզեցի Ղուկաս վարդապետն զտումարն ի յոտքն հանեց։

Եւ ի ՌԸ 1559 որդիք Սուլէյման խոնդքարին Սէյլիմն և Պայազիտն կռուեցան ի Ղօնեայ Սէյլիմն զՊայազիտն փախոյց մինչև յԱրզրումն. և անտի գնաց ի շահն երեք որդովն և անդ սպանին զնա։

Եւ ե ՌԺԵ 1566 գնաց սուլտան Սուլէյման ի վերայ Փէջայ. և անդ մեռաւ։

Եւ ի ՌԺԶ 1567 թուին թագաւորեաց որդի նորա միւս այլ Սէլիմն ամս ութ. և ի սոյն ամի առին զԿիպրոս կղզին. զսա ասեն ոմանք թէ հրէի որդի էր. քանզի սորա հայրն անզաւակ էր. և մայր ծնաւ աղջիկ մի, և ջհուտ կին մի ծնաւ որդի արու. և զանձիւք հաւանեցոյց թագուհին ըզջհուտն. և փոխեաց զաղջիկն ընդ տղային. և անուանեցին զնա Սէլիմ։

Եւ ՌԻԴ 1575 թուին մեռաւ Սէլիմն և թագաւորեաց որդի նորա սուլտան Մուրատն ամս քսան. և ի սոյն ամի ագևոր աստղն երևեցաւ։

Իսկ ի ՌԼ 1581 սոյն սուլթան Մուրատն զգլխոյ գօտին եբարձ ի քրիստոնէից. և զգտակներ հագոյց քրիստոնէից ազգին։

Եւ ի ՌԼԴ 1585 թուին Օսման փաշան առաւ զՇրուան, որ է Աղուանք, և զԹաւրէզ քաղաք, և յետ հինգ ամի քուրտն գլուխ քաշեց եկեալ յԵզնկայն, գզիր օղլին էր գլխաւորն։

Եւ ի թուին ՌԽԴ 1595 մեռաւ սուլթան Մուրատն, և թագաւորեաց որդի նորա սուլթան Մուհամատն ամս Ժ։

Թուին ՌԽԸ 1599 վերստին նորոգեցաւ վանքս Ամիրտօլու վերակացութեամբ Բարսեղ վարդապետին։

Թուին ՌԾ 1601 մեծ Շահ Աբասն էառ զԹաւրէզ և զԵրեւան։

Եւ ի ՌԾԳ 1604 թվին մեռաւ սուլթան Մուհամատն. և թագաւորեաց որդի նորա Ահմատն ամս ԺԳ։ Եւ ի սոյն ամի եղև սով սաստիկ. մինչգի կերին մարդիկ զձի և զջորի այլ և զմիմեանս ևս։

ՌԿԴ 1615 թվին վախճանեցաւ Բարսեղ վարդապետն Բաղիշեցին, որ յաշակերտաց Տաթևացւոյն ի վանքն Ամիրտօլու։

Եւ ՌԿԵ 1616 ուռուսն էառ զՏրապիզոն։

Եւ ի ՌԿէ 1618 աստղ երևեցաւ կեռ որպէս թուր. և միւս այլ ագևոր աստղ երևեցաւ յարևելից յարևմուտս. և միւս ամեն սաստիկ մարդամահ եղև. և ի Գումաշխանէն, որ փոքր քաղաք մի է երեք հարիւր տուն, ի մէկ օրն հարիւր քառասուն տղայ մեռաւ։

Եւ ի ՌԿէ 1618 մեռաւ սուլթան Ահմատն և թագաւորեցուցին զնորին եղբայրն զՄուստաֆայն, որ եկաց երեք ամիս. և յետ երեք ամսոյ ի նոյն ամին մանզուլ արին զնա. և թագաւորեցուցին զԱհմատի որդին զՕսման։ Որ եկաց թագաւոր չորս ամ. և առեալ հեծեալ բազում և գնաց ի վերայ Լեհաց քաղաքին. զոր Հօթուն ասեն. և ոչ կարաց առնել. այլ դարձաւ ի Ստամբօլ. և ենգիչարիք չարացան և սպանին թէ մեզ Հայոց թագաւոր պիտոյ չէ։

Եւ ի ՌՀԱ 1622 թուին, դարձեալ եդին զՄուստաֆան խելագար խելօք, և եկաց մի ամ և կէս. և կրկին մանզուլ արարին, և եդին թագաւոր զՕսմանի որդին զսուլտան Մուրատն. ի ՌՀԳ 1624 թուին, հզօր զօրութեամբ և բարեսէր, որ թագաւորեաց ամս տասն և եօթն, և արար շատ քաջութիւնս, սեպտեմբեր ամսոյ 15 թագաւորեաց։ Եւ սոյն ամի կարմիր գտակներն այսինքն Ղրզըլպաշն էառ զԲաղդատ։ Եւ յետ երկու ամի Հաւուզ Ահմատ փաշայն վազիր եղև. և ՄՌ ասքարով գնաց ի վերայ Բաղդատայ. և ոչ կարաց առնել զնա. կէս զօրացն ջարդեցան և այլք փախեան եկին ի Ստամբօլ։

Եւ ի ՌՁԳ 1634 ամին, թագաւորն սպան զԱպազան. և գնացեալ ի վերայ Լեհաց ի պատերազմ և հնազանդեցոյց և դարձաւ. և ի սոյն ամի ծառաղատիկն Հռոմին, և թագաւորն մեծ եասախ արար պիղծ թութունին։

Իսկ ի ՌՁԳ 1635 զՀուսէն էֆէնտի Մուֆթին, և զՄանօղլին, և զէլէզ փաշայն սպան թագաւորն. և ի նոյն ամի մարտի ամսոյն ել բազում զօրօք և եկն և գնաց զԵրևանու բերդն առաւ, և եհաս մինչ ի Թաւրէզ և դարձաւ. բայց պարսիկքն ի ձմեռնային յեղանակին այլվի առին զԵրևան։

Ի ՌՁէ 1638 թուին ապրիլ 28 նոյն սուլթան Մուրատն գնաց ի վերայ Բաղդատու ի պատերազմ և եհաս ի Բաղդատ ի նոյն նոյեմբեր 26, և ծեծեաց զպարիսպն 38 օր մեծաւ զօրութեամբ և էառ զքաղաքն դեկտեմբեր 14 օր և անհամար մարդիկ մեռան։

Թվին ՌՁԸ 1639 յունիս 2 Հոգեգալստեան կիրակին դարձաւ եմուտ յաթոռանիստ քաղաքն իւր և ըՍտամբօլ մեծաւ զօրութեամբ։ Եւ ի ՌՁԹ 1640 սուրբ Սարգսի շաբթուն հինգշաբթին մեռաւ սուլթան Մուրատն, և թագաւորեաց եղբայրն իւր շունթան Իբրահիմ խելագար խելօք ամս Ժ.

Եւ ի ՌՂԳ 1644 թ. աղայամահն եղև։

Ի ՌՂԹ 1650 թուին, սպանին ըղշունթան Իբրահիմն և եդին զսուլթան Մահմատն, և դեռ ևս կենդանի է. և այս ինն ամ է, զի թագաւոր է, և սա ԺԹ երորդ թագաւոր է ի յՕսմանէ սկսեալ, և 206 ամ է թագաւորութիւն սոցա, յորմէ հետէ առին զԿոստանդնուպօլիս։

Եւ ի թուին ՌՃ 1651 Փիլիպպոս կաթողիկոսն Հայոց լուսաւորեալ հոգին 18 վարդապետօք և 70 կղօնաւորօք աբեղայիւք գնաց ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, յերկիրպագութիւն սուրբ տեղեացն տնօրինականաց՝ բազմամբոխ ժողովրդովք և ցնծութեամբ և ուրախութեամբ և շինեաց զսալայարկ յատակն սուրբ Յակոբայ գեղեցիկ և վայելուչ։ Եւ ի սոյն ամի օգոստոս 2 օրն չորեքշաբթի Աստուածածնի պահոց, աբեգակն խաւարեցաւ այնքան, մինչզի աստեղք երևեցան։

Եւ արդ՝ որովհետև ասացաւ սակաւ ինչ վասն թագաւորութեան սոցա, ոչ է պարտ ապա և զանց առնել սակս բազմազան աղէտիցն մերոց՝ զոր կրեցաք. քանզի ի ժամանակս սոյն թագաւորին Մահմետայ, թուին ՌՃԳ 1654 եղև զի ի թագաւորանիստ քաղաքն Ստամբոլ, ոմն Պաշ վազիր, և երկրորդ էր թագաւորին, այլ և փեսայ, քանզի զքոյր սորա այսինքն զդուստր սուլթան Մուրատին ունէր առ ինքն, Մալաք Մահմատ փաշայ անուն, որ Մալայիք հրեշտակ թարգմանի ըստ իւրեանց բառին, բայց ես կարծեմ թէ ի հրեշտակաց սատանայի էր, և կամարար նմա. զսա չարախօսեցին ոմանք առ թագաւորն, իբր զապստամբ և զթշնամի նորա. վասնորոյ իմացեալ թագաւորն զխնդութիւն նորա ընկէց զնա ի պատուոյ և կամէր սպանանել, բայց վասն աղաչանաց քեռ թագաւորին որ կին էր նորա պահեցաւ կենդանի, և յահէ սպանմանն՝ փաշայութեան անուամբն եկեալ ի Շամիրամակերտ որ է Վան, և է մեծ փաշայութիւն և սահրաթ։ Եւ զի Վան փաշայութիւն է և Բաղէշ ամիրայութիւն և անփոխադրելի, որպէս ասացի յառաջագոյն, սակայն զխահարկն Բաղիշոյ զոր առնէին ի քրիստոնէիցն ի վերայ Վանայ էր. քանզի ծառայք թագաւորին որ ի Վան զքաղաքն և զբերդն կուպահէին ի Պարսից, նոցա ռոճիկ էր տուեալ թագաւորն զհարկն Բաղիշոյ։ Իսկ չար ոստիկանն մեր Աւտալ խանն՝ ընդդիմացեալ ոչ տայր զհարկն ի ծառայքն թագաւորին, այլ զրկէր զնոսա և ինքն ուտէր, զի բուռն էր իշխանութեամբ, և հնարագէտ և ամբարտաւան, վասնորոյ յորժամ եկն Մալաք փաշայն ի Վան, ժողովեալ զուլեր ծառայք թագաւորին ի վերայ նորա, և ետուն տասն հազար զուրուշ արծաթ, զի գայցէ զօրօք ի վերայ Բաղիշոյ, և սպանցէ զամիրայն Աւտալ բէկ. իսկ նա թէպէտ և ոչ կամէր զի էր թուլամորթ և երկչոտ, սակայն ագահեալ յարծաթն, և մոռացաւ զԱստուածն, և ժողովեալ առ ինքն զօրս բազումս ի ծովեզերեայց, ի Մարաց և ի Նեստորականաց, մինչ զի եղև ԺԲՌ հեծեալ, թող զՋրկիրս և դՋորեպտնս և զսպասաւորս. և նոքօք եկն ի վերայ քաղաքիս, և էր ժամանակն ամառնային։ Իսկ ամիրայ Աւտալ բէկ ժողովեալ առ ինքն զզօրս իւր և զդրացի ամիրայս, և արար լինել իւր զօրս ութ հազար, և նստեալ պահէր զքաղաքն մարտնչելով ընդ նոսա, զի մի գայցեն և աւերեսցեն զստյ կամ կո-

ղոլաեսցեն. իսկ մեղք մեր ոչ ետուն նմա զօրանալ, այլ տկարանալ, զի յաւուր միում ի շաբաթի, որ էր բարեկենդան պահոցն Վարդավառի, մինչդեռ կազմէին զինքեանս զի ի վաղիւն մարտիցեն. բերեալ թուղթ ինչ ի փաշայէն ետուն յամիրայն որ էր դրեալ այսպէս. թէ ընդէ՞ր քեզ դիմամարտ լինիլ մեծին քո որ չէ օրէն. կամ որով զօրօք կամիս մարտնչիլ ընդ իս, կամ թէ չդիտցես արդեօք, զի այսքան ձեռագիր ի մեծամեծաց քոց ե յիշխանաց առ իս է, զի բանիւ նոցա եկեալ եմ ես. և զօրն քո յորս յուսացեալ ես նամին սպանանել զքեզ, և կամ տալ ի ձեռս իմ. բայց դու լուր ինձ և եկ հնազանդեա և ապրեսցիս։

Իբրև ետես դայն ամիրայն սըրտաբեկ և միջակոտոր եղեալ ապշեցաւ, զի ի զօրս իւր պարծէր, որ յապստամբել կամէին յիւրմէ. վասնորոյ յակամայ կամօք ի փախուստ առեալ կամէր զերծանել, և օտար զօրքն ցրուեցան, զի նեղեալ էին ի սովոյն, իսկ զօրքն իւր զի էին տեարք ընտանեաց ե տանց, և դեօղից ե անդաստանաց, վասնորոյ յակամայս զկնի գնացեալ առ ի դարձուցանել աղաչանօք և երդմամբ, զի ընդ նմա իցեն մինչ ի մահ. և հաւանեցուցեալ դարձուցին զի ի վաղիւն մարտիցեն. սակայն զօրքն ամենայն ցրուեալ էին և սակաւք մնացեալ. և ի միւս աւուր ի կիւրակէին՝ այնպէս սակաւուք գնացեալ ի կռուել, որ եկեալ և մերձեալ էին ի քաղաքն, և մերձեալ ի միմեանս երկոքին կողմանքն, ե սկսան ի սպանումն. իբրև ետես ամիրայ և իմացաւ զպարտութիւն իւր փախեաւ. և գնացեալ ի յամուրս ե ի քարանձաւս ամրացաւ հանդերձ որդովք և ընտանեօք, թողեալ զքաղաքն և զտուն իւր ի ձեռս փաշային. իսկ զօրք փաշային ոչ գնացին զկնի, այլ մտին ի քաղաքն և յաւարի առին, և կողոպտեցին զքրիստոնեայս. ե աստ էր տեսանել զաղաղակ և զողբն մեր. զի զբազումս սպանին, այսինքն քառասուն այր քրիստոնեայ սպանին. զոր և հայցեմ յԱստուծոյ, զի մասն նոցա ընդ սրբոց Աստուծոյ լիցի և ողորմութիւն։ Ընդ որս էր ե Սարգիս անուն ոմն սարկաւագ, երիտասարդ և զօրեղ, զոր սպանին, և սուգ մեծ եղև մեզ, զի յոյժ վայելուչ էր գեղ նորա, և ցանկալի բազմաց, և ըղվանքս կողոպտեցին և զմեզ մերկացուցին. բայց ողորմութիւն Աստուծոյ եհաս, զի զպահտրանն մեր ոչ գտին, ուր էաք եդեալ բազում Աստուածաշունչ գրեանս, և զսպաս եկեղեցւոյս, սպանին ի նմին աւուր և երկու եղբայրս հարազատս. և յոյժ ծերացեալս առ դրանն իւրեանց, որ նստեալ էին՝ զի մի՛ ոք վնասեսցէ թալանելով, զորս սպանին երկոքին ի միասին՝ և սգացաք յոյժ. որոց էին անուանք Սահակ և Աշխան, որոց ողորմեսցի Քրիստոս յոյսն մեր ամէն։

Իսկ ի միւսում աւուր գտեալ փաշայն զմին յորդոցն ամիրային Դիատին բէկ անուն. և եդ զնա ամիրայ. և խրատեաց զնա չլինել իբրև զհայր իւր անհնազանդ և այնպէս թալանելով զքաղաքդ բազում աւարաւ դարձան ի Վան ուրախութեամբ, թալանեցին և զտուն ամիրային և զինչս նորա տարան։

Եւ զկնի աւուրց եկեալ Աւտալ բէկն առ ամիրացեալ որդին հնազանդութեան և սիրոյ պատճառաւ, և զկնի ամի միոյ նենգութիւն կալեալ ի սրտի թագնաբար, չարասէր և վատշուէրն այն, որ յառաջագոյն սպանեալ էր զեղբայ-

րըն իւր, իսկ այժմ անագորոյն և քարասիրտն այն, սպան և զամիրացեալ պարոն որդին իւր՝ զԴիաաւին ըէկն, և զմիւս այլ զնուրատինն, և վերստին ինքն կալաւ զիշխանութիւնն. և արգել զգլխահարկն ե կարեաց ի զուլերացն Վանայ, և դեռ ևս ինքն ուտէ, և այս քառասուն ամ է, զի ամիրայ է ներելովն Աստուծոյ։

Եւ ի վերայ այս դառնութեան զոր կրեցաք, եհաս մեզ գուժ կրկնակի, և արտմութիւն անհնարին զկնի երկու ամաց ՌՃԶ 1657 ոչ միայն մեզ՝ այլ և բոլոր ազգիս ե ամենայն հասակի. մինչ զի վիմեղէն սրտիցն անգամ շարժիլ յողբս և յարտասուս. քանզի ազգն Հռոմոց երկաբնակաց քաղկեդոնականաց, որ յիսկըզբանց անտի մինչև ցայժմ թշնամի են մեզ, և հակառակ կրօնից և ուղղափառութեան մերում, ըստ խեռաբարոյ սրտից իւրեանց՝ այժմ կրկին թափեցին զթոյնս դառնութեան իւրեանց և ժայթքեցին ի մեզ, զի ըստ նախանձու զոր ունէին ի վաղուց պատրաստեցին մեղ որոգայթ գաղտնի, և լարս ոտից մերոց, և մեք ոչինչ իմացեալ էաք. քանզի այր մի գիտուն մարմնական ճարտարութեան ուրացուցին և կուրացուցին հոգով. և զրկեցին ի քրիստոսէ. և ուրացողն քրիստոսի պիղծն այն գնացեալ եղև սպասաւոր դրանն արքայի, մինչ զի եհաս ի բարձրագոյն փառս. և եղև փաշայ և վազիր և երկրորդ թագաւորին զի ճարտար էր։ Եւ ապա գնացեալ առ նա ազգն իւր նիւթեցին մեզ չարիս անտանելիս, և հրապուրեցին զնա որ յազգէն իւրեանց թուրքացուցեալ էր, և երկրորդ էր թագաւորին, և նովաւ հանդերձ մտին առ թագաւորն սուլտան Մահմէտ, և ետուն երկու հարիւր հազար ղուրուշ, այսինքն հարիւր հազար դահեկան կարմիր, և աղաչեցին զթագաւորն զի տացէ նոցա զեկեղեցին Հայոց, զվանս սըբոյն Յակոբայ, ուր է գլուխն Յակոբայ առաքելոյն Զեբեդեայ՝ որ էր ի ձեռս մեր. և էր վանք մեծ հոյակապ և սքանչելի, և ականաւոր և աննման, և այնպէս հնարիւք կաշառեցին զթագաւորն, և առին ի մէնջ զսուրբ Յակոբ և բարձին զուրախութիւն մեր և զպաշտօն, և ահա եղաք հաւասար հողոյն և այլ նուազագոյն, և բարձաւ թագաւորութիւն մեր հոգևոր, և ոչ կամիմք տեսանել զմեզ կենդանիս. քանզի լաւ է մեզ մեռանել քան զայս կեանս մեր. և խաւարեցաք և մթացաք և ի ձեռն այս աղէտի զրկեցաք և ի գերեզմանէն Քրիստոսի. և ի տեսութենէ նորա. և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց. զի թէ մեղքն մեր ոչ էր պատճառ, ահա զի բազում անգամ յարուցեալ ի վերայ մեր վասն սոյն խնդրոյ և ոչ կարացին առնուլ. և այժմ մատնեաց զմեզ տէր յանարգութիւն և ի ստրկութիւն. և ի սուգ անմխիթար վասն չարեաց մերոց, և անզեղջ կամաց. սակայն ոչ եմք յուսահատեալ. եթէ եթող տէր զմեզ ի ձեռաց. այլ ակն ունիմք ի Քրիստոսէ, զի մաղթանօք սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց և սրբոյն Յակոբայ առաքելոյն, զի հաշտեսցի ընդ մեզ գթած տէրն, և դարձուսցէ ի մեզ զվայելուչ և զաղինասարաս եկեղեցին և զվանքն մեր, զի մի կորիցուք իսպառ. զի ոչ իսպառ բարկանայ մեզ տէր և ոչ յաւիտեան պահէ ոխս. որև նոյն անյիշաչար տէրն ողորմեսցի մեզ և գթասցի ի մեզ, զի մի երբէք յուսահատեսցուք ամէն։ Աղաչեմ յիշել ի տէր Քրիստոս յոյսն իմ, զմեղուցեալ բանի սպասաւորս Վարդան և զծնողսն իմ ըստ հոգւոյ և ըստ մար-

Յիսոյ, որ զգիրքս կազմեցի վերստին, և զխշատակարանս և զսակաւ պատմութիւնս արարի տկար մտօք. ոչ որպէս ձեզ վայել է, այլ ըստ իմում չափոյ. և դուք յիշեսջիք ի Քրիստոսէ. նաև զհամշիրակ եղբայրդ իմ զՏիգրանակերտցի Սարգիս բաբունին ի յետ յիշեցէք ամէն։

Մեծին Վարդանայ Բաղիշեցւոյ մահարձանի պատճէն։

Ի տապանի աստ ամփոփի
Մարմին մաքուր մեծ հռետորի,
Տեառն Վարդանայ փաղիշայի,
Արի և քաջ վարժապետի,
Խարանազգեաց ճգնաւորի,
Աստուածաբան վարդապետի,
Որ ի հովտիս այս տրտմալի
Ել առ Փրկիչն ի յոյսն բնաւի,
Ի քսան երեք յոբելինի,
Երեք թուով յաւելորդի
(ՌՃԾԳ 1704)
Վոք հանդիպիք տաք զոզորմի։

Ժ. ԻՆՉ ԻՆՉ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Յազգի. Մեր եղեալ կաթողիկոսաց, եւ վարդապետաց եւ այլ ինչ հարկաւոր իրաց ժողովեալ ի հաստատեալ Թղթոց հնացելոց.

ՌՂԹ 1550 Նոյեմբ. ԻԲ: Երկրորդ անգամ հաստաւ Դաւիթ եպիսկոպոսն: Առբեալցի պատրիարգ ի Կոստանդինուպօլիս ձեռնտուութեամբ Մուրատ փաշային հագարացւոց. դի յերկրորդ պատրիարգութենէն աքսորեալ էր ի Կիպրոս կղզի. անդ տեսութիւն արարեալ ընդ փաշային որ ի Կոստանդնուպօլիս, եկն ի պատրիարգութիւն:

Օգոստ. Ժ. Աքսորեցաւ սոյն Դաւիթ եպիսկոպոսն ի պատրիարգութենէ հնարիւք իշխանաց՝ որք յանձնառու եղէն՝ և էին վեց եկեղեցւոյ իշխանք, թէ զպարտս Դաւիթ եպիսկոպոսին և թէ զնորոգ եղեալն: Այս օրինակ կառավարութեամբ օր քան զօր առաւելոյր պարտք եկեղեցեացն, և հասեալ էր մինչև ցքառասուն հազար մառչիլ:

Ցաւուրս Մէլիք վէզիրին, չարացեալ խարաճճից կալնուլին զերեցունս հայոց և յունաց և պահանջէին դրամ խարաճի թղթոց, բայց երիցունք երկուց կողմանց երթային առ վեզիրին և ջանային խափանել այս նորահնար սովորութիւն բազում անգամ. և թէպէտ ոչ ստիպէր տալ, բայց և ոչ արգելոյր թէ չտալ. երթային առ մուֆտին. և նա ևս ոչ տայր ֆէթվայ՝ յոր կողմն և իցէ. վերջ ամենայնի առին հրաման չտալ, և զոր ինչ մինչ յայն ժամանակ տուեալ էին առին յետս. և զարձուցին զթուղթսն: Բայց այս գործ աղագաւ ծախս էին արարեալ երկու հազար մառչիլ միաբանութեամբ ընդ յունաց. որք դրժեալ ուխտին ոչ ետուն մինչև ցստակ մի:

Մաղաքիա Չէլէպի որդի երևելի իշխանին Երեմիայի համթեցւոյ՝ այր պիտանի ի բազում գործս ազգիս հայոց առ մեծամեծ իշխանաւորս հագարացւոց, որ ի ժամանակս մէլիկ վէզիրին պակասեցոյց Ինէ քիւրէքճիի [2] վարձ ի վեց եկեղեցեացն որոյ վասն բազում լինէր աղմուկ շփոթի յազգս մեր:

Էր ոմն Բարթենիոս անուն պատրիարգ յունաց և վարէր դհայրապետութիւն իւր ի կամս Աստուծոյ. և էր անաչառ դատաստան նորա և յոյժ օրինաւոր. և հասակաւն ցանկալի ամենեցուն ևս: Եւ եղև նախանձիլ իշխանացն յունաց ընդ նա. վասն ասելոյ նմա թէ ռամիկք են որ պահեն զօրէնս Աստուծոյ. և երկնչէին ի նմանէ. իսկ օրինազանցք փարթամք և մեծատունքն են. քանզի ղապաճի [2] ոմն օրինազանց մեռեալ հրամայեաց երիցանց չթաղել և աշխարհականաց, որոյ տեարքն բերեալ յանծանօթ տեղեաց զհայ ազգաւ սեռնակիրս կաշառօք տարեալ թաղեցին զայն: Աոյնպիսիք բազում: Վասն-

որոյ մտեալ ի խորհուրդ երևելի իշխանաց, որոց գլուխ էր Փափազ օղլի ոմն ի ժամանակին իշխան մեծ, մտեալ առ վէզիրն, եւ հանել զնա յաթոռոյն և զայլ ոմն ըստ կամաց իւրոց ի տեղի նորին նստուցին և զայն յաքսորս առաքեցին. և կաշառեցին զՂափուճի պաշին[26] աքսորաաարն պաարիարգին գիտութեամբ և խորհրդեամբ պօստանճի պաշուն[27], զի ի ճանապարհին ի վերայ ծովուն խեղդամահ առնել և արկանել ի ծով, որ և արարին։ Եւ յետ աւուրց ինչ լուեալ Պէքտաշ աղային, որ էր նմա սիրելի, հարցանէր վէզիրէն թէ ուր է Ւարթենիոսն, և զՓափազ օղլին կոչէր և զնա ցուցանէր. և նորա ամենևին ոչ կարեցեալ պատասխանի առնել. հրամայեցին նոյն ժամանակ կախել զնա զիւր զգեստիւն և կերպարանաւն ի դուրս պատրիարգարանին յունաց ի տես ամենայն ազգաց։

Յաւուրս կիւրճի Մէհմէտ փաշային, որ վաթսուն օր տևեաց, միտրապոլիտն Քիոս կղզւոյ գտանելով աստ ի Կոստանդինուպօլիս և էր յոյժ փառամոլ և մարմնաւոր և կարի անհնազանդ պատրիարգին իւրեանց. յաւուր միում քարշեալ զսուր յառնէր ի վերայ պատրիարգին և նախատէր ասելով ով ես դու, զի ես քեզ հնազանդեցայց. և մտեալ յինքն սրտանց ուրացաւ զՔրիստոս. և տաճիկքն ամենայն ուրախացեալ յամբաւ խնդութենէ իւրեանց և նախարարք մեծացուցին զնա և արարին խափուճի պաշի արքային. և ետուն զկին և զտուն սատակեալ փիալէ փաշային։

Յայսմ ամի եւ Փիլիպպոս կաթուղիկոս յաթոռոյն Էջմիածնի, եւ և Ներսէս կաթուղիկոս ի Սրսայ միակամ խորհրդով գնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ յերկրպագութիւն տնօրինական տեղեաց տեառն մերոյ և Աստուածընկալ սուրբ գերեզմանին։ Եւ ի մուտ ՌՃԱ թուոյն լինէին անդ այսոքիկ հայրապետք և ի սուրբ Զատկին ի ԺԸ ապրիլին. դարձաւ Ներսէս կաթուղիկոսն յաթոռ իւր ի Սիս. իսկ քաղաքցիս կանխաւ առեալ հրաման յարքունուստ գնացեալ էին ընդ առաջ արքունի սպասաւորաւ զի շրջեցին ընդ հայրապետին յիշխանութիւնս տաճկաց. մինչև յԵրուսաղէմ և այնպէս բերել մինչև ի քաղաքս Կոստանդինուպօլիս մեծաւ փառաւորութեամբ։

Հուր անկեալ ի մէջ գիշերի այրեաց զսուրբ Սարգիս եկեղեցին մեր բոլորովիմբ. և մնաց մերկ չորք պատք նորին.՝ և օր աւուր զայն ես քանդեալ երիցանց յուսալով ընդարձակ և լաւ շինել. սկսան մեր իշխանք և կարգաւորք խորհուրդ առնել և շինել առ Եղիազար վարդապետիւն, որ էր առաջնորդ և վերատեսուչ քաղաքիս. և անկեալ դնէաք ի ներքոյ ծանր պարտուց ՂՌ ղուշի, զոր արարեալ էր Արևելցի Դաւիթ եպիսկոպոսն ըսգենլով խաֆթան[28] յարքունուստ ԵՋ անգամ պարտիւք ծախս արարեալ ձգելով զպարտսն ի վերայ եկեղեցեացն, և այս ամենայն ոչ վասն Աստուծոյ և յօգուտ ազգին, այլ վասն անտեղի փառասիրութեան. քանզի որչափ աքսորէին զնա, նա ինքն այնքան փրծեալ յաքսորանացն եկեալ նստէր, մինչև զազգ մեր հասոյց յայս տառապեալ վիճակ։ Յաւուրս այսոսիկ եկեալ Եղիազար վարդապետ Բարձրահայեաց սուրբ Աստուածածնի քարոզէր ի ժողովուրդս զբան սուրբ աւետարա-

նին. և ժողովէր զպտուղ քարոզութեան իւրոյ դառնալ վերստին ի տեղի իւր. տեսեալ քաղաքացւոց զսա այր ճարտար և առատ բանիւք ի մի խորհուրդ եկեալ քանիցս անգամ եդին զնա առաջնորդ ինքեանց թերևս թեթևացուսցէ զպարտսն եկեղեցեաց. որ և արար իսկ։ Ի սոյն ժամանակի էր ենիչէր Աղասի ղարաչաւուշն ընդ որ ծանօթացաւ և եղև սիրելի ոչ սակաւ և ետ նմա դրամ և հանապազ կանխէր առ նա ի բազում աւուրս աստ անդ անկեալ հնարս հնարէր պարտուցն. և բազում դրամ շնորհ ետուր և սուլֆ[29] անել ետուր ընդ պարտատեարսն. և զմնացեալն գրեաց ի քաղաքացւոցն դրամ և սա դրեալ ուրոյն ուրուք յեկեղեցիսն ըստ իւրաքանչիւր կարողութեան ՌՆԾ ղուռուշէն մինչև ի ԺՆըն էառ յամենեցունց, և իջոյց մինչև ե ԻՆՌ ղուռշն զայն պարտսն խրատ և քարոզ ասելով պաղատելով և աղերսելով առ ժողովուրդն և զամենայն մնացեալսն ըստ չափու բաշխեաց եկեղեցոյն զի յեկեալ ախարեթնէրէն վճարեսցեն։

Եւ յետ բանիցս այսոցիկ սկսեալ զկարգ եկեղեցեացն որոնել և զայլ ազդիս զանհամութիւնն նկատել. քանզի նամակ և թուղթ ուղարկեաց յեկեղեցիսն թէ ով ոք յերիցանց յատենի սաղմոսերգութեանց կամ ի կարգեալ ժամակարգութենէ հեղգեալ ծուլասցի անազան յամր գալով կամ ղրաւելով ինքն քահանայն լուծցի և զամենայն քահանայական հասն նորա աթոռակալն տէրունի վայելեսցի. այսմ հրամանացս մտերմաբար կատարողքն օրհնեալք լիցին ի Քրիստոսէ։ Դարձեալ պատուէր և հրաման եթէ ով ոք որ ի քահանայից թէ զինչ պատճառի ևս ի մէյխանէ մտանէ, ինքն և իւրեան ծուխ լինող ժողովուրդն նզովեալ եղիցի։ Եւ թէ հանդիպեալ լինէր յերիցանց ոք հարկիւ շուլլուխի[30] եէնիչէրիքն զգենուին զկերպս իւրեանց որ զգենուին ի դէմ աղային ըստ օրինի իւրեանց և բերէին առ վարդապետն թէ գտաք զսա ի մէյխանան. և նա արգելէր զնոսա յեկեղեցւոյն զայս...։

ԺԱ. ԹՈՒՂԹ ՏԵԱՌՆ ՓԻԼԻՊՊՈՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ՊԱՊՆ ԻՆՆՈՑԷՆՍԻՈՍ

Որ յաղագս անիրաւութեան և չարութեան Նիկօղ եպիսկոպոսին, զոր անցուցանէր ընդ ազգս հայոց բնակելոյ ի քաղաքն Իլով, որոյ չարութեան արգասիքն յայտնի է լիապէս, ի վիպագրութենէ Առաքելոյ վարդապետի Դավրիժեցոյ. որում ոչինչ եղև փոյթ, զաղաչանս և զխնդրուածս հայրապետին որպէս գրեալքս ցուցանեն այլ ըստ անագորոյն, անողորմ և անգութ բարուցն իւրեանց, զոր ունին ունակացեալ յանձինս իւրեանց ազգն երկաբնակաց եպերեալ յոչինչ համարեցին, և մանաւանդ հակառակորդն զօրացուցին, առ չարութեան սրտից իւրեանց որոց տէր լիցի վրէժխնդիր։

Յոգնապատիւ և հռչակելի փառաւորութեամբ, յառաջելականդ ժամանեցելոյ նախագահութեան Տեառնդ սրբազանի. Իննօցէնսիոսի տասներորդի. բնակարանի ամենատեսչի հոգոյն. մեծանուն և թագաւորական Քաղաքիդ Հռոմայ. տիեզերական Հայրապետի. և բարձրագոյն Պապի. Ուր կայ վէմն հաւատոյ ի հանգստի։ Տեառն Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի նուաստ ծառայ Փիլիպպոս, որ և շնորհիւ նորին Կաթուղիկոս համօրէն ազգիս Արամեան, և պատրիարգ Վաղարշապատու. Լուսանկար և քրիստոսակառոյց սրբոյ աթոռոյ Էջմիածնի. Առաքեալ մատուցանեմ զաստուածապարգևն ողջոյն. զմիաբարն համբոյր, շաղկապ անքակ յարակցութեան, ի սէր սրբութեան ըստ տեառն պահանջման։ Հանդերձ եպիսկոպոսական, և վարդապետական դասուք, և ամենայն պաշտօնէիւք, տեառնավիճակ գնդի, որ յեկեղեցին հայկաղունեաց. Որում լիցի յարամնալ պարագայց ամօք և խաղաղաձիգ աւուրբք. յանմոտչելի գահոյզ հռոմայական. ի վեհափառ տէրութեան քում, առ ի պարծանս

համայն քրիստոնէից և ի հաստատութիւն աստուածային հաւատոց, և պատճառ բարձրութեան եղջեր եկեղեցւոյ Քրիստոսի, տէրունեան խաչիւ պսակեալ։ Արդ յուշ լիցի սրբութեան քում հայր հասարակաց։ Զի գլուխ պատուիրանին Քրիստոսի՝ զսէրն ուսաք գոլ ըստ առաքելոյ մեծի. և որոք ունի զսէրն՝ նա է պատուիրանին կատարօղ. որով և աշակերտ ճշմարտութեանն ճանաչի։ Եւ թէ այս այսպէս իցէ որպէս և է իսկ, ուրեմն պարտիմք անսխալաբար վարիլ նովաւ. զի աշակերտք ճշմարտութեանն լինիցիմք. և զի ծանիցիմք ի մարդկանէ այսուիկ որպէս և ասաց տէր մեր. աշակերտք նորա գոլ եթէ սիրիցեմք զմիմեանս։ Իսկ և զսահման սիրոյն առաջի մեր ես կացուցանէ առաքեալ ի թղթոջն որ առ Տիմոթէոս, ասելով. ի սուրբ սրտէ, և ի բարի խղճմտանաց և յանկեղծաւոր հաւատոյ սիրել զմիմեանս. Եւ ես, թէ զինչ ներգործութիւն ի սիրոյ անտի բերիցի յունօղն, յայլում վայրի ճառէ նոյն առաքեալ առ Կորնթացիոն։ Սէր երկայնամիտ է. քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ խնդրէ զիւրն, ոչ գրգռէ, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն. ամենայնի տանէ, ամենայնի համբերէ, ամենեւին յուսայ, և ի վաղճան ածէ զբանն՝ թէ սէր ոչ երբէք անկանի։ Արդ՝ հետևելով այսմ սիրոյ նախնիքն մեր՝ և հարքն երանելիք ջանային մշտնջենաւորաբար պահել. որպէս Գրիգորիոս լուսաւորիչն ընդ Սեղբեստրոսի երանելւոյ եցոյց զնշան սիրոյն. որոց բանքն կան առ մեզ մինչև ցայսօր։ Եւ այնու դաշամբք կային ազգք մեր որքան թագաւորութիւն մեր հաստատուն կայր, և ջանային անխզելի պահել զնոյնն. ոչ միայն առաջնորդք եկեղեցւոյ, այլ և իշխանք և հեծելազօրք փութային ոչ երբէք խոտորիլ ի նմանէ։ Ըստորում ի ժամանակս Արշակայ արքայի հայոց՝ Վասակ սպարապետ նորին ել ի կողմանս յունաց բազում զօրօք ասպատակել. և զօրքն յունաց հարեալ էին ի պատերազմի՝ ոչ կարացին զդէմ ունել. իսկ հռոմայեցիք ոչ կամեցան օգնել յունաց, վասն դաշանցն Կոստանդիանոսի որ ընդ Հայս եղեալ էր։ Եւ յայլում ժամանակի ումեմն իշխանի Վասակայ հայոց. մարտ յուզման հռոմայեցւոց զօրաց վասն քաղաքին Երուսաղէմի լեալ, և ձեռնտուութեամբ իշխանին Վասակայ՝ յաղթեցին թշնամեացն և յինքեանս գրաւեցին զԵրուսաղէմ։ Նմանապէս և բազում անգամ հռոմայեցւոց զօրքն օգնեալ են մեզ յաւուր նեղութեան մերում, յորժամ այլազգիք ի սահմանս մեր իջեալ՝ յաւար հարկանել զերկիրս զայս կամէին և ի նեղ ումեք արկանէին. յորոց օժանդակեալք՝ փրկեալ եղէաք ի հալածչաց անտի. և ի կայանս մեր անդորրացաք մեծաւ խաղաղութեամբ. որոց և շնորհակալութիւն յոյժ ունիմք և ի գիրս պատմութեանց մերոց արձանագրեալ պահի անջինջ յիշատակաւ։ Բայց քանզի՝ առ հաստատուն մնալոյ սիրոյ և միաբանութեան պահանջի զի երկրաւոր մերձաւորութիւն իմն լինիցի։ Նա և իշխանութիւն երկոցունց կողմանց որպէս զի բարեբարութեամբ որ առ միմեանս անքակ սիրոյ կապակցութեամբ մնասցէ։ Եւ ես նեղութիւն և անծկութիւն ուստեքէ մի լինիցի, զի միշտ յայնս պարապեսցեն՝ որովք սիրոյ կայծակն մի շիջցի, այլ փայլեսցի

օրըստօրէ։ Այլ վաղ ուրեմն տեղի տուեալ հեռացան այսոքիկ ի մէնջ։

Քանզի տեղեաւ յոյժ տարակացեալք եմք ի ձէնջ։ Եւ ի կողմանէ իշխանութեան՝ իսպառ պակասեալք և հասեալք ի վերջին թշուառութիւնն։ Եւ աղքատութեան միջի կապեալք որպէս յերկաթոջ ուստի և ոչ կարեմք բարերարք լինել ձեզ՝ զի փոխարէնն ի մեզ դարձուցի։ Իսկ և նեղութիւն թէ որքան ունիմք յամենայն կողմանէ՝ կարծեմ թէ լուեալ իցէք ի բազում երթևեկաց։ Եւ զի այսոքիկ պատճառք խափանականք պատեալ են զմեօք. որք և արգելօղք ներգործութեանց սիրոյ լինին։ Վասն այսորիկ և թուիմք ոչ ունել զսէր։ Այլ գրեթէ իբրև ընդ հարազատ եղբօր սէր ունիմք առաւել քան զառաւել, բայց զի ոչ կարեմք ներգործութեամբ ցուցանել զոր ունիմք զօրութեամբ, իսկ դուք որք ունիք յոյժ կարողութիւն անյաղթելի՝ ո՞յր աղագաւ անտես առնէք զմեզ. և ի սիրոյ անտի օտաբացուցանէք, իբրու ոտնահար աղքատի լինելով և ընդ վայր հարեցելոյ։ Ըստ այնմ թէ ատեցին բարեկամք զբարեկամս աղքատս. բարեկամք մեծատանց՝ բազումք։ Եւ ուստի՞ իցէ այս յայտ առիցէ ոք։ Աւանիկ անտուստ իսկ. զի այս չորեքտասան ամ է յորմէ հետէ յափշտակեալք եղեն եկեղեցիք ազգիս մերոյ յաշխարհին լէհայ որ ընդ իշխանութեամբ ձերով է, և ոչ կամին երբէք յինքեանս դարձուցանել։ Եւ այս՝ ոչ վասն այլ ինչ պատճառանաց յանցման նոցա. կամ անիրաւութեանց գործեցելոց ի նոցանէ. այլ յաղագս եպիսկոպոսի միոյ չարագործի՝ որ յարեաւ հակառակութեամբ ընդդէմ մեր, և նովիմբ ատելութեամբ եղև օգտող և պատառօղ վիճակելոց իւրոց, փոխանակ խնամելոյն։ Եւ զի նա եղև գլուխ չարեաց որ անցին ընդ նոսա, որպէս և յայտ է. իսկ ի ձէնջ և ոչ մի ինչ իրաւունք քննութեանց վասն այնր արկաւ ի գործ, և ոչ ի ներքոյ պարտաւորութեան եղիք զնա, այլ ներողութեամբ և երկայնմտութեամբ ձերով, յայնքան յանդգնութիւնս ժպրհեցաւ համարձակիլ նա՝ մինչև ոչ մնաց ի չարեաց ինչ, զոր ոչ գործեաց առ ողորմելի և տառապեալ ժողովուրդն մեր. վասն զի միոյ առն մեծարանս բարւոք համարեցայք քան զբազմացն, և զնա ճիշտ վարկայք քան զմեզ. իբր թէ առ ձեզ դիմեաց։ Որ ոչ վասն զճիշտն ճանաչելոյ և իմանալոյ զայն արար. և կամ սիրոյ աղագաւ առ ձեզ դիմեաց. այլ վասն ագահութեան ախտի և փառամոլութեան այնպէս ախորժեաց լինել։ Որպէս և յանդիման իսկ կացուցանեմ առաջի հզօր գիտութեան ձերոյ՝ ի բազում իրաց։ Նախ և առաջին՝ զի ոչ ինքնագլուխ յօժարութեամբ խորհեցաւ մերձենալ առ ձեզ, այլ ի հարկէ, այսինքն զի զարհամարհանս կրեալ ի մէնջ և խոտեալ ի ժողովրդենէ անտի, յաղագս այնորիկ և ակամայ կամօք իմն հնարեցաւ զայն առնել. զի մի անպիտան երևեսցի։ Իսկ ամենայն ինչ որ ի հարկէ է՝ ոչ է ի սիրոյ, ապա ուրեմն և ոչ դոբայն երևի սէր, այլ պատրանք։ Երկրորդ ոչ եթէ զի զհնազանդութենէ ինչ փոյթ էր նմա առ աթոռն Հռոմայ, և սակս այնորիկ իմացեալ զապերախտութիւն իւր՝ կամեցաւ յուղղութիւն դառնալ՝ խորշեալ ի թիւրութենէ. քանզի հնազանդութիւն է սուրբ Ջանօք ուրանալ զյատուկ կամս իւր. և դա ոչ եթէ ուրացաւ զկամս իւր յատուկ, այլ մեծաւ սի-

րով սիրեաց, առ ի բարձրագոյն պատիւ ժամանել ըստ մոլեկան աւեաի իւրում. իսկ ամենայն այսպիսի հնազանդութիւն ոչ է գովելի և կամ վարձաւորելի. ուրեմն և դորայն եղիցի անպիտան հնազանդութիւն: Երրորդ՝ ոչ ոք վասն բարեպաշտութեան ինչ, վնաս լիցի այլոց ոգւոց կամ մարմնոց. այլ դա պատճառ կորստեան բազմաց եղև. քանզի ամենեցուն յայտնի գոյ, եթէ որքան մանկտիք առանց մկրտութեան մնացեալք են ի ժողովրդենէ մերմէ որ ի լէհ. և որչափ մեռեալք անթաղք ընկեցեալք եղեն. և քանի՛ քրիստոնեայք զրկեալք եղեն ի հաղորդութենէ մարմնոյ և արեան տեառն, որով ունիմք յոյս փրկութեան. և որով ժառանգեմք զյաւիտենական կեանսն. ևս թէ քանի ժամանակս արտաքոյ գրտան յեկեղեցեաց իւրեանց՝ թարց աղօթից մնացեալք. և զուրկք եղեալք ի շնորհաց պատարագին և յայլոց խորհրդոց: Թողում զանչափ ընչիցն կորուստ, որ ոչ ի թիւ քանակի: Իսկ արեանց նոցա պարտական գոլով դա՝ յանցաւոր դատաստանի է. ապա ուրեմն ընդունայն է դարձումն դորա առ ձեզ: Չորրորդ անդամ ոչ ոք վասն երկիւղածութեան և կամ հաստատութեան օրինաց իմիք, շփոթումն և աղմուկ խռովութեան ձգիցէ ի մէջ ազգաց երկուց որք զմի Քրիստոս Աստուած պաշտիցեն, այլ դա թշնամի պատրաստեաց, զձեզ առ մեզ. և իւրով լեզուագարութեամբն՝ զինեաց ընդդէմ մեր զձեզ. և միշտ ի գրգռութիւնն բերի տակաւին ըստ բանսարկու բարուց իւրոց՝ առ ի յարուցանել զձեզ ի ցասումն ընդ ազգս մեր. որ է ընդդէմ առաքելոյ՝ զի ասէ մի՛ լինել եպիսկոպոսին յանդուգն, և մի՛ բանսարկու, և մի զօշաքաղ, այլովքն հանդերձ. ուրեմն վայրապար է ջան դորա զոր ցուցանել կամի առաջի երկիւղածութեան ձերոյ՝ զի որ ինչ առ ի յօգուտ իւր է: Հինգերորդ՝ ոչ ումեք եպիսկոպոսի պարտ է, զինչս և զստացուածս եկեղեցւոյ՝ օտարացուցանել: Որպէս և ասի իսկ ի դիրս դատաստանաց ձերոց, որ թարգմանեալ կայ առ մեզ, թէ ոչ կարէ եպիսկոպոսն զինչս եկեղեցւոյն օտարացուցանել, բայց թէ հարկն պահանջիցէ: Այսինքն՝ թէ եկեղեցին լինիցի պարտական փոխատուի, կամ ազատել զոք կամիցին ի գերութենէ, կամ ի գթութիւնս կարօտելոց և աղքատաց, ուր և դրեալ է իսկ՝ թէ Իննօսէնսիոս երրորդն պատուիրէ արհ եպիսկոպոսին Մօնթէռէի՝ թէ կալեալ զստացուածն որ են կարգեալ ի սպաս սեղանոյ քոյ և եկեղեցականաց քոց՝ ոչ պարտիս օտարացուցանել: Արդ՝ եթէ իւրում սեղանոյ կարգեալ զանօթն ոչ պարտի օտարացուցանել եպիսկոպոսին, որչափ առաւել ես աւրհնեալ սպասքն ոչ կարին վաճառիլ երբէք: Իսկ դա ոչ եթէ մասամբ ինչ օտարացոյց զանօթս և զկահս սրբութեան սպասուցն, այլ գրէթէ զամենայնն միանգամայն վաճառեաց և կորոյս. ի պէտս պոռտոյ և որովայնի ծախեալ ըստ անամօթ լրբութեան իւրում: Ապաքէն պատժապարտ մեծի դատաստանէ ըստ իրաւացի քննութեան, և փոխումն դորին առ ձեզ զուր և ընդունայն է: Քանզի այսքանեաց յանցաւորութեանց զտակ եղեալ է որպէս դա ճառեցաւ: Եւ որ սոյնպիսեաց դառնութեանց և դժնդակութեանց սկիզբն և առաջարկօղ եղև արդաբացուցանիցէք արդեօք, կամ զանց առնիցէ՞ք թերևս՝ քաւ լիցի ձեզ, որ ոչ վայելէ մեծութեան ձերում, և մանաւանդ ըստ քրիստոսի

անուանեալ ազգացդ, վասն զի այնր աղագաւ փոյթ եղև մեզ զայսոսիկ ճառել մի ըստ միոջէ. զի գիտիցէք զճշմարիտն. և զի վրէժխնդիր լինիցիք զրկելոց ժողովրդեան մերոյ ըստ անպարտելի իշխանութեան ձերում զոր ունիք ի տեառնէ։ Որպէս զի և մեք ծանիցուք դստուգապէս խնամ ձեր և զմարդասիրութիւն որ իցէ առ մեզ։ Քանզի գիտելով գիտեմ եթէ սոյնպէս ոչ են զեկուցեալ մեծութեան քում զեղեռնագործ եպիսկոպոսէն դայնմանէ, այլ զսորին ներհակն. այսինքն զբարեփառութենէ նորին և զհնազանդութենէ, որ հեռի է ի նըմանէ. այլ մեզ հաւատալ պարտիս, և ըստ այսմ օրինակի համարել որպէս ցուցաք համառօտիւ։ Եւ այս յաղագս այսորիկ լիցի։

Իսկ վասն դաւանութեան մերոյ զոր պահանջես առ ի ճանաչել եթէ իցէ ուղիղ։ Գիտութիւն լիցի խոհականութեան քում, զի մեք զհաւատն զայն զոր ընկալաք ի Քրիստոսէ՝ ի ձեռն առաքելոց և հայրապետաց աւանդեալ, և հաստատուն և անթերի ունիմք յազգս մեր մինչև ցայսօր ժամանակի, արձանագրեալ ի մատեանս սուրբս. ոչ ինչ հեռացեալք ի պատուիրանացն քրիստոսի ի մեծամեծաց մինչև ցփոքունս. և ոչ խոտորեալք յարքունական ճանապարհէ։ Վասն զի նզովեմք զչարաչար բաժանումն Նեստորի հերետիկոսի. և զշփոթաբար խառնակումն Եւտիքեայ չարափառի, և զայլ ամենայն հերձուածողաց դասս և զհամախոհս նոցին. և որք նոցա հաղորդին։ Քանզի իմանամք ըստ որում և հաւատամք, զՔրիստոս Աստուած կատարեալ և մարդ կատարեալ. համանգամայն աստուած և մարդ. ոչ փոփոխեալ յԱստուածութենէ ի լինելն մարդ. և ոչ յետ լինելոյն, ոչ շփոթումն ի միաւորութեանն, և ոչ ծախումն ի միմեանս. ոչ մասամբ հաղորդեալ. այլ բոլորաբար. անքակ միաւորութեամբ միացեալ. ի վեր քան զբան և զիմացումն մեր. վասն զի ամենայն որ է հաւատալի՝ ոչ է ի ներքոյ գիտութեան ենթանկելի։ Ծնեալ ի կուսէն անապական, և զկուսութիւն մօրն անխախտ պահեալ։ Կրեալ զամենայն կիրս մարդոյ, բաց ի մեղաց։ Նոյնն չարչարեալ և խաչեալ և մեռեալ, և նոյնն յարուցեալ նովին մարմնովն զոր էառ ի կուսէն. որպէս և կանոնք Նիկէական կարգաւ ուսուցանեն մեզ։ Եւ զի համառօտ կամիմ անցանել զամենայնիւ հետևեցելով այսմ ասացուածոյ։ Որ ինչ մի անգամ ճշմարտապէս դաւանութեանս մերոյ իցէ խորհուրդ՝ բաւականաբար զեկուսցէ ձեզ գիրքն Կիւրղի Աղէքսանդրացւոյ, որ յորջորջեալ կոչի պարապմանց գիրք։ Նա և Աթանասի երանելւոյ։ Որք և ընդ մեր խօսեցին նոքա. քանզի այնպիսի դիտաւորութեամբ վարիմք որպէս նոքայն. և ըստ այնմ խորհիմք զոր օրինակ նոքին։ Եւ այս չափս շատ լիցի գիտնոցդ։ Իսկ եթէ ոմանք ի մերոց աստի առ ձեզ եկեալ այլ ինչ խօսիցին որ չիցէ ըստ այսմ, մի հաւատայք նոցա. զի ոչ գիտեն զոր խօսին։ Եւ թէ ոք գայցէ այդր, և հերձուածօղս զմեզ անուանիցէ, մի՛ երբէք ընդունիցիք զայնպիսեաց բանս, զի վասն ագահութեան իւրեանց այնպէս ձևանան յաչս ձեր, և վկայեն սուտ զմէնջ. որպէս զի երևեսցին ճշմարիտք. և պատուիցին ի ձերոց այտի։ Այլ մեզ պարտիք հաւատալ քան նոցա. վասն զի զոր գիտեմք պատմեմք. և զոր հաւատամք յայտնեմք. և ըստ որում ունիմք, ոչ թագուցանեմք յումեքէ. այլ և այս բաւեսցի։ Եւ քանզի

անդամք եմք Քրիստոսի զանազանքս, հաստատեալք և շինեալք ի վերայ առաքելական դաւանութեանց։ Եթէ զմի Քրիստոս ունիմք գլուխ մեր՝ և զպատուիրանս նորա պահեմք. միաւորեալ յօգիմք զանազանքս ի նոյնն՝ ամենայն խաղալեօք և յօժիւք պատշաճեալք՝ ըստ առաքելոյ սրբոյ. Վասնորոյ և դուք մանաւանդ գոհանալ պարտիք զԱստուծոյ ամենակալէ. զի ի մէջ զՔրիստոս ոչ ճանաչողաց զանուն նորա բնակեալ եմք. և հաստատուն պահեմք զհաւատն մեր որ առ Աստուած, ոչ ինչ շեղեալք ի նմանէ։ Արդ՝ եթէ իցէ պարծանաց տեղի ինչ մեր՝ ձեզ և Քրիստոսի է համարեալ, և ձեզ զի հաւատակից եղբարք եմք միմեանց։ Իսկ Քրիստոսի՝ զի յաղագս անուան նորա կրեմք զհալածանս յանօրինաց անտի՝ ակնկալեալ յուսոյ արքայութեանն։ Ուստի և ըստ սաղմոսանուագին դոչեմք առ աստուած՝ ասելով. թէ վասն քո համբերէաք նախատանաց. և ծածկեաց ամօթ զերեսս մեր։ Քանզի բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յայն հանգիստն. և թէ որք կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ի Քրիստոս՝ ի հալածանս կացցեն, որպէս ասէ անօթն ընարութեան. ուրեմն փոխարէն այսր նեղութեանց՝ հանգիստ պարգեւեսցէ այնոցիկ որ համբերիցեն իսպառ։ Եւ այս ես սակս այսորիկ։ Ընդ որս և զայս յուշ առնեմք մեծութեան քում, զի որպէս կանխաւ ճառեցաք ղտառապելոց ոչխարաց մերոց որ ի լէհ կան ընդ ձերով իշխանութեամբ. զի հովիւ նոցա դայլ եղև և օցտեաց զնոսա. և փոխանակ զվէրս պատելոյ նոցա՝ ըստ օրինակի խնամողաց ինքնին վիրաւորող և պատառօղ երևեցաւ։ Յաղագս որոյ այցելութեամբ այց արասցես ողորմելացն, քանզի աւասիկ չորեքտասան ամօք ժամանակաց հետէ են ի դառնագոյն նեղութեան միջի, պարփակեալք զտարակուսանօք. ոչ յումեքէ անդորրութիւն դոյ նոցա. և ոչ ընդարձակութիւն կենաց. ոչ ոք օգնական գտաւ նոցա, և ոչ ոք ելս իրացն մարթացաւ գտանել։ Իրաւունք դատաստանի ոչ յումէք տուաւ նոցա, և դատ ոչ ոք աբար նոցա յոսոխէ իւրեանց չարէ։ Զորովք ոչ պարտիս անփոյթ առնել. քանզի յայնմանէ պահանջի այդպիսի իր՝ որ ունիցի առաւելաբար կարողութիւն առնելոյ ինչ կամ ոչ առնելոյ. ուստի աղաչեմ զի յիշելով յիշեսցես զչարիսն որ անցին ընդ տառապեալ ժողովուրդն մեր՝ յանագորոյն և յամբարտաւան եպիսկոպոսէ անտի։ Եւ գրեսցես անդառնալի հրամանաւ նամակ առ Թագաւորն Լէհայ. կնքեալ վճիռ՝ զի ընդ հասանել հրամանին, իսկոյն վաղվաղակի յատեան նստցի և արասցէ իրաւունս առ նոսա. դարձուցանելով զեկեղեցիսն ի նոսա, բաւական համարեալ զայնքան ժամանակաց նեղութիւնսն որ պատահեաց նոցա։ Եւ արասցես զի առանց պատժոց դատապարտութեան մի մնասցէ եռաթշուառեանն այն եպիսկոպոս, որպէս զի մի ոք իշխեսցէ ի նոյն ժպրհութիւնս յանդգնիլ ի զկնի եկելոց անտի. այլ օրինակ առեալ զնա՝ երկիցեն ամենեքեան, և ի խրատ զգուշութեան բնաւից լինիցի ով ոք լուիցէ. Եւ քեզ փոխարինութիւն բարեաց՝ յամենազօրէն Աստուծոյ հատուսցի ըստ բարերարութեան քում։ Այլ և զարմանամ իսկ եթէ ընգէ՞ր արդեօք այդպիսի դժնդակութիւն խարդախութեանց գործի այդր առ մերս, զի մեք թէպէտ նեղութիւն ինչ հարկապահանջութեան, կամ նախատինս կրիցեմք յայլազգեաց

ստոր, սակայն ի կողմանէ հաւատոյ, կամ եկեղեցւոյ սակս, ոչ երբէք տեսեալ եմք հակառակութիւն ինչ կամ կրեալ վիշտ. այլ ամենայն համարձակութեամբ պաշտեմք զհաւատս մեր, և յայտնութեամբ կատարեմք զամենայն խորհուրդ եկեղեցւոյ և զկարգաւորութիւն աղօթից՝ փառաւորեալ յաչս տըղայարարոյ ազգացս։

ԺԲ. ՄԱՆՐՈՒՆՔ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

1. Ամասիա գտնուած ձեռագիր երազահանից.

Գրիգոր Նարեկացւոյն ժամանակ, թուին ՆԾԲ 1003.

Սենեքարիմայ գալն ի Սեբաստիայ թուին ՆԿԷ 1018.

Թամուրին գալն ի Սեբաստիայ ի յամի ՊՂՋ[81] 1447.

Աւթմանցուն զԲուզանդիայ առնուլն, թուին ՋԲ 1453.

Ամիրպակին գալն, թուին ՋԽԱ 1492.

Շահ Դահման[82] մինչև յՆզըրնկան էրեց, թուական ՋՂԷ 1548.

Թագաւոր եղաւ ուղուն Մահմատն. ՌԽԴ 1595.

Ղարայ Եաղինճին այրեց զՍեբաստիայ. թուին ՌԾ 1601.

Եւ եղբայր նորա աւերեց զԹոխաթ. թուին ՌԾԱ 1602. Եւ այս ամի եկաւ Մուրատ փաշան ի Հալապ նստաւ. և Ճանփօլատին տղան փախուստ արաւ. թուին ՌԾԶ 1607։

2. Նոյն գրքի յիշատակարանից.

Արդ գրեցաւ գիրքս ի դուռն սուրբ Աստուածածնիս. ի դառն և ի նուրբ ժամանակիս. որ յայսմ ամի եկաւ Մուրատ փաշան ի Հալպայ ի վերայ, և ելաւ Ճանփոլատ օղլին. և շատ կռիւ և աղմուկք եղաւ։ Ցետոյ ամենազօրն Աստուած ողորմեցաւ և յաղթեցաւ ի Մուրատ փաշից, որ սարդար կոչի. և խիստ շատ ջարդումն արաւ. Աստուած զվերջն ի բարին կատարէ ամէն։

3. Սեբաստիա եղած մի ըժշկարանից.

Թուին ՌԼԹ 1590 էր Արզրում քաղաք այլազգի որդիքն ի պատիւ կոչեցին զքրիստոնեայք և ի մէկ գիշեր հինգ հոգի ջարդեցին. և մեծ սուգ եղև քաղաքին. քանզի զԹորգումու ձոբերն տիրեցին. և զամենայն վրաց տուն ընդ ձեռամբ տաճկաց արարին։

Թվին ՌԾԶ 1607 էր որ մեծ սովն եղև. և զմիմեանս կերան։ Թուին ՌՁԴ 1635 սուլթան Մուրատն զԾրևան էառ։ ՌՂԷ 1648 Ապազայ փաշան ջարդեցին։ ՌՃԷ 1658 Օսման փաշան ջարդեցին։

ԺԲ ԴԱՐ

ԺԳ. ԱՆՑՔ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Հաւաքումն պատմութեանց յաղագս պատշաճաւոր դիպուածոցն տանն Վասպուրականի և իւրոյ շրջակայ եղեալ դիւղօրէիցն, որոց պարտ վարկայ կարճաբան շարադրութեամբ ծրագրել և ի քարտիզի զեկուցանել ձեզ յապա եկելոցդ՝ զեղեալ պատահմունքն որք հանդիպեցան ի մերումս ժամանակի։



ՊԼԵ 1386 Լանկ Թամուրն ել ի վերայ Վանայ, և աւելի քան զերեք հազար մարդ կոտորեաց։

ՋՂԹ 1550 սուլթան Սիւլէյման էառ զՎան։

ՌԾԵ 1606 սաստիկ սով [illegible] եղև ի քաղաքն Վան և յԱրզրում. մինչ զի կապիճ կորեկն դահեկան մի եղև, յորոյ պատճառէ այնչափ մարդ մեռան որ թաղել ոչ կարէին. այլ վիհ մեծ փորէին, և զմեռեալսն սայլի բարձեալ տանէին և զամենեսեան ի ներս լնուին, և ղհողն ի վերայ կուտէին, յորոյ փրկեսցէ զմեզ Քրիստոս։

ՌՁԴ 1635 սուլթան Մուրատն եկն ի Վան և դարձաւ։

ՌՂ 1641 ի փետրվարի հնգին սաստիկ և ահագին շարժ եղև ի քաղաքն Թաւրէզ. և բազում ապարանք կործանեցան, և յոլով մարդիկ ի ներքև հողին մնացին։

ՌՂԷ 1648 յապրիլ 2, յաւուր ուրբաթի գիշերն՝ յոյժ ահագին շարժ եղև ի քաղաքն Վան, որ և կործանեցաւ մասն ինչ պարսպի քաղաքին. և բազում եկեղեցիք և մզկիթներ փլան. և անթիւ մարդիկ ի ներքոյ տանց մնացին. և Վարագայ եկեղեցիք փլան։

ՌՃ 1651 Պիղծն Զօմար Թալանեաց զՎարագ, և զսուրբ Նշան տարաւ ի Խօշապ. և յետ չորս տարոյ բերին զսուրբ Նշան ի քաղաքն Վան և եդին ի Տիրամայր եկեղեցին ձեռամբ Խօջայ Մարխասին։

ՌՃԸ 1659 սուրբ Վարդան եկեղեցին նորոգեցաւ ի Վան քաղաք ձեռամբ Խօջայ Ամիրին սրբատաշ քարամբք։

ՌՃԺԱ 1662 զՆայեայ Զալապին սպանեցին ի Վան։

ՌՃԺԸ 1669 եղև շարժ ի քաղաքն Վան և մնաս ինչ ոչ եղև, բայց ի յոտն

Վարագայ լեառն մի ռսանալ ի տեղւոջէն և թռուցեալ անկաւ ի ձորն. և արգելեաց զգետն, որ ի վերուստ անտի իջանէ. և կառեալ կապեցաւ ջուրն անդէն ժամս բազումս, մինչև ինքեան ընդ ինքեան ճանապարհ արար գնացից իւրոց. և խափանեցաւ ճանապարհ ջրոյն, որ ի գետոյն անտի ի վերուստ բաժանէր և գայր ի վանքն և վարէր զջրաղացն վանիցն, զի նովաւ կառավարիւր վանքն. և այլ ոչ գոյր հնար այլ ճանապարհաւ գալ ջրոյն այնորիկ. այլ անկեալ ընդ ձորն խառնեցաւ ի գետն և գնայր. վասնորոյ հանճարեղ խորհրդականն այն Յովհաննէս վարդապետն, որ ի ժամանակին այնմիկ էր առաջնորդ անուանի վանուցն Վարագայ, որոյ մականուն Թիւթիւնջի ասէին. սա լեալ էր պատրիարգ ի մեծ քաղաքն Բիւզանդիոյ և եկեալ աստ եղև առաջնորդ, և ի միասին տիրէր Սալնապատայ վանիցն ևս. այլ և տիրեաց Հոգւոց վանիցն ևս. և եղև կաթողիկոս Աղթամարայ. սա հնարեաց այլ իմն կերպիւ բերել զջուրն ջրաղացին ի վանքն. և զանշարժ լեառն և զանհուն վէմն ետ կտրել քարահատացն, որ և անդէն կատարեցաւ հրամանն. և կտրեցին զանբաւ արձանն աւելի քան զգիրկս տասն. այնպէս մինչ երկու մարդ մտեալ ի ներքս ի միասին գնան. և ձգեցին զջուրն ի ներս և բերին ի ջրաղացն. բայց զանտանելի նեղութիւն և զանբաւելի ծախսն, որ ի վերայ եղև ոչ գոյ թիւ և ոչ համար. և յետոյ այս վարդապետն եղև գլուխ ազգին փռանկաց և եկն ի վերայ Թուրքին. յորոյ աւուրսն էր վաքիլ Վարագայ խօճայ Փիրումն. և աւագ երէց տէր Մինասն. և վերակացու գործոյն Զմշկայ տէր Աւետիսն. որ եղև յետոյ արհի եպիսկոպոս և գործակալ սուրբ Էջմիածնայ. այլ զխարճն Ալթունեց խօճայ Մարխասն հոգաց։

ՌՃԻԴ 1675 եկն ի քաղաքն Վան Սարգիս վարդապետ[88] ոմն, որ էր ինքն արհի եպիսկոպոս և առաջնորդ Կիպրոս կղզոյն՝ որոյ ոչ գոյր ձախ ձեռն. այլ իբրև զքառասնօրեայ տղայի էր փոքրիկ. սա սկսաւ քարոզել և խօսել հերձուած. զի ասէր ոչ է պարտ քրիստոնէից կանանց ի ծնանել զտղայս պահել քառասունս. այլ այն Աստուածածնին միայն վայել էր պահել. որոյ չար համբաւ տարածեցաւ և լու եղև ընդ ամենայն աշխարհ, և ժողովեցան բազում վարդապետք, ընդ որս էր և Մակուեցի Իսահակ վարդապետն. և նորին աշակերտ Սարգիս վարդապետն կաֆայեցին. և Վարդան վարդապետն բաղիշեցին, և Մարտիրոս վարդապետն գազատացին. և Յովասափ վարդապետն ղափանցին՝ որ էր առաջնորդ քաղաքին. այլ և Թումայ վարդապետն գանձակեցին, և Վարդան վարդապետն գաւաշեցին, և Գրիգոր վարդապետն անարծաթն՝ որոյ մականունն բոբիկ ասէին. քանզի ոչ ճոխ և փառաւոր, այլ գծուծ կերպարանօք՝ ոտիւք ինքն միայն շրջէր յաշխարհի և քարոզէր. և յումեքէ ինչս ոչ առնոյր. և այլ ևս բազում աբեղայք և վարդապետք և կարգաւորք ժողովեցան և վարեցին զնա ի քաղաքէն։ Այս Սարգիս վարդապետս կիպրացի էր՝ յոյժ պահացող և առաքինի. և էր ի ներքոյ հանդերձին մազեղէն գլգլայս զգեցեալ ի վերայ մերկ մարմնոյն՝ որ էր բովանդակ բևեռս. և միշտ խոցոտէր զինքն. և բարակ պարան էր գօտի նորա, որ կապէր պինդ զմէջս իւր. և այնու տանջէր զինքն. բայց զանասելի բանս խօսեցաւ. սորա մականուն Զօլախ վարդապետ ասէին.

որոյ ձախ ձեռաց երկու մատն կայր փոքրիկ որպէս տղայի. և ոչ գոյր բազուկ այլ կապեալ էր ի թեն։

ՌՃԻԷ 1678 Բաքըր փաշան Վանայ յոյժ պատերազմեցաւ ընդ քաղաքացիսն և ոչ կարաց յաղթել. զի Ասլան աղան առեալ զզօրս իւր ե ելեալ ամրացաւ ի բերդն. ե ոչ յաղթեցաւ։ Այս Բաքըր փաշայս զխօջայ Ալխասն կախեաց ի փայտէ որոյ մականունն լէշկէր ասէին. և ոչ ետ հրաման թաղել զնա. այլ գազանք ե թռչունք կերան զմարմին նորա. այս Ալխաս բազում բարութիւնս արար հայոց, և բարի անուն եթող յետ իւր, որ և տէրն իւր ողորմեսցի։

ՌՃԻԸ 1679 Մուսլի փաշան Վանայ հրամայեաց հայոցն մորուսն թողուլ։ Ի սոյն թուին Կարապետ վարդապետն եղև առաջնորդ։ Յայսմ ամի անճոռնի և պարթև կաթողիկէն, որ ասի Իւչքիլիսայ, վերստին նորոգեցաւ ի յերկիրն Բագրևանդ՝ ձեռամբ Իսահակ վարդապետին, որ ի Լանկթամուրէն խանգարեալ կայր։

ՌՃԻԹ 1680 Ջանփօլատ օղլին զղայի լաճ Իսաղ աղան՝ և զՋաթաւ օղլին, և ներքինի մի խեղդեաց. սորա ջորին ծնաւ, որ և յետ սակաւ աւուրց և ինքն սատակեցաւ։ Սա հրամայեաց հայոցս զփակեղն առնուլ ի գլխոյն և գտակ դնել. այս Ջանփօլատ օղլիս զՍղգայ գեղի ժամատունն քակեաց, որ դեռ նոր էին շինեալ։ Ի սոյն թուին Յակոբ հայրապետ վախճանեցաւ յըՍտամպօլ, յորոյ աւուրս երևեցաւ յերկինս վարսաւոր աստղ մի յոյժ մեծ և ահագին. և երևեցաւ աւելի քան զքսան և հինգ օր։

ՌՃԼ 1681 քարախառն կարկուտ անկաւ յՍտամպօլն. որ մէկ հարիւր դրամ կշռեցին. և բազում վնաս եղև յՕրթայ քօյն. և էր յունիս 9։

Ի սոյն թուին ահագին շարժ եղև ի քաղաքն Երևան, մինչ զի անթիւ մարդիկ մեռան. որ և աւելի քան զկէս քաղաքին տապալեցաւ և ընկղմեցաւ։

ՌՃԼԱ 1682 ի ժամանակս Ալի փաշային Վանայ նորոգեցաւ սուրբ Յակոբ եկեղեցին ձեռամբ տէր Գրիգորին. սոյն Ալի փաշայս զՍտեփաննոս և զԳրիգորն կախեաց ի փայտէ անմեղ. յորոց վերայ լոյս ծագեցաւ։

Ի սոյն թուին կին մի ի քաղաքէն Վանայ Գայիանէ անուն ուրացաւ զՔրիստոս և տաճկացաւ. և ընդ իւր տարաւ զորդին և զդուստրն. և ինքն եղև առն միոյ թուրքի. սա յետ չորս ամի ծնաւ աքաղաղ մի ի տես և ի ցոյց ամենեցուն, այլ անփետուր։

Ի սոյն թուին Եղիազար կաթողիկոսն ելեալ յԵրուսաղէմայ եկն յէջմիածին։ Ահագին շարժ եղև ի Վան և ի Բաղէշ մայիս 19. բայց նախախնամութեամբն Աստուծոյ շինուած ինչ ոչ խախտեցաւ։

ՌՃԼԲ 1683 Օմար փաշան Վանայ զՄօշապայ պարոն զՄեզտին անուն խաբէութեամբ երեր առ ինքն, և սպան զնա. սա հրամայեաց պլիկ կտրել պղնծէ. և սահմանեաց զդրամն տողմայ զարնել։

Ի սոյն թուին համբաւ հանին թէ հաւու փորն օձ կայ. և այնքան զենեցին՝ որ ամենևին հաւ ոչ գտանիւր ի քաղաքն։

Ի սոյն թուին Վարդան վարդապետն և Իգնատիոս վարդապետն վախճանեցան ի բանտի ի քաղաքն Վան։ Մարդակերպ գայլ մի երևեցաւ որ ցերեկի շրջէր և բազում վնաս առնէր. և ընդդէմ մարդկանց պատերազմէր. ա-

սին թէ խօսէր ևս մարդապէս. և մարդիկ ոչ իշխէին միայն գնալ ՚յայգիսն՝ այլ միաբանէին երեք և չորս ապա գընային. մինչ զի և փաշան հրամայեաց զօրականացն սպանանել զնա և ոչ կարացին. և Սաֆարն սպան զնա։

ՌՃԼԳ 1684 Օմար փաշան ըմբռնեաց չորս մեծ աղայ ի Վանայ և էարկ ի զընտան. և պահեաց աւելի քան զերեք ամիս, և ՚յետոյ սպան զնոսա ի մայիս 8, Նալպանտ օղլի Ղատըր աղէն. և Շաթըր օղլի Իբրահիմ աղան։

Ի սոյն թուին հոկտեմբեր 17, ՚յերեկոյին եղև ՚յորդ անձրև սաստիկ ի գիւղն Արտամետ. և եղև զարմանք մեծ. զի շուրջ զգեզովն սաստիկ լոյս ծագեաց. մինչ զի գիշերն որպէս զցերեկ թուէր. և զի էր ժամանակ կալի, և ցորեանն որք ի թեղ և որք ի շեղջ ամենեքեան որպէս զրոց վառէին և ոչ այրէին. նոյնպէս և որք որք կային անդէն իւրաքանչիւր առ կալի իւրում, և եզինքն ամենեքեան որպէս զբոց վառէին և ոչ այրէին. և եթէ արքն այնոքիկ այսր և անդր ուրէք երթային և կամ ի տունս, և բոց զհետ նոցա երթայր. և այսպէս ՚յոտից մինչև ցգլուխ վառէին և ոչ այրէին. և այսպէս եկաց մինչև ի ժամս երիս և անյայտ եղև։

Ի սոյն թուին ի քաղաքն Վան, այր մի շինէր զտուն իւր, և ի փորել զերկիր ետես զի ելանէր սնդիկ ՚յերկրէ, որ և ժողովեալ ՚յամանս ինչ, և այս համբաւ լուր եղև ի քաղաքն ամենայն, մինչ զի փաշան և դատաւորն ևս գնացին ամենայն զօրօքն իւրեանց ի տեղին տեսանել զիրն. և զի էր երեկոյ հարին զվրան ի վերայ տեղոյն, և ձըգեցին ի վերայ նորա կապերտ և զչորս կողմն մատնեհարեցին. և թողին պահապանս անդ մինչև ՚յառաւօտն. և ի վաղիւն կրկին ևս գնացին անդ բոլոր քաղաքն ամենայն և փաշայն և դատաւորն փողօք և թմբկօք և բացեալ տեսին զի ոչինչ էր։

Ի սոյն թուին մահմետական տաճիկ մի ի քաղաքէն Ոստանայ, որ էր ինքն մօլայ եկն ի քաղաքն Վան. և գնացեալ առ Ղատին՝ ասաց թէ ես կամք ունիմ լինել քրիստոնեայ տամբ և ընտանեօք իմովք, քանզի ի տեսլեան յայտնեցաւ ինձ ակներև ստութիւն ձեր, և ճշմարտութիւն ազգի նոցին, և արդ դու զի՞նչ հրամայես վասն այս բանիս։ Եւ նա խոժոռեալ ընդ բանս նորին՝ հրամայեաց տանել զնա ի բերդն. և արգելուլ անդէն ի բազում աւուրս, զի սթափեսցի և զգաստասցի, քանզի կարծեաց թէ ՚յիմարեալ է. և պատուիրեաց ամենեցուն զի մի ՚յայտնեսցեն զհամբաւս այս քրիստոնէից. և թեթեւութիւն լիցի հաւատոյս մեր. և նա կացեալ անդ ի բերդին զաւուրս բազում և բնաւ ոչ շարժեցաւ ի հաւատոցս, ոչ երկեաւ ի նոցանէ, և ոչ փոխեաց զխօսս իւր, այլ զնոյն բանսն ՚յայտնի և համարձակ ասէր՝ թէ ես դառնամ ի հաւատոց ձերոց և լինիմ քրիստոնեայ. վասնորոյ ընկեցին զնա ՚յանբաւ բարձրութենէ բերդին ի վայր և նա եկաց կանգուն ի վերայ ոտից իւրոց կենդանի. ընդ որ հիացեալ տաճկացն և այրեցին զնա ի տեղոջն ՚յանմիկ. և ի գիշերին ՚յանմիկ լոյս էջ ի վերայ նորա. և տեսողաց տեսեալ փառս տային Աստուծոյ։

Ի սոյն թուին Ջաֆար փաշայն Վանայ զՄանսուրն և զորդին իւր, և զկոյր Վէյդաբն կախեաց ի փայտէ ի միում աւուր. որք աւելի քան դհաբիւր տուն գողութիւն էին արարեալ։

Այս Ջաֆարն առանց մուսալիմ դալու գնաց. սա ևս հրամայեաց պլիկ կտրել. բայց սորա մեծագոյն էր քան զՕմար փաշային. և սորա մին և նորա երկուսն անցանէր ի մեր ժամանակս։

ՌՃԼԴ 1685 նոյեմբեր 22 յաւուր կիրակէի յոյժ սաստիկ շարժ եղև ի քաղաքն Վան. և նախախնամութեամբն Աստուծոյ վնաս ինչ ոչ եղև։

Ի սոյն թուին Ալի փաշայն Վանայ հրամայեաց հայոցս, որ զքաղաքի շրջապատ խանդակն պեղեցին. որ և այնչափ սաստիկ էր հրամանն, որ ոչ ոք իշխէր արտաքոյ դրանն ելանել. զի զորս գտանէին սաստիկ պատժօք տանջէին. և յոյժ ճշտիւ տուգանէին. որ և յոյժ նեղացեալ քաղաքացիքն և շրջակայ գիւղականքն աւելի քան զտասն օր փորեցին, այնչափ մինչ որ յինքենէ ջուր ել. այլ և բերդն ևս բազում տեղիս սա ետ նորոգել. սա գնաց ի վերայ Բաղիշու և անդէն մանզուլ եղեալ այլ ոչ դարձաւ։

ՌՃԼԵ 1686 անուանի և մեծ վարդապետն Ներսէս՝ որոյ անարծաթ ասէին, այր հրաշագործ և յոյժ սքանչելի. քանզի ասէին եթէ գետոյ հանդիպի ոտիւք գնայ ի վերայ ջրոյն. և ծովու ևս. սա եկն ի քաղաքն Վան և անցեալ գնաց ի Սալամաստ և անդ վախճանեցաւ. սա ոչ առնոյր ինչս յումեքէ բնաւ և ոչ ինչ. ըստ հրամանի Փրկչին որ ասէ. մի ստանայք ոսկի, և մի արծաթ. այլ ձրի առէք և ձրի տուք. և այսպէս առաքելանման շրջէր ընդ ամենայն աշխարհ, և քարոզէր զբանն կենաց. և բազում նշանս և բժշկութիւնս առնէր։

ՌՃԼԶ 1687 յերկիրն Աղբակոյ եղև մեծ սքանչելիս ի սուրբ առաքեալն Բարդուղիմէոս. զի յարտաքոյ կողմանէ եկեղեցւոյն յարևելից կուսէ, տեսին զի հերձեալ էր քարն. և ի միջոյ պատառուածոյն կանաչ իմն բուսեալ և բերեալ կլօր մեծագոյն, մինչ զի տեսողաց հիացեալ փառս տային Աստուծոյ. և այս համբաւս տարածեցաւ ընդ ամենայն երկիր ընդ այն, մինչև եհաս ի պարոնն ևս. և ամենեքեան գային ի տեսանել. և եկեալ թուրք մի յազգէն Մարաց ի տեսանել, և մախացեալ ընդ բարի համբաւն՝ եհար նիզակաւ և ընկէց զնա յերկիր. և կոտորեաց և կամէր ուտել. և իսկոյն մոլեգնեալ կատաղեցաւ. մինչզի կապեալ եղև ի բարեկամաց իւրոց. և կամէին տանել զնա ի տուն իւր՝ որ և ոչ եհաս. այլ իբրև անցին ի վերայ պահս երկու կամ երեք, ի նոյն աւուր ի ճանապարհին սատակեցաւ և չեհաս ի տուն իւր. և զկլօրն այն բաժանեցին հիւանդաց մասն մասն. որք ընդ ուտելն առ ժամայն բժշկեցան. և ի տեղոյն յայնմանէ՝ ուր կլօրն էր բուսեալ զաւուրս երկու ջուր բղխեաց. որ և տեսողացն փառս տային Աստուծոյ։

Ի սոյն թուին, Ղայայլի Ղօզօղլի (Մահմատ) փաշան եկն ի Վան, որոյ ընդդէմ ելին քաղաքացիքն և պատերազմեցան ընդ նմա. և ոչ ետուն թոյլ մտանել ի քաղաքն. մինչզի թալանեցին ևս զինքն ի գիւղն Աւանց. և զկնի սակաւ աւուրց՝ դարձեալ գնացին ընդդէմ և մեծարանօք բերին ի քաղաքն. սա յետ երկրորդ գալստեանն իւրոյ հրամայեաց հայոցս զփակեղն առնուլ ի գլխոցն և գտակ դնել. որ եկաց այսպէս մինչև երեք ամիս. և ինքն շուտով մանզուլ եղև. զի խոնդքարն փոխեցաւ սուլթան Մահմատն. որ քառասուն տարի կալեալ էր զթագաւո-

րութիւն և վարէր զիշխանութիւն. սոյն ամի փոխեցաւ. և եղև եղբայր նորին սուլթան Սուլէյման։

Ի սոյն թուին ի գեօղն Արտամետ աւուր ձագն՝ որ գեռ ևս ելաւ ի հաւկթէն՝ իսկոյն կանգնեալ խօսեցաւ երեք անգամ. և այլքն ի մէջ ձուին էին և ձայն տային. և ի սոյն աւուրսն տղայ մի ի յարգանդի մօրն ելաց ի նոյն գեօղն. որոյ ձայն բազումք լուան։ Եւ դարձեալ կին մի ծնաւ չորս տղայս արու. որոյ երկոցունցն ոչ գոյր նստոյ տեղի, այլ միաբերթ էր, որք ընդ ծընանելն մեռան. և դարձեալ ի նոյն գեօղն ոչխար մի ծնաւ. և գառն էր առու և էգ ի միասին։

ՌՃԼԷ 1688 մեծ և անուանի Սուքիաս վարդապետն եկն ի քաղաքն Վան նուիրակ ի սուրբ Էջմիածնայ. սա էր աշակերտ մեծի և տիեզերալոյս հայրապետին տեառն Եղիազարի. և ինքն էր անհաս փիլիսոփայ. և հասակաւ կարճ. և յոյժ բանաստեղծ. և գիտակ դպրոց լատինացոց և տաճկաց. որ գրէր և ընթեռնոյր մինչզի զարմանային այլազգիքն ընդ ուսումն նորա։

ՌՃԼԸ 1689 ի ժամանակս գարնան խիստ տղայոց մահ եղև։

Ի սոյն թուին սեպտ. 3. զՋամուշօղլին սպանեաց փաշայն՝ որոյ անունն էր Հասան և այլք ընդ նմա։

ՌՃԼԹ 1690 Թումայ վարդապետն վախճանեցաւ, որ էր այր հրաշագործ, յորոյ սուրբ մարմնոյն վերայ էջ լոյս յերկնից։ Սա էր ի յերկրէն Վասպուրականի, ի գեղջէն որ ասի Գանձակ. և էր վերատեսուչ սուրբ առաքելոյն Թօմայի լուսընկալ սուրբ դամբարանին. զորոյ լոյսընկալ սուրբ մարմին ևս հանգուցին ի մէջ դարպասին։

Ի սոյն թուին եղև անհաշտ խռովութիւն և աղմուկ ի քաղաքն Բաղէշ ի մէջ վարդապետացն. որ լու եղև ընդ ամենայն կողմն տիեզերաց. և քաղաքն ամենայն երկուս բաժանեցան. և (Շարաֆ)խանն եղև ի կողմն Վարդան վարդապետին. և մասն ինչ քաղաքին ելին ի կողմանէ Մեսրովպ վարդապետին. և բազում և անասելի և անթիւ գանձս հաւաքեցաւ ի տունս աշխարհակալին այն. և ղկնի ելեալ գնացին յէջմիածին ի գանգատ առ կաթողիկոսն Եղիազար, և յետ բազում ինչս առնելոյ յերկուցն կողմանէ՝ զՄեսրօվպ վարդապետն օրհնեաց եպիսկոպոս և թագաւորեցոյց ի վերայ աշխարհին։

ՌՃԽ 1691 սուլտան Սիւլէյման առաքեաց վօյվօյտայ ի քաղաքն Վան, որ եկեալ ինքնին հրամանաւ թագաւորին հաւաքեաց զխարաջն ի հայոցս, և ոչ ետ թոյլ քաղաքի գլուն ձեռնահաս լինել, որպէս և էր սովորութիւն նոցին, որ զքաղաքի խարաջն ինքեանք հաւաքէին. այլ ինքն ժողովեաց մէկ մէկ ոսկի. որ է երկու ղուռուշ կէս. յորոյ աւուրս էր Տուրսուն փաշայն ի քաղաքս։

Դարձեալ ՌՃԽ 1691 թուին, յունվար ամսոյ 6, յաւուր. յայտնութեան տեառն զՇէկ Միրզայն և զՄարդանենց Ատոմն կախեցին ի քաղաքս Վան, յոր աւուրս էր փոքր Օմար փաշայն ի Վան. բայց դսոքա ղուլերն ետուն կախել. զի կարծեցին թէ զխարաջ նոքա սահմանեցին. որ յինքեանցն յետս նահանջեցին. և վայվօտայ բերին. քանզի Շէկ Միրզայն յՍտամպօլայ եկն. յորոց պատճառէ ոխացեալ սպանին զնոսա. որ և այս Օմար փաշայս յետ հինգ ամսոյ և ինքն մեռաւ աստէն. և արտաքոյ թագեցին։

Ի սոյն թուին, յամսեանն օգոս-

տոսի Եղիազար կաթողիկոսն վախճանեցաւ յէջմիածին. և եղև ի տեղի նորա կաթողիկոս աշակերտ նորին Նահապետ կաթողիկոսն. սա ի ՌՃԽԵ 1696 յունվար 6 դկարմիր Աւետիսն օրհնեաց կաթողիկոս Աղթամարայ՝ներհակ Թումայ կաթողիկոսին. և Թումայն զԱրծկեցի Սահակ պարոն տէրն օրհնեաց կաթողիկոս ընկեր իւր։

ՌՃԽԱ 1692 յապրիլ 13, ի յառաւօտէ աւուրն արեգակն նուաղեցաւ ի լուսոյն և դարձաւ ի գոյն կապարի. և մէգ պատեաց զերկիրն այնպէս, որ մարդիկ զմիմեանս ոչ տեսանէին ի մէջ ցերեկի. և մինչև ցերեկօյին կարմիր փոշի տեղաց յերկիր վասն մեղաց մերոց։

Ի սոյն ամի սաստիկ մահ եղև անդրանկաց։

Եւ դարձեալ ի սոյն ամի Իսմայիլ փաշայն տասն տասն խուրուշ խարաջ էառ։

Ի սոյն ամի հոկտեմբեր 27, յաւուր հինգշաբթի սաստիկ շարժ եղև ընդ երեկս երեք չորս անգամ։

ՌՃԽԲ 1693 հոկտ. 9 մայրս մեռաւ։

ՌՃԽԴ 1695 Գուրճի Մահմատ փաշայն եկն ի քաղաքն Վան. յօգոստոս 18. սա ետ պլիկ կտրել. և զտաբաղաճ շինեաց. և ի նոյեմբեր 20 մանզուլ եղաւ. սա երկու անգամ մախթուէառ ամենայն վանօրէից։

Ի սոյն թուին սուրբ Երուսաղէմայ նուիրակ Մխիթար վարդապետն ի քաղաքն եմուտ հինգ հոգւով։

Ի սոյն թուին մարտ 5. մահտեսի Շահպանդար խօճայ Սահակն մեռաւ ի Խօշապն և յետ վեց աւուր ապա բերեալ ի քաղաքն թաղեցին յաւուր տօնի սուրբ Լուսաւորչին։

ՌՃԽԵ 1696 յամսեան մայիս ահագին շարժ եղև յերկիրն Մակուայ, որ և սուրբ Աթոռն Թադէոսի խախտեալ բեկբեկեցաւ։

Ի սոյն թուին ի քաղաքն Բաղէշ, յունիս 10, սաստիկ շարժ եղև, և բազում մեծամեծ շինուածք, տունք և ապարանք կործանեցան և աւերեցան. և բազում անձինք մեռան։

Ի սոյն թուին փետրվար 8. Ջաթբաւիլ օղլի Ուսուֆ փաշայն եկն ի Վան։

ՌՃԽԶ 1697 մեծ պահոց առաջի երկուշաբթի Տուրսուն փաշայն ի Վան քաղաքն եմուտ. և ի մարտի աւուր 20, գարնանամտին սպան ի ղօրաց իւրոց ոգիս տասն. և այլք գաղտ փախեան. քանզի կարավան էին թալանեալ. և ի յայսմ փախստական զօրացն. այր ոմն մնաց ի Խօշապ առ պարոնն, որոյ անունն քուչուկ Մուստաֆայ աղէին. որ եղև այնքան անուանի զօրաւոր, մինչզի հռչակեալ համբաւեցաւ անունն նորա առ թագաւորն. որ և ի ՌՃԽԸ 1699 առաքեաց թագաւորն նմա խիլայս, և հրամայեալ զօրս ժողովել և գնալ ի վերայ Բասրայու, որ ելեալ գնաց բազում զօրօք և անդէն սպանաւ։

Ի սոյն թուին յառաջնաւորաց պահոց չորեքշաբթի, որ էր յունվար 27 Կարապետ վարդապետն վախճանեցաւ ի Վարագ. սա եկաց առաջնորդ զամս 17 և ի նոյն օր մեռաւ յորում ծնեալն էր։

Եւ քաղաքացիքն առաքեցին ի Բաղէշ և բերին զՍտեփաննոս վարդապետն. և ի մարտի 22 կարգեցին զնա առաջնորդ քաղաքիս Վանայ, որ եկաց 18 տարի։

Ի սոյն թուին զՎարագայ վաքիլ Խօջայ Խանամիրն և զՎարագայ տէր Մարգարայն ծեծեցին ղուլաղասիքն. և ամէն մէկին ԴՃ փայտ զարկին. և զԿարապետ վարդապետի ապրանքն խնդրէին։

Ի սոյն թուին սպահանցի Ստեփաննոս եկեալ յէջմիածին նոյեմբեր 2, եղև կաթողիկոս և աքսորեաց զՆահապետն. և դարձեալ ի սոյն թուին հաստատեցին կրկին ղՆահապետն և զՍտեփաննոսն ընկեցին։

Ի սոյն թուին հոգւոյ գալստեան երկուշաբթի Թումայ կաթողիկոսն Աղթամարայ էառ զՎան մայիս 23, յաւուրս Տուրսուն փաշային. և յաջորդ ամի ապրիլ 1 Թումայ կաթողիկոսն վախճանեցաւ։ Սոյն Թոմայ կաթողիկոսն զձեռնադրութիւն իւր առեալ էր յԵղիազար կաթողիկոսէն Էջմիածնայ։

Ի սոյն թուին Մարտիրոս վարդապետն նորոգեաց զՎարդիկ հօր եկեղեցին զանազան յօրինուածով. սա յաշակերտաց Բաղիշեցի Վարդան վարդապետին էր։

ՌՃԽԷ 1698 յամսեան փետրվարի Ստեփաննոս կաթողիկոսն վախճանեցաւ յԵրևան ի բանտի բաղում չարչարանօք, յորոյ վերայ լոյս էջ։

ՌՃԽԷ 1698 մարտ 12. սարի Օսման փաշայն եկն ի Վան, և յուլիս 4 գնաց. սա սպան զՍինան տաճիկն. զի և ինքն մի ենդիչարի սպանեալ էր։

Ի սոյն թուին յօգոստոս 21 Ալի փաշայն եկն ի քաղաքս Վան երկու որդւովքն։ Այս այն Ալի փաշայն է, որ յառաջագոյն ի ՌՃԼԴ 1685 թուին եկեալ էր ի քաղաքս, և զշրջապատ խանդակն ետուր պեղել. սա հոկտեմբեր 22 գնաց ի պատերազմ ի վերայ Մանծկերտու, և այրեաց բաղում գաւառս. ապա դարձաւ ի Վան. և սպան զՇաբանն, զՇատօն, և զմիւս այլ ոմն հայ կախեաց ի միում աւուր ի դեկտեմբեր 8։ Սա ղգաղտաղրան մօտի աղբիւրն, որ է մերձ չահիրին կամարակապ շինեաց յիշատակ իւր և գնաց ի Բասրայ։

Ի սոյն թուին յօգոստոս 2. Կայծակ Յովհաննէս վարդապետն եղև կաթողիկոս Աղթամարայ։

Ի սոյն թուին Թօխմախ բռէս Միբաքն զասնաֆի աւելորդ գլխահարկն դաւթարով սահմանեալ հաստատեաց, որ ամենայն ոք թէ ուսթաքար և թէ ռամիկ տացէ զխարաջն ըստ դիպման աւուր և ժամանակին։

ՌՃԽԸ 1699 ի մուտն յունվարի, մեծ և անուանի՝ արդար Իսահակ վարդապետն եկն ի Վան, որ էր այր ծերունի և յոյժ առաքինի. և ամենայն ներքին և արտաքին գիտութեամբ և փիլիսոփայական իմաստութեամբ զարդարեալ. և քաղաքացիքն յոյժ պատուով և փափագանօք ընդունեցին զնա իբրև զլուսաւորիչն Հայոցս. և յետ երեք ամսոյ մեծ պարգևօք առաքեցին զնա յԱթոռն իւր ի Թադէոս առաքելոյ վանս։

Ի սոյն թուին յաւուրս Ալի փաշային մարդագլուխ մէկ մէկ ռուպ խառաջի կտոր ժողովեցին. և միւս տարին այս ծեր Ալի փաշայս յունիս 22 գնաց ի վերայ Բասրայու երկու որդովք հրամանաւ թագաւորին. զի արապն պատեալ էր զնա շուրջանակի, և հասեալ ի Բաղդատ և անդ մեռաւ։

Ի սոյն թուին սեպտեմբեր 13 ի հասարակ օրն արեգակն խաւարեցաւ ի լուսոյն. և եկաց այնպէս ժամս երկու. և աստեղք երևեցան յերկինս, և Ջամուշ օղլի Խալիլ աղայն, որ էր յաւուրսն յայնոսիկ նստեալ ի տեղի փաշային՝ հրամայեաց և ի նոյն օր թափոր ելին հայ՝ և թուրք։ Եւ ի սոյն թուին սոյն Ջամուշչի Խալիլ աղայն և Նօհ աղայն առաքեցին ի Խօշաբ. և մեծարանօք կոչեցին զԻբրահիմ բէկն ի պատիւ. որ էր տէր երկրին այնորիկ. սա

որդի էր Շամզդին ղարոնին, որ սպանաւ յՕմար փաշայէն, ի ՌՃԼԲ 1683։

Ի սոյն թուին պապն Փռանկաց ընծայս առաքեաց հոգևոր տեառն մերոյ Նահապետ կաթողիկոսին. զարմանալի աթոռ մի, և պատուական դաւաղան մի, և լաւ խալիչայ մի. որք էին անտեսանելի յաչաց մարդկան. ե արժէին վեց քէսայ փող աւելի ե ոչ պակաս։

ՌՃԽԹ 1700 տէր Յուսկան որդւոյ եկեղեցին նորոգեցաւ ձեռամբ Կոփեցի Սարգիս վարդապետին ի Բերկրի։

Ի սոյն թուին յապրիլ 27, սարի Օսման փաշայն եկն ի Վան, ե յուլիս 15 գնաց ի վերայ Խիզնայ ե Ջեռնակայ. և անդէն մանզուլ եղև։

Յօգոստոս 10 ի յայս թիւս յԱստուածածնի բարեկենդանի շաբաթ օր, որ է Եփեսոսի ժողովն, մեր Վանայ իշխանքն ոչ թողին յեկեղեցիսն Ով հրաշալի ասել։

ՌՃԾ 1701 յաւուր տարեմտի հայոցս՝ որ էր Նաւասարդի 1 և սեպտեմբեր 27 հռոմայեցւոց, յաւուր ուրբաթու Իսմայիլ փաշայն եկն ի Վան, յոյժ զանազան փառօք երևելի և պատուական զարդուք։ Այս Իսմայիլս եկեալ էր ի վերայ Ջեռնակայ բերդին. և անտի ելեալ եկն ի քաղաքս ի նոյն կողմանց. և եկաց մինչև յունվար ամսոյ 10. և անդէն յուրբաթ գիշերի գաղտ ի քաղաքացեացն առեալ ընդ իւր զսակաւս ի զօրաց իւրոց՝ թողեալ աստ զորդին իւր և զինչսն և զայլ ամենայն զօրսն. և յերեկոյին ել ի քաղաքէն և փախստական գնաց մինչև ի Զօրս. որ և իմացեալ զօրս Մահմուտանայ եկին ի վերայ նորա և թալանեցին ի ճանապարհին. և զոմանս սպանին և զբազումս վիրաւորեցին. սակայն ինքն մազապուրծ անկեալ ի Զօրս զերծաւ։ Եւ զի սա յաղթեալ էր զԲաբայն յանցեալ ամին, այն որ ներհակ էր ընդդէմ պարսիցն, յորոյ պատճառէ եղեալ էր երախտաւոր պարսիցն, որք սիրով ընկալան զնա, և զի ապստամբեալ ևս եղև ի յիւր թագաւորէն և գնաց անդ, և արդ՝ թէպէտ յառաջ սիրով ընկալաւ զնա խանն Զօրսայ, բայց յետոյ խորհրդով պարոնին Խօշապայ կողոպտեալ մերկացոյց զնա յամենայն փառացն. և արար որպէս յետին աղքատս՝ ասելով թէ դու լրտես եկեալ ես յօսմանցւոց յերկիրս մեր, և կապանօքն առաքեաց զնա առ խանն Թաւրիզոյ. և նա ազդ արար շահին ի Սպահան, թէ այսպէս երևելի և անուանի ոմն եկեալ է ի մեզ. և զինչ որ դու հրամայես այնպէս առնեմք ընդ նմա. և նա հրամայեաց մնալ անդէն մինչև ինքն ազդ արասցէ թագաւորին՝ և ներում խնդրեսցէ որ և արար ինքն. և մինչ եկն դեսպան ի թագաւորէն տանել զնա փառօք՝ նա անդէն յաքսորս մեռեալ էր. ի մուտն ՌՃԾԲ 1703 թուին։ Սա լուաւ թէ ի թագաւորէն ֆարման ելեալ է իւրոյ գլխոյն. յորոյ պատճառէ քաղաքացիքն կալան զդատաւորն քաղաքին, և ի բերդն ձգեցին ի բանտի՝ զի նա ազդեալ էր փաշային զֆարմանն, որ եկաց ի բանտի, յունվարի 10-էն մինչև մարտ 20։

Ի սոյն թուին ապրիլ 24. ծեր Իսմայիլ փաշայն եկն ի Վան ի յԱրզրումայ. սա ազգական էր Իսմայիլ փաշային որ փախեալ էր, որ և աստ մեռաւ։

Ի սոյն թուին մարտ 7, որ էր մեծ պահոց առաջին ուրբաթն յերեկոյեան ժամուն. սաստիկ շարժ եղև ի քաղաքն Վան, բայց վնաս ոչ եղև, և դարձեալ ի նոյն գիշերն և ի կիրակի ցերեկն, ե

ըեք և չորս անգամ շարժ եղև. և հասեալ ի չորեքշաբթի առաւօտեան ժամուն սաստիկ և ահագին շարժ եղև. որ քաղաքն ամենայն ահաբեկ եղեալ սասանեցան, և հայ և թուրք ամենեքեան թողեալ զտունս ելին ի քաղաքէն ի դուրս. և անմարդաբնակ եղև քաղաքն ամենայն. և ելեալ ի դուրս կազմեցին վրանս և անդէն բնակեցան. և սակաւ ոմանք որք մնացին ի քաղաքն, յեկեղեցիսն գնացեալ ննջէին ստմբք և ընտանեօք. և հասեալ ի միւս շաբաթ օր, որ էր մարտի 15, դարձեալ ահագին շարժ եղև ի հասարակ աւուրն. յորմէ բազում տունք խախտեցան ի քաղաքն. և սակաւք բլան. մինչզի և միջին դուռն քաղաքին ևս խախտեցաւ. բայց վնաս ինչ ոչ եղև մարդոյ նախախնամութեամբն Աստուծոյ. և այսպէս եկաց յերերման իբրև զնաւ 'ի վերայ ջրոյ մինչև յօր գարնանոյ, և հասեալ ի նոյեմբեր 30 յաւուր կիւրակէի ի վեց ժամուն, սաստիկ և ահագին շարժ եղև և ոչ վնաս։

ՌՃԾԴ 1705 Նահապետ կաթողիկոսն մեռաւ. և ՌՃԾԶ 1707 թիւն սպանանցի Աղէքսանդր վարդապետ եղև կաթողիկոս Էջմիածնայ։

ՌՃՀԵ 1726. խիստ անդրանկամահ եղև յաշխարհի, և մանաւանդ թէ ի քաղաքս Վան։

Աղթամարի վերը յիշած Թօմայ կաթողիկոսի վերայ մի ուրիշ ժամանակակցի ծանօթութիւն

Այս Թումայ կաթողիկոս զսուրբ Աղբերկայ Դրիգոր վարդապետն կաթողիկոս արար իւր վիճակին. որ բնական կաթողիկոսարան չէր. ի ՌՃԼԴ 1685 թուին։ Եւ դարձեալ այս Թումայս, յետ մեռանելոյ Եղիազար կաթողիկոսին ի ՌՃԽԵ թուին, հակառակ եկաց Նահապետ կաթողիկոսին Էջմիածնայ. և կամէր դարձուցանել զՎան իւր թեմոյն. յորոյ պատճառէ բազում վնաս եհաս քաղաքին և եկեղեցւոյն, զի աւելի քան զերեք քէսայ փող խարջ եղև։

ԺԴ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԽԱԼՖԱՅԵԱՆ, ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ

ՀԲ 623 Արճէշն էառ Թուրքն. ըստ Սամուէլի. ՀԳ 625-ին։

ԾԺԳ 664 Արևեցաւ սուրբ Յաշն Վաբագայ ի ժամանակս Վարգ Պատրկին։

ՆԿԵ 1016 Սենեքերիմ թագաւորն Վասպուրականի ետ զՎան՝ ի Վասիլ Թագաւորն Յունաց, և էառ զՍուվազ փոխան նորա. և ինքն գնացեալ անդ հինգ որդւովքն։

ՈԿԲ 1213 մեռաւ Մխիթար վարդապետ մականուն Գօշ կոչեցեալ։

ՊԼԵ 1386 Լակթամուր եկն ի Թաւրէզ՝ ի Վան. աւերեաց զամենայն երկիրսն. և շատ գերի առեալ տարաւ ընդ ինքեան յերկիրն Սմրղանտայ. և անդ սատակեցաւ. ՊԾԵ 1406։

ՊՀԸ 1429 Ջհան շահն էառ զՇամշուլտոյ բերդն։

ՊՂ 1441 Լուսաւորչի աջն ի Սրսայ գողացան և բերին յէջմիածին։

ՋԲ 1453 սուլթան Մահմատն էառ զՍտամբօլ։

ՋՂԹ 1550 սուլթան Սիւլէյման էառ զՎան։

ՌԺ 1561 Շամիրամայ ջուրն բերին Վանայ այգիքն. չորս ամիս դատեցան. ութ հազար սարակ քաղաքէն գնաց. թող զգիւղօրէիցն։

ՌԻԹ 1580 մեծ և առաջին շահ Աբասն ի Մաշադ թաղթ նստաւ։

ՌԽ 1591 Քօռ օղլին, Դըլր օղլին, և այլ բազումք եղէն Ջալալիք։

ՌԾԳ 1604 Ջղալ օղլի սարդար Սինան փաշայն եկն ի Վան, և զնաց ի վերայ շահին։

ՌԾԵ 1606 երկրորդ անգամ եկն Ջղալ օղլին և կոտորեցաւ ի շահէն. և գնացեալ ի Ցամիթ սատակեցաւ։

Ի սոյն թուին մեծ սով անկաւ, որ շուն և կատու կերին, նաև մարդադայլքն երևեցան։

ՌԿԳ 1614 առաջին շահ Աբասն զէջմիածնի քարերն և զԼուսաւորչի սուրբ աջն տանել ետ ի յՍպահան։

ՌՀ 1621 յունվարի 12, ծովն ըՍտամբօլայ պաղեցաւ. որ մարդ շրջէր ի վերայ։

ՌՁԳ 1635 սուլթան Մուրատն եկն յԵրևան և ինն օր էառ զնա. եկն ի Թաւրէզ և անտի ի Վան, և ապա գնաց ի Ստամբօլ, և դարձեալ զկնի երից ամաց եկն ի վերայ Բաղդատայ, և յաւուրս երեսուն և ութ մեծաւ զօրութեամբ էառ զնա։

ՌՂԷ 1648 ապրիլ 2. աւագ ուրբաթու գիշերն սաստիկ շարժ եղև ի Վան քաղաքին, և շատ աւերութիւն եղև, և բազում մարդիկ մեռան։

ՌՃ 1651 անիծեալն Զօմար և Յօշա-

պայ պարոնն Թալանեցին Վարագայ վանքն. և սուրբ Նշան եւ գևրի տարան, զոր Մարխաս Ջալապին ազատեալ եբեր զնի չորս ամաց, և եդին յեկեղեցի Տիրամօրն։

ՌՃԻԷ 1678 Բաքըր փաշայն էր ի Վան. սա Խօճայ Ալխասն կախեաց՝ որ Լէշկեր ասէին, հետ կլուն շատ կռուան։

ՌՃԻԸ 1679 Մուսլի փաշէն էր ի Վան որ հրամայեաց հայոց մորուս թողուլ։

ՌՃԻԹ 1680 Ջան Փօլատ օղլին սա զհայի լաճ և զՋըթաւ օղլին խեղդեաց. հրամայեաց հայոց գօտիկ վեր առնուլ և գտակ գնել. սորա Ջորին ծընաւ. և ինքն ասա մեռաւ։

ՌՃԼ 1681 Նիշլի Ալի փաշէն էր ի Վան. քառախառն կարկուտ եկն ըՍտամբօլ. որ մէկ հարիւր դրամ կշռեցին։

ՌՃԼԱ 1682 Ջալանգլի Ալի փաշէն. ի սորա ժամանակն շինեցաւ սուրբ Ցակոբն։

ՌՃԼԲ 1683 Կօճայ Օմար փաշէն. Խօշապայ միր Շամզգին. ղնալբանդ օղլի Ղադը աղէն. և Շաթր օղլի Իբրահիմ աղէն սպանեց։ Ի սոյն Թուին դարձեալ մարդագայլն երևեցաւ։

ՌՃԼԴ 1685 Ճաֆար փաշէն. սա զգող Մանսուր և զկոյր Էդդարն կախեաց. և պլիկ եաուր։

ՌՃԼԵ 1686 խազնատար Ալի փաշայն էր ի Վան։

ՌՃԼԶ 1687 Կայայլի կօզօղլի Մահմատ փաշէն եկաւ. չի թողին քաղաքն. ելան Աւանց դէմ Թալանեցին. խաղք ու առակ յետ ջամխեցին։

ՌՃԼԸ 1689 Կաթր Հասան փաշէն. սա դՋամուշ Մահմատ աղէն՝ Շապան աղէն. և Ջաֆար աղէն տարաւ Արտամետն սպանեց. աղայոց մահն եղև շատ։

ՌՃԼԹ 1690 չոլախ ըստ ոմանց Թօփալ Օմար փաշէն եկաւ։

ՌՃԽ 1691 Տուրսուն Մահմատ փաշէն եկն ի Վան։

Ի սոյն Թուին, սուլթան Սիւլէյման առաքեաց Վայվատայ ի քաղաքս Վան, և Թղթով ժողովեաց ղխարաջն. ալայ՝ աւսատ՝ ատնայ։

ՌՃԽԱ 1692 Սօֆի կամ սարի Օմար փաշէն եկաւ վան. Մարդանենց Ասոճն և շէկ Միրզէն կախեց։

Ի սոյն Թուին. դարձեալ կօճայ Իսմայիլ փաշէն եկն ի Վան. սա խարաջն ինքն ժողովեաց։

ՌՃԽԲ 1693 Մուրթաղայ փաշէն եկն ի Վան. սա չաւուշ քահեայսին սպանեց։

ՌՃԽԴ 1695. գուռճի Մահմատ փաշէն եկն ի Վան. սա երկու անգամ մահթու էառ վանօրէից։

ՌՃԽԵ 1696 Զարաֆիլ օղլի ըստ ոմանց չալապլի Իւսիւֆ փաշայն եկն ի Վան։

ՌՃԽԶ 1697 տաֆայ Տուրսուն Մահմատ փաշէն եկաւ Վան։

ՌՃԽԷ 1698 տաֆայ ծերունի Ալի փաշէն. եկն ի Վան. ըստ ոմանց Իսմայիլ փաշէն սա գնաց վերայ Մանծկերտու Շատօն սպանեց։

ՌՃԽԸ 1699 Վանայ կուլ մարդագլուխ ԸՌՄ (դահեկանի մի չորրորդ) առեց հայուց։

ՌՃԽԹ 1700 Տաֆայ սարի կամ Սըրքայ Օմար փաշէն եկն ի Վան. գընաց վէր Խիզնայ մանզուլ եղաւ գնաց. Վանայ կուլ կրկին հայոց մարդագլուխ մէկ ղուռուշ խարաջի կոտոր ժողովեցին գաւթարով։

ՌՃԾ 1701 ծերունի Իբրահիմ փաշէն եկն ի Վան։ Ի սոյն Թ. ծերունի Իբրահիմ փաշէն ասա մեռաւ։

Ի սոյն թուին մարտի 7, մեծ պահոց սաստիկ շարժ եղև Վան, որք աւմենեքեան դուրս ելին ի քաղաքէն։

ՌՃԾԱ 1702 Կաբա կուլախ Մուստաֆայ փաշէն եկաւ Վան. սորա աւուրս Վան քաղաքի ոհաթ կարի նեղացեալ էին ի ռէս Թօխմախ Միրաքէն, գնացեալ օր մի գտուն կոխեցին, և նա մտեալ էր ի հաւու բոյնն փտռելով գտին, և չունեալ եղեալ յոտրս քաշելով մեռուցին, և այնպէս բերեալ արկին միջին դարդախն. փաշայն իմացաւ որ Խօճայ Ջանգուլն էր արեր. Արապկերցի Ջիման Ջալապին ի հետն էր. նա յղեց բերաւ տարաւ մօտ փաշայն. փաշայն Ջանգուլն խեղդել ետ, և զվեց հարիւր ղուռուշ բատակ էառ քաղաքիցն. թէ ձեր գլխու էսպէս բան անէք։

ՌՃԾԲ 1703 Ավտի փաշէն եկն ի Վան։

Ի սոյն թուին Գահիճենց Խօճայ Սաֆարն Ֆռանկստանայ եկն հարիւր քէսի մալ ունէր կուլ թալանեց։

ՌՃԾԳ 1704 յունիս 28. Տօռիճան Ահմատ փաշէն եկաւ Վան. սա Աւանուց սուրբ Յովհաննէս ժամտունն շինեաց. ասէին թէ հայու տղայ է. թագաւորէն գափուջի պաշի եկաւ տեղս գլուխ կտրեց։

Ի սոյն թուին Վարդան վարդապետ սուրբն Բաղիշեցի վախճանի։

ՌՃԾԴ 1705 գաւթարտար քօսայ Խալիլ փաշայն եկն ի Վան։

ՌՃԾԵ 1706 Մաղթուլ օղլի Ալի փաշայն. սորա աւուրս ռհաթն նեղացեալ ի հարկապահանջութենէ երկրով կամէին ըՍտամբօլ գնալ. ըխտիարներն եկին իբանտի մահուց յետ դարձուցին։

Ի սոյն թուին շիրէն հարիւր լիտր երեք ղուրուշի ծախվաւ։

ՌՃԾԶ 1707 շինեցաւ սուրբ Պետրոս Առաքելոյ եկեղեցին ձեռամբ տէր Իգնատիոսին։

ՌՃԾԷ 1708 Ջարքազ Մահմատ փաշէն եկն ի Վան։

ՌՃԿ 1711 օգոստոս 25. Ռաջապ փաշէն եկն ի Վան. սա սպան զԱլխան օղլի Հասան աղէն. շատ ասքարով մեծ թօփօվ գնաց վէր Խօշապայ բերդին, ի ճանապարհին, թալանեց գՆռնկայ բերդն՝ շատ գանձ առեց. զպարոնն փոխեաց, և ինքն մեծաւ փառօք դարձաւ ի Վան։

Ի սոյն թուին էին Վարագայ առաջնորդ Բարգուզիմէոս և Սահփաննոս վարդապետքն, և սուրբ Նշանն այսմ ամի հանին Տիրամայր.

ՌՃԿԱ 1712 Հասան փաշէն եկաւ ի սորա աւուրս Առճիշու դատաւորին երկու գոմէշք ջամուկ (երկուորեակ) ծընան. երկիրն Գաւաշու թուրքի մի, եբեք խոր ցորէն գարի տարեկան քար դարձաւ։

Ի սոյն թուին, դեղին սօլ ու մըխս հայու եսասղ արին։

ՌՃԿԲ 1713 վազիր քեահասի Աբրահման փաշէն եկն ի Վան. ի սորա ժամանակն նորոգեցաւ Կտցու սուրբ Կարապետի եկեղեցին։

ՌՃԿԳ 1714 Կօջայ Մուրթազայ փաշայն շարժ եղև Վան։ Եւ ի սոյն ձըմռան կարի շատ ձիւն եկաւ, և սաստիկ ձմեռն եղև որ պղնձէ գուգումք պատառեցան ի մէջ տանց. լուաք որ Արճէշ քաղաքն մէկ լիտր փթիրն ըռու եղև մէկ բարդ խոտ երեք ղուռուշ. մէկ կարար յարդն ղուռուշ կէս երկու խուրձ խոտ լաւ ոչխար մի տայեն. Աստուած ազատէ։

ՌՃԿԵ 1716 յունվարի 18 Բալլի բուղուք Մահմատ փաշայն, եկն ի Վան.

սա գնաց ի վերայ Մահմուտանայ սաֆար, և Ապաղու գեղօրայսն եղարկ, և զվեց հարիւր գերի երեր երեսուն հազար ոչխար. անթիւ ձի և ջորի, եզ, գոմէշ և կով երեր. և Ջամուշու Խալիլ աղան սպանեց. և ինքն մեծ Ջատկի խթման օրն սատկաւ։

Ի սոյն թուին օգոստոս 26. Դալի Հասան փաշէն հետ կլուն կռվան. կուլ ջարդեց եւ գարձոյց. ամէն եարալու վիրաւոր մերկ տկլոզ, քանզի քառասուն բայրագ լաւանգ ունէր։

ՌՃԿԶ 1717 յունվար 10. Զալապի Ուսուֆ փաշէն եկն Վան, մայիս 22. մանզուլ եղև գնաց. յուլիս 3. դարձեալ եկն ի քաղաքն։

ՌՃԿԷ 1718 քալաջի Մահմատ փաշէն եկն ի Վան. մեծ խռովութիւն եղև հետ Նօհ աղի լաճուն. և հետ Ալի աղին. շատ կռիւ արին. էլան բերդ թօփ զարկին. Նօհ աղի լաճ և Ալի աղէն փախան. Ալի աղի տուն այրեցին։

ՌՃԿԸ 1719 յունիս 17 եկն Քօրփլի օղլի Ավտուլայ փաշէն թաւթիշ[84]։ Քալաջի փաշէն եւ տեղս մանսուպ էր գնաց դէմ. փաշայն եկն յԱտնականց Ալի աղէն և Նօհ ողի լաճն սպանեց. եկաւ Աւանց և բերդն յանձնեց դիդտարին. և ինքն 15 օր նստաւ և ապա գնաց։

Ի սոյն թուին օգոստոս 30. եկն հաճի Ալի փաշայն. և սպան զՆամման աղի լաճ Ցասան աղէն. զՆամաթի լաճ Ալի աղէն. և միւս աղէքն երկեան յահէ. վասնորոյ Լօթոնց Ուսուֆ աղայն իւրով զօրօքն ել ի ներքին բերդն եհար վրան. կանգնեաց զբայրաղն մինչ ի լոյս մաշկալ վառէր. և թօփ ձգէր դէմ փաշային. Խալիլ աղայի լաճն և Նօհ աղայի լաճն որ փախած էին Ավտուլայ փաշայէն, եկին և ելին ի կողմն փաշային. 22 օր գիշեր կռվան. մինչի հինգ հարիւր թօփ աւել զարկին միմեանց. և ապա Խալիլ աղայի լաճն էառ ի փաշայէն յիսուն ընտիր մարդ. և նոքօք գնացեալ ի վերին բերդն՝ ի Քասուկէն իջեալ ներքին բերդն, մինչ Ուսուֆ աղայն և զօրք իւր անհոգ նըստեալ կային. սոքա առաւօտեան յանկարծակի հասին ի վերայ նոցա, հարին վիրաւորեցին և առին զինչս նոցա զամենայն. և կալեալ զգլխաւորսն նոցա զՈւսուֆ աղայն, զԻբրահիմ քահեայն, զՄուստաֆայ բակն, զՕսման աղայն և զԴուզանսզի երեք լաճն և զմեծամեծս նոցա զամենայն՝ զձեռսն կապեցին և այլքն ցրվեցան, և զկապեալսն առեալ տարան դէմ փաշային. նոյն ժամայն տասն և չորսն ի նոցանէ գլխատեաց, և տասն հոգի ի կաղուխն էղարկ Նօհ աղի կորն կանլի Մուսթաֆէն, Կարայ Ցասանըն, Փաչաջու Փշիկն և Նամաթի լաճն սպան. ի սոյն պատճառէն ծաղկազարդի կիրակին հաւքողի խօջայ Մաղաքէն կոր Ուսուֆն կախեց. Բայրամ քէհէն կանաչ դլօխ մօլէմ եւ դնել ի յէշ և շուկայն շուռ ածել դալալով. սա սարայի բակն մեծացուց, նոր դուռ մի եբաց. զոր Ալի փաշայի դուռ ասեն ի ծովակողմն. սա աւելի խարաջ մ'էառ ի հայոց, և թանբեհ արաց, որ թուրք օլան սիլահ, խանջալ, ձեռք չառնէ. և վասն խնդրոյ տէր Իգնատիոսին Պետրոս առաքելոյ գուռն մեծացուց չորս աստիճանաւ բարձր. յունվարի 20. մանզուլ եղև գնաց. միւս օրն մօլայքն ժողովեցան եկին Պետրոս առաքելոյ դուռն քակեցին. տէր Իգնատիոսն փախաւ. կալան հինգ մեծ իշխան ի քաղաքէն, և եղին ի բանտ եօթն օր. և հինգ քէսայ տուգանք առին եօթն եկեղեցեացն. և ապա հրամ ետուն առաջի փոքր դրան

շինելոյ· այս ամէն չարիքս Խալիլ աղայի լաճն գործեաց· և ինքն փախեաւ ըԱսամրօլ և անդ սպանին· և ձգեցին մարմին շանց կերակուր։

ՌՃՀ 1721 փետրվար 17· տաֆայ Ավտուլայ փաշայն եկն ի Վան· ի մայիս 27· գնաց վէր Խօշապայ բերդին։

Ի սոյն Թուին օսմանլու էառ ըզԹըֆլիս։

ՌՃՀԲ 1723· ապա հրաման եկն ի Թագաւորէն եկին Վան Ամասիոյ, Ուրհայու, Զանգուու փաշայքն և այլ բազում փաշայս իւրեանց զօրօքն առ Ավտուլայ փաշայն, որ եղև սարասքար և գնաց ի վերայ պարսից· և էառ ըզՀօյ, զՈրմի, զԵրեվան, զԹավրէզ, զԱրտաւիլ, զՀամաաան, զՄուզան և այլ բազում տեղիս, և որչափ գերի տարան և արիւն հեղին, և աւար առին Թիւ ոչ մտանէ· զի ոչ մնաց երկիր որ չորս հինգ հարիւր գերի ոչ տարան· և Ավտուլայ փաշայն ամենայն տեղիս փաշայ և զօրագլուխ եդ· և ինքն եկաց ի Թաւրէզ մինչի ՌՃՀԵ 1726 Թիւն։ Եւ ապա եկն Ալի փաշայն հրամանաւ Թագաւորին ի Թավրէզ· և Ավտուլայ փաշայն ոգոստոս 18· եկն ի Վան· և իւր որդի Աբդրահման փաշայն եդ ի տեղի իւր և ինքն սեպտեմբեր չորսին գնաց։

ՌՃՀԶ 1727 Աբգրահման փաշայն· սա ի մէջ սարային բաղնիս շինել ետ· և Աւանուց Տղմուտ տեղիքն իբրև հազար քայլ տեղ գօշամայ[3ա] արաց· քանզի մանուկ էր և գինասէր· ի ըՍտամբօլ տեսեալ էր· փոքր նաւեր շինել ետ· և փոքր Թօփեր ետ գնել ի մէջն· և ամէն երեկոյի սակաւ մարգով մըտանէր ի նաւն մաշկալով, դինով, սազով· գիշերն ողջ շրջէր ի վերայ ծովուն Թօփ ձգէր սատ և անդր· ուտելով և ըմբելով ուրախանայր և յաւօտն ելեալ գնայր յիւր սարայն· ի մարտի 18 մանգուլ եղև· և գնացեալ ի Տրապիզոն և անդ մեռաւ։

ՌՃՀԷ 1728 Բանլի Մուստաֆայ փաշայն եկն ի Վան։

ՌՃՀԸ 1729 Արարկերցի Մահմաա փաշայն, որ քալաջի ասէին· սորա աւուրս եկն վոյվաաայ ի Վան և խարաջ էառ։

ՌՃՀԹ 1730 Կարայ Մուստաֆայ փաշէն՝ որ Թաւրէզ սարասքար էր, փախաւ էկաւ մօտ չաուշպաշին· յապսարին յետոյ գնաց։

ՌՃՁ 1731 յարիֆի Մահմատ փաշէն եկաւ Վան։

ՌՃՁԱ 1732 մեծ Թամուր փաշայն եկն ի Վան· ապրիլ 3· աւագ երկուշաբթին, և միւս օրն ելաւ գնաց Արզրում· մայիս 6 դարձեալ եկն, և հասեալ ի քարափոսն չաուշպաշի Ավտուլայ աղայն սպան· Նօհ աղի լաճ, Ահմատ քեհէն և այլքն փախեան· և զօրքն փաշային զհետ մտեալ բազումք Թալանեցին· շատք վիրաւորեցին· և այնպէս ջարգելով եկն և եմուտ ի քաղաքն· և երեք դարգահն և գաղտան գուռն չանկալ և տարաղաջ շինեաց· ով որ դէմ տանէին ի չանկալն ձգել տայր, և ամենայն երկիր դողային ի յահէ նորա· և այսմ ամի գնաց ի վերայ Բաղիշու զխանն փոխեաց· երեք մեծ աղայ սպան, բազում գանձս էառ և եկն դարձեալ ի Վան։

Եւ ի ՌՃՁԲ 1733 գնաց ի վերայ Սալմաստու և կողոպտեաց զնա· էառ զՉիչագ երեք չորս հազար մարդ սուր քաշեց, և դարձեալ եկաւ ի Վան· եկաց աւուրս ինչ իմտատի սաֆարիայ ժողովեաց քան զվաթսուն քէսայ աւելի· ի մայիս 10ին ելաւ Վանայ և գնաց ի վերայ Թաւրիզու և էառ

գԹաւրէղ. և ղրաղումս պարսից աղղէն կոտորեաց, և դերի արաց. որ Թիւ ոչ գոյր։

Ի սոյն Թուին յունիս 10 օրին. եկն տոնամայ երեք օր երեք գիշեր վասն Բաղդատայ որ Թահմազ յետ դարձրին. և զօրաց պարսից ղրաղումս սպանին զօրքն Թօփալ Օսման փաշային։

Ի սոյն ամի եկին աղդ մի Թաթար, որ մարդակեր էին. գնացին Թաւրէզ մօտ Թամուր փաշային. և փաշայն ի ղնջիլ եղած աուրսաղներէն օրն 15 մարդ Թային տայր նոցա որք մորթէին և ուտէին։

Ի սոյն ամի դարձաւ փաշայն Թամուր ի Թաւրիզոյ և եկն ի Սալմաստ. իսկ Վանայ կուլն որք էին Թամուր աղայի լաճ Ահմատ բէկն. սէյիտ Խըրի լաճն, Ալի աղայի լաճ Օսման բէկն. և այլ բաղում մեծամեծ աղայք. խորհուրդ արարին Թէ փաշայն ոչ Թողումք որ քաղաքն մտանէ, և Վանայ մուսալիմ Ալի աղան իմացաւ. մարդ յղեց Սալմաստ մօտ փաշային. և նա մէկ օր Սալմաստու եկն ի Խօշապ. իսկ Վանայ հայն և տաճիկն յահէն ամենեքեան փախեան ի քաղաքն, և նորա շինած տարաղաջնին՝ չանկալնին ջարդեցին. և տարգահներն փակեցին. փաշէն երեք օր նստաւ ի Խօշապ Թէ րալքի գան դէմս. սակայն ոչ գնացին դէմն, ոչ առին և ոչ ծախեցին այլ գարգահներն հողեցին. և Թուագչիքն ի րադան լցին. իմացաւ փաշայն որ կռուել կամին, ելաւ ի Խօշապայ և եկն ի Ղուռուպաշ գիւղն, և դուրս եղած քրիստոնեայ ռայէն ամէն ղնացին ի մօտն. կուվահենային Թէ Թալնէ զինքեանս. և նա յուսադրեաց սսելով մի վահենաք. գնացէք ի ձեր տեղին և միամիտ նստարուք. յետ գնալոյ նոցին ինքն ևս հեծեալ անտի ղուռուպաշայ և եկն կենդանանից առաջոփն անց գնաց ծովու ափամբքն ի բերդի յետևն. ղի հետ ենդիչար Աղասուն բան եդեալ էին. ի գիշերին ել ի բերդն. և լցեալ զԹօփերն ձգեաց ի մէջ քաղաքին. ուր և կամէր ի վերայ աղայոց տանն. և անճար մնացեալ բացեալ զդուռն քաղաքին ամենեքեան փախեան. և ապա եկն փաշայն և նրստաւ ի տեղին իւր. և զէնգիչար Աղասին կալեալ սպանեաց վասն տալոյ բերդին ինքեան. յետոյ սարասքարն խնդրեաց կնա և գնաց անդ. և Առնաւուտ փաշայն կտրեաց զգլուխ նորա. ՌՃՁԴ 1735։

ՌՃՁԵ 1736 քուրդ Իբրահիմ փաշայն եկն ի Վան և սատ սատկաւ։

ՌՃՁԶ 1737 օգոստոս 25. Սէլիմ փաշայն եկն ի Վան. հետ կլուն կռվաւ. խիստ ռաղիլ դուրս արին. քաղաքէն ղնաց։

ՌՃՁԷ 1738 ապրիլ 7. մուսուլցի հաջի Յուսէն փաշէն եկն Վան. հետ կլուն կռուան ալչախ [36] ինգաւ. Օսման աղի Թղերն էկաւ որ չանք Թախումունէր՝ ետուր Օսման աղին ինքն ահ ու զարով գնաց Մուսուլ։

ՌՃՁԸ 1739 վանեցի Օսման աղայն եղև Վանայ փաշայ։ Ի սոյն Թուին շինեցաւ Հայկավանուց սուրբ Աստուածածին։ Եւ եկաց ի Վան Օսման փաշայն մինչի ՌՃՂ 1741-ին և ապա մանսուլ [37] ի Մուսուլ ետուն և անդ Յուսէն փաշայն զգլուխ նորա կտրեց ղի ֆէրմանչի էր. ասեն Թէ վասն շինման ներքին բերդին։

ՌՃՂ 1741. Ուչուջի օղլի Օմար փաշէն եկաւ. յետոյ Մուրթաղայ փաշայն եկաւ մուսալիմ սարխօշ Ալի փաշային. ապա եկաւ սարխօշ Ալի փա-

շայն երեք ամիս նստաւ և գնաց. Մուրթազայ և Օմար փաշայներն մնացին ի Վան. ռայէն շատ նեղացան յՕմար փաշայէն. լուսահոգի մեծ Ախիջան աղայն Ղարայսաֆարեան առեալ զՎանայ ռայէն և գնաց Արզրում ի դուռն Համալ օղլի սարասքէր վէզիրին. և կամէր ի դուռն թագաւորին գնալ. վասն որոյ առաքեաց ի դուռն թագաւորին և ծանոյց զարարս նորին. և գզալ ռայեային յԱրզրում. և բերեալ ֆէրման յղեաց Վան ի վերայ Մուրթազայ փաշային. և Մուրթազայ փաշայն եղբայրագիր դոլով նմա դժուարանայր առ այն. սակայն զթագաւորի հրամանն կատարեաց. աւուր մի ելան երկոքին փաշայքն ի բերդն վասն քաւշ [38] անելոյ. և անդ կամեցան սպանանել և չեղև հնար. իջեալ ի բերդէն եկին Թաւրիզու դռնովն. քանզի Մուրթազայ փաշայն ի Ջաւուշպաշոնց տունն իջեալ էր. և Օմար փաշայն ի սարայն հասեալ ի Թաւրիզոյ դրան փոքրիկ ճամոյ առաջին՝ Օմար փաշայն կամեցաւ Աղապ Աղաանց փողանն գնալ. սակայն ձին ոչ գնաց, այլ շահ կանգնեցաւ. վասն որոյ Մուրթազայ փաշայն Օմար փաշային հրաւիրեաց ի ճաշ ի տունն իւր. և նա յակամայ գնաց առ ի չգնալոյ երիվարին. զի երիցս շահ կանկնեցաւ, և յետ ուտելոյ ճաշին Աղուան ոմն հարեալ ահ ու վայ խանչարաւ պատճառ սէյր անելոյ խանչարին, և Մուրթազայ փաշայն չոքեալ ի վերայ սրտի նորա կարեաց զգլուխ նորին և առաքեաց յԱրզրում, և ապա եկն Ախիջան աղայն իւրայնովքն։

ՌՃՂԲ 1743 Արծկեցի Սիւլէյման փաշէն եկաւ Վան. մեծ թանկութիւն եղև. որ քիլայ ցորեն հարիւր ղուռուշ. ծախուաւ. լիտր ալուրն երեք ղուռուշ. ամէն բան սոցա նման։

ՌՃՂԳ 1744 Զարբինի իթ Օմար փաշէն տեղս եկաւ մանսուպ չկայր։

ՌՃՂԴ 1745 Թաղթայ սաղկալ Ցուսէն փաշէն. սա սպան զՇկակ մեծ Օմար աղէն։

Ի սոյն թուին Աստուածածնի պահոց Թահմազն եկաւ վէր Վանայ. մեծ կափանլղ [39] եղև. Աստուած ետուր յետ դարձաւ։

ՌՃՂԶ 1747 Զալիք փաշէն եկաւ երկու երեք ամիս եկաց գնաց։

Դարձեալ ի սոյն թուին եկաւ Ջաթաջի Ավտուլահ փաշայն. խօջէք շատ տուգանեց. Հայկավանուց թառմէն փլաւ երէց կօրհնէին անտի ևս տուգանս էառ։

ՌՃՂԷ 1748 Աինագ Մուստաֆայ փաշայն եկաւ Վան. և ի ՌՃՂԸ 1749 Կարայ Միրաքենց լալէն մեռաւ. չորս օրէն յետ մարմին գերեզմանէն հանին. գլուխ կտրեցին Ճաւշունենց դռնէն կախեցին։

Այսմ թուին, Գուշուկենց Սաֆարն կախեցին. որ Խօջեկանց Շարամիրի տուն կոխեց։

ՌՃՂԹ 1750 Զարթինի Օմար փաշէն տաֆայ [40] եկաւ Վան, որ դրամ կոտրեց. քառասուն փարայ արաց երեսուն երկու փարայ։

ՌՄ 1751 Ավտի Ջալալ օղլի հաճի Ցուսէն փաշէն եկաւ Վան. սա սպան զՆապի Հասան, ռէզի Լօլօնն. աղաբողներն շատ սպանեց. խօջէք բռնեց շատ դրամ առեց. հացն էլ շատ թանգ էր. կալին քսան ու հինգ ղուռուշ էր ցորէն, ալուր լիտր մինչ երկու ղուռուշ ծախվաւ. ուղարկեց մուսուլայ շատ հաց երեր, լիտր աբասիմ իջաւ. անիծեալ Արաս մօհթասըբ էր [41].

թէ ի՛նչ… էր կերաւ գրել չի գար։ ՌՄԲ 1753-ին թօփչու Մուստաֆայն արաց սարքալայ[42] լաւանդ հետ կլուն գնացին վէր հակարցուն. Թաթար խանըն էնպէս ջարդեց, որ ոչխարի պէս ամէն էլ թալանեց, որ յետք առէջք րաց եկին տեղս։

ՌՄԳ 1754 ղարսեցի կոր Ուսուֆ փաշէն հետ կլուն կուվան. մրաուցին սարէն. էլան մաչիթ բռնեցին թուաքի առջև. յղեց Խօշապայ մարդ իրեյ. ելան դէմ չի թողին, գիշերով գաղտ գոնէն ելաւ փախաւ։

Ի սոյն թուին Նաղիճի օղլի Արղրումայ Իբրահիմ փաշէն էկաւ տասն ու հինգ օր նստաւ չայիր էլ մի գնաց։

Ի սոյն թուին Շահսուվար օղլի Մուստաֆայ փաշէն եկն և գնաց։

ՌՄԳ 1755 մարտ 1. Գուրջի Հաճի փաշէն իրեյ եկն Նորովանց նստաւ. քաղաք չի թողին. Իսայ աղէն Ասքար աւեց դէմ գնաց կռվան շատ մարդ մեռաւ. դեղըրանք ղմէն փախան. ցանքեր կերուցին. յետոյ ենգիչար Աղասին ենգիչարօքն ղազանօքն առին Իսագ աղէն տարան մօտ փաշայն բարիշան. Մարմետ բաշխեց աղին. ինքն մաղուլ եղաւ գնաց. երեք հազար մարդ աւելի ունէր։

Ի սոյն թուին Սինագ Մուստաֆայ փաշայն եկաւ Վան Կօճայ Աբապն սպանեց։

Ի սոյն ամի համբարձման մահն անկաւ. օր հինգ ու տասն կու մեռանէր մինչի Վարդավառ. Աստուածածնին օրն 80 90. տաճկից հասաւ. 30. 40. հայուց. հասաւ մինչև աշուն ապա վերացաւ ողորմութեամբն Աստուծոյ։

Ի սոյն թուին, սուրբ Խաչի պահոց սուրբ Նշանն հանին երեք օր Տիրամայր եկեղեցին։

ՌՄԵ 1756 Ըռաջաբ փաշէն եկաւ Վան։

ՌՄԷ 1758 Տաֆայ Շահսուվար օղլի Մուստաֆայ փաշէն եկաւ. հաց շատ խիստ սուղ էր, ցորէն 40 ղուռուշ. հաց օղկէն եօթն փարայ, կորեկ ալուր լիտր քառասուն փարայ։

ՌՄԹ 1760 Աղայ փաշէն եկաւ Վան. Թօպաք օղլին քահեայ էր. շատ արաց որ աղէն սպանի. չի կարցաւ. աղէն մօտ չգնաց իսկի։ Այսմ ամի Գօրօյի Աղախան խազնէն եհան։

ՌՄԺ 1761 նոյեմբեր 12. Ֆէզուլահ փաշայն եկաւ։ ոհ եղկելոյս զի լուսահոգի եղբայրն իմ մեռաւ. սա սպան ղՍւտի Քարիմի լաճն ենգիչարի գոլով, ալթմիշ եղի օրթէն[43] կշել ետ ձմռան ձան վերէն։

Ի սոյն ամի մեռաւ Տուռզու կնիկն։

ՌՄԺԱ 1762 յունվար 15. աօնամայ[44] եղև եօթն օր, զի սօլթան Մուստաֆային տղայ եղև։

Ի սոյն թուին Զօպան աղէն Խօշապայ պարնի լաճ բռնեց. վանեցիք գնացին վէր Ապաղու սաֆար՝ աղղի քասիդ[45] թօփ տարան հետ. թօփ զարկողն Աւթանտիլն էր. Զօպան աղէն փախաւ բերդն առին։

Ի նոյն թուին ապրիլ 14. Ապաբանից սուրբ խաչն լոյս էջ ի վերայ գմբէթին բազում աւուրս և բազում ուխտաւորք դնացին անդ և տեսին։

Ի սոյն ամի եկն Քարիմ խանն ի վերայ սարդար Վաթալի խանին ի յՈրմի, և հսարեաց զնա տարի մը բոլոր, և ի հասանել կէս ձմռան ռայ եկաւ, ս էառ զՈրմի։

ՌՄԺԲ 1763 վախճանեցաւ շամախեցի Յակոբ կաթողիկոսն ապրիլ 14. Նստաւ Սիմէօն կաթողիկոսն։

Ի սոյն թուին շինեցան Արարուց

ժամատունն, Անկոյսներունն, Էջմիածնին, Ղուռուպաշայ եկեղեցին. սուրբ Պօղոս եկեղեցւոյ դուռն և տանիքն. և այլ բազում վանքեր։

Ի սոյն թուին սպանին յնրուսաղէմայ ճանապարհին չարուհչի Բորսեղն և երիցու Նազարն։

Ի սոյն թուին Սարի փաշայն եղև սարսաքէր. և գնաց ի վերայ Պաշի Աչուղին շատ ջարդուաւ. հինգ վեց մարգով անջախ փախաւ եկաւ Արզրում։

Ի սոյն թուին դեկտեմբեր 29. մանզուլ եղև այս Ֆէզուլահ փաշայս, և գնաց Առւվազ։

ՌՄԺԳ 1764 ապրիլ 1. Խասաքի քօռ Ահմատ փաշէն էկաւ. շատ ջանաց թէ Իսաղ աղէն սպանէ՝ չի կարացաւ. աղէն սարայն չէր երթայր՝ այլ փաշայն ամեն օր կերթայր աղենց այգին։

Ի սոյն թուին աղէն իւր տղին Մահմուտ աղտյին սունաթ թօյի[46] արաց, բայց խիստ զարմանալի թամաշէք կայր ի ֆշանկէն. այս թամաշայիս յետի գիշերն զարկին բարբար Յոհաննենց Աստուածատուրի լաճ Յոհաննէսն սպանեցին, յունիս 17. սեպտեմբեր 18 Ահմատ փաշէն գնաց Քիլիս։

Ի սոյն թուին, նոյեմբեր 15. Քոփրի օղլի Նաման փաշէն որ խուլ ասէին եկն ի Վան. շատ հարամ ունէր հետն. իւր երկու լաճուն սունաթ թօյի արաց. հետ նոցա երկու հարիւր տղայ աւելի սունաթեցին։

ՌՄԺԴ 1765 տէր Սահակն օրհնեցին սուրբ Վարդան։ Ի սոյն թուին մայիս 26. ես գնացի Օրտուվար։

Ի սոյն թուին եկին ի Մշոյ հինգ վեց հարիւր ձիաւորք. և բակղատայք. հանըմք. և խօջայք մէյթարխանայիւք. յաղագս Իսաղ աղայի աղջկան Ուսկուն ճանըմի շէրբաթ խմելոյ. հարիւր քսան թապաղ կու քաշէին, երկու երկու լաւ սարայ սար կումաշ քակած ձղած վերայ թապախին. այսպէս ջէրգայ սօլ աղասի Մահմատ աղենց դունէն բոլորան Թօփչոնց դռնէն դնացին աղէնց տուն. շատ լաւ թամաշայ եղև։

Ի սոյն թուին. Բինայ Էմինին սկըսաւ բերդ և բանտեր նորոգել։ Ի սոյն թուին, նոյ. 20. Ամիր Մուսաաֆայ փաշէն եկաւ։

ՌՄԺԵ 1766 մայիս 11 օրին. մեծ և ահագին շարժ եղև ի մայրաքաղաքն Ըստամբօլ. անթիւ տեղիք փլան և շատ մարդ մեռաւ։

Ի սոյն թուին յունիս 21. Մուստաֆայ փաշայ մանզուլ եղև և գնաց իւր երկիր։

Ի սոյն թուին Եաղջի օղլի Իբրահիմ փաշայն եկն ի Վան. և հոկտեմբեր 14 օրին աստ սատկեցաւ։

Ի սոյն օրս հոկտ. 14. լուսահոգի Ղարասաֆարեանց Սահակ աղայն մեռաւ։

Ի սոյն թուին մայիսին անձրև եկն Յակոփու կուռի չայն այնքան շատցաւ, որ եկն եմուտ Թարվիզու դուռն։

Ի սոյն թուին դեկտեմբեր 27 ին էր՝ որ Գրիգոր առաջնորդ սուրբ Նշանն Տիրամօրայ եհան տարաւ իդիր Էջմիածին. ի ժամանակս Իսաղ աղային. քանզի տեղս փաշայ չկայր. ձեռնտուութեամբ Պարիկ աղայի և՝ մղտեսի Թումայ աղային և քանզի Տիրամայր եկեղեցւոյ ժողովուրդքն ոչ կամէին, զվեց խօջայս ի նոցանէ ըմբռնեաց. և զվեց հարիւր ղուռուշ տուգանս էառ. յառաջագոյն Վարագ կամէր տանել, յետոյ Էջմիածին եդին։ Եւ որ ինչ կայ սուրբ նշանի հետն այս է. կենաց փայտն. բողէ խաչն. ինն մանր խաչ մասունքով, մարգարտէ ոսկի ղութի մի մա-

ռունքով. սուրբ Գէորգայ աջն. խաչ մի էլ մէջն. Զաքարիայ վարդապետի խաչն. Յօհաննէս աբեղայի խաչն. աէր Սարգսի սուրբ նշանն. երկու մասունքով ղութի. պստիկ ոսկի խաչ մը. արծաթէ դասլ մը. և մարգարտէ տօպբակ մը։

ՌՄԺԶ 1767 Աղկսկայու Հասան փաշէն եկաւ Վան։

ՌՄԺԷ 1768 քուրդ Օմար փաշէն եկաւ. խաղակներ հորդեցինք։ Մօսկոֆու սաֆար բացուաւ։

ՌՄԺԸ 1769 նոյեմբեր 6. Գրիգոր առաջնորդ մեռաւ։

Ի սոյն թուին օգոստոսի 15. Կայմաղ փաշայն եկն Վան։

Ի սոյն թուին դեկտեմբերի մէջ յետ մեռանելոյ Խալիլ աղային. Թամուր աղայն կամէր լինել սօլ աղասի. ոչ ետուն նմա. վասնորոյ անկաւ խռովութիւն ի մէջ իւրեանց. և սկսաւ կուլն դառնալ ի վերայ Թամուր աղային. միաբանեցան ընդ Օսման փաշայի տղային դաշինս եդին. յետոյ օր աւուր յաւեչան Շաթրր օղլի Իսմայիլ բէգն. և Էհսար աղասին. Աշուրի լաճն. Իսահանի Իբրահիմ բէգն, Իբրղի լաճերն, Սօղբաթ օղլին, և այլ անթիւ մարդիկ. ամէն եղէ ի կողմն Թամուր աղային և ղի տեղս փաշայ չկայր այնպէս սիլահով շուրջ կուգային խռրլ գռրլով. յաւուր միում վստահացեալ հարին փըշտօվ դկորն մուֆտին. որ հասրմ աֆանտի կասէին մեծ շուն էր. և սպանին ՚ի մէջ փողանին, և ապա սկսան կռվիլ ռամազան մինչ ի գլուխ. շուկայք դատարկեցին. և բոլորք փակեցին ի ահէ թալանելոյ. և մարդ ոչ կարէր դուրս ելանել ի յահէ գուլուլայից՝ որ այնչափ հարկանէին միմեանց. ըլահքի գիշեր յետ մաղրպին[47]. քանիցս անգամ էրիշ[48] արարին՝ ի վերայ միմեանց և ոչ կարացին. ռամազանին մինչ ի բայրամ կռիւ արարին, մինչև որ խապար եկաւ թէ դամաթ Յուսէն փաշէն Մուսուլայ կուգայ տեղս. յաւուր միում Էհսար աղասին՝ Թամուր աղայի խօսքով գնացեալ Էնգիչար աղասու հետն զրուցեցին. գիշերով Գամուր կափուն բացին վերի բերդն, ցածրի բերդն Կասապ օղլի Ուսուֆ աղայն էր բռներ. ըսկըսան երկու կողմանց և ի մաչիթացն և ի մաթարխներացն միմեանց հարկանել, երկու երեք հարիւր մաթարիս[49] աւելի կայր, կամէին թօփ ձգել ի վերայ Իսաղ աղայենց տան, բայց ոչ կարացին երկեան. քանզի Իսաղ աղայի թաթարն միշտ գնայր գայր աստ և անդր, և փաշայն ևս մօտեցաւ գալու։

ՌՄԺԹ 1770 յունիս 1. Գամաթ Յուսէն փաշայն եկաւ Արճէշ. ելան Թամուր աղան, և Օսման փաշի լաճն, երեք չորս էլ մօլայ մեծաղլուխ գնացին հասան բանտի մահուն. մօլէքն յղեցին մօտ փաշէն գանգատ վէր Իսաղ աղին. փաշէն նեղացաւ թէ ես կուզի քաղաքն էլ դուք ինչի՞ ելիք. մօլէքն վերուց երկուքի վիզն իզարկ, Նաֆասի մօլէն Ռասուլ աֆանտին խըկեց Աղթամար որ ճգնեն. աղէք կուլ լսան խէծան բերդան փախան Բայազիա. միւս օր Իսաղ աղէն իւր բօլուկիւն գնաց դէմ փաշին՝ խալաթ հագաւ. փաշէն առեց եկան քաղաքն. գիր օղօրկեց Բայազիդ թէ ձեզ ըռայի էկէք. էն վաղտ՝ որ մտաւ քաղաք Կարայ քէհէն, Ջաֆար բէկի լաճու վիզն իղարկ. Թաղթայ սաղկալի վիզն իղարկ. քան օրից յետ Թամուր աղէն՝ միւս աղաների հետ կուլն ամէն, եօթն ութ հարիւր ձիաւորով եկան լցուան Էգէոտար[50]. Գօրգօենց

Թաղ, Աշուրենց Թաղ. Ցասան բաղենց Թաղ. բիրդան մաթարխ բռնեցին. Կարայ քէհէն Իսաղ աղէն գնացին. երեք Թօփ տարան հետ կլոր տար բռնեցին. քառսուն յիսուն Թօփ աւելի զարկին տներաց. վերջ կուլ տեսաւ չի եղներ, մէկ մէկ մեծեր ասնմիշ[51] եղան. կուլ որ վէր Թամուր աղին էր՝ զմէն փախան Յացին երեք ֆէրմանլի տղայքն. անճար Յացեալ իւրեանքն էլ փախան, Օսման փաշայի լաճն գնաց ի Բաղգատ Թամուր աղէն և Շաթըր օղլին Ամետի:

ՌՄԻ 1771 յունվար 17. սուրբ Սարգսի պահոց երկուշաբթի Իսաղ աղէն մեռաւ հազար ափսոս:

Ի սոյն Թուին մայիս 5. Թամուր փաշէն. Օսման փաշի լաճն եկին Վան. Օսման փաշի լաճն ելաւ սաղաղասի. Շաթըր օղլին ազապ աղասի:

Ի սոյն Թուին. Կայմաղ փաշէն Թուղ ոչ ունէր. ի սորա աւուրս մուֆթու Թոռ ձեռ իսկեցին. երկրով գնացինք հայ տաճիկ Մաղազաճի օղլոնց իգին, ծառեր կտրեցին լամուկ փախաւ:

ՌՄԻԱ 1772 մայիս 15 Վանայ կուլն երկու խարաջ առին հայոց, կէս ղշ. էլ խարամ խարաջ:

Ի սոյն Թուին սեպտեմբեր 1. սիլախտար Խալիլ փաշէն եկաւ Վան: Թամուր աղէն էլաւ սաղաղասի, քէհէն և կուլ գնացին վէր Նարեկայ. Սէյիտ աղի լաճ ռայ եկաւ բերդ քակեցին:

ՌՄԻԲ 1773 Խալիլ փաշայն գնաց Արծկու Մուրատ բէգին վրայ:

ՌՄԻԳ 1774 Մալաղ Ահմատ փաշան եկաւ Վան:

Ի սոյն Թ. Թամուր փաշայն Թուղ առեց եկաւ Վան. որ գնայր քարքուտ մանսուպ: Ի սոյն Թ. Ահմատ բէկն ելաւ սաղ աղասի. Օսման փաշայի տղայն բայրաղ չէր տայր. կուլ տօնադ էր փլաւ կերցնելով, հալաթ տալով, ղօռօվ բայրաղ բերել ետուր:

ՌՄԻԴ 1775 օգոստոս 21. Վանեցի Թամուր փաշայն եկն Վան մանսուպ. սկսաւ ողորմութիւն հաւաքել տաճկաց. սա սպան ղՏաւուտ աղի լաճ Օսման աղէն. և զԱօղբաթ օղլին:

ՌՄԻԵ 1776 Ահմատ բաղ կափուչի պաշին գնաց Ըստամբօլ: Ի սոյն Թիւն եկաւ 120 քէսայ միրի խազնայ Թամուր փաշային: Սեպտեմբեր 8 օրին Ախիջան աղէն գնաց Ըստամբօլ Աստուած բանն յաջողէ:

ՌՄԻԶ 1777 սեպտեմբեր 1. Ախիջան աղէն եկաւ Ըստամբօլայ. Թօփչոնց ռասուլ կախեց փաշայն:

ՌՄԻԷ 1778 մայիս 28. այս Թամուր փաշայս մեծ սաֆար արաւ վէր Բաղիշու, ուր հետն ունէր և Մաղսուտ փաշայն Մշոյ. և գնաց անդ նստաւ աւուրս 17. երկիրն ամեն ռայ եկին. Աբութ բէկն որ ի մէջ բերդին էր 23 քէսայ ըստակ տուաւ. ապա գաղտ ի բերդէն փախաւ. և կալեալ ութ մեծամեծացն զէնջիլով ի Մուշն առաքեաց. և զերկուսն սպան և առեալ հարկս բազումս և մեծաւ յաղթութեամբ և փառօք եմուտ ի Վան: Այս Թամուր փաշայս գչափն՝ կշռի քարերն, բազրգի գազերն, ախթարների քարերն ամէն գամկալամիշ[52] արաց:

Ի սոյն Թուին նոյեմբեր ամսոյն գնաց Աղքակու նստած էլն իգարկ. երեք չորս հազար ոչխար իրեր. էկաւ տեղս Ջպուխսարան Օսման աֆանտին խեղդեց. սորա կին երեք էլ ուրիշ տաճկի կնիկ իդիր կայմին քշեց. Ղարայ Սաֆար օղլու մորուսն կնդել ետ. որ սարի մէլիք էր:

Ի սոյն Թուին դեկտեմբեր ամսին

այս Թամուր փաշայս Մխիթարենց Բաբանիկն Ապով. որ գիշեր կոր Կաղկէ տուն բանեցին. եօթն անուանի կնիկ դնել ետուր կամին կշեց. որ են այսոքիկ. Կոր Կաղկէ աղջիկն. Գուլխնչու Եղիսէն. Խանթումանն. քաչալ աղջիկն. Ստայպաշու կնիկն. Կաղանչու կնիկն. Նորշէնցի կնիկն սերսուփներ։

ՌՄԻԸ 1779 յունվար ամսին Վանայ ծովն պաղեցաւ եօթ շաբաթ. որ փաշայի մանգիլքն ի վերայ ծովուն գային և գնային ի յԱրճէշ։ Ցայսմ ամի Ըստամբօլայ ծովն որ ասի Բօղազինչի պաղեցաւ. զի կարի ցուրտ եղև, որ ի Ըստամբօլ՝ Զգիրայ. և Բաղդաա մեծամեծ ձիւնք եկին՝ որ այլ տարիք չէր եղեր։ Ի սոյն թուին Քարիմ խանն սատկեցաւ. սարդարի լաճն Ապահան սպանեցին։ յուլիս 13-ին. այս Թամուր փաշայս գնաց վերայ Զուլամերկու Աւտալ բագին. 25 քեսայ բստակ ետուր լաճն յղեց մօտ երեսուն աւուր վերայ. յետ դարձաւ եկաւ քաղաքն։

Նոյեմբեր 15. այս Թամուր փաշայս ի մէջ գիշերին քաչալ աղջիկն և իւր էրիկն դէմ մէկմէկու կախեաց, և դալի Իբրահիմի լաճն ի մէջ սարային փարալամիշ արաց. և նորա տուն և Սէլիմ աֆանտու լաճու տունն այրել ետ։ Ի սոյն ամսի Զրբաշէնց Ցակոբն զՀայֆաճի Սարդսի աղբէրն դանակով սպան. շատ ջաւիմայ աւին ինմանէ։

Ի սոյն թուին յուլիս 6-ին. արքայն Վրաց Հերակլ եկն ի վերայ Երևանայ քաղաքին քառասուն հազար զօրօք և շատ աւերութիւն արար. երկիրն բոլոր քանդեաց և այրեաց, վերջ հարիւր յիսուն գեօղ քշեալ տարաւ, երեսուն հազար ոչխ. և հարիւր հազար տավարս համարով. որ տասանորդն իւր էր տասն հազար տավար. և ինքն յանկարծ ի մարդկանէ վերացեալ գնաց Թիֆլիզ։

Ի սոյն թուին, դեկտեմբեր 27. որ էր օրն ուրբաթ ահագին շարժ եղև ի քաղաքն Թաւրիզ. որ բոլոր քաղաքն ամէն տապալեցաւ, և անթիւ մարդիկ մեռան. և ի ներքոյ հողին մնացին. որ ականատեսքն ասացին թէ ահագին քաղաքն իբրև բնական բլուր մի եղև. որ ամենևին քաղաքի նշմարանք ոչ երևէին. նաև շրջակայ կասաբայք նորին և գիւղօրայքն՝ Գունայի. Թասու. Սալմաստ. Խօյ. Ցորմի. և ի քաղաքս մեր Վան ևս շարժեցաւ քանիցս անգամ. բայց ողորմութեամբն Աստուծոյ ոչինչ վնաս եղև։

Ի սոյն թուին Սամարճի Աբրահամու տղայ Շահէն, որ նոր փեսայ էր, և Արզրում կերթար գայր. սա քանի բեռ պարութ առեր էր, որ վերոյիշեալ քաղաք տանէր. յանկարծակի մէկ բեռ ալշմիշ[63] եղև մէկ լիք կարաս պարութի հետ. Աստուած նշանց չիտայ մարդոյ. շատ զիան ետուր ուրենցն էլ՝ երկրին էլ. զի ական թօթափելն բոլոր տունն քանի ղրկեցի տնօվ դաշտ եղև։ և հինդ հոդի մնացին ներքոյ հողին. և բաղում ինչք ու ապրանք ցիրուցան եղէն ի ներքոյ հողին և այլ տեղիս. լուաք թէ գերան մի ձգեալ էր ի տաճկաց գոռերն. և խախտեալ տանց՝ դըրանց՝ և փէնճէրայից. և այլ իրաց ոչ ոք կարէ գրով ասել. մինչ զի Իսկալայ դուռն և ի Թարվիզու դուռն և շրրջակայ մահլաքն բոլոր քաղաթլամաքն[64] և ջամերքն և երդոց չարչիվաքն ամէն վար թափեցան. և նոյն պահն երկրի մերձաւորքն և սաղ աղասին սօլ աղասին, բոլոր հայ և տաճիկք անդ եկին, և սկսան առ ժամայն պղել դհողն. լինի թէ ներքոյ մնա-

ցեալքն ողջ գտանիցեն. Ջանք տալով դտին զնոր հարսն և փոքր աղջիկ մի ի գիրկն. իբր թէ կամեցեալ էր փախչիլ. և անդէն եկեալ էր տուն ի վերայ. և մեռեալ էին երկոքեան. և ի միւս օր հանին ես երեք մեռեալ՝ որք էին երկուք մեծ տղայ 15. և 20 տարոյ. և աղջիկ մի. և յետ երկու աւուրց որք զհողն պղէին այրեցեալ գերանքն և ինչք դուրս հանէին ամէն ոչընչացեալ և այրեցեալ. և այն էր զարմանք որ հիմն ի վեր էր ելեալ. և վերն յանդունդս իջեալ. և այնպէս խառն ի խուռն էր եղեալ, որ ոչ ոք կարէ զկերպ ըանին դրել։

ՌՄԻԹ 1780. ապրիլ 15. հինդ հոգի թուրք սպանին ի գիշերի տաճիկ մի ի մէջ իւր տանն. և իմացեալ փաշային և տղայիցն գտեալ ղթրքերն երկուքն ի կաղուխ էղարկ, և մին կախեաց, և միւսքն փախեան, և փաշայն էր վերոյիշեալ Թամուրն. սորա ջորին ծնաւ՝ զոր մեք աչօք տեսաք ի սարայն սատկած քան զկատու մի։

Ի սոյն թուին, յուլիս 16. սահապ Ախեճան աղին հետն գնացինք Աղթամարայ սուրբ Խաչն. ուխտ արինք Վարդավառի կիրակին։ Ի սոյն օր փոխեցաւ առ Աստուած լուսահոգի Սիմէօն կաթողիկոս և նստաւ յԱթոռն տէր Ղուկաս սրբազան կաթողիկոսն. տէր Աստուած կեանս յերկար պարգեւեսցէ նմա։

ՌՄՂ 1781. սոյն Թամուր փաշայս յունվար 11-ին. հարսանիք արար իւր տղայ Ալիրէգին. քան տիւ և քան գիշեր, որ այսպէս հարսանիք ոչ ոք չէր տեսեալ ի Վան. զի անհամար և անթիւ էին բարութից եղեալ խշանգք. և ձիաւորք. և չարխի ֆէլագք,[55] և ֆրբանկ ուշաղիք.[56] յաւայի[57] ֆշանգք. և փոքր թօփեր. զի երկու բերդ էին շինած ի մէջ սարային. գիշերն յետ ամեն աթաշբազ[58] օյինացն երկու բօլուղ[59] լինէին, և ի վերայ բերդից էրիշ[60] տանէին. որ տեսողացն երեւիւր թէ սարայն բոլոր նաև մարդիկն ամէն ի կրակ էին, քանզի ֆշանգն իբրև կարկուտ գայր միմեանց, այլ և չուանի վերայ խաղացողքն. և դուլաշ ըռնօղքն. և օղկապադք. և սաղանդարեից հաշիւ ոչ գոյր. նաև քան տիւ և գիշեր բոլոր երկիրն անդ պատուած էին. կերակրին. և էմագին. կայֆային և թութունին. ստակին և խալաթին թիւ ոչ գոյր. զի բոլոր երկիրն անդ հաւաքեալ էին. թող թէ ի դրսէ եկեալ հիւրքն. Իլյահքի թօյ բակին, որ երեսունէն աւելի նաֆտր[61] ունէր. որ քահեայ և խազնատար, չաւուշ և չուխատարք էին. թող թէ այլ խդմաթքարք, և եղաջիք.[62] քանզի եօթն ահագին մեծ չուն եալտուզլի[63] թղթէ կալխանով և թախրմով ետաք կու քաշէին առէջն. իւր մեհթարհանային[64] և Գափիփաջայն բոլոր պաշգայ[65] էր, յուքմ և բուուրդում[66] ի փաշայէն առեալ էր. բոլոր երկիրն որքան այեան[67] և անուանի մարդ կայր ամէն տուգանեց. քանզի ասէին թէ մինչ ի ութ և տասն քէսայ ըստակ էառ թէ փաշայէն, և թէ այլոցն. քանզի երկու անգամ փաշային կալդըր[68] արաւ. կարի մեծ և զարմանալի հարսանիք էր. որ մեծ և ծեր մարդիկն ասէին թէ Վան որքան որ Վան է, այսպիսի հարսանիք եղեալ չէ. և այս ամենայն գէլուր և դիտարեից վերայ. և ամենայն գործոց վերակացուք էին փաշայի գանձապետ Շէքար աղան. և փաշայի վաճառականապետն Ղարասաֆարեան խօճայ Ախիջան աղայն։

ՌՄՂԵ 1786 սեպտեմբեր 17. վա-

նեցի Թամուր փաշայն կրկին եկաւ Վան. շաբաթ օր դիվան արաց. Ջամուշչի[69] օղլիք. ենգիչար աղասին և սաղաղասին[70] ի մէջ սարային սպանեց. այս ենգիչար աղասին մղաեսի Ցօհաննենց այգու մօտն ջաղաց էր շիներ. Թամուր փաշայն քակեց. և այլ բաղում յաղթութիւն արաց. զոր ոչ գրեցաք։ Ի սոյն թուին այս Թամուր փաշայս պլիկ կտրել[71] ետ։

ՌՄԽԵ 1796 յուլիս մէկ օրին. վանեցի Ահմատ փաշէն մեծ սաֆար[72] աբար գնաց ի վերայ Խօյեայ էլին. Ցադարանցի Ալի աղային բաղում զօրօք. երեք հազար մարդ աւելի կայր և ոչ պակաս. քանզի Թամուր փաշոյի լաճ Հասրաթ բակն քահեայ էր. և ունէր ընդ ինքեան սաղաղասին իւր մեծ եղբայրը. ե սօլ աղասին. Շաթրր օղլին. Նաման աղէն. ե այլ բակերն և օջախլիք գնացին մինչև Բերկրի. 12 13. օր նստան. յետոյ ի մէջ գիշերի յանկարծակի հեծան և քշեցին ի վերայ Ալի աղային. քանզի Ալի աղայի վերայ կէր 1200 մարդ. և մերոյս կէր 3000. աւելի և ոչ պակաս. քսան և չորս բայրաղ լաւանդ կէր մեբում. ամենեցուն բայրաղ[73] տարան. սաղ աղասին, Շաթրր օղլին. Նաման աղէն. և այլ բաղում տաճիկք և քիւրդք ըսպանեցին. և մերկացուցին. և եարալի արին. որ ոչ գոյր թիւ. քանզի հարիւր մարդ ճօրով սաղ պրծաւ իրե Վան. էն էլ ստով մերկ բոբիկ, որ այսպիսի խայտառակութիւն մարդ չէր տեսեր. և Վանայ ասքարին այսպիսի խայտառակութիւն չէր հանդիպեր. Աստուած հեռու անէ։

ՌՄԽԶ 1797 ի սոյն թիւ յուլիս 20. Էմին բադն էլաւ սաղ աղասի։ փետր. 28. Ահմատ փաշէն պաղաւ։ Ի սոյն թիւ. ապրիլ 2. հինգշաբթի Ղարասաֆարեան Ախիջան աղայենց տունըրն այրեցին. որ կասէին թէ վեց հարիւր քէսայի սալթ մալ գնացեր տընէն. որ յետոյ Ախիջան աղան ինքն և իւր եղբայր Ցարութիւն աղայն գնացին Արզրում մօտ քօռ Իւսուֆ փաշայն, և նա արզ արաց Ըստամբօլ. որ մուշապիր եկաւ մալին թաւթիշ[74] անելու մէկ և երկու անգամ. թէպէտ ժողվեցին. բայց ղուռուշի մէկ փարէն էլ ձեռ չինգաւ. այս ամենայն չարիք գործողներն Ջամուշչոցն Ցուսէն և Խալիլ տղայքն եղէն. պատճառ թէ Ախիջան աղայն եղև պատճառ, որ մեր հայրք Թամուր փաշայն սպանեց։

Ի սոյն թիւ, մայիս 2. սաղաղասի Էմին բադն փաշայ եղև Վանայ թագաւորէն թղերն ընդունելով։

Ի սոյն թիւ. յունիս 9. աշխարհաժողով արին յԱնկուսներ. պատճառ թէ Էմին փաշէն խարջ սալեալ շատ բանի զուլում կանի. շուկայք փակեր էին. քանի անգամ յղեց թէ եկէք բացէք, դի եկլին. յետոյ բարկացաւ յունիս 10 օրին. Ֆարջուլենց Մանուկ աղէն և Խաչկանց մահտեսի Խաչատուր բռնեց կախեց. պատճառ որ կասէին թէ Ախիջան աղենց տուն այրելուն և շուկէք փակելուն պատճառ Մանուկ աղայն եղև. որ սպանելէն յետոյ հարիւր քէսայից աւելի թէ ըստակ և թէ մալ բերեց կէբաւ։

Ի սոյն թիւ յունիս 15. Ջամուշչոնց Ցուսէն և Խալիլ աղայքն փախեան։

Ի սոյն թիւ ՌՄԽԶ 1797. յունիս ամսոյն Խագրմ շահն սպանեցին։

ՌՄԽԷ 1798 փետրվար ամսոյն Աօղբրթենց Ջալիլն Արծկէ սպանեցին. դեռ կողընայ. որ պատճառ սա̄ էր եղեր Ախիջան աղայենց տունն այրելուն։

Ի սոյն ամսոյ 18-ին, Վէյիս աղէն. և Թօփչոնց Օսման բաղն ի մէջ սարային խեղդեցին. պատճառ վասըն Ախիչան աղայենց տուն այրելուն։

ՌՄԽԹ 1800 Էմին փաշայն խանդակներ հորդել ետ. որ մահլայ մահլայ գնացին հորդեցին։

Ի սոյն թուին վախճանեցաւ Ղուկաս կաթողիկոսն. և յիշատակեցին գՑովսէփ։

Ի սոյն թուին վախճանեցաւ սրբոյ Երուսաղէմայ Պետրոս պատրիարգ և նստաւ վանեցի Թէոդորոս պատրիարքն։

Ի սոյն թուին սեպտեմբեր 31-ին. Վարագայ խաչի տօնին Թամուր փաշայի որդի Ցասրաթ բագի թղի Մուժտէն իրե. այն վախդ որ խալհ լսաւ. երկիրս շարժի նման դղրդաց։

Ի սոյն թիւ հոկտեմբեր 11. ուրբաթ գիշեր երկինք որոտաց. երբ կայծակ թալեց ի վերայ բերդին Վանայ. ներքին կողմէն քանի կտոր մեծ քարեր պրծաւ անկաւ. դուռ և տանիս ջարդել և ծակել ժամ. 11-ին. որ ժամահարներ կու դփէն այն վախդ. սուրբ Առաքելոյ ժամահար որ Կիրակոս ասէին. այդ տեղն որ քարեր կուգայ. մին ի քարանց կանկանէ սորա վերայ կու մեռանի. տէր լուսաւորեսցէ հոգին։ Եւ ես տրուպ Մարտիրոս Խալիփայն. այն վախտ արթուն էի և բաց տեղ. զոր աչօք իմովք ականատես եղէ։

Ի սոյն թիւ դեկտեմբեր ամսոյ ես Մարտիրոս մտայ աշխարհի կարգ։

ԺԵ· ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԾՈՒԾԱՆՑԻ

Եւ արդ՝ ի Թուին հայոց ՃԽԻԸ 1679 որ վասն բազմութեան մեղաց մերոց, էր սուրբ ուխտս Վարագայ յոյժ նքաւոր և կարի աղքատ. վանեցի դօլվաթաւորք բերին զՄօկաց Կարապետ վարդապետն. որ էր ինքն Ապարանցի Կարապետ վարդապետին աշակերտ, զոր մականունն Կալօյ ասէին, և եդին առաջնորդ սուրբ ուխտին Վարագայ, որ եկաց առաջնորդ ամս տասն և ութ. և զարդարեաց զսա մեծամեծ փառօք. միաբանիւ և ժամատեղօք, և փարթամացուցեալ ճոխացոյց ոսկեղինօք, և արծաթեղինօք, Աստուածաշունչ տառիւք և ամենայն եկեղեցական զարդիւք, խաշամբք և անասնօք և ամենայն գոյիւք, առաւել քան զժամանակս Ամնեքերիմայ արքային, զի ամէն յօրն հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր, և հինգ հարիւր ձիաւորք օսմանցիք և ոստանցիք գային և ուտէին և մանրէին. և տանէին, և ոչ պակասէր շնորհօքն Աստուծոյ, և սուրբ Խաչին. Թողում ասել զհետեական զհայն և զԹուրքն. և օր լինէր որ փաղ...* ամենեքեան դային աւելի քան զհազար ձիաւորօք. և ի Թուին ՌՃԽԶ 1697 վախճանեցաւ սոյն Կարապետ վարդապետս։ Եւ քաղաքացիքն բերին զՄոկացի Ստեփաննոս վարդապետն և առաջնորդ եդին. որ և սա ևս եկաց զամս 18. բայց ոչ կարաց սա սուրբ ուխտս... այլ ի բերմանց ժամանակիս անկաւ սուրբ Աթոռս ի... յորոյ պատճառէ իշխանք քաղաքիս և վաքիլք վանացս.. ոչ Թէ զԿարապետ վարդապետի բերեալ անօԹս, և ոսկեզօծ զրեանսն.. պահեալ էին. զամենեսեան հանեալ ծախեցին. և այնպէս իմացիք զի... շատն, և շուն և կատուն ևս ծախեցին. Թողում ասել զոչխարս և... և արարին զսուրբ ուխտս անմարդաբնակ ամայի. որ շունք գայլք՝ Թուրք և այլազգիք մըտանէին. և այնպէս մնաց զամս երեք. որ զսուրբ տաճարաց զսեղանսն կործանեցին. զգումբէթսն քակեցին, ըղդրունս և զխաչկալս խորտակեցին, զյատակսն և զխորանսն հարթայատակ արարին. այնքան մինչ զի տեսողաց կարծրացեալ սիրտ կսկծէր և մորմոքէր. և յաչացն արեան արտասուս ծո-

* Բնագիրը եղծուած էր կէտերով նըշանակուած տեղերը։

րէր. մինչև այցելութեամբն Աստուծոյ աշակերտ նոյն Կարապետ վարդապետին, Շուշանցի Բարդուղիմէոս վարդապետն. տեսեալ զհայրենի Աթոռն իւր այնպէս ամայի ի գութ շարժեցաւ. և ինքնին եկեալ բազում նեղութիւնս և չարչարանս կրեաց. զհոգոյ փողն իւր և զսուրբ Երուսաղէմայ պաշարն աստ խարջեաց. ղխարխալեալ եկեղեցին նորնորոգեաց. զխաչկալս զխորանս և զկումբէթս վերստին զարդարեաց. և զսուրբ ուխտս միաբանիւք և եկեղեցական զարդիւք և զպասիւք, խաշամբ և արջառօք, և ամենայն գոյիւք վայելչացոյց. և ժամատեղօք և սեղանօք, առաւել քան զառաջինն։

Որ և զսուրբ տառս այս որ կոչի Սարգիս գիրք, որ յանցեալ ամին ծախեալ էին, ի Վան քաղաքէն գնեալ էր զսա տէր Գրիգորն. նա յորժամ ետես թէ Բարդուղիմէոս վարդապետն զսուրբ Աթոռն Վարագայ դարձեալ վերստին զարդարեաց և յառաջին փառսն հասոյց. ինքնին բերեալ զսուրբ գիրքս այս ի Վարագ եղ առաջի Բարդուղիմէոս վարդապետին, և նա տեսեալ յոյժ ուրախացաւ. և ի բազմացն ըստ իւրոյ վայելմանն սակաւ ինչ պարգևս շնորհեաց նմա. և առեալ զսուրբ գիրքս եղ ի դուռն Վարագայ սուրբ Նշանին։ Արդ՝ որք հանդիպիք սմա, Աստուած ողորմի ասացէք սոյն Բարդուղիմէոս վարդապետին, և նոյն տէր Գրիգորին, և ծնողաց նոցին ամէն։ Եղև այս ի թուին ՌՃՀ 1721։

Վարագայ վանքի դարպասի դրսի պատի արձանագրութիւն Բարդուղիմէոսի մասին.

Ի հայրապետութեան տեառն Աստուածատուր կաթողիկոսի շնորհօքն ամենազօրին Աստուծոյ, և առաջնորդութեամբ սուրբ կուսին Մարիամայ, ես վանեցի ի գիւղէն Շուշանայ տէր պ. Բարդուղիմէոս վարդապետս, աշակերտ տեառն Կարապետ քաջ և անյաղթ վարդապետի, որ մականուն Կալօյ ասի, գոլով աշակերտ Ապարանցի Սիմէօնեանց վարդապետացն, տեսի զաւերումն քրիստոսաշէն մայր վանօրէից սուրբ ուխտիս Վարագայ վասն ծովացեալ մեղաց մերոց։ Զի կ... սեղանքն սուրբ աւերեալ. և եկեղեցւոյ ամենայն ինչ պակասեալ. և իմ յուսալով Աստուած վերստին հաստատեցի ամենայն զարդիւք, թէ եկեղեցւոյ անօթս թէ խաշինք և արջառք. և երկու կար... եղև, և միաբան եղբարքս իմ տէր Աւետիս վարդապետն, Յովսէփ վարդապետն, տէր Սարգիս, տէր Յոհաննէս. տէր Կարապետ. այս եղև թուին ՌՃՀԳ 1724 ամին. տեղապահութեան վէգիր Աւտուլայ փաշային։

Վանի ս. Պօղոս եկեղեցու մի յայսմաւուրի յիշատակարանին կից գրուած է նոյն Բարդուղիմէոսի մասին.

Ձեռնադրեցաւ տէր Պօղոս քահանայ ի դուռն տիրամայր եկեղեցւոյ, ձեռամբ Բարդուղիմէոս վարդապետին, որ է սպասաւոր Վարագայ աւագ սուրբ Նշանին, թուականութեան հայոց ՌՃԿԵ 1716 մարտ 11։

ԺԶ. ՎԷՊ ԶՊԱՐՍԻՑ

Նատր անուն ոմն որդի ըղտապանի լեալ այր քաջակորով ի բազում տեղիս ղրաղում քաջութիւնս ցուցեալ հրաւիրեցաւ ի շահ Թահմազայ յամիրապետութիւն. և առաւել ես հանդիսացեալ գտաւ այր պատերազմող յաջողակ ի մրցմունս մարտի. ուստի կացոյց զնա շահ Թահմազ զօրագլուխ և հրամանատար ամենայն կառավարութեան իւրոյ սրոյ յաջող երևեալ յընթացս գործոցն իւր, հնարիւք իմն ղաւեաց զարքայ և զբոլոր սերունդս նորա ժառանգս արքայութեանն, ինքնին բռնացաւ և թագաւորեաց ի վերայ Պարսից. ապա ըստ իւրն չարութեան յանձն իւր ընկալաւ զհատուցումն հատուցմանն իւրոյ ի ծառայից իւրոց ի թուականին 1745.

Ապա զկնի կենազրաւ լինելոյ սորին վեր ի վայր տապալեցաւ իշխանութիւնն պարսից, և բոլոր Պարսկաստան. մի ղմիով ելանէին. իւրաքանչիւր խանք և երևելիք յիւրաքանչիւր տեղեաց շարժեցան, և իւրաքանչիւր մասնաւոր զաւառ զրեթէ մի մի թագաւորութիւն ցուցին զինքեանս. և յարեան ի վերայ միմեանց պատերազմաւ. յորս երևելիքն Ադլ շահ, Իբրահիմ շահ, և Մայարխան. և այլ ևս 33 խանք և բուռն իշխանք, և այլք յոլովք, որք յիրերաց վերայ յարձակեալ՝ հարին յանդուգն մարտիւ զմիմեանս. ապատակեցին և աւերեցին զերկիր և զսահման միմեանց. և այս ի սուղ ժամանակի, մինչև ասել յառասպելս՝ ով ստեպղին զու տեսեր զերիս թագաւոր. զի մինչ ի սերմանիլ, աճիլ և սպառիլ ստեպղին երեք թագաւորք մի զկնի միոյ անցին. և այսու ամենայնիւ զամս երիս առաւել քան զայլ քաղաքս՝ երերեալ տապալեցաւ հռչակաւոր բազմաճոխ քաղաքն Ասպահան բոլոր սահմանօքն իւրովք։

Քանզի ի թուականին 1748. ել Ալիմարդան խան ազգաւ բախտիարի զօրօք բազմօք և եկն ի վերայ Ասպահան քաղաքի տալ պատերազմ ընդ 33 խանսն. և ունէր զօրապետ ոմն Քեարիմ անուն ազգաւ ղանդի և խանիցն ևս բազմութիւն զօրաց միաբանեալ ելին ընդ առաջ պատրաստութեամբ, և տեղի պատերազմի գտաւ դաշտն Քեահիզ կոչեցեալ. ուրանօր ճակատ առ ճակատ խմբեալ յերկուց կողմանց հարին զմիմեանս, և յառաջադէմ հանդիսացեալ Քեարիմ զօրապետին՝ եցոյց քաջութիւնս անպարտելիս և յաղթեալ նոցա՝ ցիր և ցան կացոյց զնոսա զամենեսին, և զբազումս

դիաթաւալ արկ յերեսս դաշտին. և յաղթանակեալ զգործ մարտին, եմոյծ զԱլիմարդան խան յԱսպահան քաղաք. վասնորոյ և ինքն ըստ քաջութեանն պատուեալ յԱլիմարդան խանէ, ստացաւ և զիշխանութիւն խանութեան։

Ալիմարդան խան այն ինչ ետես եթէ յաջողի գործ իւր, զհետ եղև պատրաստութեան պլտոյից, և օր ըստ օրէ ի փոքր միջոցի հողացաւ զամենայն զկահ և զկարասի և զզէնս պատերազմի և զայլ հարկաւորս արքայական։

Ապա կացուցեալ ի նմին քաղաքի իշխան և քաղաքապետ զՔէրիմ խան՝ զզօրապետն իւր անկասկած ամենևին զնմանէ, ել ինքնին զօրօք իւրովք յունիս ամիս. դէպ ի Թէհրան և յայլ կողմանս Պարսկաստանի հնազանդեցուցանել և նուաճել ընդ ձեռամբ իւր զմիւս բռնաւորսն, որպէս զի հաստատուն հաստատեսցի յԱթոռ թագաւորութեանն։

Իսկ Քէրիմ խանն մնացեալ այնպէս յԱսպահան քաղաք՝ մտադրեաց զհետ արձակել Ալիմարդան խանի, և նուաճեալ զնա ինքն կալցէ զիշխանութիւն. ոյր վասն հողացաւ ի փոքր ժամանակի զամենայն հարկաւորաց զինուց և ասպարաց և զայլոց արժանաւորաց արքունի փառաց՝ ժողովեաց առ իւր և զխումբս զօրաց բազմաց, և ըստ որում այր կորովի և քաջայաղթ յայտնեաց զապստամբութիւն իւր յԱլիմարդանէն. և առեալ զբազմութիւն զօրաց՝ պնդեցաւ զկնի նորա յամսեանն սեպտ. և հասեալ նմա ի ճանապարհի՝ յարգարեաց զճակատ և խռմբեցաւ պատերազմն և արիաբար մարտուցեալ վանեաց զզօրս նորա, և ձերբակալ արարեալ զնոյն ինքն զԱլիմարդան սպան, և իւրացոյց զամենայն իշխանութիւնս նորին. և դարձաւ անդրէն յԱսպահան քաղաք զուարթ սրտիւ աղդուութեամբ իմն անհոդդութեամբ։

Բայց տակաւին չունէր իշխանութեանն հաստատութիւն կատարելապէս, վասն զի բազումք ի կողմանց կողմանց ապստամբէին ի նմանէ, և յոխորդային ի վերայ նորա, և բազմիցս այն էր՝ պատերազմ իսկ յարուցանէին և յոլով զաշխատանս հասուցանէին, որպէս էր Ազատ խանն, և Հասան խանն. ուստի և յաւէտ կրեաց տքնութիւնս հալածանօք հանդերձ իբրև ամիսս երիս. այլ սակայն առ որ և դիմէր զօրօքն, ինքն յաղթէր և նուաճէր. և զօրանայր քան զամենեսին, մինչև սպառսպուռ վանեալ ստրկացոյց, զոմանս ի սուր ծախեալ, և զոմանս ընդ իշխանութեամբ դրաւեալ։ Եւ մինչ ցերիս ամս գրեթէ ընդ իւրև հնազանդեցոյց զբոլոր իշխանութիւնս Պարսկաստանի և զամենայն կողմանս խաղաղացոյց տիրապէս։

Եւ ապա ի յաջորդ ամին ի թուականին 1751 թագաւորեաց խաղաղ սրտիւ յԱսպահան քաղաք. և կացեալ ևս անդ զամս երիս. փոխեաց անտի զարքունիս իւր ի Շիրազ ի թուականին 1754. և վայելուչ յօրինուածովք պայծառացոյց զքաղաքն. շրջապատեաց զնա բարձրաբերձ պարսպաւ և բրգունս մեծամեծս և գեղեցիկս ի նմա կանգնեաց. և շուրջ զպարսպաւն փորեաց ահագին ձորակ իմն (խանաէք) խորութեամբ երեսուն գրկաչափ. և այսպէս սաստկագոյնս ամրացուցեալ ըզքաղաքն, շինէ ապա հոյակապ և զարմանալի ապարանս արքունի և տեղի զբօսանաց՝ զայգիս, և շուկայս կարի գեղեցիկս և զարմացման արժանաւորս ըստ դատողութեան այնմ դարու. Նաև

զպանդուկս մեծամեծս ըստ բոլորին սրբատաշ կոփածու քարամբք հիասքանչ կերտուածքովք։

Եւս և զպարիսպ իմն ի մէջ պարսպին մեծի ամրոց անառիկ (Իչղալէ) կանգնէ հիմնալի գեղեցկութեամբ։

Շինէ և դատարանս կարգեալ ի հիացումն տեսութեան, որոյ առաջին երկու քարեայ սեանցն երկայնութիւն երկոտասան գրկաչափ, և թանձրութիւնն երեք գիրկ, և այլ զանազան յօրինուածս և պէս պէս շինութիւնս՝ մինչև հանդիսացեալ գրեթէ երկրորդ Շահապաս վերաձայնիլ՝ նախանձելով ընդ նորին շինուածսն յԱսպահան քաղաքի։

Եւ ի բոլոր ընթացս կենաց թագաւորութեան իւրոյ՝ առ ամենայն սահմանակից տեարսն միաբան սիրով և անդորր խաղաղութեամբ վարեցաւ, և ի միջակ վիճակի զհպատակեալսն իւր կառավարեաց. և այսպէս հասեալ ի բարւոք ծերութիւն ի հասակ վաթսուն և ութն ամաց, ի թուականին 1777, հիւանդացաւ զհիւանդութիւն մեծ, և այնինչ ետես եթէ ոչ բժիշկ և ոչ դեղք կարացին օգնել իւրն, այլ միայն ինքեան տկարութեամբ կարճիլ ի կենաց, կոչեաց ի վերջին աւուր վախճանի իւրոյ առ ինքն զեղբայրն իւր Զաքի խան, զկրտսերն. և վերջին կտակ խոստացաւ նմա զայս.

Ես քաջ գիտելով զքեզ արի և հզօր առ իս պահեցի մինչ ցարդ վասն աւուրս այսմիկ. և հաստատուն գիտեմ եթէ զկնի մահուանս ի քէնէ և եթ կարելի պահել զանուն իմ և զժառանգութիւնն արքունի. ձեռնտու լիցիս պատանի որդւոյն իմոյ Ապոլֆաթի խանին, օգնեսցես և թագաւորեցուսցես զնա։

Նաև զՍագեխ խան աւագ եղբայրն իմ բերցես աստ՝ որ կայ ի Բասրա քաղաքի Արարացւոց՝ զոր պատերազմաւ առաք ի Խոռաց ազգէ, օգնական քեզ. տուք զանուն արքայական աւագ որդւոյն իմոյ, իսկ գործ և կառավարութիւն ի ձեռս ձեր լիցի, զուն գործեցէք չառնել զվաստակ իմ անպիտան մատնեալ ի ձեռս այլոց։

Զայսոսիկ ի վախճան հասուցեալ՝ վճարեաց զկեանս իւր ի 10 փետրվարի. կացեալ ի թագաւորութեան ամս ԻԳ և Գ ամ ևս ի պատերազմունս. միանգամայն թիւ իշխանութեան ԻԶ։

Ընկալեալ զայս կտակօրէն պատուէր յեղբօրէն իւրմէ Քէրիմ խան շահէն քաջոտն և արի խոհականն Զաքի խան, փութացաւ ի դիշերին այնմիկ տանէ ի տուն առ ամենայն նախարարսն և բռնաւոր իշխանսն բնակեալս ի նոյն քաղաքի, և ուխտ ընդ ամենեսին հաստատեաց կալ անվրդով և խաղաղ յիւրն ընկալեալ պատուէր, բայց անուն Նազարալի խան ումն՝ այր փարթամ հարուստ և բազմագանձ՝ անլուր գտեալ բանից նորուն հանդերձ ոմամբք մեծամեծ նախարարօք երազեաց, խոյս ետ ամրացաւ ի յանառիկ ամրոցն (Իչխալէ)՝ որ ի մէջ քաղաքին և ընդ դէմ եկաց ամենայն զօրութեամբ Զաքի խանին։

Իսկ քաջոտ և արիասիրտս այս, թողեալ այնպէս զանթաղ զդի եղբօր իւրոյ ի տան, քաջապէս մարտ եդ ի վերայ ամրոցին, և զաւուրս երիս աշխատ եղեալ ընդ բռամբ էած զապստամբսն՝ որք էին ընդ Նազարալի խանին 17 արք հզօրք, զորոց ի նոյն աւուր զգլուխսն բարձեալ ի մարմնոց՝ զդիսն նոցին ընկէց ի հրապարակ անդր ի տեսիլ քաղաքին, և անմիջոց զբազմագանձ հարստութիւնս նոցա՝ մանաւանդ Նազարալի խանին զգոհարս պատուականս զոսկեղէնս և զարծաթեղէնս

կողոպտեալ գրաւեաց ի գանձ արքունի։

Եւ զկնի անցիցս այսոցիկ քաջն Զաքի խան հանեալ ի տանէ զգի եղբօրն շքեղ փառաւորութեամբ և մեծաւ հանդիսիւ տարեալ եդ ի շիրմի ի Քեօլէ փռանկի կոչեցեալ պալատանն՝ զոր շինեալ էր նա ինքն Քէրիմ խանն ի մէջ արքունի այգւոյ իւրոյ, և զարդարեաց զշիրիմն փառացի զարդուք։

Ապա յարդարեալ զհանդէս մեծավայել շքով թագաւորեցոյց զորդի նորուն Զապօլֆաթի խանն և նստոյց յարքունական գահոյս և յանուն նորա եհատ դրամս ոսկիս. և նոյն ինքն Զաքիխան էր կառավար արքունական գործոցն, և անունն Ապօլֆաթի խանին։

Եւ ըստ պատուիրի Քէրիմ խանին գրեաց ապա և առ եղբայրն իւր հրովարտակ ի Պասրա՝ փութալ գալ առ նա և ոչ յամել պատճառաւ իւիք և ինքն պարապէր ի քաջութիւնս արութեան ընդ շրջակայ խոչսն իշխանութեան իւրեանց և զինչ և յառաջադրէր անյապաղ ըստ քաջակորովութեանն ի գլուխ հանէր և ի փոքր ժամանակի զմեծամեծս գործս գործեաց. զոր ի պատմել երկարութիւն բանից ոչ ներէ։

Եւ թէպէտ սա այսպէս յամենայն սրտէ վրէժխնդիր թշնամեաց և առիւծ անպարտելի հզօր ախոյեան ընդ դէմ ապստամբից. բայց Ապօլֆաթի խան՝ որ քաջութեամբ սորին թագաւորեաց, ատէր զսա և զսէր իւր ունէր առ միւս հօրեղբայրն իւր Սատեխ խան և գրէր ի ծածուկ առ նա գալ և ունել զգործն արքունի. որպէս զի մի լինիցի յառաջանալ Զաքի խանին յաջողութեամբ և բաղդիւք. այլ այս գիր անկաւ ի ձեռս Զաքի խանին. և չարաչար վիրաւորեալ յերկոցունցն՝ ունէր ի միտս իւր անմոռաց, զգացեալ զայսմանէ Ապօլֆաթի խանին՝ գրեաց վերստին առ Սադեխ խանն և զգուշացոյց. և ընկալեալ նորա զբան պատգամին՝ խոյս տայ ի Շիրազու և գնայ դէպ ի Ցեղդ և ի Սիսդան։

Եւ յայս միջոց Ալիմուրատ անուն խան ոմն ազգաւ Ղանդ, խորթ որդի Սադեխ խանին ի մօրէ Ջաֆաբ խանին, այլ ոչ ի ցեղէ Քէրիմ խանին, հրամանաւ Զաքի խանին էր ի Սպահան քաղաքապետ և բէկլարբէկի ի լսելն զայս դժկամակութիւն Ապօլֆաթի խանին Զաքի և Սադեխ խանից, ապստամբեցաւ ի Զաքի խանէն և այլ ոչ ևս ետ հարկս նմա։

Լուեալ զայս Զաքի խանին թէպէտ կարի ի խոր խոցեցաւ, այլ լռելեայն ի վաղիւն յանկարծ առանց խորհրդոյ ումեք ել նստաւ արտաքոյ դրան քաղաքին յառաւօտուն. և հնչեցոյց զմոնետիկն ի լսելիս ամենեցուն՝ իբր այն թէ, համար առնու զօրացն և ի սաստի հրամանէ աստի ամենեքեան վաղվաղ հասանէին ի դուռն քաղաքին առանց իմիք պատրաստութեան. և այսպէս յառաւօտէ մինչև ցհասարակիլ աւուրն կուտեցաւ այր զօրական իբր հազարաց քսան և հնգից. և ետ ամենեցուն պատուէր սաստիկ մինչև ցերեկոյ պատրաստեսցեն զինքեանս զինուք պատերազմի, և յառաւօտուն ընդ ամենայն յարդարեալք ելցեն ի ճանապարհ գնալ ի Սպահան ի վերայ Ալի Մուրատ խանին։

Եւ ի վաղիւն բռնադատեալ ես զԱպօլֆաթի խան տանի ընդ իւր նըստուցանել անդ յաթոռ թագաւորութեան. և այնչափ սաստկութեամբ փութացուցանէր զբանակ զօրացն մինչև ցերկուս աւուրս, զճանապարհ վեց աւուր էառ. և ի սոյն արշաւանս իւր

կալաւ զհրովարտակ մի գրեալ յԱպօլֆաթի խանէն առ Սադեխ խանն՝ թէ ահա գնամք մեք ի Սպահան դու եկեալ փութով մտցես ի Շիրազ և տիրեսցես. ուստի կարի իմն բարկացեալ իբրև զազան կատաղի Զաքի խան կալեալ զնա ընկէց ի պատուոյն անարգանօք։

Եւ տակաւին ոչինչ գիտէր Ալի Մուրատ խան ի Ասպահան. և յարձակեալքն ի վերայ ունէին ի վաղիւն պաշարեալ զԱսպահան։ Այլ ի սոյն գիշեր մտերիմ սպասաւորք և բարեկամք Ապօլֆաթի խանին ոչ տարեալ զայն անպատուութիւն տեառն իւրեանց, միաբան խորհրդով յեղակարծ ժամու թափեցան զեղան ի վրան Զաքի խանին այն ինչ յանկողնի ննջէր փոխատրութեամբ շնչոյ, ննջեցուցին սրախողխող արարեալ սպանին անշունչ ամեններին ի նինջ յաւիտեան ի նոյն գեղջ յԵզդխաստ կոչեցեալ։

Ապա դարձ արար անտի Ապօլֆաթի խան զօրօքն հանդերձ ընդ կըրունկն ի Շիրազ. և կատարեցին թէ ինքն և թէ Ալիմուրատ տօն ուրախութեան և խնդութեան և այսպէս կարճամիտն Ապօլֆաթի խան որպէս թէ նոր հաստատեաց զթագաւորութիւն իւր ետ բերել զՍադեխ խան և փառաւորութեամբ եմոյծ ի Շիրազ. և կացուցեալ ի վերայ գործոցն արքունի կառավարէր. այլ զկնի փոքր միջոցի տեսեալ Սադեխ խանի եթէ տկար է գործովք և անարգ սրտիւք Ապօլֆաթի խանն, այլև հասակաւն տակաւին պատանի. նախանձեցաւ ընդ նա, և ինքնին տիրել ղաւառին եդ ի մտի. ուստի արգել զնա ի տան արքունի, և ինքն նստաւ յատենի, և հռչակեցաւ առ ամենեսին թագաւոր երկրին պարսից։

Իսկ և Ալիմուրատ խան յԱսպահան՝ որ առ երեսս ակամայ ընդունէր զթագաւորութիւնն Ապօլֆաթի խանին, այն ինչ լուաւ զապստամբութենէ Սադեխ խանին և ինքն ևս ապստամբեցաւ ի նմանէ՝ որ էր խորթ հայր իւր։

Զգացեալ զայսմանէ Սադեխ խան՝ որ էր խելագար զօրօք բազմօք ի վերայ Ալիմուրատ խանին նուաճել զնա ընդ բռամբ. և նա ելանէ յԱսպահանայ ընդ դէմ սորա. և պատահեալ միմեանց ճանապարհին ետուն պատերազմ ընդ իրեարս. և պարտեցաւ կողմն Ալիմուրատ խանին, և զօրքն ցիր և ցան եղեն և ինքն խոյս տուեալ փախչի դէպ ի Համադան քաղաք։

Իսկ Ալի Նաղի խանն գնայ մտանէ յԱսպահան. և ձեռներէց լինի ի գործս չարութեան՝ մինչև մանկունս և աղջկունս բռնի յափշտակէ. և տառապեցուցանէ զբազումս մանաւանդ զազգս հայոց՝ յորոց և զերկու մատաղամարդ աղջկունս յինքն ածէ. և այսպիսի եղեռն գործադրութեամբ յուսաբեկ առնէ զամենեսին մինչ ցամիսս երիս։

Այլ Ալիմուրատ խան՝ որ պարտեալ ի սմանէ խոյս ետ ի Համադան, վերստին զօրաժողով լինի և պատրաստէ զինքն և յարձակի ի վերայ թշնամւոյն իւրոյ՝ գիտելով եթէ յուսաբեկ է և քաղաքն Ասպահան. և նա ևս ելեալ անտի յառնեն ի վերայ միմեանց, իսկ Ալիմուրատ խան յայս նուագ փոխարինեալ զմարտն ի գլուխ խելայեղին փախուցանէ մինչ ի Շիրազ և ինքն գնացեալ տիրէ կրկին Ասպահանայ։

Եւ օր քան զօր զկնի այսր ամենայնի տեսանէ եթէ յաջողի գործն իւր, ի մտի դնէ գնալ մարտիւ ի վերայ Շիրազ քաղաքի, այլ մեծ մասն զօրաց իւրոց գոլով ազգաւ լաքառի ղանղք ի ցեղէ Քէրիմ խանին կասկածէր ի նոցունց. և գտեալ հնարս պատրեաց

զնոսա բանիւք՝ եթէ կամք իմ այն է, զի վերստին Ապօլֆաթի խանն թագաւորեսցէ որդւյն Քէրիմ խանի, և մի՛ չարն այն Սադեխ։ Արդ՝ ով ոք ցանկայ վերստին պայծառութեան անուան Քէրիմ խանին և խնդրէ զվրէժ ի թըշնամւոյն որդւոյ նորին Ապօլֆաթի խանին ելցէ ընդ իս ժառանգեցուցանել նմա անդրէն զգահն հայրենի։

Զայն բան լուեալ ի բերանոյ նորին վառեցան ամենեքեան ի նախանձ և եղեն անձնատուր նմա և հաճեցան զինչ և կամեցի. և այսու հնարադրութեամբ զօրացաւ Ալիմուրատ խանն և բազմացոյց ևս զզօրս իւր, և գրաւեաց յինքն զսիրտ ամենեցուն. և ել բազմութեամբ զօրաց յԱսպահանայ, և գընացեալ պաշարեաց զՇիրազ մինչև ցամիսս ինն և բազում նեղութիւնս հասուցեալ նոցա էարկ ի նեղ, և անճարացեալ բերդայլին զօրացն՝ եդին դաշինս ընդ Ալիմուրատ խանին, մուծին զնա ի ներքս ի քաղաքն. այլ նորա ստեալ դաշինն և խոստմանն առ զօրս կալաւ միանգամայն և զերկոսեանն զԱպօլֆաթի խանն և զՍադեխ խանն և էած ի վերայ նոցա զխաւար աղջամղջին զրկեալ զնոսա ի տեսողական զգայութեանցն։

Իսկ Սադեխ խան ոչ տարեալ այսմ թշուառութեան էառ դեղ մահու և չոգաւ զիւրովի. և Ապօլֆաթի խան կաց մնաց այնպէս յերկար ժամանակ։

Եւ ունէր յայնժամ Ալիմուրատ խան օգնական և նախարար ինքեան զԱպկար խան որդի Զաքի խանին, և զՋաֆար խան որդի Սադեխ խանին զխորթ եղբայրն իւր. և իբրև զգաց եթէ Ապկար խան ոչ գնայ ընդ իւր մըտերմօրէն, այլ ընդներհակն տայ ցոյց ընթացից իւրոց, յաւուր միում յանկարծ ետ սպանանել զնա. և կայր առ ինքն Ջաֆար խան և եթ։ 1779. Եւ թագաւորեաց ի վերայ սահմանացն միանգամայն՝ որոց տիրէր Քէրիմ խան։

Եւ արար խաղաղութիւն։ Այլ յայսոսիկ աւուրս պակասեցաւ ի դրամոց և հոգայր մտատանջութեամբ. մերձեցան առ նա արք ոմանք չարաբարոյք և չարախնդիրք չարախօսեցան զազգէ Հայոց եղելոցն ի գիւղաքաղաքն Նոր Ջուղայ. և զառաջնորդէ Ամենափրկչի վանիցն՝ որ անդ. եթէ դոն անդ բազում գանձք անօթք և այլ իրք պիտանիք. զայս լուեալ՝ հրամայեաց մարդահարկ առնել զտեղին մանաւանդ զեկեղեցականսն. և միայն յառաջնորդէն պահանջեալ հինգ հարիւր թուման սպիտակ դրամ. և ընդ այս անօրէն հրաման պատրաստեցան խանք երեք հանդերձ արամբք իւրեանց. և էր 1778 թուականն և ամիսն ապրիլ 7 և գնացին ի նոյն վանքն ի մուտս արևուն. և զառաջին խաղաղութեամբ վարեցան ընդ առաջնորդն և սիրով պահանջէին մինչև էանց առաջին գիշերոյ. ապա յարձակեալ գազանաբար ի վերայ նորա՝ որոյ անունն էր Մկրտիչ վարդապետ և ի վերայ յաջորդի նորուն Յակոբ վարդապետին և բռնադատէին խստութեամբ տալ զհարկն. և յաղմկէ աստի շփոթեալ միաբանիցն ցրուեցան և ծածկեցին զերեսս իւրեանց յայլուր. և ով ոք և լսէր ի հայոց փախուցեալ թաքչէին ի գաղտնի տեղիս մինչև մընալ միայն առանձին երկոքին վարդապետքն. և բռնաւորքն անօրէնք. ոչ ոք էր միջնորդ անդ կամ բարեխօս վասն տառապելոցն, զորս կապեալ ձըգեցին ի վայր և մինչև ցառաւօտ եօթնիցս այնքան խստօրէն հարսին զնոսա մինչև լինել նոցա իբրև զմեռեալ. և ինքեանք յարձակեալ ի մենարանսն և

ի խուցսն և ՚յայլ երևելի և յայտնի տեղիսն և յեկեղեցին իսկ կապուտ կողոպուտ արարեալ թողին դատարկ ամենևին. և եկեալ կրկին կապեցին զնոսա ի փայտ անհնարին, որոց մահ գրեթէ առաջի երևէր. ՚յորմէ երկուցեալ ցուցին զաւանդատունն գետնափոր՝ ուր էին ամենայն կահք և սպասք սուրբ տանն բովանդակ՝ խաչ, սկիհ, բուրվառ և այլ ամենայն զարդքն զոսա զամենայն կողոպտեալ մինչև ցառաւօտ իսպառ, կուտեցին արծաթ հարիւր յիսուն լիտր. ոսկի լիտր և կէս. և այն ինչ ՚յառաւօտուն հասանէր հրաման բռնաւորին ձեռն արկանել ՚յայնպիսիս, տեսին զի այն գործ եղեալ էր ի գլուխ. և առեալ տարին զայն ամենայն առ բռնաւորն. զորս տեսեալ թէպէտ առ վերին երեսս զրկողութիւն ասէր ՚յաղքատաց; բայց կարի իմն խնդամտեալ՝ փութացաւ ետ հատանել դրամս և տալ ռոճիկ զօրաց իւրոց. միայն զմասունս սրբոցն ամբողջ հանեալ ՚յարծաթեղինացն վերադարձոյց և խոստացաւ խաբեբայն անօրէն զկնի թագաւորելոյն զայն ամենայն հատուցանել. ահա այսօրինակ խրթնացաւ ի զարդուց սոյն այս վանք. և ոչ այս միայն, այլ գրեթէ բոլոր վանորայք ի ժամանակս ժամանակս զսոյն աղէտ կրեալ են վասն անմտութեան ազգին. զի թողեալ ըզբանական եկեղեցին զտաճարն Աստուծոյ զմարդն՝ մերկ, ողորմելի, տառապեալ, տան նուէր և ՚յիշատակս՝ զոր տարեալ կուտեն ի վանորայս, և ի ՚յառաջանալ այսպիսի բռնաւորաց և ելուզակաց զի բազմաց ամաց ժողովեալն ի միում նուագի ՚յաւարի տան. և այն տանջանօք և բազում անգամ մահուամբ իսկ։ Եւ արար խաղաղութիւն հպատակաց իւրոց մինչ ցամս վեց։

Եւ փոխեալ զաթոռ իշխանութեանն յԱսպահան տարաւ ընդ իւր և զամենայն գանձս և զստացուածս արքունական՝ զորս ի Քէրիմխանէ անտի ժողովեալ կուտեալ էին անդ. խաղացոյց և զզօրս լաքառի ազգ անուանեալ ընտանեօք և զաւակօք նոցին անդ ՚յԱսպահան և նստաւ անդ փառաւորութեամբ։

Ի թուականին Փրկչի 1784 հոկտ. 23 Ալիմուրատ խանի տեսեալ եթէ գլուխ ամբառնայ օրքան զօր Մահմատ խան ներքինի որդւոյ Հասանայ ազգաւ ղաջար՝ որ ՚յառաջագոյն իսկ բազում վնաս և աւերութիւնս տուեալ էր Սպահան քաղաքի և այժմ ի կողմանս Թէհրանու բռնանայ՝ արար պատրաստութիւն զօրաց այլովքն հանդերձ և ել ի ճանապարհ. թողեալ անդ ՚յԱսպահան կառավար և քաղաքապետ զՖաղէր խան ոմն որդի երկրագործ անշուք առն ուրուք. այր խոհական և գործունեայ՝ որոյ էր մտերիմ սիրելի ատենադպիրն Ալիմուրատ խանի Միրզա Ռեբի լի հանճարօք և հնարագէտ. զսոյն ատենադպիր առեալ ընդ իւր գնայ ստուար զօրօք մերձ ի Թէհրան և հարկանէ զբանակ իւր. և հանէ զզօրս փոքր փոքր գնդաւ ՚յայսկոյս ՚յայնկոյս ի գաւառս և ի ՚յանցս ճանապարհաց ի զգուշանալ պահպանութեան մեծ բանակին. և տեղեկութիւն թշնամեացն հանդամանաց. բայց երկարեալ ժամանակին հաս ի վերայ ձմեռն ձիւնաբեր և ինքն գոլով այր տկար անձամբ, անկաւ ի հիւանդութիւն սաստիկ, ՚յորմէ ստիպեալ վերադարձաւ և հասեալ ի Ղօռու գաւառ ի գիւղն Ցաղաքամալ մեռանի իւրով մահուամբ առանձնարանի իւրում. 1785 ՚յունվ. 31։ Զայս տեսեալ տռն խոհականի Միրզայ Ռէ-

բու Թագոյց ի զօրացն և ի մեծամեծացն զմահն. քանզի տեղին էր վրտանգաւոր և անապատ և գանձքն և ինչքն բազում. ուստի զհիւանդութենէն և ՚եթ զգացուցեալ՝ եղ զմեռեալ դին ի պատգարակ (քէջէվայ) և հասոյց անփոյթս առանց դիտելոյ ումեք ՚յԱսպահան ՚յառաջագոյն ազդեալ Բաղէր խանին ղայսմանէ. որ հետամուտն եղև ինքն զկնի նորուն Թագաւորել. եկն հանդերձ Միրզէ Ռէբին դիւան և դօրօքն և ամենայն ընչիւքն ամբողջ ի դուռն քաղաքին ի Բաղի ղուշխունն կոչեցեալ տեղին. փետր. 1. նստեալ անդ զաւուրս երկուս մինչ ամենայն գանձք և սպառք և կանայք արքունի առան ի ներքս ի բերդն. ապա յայտնեալ զդին մուծին ի ներքս և եդին ի հանգստարանի ի Թախտափօլատն ձայնեալ. և զկնի այնր տիրեալ Բաղէր խան փակեաց զդրունս քաղաքին և հրացանս կալեալ ընդդէմ զօրացն մինչև ցիր և ցան եղեն ամենեքեան։

Եւ թէպէտ այսպիսի խոհեմութեամբ տնօրինեաց Միրզէ Ռէբի, այլ սակայն դոյզն ինչ շշունչ առեալ Լաքառի անուանեալ զօրացն, մինչև զսթափիլ Բաղեր խանին ի զբաղմանացն զաւուրս երիս գործեցին գյոլով չարութիւնս ի քաղաքի անդ թէ ի տաճիկս և ի թէ հայս յափշտակելով զինչս ի շուկայից և ի տանց բազմաց հասարակաց վնաս մեծ հասուցեալ. մինչև Բաղեր խան ձեռնհաս եղև և սաստեալ ամենեցուն խաղաղացոյց. և տեսեալ եթէ հրաման իւր ներգործէ ի նոսա և հնազանդին ամենեքեան, առանց գիտութեան այլոց մեծամեծաց և զօրագլխաց Ալիմուրատ խանին՝ որ տակաւին կային ի կողմանս Թէհրանու միայն խորհրդակցութեամբ Միրզայ Ռէբուն նստաւ յաթոռ արքայութեան ի 3 փետր. բայց տևեաց զաւուրս երիս. քանզի Ջաֆար խան որդի Սադեխ խանի սպարապետն Ալիմուրատայ այն ինչ լուաւ ղայսմանէ, դարձաւ և ինքն յԱսպահան՝ յառաջագոյն յղեալ զփիշջանգըն իւր զԻսմայէլ խան որդին Սօջատի խանին՝ որոյ հասեալ ի Գեազ տեղին հինգ ժամաւ հեռի յԱսպահանայ, և Բաղէր խան ի մէջ երկուց աւուրց երիցս գունդ զօրաց եհան ընդ առաջ սոցա մարտիւ, այլ ամենեքեան պարտեալ դարձան յետս. և եհաս անդ նոյն ինքն Ջաֆար խան։ Եւ այն ինչ Բաղէր խան կամէր ինքնին ելանել պատերազմաւ առ նոսա և էր տակաւին ի տունն արքունի և զօրքն պատրաստ, յանկարծուստ հրացան լրացաւ ի վերայ իւր՝ յորմէ շփոթեալ փախեաւ և զօրքն ցրուեցան, և Իսմայէլ խան փիշջանգն Ջաֆար խանի եմուտ յԱսպահան քաղաք. և զկնի երկուց աւուրց ի յութն փետր. եմուտ և ինքն Ջաֆար խան և կալեալ զԲաղէրն ի թագաւորեալ տեղւոջէն և զընտանիսն և ըզՄիրզայ Ռէբին. և բազումս չարչարեալ եղ ի բանտի զաւուրս 73. և պահանջեալ ի նմանէ գանձս՝ կուտեաց բազում ինչ. և այսպէս զաւուրս ինչ ևս անցուցեալ սորա, լուաւ Մահմատ խան գազանն ներքինի եթէ մեռաւ Ալիմուրատ և մնացեալքն կան զմիմեամբք շփոթեալ՝ խաղաց գնաց զօրօք իւրովք ի վերայ Ասպահանայ. ըզսմանէ զգացեալ Ջաֆար խանն փոյթ ընդ փոյթ զօրս հանէր ընդդէմ նորա. այլ զօրացն առեալ ռօճիկս ելանէին յերեսաց նորա և ցրուէին յիւրաքանչիւր տեղիս։

Եւ իբրև ետես Ջաֆար խան եթէ ոչինչ օգտի. զօրքն ցրուին, և մնա-

ցորդքն Թշնամի ինքեան երևին, խորհեցաւ փախչել անկանիլ ի Շիրազ. ուստի ժողովեալ զգանձս և զինչս որչափ և կարէր՝ արար բեռինս տանել ընդ իւր, և հանեալ ի րանտէն զԲաղէրն և զՄիրզայ Ռէրին, ե տարեալ կացոյց ի դրան Շահմէջիդ կոչեցեալ մզկթին և ասաց ես դնեմ այժմ ընդ քեզ երդումն ե ուխտ կալնուլ այսուհետև սէր և բարեկամութիւն առ միմեանս ե լինել հաւատարիմք իրերաց և օգնական. և առ երեսս Թէպէտ խոստանայր Բաղէր խան պահել զնոսին անջրելի, և ասէր միամիտ լեր և անհոգ. զի ի գալ այսր Մահմատ խանին դաւեցից զնա և կալեալ տաց ի ձեռս քո, սակայն ծածկաբար պատրաստէր զզօրս զկնի ե աւարել։

Եւ այսպէս իբրև հաստատեաց դաշն ընդ նմա ե ել ի քաղաքէ անտի և 22 ապրիլի գանձիւքն ե ամենայն աղխիւք ե պարսիկ զօրօքն ե հեռացաւ իբրև ժամաւ երկու, առաքեաց Բաղէր զկնի զզօրսն՝ կապուտ կողոպուտ յամենայն ընչից զնա կացուցեալ՝ հազիւ ուրեմն Ջաֆարխան յիսուն արամբք ամենևին դատարկացեալ եհաս ի Շիրազ, որում և ընդդիմանայ որ ի նմա քաղաքապետ սէիդ Մուրատ անուն եղբայր Ալիմուրատ խանի չթողուլ ի ներքս, այլ ներհակեալ այլոց նախարարաց, ելանէ արտասուօք նորա և մուծանէ ի ներքս հնազանդեալ նմա գլխովին. և զամենայն ղկահ և զկարասի արքունական ե զգանձն յանձնէ բոլորովին։ Ուստի վերստին լցեալ Ջաֆար խանի ընչիւք ժողովէ զօրս բազումս առաւել քան զառաջինն և ըստ ամենայնի հաստատեալ պատուէ յարգանօք զսէիդ Մուրատն և ինքն դարձ առնէ կրկին յԱսպահան։

Ապա զկնի ելանելոյ Ջաֆար խանին յԱսպահանայ յերկրորդում աւուր հնչեցոյց զփողն և զմոնետիկն յանուն Մահմատ խանին՝ որ եկեալ մտեալ էր է քաղաքն. և փիշջանկն նորուն Ալիխան Խամսայի յառաւօտուն մտեալ էր յԱսպահան՝ յորում աւուր ելեալ իսկ էր Ջաֆար խան՝ որոյ զհետ ևս պնդեալ զօրօք հանդերձ, այլ ոչ ժամանեալ։

Եւ և 25 ապրիլի Մահմատ խան Ղաջառն հանդերձ երկոքումբք եղբարք իւրովք եհաս մերձ յԱսպահան ի տեղին՝ որ կոչի Բաղի դուշխուն. և Բաղերն ընդառաջեաց մեծաւ յարգանօք եմոյծ զնա ի ներքս փառաւորութեամբ ե նստոյց յաթոռ արքունի ակնկալեալ զի ե ինքն ընկալցի պատիւ փոխարէնի առաջի նորա։

Բայց ե՛կ տես դու այժմ զսոյն բռնաւոր Թշնամի՝ որ մինչ ի հեռաւորս էր, այնպիսի Թշնամի և խանգարիչ երկրին սոյնոյ գտանէր. իսկ որ այժմ կամովին ի ձեռս իւր նուաճեցաւ զի՞նչ ո՞չ ունիցի յառաջացուցանել ՚չարիս՝ զորն և կամեսցի։

Ձեռն էարկ զկնի երկուց աւուրց բռնաւորական հարկապահանջութեանց՝ ո՛չ որքան որ բնաւորեալ չարութիւն մարդոյ յառաջադրէ, այլ յաւէտ իմն գերազանցօրէն ո՛չ խնայեալ բնաւ զէթ յիւրն դենակից Թող Թէ դողորմելի քրիստոնեայ Հայսն. զոր ահա նկարագրէ սոյն անցից գրեթէ ականատես պատմիչ...

«Արդ զկնի երկուց աւուրց ըսկիզբն արար հարկապահանջութեան՝ որքան և կարէր չարութեամբ, եթէ ողորմելի քրիստոնէից՝ եթէ այլազգեացն. այնքան նեղութիւն վիշտք և չարչարանք և հարկապահանջութիւնս հասոյց, զօրս ո՛չ զօրէ գրիչն իմ վերս-

տին գրել զայն աղէտալի պատմութիւն՝ յոր իւրաքանչիւր անձինք կամաւն իւրեանց մեռանիլ լաւ համարէին քան թէ ցյալն կենդանի ի ներքոյ իշխանութեան նորա»։

Եւ յետ այսօրինակ տառապեցուցանելոյն զամենեսին, պարապեցաւ ի քննութիւնս ընչից անցելոց բռնաւորացն. և ունէր սոյն Մահմատ խան քոյր մի անդ դուստր Հասան խանի՝ որ լեալ էր կին Ալիմուրատ խանին սատակելոյ, և տեղեակ անծանօթ թանգագին պահեստից նորին ինքնին միայն՝ զորս յայտնեաց եղբօր իւրում. և նա եհան. որք էին այսոքիկ։

Մի արկղ փոքր լի մեծամեծ մարգարտօք՝ որոց մինն անցանէր քան զմեծութեամբ ձւոյ ճնճղկի՝ ընտիր և գեղեցիկ ընդ որ և արկեղք բազում, յորում գտան բազում զանազան ակունք պատուականք և մեծամեծք. և դրամք ոսկւոյ յոլով մինչև ցլիսուն լիտր. և յայլուր ես արկղ մի ականակուռ ոսկեայ պատեան զինուց բազմաց. ե արկղ մի ես կանացի ոսկեայ և մարգարտեայ զարդուց ե դայլ ինչս յոլովս. զորս բեռն բեռն կազմեալ յղէր յերկիր իւր։

Ապա սկիզբն առնէր արտաքին հարստութեանց տանն արքունի տանէ ի տուն յածեալ կողոպտէր զամենայն՝ որ հաճոյ թուէր իւրն աչահ սրտի թէ զանձք թէ զէնք և թէ մետաքսեայ և բրթեայ մեծամեծ ակումբք և ստորակավառք ե զայլ ամենայն որ հարկաւոր պատկանի արքունական շքոյ՝ այնքան, մինչև ըստ ամենայնի ապատակեալ զիշխանութեանն հանդէս հռչակաւոր քաղաքին Ասպահանայ իսպառ յղեաց յերկիր իւր, ընդ որս և զերկուս մանուկ որդիս Ջաֆար խանի և զմայրն իբրև գերի։ Հուսկ ամենայնի և ի մեծամեծացն և յերկրացւոցն ըզբազում ինչս բռնական իշխանութեամբ ստացեալ առաքէ։

Եւ այսպէս զրկողաբար կացեալ անդ մինչ ցտասն յունիսի. և ի մետասանին ելանէ անտի իւրովքն համդերձ և գնայ ի Աթշգահ կոչեցեալ տեղին, ղի ի վերայ Քէհրիզու անցցէ ի Փերիայ, այլ Լոռաց և Ջագայիրաց զօրք ելանեն ընդ առաջ զօրաց նորա տան պատերազմ սաստիկ ի 15 ամսոյս, և անկանին յերկոցունց կողմանց կոտորուած բազում, բայց ի վախճանի տկարացեալ փախչին՝ յորոց երևելի գլխաւորս ոմանս կենդանւոյն կալեալ սպանանէ ծարաւին ընչից ե արեան, և անտի ևս չուեալ ժամանէ ի Փերիայ. և նստի ի Սանկիփաբան անուանեալ գիւղն զաւուրս 27. և արար բազում չարութիւնս ի մերձակայ եօթեկին գիւղօրայսն կողոպտելով աւարելով զնոսա զամենեսին յամենայն ընչից և յապականութիւն դարձուցանէ զայս սահման՝ յորում էին և բազմութիւնք տանց հայոց յորոց և զբազում անձինս դերեալ ևս և ի տաճկաց։

Այլ ստէպ ստէպ ձախող լուր և համբաւ հասանէր յայսմիկ միջոցի առ նա ներհակ իւրն իշխանութեան և շփոթէ զնա, և բազումք ի զօրացն ևս ոմանք ապստամբեալ և ոմանք փախուցեալ՝ ցրուեցան ի տեղիս տեղիս, և ինքն փոքր զօրօք փութայ ժամանէ ի Թէհրան (յունիս) թողլով յԱսպահան քաղաքապետ զԲաղեր՝ որ զկնի ելանելոյ սորին հետամուտ պատրաստութեան զօրաց լինէր և այլ հարկաւորաց պատերազմի՝ կալ ընդդէմ Ջաֆար խանին։

Ապա լուր գնալոյ Մահմատ խա-

նին դէպ ի Թէհրան հասեալ յԱսպահան առ. Բաղէր խան՝ զարթոյց զնա՝ որոյ յայանապէս տեսեալ զպատրաստութիւն, ժողովեաց զբազում ինչս պիտոյից կերլեաց թէ ընդեղէն և թէ անասնեղէն՝ և զամենն եմոյծ ի բերդըն ի ներքսագոյն ամրոցն անառիկ՝ որ Ղալայի Թաբառուկ անուանէր՝ շինուած հաստատուն արդարև հոյակապ և յոյժ ահագին՝ երեք կարգ բըրգօք հաստատեալ. և յեօթներորդ աւուր օգոստոսի յառաւօտեան պահուն մտանէ Բաղէր խան երեք հարիւր եօթանասուն պատերազմական արամբք իւրովքն հանդերձ ի նոյն անմատչելի ամրոց. և փակեալ զդըրունսն ամրանայ անդ։

Այլ ի հասարակիլ նոյն աւուր հասանէ և Ջաֆար խան ի վերայ բերդին զօրօք իբրև քսան և հինգ հազարօք. ինքն նըստեալ ի Սաթապատ կոչեցեալ երևելի պալատանն՝ որ ի փոքր Շահապասէ շինեալ, և զզօրս իւր շուրջ զպաբսպաւն բերդին՝ որ էր արտաքոյ քան զքաղաքն. և մնան այնպէս զամիսս երիս. և (օգոստոս 16) ի սոյն միջոց ևս լուեալ Ջաֆար խան զապստամբութենէ և զփախստենէ զօրացն Մահմատ խանի՝ զուարճացեալ յանձն իւր հաստատուն յուսով պաշարէ զբերդն, այլ բարձրութիւն պարսպին և ամրութիւն հաստատութեանն եղեալ խոչ ումբաձգութեանցն ի ներքըս յամրոցն, տայ կազմել հանդիպակաց պարսպին բարձրագոյն բլուրըս ի հողոյ լցելոյ ի քուրձս և յայլ յարմար անօթս. և քարշեալ ի վերայ զթնդանօթսն, ձգեն ապա ուղղակի զռումբս ի մէջ ամրոցին յորմէ յոյժ նեղեալ ամրոցապահ զօրացն և յուսահատեալ և ձմեռն ևս ի վեայ հասեալ ետուն զբերդն. և զօրաց Ջաֆար խանին մտեալ ի ներքս ձերբակալ արարին զԲագէր խան և զեղբայրն և զառաջաւոր սպասաւոր նորին եթովպացի հաջի Ղամբար անուն տեղեակ թագուցեալ գանձուց և ընչից Բաղէր խանին, և կացուցեալ պահապանս ի վերայ ամրոցին, տարին զնոսա զերեսին առ Ջաֆար խան անարգանօք։

Տեսեալ Ջաֆար խանի զԲաղէր՝ ասէ. ունի՞ս ի մտի՝ թէ զինչ ասացի ցքեզ յաւուր ելանելոյ իմ աստի ի դրան մզկթին. այո՛ ասէ՝ և այժմ եմ պատրաստ. կրկնեաց Ջաֆար խան. մինչև ցարդ լինել պարտ էիր պատրաստ. և հրաման ետ կարճել զնա ի կենաց և էր 15 նոյեմբ. և ի վաղիւն սկիզբն արար որոնել քննել և յափշտակել զինչսն և զստացուածս Բաղէր խանի յեղբօրէ նորուն և յեթովպացի ծառայէն թէ անդ ի պահեստի եղեալսն և առ այլս և թէ յայլուր՝ զորս մի ըստ միոջէ գրէ նախկին հեղինակ պատմութեանս.

«Յորս գտին (անդ ի բերդին) գանձս անհամարս՝ եթէ զինուց թէ գանձուց և դրամոց և քարեղինաց, որոց ոչ գոյր թիւ. քանզի գտին ի բերդին չորս սնդուկս՝ մին մարգարիտ, մինն քարեղէն. մինն զէնք ոսկեղէնք և ականակուռք. և մինն ոսկեղէն և ականակուռ զարդս կանացի, այսինքն գինտս, մատանիս և այլ զարդս». և եհան ի բերդէն երիվարս երևելիս արքայավայել. յորոց միջի չորք կարի անուանիք սօսք և ահիպարանոցք յորոց վերայ առաւել ի զարմանս եղև և ուրախ Ջաֆար խան քան ի վերայ այլոցն.

Եւ ի վերջոյ ևս կարի ստիպեալ զեթովպացին՝ եցոյց և զայլսն ամենայն, յորոց մի ի Խորասական գիւղն ի պալատի նորին Բաղէր խանի ի ներ-

քոյ Քեօլաֆռանկիին՝ զոր քանդեալ գտին հարիւր կիւկիւմ ոսկի դրամ իւրաքանչիւրն թումանանոց և կշիռ բոլորիցն հազար երեք հարիւր լիար Դավրիժոյ. ե քսան բեռն գրաստու արծաթեայ դրամ ե զայլ ինչ բազումս. և տասն արկղ արծաթեայ սպասք տանն արքունւոյ·

Եւ ի վախճան ամենայնի ետ քակել զամրոցն միջնաբերդ ընդ երկրի հաւասարեալ. նոյեմբ. 24։

Այլ ի գալ յայս նուագ Ջաֆար խանին յԱսպահան, յառաջագոյն յըղեաց ի Քաշան քաղաք զԻսմայէլ խան անուն ոմն Ջանդազի արար կոչեցեալ զօրօք բազմօք փախուցանել անտի ըզՍլեհման խանն. (քանզի ի գնալ անդ Մահմատ խանին ըմբռնեալ էր զԱւրօլռզայ խանն նոյն քաղաքի և յափշտակեալ զինչսն՝ զոր միանգամ կարաց տալ բերել ի յայտ, և ի կասկածելն ես եթէ բազում են քո գանձք՝ էարկ ի վերայ նորա տուգանս 35000 թուման, զքսան և եօթն հազարն ստացեալ ինքնին, կացոյց վասն ութն հազարին անդ ոստիկան զՍլէհման խանն Ղաջառ, արկեալ զԱւրօլռազայ խանն ի բանտ) և գնացեալ փախոյց անտի զՍլեհման (Սուլէյման) խանն, զբանտարկեալն զԱւրօլռզայն առաքեաց առ Ջաֆար խանն յԱսպահան. զոր ընկալեալ Ջաֆար խանի՝ պատուով վերադարձայց յիւրն քաղաք ի Քեաշան՝ պատուէր տուեալ գնալ անտի ի Ղում. և հալածել զՂաջառ և զՂարակեօզլի զօրսն Մահմատ խանի՝ զոր թողեալ էր անդ նա ինքն Մահմատ խան.

Ցաւուրս յայսոսիկ առաքեալ էր Ջաֆար խան և զայլ Իսմայէլ խան անուն ոմն ի Համադան ՋԲ արամբք նուաճել զերկիրն որ յառաջագոյն ընդ իշխանութեամբ Քէրիմ խանի էր. և գնացեալ անդ՝ եդիտ զյոլով գանձս զոր կանխաւ Ալիմուրատ խանն էր առաքեալ անդ ի պահեստ՝ գոլով և ինքն ի նոյն գաւառէ. որոց ամենեցուն տիրեալ Իսմայէլ խան՝ հարստացաւ որոյ վասն և ապստամբեալ ի Ջաֆար խանէ եղև համարձակ թշնամի նմին։

Իսկ Ջաֆար խան տիրեալ Ասպահանայ՝ և լուեալ զվտարանջիլն յիւրմէ Իսմայիլ խանին, գրեաց առ զօրսն իւր՝ որ ընդ նմա. եթէ ոք կամիցի դիս եկեսցէ առ իս, և եթէ զդա, մնասցէ առ դա՝ մինչև առցէ զվրէժ և զհաւուցումն իւր։

Եւ զկնի այսր, դեկտ. 6, յետ անցանելոյ աւուրց տասն ել և ինքն զօրօքն իւրովք գնալ ի Համատան ի վերայ ստամբակին՝ թողեալ յԱսպահան քաղաքապետ յՌէխս Մուրատ խան եղբայրն սէիդ Մուրատ խանի։

Սոյն այս լուր հասեալ առ Իսմայէլ խան սասեցոյց զնա, այլ եդիտ հնարս. միաբանեցաւ ընդ Ալի խանին Խամսայու՝ որ էր այր յառաջադէմ և քաջասիրտ ի մարտի և էր ընդ իշխանութեամբ Մահմատ խանին. միաբանեցոյց և զԽոսրովխան Մքրոյն այր ինքնագլուխ գաւառապետ և բազմազօր. սոքա երեքեան գլխաւոր իշխանք զօրապետք երևելիք միաբանեալ ի մի կամս գան տալ պատերազմ ընդ Ջաֆար խանի՝ որ էր յայս միջոց ի Համադան. զի Իսմայէլ խան խոյս տըւեալ անտի յերկուց աւուր ճանապարհ հեռի ընդ նոսա ի միաբանութեանն խորհրդի կայր։

Եւ ճակատքն երկոքին հասեալ առ միմեանս մերձ ի Համադան ի թուին 1786. ի տասն փետրվարի խմբեն ըզ-

պատերազմն և յանդուգն յարձակին ի վերայ իրերաց իբրև գազանք կատաղիք արեան ծարաւիք. անդ էր տեսանել շուինդն անհնարին և ահեղակոչ ձայնքն նիզակաց, զինուց, ասպարաց առ միմեանս բաղխելոց սարսափելի որոտմամբ՝ զօրհաս մահուն յիրերաց վերայ փութացուցեալ. մինչև տալ կարծել ոմանց՝ եթէ են ձայնք մեծամեծ լերանց բաղխելոց յիրեարս յերկրասաստ շարժմանէ. ուստի և անկանին յերկուց կողմանց բազումք՝ արեամբ զերեսս երկրին դունագեղեալ և դիակամբք քարակարկառ յօրինեալ. ուր ղառաջինն յաղթէ Ջաֆար խան. այլ յայն նուազ ապստամբեալ ոմանց Լաքարի անուանեալ զօրաց, տկարանայ. և այն ինչ թիկունս թշնամեաց դարձուցանէ ի քաջալերել զնոսա, կարծիս առնուն զօրք եթէ վէրս ընկալեալ յետս չոգաւ. իսկոյն և ինքեան փութան ի փախուստ. ղայն տեսեալ թշնամեաց յարձակին քաջասրտութեամբ ի վերայ նոցա և զրաւեն զողջոյն զբանակն. և զհետ պնդեալ կալան զհետիոտսն, էր որ ի սայր սուսերի սպանին, և էր որ վիրաւոր և անզէն կապուտ կողոպուտ թողին ի բաց. իսկ հեծելոցն ցիր և ցան եղեալ փախեան թափառական երկարեալ մարտին իբրև ժամս ԻԸ։

Զայս անակնունելի վտանգ տեսեալ Ջաֆար խանի՝ իսպառ լքաւ անկաւ ի յուժոյ և թուլացան քաջաջերմ ոգիք զօրութեան անձինն. վասն որոյ և ստիպէ զինքն հասուցանել ձգել յԱսպահան քաղաք մինչ տակաւին կայ ողջանդամ. և զի մի նախ քան զիւր գնալն անդր լուր կոտորածին հասցէ և քաղաքն շփոթեալ՝ այլ իմն վտանգ ինչ յառաջասցի. և զկնի երկուց և երից աւուրց ցրուեալ զօրքն հետզհետէ ժողովին առ նա, և հազիւ երկոտասան հազար հեծեալ զօրօք ի 15 փետրվարի մուտ առնէ յԱսպահան՝ նախ քան զինքն երկու աւուրբ յառաջ լուրն հասեալ անդ։

Եւ վերստին սկիզբն առնէր պատրաստութեան զօրաց և դայլին օր աւուր զօրքն փախստական և ժողովէին առ նա. և նա տայր առատապէս տուրս ռոճկաց. քանզի էարկ ի վերայ երկրին հարկ ամենայն պիտոյիցն պատրաստութեան։

Ի սոյն յայս միջոց լուր նուաճութեան Ջաֆար խանի հասեալ առ Մահմատ խան, փութանակի պատրաստէ զՄադհօսէին խան զորդին Բաղէր խանի՝ զոր ընդ իւր տարեալ էր ի Թէհրան, առաքէ ի Քեաշան տիրել զնա. և անցանել յԱսպահան լինել անդէն քաղաքապետ, այլ նախ քան զնա՝ ժամանեալ էր յԱսպահան Ջաֆար խան և տիրեալ ըստ առաջնոյն. ուստի մնայր ի Քեաշան և իշխէր անդ։

Ցայսոցիկ ամենեցուն յայտնի երևի թէ՝ զի՞նչ ոչ կրէր վիշա, նեղութիւն, հարկապահանջութիւն, երկիր իշխանութեանց սոցա թէ թուրք և թէ հայք։

Քանզի ի սոյն յայս համառօտ ժամանակի, Ջաֆար խանն ի յԱսպահան, Մահմատ խանն ի Թէհրան. և այնուքիկ երեք միաբանեալքն Խոսրով խան Մքրին, Իսմայէլ Խամսային և Ալի խան (որք թշնամացեալ ընդ միմեանս յարեան ի վերայ իրերաց վասն մեծութեան և աւարի բանակին Ջաֆար խանի, յորս Խոսրով խան հզօր գտեալ կալնու զԻսմայէլ խան և կուրացուցանէ զնա. և ընդ Ալի խանին մարտ եդեալ՝ մուծանէ զնա ի ներքս ի բերդն Համադանայ և պաշարէ) ի կողմանս

Համադանայ գլուխ ամբառնայլին ի վերայ միմեանց իշխել և թագաւորել։

Եւ Ջաֆար խան օր քան զօր հաստատեալ ըստ առաջին զօրութեան, զՀաջի Ալի Ռզա խան Քաղռանի անւանեալ սարդար արարեալ տայ զօրս նմա և այն ինչ հանէ զնա ի քաղաքէ անտի ուղևորել ի Քեաշան ի տիրել անդ. և զՄադ Հիւսէյինն ձերբակալ առնել և յղել առ ինքն, համբաւ հասանէ՝ թէ Իսմայէլ խան Զանդաղի արաբն և հօրեղբօրորդին իւր Մահմատ Հիւսէյին խան Զանդաղի և այլ ևս գըլխաւոր իշխանք ոմանք ապստամբեալ և թշնամացեալ ահաւասիկ գան տասն հազարաւ և մերձեալ իսկ են իբրև իննն ժամաւ հեռի, ի վերայ Ջաֆար խանի. և այսպէս պահէ ի պահ, ժամ ի ժամ և օր յաւուր սաստկանայր համբաւն. և Ջաֆար խան շփոթեալ անհնարին տարակուսանօք ի մի կողմանէ պատրաստութիւն զօրաց տեսանէր. պատրաստէր և յարդարէր ամենայն պարագայիւքն և ի միւսոյ կողմանէ զծանրութիւն գանձուց և ընչիցն շտապ շտապ ի Շիրազ առաքէր։

Զգէր այս համբաւ մինչև ցաւուրս իննն. և թէպէտ չէր իսկ սուտ, չէր այլ ևս դատարկ. քանզի գալուստ նոցա ի վերայ Ջաֆար խանի ոչ յիւրեանց ինչ արիացեալ հանդիսանալ յաղթութեամբ իւիք, այլ ի թելադրութենէ իշխանաւորաց ոմանց Ասպահանայ և այլ քաղաքաց, այլ և ի Մադ Հիւսէյին որդւոյ Բաղէր խանի, որպէս զի լուեալ զգալստենէն Ջաֆար խան և շփոթեալ աճապարեսցի ի փախուստ՝ կալցեն զնա, քանզի ծանոյց իւրն Ալիղուլի խան սարդարն (որ յայն աւուրսն ելեալ յԱսպահանայ դիմել ի Քեաշան) եթէ՝ մի գուցէ փախնուցու այտի. զգոյշ և արի լեր. զի մեք ամենեքեան մտանիմք ի սուր սուսերի. այլ քաջալերեալ կաց դու այր սրտեայ. և ես սիրտ առեալ հանդերձ զօրօքս այսոքիւք յաղթեցից նոցա Աստուծով։

Զայս լուեալ Ջաֆար խան փոքր ինչ ոգի էառ և արիացաւ. և վերստին յղեաց զօրս յօգնութիւն նոցա, որք միացեալ ի 25 մարտի տուեալ էին պատերազմ ընդ նոսա և զբազումս յերկիր կործանեալ, և զոմանս մեծամեծս հանդերձ թիկնապահ արամբք նոցին ձերբակալ արարեալ յղեալ էին յԱսպահան. և գոլով ի սոյն պատերազմի ի կողմն նուաճելոց Միրթալիբ խանն հինգ հարիւր արամբք առաքեալ ի Միր Մահմատ խանէն Խոքասանու յօգնութիւն նոցա, ի փախուստ առնուլ ճակատուն իւրեանց, աճապարեալ զօրօք իւրովք անկեալ էր ի բերդ ինչ մերձ ի Գուլնաբաթ. և Ալիղուլի խան զկնի պնդեալ պաշարեաց զբերդն մինչև զաւուրս երիս. որոց երկուցեալ ի մահուանէ՝ պատգամ յղեն արտաքս՝ եթէ առանց իւիք վնաս թողուք զմեզ, չեմք մեք թշնամի, այլ ծառայք Ջաֆար խանի, առ որ պատասխանի առնէ Ալիղուլի երդմամբ և իջուցեալ անտի առաքէ առ Ջաֆար խան, գրելով և զերդմանց. այլ նա ոչինչ անսացեալ՝ կողոպտէ զնոսա ի զինուց և յամենայնէ, և բաշխէ զաւարն ցՆաքառի զօրսն իւր. ապա զկնի աւուրց ինչ հասեալ անդր Ալիղուլի և տեսեալ զիրսն ամբոխի սաստիկ. և ի 1 ապրիլի ի գիշերին առեալ զզօրս չուէ գնալ բարկութեամբ դէպ ի Շիրազ և ի Քաղռանի տեղի իւր։

Իսկ յետ այսր ամենայնի զկնի աւուրց վեցից լուր էառ Ջաֆար խան՝ եթէ ահա Մահմատ խան զօրօք բազմօք փութացեալ գայ ի վերայ իւր և ունի

ճանապարհս իբրև աւուրց երկուց մր-տանելոյ յԱսպահան. և ինքն ևս փոյթ ընդ փոյթ կազմեալ գունդս զօրաց ընդ դէմ նմին հանէ՝ մինչև զիւրսն հոգասցէ կամ ի պատերազմ կամ ի փախուստ. և իրազգած եղեալ եթէ չունի զդէմ ունիլ յարձակման նորա, պատրաստէ զինքն և զբոլոր զօրս անձնական հաւատարիմսն հանդերձ տամբք, կահիւք և կարասեօք պատճառեալ ելանել ընդդէմ նորա. և ի զօրացն ևս լուեալ զպատասխանի չպատերազմելոց՝ ի 9 ապրիլի ի մէջ գիշերի հապճեպով ժողովեալ զիւրսն ամենայն ելանէ յԱսպահանայ և գնայ փախստական ի Շիրազ։

Իսկ ի միւս աւուրն մտանէ անդր Մադ Հիւսէին խան հրամանաւ Մահմատ խանի քաղաքապետ փոխանակ նոր իւրոյ Բաղէր խանի սպանելոյ ի Ջաֆար խանէ։ Եւ ի 11 սոյն ամսոյ Մահմատ խան հանդերձ եղբարբք իւրովք և բազում զօրօք, ևս և Թիւրքման ազգաւ եկեալ՝ մտանէ յԱսպահան մեծաւ փառաւորութեամբ՝ ընդ առաջ նորին փութալով բոլոր մեծամեծաց քաղաքին ի պատուասիրել զնա յայն նուագ իջուցանեն ի Սաաթապատ կոչեցեալն պալատի արտաքոյ քաղաքին և ի վաղուեան աւուրն՝ որ էր կիւրակէ, մուծանեն ի ներքս ի քաղաքն, և գնացեալ նստի յարքունական գահս. և օր աւուր ցուցեալ զառաջին ախտն իւր ագահութեան՝ հանէ հարկահանս և տառապեցուցանէ զբնակիչսն բռնաւորն անողորմ։

ԺԷ. ՎԱՐՔ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԴԱՐ ԱՌԿԱՅԻՈՅ

Երէցս երանեալ և գերերջանիկ և շնորհալի հայրն մեր Յոհաննէս՝ էր ի գաւառէն Մոկաց ի գեղջէն Գետեղերանց. ի սեռէն Պօղոսեանց, ծնեալ ի ՌՃԿԲ. 1716 Թուականութեանս հայոց... ապա հրաժարեալ յաշխարհէ և դիմէ ի Լիմ սուրբ Անապատն յաւուրս վանահայրութեան Յակոբայ Արքեպիսկոպոսի Տէնօյեանց վանեցւոյ...

Ի սխս քսան և հինգ ամաց հասակին իւրոյ արժանանայ քահանայական աստիճանի կուսակրօն վարդապետութեան... հասանէ խաղաղութեամբ ի սուրբ Երուսաղէմ ի Թուականութեան հայոցս ՌՃՂԷ 1748. ի նոյն ամի ի 17 յուլիսի շղթայակիր Գրիգոր պատրիարգ տայնմա գգաւազան ծայրագոյնութեան ի վանս սրբոյն Յակովբայ... էր սա Յոհաննէս մեծիմաստ վարդապետն 32. ամաց յընկալնուլն գգաւազանն իշխանութեան, յետ միոյ ամի յամելոյ ի սուրբ Սաղիմ. ե յետ վախճանի Գրիգոր երանաշնորհ պատրիարգի վերադառնայ ի Լիմ... և սկսանի գեր քան զառաջին տալ զանձն ի խստաբեր վարս ճգնողականս՝ պահօք և աղօթիւք, և հաճոյական հայցուածովք յաւելանի ե ես ի շնորհս հոգւոյն սրբոյ, մինչգի որպէս յիշեցաւ ի վեր՝ առանց ուսման՝ հմտացաւ Պրոկղի շաղկապմանց, և այլոց փիլիսոփայից և լուծմանց նոցին, նա և ըդԴիոնէսիոսի Աստուածաբանութեան գիրս մեկնէր քաղցր վարդապետութեամբ, թարց սխալման. և յատենաբանութիւնս քարողից իբրե քաջ հռետորս՝ յորդառատ բղխմամբ. ըստ քառավտակ իմն գետոց ոռոգանէր զանդաստանս բանեղէն երկրի, սրտից ե հոգոց հաւատացեալ ժողովրդոց.. ըստ բերմանց դառնութեան ժամանակին ի սաստիկ նեղութեանց, սկսաւ սուրբ Անապատս ծանրանալ ընդ բեռամբ պարտուց յոլովից. վասն այսորիկ հարկ եղև ի վերայ Յոհաննէս վարդապետին, գնալ ի կողմանս Ալաշկերտու այցելութիւն առ ազգս հայոց ի Թուականիս մերում ՌՄԳ 1754 և անտի նորընտիր կաթողիկոսին Աղեքսանդրու երկրորդի դիպեալ գնացին ընդ նմա՝ ի սուրբ Աթոռն Էջմիածին. ի նոյն ամի ի մարտի 6 ի յօծանել զնոր կաթողիկոսն ներկայ գտեալ սորա... գայ լի արդեամբք ի սուրբ անապատս, ե ազատէ ի ծանրութենէ պարտուց. ե ուրախութեան ոչ սակաւ պատճառ լինի սրտից խղճալի միաբանութեանս։

Ի ՌՄԴ 1755 Թուականիս. եղև մահտարաժամ սաստիկ յոյժ ընդամենայն երկիր. որոյ աղագաւ բացաւ մեծ սուրբ Նշանն տէրունական, փայտն կենաց բերեալ ի Հոփփսիմեանց, որ ի վանեցւոց աւագ սուրբ Նշան ասի և Վարագայ խաչ ձեռամբ Գրիգոր եպիսկոպոսի առաջնորդին Վանայ.. յայսմ կոտորածէ տասնհազար անձինք ի հայոց

մեռան և քանհազար ի տաճկաց յատուկ հաշուեցուցակաւ... Եւ այնպիսի գձրի պարգեւս Աստուծոյ շնորհելով գնայ ի կողմանս Մարաց ի Շատախ, ի Բարմայ որէ Աղբակ, ուր է շնորհաձիր շիրիմ, և մեծահռչակ վանքն սրբոյն Բարդուղիմէոսի Առաքելոյն, ե անդ ձմերէ առ բարեպաշտ իշխանն Պետրոս... Այլ ի տեսանել զգերահրաշ սուրբ վանքն քայքայեալ, ե զսիւնս խախտեալ՝ ի վայր թօթափեալ. ե զբոլոր որմունս ի ստորև սուզեալ. կրկին կաթողիկէից նշմարանք ոչ երբէք մնացեալ. ի խոր խոցի ի սիրտ և յոգի. որպէս և ինքն իսկ բանիւ բերանոյ իւրոյ պատմէր ասելով. «Թէ յորժամ տեսի յայսպիսի վիճակի զնոյն սուրբ ուխտն ի խոր խոյեցայ. խաւարեալ աչքս ծով արտասուաց եղեալ և որրիչ հոսանաց ոչ ոք էր. ցամաքեալ այտիցս ի տոչորմանէ սրտիս սիրոյս սիրակից բնաւ ոչ ոք էր։ Այլ միայն կայր ես և իմս՝ որ ընդ իս, նա և իշխանն Պետրոս, որ էր ինձ թև. և օգնէր իբրև որդիս...

Այլ որդ ի բաց թողեալ մեր զայս ամենայն յոյս ունելով զԱստուած, և զսուրբ Առաքեալն լինել մեզ զօրավիգ, ձեռն արկաք և սկսաք շինել Աստուծով հանդերձ. Թէ և ձեռնունայն գոլ ոչ ինչ ունէաք. բայց կամեցողն բարեաց, որ կամեցաւ զօրհնութեան գործն զայն՝ զոր սկսաք, այնքան առատացոյց զինչս և զստացուածս, մինչզի ի վեր էանցնաքան զթիւսն. Նաև շնորհօքն Աստուծոյ ամենաղեղուն և առատապէս լցաւ շտեմարան ցորենոյն վանիցն, դատարկ էր, և ևս այլ բազում նշանս և հրաշագործութիւնս ներգործեցաւ ի սուրբ տապանէն. քանզի մի ոմն հիւանդ մերձ ի մահ հինգ աւուրս մնաց այնպէս անշունչ. և ապա եբաց զաչսն ե ասաց՝ Թէ սրբազան Առաքեալն դարձոյց զիս ի մահուանէն։ Եւ դարձեալ սափորն լի ջրով՝ զոր գործավարքն հանեալ էին ի վեր առ ինքեանս ի գլուխ կաթողիկէին, անտի ի վերուստ ի վայր ի յատակս յերկիր անկաւ և ոչ բեկաւ. նա մանաւանդ և ոչ կաթիլ մի ջուր վայթեցաւ։ Այլ և անկաւ ոմն ի գործաւորաց ի բարձրութենէ անտի ի յատակս եկեղեցւոյն, և բնաւ ոչ վնասեցաւ։ Դարձեալ ի յետին աւուրն՝ յորժամ զկազմեալ մեքենայն մեծ կաթողիկէին քակէին, մէզն և մառախուղն զբոլոր եկեղեցին պաշարեալ պատեաց. յորոյ ի մթնատեսակ շամանդաղէն ոչ երբէք կարէին տեսանել ճարտարապետքն զգործսն զի քակեսցեն. ուստի և մնացին տարակուսեալ. այլ յանկարծակի եղև սաստիկ հնչիւն և ցայթեալ ճառագայթեցաւ լոյս պայծառ ի սրբոյ գերեզմանի խորանէն. և լցաւ տաճար լի լուսով. ուստի և զարմացեալ ամենեցուն փառս ետուն Աստուծոյ և Արարչին համայնից. և այլ բազում նշանք կատարեցան ի սրբոյ Առաքելոյն շնորհապարգև տապանէն։

Էր երանելոյս այսմիկ Յոհաննէս վարդապետին եղբօր որդի մի Եղիազար անուն, որ ունէր միտս հրեղէնս. զի ի միում աւուր յարձակման ժամէն մինչև յերեկոյին ղպատարագի խորհուրդ իսկըզբանէ նորա մինչև ցվերջն ի բերան էառ. և առանց վերահայեցողութեան ի գիր ետ զհամար անսխալ. Նոյնպէս և զաւագ ուրբաթի կտակն զ'ի ճաշու գիրքըն դըրեալն, լաւապէսի միտ էառ յետ ճաշու ժամուն. և ի նոյն գիշերի ի խաւարի ատենաբանեաց համարձակ, որ և բազում աշխատանս կրեաց ի շինութեան կաթողիկէին, որոյ և ժամանակ կենաց հասեալ փոխեցաւ յայսմ ամի ՌՄԵ. 1756 ի սեպտեմբերի ամիս առ

քրիստոս զարմանալի իմն մահուամբ զարմացուցանելով զանողսն. քանզի իբր ի վերուստ ազդեալ՝ հոգետես լինելով առ. փոխումն իւր, սկսաւ իբրև զ՚ի յօտարութիւն գնացող ամենեցուն բարեաւ մնասջիք ասել. և ներումն խնդրել, առ. որ կատարելով բանն իմաստնոյն՝ թէ իմաստութիւնն յելս ճանապարհաց գովի. և ապա ուղղեալ զձեռքն յարևելս կոյս՝ ասաց՝ յիշեա տէր զհոգի իմ. և նոյն ժամայն աւանդեաց դհոգին իւր առ. Աստուած։ Ուստի և յանուն սորա յաւուր երրորդի օծաւ մեծ կաթողիկէի գլխոյ խաչն։

Իսկ ի միւս ամին.. ՌՄԶ 1757 իբր վերայ հասեալ անօրինացն թալանեցին զսուրբ վանքն և զերկիրն ամենայն. վասն այսորիկ և կիսակատար մնաց սակաւ ինչ շինութիւն վանիցն, այլ յաջողութեամբն Աստուծոյ մինչ ի ՌՄԸ 1759 ամին էառ զկատարումն շինութիւն։ Ի յաջորդ ամին շինեաց և դարպաս եկեղեցւոյն ի պարծանս ազգիս հայոց...

Իսկ ի ՌՄԺԲ 1763 թուին շինեցաք զՎանայ քաղաքի Այրարուց եկեղեցին։

Շինեցաք և ի սոյն ամի զՔաջբերունոյ որ է Արճիշոյ եռայարկ տաճար սաքաձև և գմբէթայարկ հանդերձ ժամատամբք. և բազում աշխատանս կրեցաք թէ ի յԱյրարուց ժամատաննն և թէ ի Քաջբերունոյ եկեղեցեացն հանդերձ աշակերտօք իմովք Ստեփաննոսիւ և Սիմէօնիւ վարդապետօք, որոց տացէ տէր վարձս բարին ըստ վաստակոց նոցա...

Այլ և ի թուին ՌՄԺԴ 1765 շինեցաք զՀոգոց վանից կաթողիկէն բազում աշխատութեամբ վասնզի քարինս ի Շատախու բերաք. ի հիմանէ մինչև ի գագաթ ոչ մնաց քար որ ոչ դամեցաւ. այլ ամենայն երկաթագամ և կապարակապ ամրութեամբ կազմեցաւ՝ նա և բոլոր պարիսպն ի հիմանց նորոգեցաւ ամենևին կրաշաղախ ամրութեամբ. և գեղեցկապէս քարագարդ յօրինմամբ կառուցաւ։ Իսկ շինութիւն պարսպին սակաւ ինչ մնաց թերի. վասն երթ և եկ բազմութեան հարկապահանջ անօրինաց, որ կեղեքէին զմեզ անխնայապէս և չարչարէին։

Ի թուականիս ՌՄԺԵ. 1766 շինեցաք զքարեայ դարպասն սրբոյ Անապատիս ի վերայ չորից սեանց...

Ի թուին ՌՄԺԷ 1768 շինեցաք զՔաջբերունւոյ Ականց գիւղի եկեղեցին հանդերձ ժամատունով. և յոյժ ուրախութիւն եղև ժողովրդեան և հաւատացելոց։

Ի թուին ՌՄԺԸ 1769 շինեցաք զՎանայ Հայկավանից եկեղեցին, որոյ վասն և բազում նեղութիւնս կրեցաք. ի յանօրինաց և ի բիրտ և յրուիշտ ազգէս հայոց. և մինչև ի վերջ ոչ գտաք զխաղաղութիւն. և ոչ ազատեցաք ի վշտաց. և մինչև ցաշուն այսպիսի տառապանօք կայաք։ Գերահրաշ սուրբ եկեղեցիս որ յանուն սուրբ Աստուածածնի կառուցեալ. բազում հրաշս արար ի շինութեանս այսմիկ, յորոյ մինն է այս զարմանալին, զի մեծ փայտ մի ի վերուստ վայր անկաւ ի վերայ գլխոյ առն միոյ. և ոչ վնասեցաւ։ Այլ աստանօր հետ պատմութեան ճառիս. գրիչս մեր ի բանս աղէտից դարձցի. քանզի երանելի հայրն մեր՝ յետ շինելոյ զայս եկեղեցին.. անկաւ ի հիւանդութիւն.. և ի հասանիլ մինչ փետրվար 4. փոխեցաւ առ անձկալին իւր Քրիստոս։

ԺԲ· ՅԱԿՈՎԲ ԴՊԻՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԺԱՆԻ ԵՒ ՍԱՐՍԱՓԵԼԻ ՄԵԾ ՍՈՎՈՑՆ, ՈՐ ԵՂԵՒ Ի ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ԵՒ Ի ՇՐՋԱԿԱՑ ՆԱՀԱՆԳՍ ՆՈՐԻՆ.

աւա մարգարէն Մովսէս յորժամ հրամանաւն Աստուծոյ գնաց յԵգիպտոս, վասն պատժելոյ զՓարաւոն և զազգն նորին, տասն մեծամեծ հարուածովք եհար զԵգիպտոս, և զընտկիչս նորա։

Ըստ այնմ օրինակի պատահեցաւ Տիգրանակերտ քաղաքի և նահանգաց նորա, վասն մեղաց ազգի մարդկայնոց. յորժամ ամենայն ոք թիւրեաց զճանապարհս իւր, ե առհասարակ հեստեցան ի պատուիրանացն Աստուծոյ և խոտորեցին զսիրտս իւրեանց՝ առ. ի չանսալ օրինացն նորա, ե չլսել ձայնի նորա, վասնորոյ ի պատիժ ապստամբութեան նոցա բարկացեալ սրտմտութեամբ տէր Աստուած առաքեաց զսով յանձինս նոցա, ե զամենայն զօրութիւն հացի եբեկ։

Քանզի ի թուականութեանս Հայոց ՌՄՀ 1757 յամսեանն նոյեմբերի, հընչեաց հողմն սաստիկ հիւսիսային, կծու ե ցրտաբեր, որ իսկոյն սառուցեալ պաղեցոյց զամենայն երկիրս, ե օդն խռովեալ ե պղտորեալ իբրե զծով ալեկոծեալ, ե սկսաւ ձիւնել. ե տեղացեալ ոչ իբրե զձիւն, այլ ամենեւիմբ նման փոշւոյ ծածկեաց զերեսս երկրի. ե օր աւուր խստացեալ առաւելաւ ցուրտն. մինչ զի մեծ գետն Տիգրիս սառուցեալ պաղեցաւ, յորոյ վերայ զաւուրս Խ 40 կարաւանք և ճանապարհորդք բեռամբ և դրաստիւք երթեեկս առնէին։ Վասնորոյ որ ինչ գտանիւր թէ դինի և թէ քացախ և այլ սոյնպիսի իրք գինայինք սառուցեալ պաղեցան և աւերեցան. և յաղբերացն ոչ ոք կարէր բերել ջուր. զի ճանապարհին ընդ բերելն սառէր. և յօդէն միշտ հոսէին սառուցեալ գոլորշիք իբրև զբուրդ գղեցեալս ահարկու տեսողաց. և ի գիշերին ոչ ոք կարէր ջեռնուլ ի ներքոյ անկողնոյ,

թէպէտև բազում ձորձովք ծածկէին, և ընդ զարթնուլն տեսանէին զի երեսք անկողնոյն սառուցեալք էին վասն սաստկութեան շնչոյն։ Ուստի ամենայն արուեստք և գործք խափանեցան. ոչ կարէր ոք ելանել արտաքոյ շինութեանց ե բնակութեանց վասն սաստկութեան ցրտոյն ես յահէ գայլոց, որք կատաղեալ ուտէին կենդանի մարդ։ Եւ վասն այսմ սաստկութեան ցրտոյն ամենայն պտղատու ծառք և տունկք զօսացեալ չորացան, և այսպիսի նեղութեամբ և տառապանօք էանց ձմեռն այն. բազումք աղքատացան, և չքաւորաց՝ վասն չունելոյ զածուխ և զփայտ ե զհանդերձս ծածկութից՝ պաղեցեալք չորացան և մեռան։

Եւ ի փոխել Թուականիս ՌՄԻ, և ի հասանել ի մարտի ամիսն, և յեզանակրս գարնանայինսն, թուլացաւ պաղն, բայց որպէս ի ժամանակս Եղիա մարգարէին եղեն ի վերոյ երկինք պղնձի ե երկիր երկաթի. նոյնպէս և եղև երկրիս այսմիկ։ Քանզի եղև երաշտութիւն անձրևի, որ յայսմ գարնան բնաւ ոչ տեղեաց անձրև կամ ցող յերկնից, մինչ ի սաստիկ չորութենէ երկրին սկսան ցամաքիլ ի բնէ և վաղեմի բղխեցեալ մեծամեծ աղբիւրք։ Վասնորոյ ամենայն ազգք ըստ ծիսի և օրինի իւրեանց կացին յաղօթս առ Տէր պաղատանօք. այլազգիքն ելեալ արտաքոյ քաղաքին հետիոտս ամենայն մեծամեծօքն իւրեանց և քրիստոնեայք յեկեղեցիս. մինչ մեղքն մեր դիզացեալ և բարձրացեալ կայր ընդ յերկինս իբրև զամբ մթագին և որպէս զմէգ մառախլապատ. ոչ եղեն լըսելի աղօթք մեր անարժանից, և ոչ լուաւ Տէր գոչման և հեծութեան նոցա. այլ փոխանակ քաղցրութեան ետ հրաման սաստիկ մարախոյ, որք իբրև զսպառազինութիւն անթիւ զօրաց՝ գոյացեալք ի մերձակայիցն Նինուէոյ, ծածկեցին զամենայն դաշտս և զգաւառս, և կերեալ զամենայն արտօրայս և զբոյսս դալարս, և ընդեղինաց, և հասին ցմեծ դաշտն Մերտինոյ, որ ըստ Այլազգեաց բարբառոյ Զօլ վերաձայնի։ Եւ այնքան բազմութիւն նոցա, որ ընդ բարձրանալն յօդս՝ իբրև զամպ մառախլապատ կալնուին զշառաւիղս արեգական որ թուիւր թէ մթացուցանէր որպէս զգիշեր՝ զմիջօրեայն, և ի թառելն նոցա ի վերայ երկրի՝ ծածկէին զամենայն երեսս գետնոյն իբրև զձիւն թանձրացեալ թզաչափ մի և այլ աւելի. ուստի կրծեալ չքացուցին զամենայն խոտ դալարի և բոյս կանաչեղէն՝ որ բնաւին չմնաց ինչ ուտելոյ ոչ մարդկան և ոչ անասնոց մինչև ցքանջարեղէնս. վասնորոյ տիրեաց սով երկրին այնմիկ ահարկու սաստկութեամբ։

Եւ յետ այսր պատժոյ եկն յերկիր և ի քաղաքն Ամթայ փոքրիկ թռչունն այն՝ որ կոչի Մնինոս [75], և ըստ Այլազգեաց բարբառոյն Ղըմըլ, այն ևս ի հրամանէ Տեառն զօրացեալ անթիւ բազմութեամբ ի վրէժխնդրութիւն զօրաց մարդկան, ծածկեաց զամենայն արտօրայսն. որ ի միումն հասկի գրեթէ Ճ 100 և ԲՃ 200 գտանիւր և ծծեցին զամենայն հիւթ հատիցն, թէ ցորենոյ և թէ գարւոյ և այլ ամենայն հնտեղինացն, որ ոչ այլ ինչ մընաց՝ բայց միայն սոսկ յարդն. յորմէ պատճառէ սկսաւ սով սաստիկ լինել, որպէս զի չէր եղեալ ի բազում ժամանակաց հետէ, և ոչ լուեալ ի հարանց կամ ի պատմութեանց. զի ցորենի քիլէն է 7 ղուրուշէն վազեաց ցԺԵ 15 ղշ. և ի ԻԵ 25 ղըշ., և զկնի

սակաւ աւուրց Լ 30 և Խ 40 և ապա Ծ 50 մինչև ցվաթսուն զուրուշ եղիտ տեղի։ Եւ տիրեաց սով ի Նինուէ քաղաքէն մինչև ցՍեբաստիա, և ի Բերիոյ մինչև ցԱրզրում։ Այսքան միջոց ոչ գտանիւր կերակուր ուտելոյ։

Վասնորոյ սկսան աղքատքն հաշել և մաշել, և հիւծեալ սովալլուկ մեռանել, այնքան բազումք յարանց և կանանց. և գրեթէ ոչ գտանիւր փողոց յորում ոչ գտանէին դիակունք մարդկանց մեռելոց, որք մնային անթաղք ի բազում աւուրս. և իբրև զդէշս անասնոց դիշատեցեալք և կերեալք լինէին ի շանց։ Եւ ի սոցանէ տարեալք դիզէին ի բակս մաչիտաց այնքան՝ որ հազիւ թէ մնայր նեղ իմն ճանապարհ անցանողացն, այլ ամենայն բակն լնանիւր դիակամբ մեռելոց, և մնային այնպէս երեք և չորս օր, և ապա անճար մնացեալք՝ մեծամեծք քաղաքիս տային վարձս դիապաաից՝ բառնալ և թաղել, ոչ թէ յատուկ յատուկ գերեզմանս, այլ վիհ մեծ արարեալ՝ տասն և կամ քսան դնէին ի միում փոսի, և ծածկէին սակաւ և նօսր հողով։ Նոյնպէս և յեկեղեցիս քրիստոնէից այնքան բազմացեալ էր գէշ մեռելոցն, որ ոչ գտանիւր հնար չորս արամբ բառնալ և դագաղաւ տանել, այլ բեռնակրօք մի մի, իբրև զգերան փայտի, շալակաւ կրէին ի գերեզմանատունն, փորէին վիհս մեծս, և անդր ծածկէին հողով զբազումս ի միում փոսի, վասնորոյ ի գէշութենէ սոցա հոտեցաւ երկիրն և ապականեցաւ օդն, և անկաւ մեծ հիւանդութիւն, և սկսան կոտորել որք ունէին զհաց ուտելոյ արք պատուաւորք և ազնուականք։

Ցայսմ ժամանակի մուրացողաց ոչ գոյր թիւ, զի երամովին շուրջ գային ի դրունս մարդկանց և խնդրէին զհաց. որոց զարհուրելի տեսութիւնն միայն բաւական էր զանսողն հիացուցանել. մանաւանդ ձայն լալոյ և ողբոյ նոցա դողացուցանէր զլսողսն. և օր քան զօր զօրացաւ սովն և սաստկացաւ մինչ զի սկսան ուտել զանսուրբ կենդանիսն, զգորտ և զկրիայ և զայլ սողունս վայրենիս, և ապա զկատու և զշուն, որ ոչ մնաց ի տունս և ի փողոցս. և յետոյ հարկեցեալ սկսան զկենդանի մարդս գողանալ, մորթել և ուտել. յորոց ոմանք ի նոցանէ յայտնեալք եղեն և կալեալ բերին առաջի քաղաքապետին, որոց վերայ զվճիռ մահու հատեալ մասն մասն յօշոտելոյ։ Զի կալեալ զայր մի գտին ի տան նորա զգլուխ և ձեռս փոքրիկ տղայոց, զոր խաբեալ և տարեալ էր զնոսա ի տուն իւր, և կերեալ էր զմարմին նոցին, մնացեալ էր գլուխքն ոտամբքն հանդերձ. զոր կապեալ ի պարանոցէ և բերեալ ի մեծ պողոտայն՝ որ և կոչի Մէյտան չարշուի, խողխողեցին զնա։ Նոյնպէս և յաւանն Հազրօյ կոչեցեալ Գ 3 քուրդ ընկերակցեալք, զբազում մարդիկս մորթեալ և կերեալք էին. զոր յետոյ ածեալք առաջի քաղաքապետին բերանօք իւրեանց պատմեցին թէ Խ 40 մարդ կերեալ եմք, և զաւելորդն խորովեալ վաճառէաք ի տեղի պախրոյ մսոյ, զոր այլք առեալ ուտէին, և մեք այնու փողով գնեալ զհաց՝ ուտէաք։ Այլ և Գ. 3 կին ազգաւ քիւրդ զբազում տղայս կերեալք էին, զոր իմացեալ ոմանց կոխեցին զորջս նոցա, և գտեալ զխուրձ մի լի գլխով և ոտամբ տղայոց, և մինչ տանէին զնոսա ի մահ, փոքրիկ աղայ մի նոցա, տակաւին ի ձեռն ունելով զմիս մարդոյ, ուտելով երթայր ընդ նոսա, որ և զնա

ևս յոշոտմամբ սրոյ ընդ մօրն սպանին։

Ուստի վասն այսպիսի սարսռելի պատժոյն, ամենայն գիւղականք երամ երամ եղեալ կամէին գնալ յօտար երկիր, թերևս կարիցեն գտանել ղյադուրգս, և գնացեալ աւար միոյ կամ երկուց աւուրց ճանապարհ՝ նուաղեալք ի քաղցոյ և անկեալ անդէն մեռանէին. այնքան բազումք, մինչ զի ծածկեցան ամենայն անցք ճանապարհաց դիակամբ սովալլկաց և մեռեալ մարմնոց, որք ամենեքին գիշատեցեալք, և վայրի գազանաց եղեն կերակուրք շանց և գայլոց. և ամենայն գիւղօրայք անցին, որ ոչ մնաց մարդ կենդանի, այլ ամենեքեան ի մէջ տանց իւրեանց մեռանէին, և մնային անթաղք ամսականօք աւուրբք, վասն չգտանելոյ մարդկան առ թաղելոյ զնոսա։

Եւ վասն այսպիսի խեղճութեան ոչ մնաց պատիւ կերպասից, պղնձեղինաց կամ բրդեղինաց, զի Ժ 10 զոշի ապրանքն հազիւ թէ երկու ղուռուշի վաճառիւր։ Եւ ապա իբրև հատան ինչք և ապրանք վաճառողաց, սկսան որդիս և դստերս վաճառել բայց յոյժ թեթևագին իբրև զաւանակ մի իշոյ՝ կամ իբրև զհորթ մի կովու, զի ոչ ոք էր որ գնէր զնոսա։ Վաճառողքն բազումք էին, և գնողքն սակաւք։ Եւ փլուցեալ զամենայն գիւղօրէից տունս, կրեցին զամենայն փայտ և զերան ի քաղաքս և վաճառեցին։

Եւ այսպէս հողաբլուր աւերակք եղեն ամենայն գիւղք և շէնք, և չըկարծեմ թէ այլ ևս շինելոց են մինչև ցյաւիտեանս, վասն զի սերմ մարդկութեանս հատաւ, և ոչ մնաց մարդ որ գործիցէ զերկիր, որև այսպիսի աղէտալեաւ դառնութեամբ էանց բոլոր ամն, և զի չէր ոք կարօղ զխմորն ի փուռն տանելոյ առ ի եփել, զի իսկոյն թափեալք ի վերայ թոլանէին, վասն որոյ սրօք և բրօք գնալոց էին ընդ հացին. և կարօղքն ի ձեռաց տկարացն կորզէին զհացն և ի կուլ տային. վասն որոյ քաղաքս Ցամիթ իբրու ամայի եղեալ դատարկ մնաց ի բնակչաց. և երկու մասն քաղաքիս տունք և խանութք փլան և աւերակք եղեն։ Եւ գրով ի համարի կալեալ ծանեան որ ԶՌ 80,000 մարդ նքողեալք հևալով և տքալով մեռան. մինչ ի գութ շարժեալ մարդասիրին Աստուծոյ, յիշեաց թէ մարմին են նոքա, հոգի որ ելանէ այլ ոչ ևս դառնայ, վասնորոյ դարձուցեալ զցասումն բարկութեան ի գութ ողորմութեան, ի գալ գարնան եղանակին եբաց զգրունս երկնից և ցօղեաց զառատ անձրևս ի վերայ երկրի, և ետ զօրութիւն հողոյ, որ առատապէս ետ զպտուղ սերմանց, և սկսաւ օր քան զօր սովն թուլանալ, որպէս ի ժամանակս Նոյի զհեղեղ ջուրցն նուազեցոյց. և ի հասանելն կալոց և հնձոց՝ եբարձ սովն յերկրէս և յագեցոյց զաչս մարդկային ազգի, տալով զլիութիւն յանձինս նոցա. քանզի ոչ միայն հացի էր սովն, այլ ամենայն ուտելեաց, բրնձի և այլոց ընգեղինաց և խոտեղինաց, որ ոչ գտանիւր, թէև գտանիւր ևս այնպէս թանկագին՝ զոր ոչ ոք բաւէր հասուցանել նմա զգին արծաթով, որև սակս լաւ իմանալոյ՝ բարեպաշտութեան ձերում, զոմանց իրաց զգինսն աստ դրով դրոշմեցից զի ծանուցեալ ձեր ժամանակիս դառնութիւն, մեծաւ զարմացմամբ հիասջիք։

Զարեկ մի ցորեան Կ 60 ղուռուշ, լիտր մի հաց՝ երեք ղր. լիտր մի բրինձ, չորս ղրշ. լիտր մի պանիր Ժ 10 ղռ. հատ մի հաւկիթ չորս փարայ.

հաւ մի Ե 5 րուպ. լիար մի սոխ՝ երկու դոշ. լիտր մի բողկ Ծ 50 փարայ, լիտր մի ձմեռան դդում Ծ 50 փարայ, լիտր մի շողգամ դոշ. մի. լիար մի սխտոր ԺԵ 15 դոշ. լիտր մի բանջար՝ երեք բրուպ. և լիտր մի խնձոր՝ ԺԲ 12 դոշ. չարեկ մի գարի ԼԵ 35 դոշ. չարեկ մի կորեկ՝ Խ 40 դոշ. չարեկ մի սիսեռ Խ 40 դոշ. չարեկ մի ոսպ ԼԲ 32 դոշ. և այլն, սոյնպէս իմասջիք ըստ կարգին։

Եւ զայսոսիկ վասն այն յատուկ անուամբ գրեցաք, որպէս զի յետագայ գալօղք և ընթերցօղք այսր պատմութեան՝ զգուշացեալք ի մեղաց, մի բարկացուցանէք զԱրարիչն յերկնի և յերկրի. և վասն յանցանացն արդիւնաւորիցէք ընդունել զայսպիսի պատիժ պատուհաս ի յարդարագատ Տեառնէն։ Որովհետև մեք անձամբ զփորձ առեալ այսպիսի պատժոց և բարկութեան, կամեցաք դրոշմել ի քարտիզի սոյնպիսի աղէտ թշուառութեանս մեր։ Եւ մի դուք յանցանօղք գտեալ Տեառն հրամանի ընկալջիք զայսպիսի վրէժխնդրութիւն յանաչառ դատաւորէն. այլ ըստ օրինաց և հրամանի Տեառն շաբժեալք, ընկալջիք զպտուղ արդեանց և վաստակոց ձերոց, կեցջիք խաղաղութեամբ։

Վասնորոյ ես նուաստ և յետնեալ ծառայս Յակոբ մեղապարտ և անիմաստ դպիրս ըստ իմոյ տգէտ և արխմար գիտութեանս. որովհետև ականատես եղէ այս ամենայն եղելոցս, գրեցի պատմագրաբար զայս ամենայն ճշմարտութեամբ, թարց իմիք ստութեան. որպէս զի ընթերցօղք այսր պատմութեանս օրհնառաք բերանով փառս վերառաքեսջիք ամենազօր տէրութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, անդրաւ յաւիտեանս և յաւիտենից. Ամէն։

ԺԹ. ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆՔ ՎԱՆԱՑ ԲԴԵՇԽԻՑ

Իսքանտար. թուէն տաճկաց ՉՂՇ։ Խօսրոֆ ՌԺ։ Մահմէտ ՌԻԹ։ Սինան Չղալօղլի կոչեցեալ ՌԼԴ։ Ջահվար. ՌԼԶ։ Մահմատ. ՌԽԱ։ Մահմատ Բաքալի կոչեցեալ. ՌԾԵ։ Մահմատ Զափկուն կոչեցեալ. ՌԿԴ։ Մուրթուղայ և Բաքըրն ի սոյն թուին։ Մուրթուղայ փաշէն Վան էր, որ կգլպաշն եկաւ վէր Վանայ․ քառասուն վեց օր նստաւ. Բաքըրն եկաւ վէրցան [76]։

Մուսայ ՌՋԲ։ Դիլաւար ՌՋԴ։ Սիւլէյման Կօջայ կոչեցեալ ՌՋԵ։ Մահմատ Բօյնի ագրի կոչեցեալ ՌՋԹ։ Վառվառ Ալի ՌՂԱ։ Սաաաֆլի Հասան ՌՂԲ։ Բօյադ Ահմատ ՌՂԴ։ Բօյնի ագրին վերստին ՌՂԴ։ Քաթանչի Մահմատ փաշայն. մեծ շարժ եղև. ՌՂԵ [77]։ Թագահ օղլի կոչեցեալ ըգեշխ ՌՂԶ։ Շայէն. ՌՂէ։ Շահպաղ. ՌՂԸ։ Էյմին Մահմատ ՌՂԸ։ Սարխօշ Իբրահիմ ՌՂԹ։ Զայիմ Մուսայ ՌՃ։ Աարխօշ Իբրահիմ վերստին ՌՃԱ։ Սօֆի Իբրահիմ ՌՃԲ։ Մահմատ Մալազ. ՌՃԴ։ Աարխօշ Իբրահիմ վերստին ՌՃԵ։ Զողկական Մահմէտ ՌՃԶ։ Ասլան ՌՃԷ։ Դալի Դիլաւար ՌՃԸ։ Զաթրաֆիլ օղլի Ահմէտ ՌՃԹ։ Հաճի Յուսէն ՌՃԺ։ Ասլան վերստին ՌՃԺԱ։ Ղարայ Մուստաֆայ ՌՃԺԲ։ Ամիր Ուսուֆ ՌՃԺԳ։ Քօռ Օսման ՌՃԺԵ։ Լեհ Հասան ՌՃԺէ։ Ղարայ Մահմէտ ՌՃԺԸ։ Ալի ՌՃԺԹ։ Շեխի Մահմէտ ՌՃԻԲ։ Աւդուլայ ՌՃԻԵ։ Բաքըր. ի թուին հայոց ՌՃԻէ։ Մուսլին ՌՃԻԸ, որ հայոց մորուք թողնել ետ։

Ջանփօլատ օղլին. հայոց գօտիք վեր առնուլ և գտակ գնել ետ ՌՃԻԹ։ Նիշալի Ալի փաշայն ՌՃԼ։ Զալանգլի Ալի փաշէն ՌՃԼԱ։ Կօջայ Օմար ՌՃԼԲ։ Ջահվար կամ Ճաֆար ՌՃԼԴ։ Խաղնատար Ալի փաշէն ՌՃԼԵ։ Կայալի կօզ օղլի Մահմէտ ըգեշխ. ՌՃԼԶ։ Կաթըր Մահմատ կամ Հասան ըգեշխ ՌՃԼԸ։ Թօփալ Օմար ըստ ոմանց չօլախ ըրգեշխ ՌՃԼԹ։ Տուրսուն Մահմատ ՌՃԽ։ Սարի Օմար ՌՃԽԱ։ Կօջայ Իսմայիլ ՌՃԽԱ։ Մուրթուղայ փաշէն ԽՃԽԲ։ Դուռջի Մահմատ ՌՃԽԴ։ Զարաֆիլ օղլի Ուսուֆ ըստ ոմանց Զալապի

ՌՃԽԵ։ Տուրսուն Մահմատ վերստին ՌՃԽԶ։ Կօջայ Իսմայիլ վերստին ՌՃԽԷ։ Սարի Օմար վերստին ՌՃԽԹ։ Ծերունի Իսմայէլ վերստին ՌՃԾ։ Կարայ կուլախ Մուստաֆայ ՌՃԾԱ։ Աւաի. ՌՃԾԲ։ Տօռիճան Ահմատ ՌՃԾԴ։ Դաւթարտար քօսայ Խալիլ ՌՃԾԴ։ Մաղթուլ օղլի Ալի փաշայն ՌՃԾԵ։ Զարքաղ Մահմէտ ՌՃԾԷ։ Ռաջապ ՌՃԿ։ Հասան ՌՃԿԱ։ Վազիր քէհեասի Ավդրահման ՌՃԿԲ։ Կօջայ Մուրթազայն ՌՃԿԴ։ Բալլի բուղուկ Մահմէտ ՌՃԿԵ Ջալապի Ուսուֆ ՌՃԿԶ։ Հասան փաշէն և քալաջի Մահմատ փաշէն եւ եկին Վան ՌՃԿԷ։ Քօրփլի օղլի Աւգուլայ փաշէն և հաճի Ալի փաշէն ՌՃԿԸ։ Աւտուլայ փաշայն վերստին ՌՃԿԹ փետրվար 17։

ՌՃՀԲ եկին ի Վան Ամասիոյ. Ուրհայու և Զանկռու փաշայք Աւտուլայ փաշայէն հետ պարսից վերայ կռիւ գնացին։ Ավդրահման ՌՃՀԶ։ Բանլի Մուստաֆայ փաշէն ՌՃՀԷ։ Արապկերցի Մահմատ ՌՃՀԸ։ Կարայ Մուստաֆայ ՌՃՀԹ։ Ցարիֆ Մահմատ ՌՃՀԹ։ Մեծ Թամուր փաշայն ՌՃՂԱ։ Քուրտ Իբրահիմ ՌՃՂԵ։ Աէլիմ փաշէն ՌՃՂԶ։ Մուսուլցի հաճի Յուսէն փաշէն ՌՃՂԷ։ Վանեցի Օսման փաշէն ՌՃՂԸ։

Ուչունչի օղլի Օմար փաշէն, Մուրթուզայ, և Սարխօշ օղլի Ալի փաշայք ՌՃՂ։ Արծկեցի Սիւլէյման փաշէն ՌՃՂԲ։ Ջարրինի Իթ Օմար փաշէն ՌՃՂԴ։ Թաղթայ սաղկալ Յուսէն փաշէն ՌՃՂԴ։ Ջալիգ փաշէն երեք ամիս ՌՃՂԶ։ Ցետոյ չաթաջի Ավտուլայ փաշէն։ Սինագ Մուստաֆայ փաշէն ՌՃՂԶ։ Ջարրինի Իթ Օմար փաշէն վերստին ՌՃՂԹ։ Ջալալ օղլի հաճի Յուսէն փաշէն ՌՄ։ Ղարսեցի կոր Ուսուֆ փաշէն ՌՄԴ։ և Եայգչի օղլի Արզըրմայ Իբրահիմ փաշէն 15 օր նստաւ։ Սինագ Մուստաֆայ փաշէն վերստին ՌՄԴ։ Ռաջապ փաշէն ՌՄԵ։ Շահ սուվար օղլի Մուստաֆայ փաշայն վերստին ՌՄԷ։ Աղա փաշէն ՌՄԹ։ Ջարար օղլի Մուստաֆայ փաշէն ՌՄԺ։ Խասաքի քօռ Ահմէտ փաշէն ՌՄԺԳ։ Ամիր Մուստաֆայ փաշէն ՌՄԺԴ։ Եազջի օղլի Իբրահիմ փաշէն ՌՄԺԵ։ Աղսկայու (Հասան) փաշէն ՌՄԺԶ։ Քուրտ Օմար փաշէն ՌՄԺԷ։ Դամաթ Յուսէն փաշէն ՌՄԺԹ։ Կայմախ փաշէն եկն թուզ ոչ ունէր ՌՄԻ։ Սիլահտար Խալիլ փաշէն ՌՄԻԱ։ Մալադ Ահմատ փաշէն ՌՄԻԴ։ Վանեցի Թամուր փաշէն ՌՄԻԴ, Օգոստոս 21։ Ահմէտ փաշէն ՌՄԽ։

Ի· ՊՕՂՈՍ ԿԱՂԶՈՒԱՆՑԻ

Գ Ի Ր Ք

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

Վարուց և դիպուածոց, իրաց և իրակութեանց, Տեառն Զաքարիայ Արհի եպիսկոպոսի՝ և Ազգասէր կարգացեալ Պատրիարքի մեծի Պօլսոյ, և ի խրախուսութիւն ապագայից եղբարց՝ մեր Հայկազնէից։

Որ եղև ի ժամանակս Տեառն Ղուկասու սրբազան և Գերերջանիկ Հայրապետի ամենայն Հայոց։

Իսկ ի Պատրիարքութեան սրբոյն Սաղիմայ՝ Տեառն Յովակիմայ Արհիապանծ րաբունւոյ։

Եւ ի Պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Յօհաննու համատանցւոյ։

Աշխատասիրութեամբ Պօղոսի եւ եթ դպրոյ կաղզուանցւոյ։

Եղբօր որդւոյ Ազգասէր յորջորջելոյ. և սնուցելոյ մօրն մերոյ Շնորհառու ի յատկացելոյ սրբոյ Գահին Միածնաիջի։

Ընդ հովանեաւ Պրուսայ կառուցեալ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն։

Աստ թիւ սորին յայտնի լինի.
ռա ընդ մենի լինիւ ճայնի։

ՆԱԽԵՐԳԱՆ, ԱՌ ԲԱՐԵՄԻՏ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Միտք մարդոյ առաւել յարին ի նորալուր վիպասանութիւնս՝ քան ի սովորեալս։ Զի որպէս յերգաբանի իմիք զմի է զնոյն ազի քանիցս հնչեցուցանելն ձանձրացուցանէ զմիտն. այսպէս և զհասարակաց պատմութիւն. մանաւանդ յունկո ամենայն անձանց հասեալն; վասն որոյ՝ առ այս միտ է իմ կամեցեալ ըստ կարի յօրինել զնորալուր վիպասանութիւն մի. որոյ ունկնդիրքն ոչ միայն մտօք զուարճանան, այլ և լսելով զհանգամանս իրաց սոյնոյ վիպասանութեան զփառս մատուցեն ամենախնամ արարչին։ Եւ զի՞նչ ես ունկնդրացդ մաքուր լսելեաց բերանոյ հոգւոյ կերակուր պատրաստեցից, եթէ ոչ զվարս և զկենցաղավարութիւնս սրբա-

Կ. Պոլսի Զաքարիա պատրիարք

դան Հօրն մերոյ ազգասէր պատրիարքի ի մանկութենէ սկսեալ մինչև ի յերկրորդ Պատրիարքութեանն և զոր մինչև ցայժմ տևէ զիշխանութիւն, միանգամայն ղնշանաւոր իրս և զգործս յայս սեղան հանից. և այս իղձ՝ ոչ յայլուստ ունիմք՝ եթէ ոչ ի նախանձ բարի շարժել զունկնդիրսդ. քանզի մինչ յայտնին նենգութիւնք և կեղծաւորութիւնք հերձուածողաց որ ընդդէմ սուրբ հաւատոյն մերոյ գործեցան ի ձեռն անօթոց չարին յաւուրս մեր. որ զՋատագովն սրբոյ հաւատոյս սրբազան Հայրն մեր Զաքարիա Պատրիարքն ի յայնս աւուրս ոչ սակաւ բանիւ և արդեամբ զայրացուցին։ Այսու ամենայնիւ զարթիցեն միտք լսողաց՝ և տեսցեն զգութ և զխնամս Աստուծոյ ի վերայ Ազգին մերոյ, և փառաբանիչք լիցին բարերարութեանն Աստուծոյ։ Բայց սակայն՝ թէ յորպիսի վշտաբեր և անբարի դառն ժամանակի եղև սկսելն մեր զայս վիպասանութիւն ի լոյս ածել. թէպէտ՝ ողորմութիւնն Աստուծոյ, և սէր սուրբ հաւատոյն եղեն ինձ երկու թևք. որովք յաւարտ վիպասանութեանս հասանելն յուսամ։ Եւ զի թէպէտ մեք զհամառօտութիւնն սիրել յօժարեցաք, սակայն փոքր մի ճոխագոյնս խօսիլ արժան համարեցաք. և այն՝ պարզ և ռամկական բառիւք դիւրին ոճով. զի մի լսօղքն ի ռամկաց ձանձրասցին. քանզի միտ և դիտաւորութիւն մեր յայս միայն դիտէր. որ ամենայն հաւատացելոց անձանց հասկանալի լիցի։ Ուստի՝ որքան առ այս՝ անմեղադիր լերուք. և այսոքիկ ոչ են թարց պատճառի. նախ՝ զի էի ի մեծի տրտմութեան աքսորման հանդերձ Վեհիւ մերով. յոր զաչս հոգւոյ և մարմնոյ իմոյ չկարացի բանալ։ Երկրորդ՝ կարի թախծագին վշտօք պաշարիլս, ոչ սակաւ տանջեցայ մտօք՝ սակս աքսորման մերոյ, որ այս սուգ և տրտմութիւն ոչ միայն զիս՝ այլ և զազգն մեր պաշարեաց. և զի՝ թէպէտ այսպէս երևէր յաչս մեր. սակայն՝ հոգւոյ ակամբ հայեցեալ յըստուգութիւն իրին, էր մեզ սիրախառն խրատ. ըստ այնմ թէ՝ Զի զոր սիրէ Տէր խրատէ. և տանջէ զամենայն որդի զոր ընդունի։ Եւ ըստ Յօբայ թէ՝ կեանք մարդոյ փորձութիւն է ի վերայ երկրի։ Երրորդ՝ զբաղմունք և հոգք կենցաղոյս ոչ ետուն մեզ թոյլ աչք բանալ. ուստի միայն զհարկաւոր և զգլխաւոր պատահեալ իրս միայն ջանիւ յօժարեցայ գրել։ Ապա թէ ոչ՝ քանակութիւն գրքոյս լինէր մեծ քան զԱռաքէլ պատմագիրքն. և այս՝ այսու մտօք, թէ ազգն մեր՝ և կամ մանաւանդ սրբազան Վեհն Զաքարիա պատրիարքն ի ձեռաց նոցա՝ որքան վիշտք և տառապանք կրեցին. յայնժամ և դուք զայսոսիկ լսելով՝ յետս կացեալ հրաժարեսցիք ի նոցանէ. որք զթոյնս աղանդի հերձուածողութեան ի լեզուի կրեն փաղաքշական բանիւք պատրել ջանան զհոգիս հաւատացելոց՝ խոստմամբ մարմնականաց, զհոգի կողոպտեալ վիրաւորեն. զհեշտականս և զհաւանութիւն մարմնասէր կամաց առաջի դնեն. և զհոգւոյն կեանն՝ (որ քրիստոնէաբար կեալն է.) ի բաց բառնալ յօժարին. ցուցանեն՝ զոր չունին. ասեն՝ զոր ոչ գիտեն. խոստանան՝ զոր ոչ կարեն տալ։ Ուստի՝ յայս սեղան վիպասանութեան եդից՝ նախ ըզվարս սրբազան վեհին ի մանկութենէ սկսեալ՝ մինչև ցայժմ, և ապա զ'ի մերս կոյս եղեալն. և առ ընթեր զնոցին նենգութիւնքն, ի մէջ երկոցունցս զտաճկական հիւմայուն Պէրաթի Արքունա-

կան ֆէրմանսն, և ըստ նոցին պատճէնի սուրաթքն. և զնոցին հայկական թարգմանութիւնքն. հուսկ յետոյ՝ քանի մի ասացեալ Շայիբաց ներբողական ասութիւնքն. որքան և կարեմ։ Զայս ես ծանիք, ով սիրելիք. ըստ որում օրէն է ի մարդկային սեռի զլուեալն զգուշութեամբ քննել և լիովին իմանալ և ապա հաւատալ։ Վասնորոյ՝ ահա ոչ ի մեղադրանս ընկալնլով. այլ զմիտս ընթերցողաց հաստատ առնելոյ սակս աստէն համառօտակլի այսքանս դիցուք, նախ պատուէր Տեառն ունիմ առաջի իմ նպատակ՝ որ ասէ. և որ սուտ խօսի՝ հայրն նորա սատանայ է. յայլումն թէ խօսեցարուք զճշմարիտն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ. և ահա սոքա բաւ է խոհեմից մտաց ընտրել զչարն՝ և զբարին. և ըստ բնականին՝ մերս անարժանութեան ջանք և աշխատանք այս է. թէ զուղիղն տալ ըմբռնել իմացողաց մտաց. ապա զի՛նչ օգուտ՝ որ զսուտս մուծանել ի գրքոյս յայսմիկ. և զգտեալ բանս ի սմա բաղումս ականատես եղեալ եղաք. և ոմանս յայլոց զգուշութեամբ քննեցաք տեղեկացեալ եղաք. այս միայն քան զմեր ժամանակս յառաջ եղեալքն են՝ յայլոց դումարեալ եղեալքս. զայսքանս խօսելով կրկին զայս ես խոստանամ ընթերցողաց, և ասեմ ամենեքին մի ինչ կասկածիցէք ի բանիցս յայսցանէ իցէ թէ սուտ մուծեալ է։ Թէպէտ ի ներկայ ժամանակիս ոչ ոք գտանի զայս միտս ունօղ. բայց իցէ թէ զկնի ժամանակաց զգուշանամ։ Վասն որոյ՝ զգուշանալոյ սակս այսոքիկ գրեմ. և կրկին ըստ մտաց ձև. բում ապաստան առնեմ դուք գիտելով զարժանիս ձեր, և զմեզ անմեղադիր առնելով ողջ լերուք ի Տէր, Ամէն։

ՏԵԱՌՆ ԶԱՔԱՐԻԱ ԱԶԳԱՍԷՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆ ՍՏԱՑԵԱԼ ԱՇԱԿԵՐՏՔՆ ՅԱՅՏՆԻՆ ԱՍՏԷՆ

Մեծի Պօլսոյ՝ քաջ Պատրիարքըն արհի.
Զաքարիա՝ Ազգասէր վեհ և արի.
Նորին Պատկեր՝ այժըմ աստէն՝ նըր-
կարի.
ի սուրբ Հօրէ ձեռնադըրեալ՝ ցեղ բարի։

Ի Թիֆլիզէ՝ նախկինն Յակօբ՝ հետ բերի.
Բարդուղիմէն՝ ի յԻգնիմիտ՝ գէտ դըրի.
կայ յՕհաննէսն իւրփոխանորդ և պահի.
տայ Յակօբայ Մշու զաթոռըն հեռի։

Գաղատիայն՝ շնորհ արար՝ Անդրէի.
չորքըս սոքա ի քաղաքէն Բուղանդի.
Պօղոս ի Պրուսայ՝ Պետրոսն աստ ա-
ռերի.
երկու սոքա ի գաւառէն Կեսարի։

Բայց եօթեքինս եպիսկոպոս ի կարգի.
ապա դիցուք և վարդապետս ըստ կարի.
վանցի Թօմայն Եւզօկիայ դետ արի.
մերժեալ Թագէն երթայ յաշխարհ մի
յարի։

Կայ Կարապետն ի ըսպասու և փարի.
Պօլսոյ սոքա Աստուածատուրն ի շարի.
Կաղզուան էր Գիտես երկիր բնիկ իւր.
Եղբօր որդի Տէրն Պօղոս ծախն ետուր։

Մեք աղաչեմք՝ մերս վեհի տըրտուր.
Տէր իմ Յիսուս կար և երկար կեանս
տուր։

ՅԱՂԱԳՍ ՑԵՂԻ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՏԵԱՌՆ ԶԱՔԱՐԻԱՅ ԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ. ԵՒ ՎԱՐՈՒՑՆ ՆՈՐԱ Ի ՀԱՍԱԿԷ ՄԱՆԿՈՒԹԵԱՆՆ, ՄԻՆՉԵՒ ՑՄԱՀ ԻՒՐ:

Սա էր յերկրէն Գարեղինաց ի գիւղաքաղաքէն Կազզուանայ. (յորում ճգնեցան սուրբքն Վարոս, և Թաթուլ միանձունքն:) Ցաղգէն Փոքուզեանց որդի առն մեծատան ուրումն երևելւոյ, նոյն նահանգի Բարիլոյս անուն. և մայրն նորին վայելչացեալն առաքինութեամբ, Նազե անուն, որ էր դուստր գլխաւորի նոյն գաւառի: Սա այս Զաքարիա վարդապետ ի փոքր հասակէ իւրմէ սիրելով զշաւիղս խոնարհութեան, ոչ տայր երբէք ղինքն յարհամարհանս մանկութեան. և այսպէս ըստ պատշաճի առաքինութեան ծնողացն՝ սնանէր և զարգանայր հասակաւն և իմաստութեամբն ի լաւ անդր միշտ յառաջատելով: Քանզի յօրէ յորմէ հետեեցաւ սուրբ գրոցն ուսման, ոչ կենայր բնաւ մանկական վարուք, այլ խոկայր հանապազ յերկիւղն Աստուծոյ. և պարապէր յուսումն սուրբ գրոց զցայգ և զցերեկ. և զոր ինչ խնդրէր յԱստուծոյ՝ առնոյր անթերի. ըստ այնմ թէ՝ որ խնդրէ առնու. և որ հայցէ գտանէ և որ բաղխէ՝ բացցի նմա: Ուստի՝ ի տիս պատանեկութեան իւրոյ՝ թողու զհայր իւր և զմայր. և զամենայն աշխարհային բերկրութիւնս՝ զհետ ընթանայ երկնաւորին. ածեալ զմտաւ զպատուէրն Տէրունի թէ՝ Որ ոչ թողու զհայր և զմայր՝ ոչ կարէ իմ աշակերտ լինիլ: Եւ թէ՝ ամենայն որ եթող զհայր կամ զմայր, կամ զքոյր կամ զեղբայր. կամ զկին, կամ զորդիս, վասն անուան իմոյ, հարիւրապատիկն առցէ, և զկեանս յաւիտենականս ժառանգեսցէ: Եւ թէպէտ՝ կամէին ծնօղքն ի կարգ աշխարհի մուծանել զնա. այլ նա ոչ կամեցաւ յանձն առնուլ, և ոչ հաճեցաւ ընդ այն. և մանաւանդ հաճեցաւ գնալ և բնակել ի Գահն Միածնաէջ, ասելով թէ՝ այս է իմ հանգիստ յաւիտեանս յաւիտենից. ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա: Քանզի և Աստուած իսկ կամեցաւ որոշել զնա յաւետարան իւր Որդւոյն Միածնի. վասնորոյ՝ կացեալ

անդ ի սուրբ Աթոռն Լուսակառոյց. վարժեցաւ և ուսաւ զամենայն զբանս Աստուածային սուրբ տառից. և եղև ճշմարտութեան վարդապետ, և քարող ուղղափառ հաւատոյ հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ։ Եւ զի էր յոյժ ընթերցասէր, մաքրակենցաղ՝ խոնարհ՝ և հեզ, և սիրող առանձնութեան. այնքան՝ մինչ զի արժանի եղև ասպնջական լինել Հոգւոյն սրբոյ շնորհացն. ըստ այնմ թէ ես յո՞ հանգեայց՝ եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս, և որք դողան ի բանից իմոց. և այս՝ ըստ հոգւոյն մասին վայելչացեալ ձրիւք. իսկ ըստ մասանց մարմնոյն ևս՝ էր զարդարեալ հանգամանօք. զի հասակաւն էր երկայն. դիմօքն գեղեցիկ և անհեղակերպ իբրև զառիւծ. լայն երես՝ և լայն ճակատ. աչօքն և ռնգամբքն չափաւոր. և հեզալի յոյժ, և շնորհալի. և միանգամայն հիանալի և զարմանալի. վասն որոյ՝ կամօքն Աստուծոյ ձեռնադրեցաւ վարդապետ ի ՌՄԴ. թուականիս Հայոց. ի Լուսարար Եղիազար եպիսկոպոսէ. և ապա եպիսկոպոս՝ ի Տէր Յակոբ սրբազան կաթուղիկոսէ շամախեցւոյ. յորմէ և կարգեալ եղև նուիրակ յԵւդոկիայ քաղաքի, և զկնի աւարտման նուիրակութեանն յԵւդոկիոյ, եղև նուիրակ մեծին Կոստանդնուպօլսի ի Տէր Սիմէօն սրբազան կաթողիկոսէ. և իբրև աւարտեալ զնուիրակական գործն իւր կամէր դառնալ անդրէն առ շնորհատուն իւր ի սուրբ աթոռն Տիրակերտ, վերստին եղև կարգեալ ի նոյն գործ ի նոյն Վեհապետէ։ Ապա մինչ ձեռն արկ՝ դարձեալ ի հաւաքումն նուիրացն՝ հրաւիրեցաւ յազգէն իւրմէ ի գործ Պատրիարքութեան Պօլսոյս Մեծի. և թէպէտ ինքն հրաժարէր և պատճառէր չթողուլն սրբազան վեհին. բայց ազդն առաւել ևս թախանձէր և ստիպէր այնքան՝ մինչև բոլոր իշխանք համայն ազգաւն մահսէրականս դրեալ յղեցին ի սուրբ Գահն։ Եւ ժտեցին ի սրբազանէն՝ զի հրաման տացէ յանձն առնլոյ նմա զՊատրիարքական գործն. և իբրև եկն հրամանն հաճոյական վեհապետին յիւրն կողմանէ. ապա և նա հաճեալ ընկալաւ, և եղև Պատրիարք ի ՌՄԻԲ թուականիս մերում. ի յեղն նոյեմբերի ի տօնի առաջին լուսաւորչացն մերոց, Թադէոսի և Բարդուղիմէոսի։

Եւ յաւուրս արքային օսմանցւոց սուլթան Մուստաֆայի։ Եւ զկնի այսրմ այսպէս լինելոյ՝ տայ զնուիրակութիւնն ձեռնասուն աշակերտին իւր Յակոբ վարդապետին Թիֆլիզեցւոյ. ըստ ասից թէ՝ փոխանակ հարց՝ եղիցին որդիք։ Եւ ինքն յարարթնութեամբ և արութեամբ՝ սկսանի հովուել զժողովուրդն Աստուծոյ, լինելով միանգամայն և ախոյեան ընդդէմ թշնամեաց հայաստանեայցս եկեղեցւոյ. և ուղղափառ դաւանութեանս մերոյ, հովիւ քաջ ի վերայ բանաւոր հօտին իւրոյ, և կշտամբիչ հերձուածողաց, այնքան մինչև ի սէր ազգին իւրոյ դնէր զանձն. վասն որոյ և յաքսորս իսկ առաքեցաւ։ Եւ արդ՝ քանզի կամ է ինձ ի կարգի ընթացից բանիս՝ համառօտաբար տալ զեկուցումն աստուածասիրացդ. ի ժամանակս սորա եղեալ իրացն և իրակութեանցն որք գործեցան ի մեծն Պօլիս. և թէ յայլ ուրեք պատճառեալ ի հեստեալ ախտարմայից, որք առ ի մէնջ ելին բայց ոչ էին ի մէնջ. զի թէ ի մէնջ էին՝ ապա առ մեզ մնային. զի թէպէտ Կայէն՝ որդի էր Ադամայ՝ սակայն եղև եղբայրասպան. և թէպէտ Յուդայ աշակերտ էր Տեառն մերոյ

Քրիստոսի. բայց յետոյ մաանիչ վարդապետին իւրոյ. այսպէս՝ և սոքա թէպէտ որդիք Լուսաւորչին սրբոյ. բայց այժմ հակառակ ամբարձան ընդդէմ նորա. և եղեն որդիք ցանկապատառին առիւծու. այն է անիծելոյն Լէօնի և նորուն արբանեկաց. վասնորոյ՝ իբրև տեսանէ ազգասէր ծրնօղս մեր այս հոգևոր թէ՝ սոքա ի հայրատեաց լինելոյ՝ մարտադիր ևս եղեն ընդդէմ ճշմարտութեան. ապա և ինքն ևս՝ ախոյեան ընդ դէմ նոցա կրքրեցաւ մարտնչեցաւ կշտամբելով զնոսա բանիւ և գանիւ. և զայս՝ ոչ թէ ինքնակամ յօժարութենէ. կամ յանձնասիրութենէ շարժեցաւ առնել, այլ ազգեցութեամբ վերնոյն, զի օրհնեալ է մարդ որ արասցէ դյոյս իւր ի Տէր։ Եւ թէ՝ Երանի ազգի՝ որոյ Տէր Աստուած Ցակօրայ օգնական է նմա. և յոյս նորա ի Տէր Աստուած է։ Այսպէս և սա դնելով դյոյս իւր ի Տէր, և ապաւինելով ի նա՝ զկնի անցման չորս ամեայ Պատրիարքութեան իւրոյ՝ գումարէ ժողով մեծ ի սուրբ Աստուածածին եկեղեցին. որ Խումխափուն, հանդերձ արհիապանծ եպիսկոպոսօք շքեղաշուք իշխանօք՝ և բազմերամ ժողովրդովք. և ի ժողովլի անդ՝ զոր ինչ խօսեցան՝ ոչ է պաաշաճ տեղւոյս դրել մի ըստ միոջէ. ըստ որում խոստացաք համառօտ անցանել բանիւ։ Եւ այս գումարումս եղև՝ Յաւուրս սուլթան Համիթ թագաւորին օսմանեան տէրութեան. որում տուեալ արգուհալ ազգն մեր վասն հեստեալ ախտարմայից. որք այնմ ժամանակի կարի համարձակ ընդդէմ Պատրիարքական իշխանութեանն գործէին. ուստի և բազում անգամ արգուհալ ևս ետուն լի ստութեամբ, թէ Պատրիարքն Հայոց՝ առանց իրաւանց պահանջէ ի մէնջ տուրս անվաւերս, և յոչ տալն մեր զայն՝ ներհակ վարի ընդ մեզ և նեղէ. ուրեմն խնդրեմք ի Վեհ Տէրութենէ քումմէ. հրամայեսցես նմա՝ մի իսպառ նեղեսցէ զմեզ. և եթէ հնար է՝ անջատեա զմեզ ի նոցանէ, և կարգեա մեզ յատուկ գլուխ ի մերոց կարգաւորաց. քանզի կամիմք ելանել յիշխանութենէ նոցա. զի հաւատք նոցա թիւր է, և մեզ անընդունելի. և զայլ այսպիսի սրտայօդ պատճառս յօդեցին և գրեցին. բայց ստութեանն գոլով առանց հիման՝ ոչ ունի զհաստատութիւն, զի ի վերայ աւազոյ է հիմն նորա. իսկ մերս տուեալ արզուհալն՝ ունէր օրինակ զայս։

Ծիր աղերսանացս՝ յայտ առնէ զերապանծի ինքնակալի, և իշխանութեան տէրութեանդ մեծի. զի ի քաղաքիս այսմիկ՝ և յայլ ուրեք ենթարկեալ հնազանդ հայ ազգ յորջորջեալ ծառայիցդ միջի՝ գտանին ոմանք հեստեալք ի հաւատոցն. որոց յատուկ անուն՝ կաթօլիկ ձայնի. որք օր ըստ օրէ զբաղումս ի հպատակացն մերոց որսան. և ի թիւր ճանապարհս իւրեանց խոտորեցուցանեն. և ամենեքեան մեծ և փոքր գաղտաբար և ծածուկ ել ու մուտ առնեն յեկեղեցիս ֆռանկաց. և զփաթեթբայս տարեալ ի տունս իւրեանց զկարգ և զկանոնս ֆռանկաց համարձակ կատարեն. և զտունս եկեղեցի արարեալ՝ այլ իմն հաւատ ծածկաբար ի մէջ իւրեանց արծարծեն. և բնիկ ծնեալ հաւատոյն իւրեանց յարգութիւնս և պատիւս ոչ ընծայեն՝ այլ պսակին և մեռելաթաղին կանոնաց միայն տան պատիւս. և ևս՝ ի ներքուստ միշտ լարեն զաղեղունս և որոգայթս ազգին մերոյ, և են յոյժ խռովարարք. և զայ-

թակղեցուցինք. վասն որոյ՝ խնդրեմք և աղերսեմք զի քէն՝ զի բարձու հրամանաւ Տէրութեանդ, սաստելով սաստեսցես զայնպիսի չարափառսն որ միւս լըսող բայէ հայքն՝ ինքնակալի Տէրութեանդ՝ մի դայթակղեսցին և վնասեսցին. ուստի յայսպիսի յայսցանէ վնասուց և յորոգայթիցն չարափառաց ապահովս կելոյ ազատելոյ և փրկելոյ, հրաման իմն սաստիկ՝ խնդրեմք և աղերսեմք վասն նոցա. ողջ լեր յար և միշտ, սակս տառապեալ հայ ազգ մշտակայ հնազանդ ծառայից Տէրութեանդ մեծի։

Վասն որոյ՝ ըստ խնդրուածոց մերոց և ըստ ըղձից, եւ թագաւորն սուլթան Համիտ հրաման սաստիկ ՛ի ձեռն ազգիս հայոց. և զհին հրամանագիրսն ես նորոգեալ՝ ընդ նոր հրամանացն առաքեցին ի ձեռն սրբազան Պատրիարքին մերոյ. և այս խնամք եղե ազգին մերում օգնականութեամբ բարձրելոյն, ըստ այնմ թէ՝ Սիրտ թագաւորաց ի ձեռին Աստուծոյ է. յոր կողմն կամի՝ հակեցուցանէ։

Ազգիս հայոց պատրիարգ Զաքարիայ Աստուածաբան վարդապետի պատրիարգութեան Խատտի շէրիֆի[78] հայկական թարգմանեալ օրինակն է.

Ի Հայոց Կոստանդնուպօլսոյ զայս շնորհաւոր ֆէրմանի իմոյ զմեծաւորի ազգին քրիստոնէի, Զաքարիայ անուն վարդապետն. (որ լրացի զվերջն բարեաւ։) ի շնորհաւոր հեծելոյն իմոյ մատնահարեալ արզուհալ մատոյց. որ ի վերոգրեալ Կոստանդնուպօլսոյ և ցրուեալ յՌուումէլի և Անատօլի. և թապի եղեալ հայոց նախընթաց Պատրիարք Գրիգոր վարդապետն. վասն ակնկալութենէ իւրմէ ի Կոստանդնուպօլիս. և կողմս սորա բնակեալ վեց ժողով անուանեալ հայոց վարդապետ. և քահանայք և ժողովրդապետք, ե ծեր բայա աղքատքն՝ մահղերներովն ծանուցմամբ խնդիրք առնելոյն աղագաւ ի վերոգրեալ Պատրիարգութիւնն իւրեան խնդիր և շնորհս եղև. բայց մինչ ցայժմ ի ձեռս նորա բարձրագործ ֆէրմանս չէ տրվելոյն աղագաւ ի ձեռն նախընթաց Գրիգոր վարդապետի տուեալ պէրաթէն տէրքէնար[79]. այսինքն յայտնի եղև. և այն պատճառ և կանոնի վերայ, զմիրի[80] նուէրն յարքունի խաշնան իմոյ տալոյն յետ ի կողմանէ շնորհաւոր հեծելութենէ իմմէ զառաջի կանոն և պայմանի վերայ ի ձեռս նորա բոց և յայտնի. և բարձրագործ պերաթն իմ տրուելու. և շնորհաւոր օրտուն իմ ծանուցանելոյ համար խընդիրք անելոյն աղագաւ ի Կոստանդնուպօլսոյ. և ցրուեալ յՌուումէլի և Անատօլի. և թապի եղեալ հայոց ազգի պատրիարգութիւնն ի ժամանակի դարձուցանելոյն. ՇՌ. ստակ միրի նուէրն յարքունի խազնան իմ տալոյ վերայ և տարեգլուխ ՇԽՌ. ստակ միրի մախթուի[81] ի վախճանման Յակոբ վարդապետէ ի թուին. ՌՃՀԷ, ղիլհիճճի. ԻԵ. յօրն ի Գրիգոր վարդապետի՝ յաւիտենական դարձուցի. և ի վերայ պերաթին շնորհաւոր գիրս արքունի քաշեցի. որ այժմ ի վերոգրեալ Պատրիարգ Գրիգոր վարդապետի վերայ լինիլն ծնեցեալ բարձրագործ ֆէրմանի իմոյ կերպին ի ձեռս նորա եղեալ հին պէրա-

թէն կերպաւորեցեալ լինելոյն աղագաւ. ի վերայ խնդրանաց իւրեան Պատրիարդութիւնն ի վերոգրեալ վարդապետին դարձաւ. և ի կողմանէ շնորհաւոր հեծելութենէ իմմէ շուրութով[82] պէրաթն. և շնորհաւոր օրտուն[83] իմոյ ծանուցանելոյ համար՝ բարձրագործ ֆէրման ծնելոյն աղագաւ՝ կանոն եղեալ գրնծային համար՝ պիտոյ եղեալ վերոգրեալ ԾՌ. գրստակն արքունի խազնան իմոյ տալոյ համար շնորհաւոր բուզնամէի սուրէթն[84] տրուելոյն աղագաւ, ծնեցեալ ֆէրմանի իմոյ կերպին ի վերոգրեալ Պատրիարգին դարձաւ. և ի թուին ՌԺՀԸ. սէֆէրի, ԺԶին գայս բարձրագործ պերաթս իմ տուի և հրամայեցի. որ ի վերոգրեալ Զաքարիայ անուն վարդապեան՝ (որոյ լրացի զվերջն բարեաւ) երթայ ի վերոգրեալ Կոստանդնուպօլսոյ. և ցրուեալ Ուրումէլու և Անատօլու և Թապի[85] եղեալ տեղորայքն բնակեալ յառաջնորդաց և քահանայից. և այլ հայոց ժողովրդոց վերայ հնուց եղեալ կանոն՝ և զօրինաց իւրեանց վերայ Պատրիարգ լիցի. ե ի միջի Պատրիարգութեանն եղեալ տեղոց՝ զառաջնորդք և քահանայք. ե այլ հայոց ժողովրդոց մեծք և փոքունք ի վերոգրեալ Զաքարիայ վարդապետն ի վերայ իւրեանց Պատրիարգ գիտենան. ե Պատրիարգական ղօրինօք ընկած բաներնին ի նա գարձուցանեն և ծանուցանեն. ե յուղիղ խօսակցութենէն նորա աւելի բան չանեն. ե ի Պատրիարգութեանն նորա Թապի եղեալ տեղորէից հանելոյ և նստուցանելոյ արժանի եղեալ առաջնորդք և սևագլուխք և քահանայքն ի վերոգրեալ Պատրիարգն ի վերայ զօրինաց իւրեանց հանելոյ և նստուցանելոյ՝ որ լինի՝ յայլմէ մարդ միջամուխ չի լինին,՝ և չի խառնուին և Պատրիարգին մինչև մատնահարեալ արգն որ չի լինի՝ դատաւորի արզով և արզուհալով՝ մէկին առաջնորդութիւն չի առուի. և այլ վախֆական եղեալ բաներնին՝ Պատրիարգին գիտութեամբն լիցի. յայլմէ մարդ միջամուխ չի լիցի. և մեռնող քահանայից և կարգաւորաց, և յառաջնորդաց և սևագլխաց. և մարապետ անուանեալ կարգաւոր կանանց ի վերայ կանոնի իւրեանց Պատրիարգին եկած զմնացուածքն՝ ի վերոգրեալ Պատրիարգն. և կամ ի կողմանէ նորա եղեալ վէքիլներն միրիի համար բռնելոյ և առնելոյ՝ որ լինին՝ զառաջի կանոնէ ղուրմպէյթիմալ և ղասամի[86] մարգիքն միջամուխ չի լինին. և յառաջմէ բռնած և դարձուցած յեկեղեցեաց, և վանքից և ուխտատեղաց. և իւրեանց Թապի եղեալ յառաջմէ սովորութիւն եղած, և մինչև ցայժմ մնացեալ զօրէնքնին կատարելոյն և սահմանացն իւրեանց. և մեծապատիւ ֆէթվայի[87]. և յատուկ բարձրագործ ֆէրմանի և եկեղեցեաց, և վանքերուց. և տալոյ եկած ֆէրմաններաց ի կողմանէ գաւառապետէ. և յայլմէ անպատճառ միջամուխ և ձեռնամուխ չի լինին. և Պատրիարգին գիտութիւնն և հրամանն չեղած՝ յօրինէ գուրս երրևմն գիւղօրէից քահանայքն, պսակի արժան չեղած հայուն պսակ չանեն. և մէկ հայոյ կինն՝ յիւր այրէն փախչի. և մէկ հայ մի կին թողելոյ. և կամ թէ առնելոյ որ լինի՝ ի միջի նոցա Պատրիարգէն՝ և կամ թէ վէքիլներէն ուրիշ մարդ չի մտանէ և չի խառնուի. և մեռնօղ հայ առաջնորդք և քահանայք. և այլ հայոց ժողովուրդն ի վերայ օրինաց իւրեանց եկեղեցւոյ աղքատաց և Պատրիարգին զոր ինչ կտակ որ անեն՝ ընգունակ լիցի. և հայ վկայիւք

շէրով[88] մուրկ անեն. և ի դուրս օրինաց իւրեանց շարժօղ հայոց առաջնորդք և քահանայք և կարգաւորքն ի վերոգրեալ Պատրիարգն ի վերայ օրինաց իւրեանց ուսուցանէ. և զմազերն վարսաւիրէ և զիւրեանք ի քահանայութենէ և ի սեպագլխութենէ հանէ. և զեկեղեցիքն այլոց տալոյ որ լինի՝ միջամուխ չի լինին. և ի Պատրիագութեանն Թապի տեղոց ի վերայ հին օրինաց իւրեանց յեկեղեցական եղեալ զայգի և պախճայ և չիֆթլիկ, և չայիր[89], և արտեր. և ջաղաջք, եայազմայ[90]. և բանայիր, և վանքեր. և տներ և խանութներ. և պոստղարեր, և անպտուղ ծառք. և այլ սոյնպէս եկեղեցւոյ վախֆ եղեալ իրք և տավարներն առաջի կանոնի վերայ զայս բարձրագործ պէրաթովս հայոց Պատրիարգ եղեալ Զաքարիայ անուն վարդապետի կողմանէ բռնել և զապթ անել տուլի՝ յայլմէ միջամուխ չի լինին. և եկեղեցեաց և վանքերուց փոխանորդ լիցի. և պատրիարգութեան ընկած իրաւունքն ուտօղ և կլանօղ քահանայից և կարգաւորաց Պատրիարգին հիսապնին որ տեսանէ, զառաջի կանոնէ դուրս յայսմէ միջամուխ չի լինի. և երբեմն մեծամեծ մարդիք զայս քահանայն հանէ. և զեկեղեցին նորա այս քահանային տուր տէյի. և կամ թէ զայս հայու կինն՝ այս հայուն պոսակ տրէ տէյի դուրս օրինաց իւրեանց դօռ և ինճիթմիշ[91] չանեն. և ի հայոց ազգէ ոմանք զեկեղեցի և վանք չունենալուն աղագաւ՝ ի տեղէ ի տեղ շրջագայելով ուղիղ հայ րայեաներուն օրինաց իւրեանց դուրս չարութիւն անօղ չարերն՝ Պատրիարգին գիտութեամբն՝ և բարձրագործ ֆէրմանիւ իմով բռնեն և հախերնուն պիտոյ եղածն կատարեն. և Պատրիարգին անցած և դարձան տեզուանքն հանդերձ և կերպարանք փոխելոյ որ լինի՝ ի կողմանէ գաւառապետէ և բռնաւորէ անպատճառ միջամուխ չի լինին. և պատրիարգն իւր օգուտ և շահին համար հասըլ եղած այգուց մահսուլն. և ողորմութեանն անուան հայոց ազգէն տալոյ եկած շիրէ, և մեղր, և իւղ. և այլ իրքն ի տուն իւր վերցնելու և տանելու որ լինի՝ ինկէլէյք և դըռուիքն[92] եղեալ բռնաւորէ և եասախճոցմէ մէկ մարդ մի դուրս ի կանոնէ ինճիթմիշ չանեն. և դատաւորի հրամանաւ վայր դնելու պէտք եղած հայոց քահանայք և կարգաւորքն Պատրիարգին գիտութեամբն վար գրուի. և մէկ հայուն իւր կամքն չեղած՝ զօռով տաճիկ չանեն. և Պատրիարգին կամքն չեղած՝ մեք քեղի զօռով եասախճի կլլամք տէի՝ և այլ միհանայիւ դըրանս ծառայից կողմանէ ինճիթմիշ չի լինի. և տարեգլուխ արքունի խազնան իմոյ՝ քանի որ թէսլիմանէ՝ Պատրիարգութիւնն վերոգրեալ պատճառ և կանոնի վերայ զարձուցանօղ լինի. և յաւիտենական զապթ[93] անէ. և իզարձուցանելոյն նորա ի կողմանէ յայլմէ մէկ մարդ մի յետ չի լինի. և պատրիարգի կողմանէ ողորմութիւնք հաւաքելոյ համար ուղարկած վարդապետաց անցած և դարձած տեղորէից գաւառապետաց և բռնաւորաց կողմանէ միջամուխ չի լինին. և ի դուրս օրինաց իւրեանց պսակ եղեալ հայքն՝ յեկեղեցի մտանելն օրինաց իւրեանց դուրս լինելոյ աղագաւ՝ այնպիսիքն մեռած ժամանակն՝ դատաւորք և նայիպք, և այլ զապիթներն՝ դուք վերուցէք գէյի քահանայից դօռ և եղիյէթ[94] անել չի արուի. և Պատրիարգն քանի որ պերաթի կանոնի վերայ շարժումն առնէ՝ զՊատրիարգութիւնն ընաւ ուրի-

շի չի տրուելու վերայ ի տեղն խայտ՝ և յայտնեալ լինելոյ աղագաւ՝ բարձրագործ պէրաթիս կանոնէն դուրս՝ յայլմէ միջամուխ ե ձեռնադրութիւնն չանեն տէյի ի մէջ շուրութի նորա գրեալ և յայտնեալ է. և ի վերոգրեալ Զաքարիայ վարդապետն՝ (որոյ լրացի զվերջն բարեաւ)՝ ի համեմատի իւրոյ՝ նման ինքն՝ և դրան քեահիեայիւն միատեղ տասն և հինգ մարդկանց խարաճ և ավարիզ՝ [95] և կանոն եղեալ Թէքլիֆ [96] չի ուզվի. ե ի զապթս եղեալ քաղաքաց մէջն եղեալ յեկեղեցեաց և վանքերուց մէջն բնակեալ քահանայից, ե սևադըլխից Թէֆթիշ. այսինքն քննութիւնն ե հիսապնին Պատրիարգին և վէքիլներուն գիտութեամբն տեսնուի. ե հնուց հայոց յատուկ եկեղեցիքն ե վանքերն՝ փաշայ, ե միւսէլլիմ. ե վօյվօտայ [97]. ե դատաւորի արդով ե մուրասալայովն՝ [98] ուղիղ հայ րայաներուն ձեռացն չի առնուի. ուրիշ օրինաց վերայ եղեալ կաթօլիկ անուանեալ չարագործաց չի տրուի. և օրինաց վերայ եղեալ կաթօլիկութեանն նախատանօք, նախատեցեալ չարագործաց ճէրիմէներուն [99] համար՝ ուղիղ հայ րայաներաց նեղութիւնն չի տրվի. և ինճիթմիշ չանեն. հայոց Պատրիարգի գիտութեամբ և ծանուցմամբ հախերնուն պիտոյ եկածն ի վերայ օրինաց իւրեանց կատարեսցէն. և այնպիսի չարագործաց ճէրիմէներուն համար եղեալ բազում պարտուցն համար. ի քաղաք ե ղասապայք և գիւղօրայքն եղեալ եկեղեցեաց և վանքերուց իրքերուն ձեռնադրութիւնն չի անեն. և ըէհին [100] ըլլալու համար առնել և ըռնել չի արուի. և մէկ կերպիւ առնուած կանէ՝ դատաւորի գիտութեամբն յետ դարձուցանեն. և ի տեղորայքն տրուի. ե ի վերայ հին օրինաց իւրեանց՝ մէկ հայ մի՝ կին թողուլ. և ի վերայ կնոջ կին առնուլ, առաւել օրինաց իւրեանց դուրս լինելոյ աղագաւ՝ յայնպիսեաց հրաման չի տրվի. ուսուցանեն ե զականջս նոցա օլրեն. և ի ձեռս Պատրիարգի եղեալ գաւազանին միջամուխ չի լինին. և զմիրի մախթուն հաւաքելոյ համար անցօղ և դարձօղ սևագլխից անցած և դարձած տեղօրէից՝ դիւր պատճառիւ անցանելոյ համար ի վերայ նոցա եղեալ սիլահ՝ որ է զէնք. և տավարներուն ի կողմանէ գաւառապետէ և զայլք միջամուխ չի լինին. և իւրեանց յատուկ եկեղեցական իրքերէն գրուիքն, և իսկէլէներն կէօմրիւկ և պաճ [101] չուղուի. և երբեմն եշրաներաց՝ այսինքն անպիտանաց յայտնի եղած տաւաներն ուրիշ տեղօրայք մտիկ չանեն. շնորհաւոր յատեանն իմ տեսանելոյ վերայ ի շնորհաւոր շեմոյս հէվալէ անելոյ [102] համար, ի համեմատի իւրոյ շուրութն ի պէրաթի նորա մատուցանելոյ համար՝ արզուհալով խընդրելոյն աղագաւ՝ զհամեմատ նորա եղեալ Կոստանդնուպօլսոյ և Օխրիոյ Պատրիարգութեանն՝ պէրաթին շուրութն տեսայ. որ ի Կոստանդնուպօլսոյ և Օխրիոյ Պատրիարգներն. և ի խզմէթս նոցա եղեալ դրան քեահիայովն՝ տասն և հինգ մարգերէն խարաճ և ավարիդ՝ և կանոն եղեալ Թէքլիֆ չի ուզվի. և դատաւորական պիտոյ եկած տավանին՝ շնորհաւոր յատեանս իմոյ մտիկ լինի աէյի ի պէրաթներուն շուրութն գրեալ լինիլն յայտնի լինելոյն աղագաւ՝ արզուհալն և տէրքէնարն ի համեմատի նորա պէրաթի շուրութի մէջն մատուցանելոյ համար, նախ ծնեալ շնորհաւոր ֆէրմանի իմոյ կերպիւն ի մէջ շուրութին մտանելոյ աղագաւ՝ ի Կոստանդնուպօլսոյ. և թապի եղեալ հայոց

Պատրիարգ Զաքարիայ վարդապետն. (սրոյ լրասցի զվերջն բարեաւ) ինքն՝ և դրան քեահիայիւն միատեղ տասն և հինգ մարդկանէ խարած և աւարիդ և այլ թէքլիֆ չի ուզվի. և դատաւորական պիտոյ եղած տաւանին՝ շնորհաւոր յատեանս իմոյ տեսանելոյ պատճառի վերայ ի մէջ պէրաթին մտեալ շուրութէն և խայտէն դուրս՝ յերես յերեսէ. և պատճառ ի պատճառէ՝ մէկ կերպիւ՝ յետ բռնօղ և յետ անօղ. և յետ Թողօղ չի լինին. և բնաւ միջամուխ և դիմադարձութիւն չանեն. այսպէս գիտասցեն և ի շնորհաւոր նշանի իմոյ դիմանան. այսինքն համբերութիւն արասցեն։

Ի ժամանակս Տեառն Զաքարիայ Ազգասէր կարգացեալ Պատրիարգի մեծի Պօլսոյ՝ եղեն աղքն ասորւոց անկեալք ի ներ մերս իշխանութեան. որ այսուհետև կաթուղիկոս նոցին մերս Պատրիարգի արգոմն է նստելոց և ելանելոյ և ոչ այլոցն. քանզի կամաւն իւրեանց եղև այս. և ոչ թէ ակամայ և կամ բռնութեամբ. և կամ թէ այլ իմն կերպիւ. և յորժամ այս եղև՝ էր թուականն մեր ի ՌՄԼԲ. և ի յամսեանն օղոստոսի վեցին. ի վերադարձմանն վերոգրեալ ազգասիրիւ։ Ուստի ազգասէր յորջորջեալն փոխեաց զնոսին կաթուղիկոսն՝ որ էր հեստեալ. և եդ ի տեղի նոյն հեստելոյ ուղղափառ ոմն Մատթէոս անուամբ. արդարև է մեծ և կարի ուրախութիւն. եթէ իմանամք և լինիմք յար շնորհակալ ի Տեառնէ մերմէ Աստուծոյ. որ յառաջ սոցա ազգն՝ կամ զամենայն ազգս էին մեծ. և ունէին թագաւորութիւնս ճոխ. և անուանի ի վեր քան զամենայն թագաւորութիւնս. որպէս և յար ընթեռնունի յեկեղեցիս մեր՝ ասելով թէ՝ ի մեծն Ասորեստան ի մէջ աստուածաշունչ մատենի. ոհ թէ՝ որպիսի մեծ թագաւորութիւնս ունէին. բայց այժմ ստոր անկեալք. և այս թարց Աստուծոյ չէ. զինչ և իցէ՝ կամեցողութիւն ի Տեառնէ է։ Եւ արդ ի սոցանէ Բ քահանայք՝ որք էին եկեալք՝ յաղագս փոխման հեստեալ կաթուղիկոսին իւրեանց. և յորժամ էհան վերոգրեալ ազգասէր կարգացեալն ֆէրման վասն փոխեալ հեստեալ կաթուղիկոսին. ի սուլթան Համիթ արքայէ. և ետ նոցա առ ի տանիլ և փոխել զայն հեստեալն. ուստի յառաջ քան զգնալն իւրեանց՝ մատուցին զսուրբ պատարագ ի մերս Պատրիարգարանի եկեղեցւոջն։ Արդար և՝ մեծ և յոյժ ուրախութիւն եղև ազգի մերում և նոցա։ Որ և բարեբարն Աստուած՝ սէր և միաբանութիւն տացէ մեզ և նոցա. Ամէն։

Օրինակն Ֆէրմանի Ղալաթիայու վօյվօտային հայկական քառի.

Գերապատիւ հզօր զօրութեամբ Արքայական դրանս հաւատարիմ ցուցեալ վօյվօտայիս, որ հաստատեալդ ես ի կողմն Ղալաթիայու. ի մօտիլ ի մերձիլ մեծի հրամանիս դեկ լիցի. Իսթամպօլ և գումարեալ ժողովրդոցն հայոց վերակարգեալ պատրիարգ Զաքարիա անուն եպիսկոպոս՝ գերապանծ տէրութեան ինքնակալ իշխանութեանս մերոյ կնքեալ նշանիւն ծիր աղերսանաց՝ առաքեալ էր առ մեծութիւնս մեր, որ զմիտ բանիցն բարձեալ էր այս ինչ. զի ի մեծի քաղաքիս իմոյ բնակեալք ազգն հայոց. զաանին ոմանք հետեալք ի հաւատոց։ Որոյ յատկական անունն կաթօլիկ ձայնեալ. և օր ըստ օրէ հաւատոյն այնու. ղրաղում անձինս որսացեալ ճոխացեալ գտան. զի մեծք և փոքունք յայտնի և անյայտ՝ եւ և մուտս առնեն յեկեղեցիս ֆռանկաց և ի տունս իւրեանց զփաթերայս տանելով՝ զկարգ և զկանոն ֆռանկաց բացարձակ կատարելով զտունն տեղի եկեղեցւոյ առնելով. զայս ապա կարգ և անօրէն գնացս ի լուր թագաւորութեանս հասանելով, որք անկասկած մնալով սարսափելի պատժոյն արքայականի. զայնպիսի անձինս կաթօլիկս՝ կայունս ի նոցին հաւատս ըմբռնեալ չարաչար պատժօք յանձնեսցեն յարքունական նաւս և ի թիս. ծառայութեամբ կեալ ի նոսին. որպէս դերի ըմբռնեալ ի թշնամւոյ. քանզի մեծի Տէրութեանս ի գլխահարկսն հաւատարիմ ենթարկեալ ազգն հայոց. ներ ոբոց այս կռիւ և վէճ զօրանալով. վասն սիրոյ հաւատոյն կուեցան լինել ազատս. և զայնպիսի հետեալս ոչ գրտանիլ ի միջի իւրեանց. վասն այնորիկ ազգին հայոց բաժանեալքն ի հաւատոց՝ մեծ և փոքր, որ ի Ղալաթիայ ի ֆրանկ եկեղեցիս. և չիք կարգաւորք և վարդապետք ի տունս հայոց տուն մտանելով. և զմիտս հաւատոց այլափոխելով. զայսպիսի անձինս արգելեալ ի մտանելոյ՝ Ղալաթիայու վօյվօտային հրամանաւն. կապանօք ըմբռնեսջիք. և ի տեղիս տեղիս և ի տունս տունս ժամակարգութիւն ֆռանկաց մի լիցին համարձակ ի կատարել։ Եւ կանայք ոմանք՝ գոլով մանկամարդք և առանց առն. չիք կարգաւորք նոցին մտեալ ի տունս այնպիսեաց առ ի ծածուկ կատարել զծէսն ֆռանկաց. մինչ ազդեսցեն և զտեղիս նշանաւ ցուցցեն, այնր եղեալ մահալլէյի իմամի գիտութեամբն՝ եէնիչէրի աղասի և վօյվօտայի հրամանօք՝ և բռունն զօրութեամբ՝ կալեալ և կապեալ ի թէսխանէն մեծի տէրութեանս յանձնեսցեն. և փոխանակ սպանանելոյ. ի թի և յարքունական չէքտիրէն [108] յղեսցեն. և մինչև հայոց Պատրիարգին կնքեալ նշանաւ արդուհալն չիլինի, զայնպիսի նենգաւոր անձինս ի քիւրեկէն և ի յարքայական պատժոյն մի զերծեալ ապրեցուցանել կարողասջիք. այլ մնալով կացցեն ի պատիժս կանանց ոմանց՝ զկնի խրատելոյն՝ և յորդորելոյն. մինչ ոչ գայցեն ի յուղղութիւն. զայնպիսի կանայսն արգելցեն ի բանտ. որք սրտաբան պատմութեամբն իւրեանց՝ պատրեն դպարգամիտս. Նաև յառաջ քան զայս՝ բարձրագոյն հրամանիս մերոյ էհսան [104] լինիլն՝ ազգն հայոց տակաւին ոչ երբ և եկս ունելով յեկեղե-

ցիս փռանկաց. և ոչ այնքան համարձակութիւնս զեռ ևս սասցեալք. յայնմ ժամանակի ի նախնի արքայից հրաման ելեալ է. զինչս և զստացուածս չարափառաց ի յարքունիս կալնուլ. զինքն տալ ի ծառայութիւն թէրսխանային [105]. որ եղեալ է այն ի մեռում թուի հարիւր յիսուն իլամիւ վճռեցեալ։ Եւ ոմանք չար անձինք երևեալք. որք թողուն զառ և զտուրս իւրեանց, և հետևին նենգաւորական և խաբէական արարմանց. և զմիմեանս մատնելով և սուտ տաւայից ձեռնարկելով. և ոմանք ևս՝ չար իմաստք տավաճիներաց փոխանորդ լինելով. և կամ բռնութեամբ՝ սուտ վկայս կացուցանելով. բազում և շատ մարդկանց բայայից իմոց, զտունս աւերեալ են. յորոց չարութեանց և խաբէական արարմանց, անհանգիստ կելով բայայքն իմ. բողոք բարձին ի դրունս արքայի։ Այլ և ոմանք ևս զձև հանդերձին փոխելով. և զինքն այլատարազ անձն ոք երևեցուցեալ գաղտագողի ճանապարհաւ մտանեն ի յեկեղեցիս փռանկաց. մինչ զայնպիսիսն տեսանեն և տեսանէք. իմանան և իմանայք ընդ վերոգրեալ հրամանիս պատժելով անարգեսջիք, և զանպիտան ոք համարեսջիք, զի և այլքն տեսցեն երկիցեն. և զինքեանս ուղղիցեն. և եէնիչէրի աղային իմոյ հրամանաւն և ի կողմանէն մարդ լինելով յղեսցեն զըմբռնեալ կաթօլիքսն ի թերսխանէն. զի կատարելով զծառայութեան գործն թագաւորութեանս խրատելով խրատիցի. և պատուհասի։ք թերևս զգուշասցի ի չար աղանդոյն։ Քանզի՝ ի հարիւր եօթանասուն և չորս թուոջն՝ երեք կերպ մեծասաստ և արդիւնաւոր բանիւք հրաման ելեալ էր ի յինքնակալ Տէրութենէ. վասն այս չարագործ և այլաձև կաթօլիկ անձանց, և վկայեալ են մեծազօր տէրութիւնն օսմանցւոց զոլ սոքա խաբեբայք չարք. և հակառակ թշնամիք անձինք նենգաւորք. ուստի և խղճալի բայեայքն իմ հաւատարիմք. անհանդիստ մնալով ի ձեռս սոցա. որք միշտ դայթակղութեամբն՝ և չարութեամբն իւրեանց զուղիղ կանոնն հայոց բայային իմոյ՝ արգիլեն և ի ստոր արկանեն. վասն այսր պատճառի ողորմելով մեր ի վերայ բայայիս. զի մի լիցին ոտնակոխ այնպիսի չարագործաց. նոր ի նորոյ հանի զբարձրագոյն և զմեծասաստ հրաման աղերսանօք հայոց Պատրիարգին կնքեալ արզիւն. որ մեծապէս հայցեալ էր ի Տէրութենէս մերմէ, շնորհել ինքեան և ազգին իւրոյ զողորմութիւն ինչ այնպիսի որ զչարագործսն զայնոսիկ արքունական հրամանաւ պատժիցեն. և մեք հրամայեցաք պատժել զայնպիսին մանաւանդ՝ որ ի կողմանէ Պատրիարգին ազդեսցեն զայնպիսի չար մարդիկս. և նշանեսցեն՝ զի պատժելով պատժիցի. և սրտի մտօք անարգեսցեն։ Եւ հաստատեալ եգեալ կանոնս իմ. առ ի զօրութիւն ունելոյ. և բացարձակ ի զործ ածելոյ քարտուղարին իմոյ. և արքայական դիւանին. (ըէյիս էլքիթապ իլամոփ. եէթմիշ պէշ սէնեսի. այսինքն՝ տարւոյն անցելոյ)։ Աստուածապարգև եղբայրն իմ, հանգուցեալ և լուսաւորեալ սուլթան Մուստաֆայ արքայն. (որոյ զհոգին Տէր պայծառացուսցէ։) յոյժ սաստկութեամբ և կարի յանդիմանութեամբ վըճռեալ էր ի բաց բառնալ զչարագործսն զայնոսիկ։ Բայց արդ՝ յաջողմամբն բարձրելոյն՝ մինչ հասաք ի ծայրագոյն գագաթ թագաւորութեանս մերոյ.

պարտ էր և մեղ դառաջնոց դհրամայեցելումն. և մեք ևս հրամայեալ՝ անոռոգ հաստատել. մինչ հայցուածք ազդի ե րայայի. էր ի կանոն ուղղութեան։ Վասն որոյ՝ ի Թուղյս նարղենւոյ հրամայեցի և հրամայեմ զայնպիսի կաթօլիքս չար անձինս և հակառակս րայային մերոյ պատժել անարգել. ե վասն բարեկամութեան ե սիրոյ մեծամեծքն իմ մի՛ աչառիցեն. և մի ակն առնուցուն. և այնպիսի (մուֆսիտ) այս է պիղծ ե չար մարդկանց ինչքն յարքունիս. ինքն արկցի ի Թիւ. վասն որոյ դուք որ մեծամեծքդ էք Թագաւորութեանս իմոյ. և հաւատարիմք դրանն իմ, վօյվօտայ ե եէնիչէր աղասի. պարտիք լաւապէս՝ և սրտի մտօք՝ ըստ իմոյ հրամանի՝ զայնպիսի կաթօլիք չիք միւֆսիտներն. այսինքն պիղծք անարգել, Թշնամանել, ե զԹիւրեալ հերձուածական և կռապաշտական հաւատսն նոցին չԹողուլ կատարել. և ծածկապէս երԹ և եկքն յեկեղեցիս լատինականաց. յազգէն հայոց լաւապէս քննիցէք, զննիցէք, ե որոնիցէք, Պատրիարգին հայոց ձեռամբն, և կացուցեալ մարգովն՝ կալեալ ըմբռնեալ. և ի պատիժս հասուցեալ. իբրև զԹշնամի նշանեսջիք զայնպիսին. զի և այլոց խրատ և օրինակ լիցի. և տեսեալ զնոսա ի պատիժս ուղղիցեն զԹիւր կարծիսն իւրեանց. և ըմբռնեցելոց զինչսն ի գանձարան արքայիս յանձնեսցին. և զինքն մերկացուցեալ ի Թի ծառայուԹեան Թագաւորութեանս յղեսցեն. և այս իմոյ հզօր և բարձր հրամանիս ի վեր քան զչափն հնազանդեալ կատարել փուԹասջիք. և բան մի ինչ մի՛ պակասեցուցանել, և կամ աչառել. զի յետոյ վնաս մեծ առ մեծամեծսդ պատահի. ուստի ի հաստատիլ և ի նորոգիլ մեծի հրամանիս իմոյ, հրամայեմ բարձր հզօր և սուրբ իշխանութեամբս. ի հասանիլ ֆէրմանիս իմոյ առ ձեռ. ըստ այսմ գրելուԹեան հրամանի և արքայական վճռոյս, որպէս և գրեցաւ և հրամայեցաւ, զնոյնս անյապաղ կատարել. և միով զպատուիրանաւ իմով ոչ անցանել. այլ ի լրումն և ի գլուխ բերել. և սրբոյ դրօշակի Թագաւորութեանս, ծառայօրէն հպատակ կեալ։

Ի Ղալաթիայ նստեալ դեսպանաց ֆէրմանի հայկականն է.

Ի գալ հասանիլ բարձրագոյն հրամանիս իմոյ առ սիրազնեայդ իմ յարգելի մօլլայիդ Ղալաթիայու. և վօյվօտայի նորին. Իսթամպօլ և դումաբեալ ժողովրդոցն վերակացու Պատրիարգ Զաքարիա Եպիսկոպոս. կնքեալ նշանաւ իւրով արզուհալիւ գիր աղերսանաց մատուցեալ էր առ վեհապանծ Տէրութիւնս մեր. զորոյ զմիտն ասութեան էր այսպէս. զի ի մէջ հայոց գայթակղական վրդովմունք գոլով. և ի ընէ հուչակեցեալ՝ հերձուածողութիւնն սերմանեալ. առ ի քաղահան առնել. և ի յարմատոյն քանցել. ազդումն արարի՝ գերապատիւ բդեշխ փոխանորդին իմոյ. զի որ երթ և եկս առնեն յեկեղեցիս ֆռանկաց. միւֆսիտներն. և չար հերձուածօղքն՝ զել և

զմուտ նոցին խափանել. պատուհասիւք պատժել. ըստ բարձրագունի և զօրեղ հրամանիս իմոյ թագաւորութեան. նաև Սաամպօլ Ղալաթիայ, և մերձակայ տեղեաց նոցին բնակեալք չիք կարգաւորք և իշխանք. առ. ի ապահովս կեալ մատնեն. և նշանաւ ցուցեալ փաթերայից իւրեանց. և էլչոցն ապաստան անկեալք՝ ամբաստանեն զճշմարիտ իսկական ազգն հայոց. թէ. այս ինչ անձն և իշխան արգելու զմեզ՝ և ոչ թողու բացարձակ զօրէնս ֆռանկաց կատարել. և յեկեղեցիս նոցա մտանել. վասն որոյ օգնեցէք մեզ ով էլչիք. և այսու նենգապատիր խորհրդեամբ միշտ կամին մաքառիլ ընդ հայոց. և հաստատեն ի միջի իւրեանց զոմանս իսկական հայս. և զոմանս կաթօլիքս չարս. առ. ի վրէժխնդրութիւն ընդ բայային իմոյ. և լինի զի ի բարեկամաց իւրեանց տաճիկ. և կամ. այլ ազգ քրիստոնեայ. և ի կանանց եւ կացուցաննեն զվկայս սուտս. և բազմաւ հաստատուն իրակութեամբ իֆթիրայ և ստաբան առարկութեամբ առաջի մեծի դատարանի. և ուղիղ շերաթին մերոյ հաւատացեալ (ի վրէժ) ի պատիժ և ի յաքսորս փութան առաքել բզպարզամիտ բայայն մեր. և իւրեանց էլչի կոչեցեալ մեծաւորաւն արգ առնել կամին. որոյ արզիւն և մեծամեծք տէրութեանս իմոյ իլամ.[106] արարեալ. և ըստ օրինակի իլամին՝ ֆէրման հանեալ զպատժելին պատժել, և զաքսորելին աքսորել. ըստ որում. վկայութեամբն իւրեանց. և որոգայթ չար խաբէութեամբ խաբեն. նաև զմեծամեծս իմ. և թիւրեն զկանոնն ուղղութեան մերոյ սրբոյ. վասն այսր եթէ իլամն և ֆերմանն որ որոգայթիւ և չար հնարիւք իցէ՝ մի լիցի հաճելի և ընդունելի. այլ՝ նոյն խաբէական բանիւ իւրեանց արտահանեալ ֆէրմանն. և ընդ որում. մաքառեալ իցեն՝ այս է բուն ազգաւ հայ բայային իմոյ թշնամանեալն, և թշնամանօղն. ի միասին առաջի կացեալ մեծի խորհրդեան դատաստանի իմոյ. յարգոյ և փառաւոր չավուշ պաշիյի[107] գիտութեամբն. և մեծի բթեշխ փոխանորդի իմոյ վերահասու ճանաչմամբ՝ ըստ արդար և ճշմարիտ ուղիղ կանոնին մերոյ. մինչև ոչ դատիցին. և դատաստանն արդարութեամբ լեալ ոչ վճռահատիցին. արարեալ իլամն և ֆերմանն՝ ոչ է ընդունելի և անկանոն համարեսցի։ Իսկ և ի բնէ հրամայեցեալ ի մեծի տէրութեան օսմանցւոյ՝ կերպին և օրինակին՝ պարտի ի գործ ածիլ. ըստ այնմ. վասն այն չարագործ և միւֆսիտ նենգաւորաց ազատ մնալոյ բայայքն իմ։ Առաջին Պատրիարգն հայոց՝ արգուհալ էր տուեալ. և հայցեալ ի մեծէ կայսերութենէ՝ շնորհել զայսպիսի ֆէրման. որ օրինօք ֆռանկաց գոլով. և ձևակերպութեամբ հայոց շրջելով. և դըլուխ առաջնորդ լինելով. Գրիգոր ումն խաբէական և որոգայթ խօսիւք դարձուցեալ է զրաղում. բայայս իմ. ի կողմն ֆռանկաց. ուստի եթէ հնարիւք վկայութեամբ ազգին իմոյ տաճկաց. և այլոց անձանց բայայիցս՝ արանց և կանանց՝ թէ ի Ղալաթիայու և թէ ի Ստամպօլու. և յայլոց տեղեաց որք գան ի դատարանն թագաւորութեանս իմոյ. եթէ վասն առնելեաց իցէ. եթէ այլ ինչ ամբաստանութիւնք իցեն. որք զկողմն բայային հայոց ազգին ստոր անկեալ ոչնչացուցանել կամին. և էլչիյին արզիւն և արգուհալիւն. և կամ այլաձև փոխարկեալ բանիւ իլամք և

վճիռք իցեն. որ դրեալ է ի յիլամոջ.
Թէ այս ինչ անձն՝ ի յաքսորս և ի Թերս-
խանէ վճռեցաւ գնալ. և ֆերմանն ևս
եթէ իցէ հաստատեալ և գրեցեալ ար-
դիւն էլչոց՝ մի լիցի ընդունելի. և ան-
կանոն երեեալ զհրամայեցեալսն ի
ֆէրմանին՝ մի իշխեսցէ ոք ի գլուխ
բերել. այլ ձեռամբ Ղալաթիայու վօյ-
վօտային. նոյն ֆէրմանն և իլամն՝ որ
արդիւ էլչոցն է և խարէական հնարիւք
իցէ հրամայեցեալքն եկեսցեն ի յա-
տեան ուղղութեան առաջի յարգոյ չա-
ւուշ պաշուն. և գիտութեամբն նորին՝
ելցեն ի գատաստան ճշմարիտ կանո-
նի սահապ դէվլէԹ վէզիրին իմոյ և
մինչ իրին ճշմարտութեան և որ-
դիսութեան անցիցն ոչ տեղեկասցի.
ի յաքսորս և ի բանտ. և յայլ պատիժ
ինչ մի ածցի ի վերայ ռայայիս իմոյ և
մի խոշտանկեսցին։ Ի Թուին հարիւր քա-
ռասուն և մէկն՝ ընձեռեալ էին այս ֆէր-
մանս գԹուԹեան. մեծազօր տէրու-
Թիւնք օսմանցւոց. որոց հրամանաց և
մեք առ ձեռն բերել կամեցաք. որ-
պէս և ի Թուին հազար հարիւր յիսուն
և ուԹն գերապանծ նախնի արքայն՝
հարքն մեր՝ սուրբ հրամանն իւրեանց
շնորհեալ էին ազգին հայոց. վասն
այսր և մեք մինչ հասեալ ի ծայրա-
գոյն գագաԹ Թագաւորութեանս իմոյ.
և բարձր հզօր տէրութեանս մեր՝ լու-
սաղարդեալ երեեցաւ ըստ առաջնոյ
մեծի հրամանի ինքնակալ տէրութեան
մերոյ. և ի նոյն միտս և մեք հրամա-
յեցաք նորոգ հաստատել. մինչ Թա-
խանձանօք խնդրեցին. և ես արքայս
հզօր խնդրեցի ի պահպանեալ մատե-
նագրացն, և հարցն իմոց կանոնա-
գրութեանցն. եթէ լեալ իցէ ի նոսա՝
այսպիսի ինչ հրաման. արասցուք և
մեք. որ և ահա գտաւ ի դիւան մա-

տենին՝ գոլ և լինել հրաման այնպիսի.
վասնորոյ՝ բարձր և սուրբ հրամանաւ
Թագաւորութեանս իմոյ՝ հրամայեցի
(որպէս և ի բնէ լեալ է) հարիւր յիսուն
և ինն Թուականէն՝ և այսր՝ այս հրա-
ման միշտ արծարծեալ է ի տէրութիւնս
մեր. նոյնգունակ և ըստ տուչութեան
հին սուրբ հրամանաց՝ ընծայեսցի և
այս սուրբ հրամանս մեր յազգն հայոց.
զի որք ընդ նոսա Թշնամութեամբ և հա-
կառակութեամբ վարին. և որոգայԹիւ
կամին վտանգ հասուցանել խեղճ ռա-
յային՝ այնպիսեաց գոյք և ինչք և ըն-
տացուածք՝ ի յարքունիս լիցի. և պատ-
ժեսցի ծառայութեամբ Թերսխանէիս
իմոյ։ Արդ՝ որպէս առաջին մեծապա-
տիւ արքայքն հրամայեալ են. և ըղ-
շնորհ գԹուԹեան ցուցեալ ռայային,
զնոյնն և մեք կրկին հաստատեմք և վերա-
նորոգեմք. զի եթէ նենգաւորութեամբ
և չար խորհրդով միւֆսիտներն կամի-
ցին կաղացուցանել զհայ ազգն և բամ-
բասանս ինչ և չար անուանս համբաւել.
եթէ վկայութեամբ իմոյ ազգին. այ-
սինքն տաճկաց, արանց և կանանց
իցէ. և կամ Թէ էլչիներուն մարիֆէ-
Թովն արզուհալիւ, և այլ ինչ ա-
ղերսանաց շնորհիւ. եթէ իլամ ե-
Թէ հիւճէԹ[108] եթէ ֆէրման՝ որք նա-
խանձու և սուտ վկայութեամբ իցէ
շինեցեալ. մի լիցի ի կատարելութեան.
այլ անհաստատ երեեալ առաջի մեծի
փոխանորդին իմոյ. մինչև ոչ ուղղա-
պէս քննիցի. մի ոք իշխեսցէ զռայայն
իմ բնական՝ աքսորել և կամ ի Թէրս-
խանէն յղել. և արզ և խնդիր էլչոցն՝
որ վասն ռայայիս է ոչ կատարեսցի ի
հրամանս Թագաւորութեան. և մի լիցի
ընդունելի խնդրուածք նոցին. յաղագս
որոյ հասեալ և շնորհեալ հրամանիս ամե-
նեքեանդ յունկն մերձեցուցեալ հնա-

զանդեսջիք. և ըստ ամենայն գրեցեալ պատուիրանացս մի՛ ոք պակասեցուցանել իշխեսցէ. այլ բոլորն ըստ իւրում կանօնի վճարեսջիք. և սրբոյ դրօշակի թագաւորութեանս ծառայօրէն հպատակ լեալ հնազանդ լերուք։

Սա է եէնիչէր աղասուն ֆէրմանի հայկական թարգմանեցեալն.

Բարձր և հզօր հրամանաւս՝ յայտ լիցի Ստամպօլ և ի նմին գումարեալ ազգն հայոց. և նոցին Պատրիարգ Զաքարիա Րահիպ՝ առ գերապատիւ ատեան մեծի թագաւորութեանս՝ կրկնեալ նշանաւ իւրով՝ գիր աղերսանաց էր մատուցեալ. որ ի յարքայանիստ քաղաքս բնակիչք ազգն հայոց՝ ենթարկեալ րայայն մեր. ի մէջ իւրեանց ծածուկ այլ իմն հաւատ արծարծեալ. և յայլս ժամանակս հաւատոյն իւրեանց բնականի յարգումն և մեծարանս ոչ ընծայելով. այլ՝ պսակաց և մեռելաթաղ կանոնաց՝ միայն և եթ տան պատիւս. այսր աղագաւ արգելուլ և հերքել զչորսն զայնպիսիս. և հրամայեմք արքունական հրամանաւս, զմեռեալս այնպիսի մուֆսիտներաց՝ ոչ պահել յեկեղեցին հայոց. և կամ հայոց քահանայիւք զմեռեալս ոչ թաղել. այլ արգելումք այնպիսեացն ոչ կատարել զկանոնս ի վերայ չարափառաց. և ոմանք ես բռնանան՝ յուզեալք ի նախանձու՝ բարձէք զմեռեալսն մեր և թաղեցէք ըստ օրինին հայոց. ի բնէ անտի այս վէճ գոլով հրատարակեալ ի մինքեանս, տէրութիւնն մեր առ ի բառնալ և ի բաց վանել յառաջագոյն տուեալ են զֆերմանս՝ զուլթ շարժելով րայային։ Իսկ այժմ ի բարձրանալն մեր ի ծայրագոյն գահ թագաւորութեանս՝ հարկաւորեցաւ նորոգ հաստատել զհրամայեցեալ ֆէրմանսն. որք ի բնէ ընձեռեալք իցեն ի մեր տէրութենէ. վասնորոյ և մեք ըստ հին կերպի հրամայեցեալ պատուիրանացն՝ հրամայեցաք վերստին նորոգել զֆէրմանսն. որպէս և խնդրեալ էր հին Պատրիարգն հայոց՝ Յակոբ Րահիպն՝ ի վեհափառ տէրութենէ արքայիցն օսմանցւոց. զի ունէր զմիտ խնդրոյն այսպէս. որ ի մեծի արքայանիստ շինիս՝ բնակիչք րայայն մեր հայք կոչեցեալք ի հնումն հետէ և ի վաղ ժամանակաց ծաւալեալ. և յունկս ամենից հռչակեալ. ֆիրէնկ կաթոլիկաց տարաձայնութիւնն ընդ հայոց. և ըստ ամենայն ջանողական հնարից՝ նիզամ և կանոն տրեցեալ է։ Քանզի խղճալի և աղքատակեաց րայայն. առ ի հանգիստ մնալ ի չարափառացն վնասուց. որք կանոնիւ՝ այլ և հաւատովն՝ այլ իմն հաւատոյ ծառայեն. և արդար թագաւորութիւնս մեր՝ պարտ էր պատժել զնոսա. զի այնպիսի չարքն ծըպտեալ և այլաձև շրջին. և զորոգայթս զորս լարեն՝ վասն րայային իմոյ՝ ոչ բերեն ի ցոյց. և զբնական հայոց կանոնսն ևս ոչ ընդունին. և զհաւատսն ոչ պահեն։ Այսպիսեաց թիւրեալ միացելոց անձանց չարափառաց ոմանց՝ զհարսանիսն հայոց պսակաւ և օրինօք

արարեալ են. և սատակեալ մեռելոց նոցին՝ զմարմինսն յեկեղեցին հայոց տանել սովորեցուցեալ են. զի են կարօաք կանոնաց այսպիսեաց կատարելոյ։ Բայց ըստ բնական կանոնի հայոց՝ զայնպիսի չարափառսն՝ յեկեղեցի մուծանել և զպսակսն կատարել, է մեծ դժուարութիւն կանոնին հայոց. և մեղք համարեցեալ. վասնորոյ զայնպիսի հեստեալսն արժանի զոլով պատժոյ, առ ի արգելուլ յայնպիսի չարութեանց. հարկաւոր և պիտանի գործ գոլ րայային, որպէս պարտականութիւն։ Ցազագս այսորիկ ուր ուրուք հաւատն ծածկապէս գոլ. և այլոց ազգաց կրօնիւք վարժելոց. և ազգին հայոց կանոնացն. և դաւանութեանցն պատիւ ոչ տալով, այնպիսի չարափառաց աղջիկ տալ և առնուլ. և հայոց պսակաւ ոչ պսակել զոք. և սատակեալ մեռելոց զդիսն՝ եթէ հարկաւորիցի ես յեկեղեցիս հայոց ոչ տանել. և զհամարձակութիւն նոցին ի բաց վանել. զի որով մի ներհակութիւն լիցի կանոնին հայոց ընականի. և սատակեալ մեռելոց չարափառացն՝ եթէ քահանայ հայոց կամիցին. և կամ թէ բռնութեամբ չարափառքն ստիպեալ, թէ դուք բարձէք և թաղեցէք զմեռեալսն մեր. որպէս յառաջն սովորութիւն ունէիք բառնալոյ և թաղելոյ. այնպիսիքն հերքեսցին բարձր հրամանաւ. և մի իշխեսցեն զայսպիսի գործս ի գլուխ բերել. վասն զի ի պատճառս այնպիսի չարափառաց՝ հերքելոյ պատժելոյ, և խապառ լքանելոյ. սուրբ և բարձր հրաման արքայից մերոց վճռեալ հաստատեցաւ. զի որպէս ի բնուստ կանոնն հայոց իցէ ներհակ ոք մի երեւեսցի։ Որպէս ի Թուին հազար հարիւր յիսուն և ութն՝ զիլհիճճէ ամսոյ հրնգին՝ բարձրապանծ հրամանն Տէրութեան օսմանցւոց. գոր շնորհեալ են՝ յազգին հայոց. հանեալ ի մատենագրէն փիսկոպոսի[109] կոչեցելոյ. յորում աւանդեալ դոյր թէ ի կայսերսնիստ քաղաքիս մեծի՝ բնակիչք րայայն հայոցն էր. որոց արծարծեալ նիւթն չարափառ ֆռանկաց օր ըստ օրէ յաւելանայր. զի արք և կանայք թէ ի ծածուկ և թէ հնարիւք ինչ՝ յեկեղեցիս ֆռանկաց ել և մուտ առնեն. և ի տունս իւրեանց ֆռանկ փաթերայս տանելով դկարգ և զծէս ֆռանկաց եկեղեցւոյն կատարել տալով ստացան զհամարձակութիւն։ Առ ի արգելել բազմիցս հաստատեցաւ հրաման Տէրութեան. սակայն հակառակքն օրինին հայոց և լրբութեամբ քամահօղք յոմանց անձանց չարափառաց, թէ ի Ստամպօլ և շրջակայիցն նորին ըմբռնեալ՝ կալեալ ածին ի վեհափայլ ատեան բդեշխին իմոյ. և ի դատելն զնոսա պատասխանի արարեալ են իմոյ փոխանորդի թէ մեք ազգին հայոց և կրօնից նոցին չեմք հետեւօղք և հնազանդք. յորոց պատասխանատրութեանցն՝ իսկապէս ծանուցաւ Տէրութեանս լինիլն նոցա այլակրօն և հեստեալ. զի խոստովանութիւն նոցա յայլ հաւատս երևեցաւ. որ որովք ցուցան ներհակք, խռովարարք, և թըշնամիք ինքեամբք ինքեանց, լեալք դատապարտիչք։ Արդ՝ յետ այսորիկ զունկն նոցա կշտամբանօք եթէ ոչ ոլորիցի. և բարձի թողի ի կամս թողանիցի՝ նոքա որք ահիւ և ծածկապէս զանխուլ ի մարդկանէ երթ և եկս առնեն յեկեղեցիս այլազգեաց՝ յայնժամ համարձակեալք և բացարձակապէս զկանոնս իւրեանց կատարեն. և լինին յայտնի ֆռանկք. և լսօղք րայայքն զայթակղին և վնասին. ուստի՝ յայսցանէ վնա-

սուց և որոգայթից չարափառաց ա-
գատիլոյ և փրկիլոյ, և ապահովս կե-
լոյ. հրաման իմն մեծասաստ խնդրեալ է
ի բնուստ Յակօբ Պատրիարգն իւրով
կնքեալ արգուհալիւ. որպէս թէ ի մե-
ծի քաղաքիս եղեալ հայոց. աղգն յո-
րոց ի նոցանէ անձինք ոմանք՝ փռան-
կաց եկեղեցիսն ղնալով. և ի տունս
ղփաթերայր բերելով՝ զօրէնս և զկա-
նոնս նոցին առ ձեռն պատրաստեալ
վարին անհոգաբար։ Վասնորոյ այնպի-
սի կանոնաց հետեեալ չարափառաց
ստացուածքն՝ ինչքն, և ապրանքն. ե-
թէ ի հաւատս փռանկաց իցեն հաստա-
տեալք. ի գանձարան թագաւորութեանս
կալցեն. և զտէր ստացուածոցն ի թի
և ի թերսխանէն իմ յղեսցեն. ապա յետ
այնորիկ՝ արգուհալիւ ե հայցուածովք ի
տանջանաց և ի քիւրեկէն իբր հոգս քա-
շելով մի լիցին իշխօղք ազատութեանցն.
այլ կելով կացցեն ի հրամայեալ տան-
ջանս. ըստ այսմ պատճառի Ստամ-
պօլ և Ղալաթիա և Անատօլի կողմանսն՝
այս բարձր հրաման Տէրութեան. նոր
ի նորոյ հաստատեալ. և յայնս վայրս
առաքեալ զգուշացուցեալ են։ Եւ այսմ
տարաձայնութեան և խռովարկու չա-
րափառութեան. բուն արմատքն են ե-
րեսուն և հինգ հոգիք չիք վարդա-
պետք. որոց շատք մեծամեծքն ի Ղա-
լաթիայ գաղտակեաց ամրափակեալք
թագնաբար կեան և շրջին. մտանելով
ի տունս արանց և կանանց՝ շրջելով
ղհաւատս նոցին՝ ի չարափառութիւնս
իւրեանց. առ ի մերժել զչարութիւնս
նոցա. պարտ էր կացուցման բարձր
հրամանի Տէրութեան մերոյ. վասնո-
րոյ երկուցեալք ի հրամանաց մերոց
սաստկութեանց. ե փոքր ինչ Պատ-
րիարգէն հայոց խուսափեալք թագու-
ցանեն զերեսս իւրեանց. ե եթէ կա-
միցին ի տուն ինչ հաւատարմաց գնալ՝
որ ի Սաամպօլ ե Ղալաթիայ իցեն բը-
նակեալք՝ նոցին բարեկամք, հնարեն
այս ինչ՝ ղի մի ըմբռնիցին. ոմանք ի
ձև բժշկի. և ոմանք ի կերպարանս հա-
յոց վարդապետի անհոգաբար ել և
մուտս առնեն՝ ընդ որս և հաճին, և
իբրև տեղի ինչ դտեալ ընդ որդիս իւ-
րեանց՝ ժողովս առնեն՝ գումարեն
զարս և զկանայս. և որպէս զեկեղեցի
զտեղին զայն առնեն. և կամ թէ խա-
բէութեամբ յոմանս տեղիս զեկեղե-
ցին հայոց ըռնութեամբ առեալ իւրա-
ցուցանեն. և զձև և զկանոն փռան-
կաց անաանօր կատարեն. և առ ի
հաստատ պահելոյ զչար խորհուրդս
նենգութեամբ վարին ընդ րայային.
և զոր ինչ տուգանք և կամ այլ ինչ
ծախս և փող ստակ մասրաֆ լեալ իցէ,
վասն կռուոյն և խառնակութեան իւ-
րեանց բռնութեամբ կամին պահանջել
ի րայայից. այսպիսի զչարիս նիւթո-
ղաց անպակաս պարտի լինիլ վրէժ-
խնդրութիւն։ Նաև՝ յայնպիսի չարա-
փառացն եթէ ոք գայցէ յուղղութիւն,
ի բնական կանոնս հայոց, Պատրիարգն՝
և կամ վարդապետք՝ վկայեսցեն վասն
ուղիղ հնազանդութեան կանոնին հա-
յոց. որպէս հայք՝ և որդիք հայոց են
սոքա վերստին ուղղեալքս. յայնժամ
հաճեալ լիցի վկայութիւն առաջի տէ-
րութեան մերոյ. ղի իսկական և բուն
հայքն բացարձակք են հրամանաւ մե-
րով ի կատարելն զօրէնս իւրեանց. և
նոցին բնական օրինացն կատարելոց և
հաւատոյն պահելոյ՝ փաշայ և մօլլայ,
և նայիպ. և այլք մեծամեծք ոչ պար-
տին ձեռնամուխ լինիլ. և արղիւ նո-
ցին՝ ոչ է կանոն արձակելոյ զկա-
պեալսն ի տանջանացն. այլ Պատրիար-
գին. և նոցին եպիսկոպոսացն ազգմամբ

և ղեկուցմամբն հանել ի կապանացն և դժուժիւնս ցուցանել. ի բնէ ի Տէրութիւնս մեր վճռեալ կանոն կայ հաստատեալ։ Եւ եղեալ է զի եկեղեցիք հայոց՝ յաակապէս և որոգայթիւ իմն՝ վիճակ անկեալք են չարափառաց. վասնորոյ առ ձեռն եղեալ յեկեղեցիս հայոց կատարեն չարքն զկանոնս հաւատոյն ֆռանկաց. ի վերայ այսր պատճառի զոյնպիսի անձինս չարափառս հարկ իսկ եղև պատժել. և պատուհասիւք մեծաւ թշնամանել. և զայնս եկեղեցիս՝ որք ընական ֆէրմանիւ մերով՝ տուեալ է ազգին հայոց կրկին ըստ արդար իրաւանց յանձնել զեկեղեցիս ազգին հայոց րայային մերոյ։ Իսկ և չարափառք ոմանք և նենգաւորք սուտ վարդապետք հայոց ձևանալով՝ ընդ մանկամարդ կանանց գործէնս ֆռանկաց կատարեն. և արգելհալք ի տունս նոցա աւուրբք բազմօք, հակառակք և թիւր օրինօք շարժին. և զօրէնս ֆռանկաց ի վեր քան զչափն պատուօղք լինին. և համարձակապէս մտանեն և ելանեն՝ ոչ ինչ զանգիտեալ յումեքէ. վասնորոյ հարկ եղև պատժել զայսպիսի չարագոյնս, զատակեալ մեռելոց զդիսն՝ քահանայիւ հայոց ոչ թաղել. զի կանոնի հայոց է գայթակղութիւն և ապօրինութիւն։ Ուստի՝ մի և մի իւիք դլխացաւանք լիցին այնպիսիքն րայային մերոյ. զի ազգն հայոց ի խնամս տէրութեան մերոյ ենթարկեալ է Ստամպօլ և Ղալաթիա, և ի շրջակայս նոցին, վեց ժողովք հասարակութեանց վրճռեալ մեկնի ի գիրս մեր ազգին հայոց. վարդապետք և քահանայք. և իշխանք ժողովրդոց. և միահամուռ ծերակոյտք րայային։ Որոց պաղատանաց արզիւն, և խնդրեալ հայցուածոց բանիցն՝ գութ շարժեցաք ի վերայ բնական մեծի Տէրութեանս իմոյ. ի գլխահարկս ծառայութեանց հաւատարիմ հայասեռ տոհմին, որ յայսպիսի վնասատու թշնամեացն՝ ի փրկելն և ազատելն՝ ողորմութիւն վարկանի արդար վճռոյն մերոյ։ Զկնի այսօրիկ հայոց ազգին արք և կանայք ի Ղալաթիա եղեալ եկեղեցին ֆռանկաց զնալն և մտանելն. և կամ չարափառաց չիք կարգաւորաց ի տունս հայոց մի մտանելն. և այլք այսպիսիք՝ ոչ ևս յաւելցին առնել ըստ առաջին զնացիցն։ Իսկ որք ոչ են հպատակք այսմ հրամանի՝ Ղալաթիայ վօյվօտայի մեծութեան շնորհիւ կալեալ և կապեալ. և յեկեղեցական կարգէ ֆռանկաց՝ մի ուրեք ի կողմանս րայային ժողովիցին. կամ առանց առն եղելոց մանկամարդ կանանց ի տունս այնպիսեաց մի երբէք իշխել ի մաանելն. և մի կալ մնալ որպէս արգելեալ ի նմին տան. եթէ ի Ստամպօլ. և եթէ ի Ղալաթիա. ուր ուրեք գտասցեն. և զննեալ ծանիցեն. թէ ի տան ուրուք իցեն այնպիսի միւֆսիտներ տանուտէրամբ հանդերձ՝ վերահաս գիտութեամբ Պատրիարգին, և միհալլէ իմամիյի ճանաչողութեամբ և եէնիչէրի աղասիյի, և Ղալաթիոյ վօյվօտայի բուռն իշխանութեամբ՝ կալեալ և կապեալ յղեսցեն՝ ի թէրսխանէն մեծի ամիրային իմոյ. և ի ձեռս ազգին հայոց շնորհեալ սուրբ և գերամաքուր ֆէթվայն՝ որ է ուղիղ վճիռն մեր. և ըստ օրինի կանոնադրութեան սպանանելոյ փոխանակ՝ զանպիսի միւֆսիտներն ի քիւրէկ և ի չէքտիրէն[110] արքունական երթեալ ծառայեսցեն. և Պատրիարգին հայոց՝ մինչև կնքեալ նրշանն արզուհալին ոչ տրիցի ի յատեան մեծի տէրութեան՝ մի ոք իշխեսցէ ազատել զոք ի ծառայութենէ թէրս-

խանայլն. և կանանց և ի վեր քան
զչափն Թէմպիհ և պատուիրանացն զկնի.
եԹէ դարձեալ երԹ և եկս առնիցեն
յեկեղեցիս օտարաց՝ ի ռանտն արքու-
նական դնիցեն պատժելով ըստ արժա-
նեացն։ Այլ ի ընէ անտի շնորհեցեալ
հրամանագիրք և ֆէրմանք ի բուն օրի-
նակէն յատուկ յատուկ արտաքս բե-
րեալ ծրագրուԹեամբ որ ճշմարտապէս
որքան րայայն մեր ի հաւատս փռան-
կաց հակեալ և միաբեալ իցէ. և յեկե-
ղեցիս նոցա ծանօԹացեալ և ընտելա-
ցեալ իցէ. բազում ժնաս և ներհակ
գործս րայային գիպեալ. ուստի առ ի
արգելուլ և զրկել զնոսա՝ յանձնիշխա-
նական կամացն՝ առաջին գլխաւոր
դպրապետաց, էլ հաջի Մուստաֆայն
կոչեցեալ. ծանոյց ազդմամբ իլամին.
յաղագս այսորիկ ըստ բնական շնոր-
հեալ սուրբ հրամանին և դպրապետին
մերոյ՝ կանոնեալ ազդեալ իլամին մտաց
և չափաւորեալ կանոնացն. հրամայե-
ցի և ես լրումն բերել զհրամանս և
զպատուէրս արքայական. որ ի Թուիս
հազար հարիւր յիսուն և ինն հաշուին
մերոյ. և հասարակին ամսոյն մուհար-
րէմի. պարգևեալ տուեալ ֆէրմանքն ի
մեծի Տէրութեանս հրամայեցաւ զբուն
օրինակն ի մատենագիրս կանոնացն
տեսանել. և անտի օրինակել զկերպ
հրամանադրուԹեանս մերոյ։ Արդ՝ այժմ
ի յիսուն և ինն Թուականին տուեալ և
ընձեռեալ սուրբ հրամանաց օրինակին.
որ այնպիսի չարափառաց և հետեւեալ
միւֆսիաներաց՝ ինչքն և ապրանքն ի
գանձարան Թագաւորութեան ժողո-
վեսցի. տէրքենարի օրինակին և դրելու-
Թեանն ի գործ եկեալ կատարեսցի. բարձր
և հզօր հրամանս հաստատել վճռեցի. և հր-
րամայեցի. զի ուր ուրեք և հասցէ՝ մեծա-
պանծ հրամանս ԹագաւորուԹեանց մե-
րոց վեհափայլուԹեան. որպէս և կանո-
նեալ վճռեալ եմ. ըստ ամենայն կեր-
պին ի գլուխ բերել հարկաւորիք. և
դարձեալ վերոգրեալ իրակուԹեանցն,
և յատկապէս իւրաքանչիւր պատուի-
րանադրուԹեանց՝ բարձր հրամանաւ
հրամայեցի. զի և դուք ի կատարելն
կանխեսջիք, և ներհակքս և կամ ընդ
դիմակայ մի ոք գտանիցի։ Այսպէս ծա-
նիրուք և սրբոյ դրօշակի Թագաւորու-
Թեանս հնազանդ գտեալք հաւատարիմք
մնասջիք։

Եկեղեցեաց Թեֆթիշ չառնելոյ ֆէրմանի հայկականն է։

Ի մեծայարգ տէրուԹեան մեծա-
բաղդ զօրավիգ հրամանաց յայտ լիցի.
զի ի Թուին հազար հարիւր ուԹսուն և
եօԹն՝ զիլքատէ ամսոյն ուԹին. վեհա-
պանծ աԹոռ՝ և բազզիւ ծայրագոյն օս-
մանցւոց տէրուԹիւն, սկիզբն եւման
յաստիճան ծայրագոյն ի վեհափառ տէ-
րուԹիւնս իմ. մինչ վերահաստատեցաւ՝
արարի հրաման. զի բոլոր և համան-
գամայն ֆէրմանք և հրամանագիրք
առ նախնեօք մեծազօր արքայից, կըր-
կին և վերստին նորոգիցի և հաստա-
տիցի. ընդ որս և հրամայեցաւ ի տէ-
րուԹենէ նորոգիլ և ֆէրմանքն մեծի

Պօլսոյ. և ենթարկեալ իշխանութեան
մերոյ հայոց ազգին. որ յառաջ քան
ի ժամանակս արքայից անցելոց զար-
դուհալն տուեալ են ձեռամբ Պատրիար-
գին իւրեանց. ի ձեռս որոյ պարգե-
ւեալ հրամանագիր ֆէրմանքն մեծա-
զօր նախնի արքայիցն մեր ես տեսեալ
զկերպ դձե բարձրագունեղ հրամանին
ի նոյն միտ և ի նոյն շաւիղ հրամանա-
գրին. որք անյաղթելի տէրութիւն օս-
մանցւոց Թագաւորքն ընձեռեալ են
ազգին հայոց. վասն եկեղեցեաց սուրբ
հրամանաւ արքային. և ուղիղ կանոնիւ
մերոյս օրինի. պատահեալ կիսաշինու-
թեանցն. և աւերեալ տեղեացն նո-
րոգութեանցն՝ մի ոք ներհակ երեւեսցի.
և վասն բաղձանացն կաշառակեր լի-
նելոյ կարգաւորքն փափագին. միան-
գամ քէշֆ [111] եղեալն՝ կրկին քէշֆ առ-
նել զայնպիսի ներհակօղսն հերքեմք.
մի՛ լիցի ձեռնամուխ՝ յետ այսց զբե-
ցելոց յայտնի է այս ևս. զի նախկին
մեծայարգ նախնի արքայքն ի ծայրա-
գոյն և անսպառելի Տէրութենէ շնոր-
հեալ են՝ զհրաման զթութեան. և ան-
վրդով կելոյ՝ ենթարկեալ ազգին հա-
յոց. որք կան բնակեալք Անատօլի և
Ուրումէլի. զնոյն շնորհ գթութեան և
մեք ծաւալել կամեցաք յամենեսին ի
շնորհամուտ վիճակի գերագահ Թագա-
ւորութեանս իմոյ. յորոյ պատճառաւ
նորել. և կրկնակի հաստատել այնք
հրամանագիրք. մերոյ բարձր հրամանաւ.
իսկ ի տեղիս տեղիս, և ի գաւառս
ոմանս հակառակորդք երեւեալ. նեղեն և
վշտացուցեալ տառապեցուցանեն ղրա-
յայս մեր խղճալի. և զվարդապետս՝ և
զքահանայս ազգին հայոց՝ բռնութեամբ
տուգանեն. և աւելի հարկս պահանջեն.
յաղագս որոյ հանդարտ և անվրդով կե-
լոյ, և զգործս իւրեանց ազատօրէն
կատարելոյ հրամայեցաւ ի մերոյ Տէ-
րութենէ՝ որոնել և յուզել ի մատեանս
դիւանին. և ի կանոնական գրեանս
դատարանին. և գտաւ ի փիսկօպօս կա-
նոնին. որ հրամայեցեալ է ի հաստա-
տութեան պահել ղրայայն խղճալի.
ուստի հրամայեցաք վերստին նոյն կա-
նոնիւ ըստ առաջնոց հրամայեցելոցն
հանել ղուղիդ կանոն ինչ. և սփռել
յամենայն կողմանս. զի ի խաղաղու-
թեան մնասցեն. և զխղճալի ռայայն
մեր՝ մի՛ բնաւ վշտանկեսցեն. զի այն-
պիսիքն են հակառակք բարձրագոյն
Տէրութեանս։ Եւ մինչ կրկնակի գլուխ
բարձին արք անօրէնք և զշաւիղս ուղ-
ղութեան կորուսին. մեծաւ Թախան-
ձանօք հայցեցին ի բարձրագոյն տէ-
րութենէ մերմէ հայիլ ի հին դիւանա-
գիրս արքունեաց. և հայեցուցեալ տե-
սաք դիրս կանոնին. զի Պատրիարգն
հայոց Յօհաննէս վարդապետն՝ յառա-
ջագոյն տուեալ է զարզն իւր բարձ-
րագոյն տէրութեան նախնի վեհափառ
Արքայից. զի ուր ուրեք քաղաքք, գա-
սապայք և այլ կողմունք. ի վերայ ո-
րոց միահեծան իշխանութիւնն մեր
հրամայէ. և յայնս քաղաքս և ի դիւ-
զօրայս ի բնէ յարքունուստ ընձեռեալ
տեղիք եկեղեցեաց. որ ի վերայ հայոց
ֆէրմանիւ է տրեցեալ. և ի բազմաց
ամաց հետէ շինութիւն որմոցն և ա-
ռաստաղիցն եթէ աւերեալ և քայքա-
յեալ իցէ. և պիտոյասցի վերստին շի-
նութեան որմունքն և այլ տեղիքն՝
հրամանաւ ֆեթվային մերոյ սրբոյ՝ և
բարձր հզօր հրամանաւ արքային ըստ
գրելութեան երկուց հրամանաց ֆէթ-
վային և ֆէրմանին. նախապէս ուր
ուրեք և իցէ քաղաքի մօլլային և այլք
կարդացօղք և տաճիկք մեծամեծք. գր-
նացեալ աչօք իւրեանց տեսցեն. և

քայքայեցեալ աւերեալ տեղեացն վերահաստ լիցին, երկայնութիւնն ե լայնութիւնն այնր եկեղեցւոյն՝ ըստ բնականի շինութեանն՝ ոչ աւելի և ոչ պակաս՝ զննիցեն՝ տեսցեն և վկայեսցեն. և ի գիրս աւանդեսցեն հէօճէթիւ, ապա յետ այնր՝ հրամայեցեալ է զաւերեալ տեղիսն նորոգել. և շինել. ոչ աւելի և ոչ պակաս. մի լիցին ձեռնամուխ րայայքն, զի մի յետոյ վնասիցին։ Ապա զկնի այսպիսի հէօճէթիւ և ֆէրմանիւ շինեցեալ եկեղեցեացն նորոգութեանն կրկին հրամայեցեալ է քէշֆ առնել, վասն երկուց պատճառաց. նախ՝ զի մի համարձակիցին րայայքն՝ և աւելի ինչ շինութիւնս, ե գաղտագողի տեղիք շինեսցեն յեկեղեցիս իւրեանց։ Երկրորդ՝ զի մի սրիկայք և հասարակութիւնք տաճկաց վտանկիցեն զրայայս. թէ զկնի նորոգելոյն՝ կրկին քէշֆ լինիլ հարկաւոր էր, և ոչ առաջին, առ ի ազատ մնալոյ յայսպիսեաց վնասատու անձանց. կրկին և ուղիղ քէշֆ լինիլ պարտի։ Այլ և յոմանս քաղաքս և գիւղս, ե յայլս նահանգս՝ ոչ գլուխ խոնարհեալ ցուցանելով բարձրագոյն մերոյս հրամանի առ նախանձու, կամ վասն կաշառս առնելոյ. ե կամ վնաս հասուցանելոյ մաքառին ընդ խղճալի հայոց ազգին. և երթեալ առ մօլլային, առ վօյվօտային, և առ մեծամեծ անձինս բողոք բառնալով՝ գըրգեն զնոսա ի բարկութիւն. զի կամ տուգանօք վնաս հասուցեն, ե կամ զնորոգեցեալ տեղիսն քայքայեսցեն մեծամեծքն տէրութեան իմոյ. հաւատացեալ նոցին նախանձախնդիր խօսից՝ զօրացուցանեն զբարկութիւնս իւրեանց, ե լինին վրէժխնդիրք խղճալի րայային. զի կրկին տուգանք և փող առցեն, ե զծարաւս ագահութեանցն յագեցուսցեն, և եթէ ոչ տայք զտուգանս ասեն րայային ի բանտ ե ի տանջանս մատնեմք զձեզ. որովք երկուցեալ վշտացուցանեն զազգն հայոց, և նոքա ոչ կարացեալ տանիլ զայսպիսի նեղութիւնն, թողուն զտեղիս և զտունս, և փախչին անտի, լինելով ցիր և ցան, և ոմանք ևս ի բանտ արգելեալք և խոշտանկեալք ախ վայութեամբ զրաւեն զկեանս իւրեանց։ Նաև ոմանք գատիք ե մօլլայք՝ որք նորոգ ունին զիշխանութիւնս, և կամին հարստանալ ընչիւք և տուգանօք խղճալի րայային. և պատճառաւ քէշֆին. նոքա ես նեղացուցանեն զրայայս. ե գտեալ այլ և այլ պատճառս առիթս. մինչև զարհուրեցուցանել զնոսա. և մահ սպառնալ րայայից. և մեծի հզօր հրամանիս իմոյ՝ զներհակն ցուցանեն զգնացս. որ արդարև հակառակք են ուղիղ կանոնին սրբոյ. և են ապստամբք ինքնակալ իշխանութեանս մերոյ. որոց վնասակար անձանց՝ բազմիցս հրամայեցաւ զինքեանս ուղղել. և արքայական պատժոյն զպարանոցս իւրեանց զերծուցանել. և խղճալի ազգին հայոց մի կըշտամբել, և մի վնասել. զի այն չէ օրէն արդար թագաւորութեանս մերոյ։ Իսկ և բուն ֆէրմանիս իմոյ օրինակն ի դատարանիս մեծի՝ կնքեալ և գրեցուցեալ ըստ ուղիղ կանոնի հրամանի իմոյ. այսր և անդր՝ քաղաքս և գիւղս. և յայլ տեղիս սփռեալ առաքել հրամայեցաք. որոց միջի բնակիչք և չարագոյն անձինք բարբանջեն՝ թէ այս չէ ֆէրման արքայի՝ այլ օրինակն է. և կամ գաղտագողի առեցեալ ֆէրմանք են. և կամ ֆէրմանի տարւոյ թուականն անցեալ է այսքան ժամանակք. և դուք այժմ որպէս նորոգել իշխէք՝ և ոմանք ևս պատճառեն այս ինչ, թէ

այս ֆէրմանի մէջն յիշատակեալ անուանքն՝ են միայն Սամսոլ՝ Ղալաթիայ, և Անատօլու՝ և Ուրումէլի քաղաքաց՝ յատկապէս զանուանսն չէ յիշեցեալ. վասնորոյ՝ և ոչ է ընդունելի. այսր աղագաւ արդ առնել պիտոյ է վասն ձեր. և բողոք բառնալ ի դուռն Արքային մեծի. և այսու առթիւ ծծեն և նեղեն զրայայս իմ. ոչ այլ ինչ՝ եթէ ոչ վասն չար կաշառակերութեան և ագահութեան իւրեանց։ Եւ ինքնակալ տէրութիւնս մեր տեսեալ և ողորմութիւնս շնորհեալ՝ տուաք զֆէրմանն ազգին հայոց՝ մնալ ապահովս՝ և խաղաղութեամբ կեալ. և զոր ինչ գրեալն է և կնքեալ. մեծի դատարանի իմոյ նշանաւն, նոյն իսկականն պարտիք իմանալ. և գլուխ խոնարհեցուցանել բարձր հրամանիս մերոյ։ Եւ այս ոչ միայն ի ներկայ թագաւորութեանս իմոյ եղև. և կամ նոր ինչ հրաման հաստատեցի. այլ զոր օրինակ գերապատիւ ի Տէր Աստուած գնացեալ հայրն իմ վեհափառ սուլթան Ահմէտն՝ ի յետին ծայրագոյն աստիճանի իւրոյ թագաւորութեանն շնորհեալ էր զայս ողորմութիւնս ինորոգել զեկեղեցիսն հայոց. որպէս տեսաք ի բուն դիւանի մատեանս մեր. որ հաստատութեամբ գրեցեալ էր այսպէս. թէ ազգն հայոց մէկ բեռն և քառասուն հազար ստակն՝ յամ յամէ յանձնեն զմուքաթայն 112
յարքունիս, որ ի ժամանակի յայնմիկ՝ Պատրիարգն հայոց Յօհաննէս Վարդապետն է եղեալ. և ի ձեռս որոյ պարգեեալ էր զկերպ ֆէրմանիս մերոյ. որ իբր նորոգել զեկեղեցիս. և զքայքայեալ տեղիսն շինել հրամայեցեալ էր. և ներհակիլ ումեք չէր եղեալ հրաման. և բացարձակ կատարել կանոն իւրեանց. և ծէսք և կանոնք եկեղեցականացն լինիլ ընդ առաջնոց կանոնի։ Զայս բարձրագոյն հրամանս՝ տեսեալ մեր ի գիրսն արքունականաց. զի նախնի բարձրապատիւ Տէրութեանն Օսմանցոց. միշտ հոգալով զխղճալի ազգն հայոց, թէ վասն աւերեալ և քայքայեալ տեղեացն նոցին եկեղեցւոյ. և թէ ազատօրէն և բացարձակ կատարելոյ զօրէնս իւրեանց. և թէ այլ ինչ գթութեան օրինակք և ցոյցք տուեալք են րայայից ի նոյն շաւիղ հարկ է և ինքնակալ տէրութեանս իմոյ հետևիլ. և կանոնացն նոցին. և ինձ հաճոյ լինիլ։

Որ ի թուականութեան մերոյ. Ռ·Խ և Ե ամին. ըէպիլ էվվէլ ամսոյ ԺԳ ին. տրեցեալ է այս հրամանս. ի մեծ տէրութենէ օսմանցւոց. որպէս և կրկին հրամայեցեալ է ինքնակալ արքայն. և Հօր եղբայրս իմ Սուլթան Օսմանն. և նա ևս ի սոյն և ի նոյն միտ և հրաման արձանագրեալ է ի յարքունական մատենին. որ վասն ազգին հայոց՝ եկեղեցեաց շինութեան քայքայեցեալ տեղեացն։ Նաև հրամանս այս և կերպ գթութեանց, կալաւ և ի ձեռն երբեր հանգուցեալ մեծապատիւ եղբայրն իմ Սուլթան Մուստաֆայն. որ զայսպիսի հրամանսն կրկին վայելչացուցեալ նորոգ հրամանագիրս ետան. որոյ ժամանակի էր Պատրիարգն հայոց Յակոբ Վարդապետն. և նորին աղերսական արզիւն զնոյն ֆէրմանսն նորոգեցեալ հաստատեցաւ. և եղեալ է այս ի թուին մերոյ՝ հազար հարիւր եօթանասուն և մէկին. ըէպիլ ախըր ամսոյն ԺԸ ին. վասնորոյ՝ ըստ կարգի ինքնակալութեան, և յաջորդ Տէրութեան. մինչ ժամանեաց վեհափառ և ծայրագոյն ինքնակալ Տէրութիւնն. և նստայ ի յաթոռ Տէրութեան. և կալայ հզօր զօրութեամբ զիշխանութիւնս հայրենա-

կան. հարկ վարկայ և պատշաճ երևեցուցի Տէրութեանս իմոյ. զի և ես ի բարի ճանապարհ մեծազօր նախնի արքայից հետևեցիմ. և նորոգեցի և հաստատեցի ըստ առաջնոց կերպից. որ ահա այժմ ի ներկայութեան ինքնակալութեանս մեծի Տէրութեանս իմոյ՝ է Պատրիարգն հայոց Զաքարիա վարդապետն. և որոյ կնքեալ մատանեաւն և արզիւն՝ յունկն մերձեցուցի. և լուայ աղաչանացն. զի ի մատենի գանձարանքս իմոյ ամիրայիս փիսկոպօս ժողովածու նշանաւոր դրութեանցն վեր առեալ. որպէս և վայելն է ինքնակալ Տէրութեանս իմոյ զողորմութիւնս շնորհել. և ըստ հրամանի առաջնոց մեծի արքայից. հրամայեմ և մեծազօր արքայս. զի զհրամայեցեալ պատուէրն և յատկապէս եկեղեցեաց աւերելոց. և քայքայելոց զշինութիւնս մի արգելուլ. և զարքայական մեծասաստ հրամանս իմ կատարել. և սրբոյ դրօշակի թագաւորութեանս ծառայօրէն հնազանդիլ։

Եւ իբրև ժամանեալ եղեն նամակք թագաւորական հրամանացն ի ձեռն ազգասէր Պատրիարքի մերոյ, յայնժամ սկսաւ արկանել ի գործ. քանզի հրաման թագաւորի էր։ Եւ ի յայսմ միջոցի՝ հեստեալքն Քէօթահեայու՝ իբրև զգացան կատաղեալք սկսան խածատել զանմեղսն յուղղափառաց տեղւոյն այնորիկ. և որպէս ցեցք՝ յորոց գոյանան ուտել զնոսա. այնքան՝ մինչ զի առին զմին յեկեղեցեաց նոցա. սուրբ Սարգսի անուն, հանդերձ ուսումնարանաւն. և ըստ կամաց իւրեանց՝ այնուհետև սկսան կատարել զպաշտամունս օտարս ի հայրենի սահմանեալ կարգաց. և ոչ ածին զմտաւ զառածն իմաստնոյն. թէ Որ քակէ զցանկ հայրենի՝ հարցէ զնա օձ անապատի, այն է սատանայ. և թէ՝ մի փոխեր զսահմանս յաւիտենականս՝ զոր եդին հարքն քո. և զառաքելոյն Պօղոսի թէ. զի եթէ մեք՝ և հրեշտակ երկնից աւետարանեսցէ ձեզ աւելի, քան զոր առիքն՝ նզովեալ եղիցի. վասն այնորիկ յանգիմանեալք ի Տեառնէ եղեն ընկճեալք և զամօթի հարեալք առաջի ամենայն ազգաց և ազանց. և ժառանգաւորք անիծիցն ըստ վերոյ վճռոյ սրբազան առաքելոյն։ Բայց գթածագոյն հայրն հասարակաց՝ հայեցեալ ի մոլորութեան նոցա. վասն որոյ՝ և կրէին զվնասիւ։ Գթացաւ ի նոսա և սկսաւ խրատականաւն վարիլ բանիւ. ուստի՝ գրեաց առ նոսա բանս յորդորականս. զի թերևս գայցեն յուղղութիւն. և դարձցին ի թիւր ճանապարհէն՝ յոր մոլորեցանն։ Բայց նոքա առաւել ևս յամառեալ ի կամս իւրեանց՝ ոչ եղեն ունկնդիր բանիցն գթածագոյն հօրն իւրեանց։ Ապա հան հրաման յարքունի դրանէն աքսորման երկուց անձանց՝ որք երևելիքն էին ի նոսա. և առաքեաց զայն հրաման ի ձեռն առաջնորդի նոցա Յարութիւն խոհեմամիտ վարդապետի կեսարացւոյ՝ զի զայնոսիկ երկուս անձինս ըստ հրամանին առաքեսցէ յաքսոր. որոց միոյն անուն էր Տէր Գալուստ որդի Եսայի ամիրա. և միւսոյն՝ Դաւթի որդի Սարգիս՝ որպէս զի տեսանելով զնոսա

գուցէ և այլքն զղաստասցին. ըստ խրատուն թէ՝ Սաստեա միոյն՝ և այլքն երկիցեն. յետ այնորիկ՝ օգնականութեամբն Աստուծոյ. էհան ի ձեռաց նոցա զայն առեալ եկեղեցին. հանդերձ Ուսումնարանաւ, և առ ի բերանոյ նոցա զիր Նէգերի. այսինքն, եթէ ոչ դառնամք ի մոլար ճանապարհէս յայսմանէ. և թէ ոչ հնազանդիմք հրամանաց Պատրիարգին մերոյ, եղիցին ինչքն մեր յարքունիս, և անձինք մեր յաքսոր՝ և ի ծառայութիւն թիոյ, և ահա այսպէս և ըստ այսմ օրինակի՝ շնորհիւ Տեառն՝ ած յուղղութիւն ղմոլորեալսն այնմ քաղաքի. Ազգասէր Պատրիարքն մեր այս. քանզի ըստ որում դէտ էր կարգեալ և վերատեսուչ հոգւոց նոցա, պարտ էր նորա ղգուշացուցանել զնոսա, զի մի և զարիւն նոցա ի ձեռաց իւրոց պահանջեսցէ Աստուած. վասն որոյ՝ աշխատութիւն յանձին կալեալ ջանացաւ դարձուցանել զնոսա ի մոլար ճանապարհաց իւրեանց. և փրկել զհոգիս նոցա ի հոգևոր մահուանէ։

Եւ այս բաւ լիցի յաղագս եղելոցն ի քաղաքին այնորիկ։

Բայց այժմ դարձցուք պատմել կարճ ի կարճոյ զանցիցն Կոստանդնուպօլսոյ, որ եղեն ի ժամանակս նոյն Սրբազան Պատրիարքին Զաքարիայի։ Քանզի ի ՌՄԻԶ թուին Հայոց՝ եղև մահ սաստիկ քաղաքիս յայսմիկ, մինչև մեռանել յաւուրն հազարաց երկուց յամենայն ազգաց, և տևեաց յամ մի ողջոյն. յորում ժամանակի մեռան և բազումք ի հևստելոցն՝ և մնացին անթաղ յութն աւուրս, և այլ աւելի կամ պակաս, մինչ զի՝ գի նոցա եղեն նեխեալք. և գարշահոտութիւնք սփռեցան յարտաքս. յորմէ զզուեալ մերձակայիցն՝ այլ ոչ կարացին տանիլ և տոկալ. վասն որոյ՝ եկեալ յազգէն տաճկաց աղաչէին զնա, զի հրաման տացէ թաղման նոցա. և նա ետ ընկենուլ զոմանս ի ծովն. և զոմանս հրամայեաց թաղել առանց կատարման կարգի. և քահանայի պատուէր տուեալ մի՛ բազմութեամբ գնալ առաջի անկենդան դիոյն. այլ մի միայն. և այն ևս՝ չունի հրաման ասել հայր մեր մի՝ այլ այնպէս տանիլ և ի թաղումն իշոյ թաղել զնա. և եթէ ոչ արգելուին պահապանք գրանն՝ ասէր, ելանել ընդ դուռն. և այնմ ևս ոչ տայի թոյլ գնալ ընդ նմա։

Եւ զի՝ ոչ այլ ինչ էր առնել զայս՝ սրբազան Հօրն մերոյ. եթէ ոչ սակս դառնալոյ նոցա ի թիւր ճանապարհէ իւրեանց. և յաստուածուրացութենէ. վասն որոյ՝ իբրև տեսին թէ՝ այլ ոչ դոյ հնար ազատութեան, բազումք եկեալ մեղայ ասացին ըստ սաղմոսին թէ վասն մեղաց իւրեանց խոնարհ եղեն յոյժ. և տևեաց ժամանակ ինչ այսպէս և ապա զարձան անդրէն յառաջին չարութիւնն իւրեանց. որպէս շուն ընդ փրսխած իւր. և իբրև խոզ լուացեալ ընդ տիղմն թաւալեալ. յորոց մինն էր երևելին՝ Նալպանտ օղլի չիք Ստեփան ասացեալն. որոյ՝ ի ժամ հրկիզութեան՝

զտաւ ի տանն կարգազուրկ մի. զոր ըմբռնեալ ի փախստեանն՝ բերին առ Հայրն մեր. որում հարցեալ Տեառն մերոյ ասէ. Ո՞վ չար դու՝ ընդէ՞ր զայդ պիղծ թիւրութիւնս ուսուցանես դու և համախոհք քո. դուք ոչ մտանէք՝ և որոց մտանենն՝ չտայք թոյլ զի մտանիցեն. քանզի են ճանապարհք թիւրք՝ որք յաչս մարդկան թուին թէ ուղիղք իցեն, բայց կատարած նոցա հայի յատակս դժոխոց։ Արդ՝ եթէ ճշմարտութեան ես քարոզիչ՝ բարբառեա՛, զի և մեք լուիցուք եթէ բարւոք է հետեւեսցուք ուղղութեան բանիցդ. իսկ նա եղև պապանձեալ. և ո՛չ կարաց տալ պատասխանի բան մի. յայնժամ շարժեալ ի բարկութիւն Տեառն մերոյ, ասէ. Ո՞վ կորուսիչ հոգւոց, ընդէ՞ր ոչ խօսիս. եւ ոչ տաս պատասխանի եթէ քոյդ է ճշմարտութիւն. խօսեաց. ընդ է՞ր կարկիս այժմ առաջի մեր. ուրեմն դու այն ես՝ որ միշտ մտանես տանէ ի տուն և ասես զքեզ գոլ քարոզիչ ճշմարտութեան, բայց եթէ ճշմարտութեան ես քարոզիչ՝ ընդէ՞ր գողութեամբ եւ ոչ յայտնապէս քարոզես. ապա չէ՞ ընթերցեալ քո զայն բան Տեառն՝ թէ որ այլ ընդ այլ ելանէ՝ նա գող է եւ աւազակ. զի որ զճշմարտութիւն ուսուցանէ, ոչ երկնչի յատեան ճշմարտախօսից ելանել, եւ համարձակ վկայել. ըստ սրբոց առաքելոց, եւ ըստ հետևողաց նոցա. ուրեմն դու գող ես և նենգաւոր. և վախճան գողոցն եւ աւազակաց զմտաւ ած, թէ ո՞ւր հայի, և այնու մխիթարեա՛ զմեզ. եւ ըզհետևօղս բանից քոց. զի յորժամ կոյր կուրի առաջնորդի՝ առանց երկբայութեան երկոքեան ի խորխորատ անկանին։ Եւ արդ՝ ճշմարտեցաւ առ այս բան սրբազան առաքելոյն թէ՝ Նկեսցեն ժամանակք զի՝ ողջմտութեան վարդապետութեանն ոչ անսայցեն, այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս ըստ մարտնչելոյ լսելեաց իւրեանց. և ի ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն լսելիս իւրեանց՝ եւ յառասպելս կործանեսցին։ Եւ թէ՝ որք զկերպարանս Աստուածպաշտութեան ունել կամիցին՝ և ի զօրութենէ նոցա ուրացեալք իցեն՝ եւ խորշիջիք ի նոցանէ. քանզի ի նոցանէ են՝ որք մտանեն տանէ ի տուն, եւ գերեն զկանայս շաղջակուտեալս մեղօք. և վարեալս ի պէսպէս ցանկութիւնս. որք յամենայն ժամ ուսանին՝ և երբէք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանին. այլ որպէս յանէսն և յամբրէսն հակառակ կացին Մովսէսի. նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեանն. մարդք ապականեալք մտօք, անպիտանք ի հաւատս. և ըստ առաքելոյն Պետրոսի՝ թէ լինէին և սուտ մարգարէք ի ժողովրդեանն. որպէս և այժմ եղիցին ի ձեզ սուտ վարդապետք. որք սպրդեալք մուծանեն հերձուածս կորըստեան.՝ և զորս Տէրն գնեաց գնոսա՝ ուրացեալք ածեն ի վերայ անձանց զերագահաս կորուստ. եւ բազումք անկեալք երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյիցի. եւ ագահութեամբ մտացածին բանիւք առնիցեն զձեզ վըտարանդի. որոց դատաստանն ի բնէ ոչ դադարկանայ. եւ կորուստ նոցա ոչ նիրհեսցէ։ Ուրեմն՝ ո՞վ կորստեան որդի, մի՞թէ բնակի՞ հուր ընդ փայտի. եւ ոչ այրեսցէ զնա. եւ կամ բամպակ ընդ հրոյ, եւ ոչ ծախիցի ի նմանէ՞. ըստ իմաստնոյն բանի, թէ ծրարիցէ ոք զհուր ի գոգն. եւ զհանդերձն ոչ այրիցէ. կամ գնայցէ՞ ոք ի վերայ կայծա-

կանց հրոյ, և զոտս իւր ոչ խարշեսցէ. և այլ այսպիսի բանք բազումք եղեն ասացեալք ի յանդիմանութիւն չարին այնմիկ, և զկնի բանիցն՝ ետ առնել զնա դանալից, սակս ընդ դէմ ճշմարտութեան, և սուրբ հաւատոյս մերոյ հակառակ ընթանալոյն. և յետ այնորիկ՝ առաքեաց զնա ի Թի յարքունի նաւուցն սպասահարկութիւն. զի անդ ապաշխարեսցէ վասն կորուսանելոյ զհոգիս բազմաց ընդ որոց և զիւրն, և ապա ելցէ։

Իսկ վերոյիշատակեալ Նալպանտ օղլի՝ արբանեակն սատանայի՝ էր ի նմին ժամանակի պաղիրկեան պաշի Դէրէնտէլի եպարքոսին. որոյ զբոյց իմն էր առաքեալ առ հոգեոր հայրն մեր ի ձեռն Արապկերցի Նազարէթ աղայի Մուրտկեանց, թէ՝ երթ դնա և պատմեա Պատրիարքին՝ զի Նալպանտ օղլու ծառայ քո՝ այսպէս ասէ. եթէ ղանց առնելով ղանց արասցէ զայս բան. և զործ. զիւր զայն փոքրիկ նրստեալ սենեակն ակամբք պատուականօք և մարգարտովք լնում. և ինքեան շնորհեմ. ապա թէ ոչ՝ նմա և քեզ միանգամայն հասանէ փնասն. և թէ ոյր աղագաւ էր ասացեալ զայս բան Նազարէթ աղային. ոչ այլ ինչ՝ եթէ ոչ՝ վասն սիրելոյն ղնա վեհին մերոյ. որպէս զի զնացեալ պատմեսցէ նմա. և նա երկուցեալ ի բանիցն նորա՝ յետս կացցէ ինեղելոյ զնոսա։ Ուստի Նազարէթ աղային երկուցեալ ի բանից որդւոյն սատանայի. այն է Նալպանտ օղլուն՝ որ յուսացեալ էր ի Դէրէնտէլ Մէհմէտ փաշայն, եկն և պատմեաց հօր մերոյ զոր լուեալ էր ի նմանէ. իսկ Սրբազան Հայրն մեր՝ ետ նմա պատասխանի ըստ օրինի զբանս զայս։

Երթ և ասա որդւոյն պղծոյ, արծաթ նորա և ոսկի՝ եղիցի ընդ նմա ի կորուստ. և ով է նա որ երկնչիմ ես ի նմանէ. բայց երկնչիմ այո յայնմանէ որ յետ սպանանելոյ զմարմին ունի և իշխանութիւն արկանել ի գեհեան. զի ողորմութեամբ և կարողութեամբն Աստուծոյ, նա է ընդ իշխանութեամբ իմով. և ոչ եթէ ես նորայն. և եթէ կամիցիմ առաքել զնա յաքսոր և ի Թի, կարօղ եմ. բայց սակայն՝ դարձման և զղջման նորա սպասեմ. զի մի լիցի հոգի նորա ի կորուստ. այլ աղաչեմ երթ դու անհոգ լեր՝ և մի երկնչիր ի նմանէ. ահա Աստուծով փճանալոց է նա սակս անբարտաւանութեանն, զոր ամբարտաւանեցաւ ընդ դէմ մեր. և ոչ անկաւ բան նորա յերկիր. այսինքն սրբազան Հօրն մերոյ. այլ եղև Տէրամբ՝ որպէս և ասացն. բայց որդին կորստեան՝ Նալպանտ օղլու Ստեփան անիծեալն, իբրև ետես թէ՝ մեծաբանութեամբ իւրով ոչ եղև փրկութիւն՝ յայնժամ երթայ առանձինն մտանէ առ եպարքոսն Դէրէնտէլցի. և անկեալ յոտս նորա խնդրէ ի նմանէ սաստել Պատրիարքին հայոց, զի զանց արասցէ զբռնադատումն ինքեանց. իսկ նա կոչեալ զմի ի ծառայիցն իւրոց՝ առաքէ առ ծնօղն մեր ազգասէր. թէ պարտիս զանց առնել զբանս զայս. և չբռնադատել զնոսա. այս է զկաթօլիկսըն. իսկ հայրն մեր պատասխանի տուեալ ասէ. ոչ կարեմ առնել զանց. քանզի հրաման Թագաւորի սաստիկ է ի վերայ իմ. երկնչիմ, գուցէ պարտաւոր երեւեալ առաջի նորա մեծապէս պատժիցիմ ի նմանէ։ Իբրև լուաւ զայսպիսի պատասխանի՝ ի խոր խոցեցաւ. և զբազում չարիս՝ վասն հօր մերոյ՝ եդ ի մտի արդեամբ ի գլուխ տանիլ։ Բայց որ քննօղն է սրտից և երիկամանց՝

ցրուեալ կորոյս՝ և նանրացոյց զխորհուրդս նորա. ըստ այնմ թէ՝ Տէր ցրուէ զխորհուրդս Աքիտոփելայ։ Ուստի՝ լի սպառնալեօք գնայ առ Թագաւորն սուլթան Համիտ, և ասէ ցնա, ով տէր իմ տիրող ընդհանուր. կամ զհայոց Պատրիարքն փոխել պիտիս և կամ զիս. և նորա պատասխանեալ ասէ. ոչ զքեզ փոխեցից և ոչ զնա. երթ դու զքո վեզիրութիւնն արա. և նա զիւր Պատրիարքութիւնն արասցէ. քանզի իմացեալ էր Թագաւորն թէ՝ ոխս թափել կամի ի վերայ Պատրիարքին Հայոց. վասն այնորիկ՝ զփոխումն նորա ժրտէ յինքենէ։ Բայց ոչ ծանեաւ՝ թէ որ փորէ խորխորատ ընկերին, ինքն անկանի ի նա. վասն որոյ զկնի սուղ ժամանակի անցանելոյ՝ փոխեցաւ, նա ինքն եպարքոսն տէրէնտէցի. յոյսն և ապաւէնն Նալպանտ օղլի Ստեփանին. զի որով ռանծայրն՝ անկաւ ընդ նմին և ինքն. ըստ այնմ թէ անկաւ Բէլ և կործանեցաւ Դագոն. զի մեծամեծս բարբառեցաւ և ոչ Աստուծով։ Վասն որոյ՝ կործանեցաւ անկանգնելի։ Եւ ոչ յիշեաց զբան Աննայի մօրն Սամուէլի. որ ասէ. թէ մի՛ պարծիք՝ և մի՛ խօսիք զամբարտաւանս. և մի՛ ելցէ ընդ բերանս ձեր բան հպարտ մեծաբանութեան։ Քանզի Տէր ամբարտաւանից հակառակ կայ՝ տայ շնորհս խոնարհաց։ Եւ յետ նորա, այն է Նալպանտ օղլուն՝ յարեաւ Փէթրօ Զաքարիա ասացեալն. որ էր մի յերևելին ի նոցանէ. և էր Թէրճիւման [118] դեսպանացն ֆռանկաց. և հարըստութեամբ պերճացեալ. և սա ոչ սակաւ քան զնա եկաց հակառակ ճշմարտութեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ. այլ ի յոչ հնազանդիլն զլխոյն ազգի իւր. հրաման եղև ի Տէրութենէն ելանել գնալ նմա ի նեղուցն Բսպիտակ ծովուն. այն է ի Սէրթիլ պահար. սակրս անդ լինելոյ Թէրճիմանութեան գործոյ նորա ըստ արքունի հրամանին. ուստի ըմբռնեալ նորա յանհնարին վարանս՝ ըսկսաւ անկանիլ աստ և անդ առ ի զերծանիլ յայնմ ստիպմանէ, բայց ոչ կարաց. մանաւանդ զի ընդդէմ երևեցաւ Թագաւորական հրամանին. զի չկամեցաւ գնալ. վասն որոյ մատնեաց Աստուած զնա յանհնազանդութեանն պատիժ. զի որպէս ընդդէմ ղինեցաւ հոգևոր իշխանութեանն՝ այնպէս և մարմնաւորին կամէր զինել. բայց անարգեցաւ և ի վայր կործանեցաւ, զի ոչ լուաւ զխրատ սրբազան առաքելոյն թէ՝ որ հակառակ կայ իշխանութեան՝ Աստուծոյ հրամանին հակառակ կայ։ Եւ թէ՝ Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց. և հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն հոգւոց ձերոց. վասն որոյ՝ յակամայ կամօք յանձն էառ գնալ յաքսոր ի նոյն բերթ. և այսպէս բարձաւ և հեռացաւ չարն ի միջոյ. և քանզի՝ թէպէտ հարաւ ընդ վէմն ճշմարտութեան՝ սակայն խորտակեցաւ ըստ բանին Տէրունի թէ՝ Եթէ ոք հարցի ասէ ընդ վիմիս այսորիկ՝ փշրեսցի. և յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ զնա. բայց զկնի աքսորման անիծելոյն այնորիկ՝ Փէթրօ Զաքարիային իբրև էանց ժամանակ ինչ՝ յետոյ եպարքոսն՝ զՏէրէնտէցի Մէհմէտ փաշայն խնդրեաց ի Վեհէն մերմէ զիթլախն՝ որդւոյն սատանայի. քանզի ասէր՝ յօժար է ասել զմեղայն, և հնազանդիլ քեզ. և ըստ օրինացն Հայոց գնալ ունի ի մտի. և հեռի կալ այսուհետև ի թիւր ճանապարհէն յոր գնայր մինչև ցայժմ. և եթէ ոչ կացցէ ի սոյն պայմանի՝ յայնժամ վերստին անդարձ առաքեա զնա ի թի

կամ յաքսորը. զայս խնդիր ի ձեռն
Ակնցի Պետրոս ամիրայի որ բերեալ
զայս բան եպարքոսին առաջէ առ վեհն
մեր. աղաչէր և ինքն լսել բանի նորա
և դարձուցանել զՓէթրօ Զաքարիայն
ի յաքսորանացն. վասն որոյ՝ այսոցիկ
երկուց մեծյարգոյ և պատուական
արանց դիջանելով խնդրուածոց, ե-
լոյծ զնա ի կապանացն աքսորման
դառնալ անդրէն ի տեղի իւր. բայց
զկնի աղատմանն՝ թէպէտ եկեալ մե-
ղայ ասաց՝ սակայն ոչ է հաւատալի
ըստ դրոյն թէ՝ Եթէ փոխիցէ ինծ
ղխայթոց իւր. և եթովպացւոյ՝ զթխու-
թիւն իւր. նոյնպէս առն ամբարըշտի
զբարս իւր փոխել՝ հնար է. այլ այն-
քան միայն՝ զի ի յերկեղ կայցեն. և
մի ձեռն ձգել իշխեսցեն ի մերայինս,
և մոլորեցուսցեն ի թիւր ճանապարհս
իւրեանց. և ահա այս էր միտք Տեառն
մերոյ- սրբազանի. վասն որոյ ջանայր
և աշխատէր հանապազ. ոչ զի ի նո-
ցանէ բերցէ ի փարախ իւր. որ էր
անհրնար. այլ զիւրան միայն պա-
հել մարթասցի անխոտոր ի յուղիղն
Պողոտայէ։ Արդ՝ յետ այսմ այսպէս
լինելոյ, փոխեաց արքայ զՏէրէնտէլի
Մէհմէտ փաշայն. և կացոյց ի տեղի
նորա Եւմիւ Մէհմէտ փաշայն. որ ի
սուղ անցանելոյ ժամանակի՝ զնա ես
փոխեաց. և ի տեղի նորա կացոյց ըզ-
զինակիրն իւր զՄէհմէտ փաշայն՝ Ղա-
րա վէզիր կոչեցեալն. որ եղև յոյժ
կաշառակուր. և ոչ ետ թոյլ նեղել
զհերձուածօղսն. այլ ասէր պարտ է
համբերել. զի այժմ ոչ է ժամանակ
առնելոյ նոցա ինչ չար. վասն որոյ՝
համբերեաց հայրս մեր երկայնամը-
տեալ մինչև ժամանակ մի յանձն առ-
նելով Աստուծոյ. զոր ինչ ինքն առ-
նելոց էր. ըստ այնմ թէ՝ համբերելով

համբերի Տեառն՝ և նայեցաւ առիս, և
լուաւ աղօթից իմոց. ուստի ողորմե-
ցաւ Տէր, և կարճեաց զկեանս նորա,
և երարձ ի միջոյ. զայնպիսի կաշառա-
կուր իշխանն, որոյ յետ մահուանն, եւ
հինգ հարիւր քսակի մուրհակ զոր ա-
ռեալ էր ի հեստելոցն ախտարմայից.
որոյ երեք հարիւրն հատուցեալ էին.
և երկու հարիւրն դեռ պիտի հատու-
ցանէին. զոր յետ մահու եպարքոսին՝
առին ի գանձ արքունի։ Արդ՝ ի ժամա-
նակս սորա եղեալ զիրացն, սակաւ մի
երկարագոյնս ունիմ ճառել. քանզի՝
որովհետև թոյլ տուեալ եղև նոցա ի
կամս, յաղագս արգել լինելոյ սորա՝
որպէս ի վերն ասացաւ. սկսան յան-
դըգնել և չարանալ ի Գաղատիայ ե-
ղեալ հերձեալքն՝ մինչև առին զչորե-
սին եկեղեցիսն ի մերոյս ուղղափա-
ռաց, և ըստ ախորժակաց իւրեանց
կատարել զկարգ և զպաշտօն ժպրհե-
ցան. և զնախնի սահմանադրութիւնս
հայրենեացն մերոց խափանեցին։ Իսկ
արդ՝ իբրև ետես քաջ տեսուչ հայրն
մեր, թէ անդր քան զչափն՝ եղեն
յանդգնեալք. այլ ոչ կարաց ժուժալ.
ուստի՝ վաղվաղակի արար ժողով մեծ
քան զառաջինն ի սուրբ Աստուածա-
ծին եկեղեցին. արհիապսակ եպիսկո-
պոսօք. վսեմախոհ իշխանօք. և շնոր-
հապերճ քահանայիւք. և բազմախումբ
ժողովրդովք. զի ըստ սաղմոսին ասէր.
Նախանձ տան քո եկեր զիս և նախատինք
նախատչաց քոց անկան ի վերայ իմ.
վասն որոյ՝ զկնի աւարտման սիւնհոդո-
սին՝ ետ գիր ծանուցման սուլթան
Համիտ արքային. սակս յետ դարձուցա-
նելոյ զչորեսին եկեղեցիսն, որ ի Գաղա-
տիայ. և թագաւորն ետ հրաման մի յատ-
կապէս յաղագս դարձման եկեղեցեացն՝
առ մերայինս, որ ունէր օրինակ զայս։

Գաղատիոյ ֆէրմանի հայկականն է.

Ի Գաղատիայ բնակեալ ՚յազգէն հայոց ոմանք զնախնի հաւատն իւրեանց թողեալք. և այլ թիւր հաւատոց և օրինաց հետևեալք իցեն. և որոց իցէ նախնական հաւատն թողանեցեալ, ՚յայնպիսեացն ընտրեալ ի միջոյ՝ զտասն այրս՝ որք իցեն հեստեալք ՚յիւրեանց հաւատոյն, և տնհաւատ ասին՝ կապեալ և շղթայապիրկ արարեալ ի բերթն արգիլելոյ զնոսա իբր ծայրագոյն վնասապարտ իմոյ տէրութեան՝ հրաման է բարձր. իսկ ի մնացելոցն փոքրագունից՝ լիցի դաշնագրութիւն ի ՚յայս բան թէ՝ եթէ վերստին զայս չարութիւն անհաւատութեան գործիցեմք՝ իւրաքանչիւրքն մեք չորս Ո ական զուրուշ տամք ի ՚յարքունիս մերով կամաւ և ՚յօժարութեամբ՝ և ըստ ուխտելոյն մերոյ կատարեմք։ Այլ և բռնութեամբ ի ձեռանէ հայոց առեալ և տիրապետեալ զեկեղեցիմն՝ վերստին ի ձեռանէ սոյն հերձեալ չարաց առնուլ՝ և տալ ազգին հայոց. բարձր հրամանս է հաստատութեամբ սաստկաւ. քանզի՝ բնական սովորութիւնն թողեալ ըստ հաճոյից այլ բանս առնուլ, զոր չէ օրէն նոցա. սովորեալ են ՚յայն. որպէս և քանի մի ամաւ ՚յառաջ եղե տեսանել. որպէս և այժմ արարին զբազումս անկարգութիւնս՝ եպիսկոպոսաց քահանայից և ՚ներագունից իւրեանց ոչ հնազանդելով. և զբանս նոցին անարգելով. ուստի և ես պատուիրեմ. զի զայնպիսիսն լիցի ըմբռնել. և ի վերայ չորից եկեղեցեացն հայոց տիրապետութեանն վասն՝ հրամանս է. և ի ներս մուծեցեալ նորապէս հաւատոյն՝ քննութիւնս առնել։ Քանզի լուեալ եմ թէ՝ ի տեղդ եղելոց անձանց ոմանք կաշառատուութեամբ ի նոցանէ շահեցեալք զթիւրութիւնս նոցա ծածկեն. և զլաւութիւն ի նոցանէ հրատարակեն ի դրունս ի մէնջ դատաւոր կարգեցելոց. և ոմանց հայոց պարկեշտագունից վասն՝ գիրս պարուրականս առնեն և ՚յղեն առ մեզ ունելով զանկասասնս զուրս. որ և այսուհետև ևս անընդունելի լիցին այնպիսի պարուրական գրեանք ի ՚յարքա՚յապերճ դրունս իմոյ տէրութեանս. և ով ոք ընդունի զայսպիսիս պարուրականս, ներհակ և հակառակ տէրութեանս իմոյ իշխանութեան՝ բարձու համարեսցի. բայց ինձ հնազանդ ծառայից իմոց զգրեանս ընդունելի համարելոյ ընդ ամենայն տեղիս բարձր հրամանս է փայլեալ. և պարտ է նոցա միշտ խնամածել՝ և թէ տնհնազանդից սուութեանց և խաբէական բանիցն հաւատայք, հնազանդ ծառայքն մեր հայ ազգին ցրուեալք լինին ի տեղւոջէն իւրեանց. սակս գործեցեալ չարութեանցն հեստելոց. ապա ուրեմն չէ նոցա լսելի. այլ հայոց ենթարկեալ լինելոց իմոյ Տէրութեան հնազանդութեամբ՝ զի մի ցրուեալք լիցին. և թէ իցեն ոմանք ի հայոց հնազանդ ազգէն՝ փախուստ տուեալ ի քաղաքէդ սակս անտանելի չարութեանց հեստելոցն. հրաման է վասն այնպիսեացն գիրս դրել և ՚յետս դարձուցանել վերստին ի քաղաքն. և սակս անհնազանդիցն և թիւր շարժողացն ՚յառաջագոյն հաստատապէս հրաման է տրեցեալ ի մերմէ բարձրագոյն և ահարկու իշխանութենէ թէ, որ անգամ մի ևս զայսպիսի չարութիւնս գործիցէ ոք, զայնպիսին լիցի պատ-

ժել. և ԺՌ ական ղուրուշն յարքունիս առնուլ. որպէս և ինքեանք ուխտեցին. ուստի այնց հաւատարմութեանց պարունակիչ Թագաւորական յառաջագոյն տուեալ ֆէրմանացն հակառակեցան. և յորժամ մեք իմացաք՝ ոչ հաճեցաք սակս Թագաւորական անքակտելի լինելոյն գործոյ. քանզի հայեցաք՝ ի հին մատենագիրս մեր՝ և տեսաք՝ զի գոյր ի նմա գրեցեալ. զոր և մեք ի նոյն գրուածոցն օրինակեցաք։ Եւ արդ սաստիկ հաստատութեամբ պատուիրեմք մեծագոյն իշխանութեամբ մերով դընելով ուխտ մեծ՝ կրկին գրութեամբ։ Եւս և իսկապէս յանկարծ պատժելն իմ զայնս անձինս՝ որք Թիւր շարժին հանապազ, և վերոգրեալ ուխտեցեալ դրամն այն յընչից իւրեանց առցեն. և ինքեանք իմովս հրամանաւ ի պատժարանն Թիավարժութեան, և կամ ի բերթն կալանաւորեալք կապեալք և պըկեալք ի շղթայս պատժեսցին՝ մինչև ի զղջալ և դառնալ իւրեանց ի գնացիցն. և ապա յատուկ անուամբ գրել և ազդ առնել աստ. որ յինչ ժամանակ ազատ ի պատժոց լինիցին, յայնժամ ի ներքոյ բարւոք կառավարութեան՝ և ուղիղ սահմանի կացցեն ըստ իւրեանցն օրինի. և անհնազանդից վասն՝ տուեալ եղև ի մէնջ նոցին դատման ի սակս հրամանագիր Դագատիոյ դատաւորէն, ի Թուին տաճկաց ՌՃԼԴին։

Իսկ սա սրբազան Պատրիարք հայրն մեր յաղագս առաւել գԹութեանն ոչ կամեցաւ վաղվաղակի առաքել զայն առեալ հրամանն արքունի. զի Թէ յղեալ էր, բազում վնասու հանդիպեալք լինելոց էին. այլ խնայեալ ի նոսա, նախ առաքեաց առ նոսա խրատիչս և քարոզիչս. զի Թերևս լուիցեն՝ և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն. և զեկեղեցիմն դարձուսցեն յետս. և ոչ սակաւս յորդորեաց գրովք իւրովք, գրելով և առաջնորդին նոցա Ստեփաննոս վարդապետին. զի խրատեսցէ զնոսա. բայց ոչ ումեք եղեն ունկընդիր. և ոչ դրելոցն Վեհին մատուցին լսելիս. և ի ժամանակիս այսմիկ՝ վախճանեցաւ և առաջնորդն նոցա Ստեփաննոս Վարդապետն. բայց գոյր նորա աշակերտ մի Աբրահամ անուն որ գնացեալ ի սուրբն՝ Սաղիմ. և էր անդէն դարձեալ և եկեալ ի Կոստանդնուպօլիս, զսա առաքէ հանդերձ կոնդակաւ իւրով. և ասէ գնա դու և աշխատ լեր՝ Թերևս՝ առանց հոգևոր և մարմնաւոր վնասու դարձուսցեն զեկեղեցիմն յետս և զերծցին ի պատժոցն զոր կրելոց են. վասնորոյ և սա ևս՝ գնացեալ և բազում ջանացողութեամբ համոզել զնոսա աշխատեցաւ. սակայն՝ և ոչ բնաւ եղեն ունկնդիր, ապա հարկ եղև առաքել զԹագաւորական հրամանն. վասն որոյ՝ զՊանտրամայի առաջնորդ Պօղոս վարդապետն և արհի եպիսկոպոսն՝ Առաջնորդ նոցա կարգեալ՝ առաքէ զնա յԱնկիւրիայ, հանդերձ Թագաւորական հրամանագրաւն. և նորա առեալ զայն գիր զոր ֆէրման կոչեն՝ և գնացեալ ի քաղաքն Անկիւրա՝ տալ ընԹեռնուլ զայն ի յատեան կամ ի դատարանն այսինքն Դատաւորաց։ Բայց նոքա այսինքն դատաւորքն բազում կաշառս կերեալ էին ի հերձուածողացն. վասնորոյ կամէին զանց առնել տալ Պօղոս վարդապետին. ուստի և ի բերանոյ հեստելոցն ասէին՝ տացուք քեզ քառասուն քսակս՝ եԹէ զանց առնիցես զբանս զայս. վասն զի ինքեանք կուրացեալք էին կաշառօք. ըստ բանին Թէ կաշառ կուրացուցանէ զաչս դատաւորաց, գնա ևս կա-

մէին կուրացուցանել այս է զՊօղոս վարդապետն. բայց նա ետ պատասխանի նոցա և ասէ. ես ոչ վասն կաշառառութեան եկի աստ. և կամ ստացուածոյ. այլ զհրաման թագաւորին կատարելոյ. և զեկեղեցիսն մեր առնլոյ՝ որոց տիրապետեալք են ապստամբքս այսոքիկ առանց իրաւանց. և մինչև ցայս ժամանակս կննդանի էր զինակիր Մէհմէտ փաշայն, բայց մեռաւ յայսմ միջոցի. և իբրև լուան ի Գաղատիա զմահ նորա, յոյժ ուրախ եղեն թէ դատաւորքն՝ և թէ հեստեալքն. որք և առաւել յանդգնեցան. և կամէին այնուհետև մահացուցանել զՊօղոս վարդապետն. ասելով ընդ միտս թէ՝ սա է ժառանգն եկայք սպանցուք զնա. զի մեր լիցի ժառանգութիւն. վասնորոյ՝ իբրև ծանեաւ Պօղոս վարդապետն ըզչարութիւն սրտից նոցա. թէ մահ խորհին ինքեան. մեկնեցաւ անտի գընացեալ նստաւ ի վանս նոյն քաղաքին. յորմէ և գրեաց գիր մի Վեհին՝ և իշխանացն միանգամայն. յորում գրի յայտ առնէր թէ՝ մինչև ոչ եկեսցէ ի թագաւորէ բուռն զօրութիւն. այսինքն այր մի թագաւորական՝ սոքա ոչ են տալոց զեկեղեցիսն. և ոչ ունին դառնալ ի չար կամաց իւրեանց. քանզի ի քաղաքիս տաճիկքն օգնական և ձեռնտու են սոցա. զի անօրէնութեան որդիքս այսոքիկ՝ կաշառօք կուրացուցեալ են զաչս նոցա որք հոգւով չափ ի թիկունս կացեալ նոցա մաքառին ընդ մեզ. ուրեմն՝ դուք դիտէք, զի եթէ ոչ կանխեալ հոգայցէք՝ մնացեալ սակաւաւոր ազգն մեր եւ՝ կորնչին. վասնորոյ՝ իբրև էհաս գիրս այս՝ առ վեհն մեր, այնուհետև եբարձ ըզգութ իւր հայրական, և ասէր թէ՝ որովհետև՝ այսքան ժամանակ խրատեցի զնոսա քարոզչօք. և խրատական գըրութեամբ, որք ոչ լուան ունկամբ՝ այսուհետև պարտ է նոցա լսել թիկամբ. բայց արդ՝ նախ քան զաւաքումն Պօղոս վարդապետին ի քաղաքն Անկիւրիայ. ազգասէր հայրն մեր՝ զարս չորս առաքեաց ի յաքսոր ի բերթն Սամսոնի՝ որք են այսոքիկ։

Փէշտրմալճի օղլու Եսային։
Հաճի Եուսուֆ օղլու հաճի Օհաննէսն։
Ղրպչճի օղլու Պետրոս աղայն։
Քէօթահեացի բժիշկ Պետրոսն։

Ցաղագս զգաստանալոյ նոցա, և ի յերկիւղ այլոցն. սակայն՝ և ոչ այնու եկին ի հնազանդութիւն. այլ յամառեալ մնացին ի նոյն անզգամութեան իւրեանց, ըստ Դաւթի թէ՝ որպէս իժի և քարբի խցին զականջս իւրեանց, զի մի՛ լուիցեն զձայն թովչի ճարտարի. և մի առցեն զդեղ ի դեղատուէ իմաստնոյ. և ըստ մարգարէին առածի. թէ զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնմիկ. և ականջօք իւրեանց ծանուանս լուան և զաչս իւրեանց կափուցին. զի մի տեսցեն աչօք. և իմասցին սրտիւք, և դարձցին և բժշկեսցին. և արդարև՝ ոչ զմտաւ ածին զայն բան Յոհաննու Մկրտչին. որ ասաց դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. ծնունդք իժից՝ ո՛ եցոյց ձեզ փախչիլ ի բարկութենէն որ գալոց է ի վերայ ձեր. այսինքն է յարգարութենէն Աստուծոյ. վասն որոյ իբրև ետես սրբազան Հայրն մեր զայնպիսի յանդուգն համարձակութիւն նոցա՝ ոչ կարաց տանիլ, այլ արար վերստին սիւնհոդոսս ի մէջ Պատրիարքարանին. հանդերձ իշխանապետօք, և սակաւ ժողովրդովք. և զայն եկեալ Գիրն ի Պօղոս վարդապետէն, ետ ընթեռնուլ ի մէջ ժողովոյն. որ ունէր օրինակ զայս։

Գիտութիւն լիցի ազգասէր ծնողիդ հայկազեանս սեռի. և համայն իշխանաց՝ և ժողովրդոցդ մերոց. զի սոքա՝ որք են որդիք անօրէնութեան. ըստ մարգարէին՝ որդիք շնորդիք. որդիք պոռնկորդիք. որք Աստուծոյ ոչ երկնչին. և ի մարդկանէ ոչ ամաչեն. ըստ Տեառն բանի. քանզի հրամանի Թագաւորին եա՝ ընդ դիմացեալք՝ արհամարհական վարին բանիւ. ապաւինելով յասա եղեալ տաճիկսն. որք յադեալք կաշառօք անիրաւին ի մեր կողմն. և խափանել կամին զհրաման Թագաւորին. և ասեն ցիս եա՝ Թէ եկ և դու միաբան լեր ընդ նոսա՝ զի տայցեն քեզ քառասուն քսակ ստակ. յիրաւի ինքեանք կուրացուցեալ են զաչս իւրեանց կաշառօք. կամին զի և զիմս կափուցանել. որ քաւ լիցի՝ և մի՛ արասցէ Տէր. եղիցին ինքեանք և արծաթ իւրեանց ի կորուստ. այլ պատճառեն և տաճիկքն՝ և զայս Թէ՝ զի որպէս դուք խարած տայք Թագաւորին, նոյնպէս և նոքա. զի՞նչ հարկ զոր առնու ի ձէնջ Թագաւորն՝ առնու և ի նոցանէ. որպէս դուք հայ էք ազգաւ. նոյնպէս և նոքա. առ որս պատասխանեալ ասացի, մեք հայքս ի զըզըլ էլմա եղեալ մեծն, այն է հռոմայ փափն, և զչիք Լևոնն նզովեմք՝ և ոչ ընդունիմք զնա. և եթէ դոքա եա՝ իբրև զմեզ նզովեն յառաջի ձեր՝ արդարև են ի մէնջ. և եթէ ոչ՝ իմասջիք Թէ ոչ են ի մէնջ, այլ են սուտք՝ և խաբեբայք. ուստի և զայս բան՝ յառաջի տաճկաց, երկիցս և երիցս հարցի նոցա, Թէ նզովէ՞ք զնոսա, զորս նզովեմք մեք. լուռ եղեն և ոչ ետուն պատասխանի. քանզի անկաւ ի վերայ նոցա պապանձումն Զաքարիայի. և ըսկսան մի ըստ միոջէ հրաժարել և ելանել յատենէն, և գնալ յարտաքս ամօթալի դիմօք։ Եւ դարձեալ խօսեցայ ընդ նոսա և ասացի Թէ տեսի՞ք արդեօք՝ զի ոչ են մեզ նմանակ, և ոչ ի մէնջ, վասն զի՝ ոչ կարացին ասել, զիմ ասացեալ բանս։ Արդ՝ ոչ էք տեղեակ դուք դոցա բանիցն. քանզի դոցա կամք են, լինիլ միակամ ընդ ֆռանկաց՝ որք են ձեզ Թշնամիք յաւիտեան. ապա կաշառակեր յիմարքն՝ և արխմարքն, մանաւանդ Թէ արծաթասէրքն՝ ասացին ցիս. ուրեմն համբերեա ժամանակ ինչ, գրեսցուք զդոցանէ ի մեծն Պօլիս՝ և տեսցուք Թէ զի՞նչ պատասխանի գայ անտի վասն դոցա. բայց զմիտս նոցա քաջ ծանեայ. Թէ զորոմն չարութեան ունին սևրմանել. քանզի միշտ ի խորհուրդս մտանեն ընդ հեստելոցն. Թէ որպէս հնարս գտցեն. զի մի՛ յետս դարձուսցեն զեկեղեցիսն և մի Թողցեն զիւրեանց Թիւր ճանապարհն. ահա յայս ժողովին հանապազ. և զայս խօկան միշտ. վասն որոյ՝ դրեցի ձեզ զամենայն, որ ինչ երևին առաջի մտաց իմոց լինելիքն. ուստի՝ մինչև ոչ եկեսցէ այտի Այր մի Թագաւորական բուռն իշխանութեամբ, անհնար է սոցա դառնալ ի չարութեանց իւրեանց. զօգուտն ձեր դուք գիտէք. այսուհետև ես անպարտ եմ։

Եւ յորժամ ընԹերցան զգիրս զայս ի մէջ ժողովոյն, յայնժամ պատասխանի ետուն ամենեքեան ի մի բերան և ասացին ցհայրն մեր Թէ՝ արզուհալ մի գրեսցուք ի բերանոյ տըԹի ճէմաէԹ[114] կոչեցեալ էսնաֆէն՝ և տացուք վէզիրին. որ էր այնմ ժամանակի խափուտան Հասան փաշայն. այլ ոչ իսկն, այլ խայմախամ. և իբրև աւարտեցաւ ժողովն դրեալ ետուն զայն արզուհալն վասն առման եկեղեցեացն. և ետուն

խայմախամ փաշային. վերոյ ասացելոյ. որոյ օրինակն էր այս։

Ահա մեք ալթի ճէմաաթ կոչեցեալքս. այսինքն՝ վեց ժողով, գրեմք Տէրութեանն ձերոյ և ծանուցանեմք, զի մեք բուն Հայքս, ահա այսքան ամ է որ հաւատարմաբար ծառայութիւն առնեմք Տէրութեան ձերում. և մինչև ցմահ ևս ունիմք առնել զայսպիսի ծառայութիւն. ապա ուրեմն կան բաժանեալք ի մէնջ, և սերեալք ըստ ինքեանց իբրև ազգ մի. որք կամին լինիլ միակամ ընդ փռանկաց՝ որք են ձեզ մեծ թշնամիք. վասն որոյ՝ նախանցեալ թագաւորքն բարերախաք՝ յատկապէս հրաման տուեալ են թէ՝ ծանուսջիք մեզ զայնպիսիսն. մեք ի նոցանէ պահանջեմք զվրէժսն. և ըստ արժանւոյն հատուսցուք նոցա զպատիժն. որք այժմ այնքան բազմացեալ են և անգութքն եղեալ՝ մինչև առին ի մէնջ զչորս եկեղեցիս՝ որ ի Գաղատիա. վասն որոյ՝ խնդրեմք և աղերսեմք, զի զայն առեալ եկեղեցիսն մեր, առ մեզ դարձուցանիջիք ի ձեռն ահարկու հրամանի միոյ, և քանի մի անձինք ի նոցանէ առաքեսջիք յաքսորս, զի մի այսուհետև իշխեսցեն առնել զայսպիսի ինչ. և զինչս նոցա առջիք յարքունիս. և յայլոցն մնացելոց ամենեցունց բերանոյ Նէզիրական պայմանագիրս առնուլ, մի զանց առնիջիք. այլ հաստատեսջիք աննահանջելի հրամանաւ զոր յառաջագոյն յանձնառու եղեալ էին չորս հազարական ղրշ. և այժմ ևս վերստին զայն նորոգ հրամանաւ հաստատեսջիք. ոմանց ԺՌ ղրշ. ոմանց ԵՌ և ոմանց ԲՌ հինգ հարիւր ղրշ. ըստ կարգի և ըստ աստիճանի իւրաքանչիւրոյ կարողութեանն. և ի պաշ միւհասէպէն խայտ արասջիք, որպէս զառաջինն արարեալ էին. ըստ այնմ և այժմ առնիջիք, զի մի կարողասցին դարձեալ ձեռն ձգել յայսպիսի իրս, և զանուանս գլխաւորացն նոցա գրեսցուք յանուանէ, զորս խնդրեմք առաքել յաքսոր ի բերդն Ամասիայու. և զեկեղեցիս մեր դարձուցանել առ մեզ. և ահա անուանք նոցա են այսոքիկ։

Ցէրմիրզէ օղլու Մաղաքիա։
Ճանէզ օղլու Անտոն։
Տատ վիրէն օղլու Պօղոս։
Ուզուն Պետրոսն։
Տիւրկէր օղլու Հարապետն.
Ինճէ օղլու Օհաննէսն.
Ջուռնաճի օղլու Միքայէլն։
Սամուէլ օղլու Մազաքիայն։
Ճգնաւոր օղլու Հերոնիմոսն։
Սրվաճի օղլու Յակօբ կարգաւերն։
Հաճի Իուսուֆ օղլու Օհաննէս կարգաւերն.
Ղըլճի օղլի Օհաննէսն։

Արդ՝ սա՝ այսինքն Ղափուտան Հասան փաշայն կամեցաւ թէպէտ տալ զֆէրմանն. այն է զհրամանագիրն ըստ մերոց խնդրանաց, բայց ոչ ետուն թոյլ արքունական դրան մեծաւորքն ասելով. թէ այս գործ մեծ է, և միայն անկ՝ իսկական վէզիրին. և թագաւորին. թոյլ արա՝ նա եկեալ տեսցէ. և այսպիսի բանիւք արգելին՝ և ոչ թողացուցին տալ զայն հրաման. զի կաշառն կուրացոյց զաչս նոցա. զոր առեալ էին ի հերձուածողաց. վասն որոյ՝ տևեաց ժամանակ մի. մինչև ցգալ յատուկ վէզիրին. յորում միջոցի՝ յաւելան հեստեալքն յամբարտաւանութիւն եթէ ի Կոստանդնուպօլիս. և եթէ յայլ ուրեք. մանաւանդ ի յԱնկիւրիա եղեալքն. մինչ զի՝ յատուկ կիրակի սահմանեցին իւրեանց ըստ փռան-

կացն ծիսի. և որ աւելին է՝ յայտ յանդիման առնէին զձուկն. և ուտէին. մոռացեալ ամենևին զառաջին զերկիւղն և ասէին, զի՞նչ կորէք առնել. և պէս պէս հայհոյանս զհետ արձակէին ազգին մերոյ և եկեղեցւոյն, և պատրիարգին. իսկ հայրն մեր համբերէր և դարձի նոցա սպասէր. զի թերևս զմրտաւ ածեալ զղջանայցեն ըստ անառակին. և յուղղութիւն եկեսցեն. ճանաչելով զմայրն իւրեանց զսուրբ եկեղեցին. որ կաթամբն իւրով կերակրեաց և բազկաւն գգուեաց, և խնամարկեաց. բայց նոքա եղեն ատեցողք կաթին. և ուրացողք խնամոցն. որք փոխանակ այնմ կրելոց են ղպատիժն. ըստ այնմ թէ՝ որ ընդ դէմ դառնայ ծնողացն՝ տրտմութեամբ իջցէ ի դժոխս. և թէ՝ որ անարգէ զհայր և զմայր՝ մահու վախճանեսցի. քանզի զմայրն իւրեանց զսուրբ եկեղեցին մոռացան. ընդ նմին և զշնորհս մկրտութեան. որով զհոգին սուրբ ընկալան. վասն որոյ պարտ է մեզ խորշիլ յայնպիսեաց. ըստ սրբազան առաքելոյն՝ թէ յառնէ հերձուածողէ յետ միանգամ և երկիցս խրատելոյ՝ հրաժարեսջիր. գիտասջի՛ր, զի այնպիսին թիւրեալ է. այլ ոչ եթէ միանգամ և երկիցս եղեն խրատեալ ի Հօրէն մերմէ. այլ բազմիցս, սակայն՝ և ոչ միումն եղեն ունկնդիր. և ոչ դարձան ի չար ընթացից իւրեանց. զի որպէս ոչ է հնար ի փշոյ քաղել խաղող. և ոչ ի տատասկէ թուզ. այսպէս և ոչ ի թիւրելոյն ճշմարտութենէ ուղղութիւն. զի ծառն ի պտղոյն պարտ է ճանաչել ըստ Տեառն բանի. և իբրև ետես սրբազան Հայրն մեր թէ յոյժ մոլեգնեալ եղեն. ապա զքանի մի անձինս ի քաղաքիս առաքեաց ի Թի. գուցէ երկիցեն և զսլեսցեն զինքեանս. և յետոյ կացցեն ի յանդգնութենէ իւրեանց. որով և փոքր մի եղեն զգաստացեալք. և գնացողացն ի Թի, անուանքն են այսոքիկ.

Նախ՝ կոյր Մինասն. որ յառաջն էր ջատագով հայոցս եկեղեցւոյ. բայց յետոյ քարոզիչ կողմանն նոցա։

Երկրորդ՝ Ճանպազ օղլի չիք Յաբութիւնն։

Երրորդ՝ Թիւլպէնտճի չարաճճիկ Յովսէփն։

Չորրորդ՝ ոսկերիչ անիծեալ Գերոբէն։

Հինգերորդ՝ շնացեալ սահաթճի Օհաննէսն։

Վեցերորդ՝ սերմնժանտ՝ Օթուրախճի Սերոբէն։

Եօթներորդ՝ չարաուսոյց մանկավարժն Ղալաթիայու Վարդանն։

Ութերորդ՝ պիղծ Լօրէնցիան Ղափամաճի։

Եւ յորժամ գնացեալ եղեն սոքա ի Թի, էր թուականն Հայոց, ՌՄԼ ի մարտի ամսոյն։ Ի ժամանակս Խայմախամ Խափուսան Հասան փաշային. վասն որոյ՝ ասեմ ձեզ՝ ոչ թէ միայն սոքա գնացին ի Թի և յաքսորս, այլ բազումք, եթէ յառաջ՝ և եթէ յետոյ. թէ ի Պօլսոյս, և թէ յայլ ուստեքէ. քանզի ազգասէր ծնօղս մեր՝ ամենայն քաղաքաց առաջնորդացն գրեաց գիրս. և ղհանեալ Հրամանագիրսն յարքունական օրինակէն յղեաց նոցա ասելով թէ՝ հրաման է յարքայէն զդիս նոցա ոչ թաղել. և զպսակս նոցա ոչ կատարել. և որքան հնար է առնուլ զվրէժս ի նոցանէ առնիցէք. և որք ոչ հնազանդին ձեզ, ազգ արասջիք մեզ. և մեք հատուցանեմք զհատուցումն նոցա. յաքսոր, և ի Թի առաքելով զնոսա. որպէս և բազմաց

արարին ըստ գրեցելումս. և իբրև եկն ի Կարնոյ, այն է յԱրզրումայ իսկական եպարքոսն. էր տակաւին ի նոյն Թուականին վերոյ դրեցելոյ ի մայիսի ամսոջ։ Ապա ըստ պահանջելոյ հարկին՝ պէտք եղեն գնալ ի տեսութիւն և ի շնորհաւորութիւն եպարքոսութեան նորա. վասն որոյ՝ գնաց Հայրն մեր և Պատրիարքն Ազգիս Հայոց քանի մի վարդապետօք, քահանայիւք, և սպասաւորօք ունելով յառաջոյ իւրմէ զևասախճին իւր և Ծափու օղլանին։

Արդ՝ սա ոչ եթէ սակս կապա ազանելոյ, և կամ հարկաւոր ինչ խօսակցութեան գնաց. այլ միայն վասն շնորհաւորելոյ՝ և տեսութեան. որպէս ամենայն ազգաց մեծաւորքն. վասն որոյ նախ քան զմեզ՝ Յունաց Պատրիարքն էր գնացեալ. և իբրև մեք ևս գնացաք՝ յիրաւի առաւել քան զչափն ընկալաւ զմեզ Եպարքոսն և քաղցրութեամբ խօսակցեցաւ ընդ սրբազան Հօրն մերոյ իբրև ժամ մի. ասելով անհոգ լեր. այսուհետև՝ զի ես այն կաթուլիկաց հատուցանելոց եմ զհատուցումն. զի եթէ ի նոցանէ, և կամ իսկ յազգէն քումմէ՝ ոչ հնազանդին քեզ՝ մի՛ երկնչիր. այլ դրեա՛ և ծանո ինձ որպէս կամիս՝ կամ յաքսոր կամ ի Թի՝ ոչ յետս դարձուցից զխնդիր քո. այլ վաղվաղակի կատարեցից. միայն թէ դու բարւոք լեր խնամածու ազգին քում և ժողովրդեանդ. որպէս մինչև ցայժմ եղեալ ես. և այլ այսպիսի ասութիւնք բազում. և զայսքան մեծ ընդունելութիւն Եպարքոսին՝ ոչ այլ ինչ պարտիմք իմանալ՝ եթէ ոչ խնամարկութիւն Ամենակալ խնամողին. և բարի ակնարկութիւն նորա ազգիս Հայկազեան։ Իսկ սրբազան Հօրս մերոյ յաչս Եպարքոսին սիրելի լինելն յետ Աստուծոյ, ի շնորհս Մուրատեան ի լոյս հանգուցեալ Գասպար Ամիրային էր. քանզի նովաւ յայս յաստիճան մեծութեանն ժամտնեաց, որպէս բազումք գիտակք են. և ապա ելեալ յերեսաց Եպարքոսին, ապա գնաց առ վէզիր քեահեասին. որ սիրով ընկալաւ. և մեծարեալ նստոյց առ իւր. և արար ընդունելութիւնս։ Անտի ելեալ գնաց առ Րէյիզ էֆէնտին. և յետ նորա՝ առ Ջավուշ պաշին. որք ևս բազում ընդունելութիւնս արարին Տեառն մերոյ. և ապա զկնի տեսութեան նոցա՝ դարձեալ դարձաք և ելաք արտաքս. և հեծեալ ի ձի՝ սկսաւ գնալ։

Իսկ մեք որք զհետ գնացեալ էաք, և բազմութիւն ժողովրդեանն յաջմէ և յահեկէ ընթանայաք՝ յառաջոյ՝ և զկնի ուրախութեամբ մեծաւ, յաղագս անվնաս և պատուով ելանելոյն՝ սրբազան Հօրն մերոյ յերեսաց Եպարքոսին, և յայլ մեծամեծաց, քանզի՝ այլ և այլ ասութիւնք լսելի լինէին ի բերանոյ պղծաշուրթն ախտարմայից, որք ասէին թէ՝ գիտէ՞ք յի՞նչ պատճառի տարեալ եղև ի դուռն Պատրիարքն ձեր. զի յաքսոր դուշակէ և ոչ յայլ ինչ. ոչ գիտելով յիմարացն՝ թէ յինքենէ էր գնացեալ՝ և ոչ հրաւիրմամբ. բայց իբրև տեսին թէ՝ ամենևին անվնաս ել ի դիմաց՝ Եպարքոսին՝ և պատուով ևս ընկալեալ եղև ի նմանէ, և յամենեցունց՝ յոյժ տրտմութեամբ և երկիւղիւ եղեն պաշարեալ. և մերոյքն ուրախութեամբ և ցնծութեամբ կայտառային. անկանելով հետիոտս առաջի հոգևոր ծնողին մերոյ և այնպէս յաւէտ խնդութեամբ տարեալ մուծին ի Պատրիարքարանն, և բազումք ևս՝ որք գումարեալ սպասէին գալստեան նորա. յորժամ տեսին՝ անթուելի խնդու-

թեամբ ցնծացեալ բերկրեցան. և փառս մատուցին ամենազօրին Աստուծոյ. և իբրև էջ ի ձիոյն հայրն մեր՝ բազում օրհնութեամբ օրհնեաց զամենայն ժողովուրդն. և նոքա ընկալեալ զօրհնութիւնն ի Տեառնէ մերմէ՝ խնդամիտ ուրախութեամբ գնացին ի տունս իւրեանց. օրհնելով և փառաւորելով զԱստուածն համայնից. և հեստեալքն ամօթալի դիմօք եղեն կորացեալ առաջի ազգին մերոյ, և լռեցին ի ստութենէն. և ոչ կարէին խօսիլ բան՞ մի. զի պիղծք են շրթունք ստուտք առաջի Տեառն ըստ իմաստնոյն բանիւ Ապա՝ յետ ստութեանն առաջնոյ՝ զայլ իմն ստութիւն ևս յաւելեալ խօսէին թէ՝ Պատրիարքն բազում դրամս ետ եպարքոսին և մեծամեծացն. վասն այնորիկ՝ ոչ եղև գնացեալ յաքսոր. զի և ոչ կարէ այսուհետև խօսիլ ընդ մեզ. զի Եպարքոսն յառաջին փոխեալ եղև՝ յորմէ էր մեր երկիւղ. և այլ այսպիսի ասութիւնք շատ, հանդերձ հայհոյութեամբ. ապա իբրև ծանեաւ սրբազան Հայրն մեր զայսպիսի համարձակ լրբութիւն նոցա՝ ի բարկութիւն շարժեալ զերիս անձինս ի նոցանէ ևս առաքեաց ի Թի որք են այսոքիկ։ Այսինքն՝ Սանտալճի Գէորգն՝ և եղբայր նորա Աբիկն։ Եւ Մինթանճի Յօհաննէսն։

Եւ այսոքիկ՝ ի ժամանակս Իզզէթի Մէհմէտ փաշային եղեն առաքեալ ի Թի, ի գալն նորա ի Կարնոյ, այն է յԱրզրումայ. և իբրև լուան կանայք նոցա թէ՝ ի Թի գնացին արքն իւրեանց՝ ժողովեալ և զայլ բազում կանայս՝ ետուն արզուհալ Թագաւորին. և Եպարքոսի նորուն՝ վասն ազատութեան արանցն իւրեանց՝ դնելով զուր բարուբանս ի վերայ Պատրիարքին մերոյ ասելով թէ՝ զբազում դրամս պահանջեաց ի մէնջ՝ և մեր ի չտալն՝ առաքեաց ի Թի։ Իսկ Թագաւորն և եպարքոսն գոլով խոհեմք, իմացեալ զստութիւն նոցա բանիցն՝ ոչ եղեն ունկնդիր. այլև առաքեցին ի նոցանէ զչորս կանայս ի զնդան. և ի բանտ յաղագս անզգամութեան նոցա և ասացին. գնացէք հնազանդ լերուք Պատրիարքին ձերոյ. որ նա հանէ զնոսա ի Թիոյն. և այնպէս մնացին նոքա ի զնդանի անդ ժամանակ մի. մինչև ետուն բազում դրամս, և զերծան ի բանտէն. իսկ արքն նոցա՝ մնացին ի ծառայութիւն Թիոյ՝ սակս յամառութեան իւրեանց. զի ոչ կամեցան ասել զմեղայն. քանզի ասէին մեռանիմք աստ՝ և ոչ զմեղայ ասեմք նմա. և ապա խորհեցաւ սրբազան Հայրն մեր ի միտս իւր թէ՝ Ահա այս է օր ընդունելի՝ և ժամանակ դիպաւոր. զի ոչ կարէ այսպիսի այր բարի գալ յեպարքոսութեան. զի գրեթէ՝ Աստուածն ամենից՝ յատկապէս ողորմեցաւ ազգին մերում. վասն որոյ՝ յարոյց զայսպիսի Այր բարի ոմն. ուրեմն ոչ է պարտ տալ պատճառս զի մի արատեսցի պաշտօնն մեր որ ի Քրիստոս Յիսուս. վասն որոյ՝ արար խորհուրդ ընդ իշխանացն վասն յԱնկիւրիոյ առեալ եկեղեցեացն. և դրեալ արզուհալ մի ետուն Եպարքոսին. այն է Իզզէթ Մէհմէտ փաշային. որպէս և յառաջագոյն տուեալ էին՝ Խայմախամ խափուտան Հասան փաշային. որ եթէ կամիք իմանալ զմիտս արզուհալին, ի հարիւր ... երեսն ընթերցջիք և իմասջիք. զի աստ ոչ կամեցաք երկրորդել, խորշելով ի ձանձրութենէ ընթերցասիրացդ. և զի՞նչ երկարեցից. արար ըստ խնդրանացն մերոց Իզզէթի Մէհմէտ փաշայն՝ յատկապէս հրաման մի ազդու՝ վասն Գաղատիոյ հեստելոցն. զի յետս

դարձուցեն զեկեղեցիսն առ մերայինս, և յղեաց ձեռամբ Խափուճի պաշի Երկայն Մէհմէտ աղային. որ ունէր ընդ իւր վաթսուն սպասաւորս յորժամ գնաց ի Գաղատէ սակս դարձուցանելոյ զչորեսին եկեղեցիսն առ մեզ։

Եւ յորժամ էառ Խափուճի պաշի Մէհմէտ աղայն՝ զարքայական հրամանն. ապա այնուհետև կամէր ելանել. և գնալ յԱնկիւրիայ. առ ի կատարել զհրամանն Թագաւորին. վասն որոյ՝ նախ քան զերթալն նորին՝ երկու անցք պատահեցան նմա. մինն՝ տակաւին մինչ էրն ի Պօլիս, և միւսն յԻւսկիւտար։ Բայց նախ ասացից որ ի Պօլիսն եղև պատահեալ. և ապա զայն որ ի յԻւսկիւտար։ Բայց քանզի մինչ հանդերձեալ էր Ղափուճի պաշին անցանել յԻւսկիւտար, լու եղև նմա թէ Ղըլճի օղլու Ցօհաննէսն՝ եկեալ է ի Պօլիս. որ էր մին ի գնացողացն ի ընթերն Ամասիայու. իսկոյն հրամայեաց ծառայիցն նմա ըռնել և ածել առ նա. իսկ ծառայքն նորա առանց յապաղանաց արարին զհրաման նորա՝ կալեալ ածին ի տուն Խափուճի պաշոյն. և նա եդ ի պահեստի զնա. զգուշացեալ ամենևին զի մի գուցէ փախչիցի և զերծցի ի ձեռաց իւրոց, բայց իբրև լուան հեստեալքն զըմբռնիլն նորա՝ վաղվաղակի չոգան ի դուռն Էսմա Սուլթանին. և տուեալ կաշառ բազում զչուըջ եղելոցն զի զերծուսցեն զնա. որք առանց գիտութեան Սուլթանին՝ երկուս գիրս գրեալ ի բերանոյ նորա առաքեն զմինն առ Եպարքոսն. և զմին՝ առ Խափուճի պաշին. զի զայրն զոր ըմբռնեալ էք՝ պարտիք արձակել զնա. քանզի իմ է այրն այն. վասնորոյ ի բարկութիւն շարժեալ Խաբուճի պաշին երթայ առ Եպարքոսն՝ և եղեալ դհրամանագիրն առաջի նորա՝ և ասէ. առ զայս գիրս հրամանի ձերոյ՝ զի ես այսուհետև ոչ կարեմ գնալ անդ. վասն զի Էսմէ Սուլթանն գրեալ է ինձ թէ՝ արձակեա զայրդ զայդ՝ և մի տանիր զդա. զի է ինձ պիտանի. և եթէ արձակեցից զնա՝ որպէս կարեմ գնալ և կատարել զհրաման ձեր. զի զգլխաւորն չարեացն այնոցիկ սա է. և եթէ ոչ՝ տարայց զսա ընդ իս՝ ընդունայն է գնալն իմ անդ. և զայլն դու գիտես Տէր իմ. առ որ պատասխանեալ ասէ Եպարքոսն՝ ինձ ևս է գրեալ ըստ այդմ գրութեան. և ապա զինչ առնեմք. այլ երթ դու՝ և զհնարն դորա դու ինքդ դիա ի չհանելն ի ձեռաց քոց. վասնորոյ՝ սա եղև վարանեալ ի միտս իւր Ղափուճի պաշին, թէ զինչ հնարս կարացից գտանել այսմ՝ զի մի ելցէ ի ձեռաց իմոց այս չար այր. և մինչ յայսպիսի վարանման և մտածութեան կայր ի միջի՝ դլուր իմն ընկալաւ ի մերոցն՝ որք ի սպաս սուլթանին կային. այսինքն, ի պաբօն Գէորգէ և յԱստուածապովէն՝ ի պաստառավաճառաց նորա. թէ մի երկնչիր՝ այլ պինդ կաց. զի ոչ է տեղեակ այդմ ինքն սուլթանն, այլ ի սպասաւորաց նորա է այդ գիր և բան. քանզի կաշառօք կաշառեցին զսպասաւորս դրան սուլթանին. վասն որոյ՝ կամին զերծուցանել զչիքն զայն. և յորժամ զայս լուր լուաւ Խաբուճի պաշին՝ յոյժ ուրախացեալ բերկրեցաւ. իսկ և իսկ գրեալ գիր մի առ սուլթանն՝ և ետ ի ձեռս զոքանչին իւրոյ յղեաց առ նա՝ ասելով. ով թագազն թագուհիդ մեծ. զի՞նչ է այս, զի պատուական անուն քո բամբասի ի մէջ ամենայն ազգաց և ազանց թէ՝ սուլթանն պահպանէ ըզթշնամիս եղբօրն իւրոյ, և զբոլոր Տէրութեան վրդովիչն ազատել կամի. և

փութապէս հասուցանէ զայն ի ձեռն սուլթանին. և իբրև ընկալեալ զթուղթն ընթերցաւ սուլթանն՝ բարկացեալ յոյժ ի վերայ ծառայիցն, գրէ զպատասխանն թղթոյն Ղափուճի պաշոյն թէ՝ արդ զոր զգացուցեր ինձ՝ ոչ է իմով գիտութեամբ. այլ չար ծառայիցն իմոց է. զի որպէս կամք են Տէրութեանն՝ այնպէս առնիջիր. ամենևին մի՛ յինէն ունիցիս ինչ կասկած. զի ըստ հրամանի եղբօրն իմոյ՝ հրաման է քեզ՝ զի ուր կամիս տանիլ՝ տարջիր զդա՝ և սա այն էսմա սուլթանն է՝ որ զընծայս առաքեաց Վեհին մերոյ. զոր համառօտ իմն անցից աստէն. քանզի ի յամարանն այնմիկ վերոասացեալ պարոն Գէորգն՝ և Աստուածապովն գնացեալ էին տամբ իւրեանց՝ ի յԱրնավուտ ասացեալ գիւղն՝ և սուլթան ևս ի Ղուրու Չէշմէ կոչեցեալ ի յամարանոցն ծովեզերեայ. և պատուէր տուեալ էր վերոասացեալ Գէորգայ Աստուածապովայ՝ թէ յորժամ Պատրիարգն ձեր առ ձեզ. և կամ յայլ յիշխանսն ձեր եկեսցէ, ի յետ դառնալն՝ ազդ արասջիք ինձ՝ զի կամիմ տեսանել զնա. վասն որոյ՝ իբրև գնաց 'ի գեօղն 'ի տուն վերոյ ասացեալ բարեպաշտիցն՝ և դարձաւ 'ի Պատրիարքարանն, ծանուցին Թագուհւոյն. և նա 'ի կողմն ծովու նստեալ սենեկի միում ետես զնա՝ մինչ անցանէր նաւու յառաջոյ պալատի Թագուհւոյն. ուստի՝ և դովեաց զնա ասելով Մաշալլահ, Ալլահա էմանէթ. զի հիացեալ էր ընդ անհեղակերպ տեսիլ նորա, վասն որոյ՝ իբրև գնաց 'ի Պատրիարքարանն 'ի տեղի իւր. և նա այսինքն Թագուհին առաքեաց զընծայն իւր առ նա։ Եւ ահա այսպէս եղև որպէս պատմեցաքս։ Այլ այժմ դարձցուք 'ի կարգ բանին մեր. և անտի մնացեալն ճառեսցուք. քանզի զայն գիր սուլթանին որ առ Խափուճի պաշին՝ նոյն հետայն ուրախութեամբ տարաւ առ եպարքոսն և եցոյց նմա, թէ այսպիսի իմն հնարիւք ծանեայ զմիտս սուլթանին՝ որ չէր տեղեակ զրոցն որ առ մեծութիւն քո. և թէ՝ որ առխս որպէս ահա տեսերդ։ Եւ Եպարքոսն յոյժ հիացաւ ընդ իմաստութիւն նորա. և ընդ հնարագիտութիւն. և վասն այնորիկ՝ ետ նմա պարգև ձի մի. և ասաց. տեսանեմ զքեզ թէ որպէս 'ի գնալդ քո անդ՝ առնլոց ես 'ի նոցանէ զեկեղեցիսն. և տալոց ես 'ի ձեռս Հայոց. զի այս բան իմ գոլ իմա, և ոչ միայն նոցա. այսինքն Հայոց, քանզի՝ անհնազանդքն այն՝ կաթօլիկքն ընդ Թըշնամեաց Տէրութեան մերոյ՝ կամին լինիլ միակամ. որոյ վախճանն ոչ թուի լինիլ մեզ բարի, այլ չար. իսկ դու դոլով հաւատարիմ, վասն այնորիկ առաքեմ զքեզ անդ՝ զի հաւատարմաբար ծառայեսցես Տէրութեանս մերում, քանզի ահա պատուէր իմ եղիցի քեզ այս. մի՛ կաշառակուր լինիցիս. և մի՛ զանց առնիցես զայնմանէ՝ վասնորոյ առաքեցարդ. այլ սրտի մտօք ջանա յառաջ տանելոյ գործոյն համարելով զայն մեր. ապա թէ ոչ այսպէս՝ յայնժամ ոչ կարես զերծանիլ 'ի ձեռաց իմոց. զօգուտն քո դու գիտես, ահա յառաջագոյն ասացի քեզ։ Բայց զկնի լսելոյ Ղապուճի պաշոյն զպատուէր Եպարքոսին՝ ելեալ գնաց ի տուն իւր։ Եւ յերկրորդում աւուր ուրբաթու՝ առեալ ընդ իւր զՂլճի օղլու Օհաննէսն՝ անց յԻւսկիւտար և յօթեցաւ ի տան տաճկի միում. և անդ պատահեցաւ դիպուած երկրորդ։ Քանզի տեսին անդ՝ ընդ նմա եղեալ մարդիկքն յանկարծակի զոմն ի կերպարանս փայեկի՝ հարցին ցնա և ա-

ատեն՝ միթէ դու փայեկ իցես. և ուրացաւ և ասէ. ոչ եմ. ե ոչ զուղիղն ասաց պատճառ գնալոյն. այլ թէ սպասաւորեմ առնն՝ որ ի կապանս քո է. վասն որոյ՝ կամիմ ընդ ձեզ գնալ. ե եթէ գտանես առիս թուղթ մի՝ զի՞նչ որ կամիս արա. բայց յետոյ երեեցաւ ստութիւն նորա. քանզի մինն ի ծառայից Ղափուճի պաշոյն՝ տեղեկացեալ՝ եկեալ առ Տէրն իւր ասէ. սուտ է այրն այն՝ քանզի շատ գրեանք գոն առ նմա. ե է յայս նիշ տեղւոջ. մի հաւատայցես նորմա. վասն որոյ Ղափուճի պաշին ՚ի կասկածի եղեալ ասէ. մի գուցէ հեստեալքն գրեալ իցեն առ գաղատացիսն թէ՝ խոյս տուք ի տեղւոջէդ այդմանէ. զի Ղափուճի պաշի գալոց է առ ձեզ. ե ընդունայն լիցի գնալն իմ անդ. ապա ըմբռնեալ զփայեկն զայն ե էառ զգրեանս ի ձեռաց նորա՝ և ասէ ցնա՝ ընդէ՞ր ստեցեր մեզ թէ՝ ես ոչ եմ փայեկ՝ և ոչ գոյ առիս թուղթ. ապա այս ի՞նչ է ո՞վ չար դու. ոչ ապաքէն ասացեր թէ՝ եթէ գտանես առիս թուղթ՝ որպէս կամիս առնել արա. ահա այժմ ի ըերանոյ քումմէ դատեցից զքեզ. ծառայ անհաւատ ե վատ. և եթէ ոչ ճշմարիտն ասասցես, կապեցից զքեզ ի յագի ձիոյ, ե ընդ երկիր տաց քարշեցուցանել մինչև չարաչար սատակեսցիս. ուստի երկուցեալ ի բանիցն զափուճի պաշոյն, խոստովան եղև ճշմարտապէս որպէս եղեալն էր. և ոչ այլ և այլ. Զի՞նչ թագուցանեմ ի քէն ասէ տէր իմ, զայս երեք դիրս՝ Զօֆճի խանի խանճին ետ ինձ. (որ յայս Զօֆճի խանի միջի եղեալքն՝ բոլորքն հեստեալք են. և ամենեքեանքն գաղատացի, ապա որպէս կարէ ոք լինիլ հաւատարիմ նոցա). և զմնացեալս՝ համալ մի բերեալ ետ ինձ և ասէ՝ զգրեանս զայոոսիկ տարցես ի յԱնկիւրիա. բայց սակայն՝ ոչ գիտեմք թէ ուստի՞ է. և զայս իբրև խօսէր այրն այն՝ որ փայեկն էր. բազումք գոյին անդ ունկն դնօղք. եթէ տաճիկ՝ և եթէ հայք։ Բայց զոմանս միայն յիշեսցուք յանուանէ որք էինն։ Նախ՝ ակնցի հացագործ, միանգամայն և սառաֆ խօճա Միքայէլ Ամիրայն։ Երկրորդ՝ սամաթիացի խապաբաճի ոսկերիչ տիրացու Կարապետն, որ ի սպաս նորա էր, և սիրելի յաչս նոյն Խափուճի պաշւոյն. և երրորդն՝ հաճի Աբրահամ Խափու օղլանին. և այլք ընդ նոսա. և զինչ երկարութիւն բանի. յայնժամ էառ Խափուճի պաշին ի ձեռանէ փայեկին զգրեանսն և ետես, զի ոչ դոյր ի վերայ նոցա գիր հայկական կամ տաճկական. այլ ամենն էր լատինական գրով գրեալ. վասն այնորիկ յոյժ կասկածանաց եղև ի միջի Ղափուճի պաշին. թէ զի՞նչ արդեօք չարութիւն իցէ պարածածկեալ ի նոսա. բայց ոչ գտաւ ոք՝ որ ընթեռնուցու. վասնորոյ՝ զմին ի ծառայիցն վաղվաղակի առաքէ ի Կոստանդնուպօլիս. և տայ բերել անտի զոմն վարժ ի լեզու լատինական. և զմին ի թղթոյն բացեալ ձեռամբ իւրով հրամայէ առն այնորիկ՝ զի ընթերցցի. և իբրև ետես՝ թէ ոչ գոյ վնասակար ինչ բան ի նմա. դարձեալ կնքէ զայն. բայց տակաւին ոչ փարատի կասկած նորա յաղագս մնացելոցն ասելով թէպէտ յայսմիկ թղթի չկայր ինչ հակառակ մերս գործոյ, սակայն՝ ի մնացեալսն մի գուցէ թէ իցէ. վասն որոյ և ոչ զմին թղթոցն տայ փայեկին. այլ զամենայնն տայ վերոասացեալ խօճա Միքայէլին և ասէ. զայսոսիկ տարեալ առ Պատրիարքն հանդերձ փայեկիւս, զի արգելցէ առ ժամանակ մի՝ մինչև քանի մի աւուր ճանապարհ հե-

ռացայց ես. և յետոյ՝ եթէ կամի՝ թողցէ զնա. և եթէ ոչ՝ ինքն գիտէ. այլ միայն առ այժմ արգելջիք զդա. և խոճա Միքայէլին առեալ զթուղթսն և զսայլին՝[115] բերէ ի Պօլիս. և ի ձեռն ծառայի միոյ յղէ առ Պատրիարքն մեր. որ իբրև եկն և եբեր ծառայն, էհարց ցնա հայրն մեր թէ զի՞նչ է այդ. և նա ետ պատասխանի թէ՝ Միքայէլ ամիրայն առաքեաց առ Տէրութիւն քո՝ և ասաց թէ՝ Ղափուջի պաշին որ գնաց ի յԱնկիւրիա, կալաւ ի յԻւսկիւտար սայի մի և եգիտ ի ձեռս նորա բազում թուղթս. զորս առեալ ի ձեռանէ նորա և ետ ցամիրայն մեր և ասաց տարջիք զայսոսիկ և տուք մեծաւորին ձերոյ. վասն որոյ՝ և նա յղեաց Տեառնդ. իսկ վեհն մեր խոհեմ խորհրդով ետ պատասխանի նմա և ասաց՝ որդեակ իմ՝ տար զբերեալ թուղթսդ՝ և տուր ամիրային, զի յումմէ որ առեալ է՝ տացէ նմա. և կամ փայեկին այնմիկ. զի չեն դոքա մեզ օգտաւէտ, քանզի ոչ գոյ ի մէջ դոցա դիր հայերէն. այլ ֆռանկերէն են ամենեքեան. և նորա տարեալ անդրէն՝ ետ ցՏէրն իւր. այսինքն ցՄիքայէլ ամիրայն. ահա այսպէս եղև որպէս ասացի. և ոչ այլապէս քանզի տրուպ ես ականատես և ականջալուր եմ այսմ, որ միշտ առ ընթեր նորա կայի, և սպասաւորէի նմա, զի ի ձեռն իւր անգամ ոչ էառ. թող թէ բանալ և ընթեռնուլ. ուստի գրեմ զիսկն որպէս եղեալն է. և ոչ այլ և այլ. վասն զի՝ որ սուտ խօսի ի հօրէ սնոտի սատանայէ է ըստ Տեառն վճռոյ. այլ մեք ճշմարտութեան աշակերտք եմք, և ոչ ստութեան. և Տէրն՝ ուսոյց մեզ խօսել զճշմարտութիւն. ըստ այնմ թէ՝ խօսեցարուք զճշմարտութիւն. և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ. և թէ՝ եղիցի ձեր այոն այո և ոչն ոչ. և աւելին քան զայն ի չարէն է։ Եւ արդ՝ յետ այսմ այսպէս լինելոյ՝ և զկնի յետս առաքման թղթոցն՝ և անցանելոյ աւուրց երկուց՝ եկն ի կողմանէ դեսպանացն թարգման մի. և ասէ՝ զփայեկն մեր ըմբռնեալ էք. և ի ձեռաց նորա առեալ զթուղթսն բացեալ և ընթերցեալ ևս՝ զոր իմացեալ Ելչի Պէյն, վասն որոյ առաքեաց զիս. ո՞ւր են այն գրեանքն՝ տուք ինձ՝ որ տանիմ առ նա. քանզի վասն այնորիկ եկի ես աստ, և ոչ այլ ինչ իրի. պատասխանի ետ նմա ծնօղն մեր և ասաց, թէրճիւման պէյ՝ ես թուղթ ոչ առի յումեքէ՝ և ոչ բացի, և ոչ ընթերցայ. զի թէպէտ բերին ինձ. սակայն ես ոչ բնաւ մերձեցայ, և ոչ առի ի ձեռս. այլ նոյն ժամայն առաքեցի առ նա՝ որ առաքեալ էր առիս. ասելով թէ տարջիք տուք այնմ՝ յորմէ առեալ էք. և ահա կայ առ խօճա Միքայէլն. զի Խաբուճի պաշին նմա տուեալ էր ի գնալն յԻւսկիւտարու, ուրեմն՝ եթէ կամիս՝ գնա ընդ Ղափու օղլանին մերոյ և առ ի նմանէ. զի ես զՍային ևս՝ չեմ տեսեալ. ուր մնաց թէ զթուղթսն առեալ իցեմ ի նմանէ. և կամ բացեալ և ընթերցեալ, ահա այսպէս գիտելով և լսելով քո՝ երթ պատմեա Ելչի Պէյին որպէս լուարգ. և սիրոյ ողջոյնն մեր մատուսջիր նմին. բայց գնացեալ այրն չարագրգիռ ոչ որպէս լուեալն էր այնպէս զեկոյց. այլ՝ այլ ընդ այլոյ. զի կաշառօք ագահեալ էր ինքն և դեսպանն իւր. զի զոր ինչ չարութիւն նիւթեալ էին Հօրս մեր սրբազանի յանկ հանել ջանացան սակս մարսելոյ զառեալ կաշառսն իւրեանց։ Արդ՝ այս ամենայն որք եղեն՝ ոչ այլ ինչ էին, եթէ ոչ որոգայթ և թակարթ. զոր լարեցին հեստեալքն ի

ձեռն էլչոցն կաշառելով զնոսա առ ի ընկենուլ զՀայրն մեր ի Պատրիարքութենէ. քանզի ի բազում ժամանակաց հետէ ցանկային հանել զնա ի Պատրիարքութենէ իւրմէ. վասն որոյ՝ զայս չարութիւն նիւթեցին նմա ի ձեռն Դեսպանացն գործակցութեամբ Վէզիր քեահասուն։

Բայց եկեսցուք այժմ ասել վասն փայեկլին ի բանտ արկանելոյն. և դեսպանացն ի վրէժխնդիր լինելոյ յաղագս գրեանց. տալով զդիր զանկատանաց Եպարքոսին թէ՝ Պատրիարքն Հայոց կալաւ զսայլն մեր և զթուղթսն մեր առեալ ի ձեռանէ նորա ետ բանալ և ընթեռնուլ և իմանալ զխորհուրդս ընդ դէմ պայմանին՝ որ կայ ի մէջ մեր և ձեր տէրութեանց. այս է չբանալն զգրեանցն. որք առաքին առ միմեանս. եթէ ի վաճառականաց՝ առ վաճառականս. և թէ ի դեսպանաց առ թագաւորս իւրեանց և անդրագարձեալ. բայց նա հակառակ այնմ արարեալ աներկիւղաբար առ և եբաց. և ընթերցեալ ծանեաւ զխորհուրդս. ուրեմն և մեք խնդրեմք՝ զի փոխեսցես զնա. իսկ եպարքոսն այն է Իզզէթ Մէհմէտ փաշայն՝ գոլով այր խոհական և իմաստուն՝ եղև հետաքրքիր այսմ բանի, առ ի ճանաչել թէ ստոյգ իցէ թէ սուտ. ուստի կոչեալ զփոխանորդն իւր եհարց ցնա. թէ որպիսի ինչ իցէ այս բան. և նա չքմեղս եղեալ ասէ՝ ես ոչ գիտեմ՝ հարցից ցչավուշ պաշին՝ զի կերեալ էր երեք հարիւր քսակ. առ որ ասէ եպարքոսն՝ հարցջիր և տեղեկացեալ ծանո ինձ. և նա հարցանէ ցՋավուշ պաշին՝ և ասէ՝ վերահասու լեր՝ այս բանիս, և զգացո ինձ. քանզի կամէր արդարացուցանել զինքն առաջի նոցա. բայց ճշմարտութիւնն ոչ եթող նմա. այլ խայտառակեաց զնա ընդ Տեառն թէ՝ չիք ինչ ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի՝ և ոչ գաղտնի՝ որ ոչ եկեսցէ ի յայտ. որպէս և կատարեցաւ ի վերայ այս անօրէնութեան որդւոյն բանս այս. զի որով պատճառաւ ընկեցաւ Սրբազան ծնօղն մեր. նովին և նա կործանեցաւ. քանզի՝ զայն գրեանս դնելով պատճառ՝ հանին զհայրն մեր ի Պատրիարքութենէ. նոյնպէս փոխանորդն եպարքոսին այն պատճառաւ ուտելով զկաշառս՝ պարտաւորեալ անկաւ ի փոխանորդութենէ։ Եւ արդ՝ իբրև լուաւ Ջավուշ պաշին ի բերանոյ վէզիր քեհեասուն զայս բան. թէ հարցեալ տեղեկացիր զթղթոցն զիարդութենէ. յայնժամ չավուշ պաշին զմին ի ծառայից իւրոց հանդերձ որդւով ատենաթարգմանին՝ այն է տիվան թէրճիւմանին՝ առաքէ առ Հայրն մեր. թէ իմացայ զի այր մի ըմբռնեալ ես. և ի ձեռանէ նորին զգտեալ գրեանսն ամենայն առեալ. վասն որոյ՝ յղեսջիր զայնոսիկ առ մեռ. զորս տացուք ցտեարս իւրեանց. զի այն թուղթքն էլչոցն՝ և նոցայոցն է եղեալ. իսկ Հայրն մեր՝ ետ պատասխանի եկելոցն ի Ջավուշ պաշի աղայէն. և ասաց. յիրաւի բերին ինձ զայդպիսի գրեանս. սակայն՝ ես ոչ ընկալայ. այլ իսկոյն առաքեցի անդրէն առ նա որ յղեալն էր ինձ. քանզի՝ ոչ էին ինձ պիտոյք. և թէպէտ Ղափուճի պաշի Մէհմէտ աղայն՝ առեալ և յղեալ էր ինձ. ձեռամբ Միքայէլ ամիրային. այլ ես յետ դարձուցի առ նա ասելով, թէ յումմէ առեալն է տացէ նմա։ Արդ՝ եթէ կամիք՝ զխօճայ Միքայէլն տաց բերել աստ. և ի նմանէ լուիջիք ըստ եղելոյն. և զխնդրեալ ձեր թուղթսն առէք ի նմանէ. զի տակաւին առ նմա է. և տարայք տուք Ջավուշ պաշի աղային. որոց պատասխանի տուեալ ասեն՝ բարւոք ասացեր. և նոյն ժամայն

ետ բերել Սրբազան ծնօղն մեր զխօճայ Միքայէլն. և նա սկըսաւ պատմել որպէս եղեալն էր. ոչ աւելի՝ և ոչ պակաս. քանզի՝ ոչ է տեղեակ ասէ այժմ բանի Պատրիարք հայրն մեր, այլ ես մինչ կայի ի յԻւսկիւտար առընթեր Ղափուճի պաշւոյն ի ըսպաս, նա կալաւ ղսային զայն՝ և զգրեանքն էառ ի ձեռաց նորա՝ և ետ ինձ և ասաց՝ տար զայս տուր Պատրիարքին ձեր՝ հանդերձ փայեկիւս. զի արգելցէ զսա՝ մինչև ես քանի աւուրս ճանապարհ հեռանայցեմ. քանզի՝ կարծիք եմուտ ի սիրտ իմ, վասն առնս այսորիկ՝ սր կամի գնալ՝ ուր եսն եմ դնալոց. վասն որոյ՝ և իմ առեալ և բերեալ յԸստամպօլ և յղեցի առ սա՝ և սա ոչ ընկալաւ, և ոչ էառ ի ձեռս իւր. այլ յետս դարձուցեալ էր առիս՝ ասելով թէ՝ տարայք և տուք այնմ՝ յումմէ առեալն է. ահա կայ առիս, եթէ խընդրէք տաց ձեզ, և ետ նոցա. և եթէ ինձ ոչ հաւատայք՝ կային անդ քանի մի անուանի տաճիկք ևս, բերեալ զնոսա հարցջիք ցնոսա. եթէ չիցէ ըստ ասացելոյս՝ համարեսջիք զիս սուտ. և եթէ ստոյգ իցէ՝ այնու ծաներուք զիմս ճըշմարտութիւն բանի. և ապա առեալ զթուղթսն գնացին և ետուն Ջավուշ պաշոյն. և պատմեցին մի ըստ միոջէ՝ զոր ինչ խօսեցաւ խօճա Միքայէլն։ Իսկ Ջավուշ պաշին իբրև լուաւ և տեղեկացաւ ծանոյց Եպարքոսին զամենայն. և նա ասաց Ջավուշ պաշոյն թէ՝ բարւոք հետաքըրքիր լեր այդմ բանի, զի ոչ փոքր ինչ է այս բան. այլ գնալով մեծանալոց է կարծեմ թէ. և ղսային զայն բերեալ դիցես ի բանդ՝ և տացես զուղիղն խօսիլ նմա. և զհաւաստին լսել ի նմանէ. յայնժամ ըստ հրամանի Եպարքոսին ետ բերել ղսային. և էհարց ցնա.

և նա խօսեցաւ զհաւաստին որպէս եղեալն էր. բերեալ զխօճայ Միքայէլն ևս՝ և նմա ևս ետ պատմել. և եդիտ զերկոցունց զըոյցսն մի և նոյն. եթէ փայեկին, և եթէ խօճա Միքայէլին, վասն ըմբռնման փայեկին, և առման գրեանցն ի Ղափուճի պաշիէն և զայլն ամենայն. որպէս լուաւ Ջավուշ պաշին յերկոցունցն այնպէս ծանոյց Եպարքոսին. զի իսկն այս է ասաց Ջավուշ պաշին. և ոչ այլ և այլ. իսկ Եպաքքոսն և Ջավուշ պաշին ի միասին մտախոհք եղեն և ասեն՝ որպիսի ինչ իցէ բանս այս. զի եթէ դեսպանացն իցեն այս թուղթք, ընդէ՞ր այդպիսւոյ մարդոյ տուեալ լինի. և ոչ յատկապէս փայեկիւ միով առաքել. և բաց յայսմանէ՝ ոչ իւրեանց ձեռամբ տուեալ՝ այլ օտարաց. զի յայտնապէս երևի շինուածոյ լինիլն այս իրի. և մի թէ ոչ էին կարօղք յատկապէս սայի մի բռնել՝ և համարձակ ուղարկել, ով էր նոցա արդելօղ. ուրեմն այս ոչ է առանց պատճառի. զի երևոյթ իրին յայտնի ցուցանէ։ Ապա թէ ոչ՝ չէր պարտ տալ այսպիսի ղողունի գնացող առն. և սուտ ձևացեալ սայոյն. և ղայն ևս ոչ իւրեանց ձեռօք. այլ Ջօֆճի խանի խանճոյն և համալի միոյ. որք ի Ջօֆճի խանի եղեալքն բոլորքն Գաղատացի են և կաթօլիկ. ապա չարութիւն իմն գոյ ի մէջ թղթոցն այնոցիկ՝ վասն որոյ՝ ոչ վայրապար ի կասկածի եղեալ Ղափուճի պաշին և առեալ է զգրեանսն ի ձեռանէ սուտ փայեկին. զի նա յայտնապէս փախուցանել զգնացօղսն ի յաքսորս ծպտեալ և յարեցեալ է նոցա. և խօսք խօճայ Միքայէլին ոչ է սուտ. թէ Պատրիարքն ոչ է տեղեակ այժմ. ապա ասէ Եպարքոսն ցՋավուշ պաշին. թէ՝ ղսային զայն դիր ի կոճեղս, մինչև իմասցուք զկատարեալն. և արար այն-

պէս Ջավուշ պաշին. և բազում անգամ հանեալ ի բանտէն հարցանէ. և նա ըստ առաջին ասութեան ասէ՝ և ոչայլ և այլ։

Ապա իբրև ծանեան դեսպանքն՝ թէ զսայլն եզին ի բանտ ի կոճեղս՝ և համարեցան զայն վերաբերիլ իւրեանց. և չէ հնար զինքեանս անկեղծ երևեցուցանել. սկսան չարանալ յոյժ՝ և լինիլ արքանեակ չարին սատանայի. և մանաւանդ դեսպանն ֆրուանսըզաց՝ եղև կատաղեալ. և զատամունս սրեալ իբրև զսուր երկսայրի. և սկսաւ խածատել զծնօղն մեր հոգևոր. զի առեալ էր ի հերձուածողացն ղուղայեան արծաթն. Ո՜ քաւ ասեմ. թէ ինքն՝ և թէ միւսքն։ Նաև օսմանցւոց արքունի դրան մարդիկքն. վասն որոյ տան թուղթ գանկատանաց սուլթան Համիտ թագաւորին. դնելով սուտ բարուրանս՝ և բանս զրպարտութեան բարդեալ ի վերայ Հօրս մերոյ ասելով թէ՝ Հայոց Պատրիարքն զմեր սայլն կալեալ՝ և զխորհրդական զրեանս ի ձեռանէ նորին առեալ բացեալ և ընթերցեալ է. որ է ամենևին կանոնացն մերոց ընդդէմ և պակասութիւն պատուոյն մերոյ Թագաւորականի. ապա թէ զպատիւն և զկանոնն որ ի մէջ մեր և ձեր կայ՝ ոչ կամիք յարհամարհումն արկանել. և ընդ ոտիւք Հայոց Պատրիարքին ձգել. խնդրեմք ի մեծութենէ քումմէ՝ փոխել զայս Պատրիարքն՝ և ի տեղի նորա զայլս կացուցանել. որով վերականգնի անդրէն մեր պատիւ, և կանոն մեր առնու զհաստատութիւն, և զայլ ինչ գրեցին ոչ գիտեմք. բայց ամենեքեան էին սուտ և զրպարտութիւն. զի յարեան ի վերայ իմ, ասէ սաղմոսերգուն, վկայք չարեաց, և զոր ինչ ոչ գիտէի հարցանէին ցիս։ Նամ. թէ՝ բան անօրէնութեան ի վերայ իմ։ Արդ՝ եթէ եմք ճշմարտութեան աշակերտք, զճշմարիտն պարտիմք խօսիլ. ըստ այնմ թէ՝ խօսեցարուք զճշմարտութիւն, և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ, ասէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։ Արդ՝ ոչ զԹագաւորն խաբեցին նոքա, այլ զԱստուած. ըստ ասելոյ Սրբազան առաքելոյն Պետրոսի ցԱնանիայ. ոչ ստեցեր մարդկան այլ Աստուծոյ։ Այլ զի՞նչ երկարութիւն բանի. քանզի տեսեալ Թագաւորին զդիր գանկատանաց նոցա՝ ոչ կարացեալ զերծանիլ ի խնդրանաց նոցա, հրամայեաց փոխել զՊատրիարքն Հայոց զհոգևոր ծնօղն մեր. և թէպէտ Եպարքոսն յոյժ ջանացաւ զոչ փոխումն նորա հնարել. սակայն՝ ոչ եղև ճար. զի ըստ որում անդառնալի է հրաման թագաւորին՝ վասն այնորիկ ոչ կարացին յետս նահանջել։ Բայց ազգն մեր աւուրբ յառաջ իմացեալ էին զփոխումն ծնողին իւրեանց. վասն որոյ՝ գրոհ տուեալ գումարեցան յեկեղեցին Աստուածածնի սրբոյ՝ հազարք հազարաց՝ և բիւրք բիւրուց. որք աղաղակէին և ասէին՝ մեք հաճեմք Պատրիարքին մերոյ. և ոչ կարեմք բաժանիլ ի նմանէ. և սկսան տալ գիր ծանուցման Թագաւորին, և Եպարքոսին. ընդ ծով, և ընդ ցամաք, բողոքելով՝ թէ Պատրիարքն մեր հաճելի է մեզ. խնդրեմք և աղերսեմք՝ մի՛ փոխեսցես՝ այլ մեզ շնորհեսցես. այլ նոքա սակս ցրելոյ զբազմութիւնն՝ համոզեցին զնոսա ասելով՝ ոչ ոք փոխէ զՊատրիարքն ձեր, երթայք ի խաղաղութիւն, և աղօթս արարէք Թագաւորին. և նոյն բազմութիւնն դարձեալ անտի եկին՝ և լցան ի Պատրիարքարանն՝ և մինչև ցաքսորումն նորա կային անդ. լային և աշխարէին ի սուգ անհնարին վարա-

կեալ ամենեքեան. և մինչդեռ այսպէս կային և մորմոքէին՝ տեսին զի եկն ի յարքունական դրանէ տուաճի Իսմայիլ էֆէնտին. հանդերձ բազում զինուորօք՝ և հրամանագրովն աքսորման՝ և բացեալ ընթերցաւ առաջի Վեհին մերոյ. քանզի դրեալ էր թէ՝ երթ նիստ ի Պրուսայ. բայց նախ քան զգալ Իսմայիլ էֆէնտիին՝ իբր երեք ժամ յառաջ՝ եկն դիր մի ի Գաղատիոյ յաղագս առման եկեղեցեացն չորեցունց, և աքսորման արանցն՝ որք յանուանէ դրեցան յառաջագոյն, և այլ ամենայն դրելոցն ի փէրմանին կատարմանն. զոր ոչ աստէն դրեցաք սակս չձանձրացուցանելոյ զսիրելիսդ. և թէ կամիք իմանալ՝ ի յառաջ գնացեալ իմանալոց էք. վասն որոյ՝ ուրախացեալ փառս վերառաքեաց ամենազօր բարւոյն Աստուծոյ։ Եւ ապա եկն նոյն վերոյ ասացեալ էֆէնտին՝ որ էր թուականն փրկչին 1781։ Եւ Հայոցն ՌՄԼ մայիսի Ի և Թ յաւուր շաբաթու ի տասներորդ ժամուն։

Եւ յորժամ ընթերցաւ զհրամանադիրն աքսորմանն իսկոյն խոնարհեալ՝ յանձն էառ խնդութեամբ, սակս անպարտ աքսորմանն յաթոռոյ իւրմէ. յիշելով զբան Տեառն թէ՝ երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ՝ և ասիցեն զձէնջ սուտ վասն անուան իմոյ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս, և այլն։ Եւ ապա ելեալ ի Պատրիարգարանէն՝ կամէին գնալ ընդ տուաճի էֆէնտիին. ոչ կարէին անցանել ի բազմութենէ խուռն ամբոխին. քանզի ամենեքեան՝ փարէին զնովաւ, և գրեթէ կամէին ի ձեռաց նորա խլել. եթէ ոչ զինուորացն զգուշացեալ էր զնովաւ. քանզի անբուժելի վէրս ընկալան ի սիրտ և յոգի ի բաժանմանէ նորա. ամենայն ժողովուրդն՝ և ի սուգ անմխիթար լային և մորմոքէին ի վերայ նորա, բայց քանզի հրաման Թագաւորի էր, ոչ կարէին հակառակս գործել. և զի՞նչ յերկարութիւն բանի է ձգել ինձ, հանեալ ի յեկեղեցւոյն տարաւ արքունական վերակացուն մինչև ի Ղումխափու, և ամենայն բազմութիւն ընդ նմա, յառաջոյ և զկնի, և մտին ի նաւն. և ի նաւի տնդ կանգնեցաւ յոտին. և սկսաւ օրհնել զազգն ամենայն, զքաղաքն, և զթագաւորն. և ժողովուրդն դարձաւ՝ յետս. բայց օրն այն՝ եղև արդարև օր սգոյ և տրտմութեան. ըստ մարգարէին թէ՝ Ցաւուր այնմիկ կոծեսցի կոծ մեծ Երուսաղէմ. իբրև զկոծ Նռնենեաց. և իբրև դաշտս խնկոց. քանզի՝ յիրաւի գոյր պատճառ լալոյ, զի բազում երախտիս ունէր ի վերայ ազգին. այնքան՝ մինչ զի զանձն իւր եդ փոխանակ նորա, ըստ Տեառն բանի թէ՝ Հովիւ քաջ՝ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց. իսկ վարձկանն որոյ ոչ են իւր ոչխարքն իբրև տեսանէ զգայլն՝ թողու զնոսա և փախչի. քանզի վարձկան է, և չէ փոյթ նմա վասն ոչխարացն։ Եւ արդ ստուգութեամբ ասեմ՝ և ոչ ստեմ. զի յօրէ յայնմանէ յորում նստաւ յաթոռ Պատրիարգութեան՝ այս երջանիկ հայրս մեր ոչ գտաւ հանգիստ մարմնոյ իւրոյ. այլ միշտ՝ վասն ազգին իւրոյ պահպանութեան ջանացեալ տառապէր. զի մի՛ լինիցի կերակուր արաբացի գայլոց. այն է՝ անիծեալ ախտարմայից, որք առ ի մէնջ ելին. բայց ոչ էին ի մէնջ. զի թէ ի մէնջ էին՝ ապա առ մեզ մնային ըստ սրբազան աւետարանչին. զի ըստ Ցուդայի Իսկարիովտացւոյ որոշեալ գտան ի սուրբ գնդէն. այս է ի սուրբ եկեղեցւոյս Հայաստանի ուղղափառու-

թենէն։ Բայց արդ՝ երբ դարձաւ անդրէն ժողովուրդն՝ որպէս ասացի ի վերոյ՝ որք մինչև ի նաւահանգիսան գհետ եղեն նորա. որոց ոչ գոյր թիւ. մնացին ի նաւին. որով գնացին՝ միայն առուվաճի էֆէնաին՝ և ծնօղն մեր՝ երեք ծառայիւք. և էր ժամ տասներորդ. և մնացեալ անդ՝ մինչև ցերկոտասան ժամն, առ ի տանիլ զինչսն նորա ի նաւն. և երբ կատարեցաւ այն ամենայն. ապա եկաց կանդուն ի վերայ ոտից, և սկսաւ օրհնել զքաղաքն և զԹագաւորն և զժողովուրդն վերստին. ապա մեկնեալ ի Պօլսոյ գնացաք. որք էաք ի նաւին անձինք Ժ բաց ի նաւավարացն. Առաջինն՝ սրբազան ծնօղն մեր. և մնացեալքն էին ձեռնասուն աշակերտքն իւր. այսինքն Թովմաս վարդապետն. Յակօբոս սարկաւագն, Պօղոս վարդապետն. և տիրացու Մեսրօպն. ես առուվաճի էֆէնտին. և երեք ծառայք նորին, հուսկ յետոյ՝ տասներորդն՝ մեղսամներկ Պօղոս և եթ դպիրս Կադրուանցի եղբօր որդի վերոյ սրբազանին որ զպատմութիւնս զայս գրեցի։

Իսկ արդ՝ թէպէտ յաքսոր և յաթոռոյն իւրմէ վտարանջութիւն. թէպէտ և ի ձեռն արքունական վերակացուի. որք թէ որպէս սպառնալեօք և տագնապաւ տանէին՝ զոր տանէինն, բայց մեզ ոչ այնպիսի ինչ եցոյց տագնապ, կամ նեղութիւն՝ կամ սպառնացումն. այլ պատուով և խնամով տարաւ և բաղում մխիթարական բանիւք սփոփէր ես զսիրտ սրբազան ծնողին մերոյ. քանզի՝ պատուէր ընկալեալ էր յԵպարքոսէն չնեղել զնա ի ճանապարհին. և չվշտացուցանել երբէք. զոր ինքն վերակացուն բերանով իւրով պատմեաց Վեհին մերոյ. թէ Եպարքոսն պատուէր ետ ինձ՝ պատուով տարցես զնա ի տեղին՝ ուր գնալոց է. զի այր հաւատարիմ գտաւ Տէրութեանս մերում. որ զթշնամին մեր՝ ծանոյց մեզ. յորոյ և պարտ է զգուշանալ և ճանաչել զայնպիսիսն՝ որք կարօղ են ի ձախորդ ժամանակի դարան գործել իշխանութեանս այսմիկ։ Եւ արդ՝ զսոյն ասութիւն և բան Տեառն մերոյ ազգասիրի՝ ըստ պատմութեանն Եպարքոսի եղև կատարեալ ի ՌՄԽԷ Թուականիս մերոյ. որք թշնամութեամբ և խորամանկութեամբ առին զԵգիպտոս այս է զՄ ը ս ը ր. և այն բարեկամ ձևանալով։ Ուրեմն՝ բարեբարութիւն նորա մեծ երևեցաւ յայսմ ժամանակի. որ նախազեկոյց եղև մեզ. և հարազատաբար ծառայեաց Տէրութեանս մերում. յիրաւի վասն այնորիկ պատուէր իմ այս եղիցի քեզ զի քաղցրութեամբ տարցես՝ և մի նեղեսցես զնա. զի այս նմա ի զուր պատահումն եղև բարւոք ծանեաք. բայց սակայն չարքն այնոքիկ՝ դեսպանքն թըշնամութեամբ վարեցան ընդդէմ նորա մինչև ետուն ասել Թագաւորին թէ՝ փոխեսցի Պատրիարքն Հայոց. ուստի ոչ եղև հնար զրան Թագաւորին յետս նահանջել. վասն այնորիկ՝ այսպէս եղև. ապա թէ ոչ՝ անհնար էր փոխելն նորա՝ զի մանաւանդ փոխարէն երախտեաց նորա պարտ էր նմա մեծ շնորհս առնել և երախտահատոյց լինել մեզ. և ոչ թէ յաքսորս առաքել. բայց եթէ ոչ գնայր նա յաքսոր՝ վրդովումն մեծ լինելոց էր ի մէջ դեսպանացն և Թագաւորաց նոցա և մեր. քանզի՝ ոխաթափ եղեն ի վերայ նորա՝ մինչև ետուն փոխել զնա. և արքայն ես՝ երկուց չարեաց զփոքրագոյնն ընարեաց. զի չարքն այնոքիկ՝ քան զայս մեծա-

դոյն չարիս և պատիժս ադեալ էին, ի մտի հաստուցանել նմա. իսկ մեք այսու խափանեցաք զայնս. իբր բարութիւն նմա փոխանակ լաւութեանն հատուցանելով։ Արդ՝ զայս պատմութիւնս արար տուվաճի էֆէնտին ի մէջ նաւին, և մեք գոլով անդ՝ եղաք ականջալուր, յաղագս այնորիկ ոչ դանդաղեցաք աստ յիշատակել. և մնացեալ ի նաւին՝ իբր ժամս տասն և հինգ. և յետ Ժ և Ե ժամուն յաջողմամբն Աստուծոյ, ելաք ի նաւահանգիստն Մուտանեայու. անդ ևս մնացաք՝ ժամս Բ և յետ երկուց ժամուց՝ ելեալ դիմեցաք ի Պրուսայ, և օգնականութեամբ Տեառն՝ ժամանեցաք ի մետասան ժամուն անդ ի կիւրակէի աւուրն. և իբրև մտաք ի տիրախնամ քաղաքն. դէմ ընդ առաջ ելին ամենայն քաղաքն Տեառն մերոյ. և մեծաւ փառօք մուծին զնա ի Պատրիարքարանն, ասելով՝ երանի աչաց մերոց՝ որք արժանի եղեն տեսանել զՀայրդ ազգասէր. և զերկրորդ Լուսաւորիչդ. զի յամաց բազմաց հետէ ըղձանային սիրտք մեր տեսութեան ցանկալի զիմացդ. ահա այժմ հասաք ում ցանկացեալն էաք, Տեառն կամօք. որում փառս և երկրպագութիւնս մատուսցուք յար և միշտ. և ապա իբրև էջ ի ձիոյն՝ օրհնեաց զժողովուրդն ամենայն. որք ուրախութեամբ և ցնծութեամբ գնացին յօթեանս իւրեանց. օրհնելով և գովելով զՏէրն ամենից։

Արդ՝ ի ժամանակիս այսմիկ՝ առաջնորդ քաղաքին այնմիկ էր համատանցի Յօհաննէս վարդապետն. զոր փոխանակ հօր մերոյ բերեալ նստուցին յաթոռ Պատրիարքութեան Կոստանդնուպօլիս, ի ձեռն նոյն վերակացուին՝ որ տարաւ զհայրն մեր. բայց զկնի լինելոյ նորա Պատրիարք. և ժամանակ ինչ անցանելոյ՝ էհաս լուր աւետեաց ի Գաղատիոյ առ Վեհն մեր. թէ ահա եղև կատարեալ հրաման թագաւորին. և առան չորս եկեղեցիքն ի ձեռաց հեստելոցն և տուան մեզ. ի ձեռն Վեհէդ առաքեալ դափուճի պաշիին. և յերկոտասան արանցն՝ տասն ի յաքսոր առաքեցան. և երկուքն այսինքն. Ղրլճի օղլի Օհաննէսն. և Էմիրզէ օղլի Մաղաքիայն՝ մեղայ ասացին. և հիւճճէթ տուեալք զերծան. և ընդ նոսա՝ ինն հարիւր քսան և չորք տունք մեղայ ասացեալք դարձան իբր ի յառաջին թիւր ընթացիցն. և յամենեցուն բերանոյ հիւճճէթ առեալ նէզիր կապեցին. վասն որոյ այսուհետև անհոգ լեր զի ոչ կարեն այլ ևս զայսպիսիս առնել. և եթէ առնել յօժարիցին՝ վերստին ունին հատուցանել զայն կապեալ նէզիրսն. որոյ տալն է յոյժ դժուարին. զայն լուր իբրև լուաւ սրբազան հայրն մեր՝ յոյժ ուրախացաւ, և ցնծացեալ բերկրեցաւ, զի զոր վաստակեցաւն, զարդիւնսն ետես անյապաղ և իբրև ի վերայ գիւտի մոլորելոյն խնդաց ասելով՝ փառք և գոհութիւն ամենակալ Տեառն՝ որ ոչ ի բերի ելին տառապանք իմ. յաղագս որոց տառապեցայ. այսուհետև ոչ ունիմ զայլ ցաւ, զի այս միայն էր իմ պարտականութիւն. զի դարձցին ի մոլորութենէ իւրեանց. և ես անպարտ գտայց առաջի պահանջողին զաբիւն նոցա յիմոց ձեռաց. ուստի խնդրեմ յամենազօր բարերար Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. զի տացէ նոցա հոգի զգաստութեան. առ ի ընթանալ զհետ ճշմարտութեան, և լուսով ուղղափառ հաւատոյ լուսաւորիլ. ամէն։

ՅԱՂԱԳՍ ԱՐԱՐՄԱՆՑ ՅՕՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, ԵՒ ԻԹԼԱԽԻՆ ԶԱՔԱՐԻԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԻ՛Ն·

Արդ յետ աքսորման Զաքարիայ Պատրիարքին, բերեալ զՅօհաննէս վարգապետն Համատանցի, նստուցին յաթոռ Պատրիարքութեան Կոստանդնուպօլսի· սակայն սա ինքն Յօհաննէս Պատրիարք սակս ինքնահաւանութեանն սկսաւ մեծամեծս բարբառել· և գրեթէ չհաւանեալ արարմանցն Հօր մերոյ՝ հանապազ եսական ախտիւ ախտանայր։ Եւ թէպէտ եցոյց առաւել խստութիւն ընդ դէմ. ախտարմայից, մինչև ղղջալ նոցա աքսորման Զաքարիայ Պատրիարքի· բայց առաւել թուեցաւ ազգին ատելի և խոտելի վասն գոռոզ բարուցն· մանաւանդ ոչ կարելով զմիտս ժողովրդեանն շահել· ընախորդ Պատրիարքն ածելով ի մէջ բասրական բանիւ նանրացուցանէ զվաստակ նորա. և ի Պրուսայու ևս՝ հանել և ի հեռաւոր ուրեք առաքել կամեցեալ. և զիւրն մեծագործութիւն իմն համարեալ· ուստի ցրտացոյց զինքն յաչս ժողովրդեանն. մինչև երաց դուռն խռովութեան. և կորոյս զառաջին հռչակեալ զանունն բարի, և զգործ իւր. որ յառաջն թուեցաւ ամենեցուն բարուք. բայց յետոյ յոռի և անպիտան, և այն յաղագս մեծաբանութեան իւրում. զոր խօսէր յատենի, և յառանձինն. մռռացեալ զՏէրունական խրատն. թէ զամենայն զոր ինչ առնիցէք, ասասջիք թէ՝ ծառայք անպիտանք եմք. զոր ինչ պարտն էր արարաք։ Եւ թէ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի, և զբան աւետարանչին. թէ որ բամբասէ զեղբայր իւր, նա ոչ ճանաչէ զԱստուած. և թէ ամենայն բամբասօղ՝ մարդասպան է. ղայսոսիկ ընաւ մռռացաւ աշակերտն այն Աւետարանին. վասն որոյ՝ խոցեալ զսիրտս հասարակութեանն և ինքն խոցեցաւ ի նոցանէ. մինչև յարեան ի վերայ նորա. և ձեռնարկէց ևս եղեն. և թէ չէր փախուցեալ և ծածկեալ ի մառանի եկեղեցւոյն, գուցէ մահ ևս ընկալնոյր ի ձեռաց նոցա. քանզի մինչև ցսենեակ նորա ընթացան ցասուցեալքն ի նա. բայց ոչ գըտին. և այս գրգիռ գոյացաւ անխոհեմ. խօսից, զի՞ պիտէր նմա ղաքսորեալ Պատրիարքն առնուլ ի բերան, յորոյ փոխման էն ամենեքեան հոգի վիրաւորեալ էին. և նա անտի ևս կամէր աքսորել, որով ևս քան զևս վիրալից եղեն, զի միշտ ի կասկածի էր, թէ որքան նա կայ՝ և սիրելի ևս է յաչս ամենեցուն՝ ինձ ոչ տան ունիլ զիշխանութիւնս զայս. վասն որոյ կամէր ի հեռաւոր տեղիս ձգել զնա, թերևս մռռասցին և հանցեն զնա ի մտաց, սակայն նոքա զինքն մռռացան և զնա հանին ի մտաց. և ընկենուլ յիշխանութենէն ևս ճգնեցան. և տևեաց այս խռովութիւն մինչև երեք ամիս և օր քան զօր յուզիւր խռովութիւնն, և Յօհաննէս Պատրիարքն յերկիւղէն բերեալ պահապանս ի զինուորաց, և նստոյց ի մէջ եկեղեցւոյն. վասն որոյ՝ չհանդուրժեալ այնմ. ազգին՝ խնդրեցին ի նմանէ տալ զհրաժարականն, այլ նա տակաւին յամառեալ չկամէր տալ. մինչև յարեան ի վերայ նորա որպէս յառաջն ասացաք. այլ եւ բերել ի դրանէ Տէրութեանն հրամանագիր, և ետ ընթեռնուլ ի մէջ բազմութեանն ասելով թէ՝ ով

ոք զսա չկամի լինիլ Պատրիարք՝ վնաս կրելոց է առանց կարծեաց. ուստի՝ և քանի մի անձինս առաքեաց ի Թի. յաղագս որոյ՝ խռովութիւնն ևս քան զևս սաստկացաւ. և ապա ետուն գիր ծանուցման ցարքայ Համիտ՝ և ցեպարքոսն Իզզէթ Մէհմէտ փաշայն. թէ խռովութիւնս այս՝ ոչ է դադարելոց. մինչև ոչ եկեսցէ աքսորեալ Պատրիարքն մեր. և նոքա իբրև գիտացին թէ՝ յիրաւի ոչ խաղաղի այս վրդովումնս. այլ առաւել զօրանայ, և մանաւանդ թէ՝ վնաս ևս գոյանայ, հրամայեցին ազգին մերոյ խորհիլ ի մէջ իւրեանց հանդերձ ծերակուտիւ և վարդապետօք, և ընտրել զոմն՝ որ ամենեցուն իցէ հաճելի, և ապա ազդ առնել նոցա, զսր հաստատեսցեն ի տեղի նորա. այսինքն ի տեղի Յօհաննէս պատրիարքին. զի մի այսպիսի անպատեհութիւն, և անկարգ յուզումն խռովութեան պատահեսցի միւսանգամ. բայց նախ քան զառնելն խորհրդոյ՝ խնդրեցին յեպարքոսէն վերոասացելոյ, զի նստեալն գնացեալ նստցի ի Ղարթալ. և ապա առնեմք զընտրութիւն Պատրիարգին. և նա հրամայեաց առնել այնպէս. և զայս վասն այնորիկ՝ այսպէս առնել կամեցաւ ազգն, զի մի գժտութիւն ինչ ծագեսցի նոր ի նորոյ ի միջի. վասն որոյ յղեցին զնա յառաջագոյն ի Ղարթալ. և յետ այնորիկ ժողովեալ բազմաց ի մի՝ ըստ հրամանի Տէրութեանն, և սկրսան հարցանել ցժողովեալսն թէ՝ զո խնդրէք ձեզ լինիլ Պատրիարք. ամենեքեան միաբարբառ աղաղակեալ ասացին, զՏէր Զաքարիայ ազգասէրն հաճիմք առնել մեզ Պատրիարք. որ վասն ազգի մերում գնաց ի յաքսոր. ապա ի նմա միայն հաճիմք. և զնա միայն կամիմք. զի թէ այլ ոք քան զնա եկեսցէ, և հրեշտակ ևս իցէ՝ չէ մեզ ընդունելի. և ոչ խռովութիւնս այս առնու դադարումն. և իբրև ի վերայ նորա հատաւ վճիռ Պատրիարքութեանն՝ գիրս կնքեալ ետուն ցեպարքոսն. և նա յրգեաց ի ներքս առ Թագաւորն՝ թէ մեք ահա զայս ընտրեցաք. և զայս միայն խնդրեմք. և ոչ զայլ ոք. յայնժամ ըստ խնդրելոյ ազգին, և վասն համահաճութեան ամենեցուն լինելոյ՝ ետուն հրաման՝ և զխթլախ նորա. և բերեալ ի Պրուսայու արքունական վերակացուաւն զոր յղեցին. ի ՌՄԼԱ ի մարտի ԻԸ ին. զկնի զատկի կիւրակէին երեկոյեան յառաջին ժամուն. ընդ որոյ գնացին այլ և ի մէնջ Կիւլապեան Օհաննէս աղայն. և որդին իւր տիրացու Յարութիւնն. և ազգականն իւր Կարապետ աղայն, որ և երկու աւուրբ յառաջ գնացեալ...

Եւ թէ որքան ուրախութիւն եղև յայն օր, թէ իւրն՝ և թէ սպասաւորացն, ոչ կարեմ պատմել գրով. ուստի՝ ի լուսանալ երկրորդ աւուրն՝ զպատրաստութիւն ճանապարհի տեսանել սկսաք առ ի գնալ ի մեծն Պօլիս։ Բայց Խարաճճի պաշի մեծ աղայն Պրուսայու ոչ եթող. այլ արգել ասելով թէ՝ այսքան ժամանակ է որ աստ է, և յիւր նստեալ սենեկէն յարտաքս ոչ է ելեալ բայց ի յեկեղեցի գնալոյն, ուրում քաջ տեղեակ եմ. ապա այսօր կամիմ տեսութիւն առնել ընդ նմա. վասն որոյ և մեք ելեալ գնացաք ի տեսութիւն նորա. և նա յոյժ պատուեաց զՎեհն մեր. և յարձակելն զմեզ ևս՝ զբազում զինուորս զհետ մեր առաքեաց ընդ ցամաքաւ յուղարկաւորութիւն մինչև յԵալուվա։ Արդ՝ և ի միւսում աւուր՝ որ էր երեքշաբթի ելեալ ի Պրուսայու բազում ամբոխիւ գնացաք ի գեօղն՝ որ

կոչի Ջարսախ. և ի գիշերին յայնմիկ՝
անդ օթեցաք. և ի լուսանալ առաւօ-
տին գնացաք անտի ի գեօղն Չէնկիլէր.
բայց ոչ մնացաք անդ. այլ փոքր մի
հանգիստ առեալ՝ գնացաք ի նաւահան-
գիստն Եալօվայու. և անտի մտաք ի
նաւ. զոր բերեալ էին վասն մեր
վերոյ ասացեալ բարեպաշտ անձինքն.
և իբրև մեկնեցաք անտի՝ յարեաւ հողմ
սաստիկ մինչև երկիւղ կալաւ թէ զմեզ,
և թէ զարքունական վերակացուն. այլ
զնա ևս առաւել. բայց ապաւինելով ի
Տէր՝ հասաք ի կղզի մի անմարդաբնակ,
և հազիւ անկաք անդ. և յայն գիշեր
անդ ագաք. իսկ ի վաղուեան եղև խա-
ղաղեալ ծովն յալեկոծութենէ իւրմէ
ողորմութեամբն Աստուծոյ. և մտեալ ի
նաւ դիմեցաք ի մեծն Պօլիս. և օգնա-
կանութեամբ տիրողին ծովու և ցամա-
քի՝ հասաք ի նաւահանգիստն՝ որ անուա-
նեալ կոչի Հարէմ իսկէլէսի. հանդէպ
քաղաքին մեծի, ուր դիմեալն էաք.
և ազգ արարաք իշխանաց, և իշխա-
նապետաց. թէ ահա Տէրամբ Յի-
սուսիւ եկաք և յայս նիշ տեղւոջ եմք.
որպէս կամիք՝ այնպէս ցուցջիք մեզ զի
առնիցեմք. իսկ նոքա զգացուցին Ե-
պարքոսին զգալստենէ Վեհին մերոյ. և
նա իսկոյն զոմն ի յիւրոցն առաքեալ
իբր հրաւիրակ որ եկեալ տարաւ զմեզ
ի դուռն: Բայց դու տես ինձ զբազ-
մութիւն ժողովրդեան մերս գրոհի՝ և
այլ ամենայն ազգաց. որք ի քաղաքին
կարէին գտանիլ. քանզի՝ գրեթէ ամենե-
քեանքն ցանկային տեսութեան Հօր մե-
րոյ. և իբրև ելաք ի դէմս նոյն Եպարքո-
սին այն է Իզզէթի Մէհմէտ փաշային
ասաց, ահա մեծազօր Թագաւորն մեր
ետ բերել զքեզ. և զՊատրիարքութեան
իշխանութիւնն վերստին շնորհեաց.
բայց դու մի՛ փքանար ի միտս քո.

ազգն իմ յոյժ սիրեաց զիս՝ վասն այ-
նորիկ ետ բերել զիս ի Պատրիարքու-
թիւն. այլ որքան յառաջն էիր՝ քան
զայն լեր խոնարհ և հեզ. և բարւոք
կառավարեսջիր զազգն քո. որպէս մին-
չև ցայժմ կառավարեցեր. էհարց ես՝
թէ Պրուսայու խարաճճի պաշին՝ մեծ
աղայ ասացեալն՝ պատուեաց զքեզ. և
կամ որպէս կեայ ինքն. և հայրն մեր
յոյժ շնորհակալ եղև զնմանէ, և զին-
քենէ զեպարքոսէն ասելով, ի ձերդ
բարի ակնարկութենէն՝ և ի խնամոց
գթութեան՝ առաւել քան զչափն պա-
տուեաց և մխիթարեաց: Եւ այս քաղց-
րութեան ցուցումն եպարքոսին ի վե-
րին խնամողութենէն պարտիմք ճանա-
չել. զի ըստ իմաստնոյն՝ սիրտ մեծա-
մեծաց՝ ի ձեռին Աստուծոյ է. յոր
կողմն կամի՝ միտեցուցանէ. և յետ այսց
խօսակցութեանց՝ զգեցոյց նմա զիշ-
խանութեան կապայն. և ասաց՝ երթ
նիստ յաթոռ քո. և բարեաւ վայելեա
անխռով. և աշխատ լեր խաղաղութեամբ
շահել զազգն քո. և ոչ խռովութեամբ.
վասն որոյ՝ ելեալ յերեսաց եպարքո-
սին՝ եկն նստիլ յաթոռոյ Պատրիար-
քութեան համահաճութեամբ ազգին իւ-
րոյ. և թէ որպիսի ուրախութիւն եղև
ազգին մերոյ՝ որք անդն կային ընդ տե-
սանել ծնողին իւրեանց՝ անկարանամ
ասել. և ոչ զթիւ նոցա ճառել. զի ան-
թիւք էին. և զեղանակ խնդութեան
նոցա՝ զկնի զգենլոյ կապային՝ և դի-
մելոյ ի Պատրիարքարանն. բայց այս-
քան ինչ կարեմ ի միտս լսողացդ նկա-
րագրել. ըստ որում զհետ նորա էի ի
դրան. զի որքան եղև տրտմութիւնն որ
վասն նորա՝ ի յաքսորմանն յազգի մե-
րում. եօթնպատիկ եղև ուրախութիւն
ի գալստեան նորա. և թէ Սրբազան
Վեհն մեր որպիսի գովութեան արժա-

նացեալ եղև յամենայն ազգաց յաղագս այնպիսի խնամատար լինելոյն վասն ազգին իւրոյ որ մինչև յաքսոր անգամ գնալ յանձն էառ. որով յոյժ հաճոյ գտաւ յաչս օսմանցւոց՝ Ուստի՝ և Սուլթան Համիտ արքայն եկեալ էր ի տեսութիւն նորա ի ժամ զգենլոյ կապտին, սակս վերստին Պատրիարքութեան նորա. ընդ որում էի և ես հեգս ի դրան անդ և յամենայնի. և յելանելն մեր և ի գնալն ի Պատրիարքարանն՝ յաջմէ և յահեկէ Վեհին մերոյ՝ բազմութիւն ժողովրդեան ընթանային. եթէ ի մերոց՝ և եթէ յօտար ազգաց. մինչև զարմանալ ամենեցուն՝ և երանել զնա. և ըստ Ոսկեբերանին՝ վասն ուղղութեան ազգին իւրոյ աքսոր ընկալաւ՝ և մեծ գովութեան եղև արժանի. ունէին ի բերանս իւրեանց. և ասէին ամենեքեան՝ որք տեսանէին զնա ի ճանապարհին. և զի՞նչ երկարութիւն բանի արասցուք. այլ իբրև հաստատեցաւ յաթոռ իւր. եկեալ բազումք ի հեստելոց անկանէին յոտս նորա և ասէին՝ մեղաք հայր մեր պատուական և բազմաշխատ ի վերայ մոլորեալ ոչխարացս. ահա յիրաւի մեղաք. որք ոչ թէ ըստ մեղայի աքարզարմեան ասէին զմեղայն. այլ ըստ անառակին՝ հանդերձ հեղմամբ արտասուաց. և այն՝ այնքան՝ մինչ զի զմեզ ևս շարժեցին յարտասուս. և իբրև ետես ծնօղն մեր զայնպիսի ջերմեռանդ զղջումն նոցա և զմեղայն, գթացաւ ի նոսա և սիրով ընկալաւ գգուեաց զնոսա և ասաց, ով որդեակք իմ, զայսքան նեղութիւնս զոր ետու ձեզ՝ վասն հոգևոր օգտի ձերոյ էր՝ և ոչ իմ. զի յիմ վերայ հարկ ցայս վայր էր զձեզ շահեցայց և ի գիտութիւն ճշմարտութեան ուղղել աշխատասիրեցից. վասն որոյ՝ ոչ խնայեցի զանձն իմ. և ոչ խնայեցից. և նոքա որք գլխաւորքն էին՝ ետուն պատասխանի և ասեն. գիտեմք Հայր սուրբ. զի ոչ մեղար դու ինչ ումեք. այլ մեք մեղաք. և մեք անօրինեցաք և յանցեաք. ներեա ուրեմն՝ ո՛ Հայր մեր հոգևոր ամենայն յանցանաց մերոց. և արա զմեզ այսուհետև որդիս լուսոյ, և որդիս տունջեան. և զայլ զղջական բազում բանս խօսեցան և ասացին. դարձեալ ասացին. թէ՝ մեք զայն փոքունսն ևս՝ բերեմք առ Տէրութիւնս քո. և տամք ասել նոցա մեղայ. և որ ոչն հնազանդի քեզ՝ ընդ քեզ եմք ի լինել վրէժխնդիր այնպիսեաց. որպէս և բերին. և գթածագոյն Հայրն մեր յորժամ ետես զջերմեռանդութիւն նոցա՝ գթացաւ ի նոսա որպէս Հայրն երկնաւոր ի վերայ անառակ որդւոյն. և այնուհետև սիրեաց զնոսա, և ուրախ եղև ի վերայ դարձման նոցա ի մոլորութենէ ճշմարտութեան, որ և անպակաս գային առ սրբազան վեհն մեր. և խրատէր զնոսա. և ուսուցանէր զճանապարհն ճշմարտութեան զցայգ և զցերեկ, յաղագս բառնալոյ զչար սերմն ի միջոյ բարի սերման. առ ի լինել մի հօտ և մի հովիւ. ըստ Տեառն բանի թէ՝ իբրև լուիցեն զձայն քաջ հովուին՝ զհետ երթիցեն նորա. և եղիցին մի հօտ՝ և մի հովիւ. ահա այս էր վախճան դիտման հօրս մերոյ. բայց մինչև ոչ եկն ժամանակն և կամեցողութիւնն Աստուծոյ՝ ոչ յաջողեցաւ. և ոչ եկին ի յուղղութիւն. քանզի Տէրն և Աստուածն համայնից՝ ոչ կամի զմահ մեղաւորին. այլ զդառնալն նորա ի չար ճանապարհէն և զկեալն. զի ոչ եկն կոչել զարդարսն՝ այլ զմեղաւորս. վասն որոյ՝ և

մեզ պարտ է ուրախ լինել ի վերայ դարձման եղբարց մերոց. և առաւել սէր և խաղաղութիւն ընդ միմեանս. որով յաղթի և ընկճի թշնամին մեր սատանայ. զի չեմք որդիք խռովութեան, այլ խաղաղութեան. ըստ այնմ, թէ՝ երանի խաղաղարարաց. զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։ Քանզի՝ և դիտաւորութիւն Հօր մերոյ էր այս. որպէս յառաջին ասացաք՝ զի եղիցուք ամենեքեան որդիք լուսոյ. և ոչ որդիք խաւարի. բառնալով ի միջոյ զհեռն և զնախանձ։ Զի ուր հեռ է և նախանձ՝ ըստ սրբազան Առաքելոյ՝ անդ է ամենայն անկարգութիւն, և այլ ամենայն իրք չարք։ Ապա պարտ է ի բաց թօթափել այսուհետև զամենայն զչարութիւն, և զամենայն զնենգութիւն. և լինել մի՝ որպէս յառաջին էաք. ուրեմն մաղթեսցուք յամենաբարի Տեառնէն, զի սիրով և ճշմարիտ հաւատով, և աներկմիտ յուսով կապակցեսցէ զամենեսեանս մինչ ի գալուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և այսքանս լիցի բաւ ձերում Աստուածսիրութեանն. քանզի կար մեր էր այսքան. որ և լերուք ողջ ի Տէր յար, Ամէն։

Դարձեալ այլ բան հարկաւոր գրութեան առ սիրելիսդ մեր. քանզի յորժամ վերագրեալ Սրբազան ազգասէր Հայրս մեր Զաքարիայ քաջ րաբունապետն և Դէտն Ազգիս Հայոց ետես թէ բազումք ի հետեւելոցն եկեալ մեղայ ասացին. և նա հայրաբար գթացաւ նոցա, էհան ի թի զնացողացն արս չորս. որպէս զի տեսեալ նոցա թէ խնամք առնել ունի ի մտի այնուհետև Պատրիարքն իւրեանց, առաւել յորդորեսցին գալ յուղղութիւն։ Բայց ազգն մեր ընդ այս սկսան տրտունջ առնել սաստ և անդ. թէ ընդէ՞ր էհան զնոսա ի ծառայութենէ թիոյ. կամ ընդէ՞ր առանց մերս գիտութեան, և առանց հարցանելոյ մեզ արար. զի մեք ոչ ընդունիմք զմեղայն նոցա. և ոչ հաւատամք բանիցն. և այլ այսպիսի ասութիւնք բազում. վասնորոյ իբրև լուաւ հոգևոր ծնօղն մեր զայսպիսի բամբասանս և զտրտունջ, որով անուն նորա կայ ի լեզուս բազմաց, արար իսկոյն ժողով մեծ ի սուրբ Աստուածածնի եկեղեցին. հանդերձ եպիսկոպոսօք, քահանայիւք և բազում ժողովրդովք. ուր և խօսեցաւ բանս ինչ ի վերայ անառակ որդւոյն թէ. որպէս Հայրն երկնաւոր ընկալաւ զնա, յորժամ ետես զդարձ նորա. ոչ ապաքէն եդ զմատանին ի ձեռս նորա, և եզեն զեզն պարարակ վասն նորա. և ասաց՝ այս որդի իմ մեռեալ էր և եկաց. կորուսեալ և գտաւ. և սկսաւ ուրախ լինել. և ըստ այսմ բազում բանս խօսեցաւ ինքն և թէ եպիսկոպոսունքն յաղագս գթութեան և խնամոցն Հայրական, որով և հաճեցոյց զմիտս ժողովրդեանն. և ապա զայս դաշնադրութիւն եդ ի մէջ նոցա. թէ այսուհետև այս ճանապարհաւ ընթանալ մեզ բարւոք է. և նոքա հաճեալ ասացին այո։

Եւ այս յայտ լիցի ի մեծս Պօլիս բնակեալ բոլոր քահանայից, բարեպաշտօն իշխանաց. և առ հասարակ ժողո-

վրդոց. ղի ի մէջ Պատրիարքին. և ի մէջ Էջմիածնի ընտրեալ վարպետաց եղեալ դաշն և պայմանն այս է։

Զի ի հետեւոց՝ եթէ զոք պատժել արժան իցէ, յիւր Էջմիածին եկեալ վկայեսցեն վասն նորա. և որպէս վայել է պատիժս հաստուցանել նմա, ըստ ժամանակին, ըստ տեղւոյն. և ըստ անձին Սրբազան Պատրիարքն տնօրինեալ արասցէ։ Ապա յայտ է թէ՝ խնդիրն և վկայութիւնն յիւր Էջմիածին լինելոց է. իսկ պատիժն կամ արձակելն ի պատժոյն ի Պատրիարքէն. վասն որոյ՝ այս կանոնք եդան։

Կանոն առաջին. եթէ ոք ի հետեւոցն իւր Էջմիածին խնդրանօքն որ պիտի արձակի ի պատժոյն. Սրբազան Պատրիարքն յիւրն կողմանէ քննութիւն արասցէ ի ձեռն Քահանայից, և կամ ի ձեռն արանց հաւատարմաց՝ դիտել զդաւանութիւն նորին, թէ ըստ ուղղափառ դաւանութեան հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ իցէ։

Կանոն երկրորդ. եթէ ոք ի հետեւոցն Պսակ ամուսնութեան խնդրիցէ՝ եթէ ընդունիցի զամենայն զոր ինչ ընդունի Հայաստանեայցս սուրբ եկեղեցի՝ և զամենայն զոր ուրանայ և նզովէ, ըստ այնմ, և նա նզովեսցէ և ուրասցի. և եթէ խոստովանեսցի և հաղորդեսցի յեկեղեցւոջ հայաստանեայցս, զայնպիսիսն պսակեսցեն քահանայքն։ Նոյնպէս՝ և զԹաչ բրռնօղ կնքահայրն պարտի լինել ուղղափառ՝ և մի հերձուածօղ։

Կանոն երրորդ. եթէ ուրուք հետեւելոյ դաւակ ծնանիցի. և զնա բերցեն յեկեղեցին ի մկրտել մկրտեսցեն. սակայն կնքահայրն պիտի հրաժարի ի սատանայէ. և տայ զդաւանութիւն և հաղորդեսցի ընդ երեխային։

Կանոն չորրորդ. եթէ ի հետեւլոց ոք մեռցի՝ բայց ի հիւանդութեանն խոստովանեալ իցէ և հաղորդեալ և դաւանութիւն տուեալ ըստ Հայոցս ուղղափառ եկեղեցւոյ, դայն՝ ըստ կանոնաց բարձցեն, և ի դիր տապանի հանդուսցեն։ Բայց թէ չիցէ խոստովանեալ և հաղորդեալ յառաջոյ դագաղին մի միայն քահանայ դնասցէ առանց կատարման կարգի տարեալ խորեսցեն զնա ընդ երկրաւ. և ահա՝ եթէ արձակելոցն ի պատժոցն. եթէ պսակելոցն. և եթէ կնքահայր եղելոցն. եդան այսոքիկ պայմանք, և սահմանադրութիւնք. զորս եկեալ մեղայ ասացօղքն՝ սիրով ընկալան. որպէս զի հանապազ յեկեղեցին հայաստանեայց եկեալ աղօթեսցեն. և Հայոց Քահանային խոստովանեսցին՝ և սրբութիւն առցեն. և փաթերայ կամ կարդաւէր ի տունս իւրեանց մի տարցեն և եթէ այսպէս ըստ կանոնացս առնիցեն՝ այնպիսեացն պարտիք պատիւս և սէր ցուցանել. եթէ յեկեղեցւոջ, և եթէ յայլ տեղւոջ՝ բաւ է. Տէր հաստատուն պահեսցէ։ Ամէն։

ԱՅՍ Ի ՆԵՐՔՈՅ ԳՐԵԱԼ ՀՐԿԻԶՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՍ՝ ԵՂԵՒ ԴՐՈՇՄԵԱԼ Ի ՊՕՂՈՍ ԷՒ ԵԹ ԴՊՐԷ ԿԱՂԶՈՒԱՆՑԻՈՅ, ԵՂԲՕՐ ՈՐԳԻՈՅ ՏԵԱՌՆ ԶԱՔԱՐԻԱՅ ԱԶԳԱՍԷՐ ՅՈՐԶՈՐՋԵԱԼ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԵԾԻՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ, Ի 27 ԱՄԵԱՑ ՀԱՍԱԿԻ ԻՒՐՈՒՄ։

Ո՜հ՝ աւա՜ղ և եղուկ անձինս իմոյ թշուառականի և եղկելւոյ. որ տեսի զայսպիսի մեծագոյն հրկիզութիւն պատահեալ ամենաչքնաղ, ամենագովելի և ամենեցուն ցանկալի քաղաքիս Կոստանդնուպօլսի. որ եղև ի ՌՄԼԱ թուականի մերս տումարի. և յօգոստոսի տասներորդի. յաւուր վերափոխման սուրբ Աստուածածնի պահոց գշ-ի երեկոյեան երկրորդ ժամուն սկսեալ. և մինչև ցշաբաթ առաւօտու ութերորդ ժամն տևեաց. որոյ բովանդակ միջոցն երկարեաց ժամս Կ և Զ զոր տեսաք մեք աչօք մերովք. վասն որոյ աղեկիզեալ սրտիւ և լալագին գիմօք ցաւակցաբար ծրել կամեցաք. և զեկուցանել յարգելի հարցդ. և սիրելի նազելեացդ մերոց կարճ ի կարճոյ, թէ ուստի սկսաւ, ո՞ւր դադարեալ եղև. և թէ զո՞րքան վնաս գործեաց և կամ զո՞րքան շէնս այրեաց։ Քանզի ի Ճիպալի կոչեցեալ թաղէն սկսաւ, և այրելով մինչև ցկշռագործացն շուկայ, աճիւնացուցեալ զայն՝ ձգեցաւ դէպ ի յաղայի դուռնն՝ և անտի գէպ յուղիղ եւ ի Կօսկայն, և այնպէս մինչ բոլորեալ՝ և հրդեհեալ բոցափայլէր. և մեք ակն յառեալ դիտէաք, եւ այլ իմն հուր ի Վլանկայու իբրև ի չգոյէ գոյացեալ, և ի մէջ սակաւ ժամու դՎլանկայ իւրն շրջակայիւք և զնոր դուռնն միանգամայն լափեաց և աճիւնացոյց՝ մինչև ցաւերակ Րաղիպ փաշային. և ձգեցաւ միացաւ ընդ վերին հուր Կօսկային. և այնպէս պարսպեալ զբեթէ զբոլոր քաղաքն՝ վաղս առնէր դէպ ի Սամաթիայ. այնքան սաստկացեալ բորբոքեցաւ՝ մինչ զի զօրութիւն Տէրութեանն՝ տկարացաւ ի շիջուցանել զնա. այլ ամենեքեան լքան թուլացան ի զօրութենէ, թողին գնալ, ըստ կամս իւր. ուստի գնաց այրելով՝ այրելով, մինչև ցեօթն կըլայն. յորոց զոմանս այրեաց, և զմնացեալս յառաջին յայրմանէն ի Սամաթիայ, հանդերձ սուրբ Գէորգ եկեղեցեաւն աղարտեաց։ Զի յաղայի դրանէն և ի Կօսկայէն դէպ ուղիղ ընթացեալ մինչև յարտաքս քան զպարիսպն Սիլիվրի դրանն ելանէր. և զայնքան միջոցսն աւերակ և անշէն արարեալ ապականէր. և գրեթէ աւելի քան զերիս բիւր տունս և շինուածս պատուականս յոչինչ դարձոյց և անապաստ արար։

Ո՜հ թէ՝ ո՞րպիսի գեղեցկագոյն պալատք՝ և մեծամեծ ապարանք այրեցան։ Ո՜հ թէ՝ ո՞րպիսի՝ և որքան շուկայք, և բաղանիք այրեցան. ո՜հ թէ որպիսի աղօթարանք այրեցան. զի տաճկացն աւելի քան զհազար, յունաց ութն. իսկ մերս երկու. ի Սամաթիայ՝ սուրբ Գէորգ, և սուրբ Երրորդութիւն, ուր հարիւր յիսուն Հայրապետք գումարեցան ի վանումնաղանդոյն Մակեդոնի չարափառի։

Ո՜հ թէ՝ որքան անձինք այրեցան, եթէ յարանց և եթէ ի կանանց. թող զմատաղ մանկունս՝ որք ոչ եղեն ծանուցեալք. զի միայն հազար հազիւ եղեն գտեալք, և յայտնեցեալք։ Ո՜հ թէ

որքան ապրանք և ինչք ապականեալ կորեան։

Ո՞հ թէ՝ որքան մեծամեծք աղքատացան. և աղքատք փարթամացան։ Ո՞հ թէ որքան մարդիկ խելագարեալ եղեն վասն դառնակսկիծ ցաւոց սրտին, ի կորուստ ընչիցն ասեմ և զաւակացն կամ ամուսնեացն իւրեանց. և բազումք ես իջուածոց պատահեալք մեռան, և կէսք ցաւալիցք եղեն. որք և ոչ ի գործ ինչ պիտանացու. և ո՞հ թէ՝ որքան աղօրիք այրեցան լի ցորենով և ալերը. զորս ի յասացելոցս անհնար է ընդ գրով արկանել զաղէտ տագնապին։ Քանզի ամենայն քաղաքաց մայրն՝ և ամենեցուն գովելին՝ ամենեցուն թագն և պսակն. ամենայն ի չքնաղն՝ շքեղն, և պանծալին, ամենևին մեծացեալն և համբաւեալն. ամենայնի անհամեմատն. և ի հիացումն կարգեալն. փարթամացեալն և ամենևին գեղեցկացեալն, հակառակօքն եղև լցեալ. զի ամենայն քաղաքացն՝ և գլուխ ակն անկաւ և խոնարհեցաւ. և ի լուսոյ փառացն նրւազեցաւ. և յամենայնի այլայլեալ գտաւ. զի ամենայն վաճառականք ի սուգ վարակեցան. և վաճառք նոցա ոչ յումեքէ լինէր խնդրելի. վասն զի վնասեալք էին ամենեքեան. զի էին ոմանց տուն հրձիգ լեալ, ոմանց ինչք. ոմանց խանութք, ոմանց հարք, ոմանց մարք, ոմանց եղբարք, ոմանց քորք, ոմանց ուստերք, և ոմանց դստերք, ոմանց ազգականք, և ոմանց բարեկամք և սիրելիք. և արդարև յաւուրս այնոսիկ ոչ գոյր սիրտ՝ որ ոչ իցէր միով իւիք վնասու վիրաւորեալ. զի յայնպիսի յաղէտ տագնապի էին ամենեքեանք ըմբռնեալ. և բազմաց մերկ ի հանդերձից փողոցէ ի փողոց արշաւէին. ոչ դիտելով առն զկին թէ՝ ընդ որ վարեցաւ. և ոչ կին զայր իւր. ոչ հայր զորդի, և ոչ որդի զհայր. և զայլսն ըստ այսմ իմացէք. այլ միայն ամենայն ոք անձին իւրոյ փրկութեան ջանայր. զի գրեթէ զպատկեր վերջին աւուր յանդիման կացոյց մեզ, ըստ աւետարանական պատմաբանութեանն. և գեր ի վերոյ քան զբաբելականն դառնէր հուր. և զորս գտանէր՝ այրէր զամենայն. և ոչ ոք կարէր շիջուցանել. ոչ Թագաւոր, ոչ Եպարքոս, և ոչ այլք ի մեծամեծաց նոցա. և ոչ այլ ամենայն բազմութիւն մարդկանց. քանզի բարկութիւն Աստուածային էր կանխեալ ի վերայ բնակչաց քաղաքին. զի աղաղակ չարութեան մերոյ ել յերկինս՝ ըստ Սոդոմայ, և անդուստ յարուցեալ տեղեաց զբարկութիւն Տեառն ամենակալի ի վերայ մեր անօրինելոցս ըստ ոգելոյ Աստուածարեալ Հայրապետին Տեառն Սիմէօնի Սրբազնակատար Կաթողիկոսի՝ որ ասէ.

Զի գիտացեալ մեք հաւաստեաւ.
Որ չափ մեղաց մերոց լցաւ.
Ուստի Տէրդ մեր բարկացաւ.
Առ ի խրատել ըզմեզ զարթեաւ։

Վասնորոյ պարտիմք և մեք այսուհետև դառնալ ի չարեաց մերոց և յանօրէնութեանց, զի մի՛ քան զայս մեծագունիցն պատահեսցուք. ըստ Տեառն բանի՝ որ առ կոյրն թէ՝ բժշկեցար՝ այսուհետև մի՛ մեղանչեր. զի մի՛ ևս չար պատահեսցի քեզ. վասն զի քաղաքս այս թէպէտ բազում հրկիզութիւնս էր տեսեալ՝ բայց ոչ այսքան մեծագոյն. քանզի՝ գրեթէ՝ երեք մասն քաղաքիս աւերակ դարձաւ. և մինն միայն մնաց։ Աւաղ աղետիս՝ վիշտ վրտանգիս՝ զի բարձաւ յառաջին սորա պատուականութիւնն և շքեղութիւնն. բարձաւ յառաջին գեղեցկութիւնն. և վա-

յելչութիւնն. գնաց միանգամայն զօրութիւնն և հարստութիւնն, խոնարհեցաւ բարձրութիւն համբաւոյ անուան սորայ ըստ այնմ. Թէ՝ յանկարծ եկեսցէ ի վերայ քո կործանումն մեծ յոյժ. զի արդարև էր յաւուր յայնմիկ ամենայն սիրտ ի տրտմութիւն. և ամենայն գլուխ ի ցաւս՝ ըստ ասացելումն։

Եւ արդ՝ ով սիրելիք իմ և պատուելիք, որովհետև այսպէս դիպեցաւ վասն մեղաց մերոց. եկայք ողբասցուք և կոծեսցուք ի վերայ մեծահռչակ և ամենագովելի քաղաքիս Կոստանդնուպօլսի՝ որ եկեալ հասեալ յայս աստիճան անզարդութեան՝ տեսաք զնա. արդ՝ որ ապառաժ սիրտ ոչ հալեսցի ի վերայ այսպիսի դառն դիպուածոյ. մանաւանդ ի վերայ այնոցիկ՝ որ անբնակ եղեալ զօրէն վայրենեաց կենդանեաց, և գազանաց. զրկեալ ի սիրելեաց, բաժանեալ ի զաւակաց և յընչից միանգամայն. բնակէին ի բացեայ յաւերակս. ի փողոցս, ի մոխրանոցս բաղնեաց. ողբալով զթշուառութիւն կենաց իւրեանց. և զկորուստն չարաչար այրելոցն. և ահա այսպէս դեգերեալ աստ և անդ՝ մերկ կողոպուտ յամենայնէ, ի սով և ի ծարաւ, յաղքատութեան, և ի քաղցութեան։

Եւ եղև այս յաւուրս արքային օսմանցւոց սուլթան Համիդի. որ յաղագս պատահման հրկիզութեանս այսորիկ՝ փոխեաց զեպարքոսն իւր, զԻզզեթ Մեհմէտ փաշայն. զկնի անցանելոյ աւուր միոյ. և եդ ի տեղի նորա զԾէկէն Ահմէտ փաշայն. և ոչ միայն զեպարքոսն, այլ և զամենայն մեծամեծ գործակալսն իւր։

Եւ ի ժամանակս Հովուապետութեան լուսանըկար Աթոռոյն սրբոյ մօրս մերոյ Էջմիածնի՝ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթողիկոսի Արամեանս գրոհի։ Եւ ի Պատրիարքութեան սրբոյն Սաղիմայ Տեառն Յովակիմայ գերերջանիկ վարդապետի։

Իսկ և ի Պատրիարքութեան Քաղաքիս այսմիկ, Տեառն Զաքարիա ազգասէր կարդացեալ յարարթուն և արհիապանծ դիտի. որոց Տէր տացէ կեանս երկարս, ամէն։

Եւ արդ՝ իբրև ետես վերոգրեալ ազգասէր Դէտն, Թէ՝ Յացին այնքան ողորմելի խղճալիքն մերկ և կողոպուտ ի հրապարակս, ի փողոցս և յայլ տեղիս. ապա ըստ ղթածագոյն բարուցն իւրոց ոչ կարացեալ հանդուրժել աղետիցն նոցա. արար խորհուրդ ընդ իշխանաց, և ընդ իշխանապետաց. և ժողովեալ բազում դրամս յամենից էսնաֆից. և բաշխեաց իւրաքանչիւրոցն ալելոցն ի հրկիզութենէն. որով փոքր մի թեթևացոյց զտառապանս նոցա. և մանաւանդ, զկտաւեայ վրանս ետ շինել վասն նոցա, զի ապահով լինիցին ի տօթոյ և յանձրևոյ՝ մինչև Տէր այց արասցէ ըստ մեծի ողորմութեան իւրում. ուստի և գրեաց յորդորական գիրս ամենայն էսնաֆից. որ ունէր օրինակ զայս։

Ի Տէր Զաքարիայ արհի եպիսկոպոսէ և Պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ. ծաներուք յԱստուծոյ օրհնեալ (այս անուն էսնաֆի) վարպետայք, և սիրելի որդիք մեր ի Տէր. և առատաձեռն աղքատասէրք, զի որովհետև բազումք աղքատացան յազգէ մերմէ ի հրայրեցութենէ. յորս են այրի կանայք, որք այրիք են և որդւոց տէր. և են՝ որք յաւուրն ստանային, և յաւուրն զծախոյս առնէին. և ըստ կարի իւրեանց զարմանէին զորդիս և զըն-

տանիս իւրեանց. և ողորմութիւն ևս շնորհէին աղքատաց. բայց այժմ վասն ծովացեալ մեղաց մերոց, ելեալ ի հրոյ իբրու մերկ ի մօրէ՝ և կարօտ մաշկեղէն ներքանոցի, կամ խոշորագործ ովիաթի միոյ. նօթիք և նքթեալք. ի յանձրևոյ, և ի ցեխոյ տոգորեալք, սպասեն նախ Աստուծոյ՝ և ապա ձերումդ աստուածասիրութեանն ողորմութեան. զի բնաւին չեն մուրացեալք՝ և ևս՝ ոչ կարեն մուրանալ. սրոց և գործանոցն ևս այրեալ։ Ուրեմն և ձեր վերահասու լեալ տառապանաց խղճալեացն՝ պարտիք իւրաքանչիւրքդ մէկ մէկ գլխաւոր ողորմութիւն յօժար կամօք զուարթ սրտիւ և առատաձեռն բարուք, զոր ինչ անցանի և զոր ինչ բղխի ի բարի սրտից ձերոց շնորհել. և զհաւաքեալ ողորմութիւնն ի սուրբ աթոռս բերել. որպէս զի՝ և մեր ընկալեալ ի ձեռն ՀԲ էսնաֆացն փոխանորդաց ընտրեցեալ ԺԶ անձանց բարեպաշտից՝ ցրուեսցուք ըստ արժանւոյն առ կարօտեալս. որպէս զողորմութիւնս միւս էսնաֆացն ցրուեցաք. որ և Տէր Աստուածն ամենայնի զձեզ ի հոգևոր և ի մարմնաւոր հրրկիզութեանց փրկեսցէ. զտունս և զգործարանս ձեր հաստատ պահեսցէ ամէն։

ի ՌՄՂԱ ի սեպտեմբերի 14.

Այլ և ոչ . է պարտ զանց առնել զայնց երկուց հրկիզութեանց՝ որք յառաջ քան զայս եղեն. մինն ի Սամաթիայ, յունիսի ԻԸ ին, Վարդավառի պահոց ԳՇ զիշերեան հինգերորդ ժամուն սկսաւ և տևեաց ԺԵ ժամ։

Եւ միւսն ի Գալատ յուլիսի ԺԲ. ԳՇ ցերեկեան Ժ ժամուն սկսաւ և տևեաց ժամս Ի և Ե բայց ողորմութեամբն Աստուծոյ զերծաւ սուրբ Հրեշտակապետ եկեղեցին մեր. բայց դու մտածեա ով սիրելի իմ, թէ այս երկու հրկիզութիւնքս, և՝թէ յետին մեծագոյնն՝ որոց բոլորն եղև ԾԸ ժամ. և յայս ԾԸ ըն ժամուս թէ որքան տեղիք այրեցեալք եղեն սաստկագոյն հողմով՝ ոչ կարեմ պատմել. և կամ ի գիր արձանացուցանել, զի գրեթէ տասն քաղաքի չափ տեղի այրեցաւ, և աւերակ դարձաւ, ապա իմա թէ զի՞նչ մնաց չէն ի Պօլիսս, և բաւէ այսքանս մտաւորացդ առ այս։

—

Դարձեալ պատմեցից և զհրաշագործութիւնս Աստուծոյ՝ որ եղև ի ժամանակս սոյն հովուապետիս մերոյ Տեառն Զաքարիայ. որ գնացեալ ըստ նախնի սովորութեանց ի Ղալաթիայու եկեղեցին՝ որ կառուցեալ է յանուն սուրբ Լուսաւորչին առ ի մատուցանել զԱստուածային Պատարագն։ Բայց ի գնալն զմոմխանայ զծովափնէիւ, այս է զԻսկէլէիւն. որում մերձ էր տունն Խանմ օղլու յորջորջելոյն, յորմէ բազում անպատեհ բանս խօսեցեալ էին վասն Հօր մերոյ գաղտաբար. զոր լուեալ ոմանց՝ և ոչ կարացեալ տանել, եկեալ պատմեցին Տեառնս մերոյ, և նա բանիւք բազմօք մխիթարեալ զնոսա ասէ. որդեակք՝ ոչ գիտեն այնպիսիքն զինչ խօսին. և ոչ վասն որոյ պնտեալն են, ըստ սրբազան առաքելոյ. Տէր տացէ նոցա զգաստութիւն։ Բայց կանխագէտն Աստուած՝ որ քննէ զսիրտս և զերիկամունս ըստ Դաւթայ, սակս ամբարշտութեան նոցա՝ զոր ամբարշտեցան՝ արասցէ վաղվաղակի զվրէժս հետևելոցն այնոցիկ՝ նման Սոդոմայ և Գոմորայ, և այրեսցէ զտունս անիծելոյն այնորիկ առ ի խրատ այլոցն. ըստ այնմ թէ՝ սաստեա միոյն՝ զի և այլքն երկիցեն. ոչ ապաքէն զրեալ է թէ զիշխան ժողովրդեան քո մի

հայհոյեսցես։ Իսկ ըստ որում հայհոյեաց ընկալաւ յիրաւի ինքն միայն զպատիժն յԱստուածուստ. այսինքն զայրումն տան իւրոյ. ահա արդարև հրաշ որ եղև ի գիշերին այնմիկ. ուստի՝ և բազմաց լուեալ փառս մատուցին ամենարդար Տեառն Աստուծոյ ամենակալի. որ երբեմն զայսպիսի ամբարիշտս խրատէ առ ի ածել յուղղութիւն, քանզի ոչ կամի զմահ մեղաւորին այլ զդառնալն նորա և զկեալն. և մանաւանդ ծանիցէ թէ՝ դոյ Աստուած իրաւադատ յերկինս, զի գրեթէ՝ ոչ ոք վնասեցաւ բաց ի նմանէ։ Այս ևս լիցի բաւ առ այս։

Դարձեալ այլ հրաշ, որ եղև յաւուրս նոյնոյ սրբազանի ազգասիրի. զի գոլով ի միջագեղջն՝ դարապխանայ ելեալ Դալուստ անուամբ ոմն՝ որ էր ի հետեւելոցն. նա կամեցաւ զորդին իւր ամուսնացուցանել՝ առնլով զդուստր նմանոյն իւրոյ Տիւգ օղլու կոչեցելոյ։ Բայց Սրբազան վեհն մեր արգել՝ և ոչ ետ զհրամանագիրն պսակելոյ նորա. որպէս զի դարձցեն և եկեսցեն յուղղութիւն. և ծանիցեն զմայրն իւրեանց Հայաստանեայցս սուրբ եկեղեցի, որ ծնաւ զնոսա հոգևոր երկամբ այլ անիծեալքն այնոքիկ՝ ոչ հնազանդեցան, և ոչ լուան բանից նորա, և մանաւանդ այլ առաւել յանդգնեցան ընդ դէմ Տեառն հրամանի որ ասէ. թէ որ ձեզ լսէ ինձ լսէ, և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. վասն որոյ՝ անկան ի դրունս արքունական մեծամեծացն. և յարուցին զնոսա ի վերայ Տեառնս մերոյ խնդրել զգիր հրամանի հարսանեաց նոցա. առաքելով զմէհտէր պաշին արքայի. որ եկեալ բռնութեամբ խնդրեաց զայն գիր. իսկ վեհն մեր ետ նմա պատասխանի ասելով, թէ ձերդ թագաւորի հրաման է ի վերայ իմ, զի զայնպիսին խրատեցից և յանդիմանեցից առ ի ուղղութիւն ածել զնոսա. և դուք ընդ դէմ հրամանի նորա գործէք. և բռնութեամբ կամիք առնուլ յինէն զայն՝ զոր չէ իմ կամք տալ նոցա, մինչև գայցեն յուղղութիւն և ի հնազանդութիւն կամաց թագաւորին. և մերս ծիսի. և զայլ բազում բանս խօսեցաւ առ նա. իսկ այրն գոլով անագորոյն ոմն, ասաց ցհայրն մեր. ոչ ապաքէն ասացի թէ՝ տուր զայն գիր հրամանի ամուսնութեան՝ զոր օրէն է ի ձեզ, զի եթէ ոչ տացես՝ ոչ բարի դիպեսցի քեզ. վասն որոյ և հայրն մեր մնալով ի մէջ երկուց վարանմանց, ապա ակամայ կամօք ետ զգիրն ասելով՝ Աստուած լիցի նոցա վրէժխնդիր. որպէս իւրն է գործ՝ ուղղել զթիւրեալսն։ Բայց դու տես ինձ զկատարած բանին. թէ որպէս վաղվաղակի դատեաց Աստուած և հատոյց զվրէժս ըստ չարութեան նոցա։ Քանզի ի սկսանել հարսանեացն և առնելն զխրախութիւնս հանդերձ բազմութեամբ մարդկան հաւաքելոց՝ եկ հուր յանկարծ յԱստուածուստ և այրեաց զտունն ամբարշտելոցն. յորում էին ժողովեալ. և ամենեքեան ցրուեցան՝ և հարսանիքն նոցա խափանեցաւ և մնաց անկատար. և սիրտ ամենեցուն լցաւ տրտմութեամբ։ Ահա տեսեր՝ թէ զիարդ արդարութիւնն Աստուծոյ դատեաց զնոսա յաղագս չլսելոյ զխրատ առաջնորդին իւրեանց և հովուին. ըստ Աստուածային պատգամին՝ եթէ ոչ լսիցէք ինձ՝ սուր կերիցէ զձեզ։ Դարձեալ՝ թէ որ զխրատ ծերոց կամ իմաստնոց անարգէ՝ նախ քան զամէն անարգելին՝ անարգ է։ Ուրեմն լսելով

մեր և անսանելով զայսպիսիսն, լիցուք հլու և հպատակ առաջնորդաց՝ և հարցն մերոց փոխանորդացն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի մի և մեք կրեսցուք զայսպիսի պատիժս. ՚և բաւ է։

Արդ՝ թէպէտ այսպիսի դիպուածք բազումք գոյին, սակայն ոչ եղաք և դրեցաք. զի մի՛ տացուք ձանձրութիւն ձեզ սիրելի ունկնդրացդ. ըստ որում յառաջաբանութեան անգ խոստացաք զպատմութիւնս մեր զայս՝ համառօտ առնել. ուստի՝ և եզերումն առցէ բան մեր աստէն, ըստ առասպելին թէ.

Միտս ունողին մոծակն է զերթ
երգարան
Իսկ անմտին՝ սակաւ շեփորն և
արապան։
Պիլէնէ սիվրի սինէք սազ տըր.
պիլմէյէնէ՝ տավուլ զուռնա ազտըր։

Դարձեալ զայս մի ինչ ես՝ կամ է ինձ պատմել. որ եղև ի թուականութեանս մերում, 1233ին և ի յամի Տեառն 1784ին ի սեպտեմբերի վեցերորդին յաւուր ուրբաթու։ Քանզի Եփրեմ կաթուղիկոսն Աթոռոյսն Արսայ փոխելով առ Տէր. որոյ զհոգին հանգուսցէ Տէր ընդ սրբոց Հայրապետացն, և նոցին պսակակիցս արասցէ, իսկ ի տեղի նորին ձեռնադրեցին կաթուղիկոս նոյն աթոռոյ զՏէր Թէոդորոս համեսակենցաղ եպիսկոպոսն՝ շնորհիւ Տեառն և համահաւանութեամբ բոլոր Կիլիկիոյ թեմի համայն քահանայից ժողովրդոց. այլ և այլասեռից գլխաւորաց. որոյ ձեռնադրութիւնն եղև աստ ի քաղաքիս այսմիկ՝ ի սուրբ Աստուածածին եկեղեցին. ձեռամբ Տեառն Զաքարիայ ազգասիրի՝ Պատրիարքի Պօլսոյս. և այլ գլխաւոր եպիսկոպոսաց՝ որոց անուանքն են այսոքիկ. Նախ՝ սուրբ Էջմիածնի նուիրակ Տէր Սահակ մեծիմաստ եպիսկոպոսն։ Երկրորդ սբբոյն Սաղիմայ Տէր Աւետիս եպիսկոպոսն։ Երրորդ՝ Սեբաստացի Յօհաննէս եպիսկոպոսն։ Չորրորդ՝ Գէորգ եպիսկոպոսն Կիլիկեցի։ Հինգերորդ՝ Օհաննէս եպիսկոպոսն Տրապիզոնցի։ Այլ և եօթն վարդապետք, և երկոտասան քահանայք։ Ամենեքեան զգեստաւորեալք. և զի թէպէտ՝ նա ոչ առնոյր յանձն՝ սակայն հոգևոր ծնօղն մեր՝ և ամենայն իշխանքն ազգին ասեն ցնա՝ թէ ըստ որում իշխանք վիճակին այնորիկ՝ հանդերձ քահանայիւք և ժողովրդովք, այլ և այլ ազգ Պէկէրն ևս՝ պատկան համարին զքեզ այդմ աստիճանի, դու մի՛ զանձն քո խնայեր. քանզի ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ ասէ. վասն որոյ՝ և նա հնազանդեալ յանձն էառ ասելով եղիցի ըստ բանի Աստուածասիրացդ։ Արդ՝ յիրաւի սաուդութեամբ ասեմ ըստ Պօղոսի՝ և ոչ ստեմ, քանզի սուտն ի հօրէն սատանայէ է, ըստ Տեառն բանի. բայց ես զճշմարիտն ասեմ. ըստ այնմ թէ խօսեցարուք զճշմարտութիւն՝ և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ. որում քաղաքի և ժողովրդեանն երանի տամ, որք այնպիսի սրբազնասուրբ և բարեբարոյ առն ցանկալւոյ և հովուի եղեն արժանացեալք. որում որդիք և հետևօղք գրեցեալք. զի այս յոյժ հաւատին է, թէ հետևօղքն՝ ի նպատակ յառեալ հայլին.. ի բանն։ Եւ Տէրն՝ կանուխ արձանացոյց, թէ զոր ինչ հայր գործէ, և որդին նմին նման գործէ. բայց թէ իցէր այր հեշտասէր՝ և կամ մանուկ տիօք. յայնժամ վա՜յ ասէի այնոցիկ. ըստ մարգարէին թէ՝ վայ քեզ քաղաք՝ որոյ թագաւոր քո մա-

նուկ է. ահա սակս այնորիկ՝ երանի եռու նոցա. զի չէ ըստ յետին ասելոյ մարգարէին։ Բայց թէ ընդէ՞ր յաւուր ուրբաթու ձեռնադրեցին զնա կաթուղիկոս՝ և ոչ ի կիւրակէի, և կամ ընդ է՞ր ոչ զգացուցին ժողովրդեանն, առ այս ասեմ, թէ գոյր քանի մի պատճառ այսպիսի յանկարծ առնելոյ։ Առաջինն էր այս՝ զի տունն՝ և Աթոռն այն էր առանց վերակացուի. և առանց հովուի. զի որպէս նաւ մի՝ առանց ղեկավարի ոչ ընթանայ, նոյնպէս՝ և ոչխարք առանց հովուի ոչ լինին. որպէս յայտ է ձերումդ խոհեմութեան։ Եւ երկրորդ՝ վասն ոչ իմանալոյ ամենեցուն, և լսելի լինելոյ, մի՛ գուցէ զնաս ինչ ծնանիցի յեկեղեցւոջ և յազգի մերում. քանզի՝ եթէ յիրաւի լսէին բնակիչք քաղաքիս քրիստոնեայք, ամենեքեան արք և կանայք, ծերք և տղայք գրոհ տուեալ ընթանային յեկեղեցին՝ սակս նորատես գործոյ ձեռնադրութեանն զինչ ոչ լինէր յայնքան բազմութեան եկելոցն միջի ի տեսանել զայն. ահա այսպիսի դիպուածոյ կասկածով այնպէս զանխուլ վճարեցին զայն գործ ձեռնադրութեանն, և այս երկու պատճառաւս բաւականացեալ, ողջ լերուք ի Տէր. Ամէն։

Դարձեալ՝ զայս երկու բանս ես պատշաճ վարկայ աստանօր գրել ի զգուշութիւն մերազնէից. և սակս լինելոյ հայելի և նպատակ ողջամիտ և բանեղէն եղբարցն մերոց. զի մի՛ պատրիցին յայնցանէ որոց ձև և կերպարանն միայն իցէ ըստ ընտրելոցն Աստուծոյ։ Քանզի ի թուականութեանս մերում ՌՄԻԸին ի Տօնի սուրբ Հրեշտակապետաց, Տէր Զաքարիա Պատրիարքն ըստ սովորութեան հրաւիրեալ եղև յիշխանացն և ի քահանայից Պալատու, գնալ ի սուրբ Հրեշտակապետ եկեղեցին նոցա. որպէս և յայլ եկեղեցիս է սովորութիւն գնալ ի տօնի նոցա, առ ի մատուցանել զաստուածային Պատարագ։ Արդ՝ մինչնա այսինքն, Պատրիարքն կայր անդ, պատահեցաւ, զի Աստուածատուր անուն կարգաւորեալ ոմն՝ որ եկեալ էր ի Հռոմայ ի Ղալաթիայ. և էր յաւուրս յայնոսիկ ի տան քեռաւոն իւրում ի Պալատ. առաքէ զքեռ որդին իւր առ Արքազանն մեր՝ ունելով ի ձեռին զգիր մի մեղայական. որ ունէր օրինակ զայս։

Տէր իմ՛ ես ի մանկութեան իմում առաքեցայ ի Հռոմ. ոչ իմ կամաւ. այլ ի ծնողացն իմոց. և յարելով ի նոսա, անգիտութեամբ հետևեցայ նոցին շաւղաց. ըստ ասելոյ սրբազան Առաքելոյն թէ՝ մինչ տղայն էի՝ իբրև զտղայ համարեցայ. այլ իբրև եղէ այր՝ ծանեայ զճշմարիտ և զամբիծ հաւատն իմ նախնական հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյն. վասնորոյ՝ աղաչեմ և խնդրեմ ի գորովագութ Հօրէդ՝ զի ներեսցես ինձ և ընկալեալ զաարտուցեալս ընդ հովանեաւ թևոց քոց պահեսցես. և իբրև առեալ սրբազան Հայրն մեր ընթերցաւ զայն մեղայական դիրն նորա ասաց ցքեռ որդին նորա. թէ երթ և ասա ցնա, մնասցէ՝ մինչև ես գնացից ի պատրիարքարանն. ապա եկեսցէ անդր. և գիտացից թէ՝ ո՞րպիսի ինչ իցէ այդ։ Ուստի՝ յորժամ եկն Վեհն մեր ի սուրբ Աթոռն՝ եկն և նա, անկաւ առ ոտս Տեառն մերոյ ասելով, Տէ՛ր՝ մեղայ յերկինս և առաջի քոյ, ապաւինիմ արդ՝ անձամբ բեկելով ի սուրբ հաւատն քո. հրաժարիմ ի բոլոր սրտէ ի նոցանէ, և ի հաւատոցն նոցա. և այսպէս ձևացուցանէր զինքն արտաքուստ ոչխար. բայց ի ներքուստ լեալ գայլ. ըստ Տէ-

բունական բանին. պարապ ուրեմն զգուշանալ յայնպիսեացն. իսկ Հայըն մեր հաւատացեալ կեղծուպատիր բանից նորա, մանաւանդ յօժարական զրգջմանն. եւ կամաւոր գալստեանն մեծարեաց զնա. և սիրով ընկալեալ արար իւրն սեղանակից. և զգեցոյց նմա հանդերձս պատուականս յոտից ցգլուխ նորա. եւ պատուէր ետ բոլոր միաբանիցն. սիրով վարիլ ընդ նմա. և իբրև զեղբայր եւ զհայր պատուել զնա. ապա առաքեաց ի Սամաթիա՝ առ. ի ուսանիլ զեկեղեցական արարողութիւնս մեր. այս է, ընթեռնուլն սուրբ Աւետարանն. և զՊատարագ մատուցանելն ի Յովակիմ վարդապետէ Գեղամացւոյ. որ էր անդ յայն ժամանակս քարոզիչ. եւ զի՛նչ երկարութիւն բանիս արարից. ուսաւ զոր ինչ պարտն էր, եւ եկն մատոյց զպատարագն ի սուրբ Աստուածածնի եկեղեցին Պատրիարքարանի. ապա այնուհետև սիրեցաւ յազգէ մերմէ. և զբազում ընծայս, եւ զպարգեւս ընկալաւ։

Արդ՝ յետ այսքան բարեբարութեանց ընկալելոց՝ խորէութեամբ զփախուստ առեալ չուեաց յուստի եկեալն էր. պատճառելով զ՛ի բաղանիս գնալն, եւ ի տեսութիւն քեռն։ Բայց ով դու Աստուածուրաստ այր՝ ո՞ զքեզ հրաւիրեաց գալ առ մեզ. այլ դու քեզէն քո կամաւ եկիր. և եթէ եկիր՝ ապա զիա՞րդ գնացեր. սակայն նա ոչ խաբեաց ըզվեհն մեր, և զազգս, այլ զԱստուած. որպէս Անանիայն ոչ զՊետրոս խաբեաց, այլ զԱստուած։ Վասն որոյ ընկալաւ զպատիժ պատուհասին կնաւ իւրով։ Այլ այս որպէս ինձ թուի՝ ոչ վասն ուղղութեան եկն առ մեզ, այլ վասն դաւելոյ զծնօղն մեր. որպէս Անակն զԽոսրով արքայ հայոց. քանզի յայն ժամանակս կարի խիստ կշտամբէր զհեստեալսն. բայց իբրև ետես թէ՝ ոչ է կար՝ զիւրն չարութիւն յոստայնանկել, խոյս ետ՝ և յաներևոյթս կորեաւ. ահա ուրեմն մի՛շտ այս է գործ որդւոցն սատանայի. և այս պտուղ գործոց նոցա. զգոյշ լերուք և խորշի՛ջիք ի նոցանէ, զի մի անկանիցէք ի ցանցս վարմի նոցա զի ամենեքեանքն նոքա արբանեակք են հօրն չարեաց, մի՛ հաւատայք բանից նոցա և մի՛ խաբիք, եւ բաւ է։

Ըստ սմին օրինակի, Սարգիս անուն կաբգաւեր մի ես՝ եկեալ յաւուր միում ընդ Զպուխճի Գրիգորին. սա որ երբեմն էր Սաւուղ՝ և այժմ եղև Պօղոս. անկաւ առ ոտս վեհին մերոյ տալով զմեղայն յոյժ սարսափելի երդմամբ հանդերձ՝ զոր ոչ կարեմ առնուլ ի բերան. ասէ ես ուղիղ մտօք եկեալ եմ. ով հայր իմ պատուական. վասնորոյ՝ և հայրն մեր պատուիրեաց մեզ, թէ տարայք և պատուեցէք զսա. զի՛ էր յերեկոյեան ժամուն, և մեր տարեալ նստուցաք ի սեղան, և մեծաւ պատուով պատուեցաք ըստ հրամանի հօր մերոյ։ Բայց զկնի ճաշուն՝ առաջի մեր՝ և առաջի Բերդումեան Պետրոս վարդապետին՝ և այլ վարդապետաց յանուն ամենասուրբ Երրորդութեան, և ի սուրբ Խաչ Տեառն մերոյ երդուաւ թէ՝ յառաւօտուն երթամ, և քանի մի ղուրուշ աստ և անդ տալիք ունիմ. տամ, և ապա եկեալ մնացից առ ձեզ. և ի ծանուցանելն մեր զայս վեհին մերոյ. և նա ետ հրաման գնալոյ նմա ի կատարումն գործոյն իւրոյ։ Ուստի և ընդ լուսանալ առաւօտուն ի Գրիգորէն որ ընդ նմա եկեալն էր՝ առնու քանի մի ղուրուշ փոխ, վասն հատուցման պարտուցն ասելով տարեալ տաց ըզպարտս իմ. և եկեալ մի՛ամտաբար

հանգեայց աստէն. և նա ևս հաւատացեալ բանից նորա՝ տայ նմա զխընդրեալ փողն՝ զոր առեալ գնաց. և ոչ ևս դարձաւ յետս. և ոչ եւ յերեսն. և յետ քանի մի աւուր ընկըսաւ Գրիգորն ոռնել զնա վասն տուեալ փողոյն, և իբրև եգիտ զխաբեբայն զայն, և խնդրեաց ի նմանէ զտուեալ դրամն իւր, իսկոյն ուրացաւ անիրաւն այն՝ զգալն և զառնուլն զփողոյն միանգամայն. ապա յետ բաղում վիճման՝ տակաւին ոչ կարաց առնուլ ինչ ի նմանէ. կալեալ զնա՝ ածէ առ գլխաւորսն նոցա, և պատմեաց նոցա զարարսն խաբեբայյին, և նա անդ ևս ուրացաւ առաջի նոցա։

(Տեսէք եղբարք՝ եթէ սոքա որ փոքունքն են այսքան չարութիւնս առնել կարօղ են, ապա մեծագոյնքն՝ զինչ ոչ կարողանան առնել. յորոց պարտ է զգուշանալ և խորշիլ)։ Բայց նոքա այսինքն մեծքն այնոքիկ՝ առ որս ածեալ եղև չիքն այն, եթէ վասն երկիւղին. և եթէ վասն կեղծաւորութեանն և կամ թէ վասն ուղղելոյ զնա, բազում յանդիմանական բանիւ կշտամբեալ վասն այսպիսի գործոց նորա. և ապա տան զփողն առն այնմիկ Գրիգորի. և համոզական բանիւք զփոփեալ զսիրտ նորա՝ առաքեն. և ոչ ևս ծանեաք, թէ զինչ արդեօք արարին զարբանեակն բանսարկուին՝ բայց այրն այն չպուխճի Գրիգորն՝ որ պատրեալ ի բանից նորա եղև նմա առաջնորդ բերելն առ Վեհն մեր, եկն յետոյ պատմեաց մեզ, զոր ինչ տնցք անցեալ եղև զկնի գնալոյն ի մէնջ. զոր լուեալ մեր յապուշ կրթեցաք ընդ արարս նորա. և զարհուրեցաք ընդ մեծամեծ երդմունս նորա զոր երդուաւ. զորոյ յիշելն աստանօր անդէպ վարկանիմ, մի գուցէ ողջմտութեան ձերոյ գայթակղութիւն, վասն որոյ՝ կարեմ ասել՝ թէ երկինք և երկիր դողան՝ և սարսին ի յերդմանց նոցա. այլ պարտ է փախչիլ այնպիսեացն, և ոչ երբէք հաւատալ բանից նոցա. զի յայս երկուց անիծելոց՝ և զայլսն կարէք իմանալ՝ թէ որոյ հոգւոյ ծառայք են. և բաւ է։

ՑԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՕՍՄԱՆՏԻՈՑ ԵՒ ՊԱՏՃԱՌԱՒ ՆՈՐԻՆ ԺՈՂՈՎԱԱՆ ԱՐԾԱԹՈՅՆ ԵՒ ՎԱՍՆ ՏԵՍԼԵԱՆ ԻՄՈՅ.

Թէպէտ և կայր ի մտի մերում վերստին սրբագրելով զամենայն վիպասանութիւնսն որք յայսմ գրքի բովանդակին, ըստ ժամանակին, ըստ տեղւոյն, և ըստ այլ հանգամանացն մի ըստ միոջէ ծանուցանել. այս է. զոմանս երկար ասացեալսն համառօտել. և զյոյժ ի կարճոյ տողեալսն՝ սակաւ մի ընդլայնել ըստ վայելման տեղւոյն. և ևս բաժանել ի պրակս պրակս, և զայնս դարձեալ ի յօդուածս, սակայն ի զբաղմունս կենցաղոյս պատաղելով՝ ոչ կարացաք տնգամ բանալ զաչս, և ըստ կանոնի վիպել. այլ միայն որքան կարն մեր էր՝ աշխատ եղեաք յստուգութիւն իրին դեգերել, և զայն պարզ բառիւ՝ և բացայայտ ոճով արձանագրել միայն ընդհարկաւորսն և մեծամեծսն. և զորս ա-

չօք մերովք տեսաք վկայել զնոցանէ. որպէս ահա այժմ երկու գլխաւոր իրս ևս ունիմ ծանուցանել արժանի յիշատակի զրոյցս. որոց մինն է պատերազմն Օսմանցւոց, և միւսն ժողովումն արծաթոյ. ուրեմն նախ արասցուք վասն պատերազմին. և ապա վասն հաւաքման արծաթոյն համառօտակի։

Արդ՝ յաւուրս թագաւորութեան սուլթան Համիդի՝ և ի թուականութեան Հայոց ՌՄԼԶ յարեաւ պատերազմն Օսմանցւոց ընդ երկուց տէրութեանցն՝ Մօսկովու, և Նէմցէի, յորում ժամանակի էր եպարքոսն Եուսուֆ փաշայն, որ էր այր նախանձախնդիր դենի իւրեանց. և ըստ մեծի մասին՝ պատճառ պատերազմին. որ ոչ սակաւ բանիւք յորդորեալ զթագաւորն գրգռեաց յայս գործ մեծ. և երարձ զդեսպանն ռուսաց և արգել ի կալանս ի յեօթն կլայն ըստ նախնի սովորութեան իւրեանց. ի վերոգրեալ թուականին յօգոստոսի Ե ին. և թէպէտ սկսաւ պատերազմն. յորմէ ի տրտմութիւն մեծ պաշարեցաւ բոլոր աշխարհ Օսմանցւոց. այլ և ինքն Եուսուֆ փաշայն անկաւ ի տագնապ տարակուսութեան. յաղագս սակաւութեան զօրաց, ուստի և հնարս եղիտ այսպէս. նախ՝ առաքեալ կոչեաց զմեծամեծս Հայոց, և խնդրեաց՝ ի նոցանէ զհազար այր հզօր ի պատերազմի. յորում յոյժ բազում պաղատելով՝ հազիւ կարացին իջուցանել ի հինգ հարիւրն։ Ապա կոչեցեալ զՅունաց մեծաւորսն՝ և պահանջեաց ի նոցանէ ևս երկու հազար այր պատերազմական՝ որք ծառայեսցեն ի նաւսն գնացօղս ի պատերազմ. և նոցա ևս աղաչեալ՝ հազիւ իջուցին ի հազար ութն հարիւր. և այս սահման մարդապահանջութեան՝ մնաց հաստատուն՝ ի վերայ երկուց ազգաց՝ յունաց ասեմ և Հայոց. յամ ըստ ամէ. ԵՃ հայք, հազար ութն հարիւր յոյնք, յամս չորս բռնութեամբ Եուսուֆ փաշային. որ յաւիտենից ոչ էր եղեալ և ոչ տեսեալ զայսպիսի արտաքոյ կանոնի հարկադրութիւնս. և ոչ ի մի ժամանակ թագաւորաց, և յետ չորից ամաց և անդր հատուցանեն զվարձս հինգ հարիւրոցն դրամս հինգ հազար հայք. նմանապէս և յոյնք՝ հազար ութն հարիւրոցն ըստ այնմ հաշուի։ Արդ՝ այս Եիւսուֆ փաշայ սպարապետ զօրուն եղեալ՝ եհան զսանճախն հանդերձ օճախի կահիւն, ՌՄԼԷ թուին, ի մարտի Ջ մեծի պահոց, երկու շաբաթի աւուրն. մինչ զի՝ քաղաքն ամենայն դղրդեցաւ, և գիմեաց մեծաւ խրոխտալով նախ՝ ի վերայ Նէմցէի իշխանութեանն. և պատերազմեալ ընդ նմա զբազում տեղիս նոցա այրեաց. և զբազումս ի նոցանէ գերեաց. թէպէտ ոչ կարաց յինքն գրաւել զայն տեղիսն. ուստի և ի միւսումն ամի ի ներքոյ ես անկան և ի կողմանէ զանձու յոյժ նուաղեցան։ Բայց տմարդութեամբ իւրեանց բազում նեղութիւնս հասուցին. և վնասս գործեցին ի քաղաքս ի գեօղս. յանդս, և յայգիս, անիրաւութեամբ՝ և բռնութեամբ զչար կամս իւրեանց կատարեցին. զոր ոչ ոք կարէ պատմել, և տեեաց այս պատերազմ յամս չորս, և ապա եղև խաղաղութիւն. ի ՌՄԽ թուին Հայոց. ըստ պայմանադրութեան դաշանց զոր մեզ է անդիտելի։

ՎԱՍՆ ԺՈՂՈՎՄԱՆՆ ԱՐԾԱԹՈՅ ՅԵՐԻՑ ԱԶԳԱՑ.

Ընդ աւուրս ընդ այնոսիկ՝ Պատրիարքութեան վեհին մերոյ Զաքարիայ ազգասիրի և եպարքոսին օսմանցւոց Եուսուֆ փաշային. յորում ժամանակի գեռ կայր սուլթան Համիդ արքայն նոցա. սա որ նախ հնարեաց առնուլ զմարդ ի հպատակաց վասն պատերազմի որպէս ի վերն յիշեցաք. և նոյնպէս խորհրդով սորա հնարեցաւ հաւաքումն արծաթոյ յերից ազգաց. այսինքն ի յունաց՝ ի հրէից, և ի հայոց. նախ՝ ի յունաց՝ հինգ հազար օխայ արծաթ տալ ի գործարան դրամահատութեան։ Նոյնպէս ի հրէից, երեք հազար օխայ. և ի հայոց չորս հազար օխայ. եթէ յէսնաֆաց. և եթէ յեկեղեցեաց. և այլ ուստի և իցէ պատրաստել և տալ՝ որպէս ասացի ի տպարանս դրամոյ. վասն որոյ՝ և սաստիկ հրամանաւ պատուիրեցին անյապաղ հատուցանել զայնքան արծաթն. դրամս տասն փարայ հաշուով առնուլ զգինսն ի զարպխանէյէն զու որքանոյ կարես առնուլ առ, նոցա չէ ինչ փոյթ. ոհ աւաղ ցաւոյս, և դառնութեան ժամանակին յոր հասաք, թէ ի կողմանէ յամ ըստ ամէ ԵՃ մարդոյ տալոյն. և թէ զայս չորս հազար օխայ արծաթոյն լրութեամբ հատուցանելոյն. զորս ի ժողովելն՝ և ի տեղն հատուցանելն. թէ որքան տառապանս կրեաց սրբազան Հայրն մեր, ոչ կարեմ պատմել. զի վասն ցաւակցութեան ազգին իւրոյ՝ երթայ ի վէզիր խանն, և անդ առնէ փոքրիկ ժողով մի. և զկնի մեծ ժողով մի ես ի սուրբ Աստուածածնի եկեղեցին. բոլոր իշխանօք և մեծամեծօք ժողովրդեանն դելս իւրին գտանել խորհեսցին. վասն որոյ՝ զդիր հրամանի թագաւորին ետուն ընթեռնուլ առաջի ամենայն բազմութեանն որ վասն չորս հազար օխայ արծաթոյն հատուցմանն էր։

Արդ՝ թէպէտ ծանր էր բեռն ի վերայ ազգին մերոյ, բայց վասն սիրոյ սուրբ հաւատոյն՝ յօժար կամօք յանձն առին զայս հարկ թագաւորական հատուցանել. զի որովհետև ընդ հովանեաւ սորա պահպանիմք՝ իբր պարտական մեղ երախտաւորի պարտիմք ծառայել և տալ զոր խնդրեն՝ ըստ Տեառն վճռոյ. թէ տուք զկայսերն կայսեր. և զԱստուծոյն Աստուծոյ. և զկնի ժողովոյս բազմապատիկ ծանուցմամբ ստիպեցին՝ թէ յոյր տան գտանի արծաթ՝ հարկ է տանիլ ի վեզիր խանն՝ և տալ այնոցիկ, որք ի մերս կողմանէ կարգեալ էին գործակալ. և զգինսն դրամս Ժ փարայով առնուլ ի նոցանէ, և կարգեալ գործակալաց անուանքն են այսոքիկ, ոսկերիչ Գրիգորն, որ վասն արծաթոյն լաւութեանն՝ և ոչ լաւութեան հայելոյ եզե կարգեալ. զի որքան արծաթ որ գնայր ի տարապխանայն ի բովս արկեալ մաքրէին՝ և ըստ մաքրութեանն տային զգինն դրամս տասն փարայով. վասնորոյ՝ ամենայն աւուր սրբազան հայրն մեր՝ երթայր ի վէզիր խանն և անդ նստեալ յորդորէր զէսնաֆսն ստիպանօք բերել և ցուցանել զթիւն հարկի արծաթոյն. և բաց ի էսնաֆից, որքան արծաթ գտաւ յեկեղեցիս՝ զայնս ևս ետուն բերել և տալ. զի տեսին թէ՝ ոչ է հնար լրանալ և հաւաքել այնքան արծաթ, որ զթիւն ցուցանէր.

այսինքն գչորս հազար կշխուն։ Բայց ա֊ւաղ աղետիս. զի յօրէն յայնմանէ մին֊չև ցայժմ՝ ոչ կարեմք իշխել կանթեղ մի արծաթի կախել յեկեղեցիս, թէև իցէ հազար հատ. և թէ ոըքան վիշտ կրեցին ի ժամանակին յայնմիկ մար֊զիկ՝ ի կողմանէ սղուԹեան հացին որ նեղէր, և ի միւս կողմանէ տառապանք այսորիկ հացի։

ԻՍԿ ԵՍՆԱՖԻՑ[116] ԱՆՈՒԱՆՔՆ ԵՒ ԹԻՒՔՆ ԵՆ ԱՅՍՈՔԻԿ.

Սառաֆ	Համամճի	Ջարխճի	Սօֆճի
Խոյումճի	Աշճի	Ջէօմլեկճի	Եէմէնիճի
Տիւլպէնտճի	Խայէխճի	ԻւԹիւճի	Պչախճի
Հացագործ	Մանկավարժք	Պիւքիճիւ	Մախասճի
Քէրէստէճի	Խըլըճճի	Թարապխանաճի	Չալըխճի
Քէմհաճի	Պէրպէռ	Մանաւ	Էնֆիյէճի
Սանտալճի	Բապուճճի	Ջիլփօշճի	Թօմպախճի
Քիւրքճի	Ջիլինկիր	Էսկիճի	Միսկճի
Թէրզի	Ջուլհակ	Ղազէզ	Բժիշկ
ՄինԹանճի	Խավուխճի	Ծիզմէճի	Պախալ
Հին փարչաճի	Նոր փարչաճի	Խափամաճի	ՔիԹապճի։
Սահաթճի	Պօզմաճի	Էքսէրճի	
Պէզազ	Տօղրամաճի	Ղալփախճի	
ՕԹուրախճի	Սէտէֆճի	Խաֆաֆ	
Ղազանճի	Սրվաճի	Թիւթիւնճի	
Տիւրկէր	Սառաճ	Սրմաքէշ	
Ֆիլճանճի	Խօրասանճի	Սխաէր	
Սէսաճի	Ալչըճի	Փէշամալճի	

Արդ՝ ի սոյն այսմ միջոցի ի ՌՄՂԸ Թուին մարտի Իէ ին ի մեծի պահոց Գ շաբաԹին յերրորդ ժամուն՝ սուլԹան Համիտ արքայն օսմանցւոց՝ վճարեաց զկեանս իւր բնական մահուամբ. և ի տեղի նորա Թագաւորեաց սուլԹան Սէ֊լիմ. որդին սուլԹան Մուստաֆայի. զոր Տէր խաղաղ կենօք պահեսցէ ա֊մէն։

Իսկ զործ ժողովման արծաԹոյն գոլով Թերի՝ յաւուրս սորա ահարկու հրամանաւ եղև լրացեալ. այնքան սաս֊տիկ էր հրամանն, մինչ զի՝ ի վաճա֊ռանոցն եԹէ գտանէին ի ձեռս ուրուք անօԹ ինչ արծաԹի՝ կամ այլ զարդ՝ իսկոյն առաքէին զնա ի Թի. վասն որոյ՝ առ ահին՝ բազումք ի յոսկեր֊չաց աղքատացան, և բազումք ևս ի բազում ժամանակս անգործ մնացին՝ վասն պակասուԹեան արծաԹոյ. զի այս ամենայն որ առեալ եղև՝ վասն դրամ հատանելոյ եղև. և ահա զայս ևս կարճ ի կարճոյ պատմեցաք ձեզ՝ զոր աչօք մերովք տեսաք։

ՎԱՍՆ ՏԵՍԼԵԱՆ ԻՄՈՅ

Ի Կոստանդնուպօլիս քաղաքի, ես եղբօր որդի սրբազան Զաքարիայ Պատրիարքի, տէր Պօղոս քահանայս՝ գոլով ի մէջ մեծի վարանման՝ յաղագս Պատերազմին օսմանցւոց, ընդ Մոսկովաց, և ընդ Նէմցէից, յորմէ ոչ սակաւ վիշտ և տառապանք մեզ ազգիս Հայոց հասանելոց էր. որպէս և էհաս յայս միջոցիս ի հազար երկու հարիւր երեսուն և վեց Թուականիս յօգոստոս Ե, յորում աւուր զդեսպանն Մոսկովաց կալեալ եդին ի կալանս ի յեօթն կլայն ըստ սովորութեան. որ է նշան պատերազմի, և խռովութեան: Արդ՝ ի նոյն ամսոյ ԺԵ ին գոլով իմ ի մէջ մեծի վարանման եկն ի վերայ իմ Թրմբութիւն. և տեսանէի զիս յանուրջս գոլ ի նաւակի միում, որ գնայր դէպ ուղիղ ի Յասս գիւղ. և իբրև հասի ի տեղի նաւահանգստին. որ կոչի Թէրխսանայ, յանկարծ իմն տեսի ի նմանութիւն առիւծու ահեղագոչ շառաչմամբ յարձակեալ գայր սըրընթաց նաւ մի մեծագոյն, ի վերայ միոյ մեծի նաւու. և կամէր խորտակել, և ընկղմել զնա: Իսկ իմ գոլով մերձ այնմ գոչեցի ի ձայն բարձր իմոյ նաւավարի ասելով՝ փախիր փախի՛ր մի գուցէ անկանիցի և ի մեր վերայ, և ծովամոյն առնիցէ զմեզ. և նորա ձայնեալ ասէր ցիս՝ մի երկնչիր. զի ահա զերծաք ի նմանէ. և եկեալ սոյն սըրընթաց նաւն ի վերայ նաւուն մեծի՝ եթէ ոչ իսպառ խորտակեաց զնա, այլ և ոչ եթող զնա ամբողջ, և առանց մեծագոյն վնասու:

Արդ՝ սըրընթաց նաւն այն՝ էր Տէրութիւնն Մոսկովաց և միւս նաւն մեծագոյն՝ էր Թագաւորութիւնն օսմանցւոց, որք հարան ընդ միմեանս. որ յիրաւի եթէ իսպառ ոչ խորտակեցաւ իշխանութիւնն ագարացւոյն, սակայն յոյժ ահագին բաղխմանէն սարսեալ դողացաւ և զարհուրեցաւ, և այն փոքրիկ նաւակն՝ յորում եսն էի՝ որ ոչ վնասեցաւ՝ համարիմ գոլ Ազգն մեր՝ յորմէ փոքր նեղութեամբ ազատեցաւ: Եւ այս պատերազմ վերջացաւ ՌՄԽ Թուականիս մերում յուլիսի Ժ.

Դարձեալ պատմեցից ձեզ և զայլ ինչ ի պարագայից ժամանակիս. որ եգե ողորմութիւն Տեառն՝ առ ազգն մեր յաւուրս սուլթան Սէլիմ արքային, որ ոչ էր լեալ յայլ ժամանակս ի հերուն հետէ, քանզի յԵւգոկիա քաղաքի եղև հրկիզութիւն մեծ. յորմէ այրեցան երեք եկեղեցիք ազգին մեր. վասն որոյ՝ աղերս անկեալ Եպարքոսին, որ էր Մէլէք Մէհմէտ փաշայն շինել զմիտս Թագաւորին, զի հրաման տացէ վերստին շինման նոցա. ուստի և նա աղդ արար արքային, և ետ առնել զողորմութիւն մեծ՝ տալով հրաման երիցն ևս շինման. այլ և որ ի վաղագոյն կայր եկեղեցի մի այրեալ, զայն ևս՝ ընդ նոսա շինեցին գերագանց քան զառաջինն. յորում ժամանակի առաջնորդ քաղաքին այնմիկ էր ձեռնասուն աշակերտն Տեառն մերոյ Յակոբոս աքհիապանծ եպիսկոպոսն. որ և աշխատանս բազումս կրեաց՝ մինչև հասոյց զնոսա ի կատարն. որոյ զվարձն հատուսցէ Տէր յաւուրն մեծի դատելով ընդ սուրբ վարդապետսն. և զեկեղեցիսն հանդերձ առաջնորդաւն անդրդուելի և հաստատուն պահեսցէ ամէն:

Եւ դարձեալ գրեմ. և ասեմ՝ թէ ոչ միայն յԵւդոկիայ եկեղեցիքն եղեն շինեցեալք ի սորին ժամանակս. այսինքն. ի մերս ազգասէր ծնողին. այլ և Ակնայ քաղաքին և թէմիցն նորա. Պրուսայուն, Անգըրիանուպօլսոյն. այս է էտիրնէյուն. և Մարսըվանու վանքն գեղեցկագոյն՝ ե զարմանալի շինեցան. և այլ բազմաց տեղեաց. ըստ որոց ե Պօլսոյս մեծի երկու Հիւանդանոցքն. ե Դպրատունքն. և Աստուածամօր երկուց կողմանց պարտիզաց պատից շինումն. և այլ այսպիսի շինուածք բազումք եղեն նորոգեցեալք։ Թողում ասել զշինումն աւազանին. այսինքն Հաուզին, և բերումն ջրոյն ի պատճառս հրկիզութեան. որ է օգուտ հասարակաց, և յիշատակ յաւիտենական. որոյ բոլոր Հախն ետ Սրբազան Հայրն մեր. թէ պատին շինման, և թէ աւազանին. և որ ոչ էր եղեալ մինչև ցժամանակս Հօրս մեր Թուլումպայ[117] ևս հնարեցաւ պատրաստ հանապազ գտանիլ յեկեղեցւոջ սուրբ Աստուածածնի, առ հարկաւորութեան ժամանակին։ Եւ որ մեծն է ասացից ի Ղուրու Չէշմէ ասացեալ գեղջն եղեալ սուրբ Նշան անուն եկեղեցին. որ յոյժ փոքր էր և քայքայեալ՝ ի հիմանց նոր ի նորոյ եղև շինեալ քան զառաջինն ընդարձակագոյն և յոյժ գեղեցիկ, զոր Տէրն հանուրց՝ հաստատուն և ազատ ի փորձութեանց պահեսցէ. և մնացելոց խղճալեացն շինութիւն և նորոգութիւն պարգևեսցէ ամէն։

Արդ՝ վասն նոյն սուրբ Նշան եկեղեցւոյ շինութեան ետ Սրբազան Հայրն մեր տասն և ութ հազար մառչիլ. և զհրաշագործ մասն ի կենաց փայտէն Քրիստոսի՝ որ իւրն էր սեպհական ստացուած զայն, շնորհեաց նմա. և յետ այսքան երախտաւոր ազգին իւրոյ լինելոյ ըստ ամենաբարի կամաց Հօրն երկնաւորի, ի ՌՄԽԸ թուականի, ի փետրուար ԻԱ, յաւուր Բ շաբաթի, պատահեալ մահագուշակ իմն ախտի՝ որ ի ներհուն բժշկաց էլաւուս[118] ասի, այնքան սաստիկ՝ մինչ զի յաւուրս տասն և ինն ոչ եկեր ինչ, և ոչ էարբ. որում աչալուրջ տգնութեամբ ըսպասեալ մնայաք զցայգ և զցերեկ. վասն որոյ սիրտք մեր մաշէին, և աչք մեր գալարէին և խարշէին զի տեսանէաք զնա յայնպիսի տագնապս, և ի նեղութիւնս զոր բազում քաջահմուտ բժիշկք ոչ կարացին բուժել զնա բազմատարազ դեղորէիւք, ապա ըստ երկնաւոր կոչմանն ի վերոյ թուականին. և ի մարտի ԺԱ. յաւուր ուրբաթու յերրորդ ժամուն հանգեաւ ի Քրիստոս ի յոյսն բնաւից. ըստ արարչական վճռոյն՝ թէ հող էիր և ի հող դարձցիս յորմէ առաըրն։ Զկնի որոյ պաշարեաց զմեզ սուգ անհնարին և ողբումն անպատմելի զամենայն աշակերտսն՝ որք մերձն էաք նմա հանդերձ ամբողջ բազմութեամբ ազգիս մերոյ. զորս թողեալ որբ՝ և վրշտալի սրտիւ (վերակենցաղեաց ի գաւառն արդարոց. որոյ Տէր զհոգին հանգուսցէ ի պարս սրբոց հայրապետաց ամէն)։

Եւ մեք ի Հոգւոյն սրբոյ մխիթարեալք, և ի սրտակից բարեկամաց սփոփեալ՝ սակաւ մի իբաց թօթափեալ յանձնէ զսուգ դառնութեան, զհոգողութիւն հոգւոյ նորին առնել սկիզբն արարաք՝ առաքելով զողորմութիւնս առատս՝ և լիս, ի ձեռն քահանայից իբրև Գ հազար մարչիլս յամենայն եկեղեցիս. թէ որ ի մէջ քաղաքիս, և թէ յարտաքս՝ մերձակայ եղեալսն, որք և ի պատիւ սրբասնեալ հոգւոյ նորին

բաց պատարագս մատուցին զերիս աւուրս. իսկ ի մայր եկեղեցին յորում էր աթոռն իւր, զաւուրս քառասուն, քանզի ընդ որում ի մէջ սրբազան մեծի պահոց հանգիպեցաւ մահ նորուն. և այն երկրորդում շաբաթոջ որպէս յիշեցաք ի վերոյ, թէ յաւուր ուրբաթու յերրորդ ժամուն. բայց կատարումն կարգի օծմանն և թաղմանն ի շաբաթ աւուրն եղև բազմամբոխ հանդիսիւ։

Արդ՝ թէ ո՞յք ոմանք էին ի յօծման անդ ներկայ եպիսկոպոսք և վարդապետք, ահա գրեմ զիւրաքանչիւրսն յանուանէ որիշ որիշ։ Նախ սրբոյ մօրս մերոյ Միածնաիջի Նուիրակն Իզմիրու և Ռումէլու Դանիէլ արհիապսակ եպիսկոպոսն, որ զամենայն կարգ օծման և և թաղման՝ լիապէս կատարեաց. զօծմանն աստ ի յԱստուածածին եկեղեցւոջ. իսկ զթաղմանն՝ ի Ղուրի Չէշմէ ի սուրբ Խաչ եկեղեցին՝ յորում ամփոփեցաւ հանդերձ քարոզիւ։ Երկրորդ՝ ձեռնասուն աշակերտքն հանգուցելոյն Յօհաննէս ճոխաբան եպիսկոպոսն. և վեքիլ Պետրոս հանճարաւոր և ճգնազգեաց եպիսկոպոսն. ընդ որս՝ և Կարապետ, և Աստուածատուր բաբունիքն։

Դարձեալ՝ այլ վարդապետք ոչ ի Պատրիարքարանէն. Յարութիւն վարդապետ փոխանորդն սուրբ Կարապետի. Գէորգ վարդապետն՝ Մարսըվանու առաջնորդ. և Գրիգոր վարդապետ, յետոյ ընկալեալն ի Պատրիարքարանն իբրև միաբան, և այլ վարդապետք ևս՝ զորս ոչ գրեցաք։ Իսկ քահանայք անթիւք, և աշխարհականք յոյժ բազում. զորս ոչ է կար ընդ գրով արկանել. զի գրեթէ քաղաքն ամենայն դղրդեցաւ այնքան՝ մինչ զի զթիւ աստեղաց հնար էր դամնել քան թէ եկելոցն արանց և կանանց ի ննջումն Հօրս մերոյ մեծի. ի միջի որոց՝ բաղում տաժանմամբ հազիւ կարացաք անցուցանել և տանել ի նաւս զմաքրասուն մարմին նորա. որոյ ճանապարհի կարգն ի պատրիարքարանն կատարեալ և տարեալ ամփոփեցաք՝ մերձ հիման վերոյ ասացեալ եկեղեցւոյն սրբոյ։ Իսկ եթէ խնդրիցէք, թէ ո՞րք էին ի նաւին՝ որով տանէին զնա. այսինքն. զհանգուցեալն, ասացից սիրելեացդ իմոց. դի մինն էր փոխանորդն իւր Պետրոս եպիսկոպոսն, և միւսքն Աստուածատուր և Գրիգոր վարդապետքն և եղբօր որդիս աշխատօղ պատմութեանս. և հասախճի Մէհմէտն։ Բայց արդ չէ՛ ինչ այս հանդէս դոր ի Պատրիարքարանէն տարեալ եղև ի նաւ. այլ յորժամ ժամանեցաք ի նաւահանգիստն դեզյն այնմիկ ուր պիտէր ամփոփել սուրբ մարմին նորուն, անդ էր տեսանել պատրաստութիւն եպիսկոպոսաց, և քահանայից զարդարեալ զանազան որակ շուրջառօք. և յոլով սարկաւագունք, և սաղավարտիւ և բուրվառով. և դպիրք շապկիւ և մոմեղինօք յառաջոյ և զկնի հրեշտակային իմն եղանակաւ տարեալ հանգուցին ի նշանաւորեալ տեղին ըստ կտակին որպէս աւանդեաց ի կենդանութեան իւրում. և եդին զնա ի գիր հանգըստեան։ Յօհաննէս, և Պետրոս ձեռնասուն եպիսկոպոսունքն ընդ Կարապետ վարդապետի և եղբօր որդւոյս։ Արդ՝ ահա սա՝ այսինքն սրբազան Հայրս մեր՝ այսպիսի երախտաւոր ազգին իւրում եղեալ՝ փոխեցաւ անմահիցն վիճակ՝ վերին մեծափառ հանդիսիւ, որոյ Տէր լուսաւորեսցէ զհոգին. դասելով ընդ սուրբ Հայրապետսն յարքայութեան իւրում. և զմեզ որբացեալս՝ սփոփեալ մխիթարեսցէ, մխիթարիչ սուրբ Հոգին Աստուած։

Արդ՝ եկեսցուք այժմ մեծի Պատրիարքիս Բիւզանդիոյ. և հանուր սահմանացն տէրունեան օսմանեան զերախտիսն զոր եթող յազգի իւրում յանդիման առնել ամենեցուն. զի ծանիցի և ընթերցցի ընդ դարս դարս ի մէջ ապա եկելոց։ Քանզի յորժամ մահահրաւէր հիւանդութիւնն զինքն պաշարեաց՝ կոչեալ զիշխանս ազգին իւրոյ՝ կտակ աւանդեաց՝ յիշատակ յաւիտենական առնելով ինքեան այսինքն զգոյսն իւր տալ ուր արժանն է ի պէտս ազգին։

Նախ՝ Մայր սուրբ Աստուածածին եկեղեցւոյ պատից շինմանն և աւազանին. որ ի Տէրութենէն հարկեցաւ, վասն հրկիզութեան պատճառի՝ ետ քսան հազար մառչիլ. և զզգեստ ժամարարութեան, և պատարագելոյ իւրոյ՝ որ երեսուն և հինգ հազար մառչիլի էր եղեալ՝ շնորհեաց եկեղեցւոյն սրբոյ. և վասն ի բանտէ խարաճի ազատման. և ի պարտուց բանտէ ազատման. և անտէր մեռելոց թաղման՝ ետ հինգ հազար մառչիլ. զի ի շահուց նորա հոգասցեն զայնոսիկ։

Վասն տնանկ աղքատաց ետ հազար հինգ հարիւր մառչիլ։ Վասն մօրն հոգւոյն՝ տարին Բ անգամ հացկերոյթ առնելոյ միաբանիցն սուրբ գահին Էջմիածնի ետ հինգ հազար մառչիլ։ Վասն վախճանեալ քահանայից որբացեալ դստերացն ամուսնացուցանելոյ ետ երկու հազար հինգ հարիւր մառչիլ։

Դպրատանց ետ հազար հինգ հարիւր մառչիլ։

Հիւանդանոցին ետ՝ երեք հազար հինգ հարիւր մառչիլ։

Եւ վասն Ղուրու Չէշմէի սուրբ եկեղեցւոյն շինմանն՝ ետ՝ տասն և ութն հազար մառչիլ. և զկենաց փայտ սուրբ Նշանն՝ որ իւրն էր սեպհական ստացուած։ Արդ՝ զայս վերոգրեալ գրամսն՝ որոյ գումարն առնէ եօթանասուն և երկու հազար մառչիլ։ Զոր արար ի կտակ՝ առնել ըստ աւանդմանն իւրում. և կացոյց ի վերայ այնմ միւթէվելլի և յատուկ տնօրինօղ զՏէր Մովսէսի որդի մահախսի Սիմէօն ամիրայն. գիտակցութեամբ Հովուեան Զօպան ամիրային։ Ազնաւուրեան մահտեսի Գասպար ամիրային։ Տաքէսեան Օհաննէս ամիրային. Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ Միւթէվէլլի Լիմօնճեան Յօհաննէս ամիրային. և Կիւլապեան Յակոբ ամիրային, զորս և իբր նազըր կարգեալ հաստատեաց, զի անթերի որպէս աւանդեացն առնիցեն յետ վախճանին իւրոյ։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և ի փառս Տեառն համարեսցէ որ է՝ օրհնեալ յաւիտեանս յաւիտենից, Ամէն։

Եւ՝ արդ՝ թէպէտ առաւել քան զոր գրեցանս լինելոց էր կտակն՝ զոր արար նա ինքն հանդուցեալն. բայց երեսուն հազար մառչիլ Տէրութիւնն էառ. և քսան հազար ես Պատրիարքս էառ. վասն որոյ՝ միայն եօթանասուն երկու հազարն ըստ պատշաճին տնօրինեցաւ ի ձեռն վերակացուացն, և այս այսքան առայս։ Բայց այժմ կայ մեզ խօսիլ զընտրութենէն յաջորդի նորին։ Քանզի՝ յետ երկուց աւուրց դնելոյ զնա ի դիր հանգստեան, ապա գումարեցաւ ժողով ի սուրբ Աստուածածին եկեղեցին յամենայն էսնաֆէն, հանդերձ եպիսկոպոսօք, և քահանայիւք. և կացուցեալ ի մէջ ժողովելոցն զերիս եպիսկոպոսս, այս է զՏէր Դանիէլ արհիապանծ եպիսկոպոսն. զՏէր Օհաննէս եպիսկոպոսն. և զփոխանորդն Պատրիարքին ննջեցելոյ զՏէր Պետրոս եպիսկոպոսն, որոց միջի ընտրեցաւ ձայնակցութեամբ և

համահաւանութեամբ բոլոր ազգին Գտանիէլ սրբազանն ի պատրիարքութիւն, ըստ այնմ. թէ Ձայն բազմաց ձայն Աստուծոյ. վասնորոյ ըստ ընտրութեանն գրեալ մահսարականս՝ և կնքեալ ամենեցուն իշխանաց, եպիսկոպոսաց, քահանայից, և ամենայն արուեստականաց, ետուն զայն թագաւորին սուլթան Սէլիմայ. առնել զնա իւրեանց Պատրիարք, փոխանակ հանգուցելոյն ի Տէր. ի ՌՄԽԸ թուականի Հայոց, և ի մարտի ԺԵ։ Որ այժմ ունի զաթոռ Պատրիարքական, և վարէ զնոյն իշխանութիւնն. զոր Տէր պահեսցէ ընդ երկայն աւուրս ի պարծանս և յօգուտ ազգին իւրոյ, Ամէն։

ՕՐԻՆԱԿ ՏԱՊԱՆԱԳՐԻ, ՏԵԱՌՆ ԶԱՔԱՐԻԱՅ ԱԶԳԱՍԷՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, Ի ՄԵԾՆ ՊՕԼԻՍ. ՈՐ Ի ՂՈՒՐՈՒՉԵՇՄԷՆ.

Մեծ վարդապետս՝ այս մեր ըզգօն՝ գերահռչակ՝ և ըզգաստ
Ծընեալ յերկրին Կաղըզմանայ՝ ութսունամեայ հանգեաւ աստ
Ի Փոդուզեանց՝ համեստ զարմէն՝ մաքրասընունդ՝ բարեբաստ.
Դեռ մանկութեան սուրբ հաւատովն՝ բընաւորեալ՝ ճոխ իմաստ.

Ըզսերտ հաւատն ուղղադաւան՝ ետես ի սա սուրբ Հոգին.
Կոչեաց ի սուրբ Էջմիածին՝ լուսակառոյց նոր յագին.
Արար ըզսա՝ անդ միաբան վեհապետացն առ ոտին.
Եւ փայլեցոյց գերափառօք զէտ զարուսեակ առաւօտին։

Սրբոյ Գահոյս՝ ժիր գործակալ՝ միշտ ուր ուրեք՝ յաջողակ,
Գեղեցկադէմ՝ ահագնաձայն՝ Եպիսկոպոս շնորհունակ.
Էր բնախօս Աստուածաբան եկեալ Պօլսոյս նուիրակ.
Լուսաւորչիս դաւանութեան ուղիղ մտօք դաստիարակ։

Ի գործ կըրկնակ նուիրակութեան՝ բարւոք ծանեան բարեկարգ
Զաքարիա արհիապանծս՝ եդին Պօլսոյս Պատրիարգ,
Հըռչակեցաւ յոյժ ազգասէր՝ և բարեբախտ գերայարգ.
Շինեալ զոմանս եկեղեցիս՝ և հիւանդաց երկուս յարկ։

Ցոյժ ճոխացոյց՝ շատ դպրատունս՝ յորս հաստատեաց վարժապետ.
Հասոյց զեօթնեակ եպիսկոպոս՝ և չորեսին վարդապետ.
Ջանայր զուսումն ճոխել ազգիս՝ նախնի սրբոց յար հանգէտ.
Պահեաց հանգիստ զազգ մեր տարով քըսան և վեց կացեալ դէտ։

Զէա սուրբ Սահակ՝ ըզփոյթ վըշտաց՝ հոգըս Հայոց բարձեալ յուս
Ցահէն Պետրս՝ բոլոր հերձուածք՝ բերանափակ տայրն խոյս.
Ազդմամբ Հոգւոյ գիտեալ զիւր մահ՝ խընդրեաց թաղել շիրմիս կոյս
Ակն ունելով սուրբ աղօթից՝ տամք ողորմիս շնորհալւոյս։

ԳԿ. ՇԱՐԱԿԱՆ ԵՐԳԵԱԼ ՈՐՊԷՍ ԵՋՄԻԱԾԻՆՆ.

Ո՜ր էնն Աստուած առ. քեզ իջեալ.
զբազմիս քոյին խորտակեալ.
տեղի բազմեաց սեղան կանգնեալ.
և փրկութիւն մեզ շնորհեալ։

Ո՜ր ետեսեալ Նորին ըզլոյս՝
Հայրապետին Գրիգորի
ի ձև լուսոյն զոր շինեալ
յատուկ պարգև մեզ թողեալ։

Ա՜րդ՝ բարեխօս վասն մեր՝ լուսաւո-
րիչ հոգւոց մերոց լեր յայդր իջեալ
բանին Հօր որ ողորմի մեզ յայնմ
աւուր։

ՏԱՂ, Ի ՎԵՐԱՅ ԱՆՑԱՒՈՐ ԵՒ ՍՈՒՏ ԱՇԽԱՐՀԻ.

Խաչն ի նախնումին գոյնն երգելի է։

Ի կենցաղոյս ըստուերական՝
լինելն ըզգոյշ է պատուական.
չարեաց գործոց գոլ զատական.
բարեացըն յար հետևական։

Պարտ է և քեզ յար զըղջանալ.
և առ բարիսըն ընթանալ.
թէպէտ սակաւ նեղասըրտեալ.
սակայն լինիս դու երանեալ։

Օ՜չ թէ մտածես զօրըն կոչման.
կամ ըզձայն Տեառն երանական.
այն եղիցի քեզ բաւական.
ապա թէ ոչ աւաղական։

Ղօղեալ չարիքն յիմում սրտի.
որք յարաժամ անգոսնելի.
յորմէ իսպառ տար փախչելի.
բամբասանաց հեռանալի։

Որ և տրտունջ՝ չէ առնելի.
զբարըս ադահ բաց ձգելի.
որով չլինիլ դու բարելի.
դկըռնի զղջալ դըժուարելի։

Սուտ խօսիլն է՝ սատանայի.
և գողութիւնըն Յուդայի.
իսկ նենգութիւնն է Կայենի
որոց վերջըն չեղև բարի։

Է՜ երանի՝ զայս չառողաց.
և յարաժամ հեռացողաց.
զի աշխարհս է ըզրկօղ կենաց.
վա՜յ և եղուկ զնա սիրողաց։

Բան խրատիս՝ յոյժ պիտանի.
ունկընդըրացն բարի լինի.
և մանաւանդ որք հետևին.
նոքա ի պարս սրբոց խառնին։

Այս գըրեցեալքս չեն սրտելիք.
և ոչ խոտան համարելիք.
այլ առաւել յոյժ հաճելիք
և մանաւանդ ընդունելիք։

Նանիր խոտոյ նըմանեցաւ.
և փորձանաց տուն ասացաւ.
ով ոք սըմա հաւատացաւ.
ի գուբ մեղաց ընկըղմեցաւ։

Սուտ խաբեբայ աշխարհ ասի.
ըստ Պօղոսի որ առ դըբի.
չունիմք քաղաք աստ մընալի.
այլ անցաւոր աշխարհելի։

Այլ առաւել երկընչելի.
և զահ դատին միտ բերելի.
զի գայ գիշեր անկարելի.
յորում բարին ոչ գործելի։

Սուրբքն աստէն անարգեցան.
և համապազ չարչարեցան.
զարքայութիւնն աստ ըստացան.
ի յանանց կեանըս փոխեցան։

Արդարև է միտ պահելոյ.
ըզլուսաւոր բան շնորհալւոյ.
աստէն գործել գործս Աստուծոյ.
անդէն հանգչիլ ընդ Աստուծոյ։

Ցուցաք ձեզ բանըս ուղղակի.
ըստոյգ խօսօղ թէ գըտանի.
որ ի խօսըս կեղծ ոչ լինի.
ընդ երջանկացն պըսակեսցի։

Երանի ըւըր այնըմ անձանց.
ի չար հետոց հեռացողաց.
ապա թէ ոչ՝ վայ այնպիսեաց.
ըստ վըճռոյ զոր Տէրըն ասաց։

Արդար ըստոյգըն խօսեցաւ.
զոր ինչ արժան էր ասացաւ.
սերմըն բարի սերմանեցաւ.
և կարդ երգոցս ըողըոջեցաւ։

Լերուք ըզգոյշ ով յարգելիք.
սուտ կենցաղոյս դուք մի խաբիք.
մերկ դընասջիք՝ զի մերկ եկիք.
զթիւըն ռամիդ բենիւ գտջիք։

ԵՐԳ ԱՂԵՐՍԱԿԱՆ ԿԵՐՊԻՒ՝ ԱՌ ՏԷՐ ՅՈՅՍ ԲՆԱՒԻՑ. Ի ԲԵՐԱՆՈՅ ՄԵՂՈՒՑԵԼՈՑ, Ի ԳՈՅՆՆ

Նէ հալէ կիրիֆտար օլ.

Ի զանազան մեղս ընկըղմեալ.
յոր յարաժամ հակամիտեալ.
որով ըզՏէրդ բարկացուցեալ,
որով ըզՏէրդ բարկացուցեալ։

Պատմել կարելոյ ճար չունիմ,
վասն ամօթոյ յոյժ պատկառիմ,
քանզի բազում են յանցանք իմ,
քանզի բազում են յանցանք իմ։

Օգնեա ինձ Տէր՝ Տէր իմ Աստուած.
զի դու գթած ես ողորմած.
զողորմութիւնդ յիմ վերայ ած,
զողորմութիւնդ յիմ վերայ ած։

Ղօղեալ ռահից աղաչեա յար.
հոգւոյ իմոյ լեր ղեկավար.
որոյ ես Տէր և փրկարար.
որոյ ես Տէր և փրկարար։

Ողորմութեամբ զիմ մեղս քաւեա.
ներեա ինձ Տէր և ողորմեա.
զահ գըժոխոց ի միտս հաստեա.
զահ գըժոխոց ի միտս հաստեա։

Սուրբ արեամբդ եմ ես գընեցեալ.
ի չար օձէն եմ աղատեալ.
դարձեալ ի մեղս կամ թաւալեալ.
դարձեալ ի մեղս կամ թաւալեալ։

Ի թշնամեաց միշտ աղաաեա.
ի փորձանաց ըզմեզ փրկեա.
արքայութեանդ արժան արա.
արքայութեանդ արժան արա։

Է՛ Տէր Յիսուս ըզմեզ պահեա,
սակըս սիրոյ մօրդ ողորմեա.
ողորմելոյս Տէր խընայեա,
ողորմելոյս Տէր խընայեա։

ԻՄ· ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՒԵՐՄԱՆ ՏՓԽԻՍ ՔԱՂԱՔԻ

ՍԵՐՕԲԷ ԳՐՉԻ

(Համառօտ պատմութիւն աւերման Փայտակարան Մայրաքաղաքիս ի խանէն աղայ Մահմադի ի 1795. եւ ի 11 սեպտեմբերի։)

ռ փառահեղ կայսերութեամբն հիւսիսայնոց Ծկատարինէ երջանիկ Թագուհւոյն. եւ ի տիրապետութեանն Վրաստանեայց Քրիստոսազօր Թագաւորին Հերակլեայ երկրորդի. նաև ի կայսերութեանն հագարացւոց սուլթան Սէլիմ խօնթքեարին յարուցեալ բռնաւոր խանի ուրումն ի խորին պարսիկս յանուն Աղա Մահմատ ներքինի նշանաւորութեամբն մականուանեալ՝ սկսաւ ժողովել յայլ Տէրութեանցն խանից զարս բազումս՝ բաց յայնց՝ զորս ինքն ունէր անպակաս։ Եւ յետ բազմանալոյ զօրացն՝ խորհեցաւ յաստիճան յեւս բարձրագոյն վերամբառնիլ՝ փոխելով զանուանակոչութիւն իւր ի խանութենէն ի շահ. նմին իրի՝ իւրովի բնական ճարտասանութեամբն, և կեղծուպատիր սիրանիշ նոմոսիւքն,[119] զայլ խանս ևս ի սահմանակից քաղաքաց յինքն մերձեցուցանէր, որոց յետ ցուցանելոյ զքաւական սէրս, բանայր զներքին տրամադրութիւն սրտին՝ զառաջինն իբրև զյատուկ բարեկամ նոցին, և զորովագութ առ ժողովուրդսն նաև խորիմաց իմաստասէր, և նախանձայոյզ յօրէնսն մահմէտականի զանձնէն իւրմէ պանծալով, և վերջապէս՝ յամենայնի. զինքն պատրաստ՝ և արթուն արեամբ չափ ի մահ զհաւատոյ. երևոյցէր. և ապա՝ աղէխորով կաթոգնութեամբ, և ալէւլկական զիմանշմարութեամբ ափսոսայր և աւաղէր զբոլոր սահմանէն Ասիոյ՝ որպէս թէ՝ անտէր և անպէտ իցէ մնացեալ յօրէն Նատրի մինչև ցայսօր. և այսպիսի եղանակաւ և թորելով զլորձուն նոցա իսկ հարցանէր թէ՝ արդարև այնպէ՞ս իցէ։

Նոքին իսկ շարժեալ ի նախանձ օրինաց իւրեանց ասէին՝ իրաւի արդար է ասութիւն բանի մեծութեանց ձերոց, և ահաւասիկ յարմարագոյն ամանակ հաստատելոյ զգոյն բարեհաճութիւն որ չէ

ինչ դժուար ամենևին՝ եթէ առաւել ևս եղիցին կամք տէրութեանց ձերոց, որում համակամ և միախորհ եմք ըստ ամենայնի. միայն թէ՝ զկերպս հնարեսցուք զհագարացւոց կայսրն ևս հաճեցուցանել ընդ այս՝ առ. մակադրութիւն հրովարտակի բարձրութեան իւրում՝ և անստերիւր կնիք ի նոյն։

Ցայս ինչ՝ մատեաւ յառաջ մինն ի նոցունց անտի թէ՝ թէպէտև շատ է հաճութիւն նորուն, բայց՝ ևս քան զևս հաստեսցի՝ եթէ Գերմանացւոց կայսերն ևս կնքեսցէ։ Որք առ. ժամայն փութացուցին զծայրս գրչաց 'ի կաղամարս սևորակ մելանի թանալ, և ի սպիտակ քարտէնս շարահիւսել, հուսկ յետոյ՝ ընդ այլ յոլով պարգևս յանձն առնուլ ընտիր ընտիր արանց, և առաքել անուամբ դեսպանութեան առ երկաքանչիւր կայսերսն. այսինքն առ Բիւզանդիոյն, և առ Վեննայինն։ Եւ ի դառնալն նոցին յետս՝ ընկալան զպատասխանի ի Կոստանդնուպօլսեայն թէ՝ եղիցի՝ եթէ զՎիրսն կարողասցի ընդ հրամանաւ իւրով ընկճել։

Նոյնպէս եկն և ի կայսերէն Գերմանիոյ բան՝ թէ՝ բարի է՝ բայց պարտ է զՎրաստուն, և զԲաբիլոն իւրացուցանել՝ որով իշխեսցէ անուանիլ շահ։ Սակայն՝ յերկուցունց աստի և ոչ միոյն էր կամ խորհդոյս այսմիկ կցորդիլ. նորին սակս հիւսեցին յանդիման զօրմունս զայսոսիկ, նախագիտելով զանհնարութիւն իրակութեանցս։

Տեսեալ սոցուն զպատասխանիս զայսոսիկ՝ զփոյթ յանձինս կալեալ յարեան զօրութեամբ կարեացն զորս ունէին ներկայապէս, և յառաջ խաղացեալ եկին, ուղղելով զդէմս իւրեանց յարևելս կոյս. և ի քաղաքացն այնց սահմանաց՝ զոմանս բռնակալեալ՝ կացուցանէին ընդ ձեռամբ նոյն դիւտալըկին. և ի քաղաքապետացն անտի՝ ոմանք փոքր ինչ ընդդէմ կացեալ յաղթահար լինէին. և ոմանք առ երկիւղի յարուցեալ ընդ առաջ ելանէին կապեալ թաշկինակաւ՝ կամ թրով ըղպարանոցաւ՝ ինշան հնազանդութեան. Նաև ոմանք զկանայս՝ կամ զորդիս իւրեանց մատուցանէին ի պատանդ. բայց՝ խանն Իբրահիմ իշխանն Շօշայ ապաւինելով նախ յամրակառոյց և ի վիմամբարտակ ամրոցն քաղաքին իւրում. Նաև ի լիութիւն ըշտեմարանաց ալեր ցորենոյ՝ և գարւոյ, և ապա՝ ի նպաստաւորութիւնն Հերակլեայ Արքային, ընդդէմ եկաց անզօր կարողութեամբ իւրով, և ընդ յոգն ժամանակս բազմավրդով մենամարտութեամբ պատերազմեալ՝ վաստակեցոյց զնոսա. որոց ոչ ևս կարացեալ կալ ընդ դէմ. դնդակաց նոցին. ասացին՝ զի՞ է՝ զի պաշարիմք յայս գործ ի նանիր. այլ՝ տըքնեսցուք զանձինս մեր ի յառումն տանն Վրաց զկնի որոյ՝ Շօշն մերն է՝ և մեր։ Ցայս բան՝ թողեալ զայն անդ՝ ձգեցին զձեռս իւրեանց ի Վիրս, առ որոյ թագաւորն Հերակլ յուղի արկեալ զդեսպանս՝ պահանջէին զմին ի յորդւոց կամ ի թոռանց՝ ի կալ առ ինքեամբ ի պատանդս, որով հրատարակեսցի յոլորտս տիեզերաց համբաւս այս մեծ, թէ՝ և Վիրք հնազանդեցան ընկճեցմամբ իւրեանց ի նմանէ, որք և եղեն հարկատուք նմին։ Քանզի՝ զօրութիւն բանին հրովարտակի ևս էր այս, որպէս թէ՝ (ոչ զի դու եղիցիս փնձ հպատակ, այլ զի՝ ունիցիմ զտեղի կոչիլոյ շահ։)

Բայց բարեբարոյ Հերակլ Արքայն խորախոհ լինելը խելամտութեամբն իւրով՝ և ողորմեցեալ զթայր ի տառապելի ազգս քրիստոնէից, և ոչ կամէր զկորուստ

այնքան հաւատացեալ հոգւոց. (այն զի՝ յատուկ է շահացելոյն՝ ունել ամ. ըստ ամէ զ30, կամ. զ40, զամուրի և զչափահասակ ուստերս և զդստերս ի Տփխիսէն՝ զորս յեզաշրջեալ յաղանդ իւր պիղծ՝ զարուսն ներքինապահս, և զէգսն հարճս արասցէ)։

Ուստի ետ զրացասութեան պատասխանիս՝ ապաւինելով նախ՝ յԱստուած, և ապա՝ յօգնութիւնն ռուսաց։ Քանզի՝ Եկատարինէ կայսերուհին շնորհեալ էր Հերակլեայ Արքային զ25000։ զինուորս կապեալս զինուք, որք յաւէտ կային ի Մօզդօքի մեծաւ պատրաստութեամբ, և ակնունէին գալստեան համբաւոյ կողման, որք իբրև զբազէ և զցին ժամանեսցեն յանձկութիւնս նեղութեանց Քրիստոնէից։ Բայց՝ վազագիտելով ժահրաթոյն չարին այնմիկ զայն, հնարս խորհեցաւ ըստ աղուեսաբարոյութեան իւրում այսպէս. զի՝ ցուցանելով զսէր ինչ եանաբալին Մօղաօքու. առաքեաց զպարգևս ինչ զեսպանաւ, ընդ որում և զտոմս բարեկամական, յորում գրեալ թէ՝ որովհետև իմ է Ասիայն ի բնուստ անտի՝ պարտաւոր եմ պահանջել զհամարս ի բոլոր տիրապետողացն սահմանաց։ Ուստի՝ եթէ վալին վրաստանեայց յանգէտս գոլով՝ ի նպաստ կոչեսցէ զձեզ՝ մի ինչ աշխատ առնէք զանձինս ձեր. քանզի՝ չեն իմ կամք բնաւ մտանելոյ ի քաղաքն նորին, և ոչ իսկ աւերել. նաև ոչ զմասն ինչ ի սահմանաց նորին. վասնորոյ՝ միամիտ և անհոգ լերուք առ այս։ Ցայսմիկ պատրողութեան բանի հաւատացոյց զնա. առ որ որքանիցս և թուեցանէր զհրոսակս Արքայն վրաց թէ՝ հուպ ընդ հուպ փութացարուք յօգնութիւն մեզ. զի՝ ահա անյոյս կորնչիմք ի նեղչէն մերմէ ի յօրինացս թշնամւոյն. ցոր տայր պատասխանի թէ՝ մի երկնչիր՝ զի ոչ կարասցէ իշխել մտանելոյ ի քաղաքդ. այլև հասից ահաւասիկ ընդ բազմախումբ զօրսն իմ. Տէրամբ. բայց՝ մնամ կրկնական հրամանի թագուհւոյն մեր։ Ցուսացեալ Արքային Հերակլեայ ի բանս յայս՝ զանց արար զհաւաքմամբ զօրացն իւրոց յոգնագնդից. (որոյ ի կամիլն՝ հնար էր ժողովիլ այրուձի արանց իբրև 50000աց։) Այլ՝ շատ վարկանեալ զզինուորսն ռուսաց կոչեաց միայն զԱրքայն բացագլխից.[120] որպէս պատիւ համարելով նմա զալուստ իւր ի յօգուտ նեղութեան քրիստոնէից, որ և եկն մեծաւ ամբոխիւ, այսինքն իբրև 12000 զինավառ զօրօք, որոյ ընդ առաջ ելեալ ինքն արքայն Հերակլ՝ հանդերձ ամենայն գատաստանապետօքն, քաղաքապետօքն և գաւառապետօքն, և այլ ամենայն մեծամեծօքն՝ մեծաւ հանդիսութեամբ, և հրաձգութեամբ, և այլ բազում ցնծութեամբ եբեր ի քաղաքն։ Իսկ՝ սոյն քաջապանծք երկու բարեբարութեամբքս այսոքիւք, հատուցին փոխարէնսն յարդոյապերճ փառաւորութեանցս այսոցիկ՝ մի զի՝ օր ըստ օրէ փախչելով՝ հազիւ ուրեմն մնացին 1000քն և միւսն ընթերցցի առ յապայն ի զարմացումն ընթերցողաց։ Արդ գըրղեցեալ Արքայն Հերակլ ի կուսակալացն՝ (ըստ լսելոյ լրոցն բերելոց ի Լըռտեսից և ի պողոտայապահից) ել ի քաղաքէն արտաքս ի 1795 և ի յ9երորդում ամսեանն օգոստոսի նոյն մնացեալ 1000օքն, և 2000 հաւատարիմ արամբք՝ հեծելովքն իւրովք և 11. երոպէակոստղ թնթանօդօք, հանդերձ 300 վարչօքն. և 12 կառավարչօքն. նաև 2 զլխապետօքն նոցին, (որոց միոյն՝ անունն Գաբրիէլ (ըստորում հայ-

կաղուն) մայոր փրիմէր և միւսոյն Գեօրգի (ըստորում վրացի) մայիօր սէքօնդ. չոքաւ՝ բացեալ դրօշակօք. քրիստոսեան նշանօք, ցոր մեծաւ՝ յուսովք իբրև դերից աւուրց զճանապարհս. և ի յելս շաւղաց թշնամւոյն իւրոյ բանակեալ՝ Յիայր գալստեան նպաստին իւրոյ մուշտակին։ Եւ ի բանակետեղս յայսմիկ օր աւուր յաճախէին լրաբերքն ի նորոգել զձայնս իւրեանց ըդհպեցմանէ նեռին այնմիկ։ Իսկ՝ յետ աւուրց իբրև վեշտասանից նոր տարակոյս դէպ լինիլ սկսանէր անօգնական Արքային մերում. և թշնամի չարին այնմիկ, յայնժամ հաշտեալ զօգնական զօրս մատուցանէր նմա։ Եւ մինչ կայր Արքայն մեր յայսմիկ վարանման՝ ահա կոկորդիլոսն այն եկեալ՝ էհաս ի Գանջայ, ընդ որոյ խանին կապեալ զդաշինս՝ կնքէր, և ձեռնադրել նմա հրամայէր, զի աւերեսցեն զսահմանս բոլոր տանն վրաց, և բարձցեն ամենեւին զթագաւորութիւն նորին. իսկ խանն այն՝ Ջաւաթ կնքեալ՝ յայտնէր նաև զհամախոհութիւն մէլիք Մէճնունի՝ ընդ պայմանադրութիւն խորհրդեանս այսմիկ. զոր կոչեալ յայն ատեան՝ հրամայէին կնքել որ և կնքեաց յօժար կամաւ և հաստատեաց։ Քանզի ընդ աւուրս ընդ այնոսիկ երկոքեանն ևս անհաշտ թշնամիք էին Հերակլ Արքային։ Սոքին այսու հաստատութեամբ բանի դաշնադրութեանս զօրաժողով եղեն անտանելի զօրութեամբ իւրեանց՝ և հրամայէին սպարապետացն և զօրապետացն իւրեանց գունդ կազմել. և գլխապետս կարգել, և յայնց՝ զոմանս յայսկոյս, և զոմանս յայնկոյս առաքել յոգնակի զօրօք, և ի ժամադիր պահուն՝ համայնք ի մի վայր ժողովիլ և գտանիլ ամենայն պատրաստութեամբ յայնմ ետեղ՝ ուր մեծն իցէ բանակեալ, դայսոսիկ այսմ տաբաղու դասակարգելով ծալել զխորանս, բառնալ զբեռինս, և յուղի անկանիլ հրամայէին։ Ընդ չուելն սոցուն ինքն ևս յառնել կամեցեալ՝ բառնիլ մեծի բանակին հրամայէր, որք ի քթթել ական բարձեալ՝ ելին ի շաւիղ՝ հնչմամբ փողոց և ձայնիւ տաւղի և գային յայսկոյս։ Արդ՝ մինչ հասանէր համբաւ գալստեանս այսմիկ յունկն Հերակլեայ անպաշտպանին՝ և մերձենալն առ կոպար իւր՝ չու առեալ յետս դառնալ սկսանէր բանակաւ իւրով, և դալով գայր մինչև ցեղերս այգեաց քաղաքին իւրոյ, յորում բանակիւր անսփոփ տարակուսիւ. (և հեռաւորութիւն բանակատեղս ի քաղաքէն հազիւ հազ լինի կիսոյ փարսախի, յորմէ առ որ դիմօղք ընդ 12 բոպէս հասանին). իսկ՝ տեսանելով զօրացն դդէմս Արքային վշտալիս, և հետաքրքրելով ի յուղէկալաց և ի գիշերապահիցն զիսկութիւն բազմութեան զօրաց թշնամւոյն, և զյոյժ մերձաւորութիւն նոցին. (զի եկեալ և բանակեալ էր ի դաշտին Սօղանլուխ անուանեալ գեղջն). նաև՝ իբրև ստուգեցին ի նոյնոց զիրաւի ապահնարութիւն յաղթելոյ իւրեանց բարբարոս դիմամարտիցն՝ իսպառ ցրուեցան, և անհետ եղեն։ Ցայնմիկ վայրի էր արդարև ողբալի՝ ծերունազարդ քաջ Հերակլ Արքայն մեր. զի գտաւ ի յոյժ տագնապի. (ըստ որում ունէր առաջի աչաց իւրոց զյայտնի կորուստ թագաւորութեան իւրում. և զամօթս նախատանաց զանյաղթ անուանէն ընդ այլ թագաւորութիւնս նաև զգերութիւնս անհամար քրիստոնէից)։ Ապաքէն՝ Ամբարհաւաճ զէզոքն այն հանէր զցասմնական հրամանս յ9-ն երորդում ամսեանն սեպտեմբերի ա-

մենայն ենթարկեալ խանիցն, որք էին
ի բանակի իւրում՝ ընդ առաւօտն յա-
ռաջ խաղաղացուցանել զմին յընտրեալ
սպարապետացն 4000։ հեծելազօրօք, և
կարճել զզօրութիւնս մարտադրից աշ-
խատակրութեամբ պատերազմին. որ-
պէս զի յառաջակայն դիւրաւ յաղ-
թեսցեն մեզ։ Զայս լուեալ բազմաժո-
ղով քաղաքաբնակացն զձայն բարձին
հառաչանաց, յողըս ի սուգս շարժեալ
աւաղէին զկորուստ անձանց իւրեանց,
ի բաց լքեալ զինչս և զապրանս, զորս ու-
նէին. բազմացն նաև յուսահատեալ սայ-
լիւք կամ ձիովք արտաքս ելեալ ի քաղա-
քէն ընդ կընկակողման զուռն ի հիւսիսն
կոյս բացելոյն, փախչէին ի լեռնակողմն
Կովկասու։ Եւ չունողքն կարեաց սայլի
կամ ձիոյ՝ հետիոտս գնային. իսկ՝ որ ոչն
ունէր զկար ընթանալոյ, և ոչ գտանէր
զգրաստս, կամ որ ունէր կար՝ և խոր-
հէր զդաժանութիւն ճանապարհին, կամ
զսովուն, և կամ զաւազակացն, կայր
անյոյս և թափառ մնալով լինելութեան
իւրեանց՝ սրոյ ճարակ։ Եւ իբրև լու-
սանայն օրն 10-երորդ նոյն ամսոյն
զայր զունդն հեծելոց, և հասանէր յե-
տին ծայրն եզերացն այգեաց, և ա-
ներկիւղ համարձակութեամբ տայր պա-
տերազմ ընդ թնթանօթիցն մերոց ըզ-
ժամս իբրև չորիս. և ի յաղթահարիլն
իւրեանց ոչ կարելով զդէմ ունիլ ցրնց-
ղացիր զնդակաց՝ ցօղելոցն ի յանդլիա-
վարժ թնթանօթիցն մերոյ. ընկրկեալ
ի թիկունս կոյս՝ յուսահատ ի փա-
խուստ դառնային, որոց հասեալ ի բա-
նակն լևիթանի՝ դտրտունջ մեծ սեր-
մանէին քսու ի լսելիս հզօրացն որք
զահի հարեալ՝ խորհուրդս չար խորհէին
զչեզոք եղեռնայնոյն իւրեանց դարա-
նի դաւաճանութեան (որպէս թէ՝ միւս
ևս ի ճակատամարտի ընդ սայթագիլն
իւրեանց առ յաղթիլ շեշտիւ վաղա-
դարձութեան ընդ կրունկն կոյս, ի նա-
խանձ վրէժխնդրութեան արթնացեալ
զփոխարէնն հատուցանել արեանց մար-
տակցացն արագ արագ յոչ գոյութիւն
փոխարկելով զբէհէզզէբուղն զայն։ Մինչ
այս մինչ այն լայնածաւալն բանակ
յերկճիղս անջրպետիւր յայլախոհ և ի
տարաբան խորհրդոցս ասոի, որով
և հետևիւր նոյն հետայն սիմփա-
թեայն և անթիփաթեայն յերկաքան-
չիւր կողմանս զրուցատրողաց։ Եւ յայն
ինչ հասանէր գուժս բօթալուր յանգզ-
նական և դիմահար բանից յականջս
բեկլիարայ, որում ելով ի սկզբան անդ
լափի։ ընթոսամիտ և խորագէտ՝ մտանէր
առ ժամայն ի խուղս տարտարոսախոր
խորհրդոց. և խոկայր մեծաւ խելա-
մտութեամբ զելս հնարից գտանել. և
թելադրութեամբ եղբօր իւրում բեկլիա-
րայ չար թուէր ինքեան լռելն քան
բարբանջել. վասնորոյ զարթուցեալ որ-
պէս ի քնոյ, և սթափեալ որպէս յարբ-
շռութենէ՝ ելեալ արտաքս ի խորա-
նէն, իբրև ի մէջ գիշերի ի 5-երորդ
ժամու ձայնէր ծառայիցն՝ կոչել զմե-
ծամեծսն տիր փութանակի, որոց պշու-
ցեալ հալճէպ իմն ընթացիւք վաղա-
ներկայ լինէին ձեռնամած հանդիպ-
մամբ. և սրտասարսուռ երկիւղածու-
թեամբ։ Որում ոչ շատացեալ այնո-
քիմբք՝ հրամայէր ահարկու մեծութեամբ
իւրով ընկենուլ զհրացանն ինշան զարթ-
չելայ համայն զօրապետաց և համօրէն զօ-
րաց. և կալ առաջի ահեղագոյն ատենին
իւրոյ, և ահա մինչչև անցեալ քառոր-
դի միոյ՝ միահամուռ գտան արթունս. և
պատրաստս յանդիման ներկայութեան
վրանին մեծի։ Մինչ տեսանէր զարշ լէ-
գէօնն այն զզէզս գունդագունդ զօրաց
իւրոց՝ բանայր զսէրաստէսեան և զթիւ-

նալի բերանն, և շաղփաղփէր շաղա-
կրատական և ամոքոզական բանիւք՝
ղառաջինն գովաբանելով և պարծանք
մեծ հաշուելով ինքեան զքաջամարտիկ
և զերագաշարժ մենամարտութիւնս նո-
ցին և ապա փոխեալ զսկիզբն պարբե-
րութեան գովասանին՝ ի վերայ վայել-
չութեան յոգնազանձ քաղաքիս բանա-
ստեղծական առենաբանութեամբ բա-
րեբանէր, և ի սքանչելիս վերամբառ-
նայր զընչաւէտութիւնս և ղգեղեցկա-
դիմութիւնս կանանց, նա և զբազմա-
ժողովսւթիւնս քաղաքին և ղանգին ա-
կանս պատուականս և զմարգարիտս.
այլ և զոսկիս և զարծաթս գանձուցն
Արքայիս մեր և ևս շողոքորդէր և քա-
ջալերէր ղառ հասարակ զօրսն յորդո-
րելով աներկիւղ դիմել ի մարտ պա-
տերազմին թշնամւոյ, և շնորհէր մե-
ծաւ փառօք զամենայն աւարն քաղա-
քին ինքեանց, նոյնգունակ և զգե-
բեալսն ամենայն ըստ կամս առնել
խոստանայր, ևս և օրինաց իւրեանց
նախանձայոյզս լինելոյ. պարտաւորս
առնէր զիւրաքանչիւր անձինս, յորոց
զմահացօղսն յայսմիկ հանդիսի ընդ մար-
տիրոսսն վերադասէր, և զյաղթողսն
արժանիս յաղթանակի և բրաբիոնի հա-
մարէր, զոր և յօժարակամ սրտիւ խոս-
տանայր յամենայն զօրութենէ և երդ-
նոյր ի նոյն, և այլ սոյնահանգէտ յու-
սադրութեամբ զամենայն զզօրսն ի
մարտ պատերազմի խրախուսէր։ Եւ
մինչդեռ ունէր ցաւարտ յանգել զբանն՝
անցեալ բազում ժամուց խաւար գի-
շերոյն զմթութիւն իւր յինքն ամ-
փոփէր և յարևելեան կիսագնդէ հորի-
զոնին ճաճանչ լուսոյ նշմարիլ սկսա-
նէր, յորում առաւօտնայր 11 սեպ-
տեմբերի. մինչ ետես նոյնն զղամբա-
րազօտ նշոյլ ծագման առաւօտու եզե-
բեաց զբանն՝ թէ՝ ո՞ղէ տեսից զզօրու-
թիւն ձեր վա՜շ վա՜շ փութացարուք և
մի երկնչիք։ Զայս ամենայն լուեալ
համասփիւռ գնդիցն՝ այնպիսի զուարճ
դիմօք ղարձան միահաղոյն համաբնու-
թեամբ զորս տեսողացն միտք մակաբե-
րէին դիմել, ոչ ի մարտ՝ այլ՝ ի հար-
սանիս. որոց երթեալ ի տեղիս՝ ոմանք
զմուճակսն աղխէին. ոմանք զզանկա-
պանսն կապէին, ոմանք զզրահսն զգե-
նուին, ոմանք զբազպանսն ագուցէին,
ոմանքն զբազուկսն վահանաւորէին, ո-
մանք զատրաճանսն վառօդալից առ-
նէին. ոմանք զարտախուրակսն ի գլուխս
զգենուին և այլք զնիզակսն ի թաղիս
փորձէին. ոմանք զհրացանսն լնուին և
այլք զաշտէսն կապէին, ոմանք զգե-
զարդս ի ձեռս առնուին, ոմանք զերկսայ-
րիսն կասանէին, և այլք զուրլաքսն փշածայ-
րըս սրէին, ոմանք զթուրսն ի պատեանս
պատրաստաշարժս առնէին. ոմանք զա-
զեղունսն լարէին, և այլք զնետս ի կա-
պարճս պատրաստէին. ոմանք զհրա-
զէնսն վառէին և այլք զերիվարսն
պալարակապս առնէին, ոմանք զմաշկս
ձիոց պնտէին. և ամենեքեանքն առ հա-
սարակ ամենևիմբ պատրաստ լինէին.
անուաշրջան և ճախրապտոյտ վա-
ռիլ և փայլփայլիլ՝ հանգոյն կայծակ-
նացայտ փայլատականց երևիլ աչաց
ողբալի քրիստոնէիցս, որք ոչ ևս կա-
րացեալ ի զսպումն ժուժել՝ խաղային,
չուէին, յառաջ գային զիրեարս քաջա-
լերելով, իրերաց յոյս տալով, զերի-
վարս յարշաւս սրընթացութեան ար-
կանելով, և այրուձի արանց զգանդա-
ւանդս սնապարծ ձիոց իւրեանց բա-
րեգոյն իմն սանձելով, և վառելոց ըղ-
ղայլախազս հրազինուց հանդերձ պող-
պատիւքն ի վերնամէտ հրակիտին ուղ-
ղելով, և պարկակայծ ատրաճանաւո-

բաց գծայրան այնց լուցանելով, և ոմանց զայրեցելագործ զաւիգաց ըզծայրսն եսանելով, մինչև եկեալ հասին ի մեկուսութիւն թընթանօղարանին մերում իբրև նետաձգի միոյ: Իսկ՝ քարըն այն չարաժահր եկեալ ելանէր ի գագաթ բարձրամբերձ լերին իմիք, և հրամայէր կառուցանել ըզվրանն, յորում բազմիւր ի նկատել ըզվախճանն հանդիսին: Ցայսմ միջոցի՝ պատեալ գոլով օդոյն ամպրոպիւք և մշշիւք՝ ի մրթնաշրթի աղօտս էին երկաքանչիւր կողմունք մենամարտից, վասնորոյ՝ յանդէտս ընկենուին, այլև երկուցունց կողմանցն ևս զօրք ի հակադարձ կարծիս էին. զի նոքին զմերոյսն կարծէին բազմամբոխ. և մեք զնոցայն սակաւազօր: Եւ ի միջաւուր եղանակին հրնչումն սիզաճեմ հողմոյն բորէասի աքսորէր զմառախուղ ամպոյն, և ցուցանէր աբեն զպայծառութիւն ճառագայթի իւրոյ: Ցայնժամ յայտ յանդիման տեսանիւր անպատ բազմութիւն գնդից նոցին. որոց խառնիճաղանճութիւնն զլերինս և զդաշտավայրս հանդոյն անտառախտի ցուցանէին. և զօրքն մեր առ դուզնաքէութեան սակի տային զօրաց թշնամւոյն զգրգռութիւն զարմացական ծիծաղի. քանզի յոյժ խուն, և զրեթէ բոլորք քաղաքացի երկչոտք և մասն ինչ ևս պանդուխտք էին: Ցայնժամ նախաչարն այն գիտէր հեռացոյց դիտակաւ զդաշտն Վէրայի, որ իբրև ձիւն երևիւր ի բազմութենէ սպիտակ սաւանաւոր կանանց փախուցելոց, զորոց լուր աւետեաց մատուցանէր համայն զօրաց իւրոց, թէ՝ ով անմիտ որսորդք զմէ լքանէք անհետիլ որսոց ձերոց եզանց: Զայս լուեալ զօրապետաց և գլխապետաց գունդ գործեալ, և քարոզ կարդացեալ իբրև ըմունետիկ, և զամենայն զօրսն կատաղեցուցեալ զժնէացուցանէին, որք զձգութիւնս նետիցն և գնդակաց յաճախէին, հեծելոց զնիզակս և ոմանց զսլաքս ի ձեռս առեալ հանդէպ արեգական որպէս զհուր վառվառէին, և ըրահաւոր հսկայքն որպէս զանմարմին, զաշտէսն փայլս փայլփայլս ցուցանէին, և հուպ ընդ հուպ յառաջ խաղացեալ ոմանց՝ ընդ զօրս մեր խառնակէին: Ցայնժամ էր տեսանել աչաց՝ և լսել ականջաց. զի շառաչիւնք թրոց և վահանաց ընդ իրեարս բաղխեցելոց զլերինս և զբլուրս հնչեցուցանէին. և ճայթմունք սուսերաց միմեանց ընդ հարելոց զամենեսին զարհուրեցուցանէին. թնթիւնք թնթանօթից անընդմէջ շարունակաձըգութեանց, յորոց և ծուխքն վառօդից զօդս և զփոշիս իրերօք շփոթախառնեալ զաչս անտեսս գործէին, և բոմբիւք լարեալ աղեղանց յորոց և նետաթռութեանցն սրաձայն սուլմունք զլսելիս խլացուցանէին. այլ և խնխնջմունք երիվարաց որոտք ձայնից ամենայն սպառազինաց, նաև շըշրնչմունք անտիսակիրթ տիղախաղութեանց. ևս և այլ մահաբեր և ահաբեկիչ ձայնք համահամուռ խմբից զվերջին աստեացս մերձեցեալ երևոցէին: Զայս տեսեալ յետակայ սպարապետացն, զմնացեալ համօրէն զօրսն ևս ի նպաստ մարտակցացն վաղվաղակի հասուցանէին, որոց համայնքն լինէին առաւել քան զ80000ս: Մինչ ետես անօգնական Արքայն մեր դարձոյց ըզսանձ ձիոյն ի թիկունս կոյս, և փախչիլ սկսաւ հատեալ յուսով, ընդ որում և ամենայն զօրքն իւր. չև ևս ժամանեալ ի դրունս բաղանեաց՝ պնտէին ղկնի նորին զարաթուիչ ձիսն իւրեանց թշնամեացն գունդք յըմբռնել զնա կեն-

գանուոյն. զոր տեսեալ ուրումն ամրոցապահի յատուկ հաւատարմի Արքային յոյժ երագապէս ընկէց ի համբարտակէ անտի զերկուս կամ. զերիս թնթանօթս ի վերայ սնտողացն, որք յետս յետս ընկրկեալ առ. երկիւղի զկայ ասին սակաւիկ ինչ, յորոց փրկեցաւ խղճալի ծեր թագաւորն մեր։ Իսկ՝ որք ընդ թնթանօթիցն մարտնչէին ճակատ առ. ճակատ անհնութեամբ զօրաց. նախ յոյժ տագնապէին ի ռմփոց. և ապա սրամտեալ և զայրացեալ գազանաբար և վայրենաբար վազս առեալ կական բարձեալ մեծաւ աղաղակաւ գոռալով խրոխտալով թնդալով որոտալով, հրնչելով մռնչելով փչալով դղրդալով հանգէտ առիւծուց առ. որսորդս կորեանց իւրեանց արագելով, ալլա՜հ ալլա՜հ գոչելով արշաւէին ի վերայ թնթանօթաբանին մեր. յորոց թէպէտև անձրևասարաս տեղային գնդակքն յընդ անգլէակիրթ ձգողացն. սակայն տարապարհակ կրէին զաշխատանս, զի մատն Աստուծոյ էր մխեալ ի յայս հանդէս տրտմալի։

Եւ եղև զի տեսին զպատուհասս զայս. այսինքն զանհուն բազմութիւն խժդժագոյն և վայրենի մահացուցչաց. վարիչքն թնթանօթից մերոց ևս խոյս տային, ուր միայն հայկազուն փրիմէր մայիոր Գաբրիէլն միով վարչաւ. որ ցանէր զհուրն անխոնջ աշխատանօք ի վերայ թշնամեացն խաչին Քրիստոսի ի փառս Նորուն և ի սէր Արքային իւրոյ. նոյնն անդրէն նահատակեալ՝ գնայր զանանց կենացն դշաւիղ (ընկալնուլ զբերկրալին բրաբիոն։ Սմին նման մարտիրոսանայր և վրացի սէքօնդ մայիօրն ժամաւ միով յառաջ քան զսա։ Եւ մինչ լինէր այս, անարգել վստահութեամբ դիմէին ի քաղաքն առ. հասարակ, յոր մտեալ անսանձելաբար և տիտեռանման փչէին զթունաւոր շունչս իւրեանց ի վերայ խաչապաշտիցս. զի սկսան յաւար հարկանել զքաղաքն բարելի և լնուլ զունայն անձինս իւրեանց ակամբք պատուականօք, և մարգարտօք. ոսկեղինօք և արծաթեղինօք. զանազան բեհեզիւք և կերպասեայ լիպասիւք՝ և մետաքսեայ հանդերձիւք։ Եւ ի կուսակրօն վարդապետացն զոմանս սրախողխող առնէին զոմանս իբրև զգառն զենուին. և զոմանս գերեալ վաճառէին։ Նոյնպէս և ի քահանայից զոմանս օծմամբ նաւթի ի հուր կիզէին զոմանս սպանանէին. զոմանս հարկանէին յի ցուցանել զանօթս եկեղեցեաց և զոմանս վարէին ի գերութիւն։ Այլև՝ յաշխարհականաց զոմանս դլխատեալ տանէին զնոյն գլուխսն առ չարաճճիկն և ընկալնուին զերիս թումանս իւրաքանչիւր գլխոյ գին, որովք կառուցանէր ամենաչարն այն զմզկիթս. զորս տեսանելով հրրճուէր թէ՝ առի զվրէժ թշնամւոյն իմ. զոմանս խաբէին պէս պէս չարչարանօք և շանթացեալ երկաթիւք և այլ տանջանարանօք և զոմանս տանէին ի գերութիւն։

Նման սոցին առնէին և զծերունի կանայսն։ Իսկ՝ զպատանի և զերիտասարդ տղայս և զաղջկունս անչափս տանէին ի պիղծ տուփանս իւրեանց և ի թանկագին վաճառս։ Այլ և զազանդակիցսն իւրեանց զբերդաբնակ Մահմադականսն առաւել քան զխաչապաշտս չարչարէին. և ապա՝ գերէին. զորոց աղօթարանսն այրեալ տապալէին։ Զարքունականսն պալատ, նախ՝ ունայնս ի զանձուց առնէին և ապա հրով այրէին։ Որոց ոչ բաւականացեալ այսոքիւկ՝ սկսան ձեռնամուխ լինիլ սուրբ

վանորէից և հոյակապ գմբէթակառոյց և սագաշէն եկեղեցեացն զորս ղառաջինն ըստ ամենայնի մերկացուցեալ յեպիսկոպոսական ոսկեհուռն և ականակապ թագից եմիփորոնից և ի քահանայական ոսկիաձոյլ և ասղանի սաղաւարտաց շուրջառաց, և զգեստուց և յամենայն ոսկէզօծ խաչից և աւետարանաց. և յարծաթեայ բուրվառից և ի քշոցից և յամենայն անօթոց, և ապա՝ բորբոքմամբ հրոյ այրէին. ղսրբոց մասունսն այրէին. զՏէրունական և զՏիրամօր պատկերսն նախ մեծաւ՝ անարգանօք ոտնակոխս առնէին և ապա այրէին. զսուրբ խորհուրդն ցըրուէին։ Ահա՝ բարբարոսքն զայս ամենայն անզգամական յանդըգնութիւնս արարին՝ բայց՝ ամենազօր և երկայնամիտն Աստուած երբէք ոչ եցոյց զսքանչելի զօրութիւն իւր. և ոչ ի վերայ միոյն ի հեթանոսացն ի պատիժ մեղանաց մերոց. այլ՝ թոյլ տայր առնել ըստ կամս, որպէս ղի գուցէ թէ ի դարձի եկեալ ապաշխարեսցուք, սակայն՝ ի նոյնութենէ մերմէ ոչ մի երբէք յետս կասեցաք։

Ի հաշիւս թուագրութեան մուծեալ զամենայն գերեալսն զանուանէ իւրաքանչիւր անձին գտին աւելի քան 50000ս։

Ապաքէն՝ ողորմելի փախստականքն ի կողմն Կովկաս լերին զի՞նչ ոչ կրէին զչարչարանս. քանզի՝ որք մինչդեռ ի շաւղի էին, հասին խուժադուժքն բացագլխից, որք նորոգ խոյս տուեալ էին առ չճակատիլ. և փոխանակ օգնական լինելոյն իւրեանց տոհմազգեաց և արտասուահեղ աչօք փախուցելոցն. յափշտակեցին զամենայն ինչս նոցին, զոմանս ես մերկացուցեալ զնացին զընդարձակ ճանապարհն իւրեանց. զոր երթիցեն և մի դարձցին։ Ահա այս երկրորդ հատուցումն փոխարինի փառաւորեցմանց իւրեանց յարքայէն մերմէ։ Երկրորդ՝ սոփս առնէր զնոսա յոյժ տառապելոյ։ Երրորդ՝ հիւանդութիւնն տայր ամենից զմեծ վիշտս ըստ որում փափկասնունդ ոչ երբէք լուեալ կամ տեսեալ զսոյն նեղութիւն։ Զիա՞րդ թուի ընթերցողիդ (ով գորովագութ բարեպաշտ) այս վէպ. ուստի՝ երկի՛ր երկի՛ր յԱրարչէն երկնի և երկրի. զի նոյնն էր որ արար ղայն աւուրսն անձկութեան, և նոյնն է որ առնէ այժմ հանգստեան. և նոյնն եղիցի, որ արասցէ որպէս և իցէ զմինն յերկոցունց։ Եւ արդ՝ մինչ արարան այս ամենայն անօրէնութիւնք ի չարաբարոյ հեթանոսացն յայնոցիկ, ամենավատթարն այն ոչ կամեցաւ մնալ ի սահմանս յայսոսիկ աւելի քան ղԳ աւուրս, թէպէտ որպէս և դրեցաք, կամք նորին ոչ միայն էր ապականել զքաղաքս կամ այրել, այլ զբոլոր Վըրաստանն զԿախէթն զԹիալէթն և զամենայն շէնսն լերինն Կովկասու. և ապա՝ տիրել ամենայն սահմանացն ձերբակալ առնելով զբոլոր բնակիչսն։ Սակայն՝ երկիւղն զոր ունէր ի սրտի իւրում ի Տիեզերակալ և յՕգոստափառ Եկատարինէ կայսերուհւոյն ոչ եթող. զի բարեպէս գիտէր զապաւինելն քաղաքին մեր ընդ հովանեաւ պաշտպանութեան նորուն ևս բարձրագոյն և Ահարկու թագաւորութեան. մանաւանդ, որպէս և դրեցաք, ղի դաւաճանեալ էր ղնորուն փառահեղ ինքնակալութեանն զկողմնակալն որ ի Մօզդօք. ղայսոսիկ խորհելով հրդեհեաց զամենայն քաղաքն հանդերձ կամրջովքն, և խոյս ետ վաղվաղակի։ Եւ եղև զի իբրև լուաւ նոյն կողմնակալն զփոր-

ձուլթիւնս զայս՝ փութացոյց զզօրսն իւր շեշտակի. և զի եթէ հնար իսկ էր հասանել զկնի եղեռնայնոյն այնմիկ՝ եթէ չիցէր հողդելի և անհարթ ճանապարհն Կովկասու, որոց ի գալ և ի ժամանելն ի Գուշէթ՝ մնացեալ ողորմելեացս ահարեկ և տրտում սիրտք փոխարկեցան ի ցնծութիւն։ Այլև նախաչարն այն անդր անցեալ զսահմանաւ Արքայէն մեր՝ մնայր ստուգութեան կամ անստուգութեան գալստեանն նոցին, զի եթէ չիցէր հաստատ՝ խոստացեալ էր գալ վերստին յետ հասարակածի զարնանամտին։

Եւ իբրև ստուգեաց զիսկական զալուստն, նաև զյառնելն դարձեալ անհուն զօրաց նոցին. նորուն հանգիստվեհ և փառահեղ Արքայութեան սրտմտութեամբն և զհասսն ցեզր սահմանին պարսկացն, այլ և զանց նոցա զդըրամբն Ալանաց. ևս և զբարեյաղթութիւնս ի պատերազմի առ մուտսն ընդ այն և զանչափ կոտորածսն զօրաց իւրայնոց, անյոյս դարձաւ ի փախուստ ամենայն զօրօքն իւրովք։ Եւ այսպէս փրկեալ ապրեցաք մնացեալ ողորմելի բնակիչք երկրիս, որք յաւէրժական գոհունակութեամբ օրհնեմք միշտ և գովեմք անդադար, նախ զԱմենաբուն բարին զԱստուած, և ապա զի նորուն Ամենազօրութենէն զօրացեալ զսկբնապատրաստ և զնախընտիրն իւր (յօգնականութիւն անտէր և խղճալի և ցրուեալ ազգիս հայոց) զգերերջանիկ և զևս բարձրագոյն Կայսերուհին բոլոր հիւսիսայնոց զԵկատարինէ Ալէքսիովնա. որում շնորհեսցէ նոյն բարեխնամն Աստուած զհզօր զօրութիւն ընդդէմ համայն թշնամեաց իւրոց. նաև զերկարագոյն և զմշտայայնդորր կեանս հանդերձ ամենայն Արքայազուն սերնդօքն իւրովք ամէն։

Գրեցաք ի վերայ թէ՝ զսրբոց մասունսն այրէին. բայց զգերահռչակ և զամենահրաշ Սանահնու սուրբ Աստուածածնի վանիցն, (որ կառուցեալն է ի սեռէն Բագրատունեանց ի Տիեզերակալ յողորմած Աշոտ թագաւորէն և Անոյշ թագուհւոյն) (և վանիցս սրբոյ տաճարին են սեղանք 40 ըստ խորհրդոյն քառասնիցն. և ևս ի հարկաւորիլն զ'ի Տէր ննջեալ հոգւոց մատուցանել զպատարագս, ի միում աւուր կատարել զ40ն ևս՝ յիւրաքանչիւր բեմի), (որոյ գոլով վերագիտօղն և խնամատարն, նաև կամեցօղն Պայծառափայլութեան և շինութեան Առաջնորդն բոլոր հիւսիսաբնակ Ազգին հայոց Առաքելաշաւիղ և կայսերապսակ սրբազան Յովսէփ Արքեպիսկոպոսն) զսրբոց մասունսն և զ'ի թագաւորէն Աշոտայ և յայլ ամենայն Արքայից և հայրապետաց շնորհեալ կոպարսն զերծոյց նորուն բարձր Սրբազնութեանն եղբօր որդի իշխանազուն և Պայծառիշխան քնեազ Սօլոմոնն Երկայնաբազուկ Արղութեանց։

Եւ նարդենիս Առաջնորդն նոյն Սրբոյ վանիցն է ի նորուն բարձր Սրբազնութենէ կարգեալ որում և յատուկ հաւատարիմ պաշտօնեայ ընիկ Սանահնեցի պարկեշտասուն և խոհեմամիտ Առաքել վարդապետն յԱզգէն Մուրադեան, որ փրկեաց զգերեալ զսքանչելագործ զԱջն երիցս երանեալ Սրբազնասուրբ Հայրապետի Յօհաննու Օձնեցւոյ։

Միանգամայն զերծաւ և Մողնւոյ սուրբ Գէորգեայ հրաշալի մասն, որոյ սակի մահու չափ չարչարեցաւ աւագագոյն քահանայն նոյն եկեղեցւոյ բարձ-

բարպատիւ և խոհեմամիտ տէր Գրիգորն՝ Տէր Շմաւոնեանց, որ և գրեթէ կենդանի նահատակ իսկ եղև ի փառս Աստուծոյ՝ և ի պատիւ սրբոյն Գէորգեայ որ լիցի միջնորդ առ Աստուած զսոյն հաւատարիմ ծառայէն գրել զանունն ի դպրութեան կենաց ամէն։

Ա՜հ անքններին խորոցն էին. և նշանաց դատաստանին.
զոր ցուցանէ մարդկան ազգին. զի երկուցեալ յինքն դարձցին։
Բիւր աւաղ մարդկան սեռին. որք զայսցանէ միշտ անմտին.
և ի նոյնս յամառելով, տան զանձինս յար գեհեննին։
Գոն բացարձակ տիպքն նորին, որք աչաց մերոց երևին.
տեսէք զտագնապ Տփխզին. և անձանցն յոր բնակին։
Դասքն վեհից՝ որք փայլէին յԱռաջնորդացն հանդիսին.
վարդապետաց կուսակրօնից, որք զԱրարիչն փառաւորէին։
Եպիսկոպոսունք մեր ազին ո՛Աւագերէցքն մաքրածին.
և քահանայքն առ հասարակ, որք յեկեղեցիս ցնծային։
Զի՜արդ ոչ լաս ազգ հայկազին, որ նշմարես այժմ զնոսին.
որոց ատեանքն ահագին. լուռ և ամայի գտանին։
Է տառապեալ ցեղ մերային. համայն սերունդք Գրիգորին.
ափսոս ափսոս հազար ափսոս. չարչարանաց Լուսաւորչին։
Ընդ էր լռէք քարոզք բանին. սարկաւագունք մեծ պաշտօնին.
այլ և դպիրք քաղցրանուագք, որք երգէիք զմեղեդին։
Թէ զկուսանս անապատին. և զկարգ պարկեշտութեանց նոցին.
ի միտ բերեալ նուրբ քննիցեմք արտասուք մեր ոչ ցամաքին։

Ժամանակ է յօրինելոյ. զերգս ի յերգել ձայնիւ լալոյ.
և ողբս ըստ արժանւոյն առցուք. յևս քան զևս արտասուելոյ։
Ի յԱրքայդ նայիմք քև փրկելոյ. ի սոյն վշտացս աղատելոյ.
բայց՝ մինչ դու ևս մեզ բարկացիս. Թամք անյոյս ի բերկրելոյ։
Լոյսն մինչ էր ի ծագելոյ. արեգականդ ըղձալոյ.
համայնք շուրջ պատէին զքև, առ ի բարեպէս ջեռնլոյ։
Խորհրդատուքդ դովելոյ. արժանի իսկ բարձրանալոյ.
դէմ յանդիման քոյին փառաց. նիշ իբրև ի ջինջ հայելոյ։
Ծարաւի են ք խնդրելոյ. այնքան անմեղ արեանց հեղլոյ.
ղբոլոր ժողովրդոյդ ասեմ. որոց չիք յոյս ծիծաղելոյ։
Կարգեա ղորդիդ ճակատելոյ. զԳէորդն առ յաղթելոյ.
անհուն գերեացն կորուսելոց, զվրէժն ընկալնլոյ։
Հեզան արիւնք անթուելոյ, մեծաց փոքունց ողորմելոյ։
կացո զթոռնդ արթուն Գաւիթ, զԳողիադն սատակելոյ։
Ձաղկեցան ծառայք օծելոյ, Քրիստոսի մաբդացելոյ.
զքահանայից դասուցն ասեմ, որք արժանի են պատուելոյ։
Ղամբարն լուսաւորելոյ, մեր քաղաքիս փափաքելոյ.
այսօր շիջեալ երևի մեզ. և անկարծ լուցանելոյ։

Ճանապարհք քո Տէրամբ բացցին, առ հաս ոտք քո արագեսցին.
Թշնամեաց քոց հաստ պարանոցք, ընդ սուր սուսերաւ քով անկցին։
Մենամարտիկք քո արթնասցին. զօրութեամբ արարչին լցցին.
որք մերթ խոյս տալովքն մեղան, այժմ յաղթութեամբ քաւեսցին։

Ցարս զորդիդ ամբարձ ի ձին. Թռո՛ որպէս վաղահաս ցին.
կալցէ ձեռամբ զաշխարհ յոլով, ըստ Աղէքսանդր անուանակցին։
Նա զսպարապետդ բարեծին, որոյ յաղթք յաշխարհ տարածին.
զԴաւիթ փեսայէն քո ոգեմ, յորմէ նեղինչք մեր սարսիցին։
Շնորհեա՛ որդւոյդ Արքայածնին, Ալմասին՝ կալ ընդդէմ նոցին.
հաստ բազկաւ և բացաւ Թրով, յորմէ ահաբեկ լինիցին։
Ո՞ւր է Մէլիքդ խորհրդածին, զոր բոլորք այժմ խնդրեցին.
Թէ եթէ նա իցէ կենդան. դժուարինք ի դիւրին փոխիցին։
Զու առ զփոխարէն դարձին, ի հատուցումն նոցա նոցին.
որք զո՞յր ծնունդ լինիլ իւրեանց, ի նոյն բոպէի մոռացին։
Պակեան մերթ անդուլթ սիրտք նոցին, ի ձայնէն յոյժ հռչակածին.
որ էր Թնթանօղարան քո, զորոյ դլխապետոն բարձին։
Ջահիւ որոնեա՛ զնոսին. զի կարևոր են քում անձին.
ունիմ բանիս մեծ ապացոյց, զի ի սէր քո ընդ սուր անցին։

Ռուսդաց տէրն արթնացաւ. և վեհափառն մեծացաւ.
Թագուհին մեզ ողորմեցաւ. տրտմեալ սիրտ մեր ուրախացաւ։
Սէր կայսերուհւոյն բազմացաւ. զթութիւնն առատացաւ.
որում տացէ Տէր զկեանս. զի զլուխք մեր կացցեն անցաւ։
Վիշապին սիրտ յոյժ ճմլեցաւ, յահէ նորուն յետս դարձաւ.
յառնօղն ի կորուստ բոլորից ի փրկութիւն իւր փութացաւ։
Տէրն Թէպէտ մերթ զայրացաւ. որոյ գութն բնաւ բարձաւ.
այժմ լուեալ հառաչանացս. յողորմութիւն մեծ շարժեցաւ։
Րախալի լուր տարածեցաւ. բան ըախճանական ասացաւ.
գալուստ չարաճճկին այնմիկ, այսօր ի փախուստ փոխեցաւ։
Ցնցուղ արփւոյն մեզ ծագեցաւ. տրտմութիւն մեր փարատեցաւ.
զի աստղ յանուն տուտ վիշապին. ըստ կամաց մեր խաւարեցաւ։
Իիւանդութիւն մեր ողջացաւ. վիրաւոր սիրտ մեր բուժեցաւ.
զի քաջն Հերակլ բնութեամբն արթուն, ևս քան զևս բարձրացաւ։
Փափագողացս իղձ լցաւ, Աստուած մեր փառաւորեցաւ.
զոր դարձեալ միշտ փառաւորեսցուք. զի Թարշամեալ վարդ մեր բացաւ։
Քոյով միմիայն զօրացաւ. հզօր զօրութեամբ վառեցաւ.
Տէր Աստուած ծառայ քո Արքայ, ի մեծութիւն քո յուսացաւ։

Սեռակնաձև յաղթօղ ստոյգ, դարձ մեր արդ առ քեզ արասցուք.
զյոյս մեր ի քեզ եղեալն Յիսուս. յամենայն զօրութենէ տացուք։
Եկայք Տեարք իմ ձեռս համբարձցուք. առ նոյն խաչեալն գոչեսցուք։
զ'Նռերանեալ Հայրապետէն, զխաղաղ կեանս հայցեսցուք։
Րամեալքս միշտ աղաչեսցուք. զէն սփոփիչ յուսով կալցուք.
զԱրբազնասուրբ Վեհապետն, մխիթարել միշտ խնդրեսցուք։
Օրհնեալ է նա համայն դասուք. ըաբունիցն մեծօք փոքումբք.
որք են ցարդ ի մեծ տրտմութեան. դարձցի ի հրճուանս նոցին սուգ։
Բազում պաղատանօք լացցուք. զաղերս մեր արդ փոխարկեսցուք։
զառաջնորդէն հիւսիսայնոց յԱստուծոյ կեանս ժտեսցուք։
Է յԱրքայն բարեխօս մեր յատուկ, սրբազան մեր Յովսէփ շքեղաշուք։
կայսերապսակ Երկայնաբազուկ, կեցցէ յերկար ւ'անդորր պահուք։

Ծրեցաւ յանպիտան և ի պանդուխտ երիտասարդէ յումեմնէ ի 1796։ և 26։ Մարտի։ յամայի Փայտակարանի։

ԻԲ· ՄԱՆՐՈՒՆՔ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

1. Սեբաստիայի ս· Նշան վանքի կանոնգրքի սկզբից։

Թուին ՌՃԶ. 1657-ին Սեբաստիոյ դէտն էր Մելքիսեթ վարդապետն։

Թուին ՌՃՀԱ. 1722-ին, յունվար 13-ին, Սեբաստիոյ առաջնորդ Դմպուլ Աստուածատուր վարդապետն վախճանեցաւ. քսան ամ առաջնորդ լեալ. և ի նոյն թուին յունիս 23-ին էին առաջնորդ Սեբաստիոյ Առաքել վարդապետն, որ էր Ակնեցի. և այժմ կայ և վարէ զառաջնորդութիւն. տէր տացէ նմա կարողութիւն։ Ցայսմիկ ամի յուլիս ամսոյն քէքլիկ խօճայ Նիկողայոսն աշխարհէն փոխեցաւ։

2. Եւդոկիա գտնուած պատկերահանի մի աւետարանից.

Թուին ՌՃ 1651-ին մահ անկաւ ի Թոխաթ։

Թուին ՌՃԲ. 1653 ամին հեղեղ էլաւ շատ մարդ և անասուն տարաւ. զոր Տէր Աստուած փրկեսցէ։

Թուին ՌՃԳ. 1654 Ղայամահալի եկեղեցին և զսուրբ Աննա քակեցին։

Թուին ՌՃԸ. 1659 սուրբ Աննա նորոգեցին. Զարղպլէու փաշան քակեց։

Ի թուին Հայոց ՌՃԿԹ. 1720 ամին կրկին նորոգեալ շինեցաւ սուրբ Աննա վանքն. երեք փառաւոր խորանիւք և սեղանիւք պայծառացուցեալ հանդերձ խցերովն ըստ պատշաճի պիտոյից օժանդակութեամբ ժողովրդոց համայնից. և վերակացութեամբ տէր Մարտիրոս քահանային. որոյ տէր հաստատութիւն և անշարժութիւն տացէ. և խնամքն Աստուծոյ միշտ և հանապազ ի վերայ սորա լիցի. ի պարծանս և ի ցնծութիւն ազգիս լուսաւորչազաւան մինչ ի կատարած աշխարհիս ամէն։

Թուին ՌՃՀԲ. 1723 ֆէրման բերին զսուրբ քառասնից եկեղեցին նորոգելու. առին հրաման և նորոգեցին. մինչև ոչ թամամին ժողովեցան Թուխաթու այլազգիքն ամենայն. գրոհ տուեալ հասին ի սուրբ քառասունք և քակեցին. և նոյն ամբոխիւն դիմեցին 'ի սուրբ Աննա վանքն զամենայն ինչ աւար առին. և շուտով ոչ քակուին այրեցին զամենայն շինուածն. յուլիսի 14 օրն. հասաք յուլիսի 30 օրն դեռ ևս ծուխ կու ելանէ. մինթէ տէր կրկին անգամ նորոգելու արժան կանէ։

3. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԾՂԱԿԵՑԻ ՏԷՐ ՅՈՀԱՆՆԷՍԻ.

Մի աղաւաղ մաշտոցից Կտուց անապատում.

Թվին ՌՃՀԲ 1723 էր. ելեալ օսմանլուն ի Սաանբօլայ Աւտուլայ փաշէն. եկաւ գնաց ի վերայ պարսից. առաւ զԽօյ, զԹասու, զԹաւրէզ մինչև ի Գիլազ. սարու Մուսաաֆայ փաշէն առաւ զԵրևան մինչև Գեանջայ. այնչափ զօրացաւ օսմանլուն ի վերայ պարսից, որ հարիւր յիսուն հազար ցուրեր. հասաւ փաշի լաճ ի Բաղդատայ առաւ զՀամատան. տասնուհինգ տարի այսպէս եկաց. յետոյ ելեալ ի Պարսից շահ Թահմազ բաղում զօրօք. Թուին ՌՃՁԷ. 1738 էր. առաւ զիւր աշխարհն ամենայն. եկ ետուր զԲաղդատն ի խսար. որ շան միս նուկին ի յոսկի մ՚ելաւ. առաւ Աւտուլայ փաշէն ԳՃԱ. երեք հարիւր հազար ձիաւոր և գնաց ի ղէմ Թահմազին ի Ղարս. Թահմազն արձակուաւ ի վերայ տաճկին երեք հարիւր հազարից քսան հազար մազապուրծ գնացին ի տեղիս իւրեանց. յետոյ Աստուածասաստ բարկութիւն եկաւ ի վերայ աշխարհին հայոց. եկեալ պարսից ազգն ի վերայ Իւչքիլիսին խաբեցին զվարդապետն և մրտան ի վանքն. քանզի Աշաշկերտ փախած էին ի վանքն զմարդիկն սպանեցին. և կնիկն ու տղան դերի տարան. փախաւ Սհաթափոսի Օլուս յիսուն հազար տուն. եկաւ կերաւ Ալաշկերտու վաստակ ու Մանծկերտու Բուլանխայ մինչև Ծղակ. փախաւ ի Համաղանայ ՃՌ հարիւր հազար տուն. Տարկազանցիքն եկան նստան ի Բուլանուխ. այնչափ սով եղաւ, որ մայր զաղան ծախեց անօրինաց ու կերաւ. ահա լցաւ խօսքն Երեմիայի՝ թէ յերեսացն հիւսիսոյ բորբոքեսցին չարիք ի վերայ երկրի։ Եւ տէր Յոհաննէս սարկաւագ էի յայնժամ ըստամբօլայ նոր եկեր էի. Ծղակն օրհնեցայ. Թուին ՌՃԾԱ 1702։

4. Լիմ Յակոբ եպիս. Թօփուզեանի «զբօսարանից».

Ի Թուին ՌՃՀԲ 1724 յարեաւ ազգն օսմանցւոց ի վերայ ազգին պարսից. և գնացեալ էառ զմեծ քաղաքն Շահրստան, որ է Թաւրիզ բազում և անթիւ զօրօք. մեծ թօփերով և չէ պախանացով. և այլ անթիւ քաղաք և ղասաբայք և գիւղք. ամենայն առան և աւերեցին. և զտէրս նոցին զամենայն ի սուր մաշեցին. թէ հայ և թէ պարսիկ. զկանայս և զտղայս նոցին. և զամենայն ինչս գերի վարեցին՝ որ ոչոք կարէ ընդ գրով պատմել զիրն և զաղէտն նոցին. և զգառն կսկիծ նոցին. զի բաժանեցան հայր յորդւոյ. և որդի ի մօրէ. այր ի կնոջէ և կին յառնէ. և տիրեցին Օսմանցիքն աշխարհին պարսից հինգ ամ. և յետոյ ի մէջ շարաթու միոյ կամաւն իւրեանց այլ ևս ետուն զքաղաքն ի ձեռն պարսից և ինքեանք փախեան, իսկ ողորմելի ազգս Հայոց որ գնացեալ էին Թաւրէզ վասն վաճառի և առուեստի, նոքա ազգն պարսից արարին գերի փոխանակ գերեացն իւրեանց. և սոցին տանց աղէտն ով կարէ ճառել. զծնողացն՝ զկանանցն՝ և զորդւոցն. և այսպիսի կամք յերերմանի և

ի տառապանս. զի եղև հրաման տեառն որ ասէ թէ գայ ժամանակ, որ ասեն լերանց թէ անկերուք ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ. ահա կատարեցաւ. զի մի կողմանց սղութիւնն է. և սուր և սասանութիւն, և հեծելաշարժութիւն. զի ազգ ի վերայ ազգի յարեաւ, և թագաւորութիւն ի վերայ թագաւորութեան։ Զի ի սոյն թուիս որ է ՌՃՁ. 1731. կրկին շարժեցան ազգն օսմանցւոց. և արարին անհամար հեծեալս. և կամին երթալ ի վերայ պարսից։ Ահա այսպիսի կամք յերերման և տատանման միջի. և ոչ գիտեմք թէ վերջն ինչ գալոց է։

5. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԹԵՑԻ ԻԳՆԱՑԻՈՍ ԵՐԵՑԻ

Հանուած իր ձեռքով գրուած մի աւետարանի յիշատակարանից, որ այժմ գտնուում է Վանի ս. Առաքեալ եկեղեցում։

Արդ՝ ես յետնեալս և անպիտանս ի կարգաւորաց. նուաստ Իգնատիոս էրէցս Համթեցի. աշակերտ արդար Իսահակայ վարդապետին, որ էր այր մեծահամբաւ և խստակրօն. սքանչելի և հրաշագործ. որ ի թուին ՌՃԾԱ 1702 առ Աստուած փոխեցաւ. և կայ եղեալ յՈւչքիլիսէն ի յիւրում Աթոռին. ի ձախակողմն խորանին. և առնէ մեծամեծ սքանչելիս սուրբ գերեզման նորա ի փառս Աստուծոյ, և ի պարծանս քրիստոնէից։ Եւ ես այժմ կամ զետեղեալ ի Վան քաղաքի տամբք և ընտանեօք։ Որ ի վաղուց հետէ ցանկայի նորոգութեան սուրբ Առաքելոյն Պետրոսի. և տասնևչորս ամ հանապազ ջերմաջերմ սիրով, և ըղձատոչոր փափագանօք, երբեմն յայտնի բազմամբոխ ժողովրդօք. և երբեմն առանձին տենչմամբ սրտի, լալով և ողբով աղաղակեցի առ ողորմածն Աստուած. մինչ որ քաղցրացաւ և կատարեաց զհայցուածս սրտի իմոյ, որ և ի թուին ՌՃԾԳ 1704 Աստուծով արգ առի ի Տօռուճան Ահմատ փաշայէցն և ի դատաւորէն, և յղեցի ի Ստամպօլ ի դուռն թագաւորին՝ ֆէրման հանելոյ շինութեան եկեղեցւոյն, և տիրելոյ զոխֆի տներ, որ է մերձ եկեղեցւոյ. իսկ ի մտանել ՌՃԾԴ 1705 թուին ապրիլի 8 եկն ֆէրման շինելոյ զեկեղեցին. Աստուծով մայիս 31 ձեռնարկաք և սկսաք քակել. և յունիսի 18-ին զհիմն ձգեցինք. օգոստոսի 31 ողորմութեամբն Աստուծոյ աւարտեցաւ եկեղեցին և ժամատունն. Աստուծով լցաւ կարօտութիւն և փափագ սրտիս, և սեպտեմբերի 23 սուրբ Գէորգայ բարեկենդանի կիրակին՝ աշխարհաժողով արարեալ մեծաւ ուրախութեամբ և գոհութեամբ օրհնեցաք և օծեցաք. փառք մարդասիրին Աստուծոյ, որ միշտ լնու զիղձ ծառայից իւրոց։ Բայց յոլով նեղութիւն կրեցաք յանօրինաց, մինչ երեսուն քսայ փող գնաց. Աստուած զմեր Վանայ քաղաքն և զժողովուրդն օրհնէ, չէն պահէ, որ զամենայն պարտք տուին և զմնացեալն ևս տալոց են Աստուծով...Գրումն յիշատակարանիս եղև ՌՃԾԵ 1706 թուին ապրիլի 1 ձեռամբ Իգնատիոս երէցուս Համթեցւոյ։

ԺԹ. ԴԱՐ

ԻԳ. ՅՕՀԱՆՆԷՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ ՊԱՏՄԻՉ

Բարեպաշտ արքայն Արծրունեաց Յօհաննէս որ և Սենեքերիմ անուանիւր. նեղեալ յոյժ ի Սկիւթացի Թաթարաց ձգէ զՎասպուրական և գայ ի Սեբաստիայ ընդ իւր բերելով զսուրբ Խաչն Վարագայ ի ՆԿԵ 1016 թուականութեանս հայոց. և ի պատիւ սրբոյ Նշանին Վարագայ, շինէ ի Սեբաստիայ զվանս սրբոյ Նշանին և դնէ անդ զԽաչն տէրունական... Յետ վախճանին Սենեքերիմայ գարձուցանեն որդիք նորին Դաւիթ, Ատոմ, Աբուսահլ և Կոստանդին զսուրբ Խաչն անդրէն ի Վարագ հանդերձ մարմնով արքային թողլով մաս ինչ ի կենաց փայտէն՝ ի վանս Սեբաստիոյ... յաւուրս Սենեքերիմայ դէտ Սեբաստիոյ վիճակին էր Սիօն արքեպիսկոպոս, որոյ յաջորդութեան սկիզբն ի սրբոյն Լուսաւորչէ սկսեալ է. յաւուրս թագաւորութեան Գաւթի հասանի վախճան երանելոյն. յամի 1026 և ի թուին հայոց ՆՀԵ հանդիպի։

ԵՂԻՍԷ

Ի տեղի Սիօն եպիսկոպոսի ընտրի դէտ յետ վախճանի նորին Եղիսէ աշակերտ Գրիգորի մագիստրոսի յաթոռն Սեբաստիոյ խնդրանօք և հաւանութեամբ Պետրոսի գետադարձին. քանզի նա ինքն գետադարձ յայնմիկ միջոցի ի Սեբաստիայ եկեալ էր. որ և ձեռնադրեաց զնա եպիսկոպոս նոյն վիճակին. և իբրև լուաւ մագիստրոս զհամբաւնալն աշակերտին յԱթոռ հայրապետութեան, գրէ առ նա զվսեմ նամակն այն՝ որոյ սկիզբն է այսպէս. լսեմ ըզքէն մանուկ գու. եթէ գառնդ երբեմն ելով, այժմ հովիւ դքեղ կացուցին... ընկալեալ Եղիսէի արք եպիսկոպոսին Սեբաստիոյ զթուղթ վարժապետին իւրոյ Գրիգորի մագիստրոսի ուրախ եղև յոյժ. և սկսաւ այնուհետև առաւել ևս յառաջադէմ լինել. և ըստ բնական ուշիմափայլ զգօնութեանն և գերբնական հրաշակերտ և երկնուղերձ շնորհացն՝ հովուէր զհօտն Քրիստոսի, բնակեցուցանելով զնոսա ի վայրի գալարուղ աւետարանական կրթութեանց՝ և սնուցանելով առ ջուրս հանգստեան առաքինական բարի գործոց առնելով և ուսուցանելով. և լինելով օրինակ բարեաց ամենից հաւատացելոց։

ԽԱՉԱՏՈՒՐ

Եւ յետ իբրև երից ամաց գալստեան Ստոմայ արքային և եղբօր նորին Աբուսահլայ ի Կոստանդնուպօլսոյ ժա-

մանեալ հրաւէր երկնային կոչմանն, վճար հասեալ կենաց Եղիսէի արքեպիսկոպոսին Սեբաստիոյ հանգեաւ առ Քրիստոս։ ՇԺԳ 1064 և նստաւ ի տեղի նորա հաւանութեամբ արքային՝ տէր Խաչատուր արքեպիսկոպոսն, որ էր այր խոհական և իմաստուն. սա հովուեաց զհօտն քրիստոսի աչալուրջ տքնութեամբ. բազմավիշտ տառապկրութեամբ ամս իբրև 31 և ապա կնքէր զընթացս իւր արքեպիսկոպոսն Խաչատուր ի թուականիս հայոց ՇԽԴ 1095 և մարմին նորա ամփոփեցաւ ի վանս սրբոյ Նշանի... Յաւուրս սորին ի միում ամի մեռանէին Ատոմ արքայ Սենեքերիմեան. և եղբայր նորին Աբուսահլ. որով բարձաւ թագաւորութիւն Արծրունեաց. և ամենևին անծանօթ եղև կարգ ազգի նոցա։ ՇԻԹ 1080։

Յովսէփ

Յետ Խաչատրոյ ընտրանօք իշխանաց ազգիս հայոց, նստաւ Յովսէփ յեպիսկոպոսական գահն Սեբաստիոյ. որ բազում տառապանս և վիշտս կրեաց. զի յաւուրս սորա իշխան ոմն յազգէս հայոց նեղեալ յոյժ ի բռնութենէ Յունաց՝ գնաց ի Պարս. և ուրացեալ զհաւատս՝ ընկալաւ յարքայէն Պարսից զիշխանութիւն կուսակալութեան սահմանացն Սեբաստիոյ և Յունական կողմանցն. և կարգեցաւ Գանիշմէնն. և պատերազմեալ զօրօք պարսից ընդ յոյնս՝ և ընդ լատինացիս բազում հարուածս հասոյց նոցա. և մեծաւ անձկութեամբ տառապեցուցեալ վշտացուցանէր զազգս հայոց ի Սեբաստիայ և ի սահմանս նորին. և յետ չորից ամաց սատակեցաւ։ Յետ կրելոյ զբազում խոշտանգանս և զնեղութիւնս՝ հանգարտեալ ժամանակս ինչ Յովսեփայ արքեպիսկոպոսի քաղաքիս Սեբաստիոյ՝ և հասեալ յաւուրս ծերութեան փոխեցաւ առ Քրիստոս և թաղեցաւ ի վանս սուրբ Նշանի։

Դաւիթ

Յետ վախճանին Յովսէփայ, նստաւ ի տեղի նորին տեսուչ տէր Դաւիթ արքեպիսկոպոսն ի ՇԿԶ 1117 թուականութեանս հայոց. յաւուրս սորա Ալիբաս ամիրայն Սեբաստիոյ՝ որդի թոռին Գանիշմանայ, նահատակեաց զբազումս յազգէս հայոց. որպէս Գուհարինեանք չորեսին եղբայրս. ի թուականիս մերոյ ՇՁԵ 1136 և զկնի քանի ամաց ապա Թէոդորոս աբեղայն, որդի Գուհարինէ վկային. ՇՂԸ 1149 կամ թէ վեց ամ ևս յետոյ, այսինքն ՈԴ 1155։

Գրիգոր

Սոյն այր գովելի հանճարեղ և կորովաբան յաջորդեաց Դաւթի ի դառնաղէտ և ի բազմավիշտ ժամանակի. զի վերոյիշեալ Ալիբաս ամիրան իբրև երկրորդ փարաւօն նեղէր զազգս մեր. և յաւուրս սորա նահատակեցաւ Թէոդորոս աբեղայն ի նոյն բռնաւորէն՝ ձեռամբ Թօտոսի դատաւորին։.. Գրիգոր արքեպիսկոպոսն քաղաքին Սեբաստիոյ նստաւ ի վանս սուրբ Նշանի ամս իբրև 31 և հասեալ ի պարարտ ծերութեան հանգեաւ ի Քրիստոս, և թաղեցաւ ի վանս ի գերեզմանատանն հուպ շիրմի Պետրոսի Գետադարձին. ՈԺԶ 1167։

Սահակ կամ Պսակ

Յետ Գրիգորի գահակալեաց յաթոռն Սեբաստիոյ Սահակ կամ Պսակ եպիսկոպոսն. այր խոհական և պարկեշտ ի վարս. յաւուրս սորա եղև ժողովն Հռոմկլայու ի ժամանակս Գրի-

դորիսի կաթողիկոսի տղայ անուանելոյ, որդւոյ Վասլի եղբօր Շնորհալոյ. վասն միաբանութեան հայոց ընդ Յունաց. մին ի ժողովականաց անտի էր և Պասկ եպիսկոպոսն... զկնի ժողովոյն վերադառնայ ի վիճակն իւր. և յետ քանի ինչ ամաց վախճանի բարի մահուամբ. և թաղի ի մենաստանն Սեբաստիոյ. ի թուականութեանս ՈԼԵ ու յամի Տեառն 1186։

Ա.Եաեիա

Յետ վախճանի Պասկ եպիսկոպոսի կալաւ զաթոռն արքեպիսկոպոսութեան Սեբաստիոյ տէր Անանիա արհի եպիսկոպոսն. այր երևելի և վեհանձն, սիրելի և հաճոյ յաչս մեծամեծաց և փոքունց. յաւուրս սորա երևելի եղև մեծ իշխանն հայոց Լևոն՝ որ արքայ անուամբ պատուեալ լինէր. և տեսեալ թէ յաջողեաց նմա տէր. և օր ըստ օրէ զօրանայ իշխանութիւն նորա և հռչակի անունն ընդ ամենայն ազգս, կամեցաւ օծանիլ թագաւոր. վասնորոյ հաւանութեամբ Գրիգոր կաթողիկոսի և գլխաւոր եպիսկոպոսացն Ներսէսի Լամբրոնացւոյն. Յովսեփայ Անտիոքայ եպիսկոպոսին. Յօհաննու Սըսոյ եպիսկոպոսին, և Անանիայի Սեբաստիոյ եպիսկոպոսին, և այլոցն, և փառազարդ իշխանացն մերոց, հրաւէր արձակեաց յամենայն կողմանս՝ յորս կային հայք. և ժողովեցան եպիսկոպոսունք, և վարդապետք, վանահայրք և կրօնաւորք. իշխանք և զօրավարք զօրօք. նա և ի Յունաց և ի լատինացւոց և զարդարեցին զբովանդակ քաղաքն Տարսօնի. և արարին հանդէս մեծ յեկեղեցւոջն սրբոյն Սոփիայ, ուր մեծաշուք փառօք էօծ Գրիգոր կաթողիկոսն զԼևոն թագաւոր ի վերայ ամենայն հայոց. յամի Տեառն 1198 ՈԽԷ ի յունվարի 6 և եղև ուրախութիւն մեծ ցրուեալ և տարածեալ ազգիս. և ապա ողջունեալ զնորապսակ թագաւորն դարձան ուրախութեամբ ի տեղիս իւրեանց. եկն և արքեպիսկոպոսն Սեբաստիոյ տէր Անանիա ի վանս իւր և հովուէր զհօտն շնորհեալ ինքեան յԱստուծոյ։ Եւ յետ ամաց իբրև չորից հիւանդացեալ Գրիգորի կաթողիկոսի վախճանեցաւ ի Սիս քաղաքի, յայնժամ ժողովեալ Լևոնի զեպիսկոպոսունս ազգիս մերոյ, խորհուրդ արար վասն ընարութեան նոր կաթողիկոսի. կէսքն ասէին ընտրել զԱնանիա եպիսկոպոսն Սեբաստիոյ, որ համարիւր լինիլ յազգականութենէ Պետրոսի Գետադարձին. և կէսք զՅովհաննէս արքեպիսկոպոսն Սըսոյ, և ի ծագել մեծի տարաձայնութեան հրաման ետ Լևոն արքայ ձեռնադրել զՅովհաննէս. որ և էր ընտանի թագաւորին, և սիրելի պալատականացն. այր արքայակերպ. և փառացի անձամբ. և հաւանեալ այնմ ժողովելոցն կատարեցին ըստ բանի արքային, և գնացեալ նստաւ Յօհաննէս յաթոռն կաթողիկոսութեան ի Հռոմկլայ. սա մականուամբ մեծաբարոյ կոչեցաւ. զայն իբրև տեսին կուսակիցք Անանիայի սկսան քրթմնջել ի ժողովրդեանն. թէ ոչ հաւանութեամբ եպիսկոպոսացն եղև ընտրութիւն Յովհաննու, այլ ընդ հաճոյս թագաւորին. ուստի այսու վստահութիւն առեալ Անանիայի և միաբանեալ ընդ իւր զեպիսկոպոսունս և զվանականս փոքուն հայոց, մանաւանդ զընակիչսն Սեբաստիոյ և Կեսարիոյ՝ խորհեցաւ ի գլուխ տանել զկամս իւր. վասնորոյ երևելի պատա-

րագօք հաճեցուցեալ դՄուգնատին մեծ ամիրայն Իկոնիոյ, որ տիրէր այնոցիկ կողմանց. և հրամանաւ նորին նստաւ իբր առանձին կաթողիկոս ասա ի Սեբաստիայ. և յաջողեցաւ իշխանութիւն նորա. որովհետև ի մեծ համարի էր. և Սեբաստիայ իբր թագաւորական քաղաք Արծրունեաց, և Աթոռ Պետրոսի Գետադարձին, ուր և թաղեալ կայ մարմին նորա։ Եւ եղև զի ծագեցաւ գժտութիւն ինչ ի մէջ Լևոնի արքայի և Յօհաննու կաթողիկոսի, յետ կալոյ նորա յԱթոռ հայրապետութեանն ժամանակս ինչ. վասնորոյ համարձակութիւն առեալ բնակիչք Փոքուն Հայոց հաստատեցին դիշխանութիւն կաթողիկոսի իւրեանց Անանիայի. և այնուհետև շրջէր Անանիա կաթողիկոս տիրաբար յայցելութիւն յիւրում թեմի. և առնէր այլ և այլ կարգաւորութիւնս. ունելով ընդ իւրն ոչ սակաւ եպիսկոպոսունս։ Գէպ եղև նմա գնալ ի մեծ քաղաքն Կեսարիայ. և ժողովուրդքն ընկալան զնա մեծաւ պատուով իբրև զեպիսկոպոսապետ ազգիս. և մինչդեռ անդ էր ամսօրեայ ժամանակօք նահատակեցաւ սուրբ վկայն Թէոդորոս. զոր մինչ ի բանտի էր առաքեաց առ նա հայրապետն զքահանայ ոմն Գէորգ անուն ի մխիթարել զնա. և սրբոյն քաջալերեալ ի բանից քահանային եհեղ զարիւն իւր վասն սիրոյն քրիստոսի. յամի տեառն 1202 ՈԾԳ մայիս 18. դարձ արարեալ ի Կեսարիոյ Անանիա կաթողիկոսն եկն ի Սեբաստիա՝ և նրստաւ ի տեղի իւրում ի վանս սուրբ Նշանի այլ ևս ամս երիս՝ հանգեաւ ի Քրիստոս. և եդաւ մեծաւ պատուով ի շիրմի հարաւակողմն մենաստանիս արտաքոյ պարսպի մեծի եկեղեցւոյն, հուպ ի յորմն առաջի փակեալ դրանն. և պատուի երթևեկաց դամբարան նորին մինչև ցայսօր ժամանակի ՈԾԶ 1207. և յետ իբր 618 ամաց, յաւուրս տեսուչ Յօհաննէս եպիսկոպոսի Սեբաստացւոյ. շինեցաւ ի վերայ նորա վայելուչ շիրիմ արդեամբ Քիւլէքճեան պարոն Յօհաննէսի. ՌՄՀԴ 1825.

Նիկողայոս

ՉԼԷ 1288. յաւուրս այսոսիկ նրստաւ ի վանս սուրբ Նշանի տեսուչ նահանգիս Սեբաստիոյ տէր Նիկողայոս արքեպիսկոպոսն. այր հեզ և խոնարհ բարուք. և որչափ ինչ ձեռնահաս էր բարեպէս հովուէր զհօտն Քրիստոսի, և համբերատար տանէր վշտաց և անձկութեանց, որք յաճախէին յաւուրս սորա. վասնզի եկին հասին ի սահմանս Սեբաստիոյ ելուզակք ոմանք ապստամբեալք ի սուլթանէն Եգիպտոսի, որք (որպէս գրի ի ձեռագիր պատմութեան միում) գերեցին ի շրջակայ եզերաց քաղաքիս ութ հարիւր ոգիս. և սպանին յիսուն գլխաւոր անձինս ի քրիստոնէից։ Եւ ապա վստահացեալ ի զօրութիւնս իւրեանց դիմեցին և մտին ի ներքս ի քաղաքն, և օգնականութեամբն Աստուծոյ յարապ որդի Սամազարին հարեալ կոտորեաց ի նոցանէ 563 անձինս. և դիակոյտ արար իբրև զբլուր ինչ մեծ ի վերայ ճանապարհին. և զայլս փախստական արար։ Եւ յետ երկուց ամաց ծագեցաւ այլ իմն աղմուկ ապստամբաց ի քաղաքն Սեբաստիայ. զի Ասլանու, և Սուքայ և զԱզաչար կոչեցեալ ապստամբքն բազում զօրօք եկեալ մտին ի քաղաքս. և բազում նեղութիւնս հասուցին քաղաքացւոցն, մանաւանդ ազգիս հայոց. և յետոյ զօրացեալ քաղաքացւոցն հա-

լին և սատակեցին զբազումս ի նոցանէ. և զայլս փախստական արարին (ի նոյն ձեռագիր պատմութենէն ՋԽԳ 1294)։ յետ այսորիկ Սմբատ բռնաւոր արքայն հայոց լուր առեալ թէ Հեթում և Թորոս եղբարք իւր դարձեալք ի Կոստանդնուպօլսոյ՝ գնան առ Ղազան խան թաթարաց առ ի առնուլ զնա թիկունս. և զինիլ ընդդէմ ինքեան. և թէ հասեալք են նոքա ի Սեբաստիայ. խաղաց զօրու ծանու ի վերայ նոցա. և ձերբակալ արարեալ ղերկոսին զնոսա տարաւ և եդ ի բանտի. և յետ քանի մի աւուրց սպան զԹորոս. և կուրացոյց զՀեթում (ի նոյն պատմութենէ ՋԽԷ 1298)։ Յաջորդ ամին ապստամբեցաւ Սուլամիշ զօրապետ սուլթանին և սպան զՊայանչարն և զՊիչխուրն. և ջանայր տիրել Սեբաստիոյ՝ զոր իմացեալ քաղաքացւոցն զանգութ և զանողորմ բարս նորին և զապստամբութիւնն՝ ոչ հնազանդեցան նմա. այլ ամրացուցեալ զպարիսպն զինեցան ընդդէմ ապաւինելով յԱստուած. և յաւուր առաջի կիրակէի աղուհացիցն մարտի 8, եկն զօրօք բազմօք եղբայր Սուլամիշին ի վերայ մայրաքաղաքիս Սեբաստիոյ. և յետ աւուրց ինչ եկն և Սուլամիշն. և յաւուրս քառասուն պատերազմեալ ոչ ինչ կարաց առնել, և յաւուր աւագ ուրբաթին, որ էր ապրիլի 17. դարձ արարեալ գնաց յաշխարհի դաշտն. և անդ կոտորեալ ղօրացն ի Բաշխերտէն. և ինքն մազապուրծ փախեաւ յԵգիպտոս. յայսմ նուագի յետ բազում անձկութեանց՝ փրկեաց տէր զՍեբաստիայ ի կործանմանէ։ Եւ յայսմ հեծելակոյտ, և զօրագումար պաշարմանց ժամանակիս՝ կարի իմն տառապանս կրելով վրշտացաւ տէր Նիկողայոս արքեպիսկոպոսն. և հասեալ ի կէտ կենաց հանդեաւ ի Քրիստոս և թաղեցաւ ի վանս սրբոյ Նշանի։ (ՉԾԳ 1305, ի նոյն ձեռագիր պատմութենէն)։

Ստեփաննոս

Զկնի մահուան Նիկողայոսի եղաւ ի տեղի նորին տէր Ստեփաննոս արքեպիսկոպոսն, որ էր այր հանճարեղ և կորովաբան. և բարուք հովուէր զհօտն յանձնեալ յինքեան ի տեառնէ. ՉԾԶ 1307. յաւուրս սորա հրամանաւ Լեոնի հայոց եղև ժողով Սսոյ վասն ընտրութեանն նոր կաթողիկոսի. որք ընտրեցին և եդին զտէր Կոստանդին Կեսարացի Պրոնագործն. որ և զառաջին նստեալ էր կաթողիկոս։ Եւ ապա թագաւորն Լևոն և կաթողիկոսն Կոստանդին յառաջադրեցին արքեպիսկոպոսաց ժողովոյն՝ ընդունիլ և հաստատել ի վիճակի իւրեանց զինն գլուխ բանս. ըստ դաւանութեան և ըստ ծիսի արարողութեանց համաձայնիլ հռոմայեցւոց, զոր սակաւք ի հաճոյս արքային ընկալան. իսկ Սարգիս արքեպիսկոպոսն Երուսաղէմի, և Ստեփաննոս արքեպիսկոպոսն Սեբաստիոյ և բազումք ընդ նոսա միաբանեալք իսպառ մերժեցին զանիրաւ հրամանն Լեոնի թագաւորին. և յաջորդի նորին Օշնի արքային. և Կոստանդեայ կաթողիկոսի. և արգելին զիւրայինսն ի բաց կալ այնպիսի արարողութեանց, և ինքեանք կացին մնացին ի վերայ ուղղափառ դաւանութեանս հայոց անսայթաք. և ի վերայ անվթար աւանդութեանց հայաստանեայցս կաթողիկէ եկեղեցւոյ անվրէպ. և այսպիսի Աստուածահաճոյ վարուք յերկարեալ ի կեանս և վաստակեալ ի տեսչութիւնս ամս իբրև 33 հանգեաւ ի Քրիստոս. և եղաւ ի վանս սուրբ Նշանի։ ՉՁԷ 1338։

Շմաւոն կամ Սիմէոն[121]

Ի նոյն ամի միաբան հաւանութեամբ քահանայք՝ իշխանք և ժողովք ընարեցին և եդին տեսուչ քաղաքիս Սեբաստիոյ զտէր Շմաւոն կամ Սիմէոն արքեպիսկոպոսն. այր խոհեմ և աջալուրջ. որ բարեպէս կառավարէր զժողովուրդն։ Յաւուրս սորա հրամանաւ ծիւան Կոստանդին հայոց արքայի, և Մխիթարայ կաթողիկոսի եղև ժողով ի Սիս քաղաքի ՉՂԱ 1342. յորոց միջի էր և Շմաւոն. յետ ժողովոյն եկն ի վիճակն իւր ի Սեբաստիայ և կեցեալ բարի վարուք և առաքինի գործովք, փոխեցաւ յանանց կեանս. և թաղեցաւ ի մեծի մենաստանիս։ ՊԺԸ 1369։

Բ. Ստեփաննոս Եւսիասակ

Յետ Շմաւոնի արքեպիսկոպոսի նստաւ յԱթոռ տեսչութեան ի վանս սուրբ Նշանի տէր Ստեփաննոս արքեպիսկոպոսն երկրորդ. որ նահատակեցաւ ի թուին ՊԼԶ 1387. ի Պուրհանատին անողորմ բռնաւորէն. զլիակատար պատմութիւն սրբոյս տես յայսմաւուրս յունիս 23։

Յոհաննէս

ՋԼԱ 1482 ի ժամանակիս յայսմիկ նստաւ առաջնորդ մեծի մայրաքաղաքիս Սեբաստիոյ ի վանս սուրբ Նշանի տէր Յովհաննէս այր պարկեշտ և սրբակրօն. որե բարեպէս տածէր զժողովուրդն. յաւուրս ՋԼԸ սորա ծաղկեալ էր Մատթէոս վարդապետն Սեբաստացի, այր բանիբուն և գիտնական. որ անուն և համբաւ հռչակեալ և տարածեալ էր ի մէջ ազգիս։ Զսա յիշէ Առաքել պատմագիրն թէ Մատթէոս վարդապետն էր ի վանս Սեբաստիոյ։ Այս Մատթէոս վարդապետն ետ գրել Արևելցի Փիլիպպոս գրչին բոլոր գբով ծաղկեալ փառազարդ ճաշու տարեգիրք մի. և ետ յիշատակ ի վանս սուրբ Նշանիս. յորում գտաք նկարեալ զպատկերն փրկչական բազմեալ յաթոռ. և առաջի նորա զՄատթէոս վարդապետն աւետարան ի ձեռին՝ զոր մատուցանէր տեառն. և ասէր. «Ո՜վ անսկիզբն ծոցոյ հօր բան, որ ծագկեցար յազգս մարդկան. և զայս մատեան աստուածաբան. մեզ հնչեցեր ձայն ցնծութեան։ Ահա առեալ զքոյս քեզ տամ. բարձեալ ի ձեռս առաջի գամ, առ զայս նուէրս բարեխնամ. և յիս նայեա տէր հաշտակամ»․ և ի վերջն գտաւ ոտանաւոր տողիւք դրեալ այսպիսի ինչ։ «Ես Մատթէոս մեղօք լցեալ Սեբաստիոյ վարդապետ լեալ. դատարկ անուան արժանացեալ. գործոց բարեաց թափուր մնացեալ և այլն...» յիշին և միաբանք սուրբ ուխտիս այնր ժամանակի. Ղազար եպիսկոպոս. Շմաւօն. Ղազար Աստուածատուր և Յոհաննէս վարդապետք։ Յաւուրս յայնոսիկ բդեշխ ոմն Բուտախ անուն հրամանաւ երկրորդ սուլթան Պայազիտայ. ել բաղում զօրօք ի կողմանս փոքուն Ասիոյ. ի նուաճել զըստահակութիւնս ոմանց ապստամբաց. և այնու առթիւ եհեղ զբաղում արիւնս քրիստոնէից և այլազգեաց. և սպան զանթիւ անձինս. և ծանր ծանր հարկապահանջութեամբ տառապեցուցեալ վշտացոյց զխղճալի ազգս մեր յամենայն տեղիս՝ մանաւանդ ի Սեբաստիայ. և գրէթէ յաղարտ վարեալ աւեր դարձոյց զերկիրս մեր։ ՋԽԴ 1495. կալեալ զաթոռ առաջնորդութեան տէր Յօհաննէս Արքեպիսկոպոսն ամս իբր 31 և հանգեաւ ի քրիստոս. ՋԿԲ 1515։

Ղազար

Տէր Ղազար այր մթին և առաքինի յաջորդէ Յօհաննու. յաւուրս սորա զչարեալ յոյժ այլազգեացն՝ բազում վիշտս և տառապանս հասուցին ազգիս մերոյ. և զանհնարին աղետալիս գործեցին. և զբազումս նահատակեցին աստ ի Սեբաստիայ. որպէս գրեն հարազատ պատմիչք։ Ի թուին ՋՁԲ 1533 յետ բազում բանտից և տանջանաց վասն ի Քրիստոս Յիսուս հաւատոց Տէւոցայ վանուց միաբան Հայրապետ աբեղայն հրով ողջակիզեալ կատարի ի Սեբաստիայ. և յաջորդ ամին սուրբ Թադէոս քահանայն Սեբաստացի բազում բանտից և կապանաց տարեալ սիրոյն քրիստոսի ոչ ուրացաւ ի սուրբ հաւատոյս մերոյ. վասնորոյ հրամանաւ բդեշխին ի մեծ հրապարակին Սեբաստիոյ սրով, քարիւ և փայտիւ հարեալ կատարեցաւ ի Քրիստոս։ Իսկ ի թուին ՋՁԴ 1535 քահանայ մի ի Շնքուռակ գեղջէն Սեբաստիոյ կալան անօրէնք և ստիպէին զնա յուրացութիւն. և ի ոչ յանձն առնուլն հրով այրեցին երանելին ի փառս քրիստոսի... ՋՁԳ. 1534 ամի թագաւորն տաճկաց սուլթան Սուլէյման. յետ բազում պատերազմացն զոր արար ընդ շահ Թահմազին և յոլովս ոտնակոխ առնելոյ զաշխարհս հայոց սրով և գերութեամբ դարձաւ ի Կոստանդնուպօլիս, և խորհրդով եպարքոսին իւրոյ Իբրահիմ փաշայի հրամայեաց ժողովել զմանկունս ի հայոց, ի Յունաց և այլոց ազգաց. և որք ժողովէին բռնութեամբ յափշտակեալ տանէին ի պալատն արքունի և դարձուցանէին զնոսա ի կրօնս իւրեանց. և սաստկացաւ դառնութիւն ողբոյ և կոծոյ հարց և մարց յամենայն տեղիս. մանաւանդ ի Սեբաստիայ քաղաքիս. վասնորոյ Թադէոս վարդապետն Սեբաստացի ի սմին ժամանակի. ի վերայ այսր դրեաց ողբական բանս ոտանաւորաց։ ՋՁԵ 1536 ամի եհաս վախճան կենաց տեառն Ղազարու արքեպիսկոպոսին և թաղեցաւ ի սուրբ մենաստանս։

Մինաս

Յետ Ղազարու բազմեցաւ ի գահն եպիսկոպոսական ի վիճակին Սեբաստիոյ տէր Մինաս արհին. յաւուրս սորա եղև դարձեալ մանկաժողով. և որք վերակացուք էին այսր գործոյ բազում աղետալի գործս գործէին ընդդէմ կամաց թագաւորին. խորտակէին և այրէին զատունս և զեկեղեցիս. և կողոպտէին զինչս. որպէս յԵւդոկիայ այրեցին և քակեցին զութն եկեղեցիս միանգամայն ի միում աւուր ապրիլ 9։ Եւ աստ ի Սեբաստիայ բազում նեղութիւնս և տառապանս հասուցին ազգիս մերոյ. և զանհնարին չարիս գործեցին. ժողովեցան բազումք ի հայոց և մատուցեալ հաճեցուցին զթագաւորն. և նա հրամայեաց մի այլ ևս նեղել զոք վասն այնր բանի և դադարեցաւ տղայաժողովն առ ժամանակ մի կացեալ յառաջնորդութեան տեառն Մինասայ արհի եպիսկոպոսի ամս իբրև 24 վախճանեցաւ. և թաղեցաւ ի սուրբ Նշանի վանս. ՌԹ. 1560։

Յակոբ

Յետ Մինասայ ընտրի դէտ Յակոբ արհին. այր զգաստ և բարեսէր. սորա միաբան էր այրն այն երևելի մշեցի Աստուածատուր եպիսկոպոսն. և

այլք որք բարեկարգութեամբ կային և կատարէին զպաշտօնս տեառն։ Յաւուրս սորա ընդ վրդովիլ աշխարհին Արարատայ յերեսաց ասպատակաց եւ Սեբաստացի Միքայէլ կաթողիկոսն յէջմիածնէ. և եկն ի Սեբաստիայ ի վանս սուրբ Նշանի. և յետ քանի ինչ ամսոյ դարձաւ ի սուրբ Աթոռն Էջմիածին։ Խոհական կառավարութեամբ վարեաց ըզպաշտօն դիտողութեան մեծի մայրաքաղաքիս Սեբաստիոյ, տեառն Յակոբայ արհի եպիսկոպոսի զամս իբրև 18 և ժամանեալ զրաւ կենացն փոխեցաւ առ քրիստոս. և եդաւ ի տապանի ի վանս սուրբ Նշանի։ ՌԻԷ 1578։

Բ. Մինաս

Զկնի վախճանի Յակոբայ արքեպիսկոպոսին. յաջորդեաց ի տեղի նորին Սեբաստացի Մինաս արքեպիսկոպոսն. այր իմաստուն և հանճարաւոր. յաւուրս սորա Ջուղայեցի Զաքարիայ կաթողիկոսն Սսոյ արար ժողով ի Բերիայ. ի ժողովոյ հարց անտի մինն էր սա. վերադարձաւ ապա ի վիճակն իւր. և յետ ամաց ինչ վախճանեցաւ, և եդաւ ի շիրմի սուրբ մենաստանիս. ՌԼԸ 1589։

Պետրոս

Յետ Մինասայ եղև առաջնորդ Սեբաստիոյ տէր Պետրոս արքեպիսկոպոսն. այր մթին և առաքինի. յաւուրս սորա դաժանացեալ կատաղեցան այլազգիքն. և անհնարին վիշտս և տառապանս հասուցին ազգիս մերոյ ի Սեբաստիայ քաղաքիս. և որ ողբալին է զեկեղեցի սուրբ Լուսաւորչին առին ի ձեռաց մերոց. և արարին իւրեանց մզկիթ վայ մեզ. զոր և ցաւագինս ողբալով աղէտալիս աւանդէ Սեբաստացի Յովհաննէս վարդապետ ականատեսն թէ՝ ի թուականութեան մերում. հայկազեան տոմարի ՌԽԲ 1593 շարժեաց չար վիշտպն անդնդային զտուտն իւր ի վերայ գերապանծ քաղաքիս Սեբաստիոյ և յարոյց մրրիկս բազմահոսան ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց մերոց. ի վասն անմիաբանութեանն և անհնազանդութեանն ազգիս մերոյ քահանայից և ժողովրդոց զրկեալ եղաք ի սուրբ կաթուղիկէ տաճարացս կրկնակի՝ սուրբ Աստուածածնի և սուրբ Լուսաւորչի զմբեթայարկ սուրբ եկեղեցեացս՝ և ցրուեալ եղաք ընդ երկիր իբրև զբունակորոյս աղաւնի. որ բարբառով ողբոց մնչիցէ. ի վերայ դաշտաց և բլրոց աղիողորմ կոծով և ողբով ցրուեալ եղաք նման տարմից կաքաւուց. որ թագուցեալ ղօղեալ լինի ի պրակս անտառից ի յահէ սրաթռիչ արծուեաց»։

Եւ պատճառ առման եկեղեցւոյն զայսպիսի ինչ աւանդէին. յառաջ քան զքանի մի ամիս՝ միաբանեալ ոմանք աննշան յարանց, որ ստահակեալ լրբութեամբ յառաջ կացեալ առեն ցիշխանն՝ թէ դուք մինչև ցայժմ վարեցիք զպաշտօն իշխանութեան. բաւական է. այսմհետէ մեք վարեսցուք. և ի մէնջ կացուսցուք եկեղեցապան, դանձապետ, մոմածախ, լուսարար և այլն։ Եւ իշխանաց գժդմեալ. և խեթահարեալ յետս կացին ի գործոցն, զոր չէր արժան այնպէս առնել. և նոքա արարին ըստ կամաց իւրեանց. և եղև երկպառակութիւն մեծ ի մէջ հին և նոր իշխանաց՝ և կողմնականաց նոցին։ Եւ քանի մի ամսոց՝ եկն նոր բդեշխ. և յայնմ ժամանակի գոյր չար սովորութիւն ինչ. զի նորեկ բդեշխն որոնեալ

քննէր զեկեղեցիս քրիստոնէից. (քիլիսէ Թէֆթիշի կոչելով) թէ արդեօք նոր ինչ շինութիւն դոյ ի նմա թէ ոչ. յորոյ առթիւ առնոյր ինքեան կերղի ինչ. և յայնժամ ի լինել քննութեան՝ կալեալ զնոր եկեղեցապան զնէ ի շրղթայս ի բանտի խնդրելով ուտխստ. և դայն զիասացեալ իշխանացն ելին ի քաղաքէն և գնացին ի տեղի ինչ դուարճալի ուտէին և ըմբէին վաշ վաշս, կարդալով՝ ի վերայ նորոցն և ի նորոցն ոչ ոք երևեցաւ բնաւին. կացեալ եկեղեցապանին ի բանտի իբրև գաւուրս 20. և այլ աւելի. կրելով զնեղութիւնս բազում մինչև ոգիս ապաստան լինիլ. Եւ զի ի վաղուց հետէ երկնէր դենպետն սարի միւֆթի կոչեցեալ. աստ զիղձ իւր չար կամելով լցուցանել, աւաւել ևս տայր նեղել զեկեղեցապանն. մինչև ասել նմա յինէն զի՞նչ խնդրէք. ես չունիմ զինչս զի տացից ձեզ. ահա եկեղեցին և ահա դուք. ընդ այն բան նորին առ ժամայն արտաքս թափեն զկահ և զկարասիս յեկեղեցւոյն. և տիրապետեն զեկեղեցին: Լուեալ իշխանացն ելին ժողովեցան ի միասին և անկեալ ի դրունս մեծամեծաց և ծախեալ բազում ինչս և ոչ ինչ կարացեալ վճարել՝ նստան ի սուգ. ըստ այնմ դարձաւ տօն նոցա ի սուգ: Ամովս 8. գլուխ 10 համար:

Ահա այսպէս անմիաբանութիւն և անհնազանդութիւն ազգիս մերոյ և լրբութիւն հասոյց զմեզ յայս վիճակ գերութեան. և հասուցանէ և ևս ի մեծամեծ թշուառութիւնս: ՌԽԲ 1593. Յետ այսորիկ Պետրոս եպիսկոպոս սուրբ Նշանի և Յոհաննէս վարդապետ հրեշտակապետի. միաբանեալ ընդ ինքեանս դիշխանսն. և անկեալ ի դրունս այլազգեաց. և ծախեալ բազում ինչս հաճեցուցին դղեղշխն. և զմեծամեծս քաղաքիս. և առեալ հրաման բացին զփոքրիկ մատուռն սրբոյն Սարգսի, որ հուպ է եկեղեցւոյն Լուսաւորչի իբրև զերիս քարընկեցս. և նորոգեալ զայն և մեծացուցեալ արարին եկեղեցի. և ըսկըսան այնուհետև անդ զպաշտամունս իւրեանց կատարել. և քահանայք, իշխանք, և ժողովուրդք եկեղեցւոյ լուսաւորչին վիճակեցան սուրբ Սարգիս եկեղեցւոյ մինչև ցայսօր ժամանակի: ՌԽԸ 1599. յաւուրս այսորիկ անուանի էր Մկրտիչ եպիսկոպոս Տևոցայու սուրբ Գէորգայ վանիցն. և միաբանք նորին գէյթունցի Ալիքսանոս և Յոհաննէս վարդապետք: Հասեալ վախճան կենաց տեառն Պետրոսի արհի եպիսկոպոսին ի վանս սուրբ Նշանի և թաղի անդէն ի շարս հարց: ՌԽԹ 1600:

Մելքիսէթ

Յաջորդեաց յԱթոռն Պետրոսի Աեբաստացի ոսկեգործ Խաչատուրի որդի տէր Մելքիսէթ արքեպիսկոպոսն. այր խոհական և աչալուրջ. որ և յոգնադիմի վշտաց և անձկութեանց տարաւ համբերատար յաւուրս իւր. սա առեալ հրաման արքունուստ նորոգեաց զաւագ եկեղեցին Աեբաստիոյ ջերմեռանդ տրօք ազգիս հայոց. ՌԿ 1611. և աւարտեալ զշինուածն արարին մեծահանդէս նաւակատիս ի փառս Աստուծոյ. և ի պատիւ մշտակուսին Մարիամու Աստուածածնին: Եւ յետ շինման եկեղեցւոյ քանի ինչ ամաց հասանէ վախճան Մելքիսէթի արհւոյն. և թաղի ի շարս հարց Աեբաստիոյ. ՌԿԷ 1618:

Անդրէաս

Յետ վախճանի Մելքիսէթի արհի եպիսկոպոսի առաջնոյ յաջորդեաց ի

նոյն Սթոռն Անդրէաս արքեպիսկոպոսն. յաւուրս սորա արքայ տաճկաց սուլթան Մուստաֆայն, առաքեաց զԹաթար խան ի վերայ Շահաստանու, և յանցանելն ընդ Սեբաստիայ բազում նեղութիւնս ե անհնարին վիշտս հասոյց տառապեալ ազգիս մերոյ ծանր հարկապահանջութեամբ. ե այլովք. և արար զքաղաքս որպէս աւերակ բուոյ։

Ցետ այսորիկ եկն ի քաղաքս Սեբաստիայ Սպազայ բդեշխն. ե սա ես բազումնեղութեամբ տառապեցոյց զազգըս մեր խղճալի ՌՀ 1621։ Մայիս 12. ՌՁԴ 1635. յաւուրս այսորիկ արքայն տաճկաց սուլթան Մուրատն եկն ի մայրաքաղաքս Սեբաստիայ յաւուրս երեքշաբթի, և կեցեալ աստ յաւուրս 17 գնաց ի պարս պատերազմ։ Ցայնժամ Սեբաստացի Ներսէս վարդապետ, այր վսեմ և հանճարեղ. որ և յետոյ եղև կաթողիկոս Սսոյ. դիպուկ ժամ վարկուցեալ ժողովեալ առ ինքն զառաջնորդս վանօրէից նահանգիս. Անդրէաս արքեպիսկոպոսն սուրբ Նշանի Սթոռոյս. Նիկողայոս եպիսկոպոսն սուրբ հրեշտակապետի, Յօհաննէս եպիսկոպոսն սուրբ Անապատի. Մկրտիչ եպիսկոպոսն սուրբ Գէորգայ. Յօհաննէս եպիսկոպոս Խնդրակատարու. համդերձ մեծամեծօք ազգիս. առքօք գիր աղերսանաց մատուցեալ արքային խնդրեցին զհրաման, զի փոքրիկ մատուռն սրբոյն Սարգսի նորոգեալ շինեսցեն. և արասցեն հրապարակական եկեղեցի. և տէր քաղցրացոյց զսիրտ Թագաւորին ի վերայ տառապեալ ազգիս մերոյ շնորհեաց զհրամանագիրն. զոր ընկալեալ մեծի վարդապետին Ներսէսի բազմաւ խընդութեամբ, զձեռն ի գործ արարեալ շինեաց զտաճարն քարաշէն. ամրակառոյց և կամարազարդ յօրինմամբ ՌՁԵ 1636։

Ներսէս

Ցետ շինութեան և նորոգութեան եկեղեցւոյ սրբոյն Սարգսի, յաջորդ ամի ՌՁԶ 1637. փոխեցաւ առ Քրիստոս առաջին Անդրէաս արքեպիսկոպոսն Սեբաստիոյ, և թաղեցաւ ի վանս սրբոյ Նշանի. և յաջորդեաց նմա Սեբաստացի տէր Ներսէս վարդապետն և արհի եպիսկոպոսն, այր յառաջադէմ և յաջողակ ի մեծագործութիւնս. սա յետ մետասան ամեայ դիտողութեան իւրոյ ընտրեցաւ կաթողիկոս Սսոյ Սթոռոյն. ՌՂԷ 1648. լեալ յաջորդ Սեբաստացի տեառն Սիմէօնի կաթողիկոսին. հանդիպեալ սորա ընդ Փիլիպպոսի կաթողիկոսին յԵրուսաղէմ քաղաքի ի միում ժամանակի, սակս ինչ ինչ բարեկարգութեանն արարին ժողով. յետ ժողովոյն դարձաւ ի Սիս Կիլիկիոյ. և նեղեալ ի բռնութենէ անօրինացն՝ ելեալ անտի եկն ի Սեբաստիայ յիւր հայրենի խանձարուր, և կեցեալ աստ և Սեբաստիա ժամանակ ինչ փոխի առ Քրիստոս յոյժ բնաւից. և եդաւ մարմին նորա ի տապանի յիւրակերտ եկեղեցւոջ սրբոյն Սարգսի յետ կոյս յաջ դասին ի հիւսիսոյ կողմանէ. և պատուի շիրիմ նորին մշտավառ կանթեղօք. և ի դամբարանէ նորա լինի բժշկութիւն ամենայն ցաւոց հաւատով դիմողացն. և կոչի ի բնակչացն գերեզման հոգևոր տիրոջ. սա եկաց կաթողիկոս ամս իբրև վեց կամ հինգ և ամիսս քանի մի։

Բ. Անդրէաս

Ցետ կաթողիկոսութեան Ներսէսի ամբարձաւ ի գահն Սեբաստիոյ Անդրէաս երկրորդ Արքեպիսկոպոսն, որդի Սբապկերցի Թորոսի. ի սորա ա-

ւուրս միաբան էր ի վանս մեր Էրզըրումցի Սարգիս վարդապետին. այր դիւանական և անուանի։ Սա յետ տընտեսութեանն ինչ ամաց փոխի ի պարս սրբոց. և թաղի ի վանս Սեբաստիոյ. ՌՃԳ 1654։

Բ. Մելքիսէթ

Փոխանակեաց Անդրէի երկրորդի Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Կոստանդնուպօլսեցի, որդի տէր Մինաս քահանայի. այր վեհանձն և խոհական. արար յոլով շինութիւնս ի մենաստանիս, և յաւել զըրաղուռն յիշատակս ի սմա. զոր ընդ իւր երեր ի Պօլսոյ. գեղեցիկ արուեստակերտ զաւազանս, սկիհս. խաչս և զայլ սպասս սրբութեանց. ընդ որս և զմագաղաթեայ աւետարան մի, զորք Ղարայազճուն յաւարի առեալ յեկեղեցւոյ սուրբ Աստուածածնին, և տարեալ ի Կոստանդնուպօլիս վաճառեցին քսան ոսկոյ՝ ումեմն Շահղադէ անուն կնոջ բարեպաշտի. և նա առեալ ետ յիշատակ ի ձեռս տէր Մինաս քահանայի պօլսեցւոյ. որոյ որդին սոյն այս տէր Մելքիսէթ արքեպիսկոպոսն. առաջնորդ եղեալ Սեբաստիոյ երեր ընդ ինքեան աստ. և ետ կրկին յիշատակ ի դուռն սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն. սա թափեալ ազատեաց ի ձեռաց ումանց զեկեղեցական անօթս սրբոյ մենաստանիս. զոր եղեալ էին ի գրաւ. վասն 1500 դահեկանի պարտուց, որով և վըճարեաց զամենայն. սա կարդադրեալ հաստատեաց զկարգս եկեղեցւոյ սաղմոսասացութեան՝ հանդիսի պաշտաման. և վայելչացուցանողական արարողութեանց մերոց. որ խանգարեալ էր ի ծուլութենէ թուլամորթաց. և եղև ուխտ և պատճառ ուսման մանկանց եկեղեցւոյ. վասնորոյ երկրորդ լուսաւորիչ կոչեցաւ ազգիս մերոյ ի Սեբաստիայ քաղաքիս։ Կացեալ յառաջնորդութեան երկրորդ Մելքիսեդեկ Արքեպիսկոպոսն Պօլսեցի ամս ինն վախճանի ի թուին ՌՃԺԲ 1664։

Իսահակ

Յետ Մելքիսեթի, նստաւ յԱթոռն տեսչութեանն Սեբաստիոյ ի վանս սուրբ Նշանի Իսահակ արքեպիսկոպոսն. և ոչ յերկարեալ ի կեանս. յետ երից ամաց փոխի յաստեացս ի հանդիստն արդարոց. ՌՃԺԵ 1666։

Գ. Մելքիսէթ

Զկնի Իսահակայ կալաւ զառաջնորդութիւն վիճակիս սեբաստացի տէր Մելքիսեթեկ րաբունապետն. և արհի եպիսկոպոսն. այր հանճարեղ և խոհական. սա աշակերտ էր Յակոբ վարդապետի Երզնկացւոյ, աշակերտին սեբաստացի Ներսէս կաթողիկոսի Սսոյ. յաւուրս սորա նահատակեցան ի Սեբաստիայ քաղաքի Դաւիթ պատանին և Գասպար ծերունին. որ մակ անուամբ Կռուան կոչիւր ի միում ամի. ի ՌՃԻԶ 1677։ Եւ յետ երից ամաց նահատակութեան սրբոցս՝ տեսուչ սրբոյ մենաստանիս Մելքիսեդեկ արքեպիսկոպոսն առեալ զսուրբ Նշան, որ որպէս և աւանդի ի նախնեաց անտի մերոց, էր մասն կենաց փայտին, Վարագայ սուրբ խաչին, ել ի ժողովել զնպաստ սակս վճարման և ազատութեան պարտուց սրբոյ վանիցս. և վասն կարեաց պիտոյից սորին. և գնացեալ եհաս յՈւրհայ. և անդ ժամանեալ վախճան, եղև

զրաւ կենաց նորին. և մնաց սուրբ Նշանն անդ յՆդեսիայ մինչև ցայսօր ժամանակի. ՌՃԻԹ 1680։

Բ. Անանիա

Յաջորդեաց Մելքիսէթի Սեբաստացւոյ, տէր Անանիա արհի եպիսկոպոսն ի նոյն քաղաքէ. այր խոնարհագնաց և առաքինի վարուք։ Կացեալ յառաջնորդութեան տէր Անանիա ամս իբրև երկոտասան հրաժարեցուցին զնա տարապարտուց ի գահէն. ՌՃԽԱ 1692։

Բ. Իսահակ

Ցաւուրս Անանիա եպիսկոպոսի եկն գործով իւիք ժողովարարութեան՝ Կեսարացի Սահակ անուն վարդապետ ոմն. սա այր ճոռոմախօս և համոզաբան գոլով յանգոյց առ ինքն զսիրտ մեծամեծաց քաղաքիս, որք և բազմակնիք ծանարտակ արարեալ առ Մատթէոս պատրիարգն Կոստանդնուպօլսոյ, և հաճեցուցեալ զնա առին հրաման արքունական, և զկոնդակ պատրիարգական յանուն Սահակայ, և ի բաց հանեալ զԱնանիա նստուցին յԱթոռն առաջնորդութեան քաղաքիս զՍահակ եպիսկոպոսն. և ելեալ Անանիայի յատեան մեծի եկեղեցւոյն՝ յետ բազում ողջամիտ քարոզութեանց, եհարց երից անգամ ժողովրդեանն թէ վասն Էր. և սակս ինչ յանցանաց զրկեցիք զիս ի տեսչութենէ. և ոչ ոք ետ նմա պատասխանի՝ զի չունէր ինչ յանցանս, բայց միայն զի ոչ ուտէր և ոչ ըմբէր ընդ նոսա. և ապա ասաց այդպէս լուռ մնասջիք. և ելեալ գնաց այլ ուրեք։ Եւ Սահակ եպիսկոպոս Կեսարացի կացեալ ամս իբրև ութն կողոպտեաց ըստ արժանւոյն զժողովուրդն. և ժողովեաց զոմանս անօթս եկեղեցւոյն՝ և արտաքոյ եղելոցն՝ և թողեալ զբազում պարտս ելեալ գնաց ուր ինքն կամեցաւ. և ոչ ոք ասաց նմա ինչ՝ կարծելով թէ ումի դառնալ՝ վասնորոյ լուռ մնացին բանի Անանիա արքեպիսկոպոսին։ Եւ սուրբ տուն մնաց թափուր յընչից և ի տեսչաց անկեալ ի ներքոյ յոլով տոկոսաւոր պարտուց։ ՌՃԽԹ 1700։

Աստուածատուր

Ապա յետ իբր միոյ ամի ի թըմբրութենէ աղամարութեան սթափեալք, և ի մի խորհուրդ միաբանութեան ժողովեալք քահանայից և իշխանաց վիճակիս՝ համաշունչ հաւանութեամբ ընտրեցին և եդին տեսուչ Սեբաստիոյ ի վանս սուրբ Նշանի զանուանին այն Սեբաստացի Աստուածատուր արքեպիսկոպոսն Դմբուկ անուանեալ։ ՌՃԾ 1701։ Սա չորրորդ ամի տեսչութեան իւրոյ ժողովեաց առ ինքն զգլխաւորս ազգիս մերոյ, զառաջնորդ հրեշտակապետի զԱստուածատուր վարդապետն. սուրբ Անապատի Յակոբ վարդապետն Պալխճի կոչեցեալ. հանդերձ քահանայիւք և իշխանօք վիճակիս և խորհուրդ արար ընդ նոսա վասն նորոգութեան սրբոյ եկեղեցւոյս. որ յանուն ամէնօրհնեալ սուրբ Աստուածածնին կառուցեալ է ի մայրաքաղաքիս Սեբաստիոյ ի վաղ ժամանակաց, որք և միակամ հաւանութեամբ փութացեալք հաճեցուցին զմեծամեծս այլասեռից քաղաքիս. և ի ձեռն նոցա զբդեշխն. և առեալ զհրամանագիր յօգոստոս 13 սկսան նորոգել, շինել և զարդարել զհնացեալ և զխախտեալ տեղիս սրբոյ եկեղեցւոյս, և աւարտեալ զշինուածսն՝ արարին մեծահանդէս նա-

ւակաախս ի փառս Աստուծոյ, և ի պատիւ մօր սրբուհոյ կուսին։ ՌՃԾԴ 1705։

Յետ երից ամաց եղև ի քաղաքս Սեբաստիայ սաստիկ ժանտախտ և մահտարաժամ. և մեռան անթիւ անձինք ի քրիստոնէից և յայլազգեաց. և յետոյ զօրութեամբ ամենասքանչ սուրբ Նշանի տեառն կենաց փայտին. և շնորհիւ գերազօր սրբոց մասանցն բարձաւ մահն այն. ՌՃԾԷ 1708։

Յաւուրս սորա ՌՃԾԹ 1710. նահատակեցան ի Կոստանդնուպօլիս քաղաքի Սեբաստացի Աստուածատուր վրկայն. և Անտօն պատժապարտն։

Ի ժամանակս սոյն Դմբուկ անուանեալ Աստուածատուր արքեպիսկոպոսիս, յոլով յիշատակք եգան ի վանս սրբոյ Նշանիս. մեծափոյթ ջանիւ և աշխատութեամբ.նորին. զոր ցանկայր որչափ ինչ հնարէր լնուլ զպակասութիւն սորին՝ և յորդոր արկեալ խրախուսէր զժողովուրդն՝ որք և ամենեքին փութային ի նոյն. որպէս ի Կոստանդնուպօլիս եղեալ Սեբաստացի ժողովուրդքն թէ բնականքն և թէ հիւրքն. գանձանակ անուամբ ղողորմութիւնս հաւաքեալ յիշատակս շինէին և առաքէին ի սուրբ մենաստանս. յորոց միջի գերագոյն հանդիսացան Չրկիր վարպետքն, որք էին անձինք 81. զոր մի պատուական մեծ երկոտասանթևեան՝ երկու հազար տրամակշիռ ծանրութեամբ արծաթի ջահ շինեալ եդին յիշատակ ի սուրբ վանս, ղի մի գուցէ վնասեսցի կամ վաճառեսցի յանխիղճ արանց, հնարեցին մնալ զայն ի քաղաքն յեկեղեցւոջ սուրբ Աստուածածնին. զոր մինչև ցայժմ կայ և մնայ անդ։ Ունէին սոքա ի սուրբ վանս և քառասուն արծաթեայ կանթեղս դիլիֆ անուանեալ, որպէս և ցուցանէ 81 անձանց ստորագրեալ գիր կոնդակին. բայց այժմ ե ոչ մին երևի։ ՌՃԿԳ 1714։ Եւ վասն իւղի կանթեղացս առին արտ մի երկու հարիւր դահեկանի առ ի ցանելոյ ի նմա զկաաւատ և եդին յիշատակ ի սուրբ վանս. որ է հանդէպ մենաստանիս՝ արևմտից կուսէ՝ մօտ լուսաղբերն ի ներքոյ ճանապարհին, որ ցարդ կայ և մնայ. տէր Յիսուս լուսաւորեսցէ զհոգիս նոցին։ Կեցեալ յառաջնորդութեան Աստուածատուր Արքեպիսկոպոս Դմբուկ կոչեցեալն, ամս քսան և ամիսս քանի մի. և ժամանեալ դրաւ կենաց փոխեցաւ առ քրիստոս։ Եւ թաղեցաւ ի մենաստանիս, առաջի դրան տաճարի մեծի եկեղեցւոյն, հաւասար յատակի գաւթին է շիրիմ նորին. ի ՌՃՀԱ 1722 յունվար 14։

Առաքել

Զկնի մահուան սեբաստացի Աստուածատուր արքեպիսկոպոսի Դմբուկ կոչեցելոյ, միաբանեալ քահանայից և իշխանաց քաղաքիս, բազմակնիք ծանարտակ արարեալ, յղեցին ընդ աւագ երէց աէր Պետրոսի ի Կոստանդնուպօլիս, առ Յոհաննէս պատրիարգ Կոլոտ անուանեալ, ընտրել ղայր ոք իմաստուն վկայեալ ի գործս բարութեան, և կացուցանել տեսուչ Սեբաստիոյ, և թէպէտ ընտրեցաւ Եսայի վարդապետ ոմն Կեսարացի՝ բայց ոչ ընկալան ի Պօլիս եղեալ սեբաստացիք. ապա խորհրդով լումայափոխ Թէվէքէլեան մահտեսի Յարութիւն ամիրայի Ակնեցւոյ՝ խնդրեցին զԱկնեցի Առաքել եպիսկոպոսն, որ էր յայնժամ ի գաւառն Եկեղեաց ի վանս շողային սուրբ Աստուածածնին. յայնժամ հանեալ պատրիարգին զհրամանագիրն արքայական և ղկոնդակն

պատրիարգական եւ ցտէր Պետրոսն. զոր առեալ եւ ի ճանապարհ և գնացեալ եհաս ի վանս Առաքել վարդապետի. և յանդիման եղեալ մատոյց զհրամանագիր արքային. և ասէ հրամայեա հայր սուրբ երթիցուք յաշխարհս մեր. եհարց վարդապետն թէ ո՞վ ուղարկեաց զքեզ. ե կամ ուստի եկի՞ր այսր. ե նա պատմեաց զորպէսն. նա չէառ յանձն ե ասէ. գնա դու յերկիր քո. ե տար պատասխանի այնոցիկ որք առաքեցին զքեզ. զի չունիս ընդ քեզ գիր իշխանաց քաղաքիդ. եթէ այժմ անխոհեմարար եկիր ընդ քեզ, ե քաղաքակիցքն քո զիս ոչ ընդունիցին՝ զի՞նչ արարից. հարկաւ ապա սկսանիցիմ զյետին տեղին ունիլ ամօթով. ե նա եկեալ ի քաղաքն պատմեաց մի ըստ միոջէ զամենայն եղեալսն առաջի իշխանացն. և նոցա արարեալ զբազմակնիք մահսէր. և առեալ զգիր ի Բդեշխէն, ե դերիս սպառազինեալ զինուորս. ե ընդ Զմառացի Խօճայ Խաչիկին յղեցին յԵրզնկայ. զոր գնացեալ ի վանս մատոյց նմա զգիր բդեշխին ե զծանարտադ իշխանացն. ե ասաց հրամայեա երթիցուք. ե նա յետ բազմիցս հրաժարելոյ, ե անբաւական զինքն ցուցանելոյ, յորդորմամբ Սահակ վարդապետի Ակնեցւոյ. (որ էր երբեմն պատրիարգ Պօլսոյ. և յայնժամ դէտ Եւդոկիոյ ե Եզնկայու) յանձն էառ գնալ ի Սեբաստիայ. վասնորոյ յանձնեաց զվանքն առաջի առաջնորդին և իշխանացն բազում անօթովք, զգեստիւք, ե յոլով անասնովք թարց պարտուց՝ աշակերտին իւրոյ տէր Յօհան երիցուն, և առեալ ընդ իւր Երզնկացի Յարութիւն վարդապետն, որ պատմէ զայսոսիկ, ե դպիր մի Կարապետ ազգակից իւր, և եկն եհաս ի վանս սուրբ Նշանի ի Սեբաստիայ ի յունիս 25, յաւուր երկուշաբթի. ՌՃՀԱ 1722. ի վարդավառի պահոցն ե լուեալ քաղաքացւոցն զլրոհ տուեալ միմեանց եկին ի տեսութիւն նորեկ առաջնորդին, ե մեծաւ սիրով ընկալան զնա իբրե զառաքեալ յԱստուծոյ։ Զկնի քանի աւուրց դարձեալ եկին ի վանս ե յանձնեցին զգահս կարասիս վանուց թէ եկեղեցական սուրբ անօթք, և թէ արտաքին եղեալք գրով վաւերական նոր դիտին իւրեանց։

Այս Առաքել վարդապետ ե արհի եպիսկոպոսն յօրէ յորմէ հետէ եղև առաջնորդ երկնէր ամս իբրև հինգ ի սրտի իւրում վասն շինութեան և նորոգութեան սրբոյ մենաստանիս... ուստի ժողովեաց առ ինքն զիշխանս քաղաքիս, և նոքօք հաճեցոյց զդատաւորն և էառ զարգն. և առաքեալ ի Կոստանդնուպօլիս առ Թէվէքէլեան մահտեսի Յարութիւն ամիրայն և նա ժողովեալ ընդ իւր բարեպաշտ ամիրայս ժամանակին, էառ նոքօք հրաման յարքայէն, և զգիր վասն նորոգութեանն վանուց, և առաքեաց առ առաջնորդն... և ապա սկիզբն արար նորոգութեան ի սեպտեմբերի 8. և շինեաց մեծ եկեղեցւոյ զմբէթն սրբատաշ վիմօք՝ կղմտերբ և բռով, զտանիքն քարիւ՝ խճով՝ և կրով, և ամրացուցեալ սպիտակացոյց զառաստաղն, զկամարսն, զորմունսն, կառոյց յետ կոյս դասին և զերկու խորանսն յաջմէ և յահեկէ, շինեաց և վերնատունս կանանց զի ոչ գոյր յառաջ։ Նորոգեալ պայծառացոյց և զտաճար սուրբ Աստուածածնին, և շինեաց ի մէջ կամարաց համբար ցորենոյ և գարոյ։ Սպիտակացոյց զտանիք և զմէջ եկեղեցւոյ սուրբ Կարապետին, և զկատարս յոջակոգմեան մաքրեաց, և կանգնեաց ի նմա սեղան յանուն սրբոյն Գրիգորի

Հուսաւորչին մերոյ։ Կերտեաց և վայելուչ առաջնորդարան կրկնայարկ. և կից նմին մառան, գինետուն, և ընդսենեակս միաբանից հանդէպ միմեանց, ն առաջի նոցա պարտէզ ծաղկանց փոքր. Նորոգեաց և բարձրացոյց և զպարիսպն շուրջանակի։ Եւ հազիւ աւարտեաց զշինուածն ի լրման միոյ ամի. յորում աւուրն հինգ հարիւր գործաւորք աշխատէին. ծախելով ի նմա քսակս իբրև քսան, բաց ի նպաստից զոր ընկալաւ ի վիճակէն. վասնզի քաղաքացիքն յաւուրն համարուեստ մի բերէին եղ մի՝ հաց, բրինձ, եայլն. և կերակրէին զաշխատաւորսն, և ինքեանք աշխատէին մինչև ցերեկօյ, և երեկօյին միաբանեալք ոմանք հինգ և ոմանք տասն մշակաց վարձս տային և գնային, և ի միւսում աւուր այլ համարուեստքն գային, մինչև յաւարտիլ շինուածոյն. Թուի թէ աստի մնացեալ է սովորութիւն համարուեստից՝ ամենայն ամի գալ ի սուրբ վանս և մատաղ մատուցանել և այլն։ Եւ բոլոր գիւղականքն ամենայն տուն մի կամ երկու սայլ գերան և զայլ փայտս շինուածոց բերէին։ Յետ այսորիկ բազմացոյց զեկեղեցականս. և կանոնեաց նոցա հանապազօր կանխել ի պաշտօն տեառն սաղմոսերգութեամբ։ Առատացոյց զլուծս զոմշոց և եզանց, և ջոկս ոչխարաց և այծեաց և ելից զսուրբ վանս բարութեամբ հարկաւորօք ի փառս Աստուծոյ, և ի պատիւ ամենազօր սուրբ Նշանի նորա։ Ի թուին ՌՃՀԷ 1728.

Եւ յետ երից ամաց իբրև ետես եթէ անհնար լինի վճարումն պարտուցն նպաստիւք վիճակիս, ել Առաքել եպիսկոպոս անձամբ ի սրբոյ վանիցս և գնաց ի Կոստանդնուպօլիս առ ի դարման դեղոյ մատուցանել պարտուցն, և իբրև եհաս անդ ծագեցաւ խռովութիւն մեծ ի մէջ այլազգեացն, որոց գլուխ ամբարձեալ կորատեցին զփոխարքայ Իբրահիմ բդեշխն. և իջուցեալ զսուլթան Ահմէտ յաթոռոյն եդին ի տեղի նորին զեղբօրորդի նորին զսուլթան Մահմուտ. և նա անողորմ կոտորումն արարեալ խաղաղացոյց զաղմուկն ապստամբութեան. ի թուին ՌՃՁ 1731։

Եւ ապա Առաքել արքեպիսկոպոսն շրջագայեալ ի սենեակս լումայափոխից, յիշխանս, և ի փռունս, յայլ տեղիս. և գումարեաց նպաստս յանուն սրբոյ վանիցս, որով վճարեաց զպարտսն և ետ շինել զմի պատուական զգեստ եպիսկոպոսական թագիւ և այլովքն. և զանազան ոսկեղէն և արծաթեղէն զարգիւք և բազում յիշատակօք դարձաւ և եկն ի սուրբ վանս։

Ի սոյն ժամանակի նստէր ի վանս սուրբ հրեշտակապետի ուրոյն առաջնորդութեամբ Սեբաստացի Աստուածատուր վարդապետի որդի Եղիազար վարդապետն՝ այր վեհանձն և ճոռոմաբան. սա ի նախանձ բարի շարժեալ՝ և խորհրդակցութեամբ Առաքել եպիսկոպոսի ետ բերել զհրամանագիր յարքունուստ, և սկսաւ շինել զվանս սուրբ հրեշտակապետի յունիս 3, և նորոգեաց զգըմբէթ զտանիսն և զորմունսն. սպիտակացոյց և զմէջն. և կանգնեաց զերկու սեղան յաջմէ և յահեկէ որ ոչ գոյր. շինեաց և ժամատունս և տնտեսատունս՝ և առանձին սենեակս բոլոր միաբանից և ուխտաւորաց, և տեղիք անասնոց, և ծածկք կերակրոց. և ի լրման ամին կատարեցաւ շինուածքն ամենայն։ Եւ բաց ի նպաստից քաղաքիս և գիւղօրէից՝ մնաց և յոլով պարտս ի վերայ

վանիցն. վասնորոյ գնաց Եղիազար վարդապետն ի Կոստանդնուպօլիս. որպէս և ծանարտակ իշխանացն ցուցանէ, 71 կնքով, որ առ Կոլօտ Յօհաննէս պատրիարքն դրեալ էին. և անդ վճարեաց զպարտսն. և բազում ոսկեղէն և արծաթեղէն զարդուք և յիշատակօք դարձաւ և եկն ի վանս իւր։

Յետ այսորիկ առանձին առաջնորդ սուրբ Անապատի սերաստացի Յակոբ վարդապետն, որ մականուամբ Գալխճի կոչիւր ծերացեալ էր յոյժ, և թողլով զվանս կայր ի քաղաքի և հայթայթէր զապրուստ իւր. ոչ ինքն կար ունէր, և ոչ ումեք թողոյր տիրել վանուց. վասնորոյ և վանքն սկսաւ քայքայիլ. ուստի ժողովեալ իշխանաց քաղաքիս, և կոչեալ զՅակոբ վարդապետն ասեն. դու այր ծեր ես. և ոչ կարես տիրել վանքին. եկ արդ հրաժարեաց, ենիստ ուր և հաճիս, և մեք տամք քեզ կերակուր և հանդերձ. և զԱնապատն տացուք միում ումեք զի շինեսցէ. և նա յետ բազում պատճառաբանութեանց հաճեալ ընդ այն, ասաց կամք ձեր եղիցի ես ես ձեր ծերն եմ։ Եւ յայնժամ գումարեալ իշխանաց ի միասին եկին առ Առաքել եպիսկոպոսն, և բազում բանիւք հաճեցուցեալ զնա յանձնեցին նմա զսուրբ Անապատն ի սեպտեմբեր 8. թափուր և ունայն ի զգեստուց և յանօթից. խարխարեալ և քայքայեալ. եօթն հարիւր դահեկան պարտեօք, և այնուհետև առաջնորդութիւն սուրբ Անապատին անկաւ ընդ իշխանութեամբ արքեպիսկոպոսին սրբոյ Նշանի. զոր ի կողմանէ նորին նստի անդ տեղապահ մինչև ցայսօր ժամանակի։ Եւ ապա վճարեալ զպարտսն, թափեաց ի ձեռաց այլազգեացն զարտորայսն. և զջրաղացսն, և գրեթէ նաև զվանքն ևս. և յետ այնորիկ սկսաւ խորհիլ վասն շինութեան. որոյ վասն առաքեաց զԱնդրէաս վարդապետն ի Կոստանդնուպօլիս յանձնարարական գրութեամբ, և ոչ եղև հնար առնուլ զհրամանագիր յարքունուստ։

Եկն ապա Ապտի փաշայի որդի Ալի բդեշխն իշխանութեամբ ի քաղաքս, և ի դրան նորին յառաջիկայ էր յոյն ոմն Ստեփան անուն, Թերճիման պէկ կոչեցեալ. ի ձեռն դորին հաճեցուցեալ զբդեշխն էառ զհրամանագիր շինութեան սուրբ Անապատին։ Եւ եկն Թերճիման պէկն հրամանաւ բդեշխին. և դրեաց զքեֆշն՝ սուրբ Անապատին ըստ կամաց Առաքել արքեպիսկոպոսին ՌՃՂԱ 1742. ի մայիս 6 ին։

Եւ ապա մայիս 7. յաւուր տօնի երևման խաչին սկսաւ շինութիւն սուրբ Անապատին. և կանգնեաց զպարիսպն շուրջանակի. շինեաց զգմբէթ տաճարին՝ որ անկեալ էր. և դեղին փայտիւ ծածկեալ նորոգեաց և զտանիսն. զաւաստաղն. զկամարսն, զյատակսն, նաև զգաւիթն բոլոր. և սալատակացոյց։ Շինեաց և առաջնորդարան կրկնայարկ զոյգ զոյգ գեղեցիկ սենեկօք, լայն և ընդարձակ մեծամեծ լուսամտիւք. և առաջի նորա պարտէզ և բուրաստան. և կից նմին մարագ յարդի և տեղիք անասնոց, և ի վերայ նոցա սենեակք ուխտաւորաց. շինեաց և տնտեսատուն և մառան ներքոյ և, արտաքոյ և կից նմին դարձեալ սենեակք ուխտաւորաց. և ի հարաւակողմն եկեղեցւոյն սենեակք միաբանից. զոր ի լրման միոյ ամի աւարտեաց զշինուածն ամենայն։ Եւ վերակացուք այսմ էին միաբանք սուրբ Նշանի. Եզնկացի Յարութիւն վարդապետ, որ պատմէ զայսոսիկ. կարմրկացի Կարապետ վարդապետ, Ուռհայեցի Սահակ վարդապետ, Գուգտանցի Անդրէաս

վարդապետ. սեբաստացի Թօմաս վարդապետ, Եւդոկիացի Սաեփաննոս վարդապետ, և հողդարցի տէր Նիկողայոս եայլն։ Եւ զի կարի դառնապատ և վշտաշատ ժամանակի եղև այս շինութիւն, վասն զի էր սով սաստիկ. և պատերազմ այլազգեաց ընդ պարսից իբրև զհուր բորբոքեալ. վասնորոյ և բազմութիւնք դաժանագոյն զօրացն երթ և եկս արարեալ, գրեթէ լափէին. կլզէին և խածրէին զգիւղ և զքաղաք. և նեղեալ տառապեցուցանէին զազգս մեր հարկապահանջութեամբ. բայց ժողովուրդ քաղաքիս՝ զնեղութիւնս իւրեանց յետս թողլով՝ յաւուրն համարուեստ մի, բերէին եզ մի, հաց և որիզ և այլն. և կերակրէին զգործաւորսն և երեկոյին, ոմանք հինգ և ոմանք տասն մշակաց վարձս տային և գնային, մինչև յաւարտիլ շինուածոյն . ՌՃՂԲ 1743։

Ի Թուին ՌՃՂԵ 1746 եկն ի Սեբաստիա հեքիմ օղլի Ալի բդեշխն անուամբ սպարապետութեան. և ժողովեաց առ ինքն զբազում զօրս իբրև զերկու հարիւր հազարս. զի երեսուն երկու երկդուզեան նախարարք եկին. Թող զայլսն. եղին և ղարուսուզ կոչեցեալ պիղծ լէվէնտքն իբրև զտասն հազար հանդերձ զօրագլխովք իւրեանց. որք էին կէնճ Ալի. կենճ Օսման. Կէմալմազ. Ավշար օղլի և այլն։ Եւ բանակեցան՝ մօտ իրերաց յեզր քաղաքիս. և ամենից սոցա զպիտոյսն սպարապետն հոգայր. բայց ոչ շատացեալ պիղծ լէվէնտքն անկանէին ի դիւղօրայս՝ և բազում վնաս գործէին. որ և ի գիշերի միում գնացեալ ի գիւղն Բոզնիկ բազում ոճրագործութիւնս աբարին. զկանայս յղացուցին, զկոյս աղջկունս ապականեցին. և ինքեանք եկեալ պատմէին ի քաղաքն. և գիւղօրայքն ամենայն փախուցեալ եկին ի քաղաքն, բայց սուրբ վանս շնորհիւ տեառն, և զօրութեամբ սրբոյ Նշանին մնաց անյաղթ և անվնաս ի տեղւոջ իւրում. դրունք բաց և եկեալքն կերակրեալ գնային։ Եւ յետ քանի մի ամսոց կոտորեցին աստ ի Սեբաստիայ զամենայն լէվէնտսն, և գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր. Թուի թէ սպարապետութիւնն, և զօրաց գումարումն ամենայն վասն լէվէնտիցն էր. որովք ջնջեալ բարձան զաղիր և չար գազանք ի միջոյ։ Յաջորդ ամի յապրիլ 14 յաւուր զխատման տօնի սրբոյ Կարապետին, ժամանեալ հրաւէր երկնային կոչմանն, հանգեաւ առ յոյսն բնաւից տէր Առաքել եպիսկոպոսն նահանգիս Սեբաստիոյ. առաջնորդ լեալ ամս իբրև 25. և եդաւ պատուով ի տապանի ի սուրբ վանս ի գաւթի սուրբ Նշանի մեծի եկեղեցւոյն. ի հիւսիսակողմն դրան սրբոյ տաճարին, յետագայ արձանագրութեամբ։

Արձանագրութիւն Առաքել վարդապետին

Այս է տապան հանգստեան Առաքել վարդապետին, որ էր Ակնայ գիւղէն Կամըրկապու, և եղև առաջնորդ սրբոյ Աթոռոյս. որոյ աւուրս եդև նորոգումն սրբոյ տանս այս վերստին. և յաջորդեալ ամս 26. և հանգեաւ առ Քրիստոս ի Թուականին մերոյ ՌՃՂԶ 1747։

Եղիազար

Յետ վախճանի Ակնեցի Առաքել արքեպիսկոպոսի, միաբանեալ քահանայից, իշխանաց և ժողովրդոց վիճակիս եառուն բերել զարքունական հրամանագիր և զպատրիարգական կոնդակ տես-

չութեան. յանուն սրբոյ հրեշտակապետի ուրոյն առաջնորդ Սեբաստացի տէր Եղիազար արքեպիսկոպոսին. որ և նա եդ ի տեղի իւրում ի վանս սուրբ հրեշտակապետի ղթոռն իւր զԱստուածատուր վարդապետն, և ինքն եկեալ նըստաւ յաթոռ տեսչութեան ի վանս սուրբ Նշանի. և զի էր սա այր մեծագործ և վեհանձն, ուստի յաջորդելն իւրում առժամայն ձեռն էարկ ի հիւսիսակողմն պարսպի մենաստանիս. և իբր տասն կանգնաչափ ի ներքս էառ ի կողէն, և ետ շինել ծայրէ ի ծայր հաստատ և բարձրագոյն քան զառաջինն. և յաւելուածոյ պարսպին շինեաց երկու մեծամեծ սենեակս ի ներքոյ և ի վերոյ՝ իբր առաջնորդարան ինքեան։

Ցաւուրս սորա ի թուին ՌՃՂԸ 1749 ի մարտի 26. յաւուր կիւրակէի սրբոյ զատկին Պէղիրճու արտի Պօնտոի որդի Յովսէփ նահատակեցին ի Սեբաստիայ։

Եկն ի Վիտինու Զառայ օղլի Մեհմէտ նախարարն ի քաղաքս յօգոստոս 8. և սպան զՔէնան օղլին. և կարի յոյժ տառապեցոյց զազգս մեր. սաստիկ հարկս դնելով ի վերայ, և ծանր ծանր տուգանս առնելով, որպէս Քիպարեան մահտեսի Յօհաննէսէ 8 քսակ, և ճոն մահտեսի Եսայիէն 7 քսակ. եայլ աւելի։

Ի մեծի պահոց յառաջին շաբթոյ՝ յաւուր տօնի սրբոյն Թէոդորոսի զինաւորին. ի 18 փետրվար ամսոյ. հասեալ զրաւ կենաց տեառն Եղիազարու արհի եպիսկոպոսին. և փոխի յանանց կեանս ի ՌՄԳ 1754 թուականութեանս. և եդաւ մարմին ի շիրմի ի վանս սրբոյ Նշանին. հուպ Առաքել արհի եպիսկոպոսին Ակնեցւոյ։

Դիւան Հ. Պատմ. փ.,

Տապանագիր Եղիազար արքեպիսկոպոսի

Այս է տապան մարմնոյ տեղի, ծերունափայլ դիտապետի. Եղիազար քաջ հռետորի, որ է տեղեաւ Սեբաստացի. հովիւ ընտրեալ սոյն նահանգի, սրբոյ ուխտիս տնտես բարի, որ և հանգեաւ մերոյ թվի. ՌՄԳ 18 փետրվարի։

Կտրապես

Զկնի վախճանի Եղիազար արքեպիսկոպոսի նստաւ յաթոռ դիտողութեան Ակնեցի Կարապետ վարդապետն, որ էր ազգական և աշակերտ տեառն Առաքել արքեպիսկոպոսին, յաւուր աշխարհամատարան կիւրակէին յապրիլ 17. ի ՌՄԳ 1754 թուին։

Եւ եղև զի եկն սաստիկ անձրև յորդառատ յօգոստոս 13 ի ՌՄԶ 1757. և ել հեղեղ ջուրց. և ուղխ ողողանաց ի բազում տեղիս և յոլով վնասս գործեաց յարտորայս և ի կալս, վասնորոյ եղև սով սաստիկ ի Սեբաստիայ և յոլով տեղիս, մինչև մէկ քիլէ ցորեան 30 դահեկանի վաճառել. մէկ քիլէ գարին 20. և մէկ քիլէ լազուտ այն է տառու 20 դահեկանի և ոչ դըրամնիւր ուստի բազումք մեռան ի սովոյն այնմիկ։

Ի մէջ այս խստագոյն սովոյս՝ յայտնեցան բազում անդուռն լէվէնդք աւելի քան զերկու հազար ի կողմանս վիճակիս Սեբաստիոյ, որք սփռեալք ի գիւղօրայս խօշտանգանօք կեղեքէին զխղճալիսն՝ և անողորմաբար տանջելով պահանջէին ի նոցանէ զինչս. և ի չկարել զդէմ ունել բազմավիշտ տառապանացն՝ փախստական եղեն աստ և անդ ի քաղաքն և ի մեծամեծ գիւղօրէս առ ի ապրեցուցանել զոնէ զան-

ձինս իւրեանց ի բռնութենէ նոցա։ Վասնորոյ ուր ուրէք գտանիւր շինութիւն, և այն քաղցեալ և ի յետին դասն աղքատութեան ժամանեալ։

ՌՄԷ 1758. եկն ի սոյն աւուրս հրաման յարքայէն տաճկաց առ. Ֆէզուլլահ երկզուղեան նախարարն Սեբաստիոյ՝ կոտորել զլէվէնտան, և նա թէպէտ գոլով մանուկ հասակաւ, և անընտել պատերազմի կասէր յելանելոյ, բայց յետոյ զօրացեալ խրախուսեցաւ և հինգ հարիւր զօրօք յանակընկալ պահու եհաս ի վերայ նոցա, և կոտորեաց զամենեսեան զնոսա. մինչև սակաւ ումանք ի նոցանէ ապրեցան մազապուրծ փախստեամբ։ Եւ զգլուխս սպանելոցն առաքեաց առ. թագաւորն. և տեսեալ արքային զքաջութիւն նորին դուզ մի ևս շնորհեաց նմա, զոր ի յուլիս 25 յաւուր շաբաթի վարդավառին եմուտ ի քաղաքս։

Յաջորդ ամին, ի ՌՄԸ 1759. սուրբ Անապատի բեմի ծաղկեալ քարինք շինեցան ձեռամբ Եզնկացի Յարութիւն վարդապետին։ Սոյն այս Յարութիւն վարդապետս Եզնկացի, միաբան սրբոյ Նշանի վանիցս, հրամանաւ Կարապետ արքեպիսկոպոսին Ակնեցւոյ եկաց ռէիզ ի սուրբ Անապատն, արար զպատմութիւն սկսեալ ի մահուանէ անտի Աստուածատուր արքեպիսկոպոսի Դըմբուկ կոչեցելոյ. և յառաջնորդութենէ Առաքել արքեպիսկոպոսի մինչև ցվախճան իւր, և հասեալ յաւուրս ծերութեան հանգեաւ ի քրիստոս. և թաղեցաւ ի վանս սրբոյ Անապատին. ի հիւսիսակողմն դրան տաճարին. և շիրիմ նորա է հաւասար յատակին։

Ի սմին ՌՄԺԸ 1769 ամի գնացին զօրք քաղաքիս ի պատերազմ ընդդէմ ռուսաց. և բազում չարիս գործեցին. և անհնարին վիշտս հասուցին ազգիս մերոյ. ըսպանին Մռի տղայ մահտեսի Յարութիւն ի Պիզիրճու արտն։

Կեցեալ յառաջնորդութեան վիճակիս Սեբաստիոյ Ակնեցի Կարապետ արքեպիսկոպոսի ամս իբրև քսան, և ժամանեալ յաւուրս ծերութեան փոխեցաւ առ քրիստոս. և եդաւ ի տապանի ի վանս սրբոյ Նշանի ի դաւթի անդ մեծի եկեղեցւոյն, հուպ Առաքել և Եղիազար արհի եպիսկոպոսաց ի 29 յունվարի ի ՌՄԻԳ 1774։

Բ. Յակոբ

Յետ վախճանի Կարապետ եպիսկոպոսի, ի մի ժողովեալ գլխաւորաց քաղաքիս՝ և արարեալ բազմակնիք ծանարտակս՝ առաքեցին առ Զաքարիա պատրիարգն. և առ մեծամեծս ազգիս մերոյ, և խնդրեցին զայր ոք խոհական և իմաստուն՝ վկայեալ ի գործս բարութեան, ընտրել և կացուցանել ինքեանց առաջնորդ, էր ընդ այն ժամանակս ծաղկեալ Արմտանցի Յակոբ վարդապետն. այր վեհանձն և ազատաբարոյ, աշակերտ վերատեսչին Պուրսայու Սամուէլ արքեպիսկոպոսին (աշակերտի Կոլոտ Յօհաննէս պատրիարգի). զսա ընտրեալ կարգեցին տեսուչ նահանգիս մերոյ. և յետ աւուրց ինչ՝ ետուն ի նա զհրովարտակն արքունական, և զկոնդակն պատրիարգական, և ուղարկեցին զնա ի վիճակն իւր, ելեալ ի ճանապարհ անդ գայ հասանի ի նահանգս Սեբաստիոյ, և լուեալ քաղաքացւոցն բերկրեալ զուարճացան յոյժ յոյժ և զգոհ տուեալ միմեանց ընդ առաջ ելին, և վրան հարեալ ի Կամար կոչեցեալ տեղին արարին բազում խրախութիւնս. և ապա բազմեցուցեալ զնա ի պալարակապ ահի

պարանոց երիվարս՝ զոր ընդ ինքեանս ածեալ էին· ե այնպիսի շքեղ փառօք մուծին ի հրաշափառ վանս սրբոյ Նշանի· յաւուր երկուշաբթի ի վարդավառի մեռելոցին ի յուլիս 28 ՌՄԻԳ 1774։

Եւ զկնի երից ամաց նորին տեսչութեան համակամ հաճութեամբ իշխանաց ե ժողովրդոց· բազմակնիք ծանրատակաւ գնաց Յակոբ վարդապետն ի սուրբ Էջմիածին առ Սիմէօն կաթողիկոսն ամենայն հայոց· ե առնու ի Նրմանէ զեպիսկոպոսական բարձր աստիճան յաւուր կիւրակէի գալստեան հոգւոյն սրբոյ· ի յունիս 4 ի ՌՄԻԶ 1777։

Եւ զՅակոբ Արքեպիսկոպոսն կացոյց տեսուչ ի վերայ բոլոր նահանգիս Սեբաստիոյ· ե դրեալ զպատրիարգական կոնդակ ի սեպտեմբեր 8· ես և ի 28, ետ ի նա, յորում կոչէր զնա ընդհանրական առաջնորդ սուրբ Նշանի, սուրբ Հրեշտակապետի, սուրբ Անտապատի, սուրբ Գէորգայ, ե խնդրակատար սուրբ Սստուածածնի վանօրէից· ես ե քաղաքի սուրբ Աստուածածին և սուրբ Սարգիս եկեղեցեաց· և բոլոր վիճակիս· զոր ընկալեալ դարձաւ ի վանս իւր, ե սկսաւ հովուել զհօտն իւր բանաւոր։ ՌՄԻԸ 1779։

ՌՄԼ 1781· ետ բերել հրաման յարքունուստ· ե նորոգեաց զվանս սուրբ հրեշտակապետի· զարտաքին պարիսպն մեծի սրահին· և զերկու կարգ ուխտաւորաց 19 սենեկօք բոլորովիմբ· և ի ներքոյ նոցին զտեղիս անասնոց· և երկփեղկեան դրան կողմի պարիսպն, և բոլոր ՙփտեալ և խախտեալ տեղիսն մենաստանին նորոգեաց՝ իբրև երեսուն քսակ դրամս ծախելով ի նմա։

Յայս ՌՄԼ ամի սաստիկ խռովութիւն անկաւ ի մէջ այլազգեաց, որք հանեալ զսանճախն, և միաբանեալ այրեցին զապաբանս քաղաքապետին, որ կոչիւր Սարօղլի։ Յետ այսորիկ ձեռն էարկ և ի սուրբ Նշանի վանս, և շինեաց ի հիմանց արևմտեան կողմն պարսպին. և զերկաթեայ միափեղկ դուռն. և զմեծ հասարակաց սեղանատունն՝ որ ոչ գոյր յառաջ. և զսենեակս ուխտաւորաց ի վերոյ և ի ներքոյ. և զտեղիս անասնոց փոքր, և զամենայն խաթարեալ և զաւերեալ տեղիս մեծի մենաստանիս նորոգեալ շինեաց. ծախսելով ի նմա գրամս աւելի քան զքսան քսակ։

ՌՄԽ 1791 յայսմ ամի յաւուր աւագ հինգշաբթի եկն ի Սեբաստիայ անթիւ զօրօք Ջափան օղլի կոչեցեալ Սիւլէյման պէկն՝ առ ի վարել զսպայակոյտ զօր քաղաքիս ի պատերազմ. և օթեցուցին զօրս նորին ի բնակութիւնս հայոց և այլազգեաց. և յոլով նեղութիւն և վիշտս հասուցին ազգիս մերոյ. զի դարձաւ տօն զատկի նոցա ի սուգ. և յետ վեց աւուր գնաց ի տեղի իւր։

ՌՄԽԶ 1797. տրօք բարեպաշտ ժողովրդոցն Սեբաստիոյ շինեաց Յակոբ արհին զհասարակաց մեծ գոմն. և զմի կարգ կարդ միաբանից սենեակոն. զյարդանոցն, զփայտանոցն, և զամենայն փտեալ և զխարխալեալ տեղիսն նորոգեաց՝ ծախելով ի նմա ՙիբրև քսան քսակ դրամս։ Եւ այսմ շինութեան վերակացուք էին միաբանք սուրբ ուխտիս. այսինքն Սեբաստացի Սահակ վարդապետ. Յովակիմ վարդապետ. Գրիգոր վարդապետ. Գաբրիէլ վարդապետ. Զաքարիա վարդապետ. Յարութիւն վարդապետ. Միքայէլ վարդապետ. Պօլսեցի Մինաս վարդապետ. Թէքիրտաղցի Գրիգոր վարդապետ. և երկու սարկաւագունք Յակոբ և Յովհան, զոր յետ քանի մի ամսոց, յաւուր տօնի Գիւտ խաչին ի հոկտեմբերի 25, զնոսա

ևս ձեռնադրեաց աբեղայ զՅակոբն անուանելով Կարապետ վարդապետ. և զՅօնանն կոչելով Յօհաննէս վարդապետ։[122]

ՌՄԽԶ 1797 ի սոյն ամի, յունիս 8. եկն յոլով մարախ. և հարեալ յաղարա վարեաց զարտորայս նահանգիս Սեբաստիոյ. վասնորոյ եղև սով սաստիկ, որ մի քիլէ ցորեան երեսուն և հինգ դահեկանի վաճառեցաւ։

Յաջորդ ամի ՌՄԽԷ 1798 կոյր Իւսուֆ ըղեշխն եկն ի Սեբաստիայ և անցեալ գնաց ի մեծն Պօլիս. և եղև փոխարքայ՝ և ետ զուղ Ջառայ օղլու Ռէճիպ պէկին. որ բազում վիշտս և վնասս հասոյց ազգիս մերոյ. զի բաց ի ծանր հարկապահանջութեանցն ոմանց հազար դահեկան, և ոմանց հինգ հարիւր տուգանս առնէր. ձեռն էարկ և յեկեղեցիսն. և էառ տասն և հինգ քըսակ դրամ տուգանս. և ապա գնաց յԵգիպտոս ի պատերազմ ընդդէմ Գաղիացւոց. և յետ քանի մի ամաց սատակեցաւ. և բարձաւ չարն ի միջոյ։

Յետ վարելոյ զպաշտօն առաջնորդութեան նահանգիս Սեբաստիոյ տեառն Յակոբայ արհի եպիսկոպոսին զամս իբրև 25. ժամանեալ եհաս յաւուրս ծերութեան, որ ոչ կարէր բնաւ յոտին կալ. միանգամայն և ձանձրացեալ զբազմաց տեսչութեան և բազմավիշտ տառապանացն՝ կամեցաւ հրաժարիլ ի տեսչութենէ. վասնորոյ ժողովեալ զմեծամեծս քաղաքիս, և առաջի արար նոցա զկամս իւր. որք յակամայս ընկալան զբան նորա՝ և գրեցին ծանուցակս՝ զոր նախ կնքեաց ինքն և ապա այլք. և առաքեցին ի մեծն Պօլիս առ Ջաքարիա պատրիարգն. և նա կարգեաց տեսուչ նահանգիս զգաղատացի Գրիգոր արքեպիսկոպոսն. ի ՌՄԽԸ 1799։ Ի սոյն ամի անկաւ ժանտախտ ի քաղաքս և բազում բանաւոր տունկս հարեալ թառամեցոյց։ Յետ երկու ամաց հրաժարման տեառն Յակոբայ ի տեսչութենէն լցեալ զժամանակ պանդխտութեան փոխի առ Քրիստոս, և մարմինն ամփոփի ի շարս հարցն Սեբաստիոյ, յաւուր աւագ երեքշաբթի եղև վախճան առն երանելոյ. ի թուին ՌՄԾ 1801 ի մարտի 19։

Իր մահարձանի պատճէն

Յայսմիկ շիրմի ներամփոփի՝ Յակոբ արհին մեր գերարփի. Ասքանազեան մերոյս ազգի՝ անխոնջն սատար ամբիծ հոգի. կրօղն ի մտի զբան մատենի՝ զորովաբանն ի յատենի, որ էր տեղեաւ յԱրմըտանցի, ուխտիս սըրբոյ դէտ մտացի.

Բարւոք մահուամբ սա վախճանի ի ՌՄԾ թուականի, մարտ 19։

(Հեղինակ ոտանաւորիս է Սեբաստացի Յօհաննէս արքեպիսկոպոսն, ձեռնասուն աշակերտ Յակոբայ արհւոյն)։

Բ. Գրիգոր

Յամի ՌՄԽԸ 1799 ի փետրվարի 12, եկեալ Գրիգորի Գաղատացւոյ արքեպիսկոպոսի ի վանս բազմեցաւ ի գահըն եպիսկոպոսութեան, և ի յաջորդ ամին սպիտակացոյց զեկեղեցին սուրբ Աստուածածնի որ ի սուրբ մենաստանիս՝ և զանազան նկարուք գեղագործեալ ծաղկեցոյց. և զխաչկալն նորոգ շինեալ. և ոսկեզօծեալ շքեղազարդեաց.

ՌՄԾ 1801. յետ վախճանի տեառն Ղուկասու սրբազան կաթողիկոսի, հաւանութեամբ ընդհանուր ազգին ընտրեցաւ ի տեղի նորին Դանիէլ արքեպիսկոպոսն, որ էր պատրիարգ ի մեծն Պօլիս. զոր յետ բազմադիմի վրդով-

մանց և խռովութեանցն՝ և աքսորանաց նորին յԵւդոկիայ. և մահուան Յովսէփ անուանեալ կաթողիկոսին, կրկին հրաւիրակս առաքեալ յէջմիածնէ կոչեցին զնա ի կաթողիկոսութիւն, վասն որոյ յուղի անկեալ եկն եհաս ի Սեբաստիայ ի հրաշակերտ վանս սրբոյ Նշանի. և եկաց աստ զաւուրս երիս. և ապա ուղևորեալ ընդ նմա Գրիգոր եպիսկոպոսն մինչև ցԲինկան. և անտի դարձաւ ի վանս իւր և Դանիէլ ընտրեալն ի կաթուղիկոսութիւն գնաց դէպ ի սուրբ Էջմիածին, և հասեալ ի Պայազիտ լուաւ թէ Թիֆլիզեցի Դաւիթ եպիսկոպոսն օծեցեալ և նստեալ է կաթողիկոս ի սուրբ Էջմիածին. վասն սրայ գնացեալ նստաւ յԵրեք խորան կոչեցեալ մենաստանն, և անտի դրեալ ծանոյց ազգիս մերոյ զամենայն հանգամանս գայսոսիկ։

ՌՄԾԱ 1802 ի սմին ժամանակի՝ եկն Ալէտին բդեշխն Սեբաստացի իշխանութեամբ ի քաղաքն Սեբաստիայ, և սպան զՊուլուտ կոչեցեալ նեռն. և զպիղծն Համզան, որք յոյժ նեղիչք էին ազգիս մերոյ։ Յայսմ ամի փետրուար 3, ընկալաւ զիշխանութիւն քաղաքիս Սեբաստիոյ Յուսէյին բդեշխն Ֆնտըխ կոչեցեալ, և զի ի վաղուց հետէ հնչէր համբաւ անգութ և մարդախոշխոշ բարուց նորին. վասնորոյ միաբանեալ քաղաքացւոցն զինեցան ընդդէմ նմին հայք և այլազգիք. և ոչ թողին նմա մտանել ի քաղաքն. և մինչդեռ պատաղէր առնուլ զքաղաքն ամենից դիմաց գանդատաւորք յորդեալք ի մեծն Պօլիս զունկն արքային գրգէին. յորմէ ցասուցեալ արքայի հրաման եհան հատանել զգլուխ նորին. վասնորոյ զօր բազում ժողովեալ պաշարեցին զնա ի Նոր խան գիւղն, և յետ իբրև երկու ամսոց հատին զգլուխ նորա յապրիլ 12 ի ՌՄԾԱ 1802։

Ի բազմավրդով ժամանակիս անհամար զօրացն գումարելոց, յոլով վիշտս և տառապանս կրեցին քաղաքացիք, և գիւղականքն, մանաւանդ սուրբ մենաստանս. և Գրիգոր արքեպիսկոպոսն. վասն զի իբրև յիսուն հեծելազօր հրամանաւ քաղաքապետին եկեալ նստան ի սուրբ վանս առ ի պաշտպանել զսա ի թշնամեաց, զորոց զպիտոյսն և զերիվարացն հոգաց դէտն՝ իբրև ամիսս երիս։ Մինչչև էր ոգի առեալ Գրիգոր Արքեպիսկոպոսի յոգնադիմի վշտագրութեանց աստի, ժամանեալ հասին առ նա բազում գրութիւնք աստի և անտի. ի Դանիէլ ընտրեցեալ կաթողիկոսէ, ի մեծէն Պօլսոյ պատրիարգ Գրիգոր արքեպիսկոպոսէ, ի Փիլիպպոս և Դասրար ամիրայից, որք էին հատավաճառք միականի Իւսուֆ փոխարքային. և էին յայնժամ երևելի ի մէջ ազգիս. և խրոխտք յոյժ, և յայլոց բազմաց, որք հարկադրէին նմա՝ գնալ յԵրեք խորան կոչեցեալ մենաստանն ի հանդէս օծութեան Դանիէլ կաթողիկոսին. ընկալեալ Գրիգորի եպիսկոպոսին զայսոսիկ գրութիւնս. և ակամայ կամօք ել ի Սեբաստիոյ յապրիլ 27. և գնաց անդր ուր ժողովեալ բազմութիւն եպիսկոպոսաց, վարդապետաց և այլոց ժառանգաւորաց եկեղեցւոյ, օծին զԴանիէլ արքեպիսկոպոսն՝ ի կաթողիկոսութիւն ամենայն հայոց։ Եւ զի էր այս Գրիգոր արքեպիսկոպոս, այր ճոռոմախօս, և ծանօթ մեծամեծաց ի Կոստանդնուպօլիս, վասնորոյ հարկեալ Դանիէլ կաթողիկոսի յանձնեաց ի սա զկոնդակսն անդրանիկ օրհնութեանց. և զյատուկ գրեանսն՝ որ առ այլ և այլ անձինս ի մեծն Պօլիս. և յամենայն քա-

ղաքս, զոր ընկալեալ եւ ի ճանապարհ և ժամանեաց ի Բիւզանդիայ. և ընկալեալ եղե մեծաւ սիրով ե պատուով ի Գրիգոր պատրիարգէ ե ի կուսակցացն Դանիէլ կաթողիկոսի, որ և ուղերձ ե պարգե արարին նմա արքայական հրամանաւ ե պատրիարգական կոնդակաւ զառաջնորդութիւն նահանգին Գաղատիոյ ի սեպտեմբեր 10։

Ու ապա Գրիգոր արքեպիսկոպոս Սեբաստիոյ ե իբր տէր Գաղատիոյ ընկալաւ ընթեռնուլ տալ յեկեղեցիսն զօրհնութեան կոնդակ Դանիէլ կաթողիկոսին, ե յիշել տալ զանունն ի սուրբ պատարագին. ե եղե իբրե գնաց ի Ղալաթիայ՝ յեկեղեցի սուրբ Լուսաւորչին, սրիկայք ոմանք խորհրդով կուսակցացն Դաւթի կաթողիկոսին՝ պատառեցին զկոնդակն... վասնորոյ մեծ վրդովումն ե սաստիկ խռովութիւն անկաւ ի մէջ ազգիս ի Կոստանդնուպօլիս. ե յետ աւուրց ինչ աքսորեցին զԳրիգոր պատրիարգն ի սուրբ Էջմիածին առ Դաւիթ կաթողիկոսն. և եդին ի տեղի նորին պատրիարգ ի մեծն Պօլիս զՅօհաննէս արքեպիսկոպոսն, որ երկու ամ յառաջ նստեալ ես էր պատրիարգ ե ապա աքսորեալ յԵւդոկիայ։ Եւ մինչ չե ես էր եկեալ նա յԵւդոկիոյ՝ դէտ Գաղատիոյ Անդրէաս եպիսկոպոսն՝ նստաւ տեղապահ նմին. և զի ատելութեամբ կայր ընդ Գրիգոր եպիսկոպոսին Սեբաստիոյ՝ եհան հրաման արքունական ե ետ աքսորել զնա. ե նա անցեալ յԻւսքիւտար նստաւ. ե ծախեալ բազում ինչս ձեռնտուութեամբ ոմանց զերծաւ. ե ապա դարձ արարեալ եկն յառաջին վիճակն իւր ի Սեբաստիայ։ ՌՄԾԲ 1803։ Յաւուրս սորա շինեցաւ սուրբ Աստուածածին մայր եկեղեցին Սեբաստիոյ քաղաքին. բայց ի նորոգութեան անդ վատնեցին բազում դրամս յակամայս յուտեստ կաշառակեր դատաւորացն Հաքարու։ Ի սոյն միջոցիս եկն իշխանութեամբ ի քաղաքն Սեբաստիայ Ապումրոխ Մէհմէտ բդեշխն. այր դաժանատես ե գազանաբարոյ. սա յոլով նեղութիւնս ետ ազգիս մերոյ. խահրեաց զբոլոր վիճակս. ծանրաբեռն և անհանդուրժելի հարկս ի վերայ դնելով. ե բաց ի բազմադիմի հարկապահանջութեանցն՝ էառ 16 քսակ դրամ տուգանս ի սուրբ եկեղեցւոյս. ե 15 քսակ ի քահանայից. վասնորոյ և ևս բարդեցաւ պարտքն և բազմացաւ, և մինչ նա այսպիսի անգութ և անողորմ բարուք տառապեցուցանէր զքաղաքս, յաճախեցին վասն նորա գանգատաւորք ի մեծն Պօլիս. վասնորոյ եկն հրաման յարքայէ՝ յետ իբրև երից ամսոց, ղթուղն առին և աքսորեցին զինքն յԵւդոկիայ. ի ՌՄԾԳ 1804։

Ի ՌՄԾԶ 1807 յայսմիկ ամի ի յուլիս 21 կարգեցաւ արքայական հրամանագրաւ և պատրիարգական կոնդակաւ Գրիգոր արքեպիսկոպոս վիճակիս դէտ Գաղատիոյ նահանգին. և յօգոստոս 1 ողջունելով զժողովուրդն յուղի անկեալ գնաց յերկիր իւր ի Գաղատիայ. և յետ իբրև երից ամաց և չորից ամսոց, եւ յայցելութիւն վիճակի իւրում. և մինչ գնացեալ եհաս ի Սպարտայ՝ անդ ժամանեալ վախճան կենաց նորին փոխեցաւ առ Քրիստոս. և թաղեցաւ ի գերեզմանի անդ ի Սպարտայ Լակեդէմոն, կամ Միսիթրա քաղաքի. ի դեկտեմբեր 7 ՌՄԾԹ 1810։

Բ. Յոհաննէս, որ ինքն իսկ է պատմագիրն

Յետ գնալոյ Գրիգորի Արքեպիսկոպոսի ի Գաղատիա, ընտրեցաւ դէտ ի

տեղի նորին յԱթոռն Սեբաստիոյ Սեբաստացի Յօհաննէս րաբունին։ Առեալ սորա զհրովարտակն արքունական եւ լեալ ի Կեսարիոյ եկն եհաս աստ յօգոստոսի 23. և բազում հանդիսիւ և շքեղ փառօք բերեալ մուծին զնա ի հրաշափառ վանս սրբոյ Նշանի. յաւուր երկուշաբթի իններորդ աւուր վերափոխման սրբոյ կուսին. Ի ՌՄԾԸ 1809։

Եւ ի միւսում աւուրն գնաց առ քաղաքապետ Չափան օղլի Մեհմէտ բըդեշխն. և զգեցաւ ղլօտիկ արկանելիս պատուոյ. և էառ զհրամանագիր ըստ բնութեան հրովարտակին արքայի. տըւեալ զվղենակ լօդկին և զհրամանագրոյն իբրև հազար հինգ հարիւր դահեկանս. ընկալաւ միանգամայն և զհրամանագիր վասն շինութեան և նորոգութեան սուրբ Աստուածածին եկեղեցւոյ ներքին սրահին, և կերտեաց զայն... ի գալն իւրում եգիտ միաբան ի սուրբ մենաստանիս, տեղապահ և գործակից իւր Կարապետ վարդապետ, լուսարար Գրիգոր վարդապետ, Պուրսացի Սահակ վարդապետ, Սեբաստացի Յովակիմ վարդ., Գաբրիէլ վարդ., Զաքարիա վարդապետ, Յակոբ վարդապետ. և սարկաւագ մի Կարապետ անուն. սուրբ Հրշտակապետի ռէիզ Յարութիւն վարդապետ. և սարկաւագ մի Յակոբ անուն։ Անապատի ռէիզ Աւետիք վարդապետ, որ և տնօրինեալ հաստատեաց զիւրաքանչիւրսն ի պաշտօնս իւրեանց...

ՌՄԿԱ 1812. յետ երից ամաց տեսչութեան իւրոյ ըստ խնդրանաց քաղաքացւոցն գնաց Յօհաննէս վարդապետն ի սուրբ Էջմիածին առ ի ձեռնադրիլ եպիսկոպոս, ելեալ ի սուրբ մենաստանէն ի 21 սեպտեմբերի, և ի նոյեմբերի 6, եհաս ի մայր Աթոռն։ Եւ զի ընդ այն ժամանակս հնչէր համբաւ պատերազմի ի մէջ ռուսաց և պարսից, և անթիւ զօրք պարսիցն սփռեալ և տարածեալ էին ի շրջագայս սրբոյ Էջմիածնի, վասնորոյ յետ իբրև ինն աւուր ի տասն և չորս նոյեմբերի, ծայրագոյն քահանայապետն ամենայն հայոց տէր Եփրեմ սրբազան կաթողիկոսն մեծահանդէս նաւակատիս արարեալ ձեռնադրեաց զՅօհաննէս վարդապետն՝ արքեպիսկոպոս ի վերայ բոլոր նահանգին Սեբաստիոյ։... Եւ ի դեկտեմբեր 27 ՌՄԿԱ 1812 եմուտ ի շըքեղափառ մենաստանս սրբոյ Նշանի...

Ի ՌՄԿԲ 1813 ամին եկն իշխանութեամբ ի քաղաքս Սեբաստիայ....պս բդեշխն. այր հզօր և գազանաբարոյ, և զի ունէր զհրաման յարքայէն նուաճել զստահակութիւնս Մարաց ազգին և այլոց ոմանց, վասնորոյ բազմացուցեալ ստուարացոյց զգունդս զօրաց իւրոց յոյժ յոյժ, և հորդան տուեալ իբրև զհեղեղս յորդառատ գետոց խաղացոյց ի վերայ նահանգիս Սեբաստիոյ. որք հեղան զեղան առհասարակ ի քաղաքս և ի գիւղօրէս և ոչ բաւել բնակութեանցն բաժանեցին ի տունս տունս զզօրսն. ետուն և սրբոյ վանիցս իբրև 150 զօրս հայթայ կոչեցեալ, որք կացին մնացին աստ ի յունիս 2 յօրէ մինչև յինն յամսեան օգոստոսի. և յոլով վիշտս և բազում վնասս հասուցին սրբոյ մենաստանիս։ Եւ ի բազմութենէ զօրացն բռնացեալ սաստկացաւ և տիրեաց սովն ի բոլոր շրջակայս վիճակիս. և եղև զի վաճառեցաւ քիլէ ցորեանն 75 և աւելի ևս 85 դահեկանի, և գարին մինչև 50 դահեկանի, որ դժուարաւ և գրեթէ բնաւ ոչ գտանիւր։ Յաւել և զծանր ծանր հարկապահանջութիւնս ի վերայ ազգիս մերոյ, և որ ողբալին է ձեռն էարկ յեկեղեցիան մեր

քննութեան անուամբ, այն է (Թէֆթիշ) և այնու պատճառաւ էառ տուգանս իբրև քսան հազար գահեկանս. ետ և սուրբ վանս յայնժամ յառաջ և յետոյ տասն քսակ դրամս։ Նւ այսպէս խահ-րեալ աղարտ վարեաց զերկիրս. և սաստ-կապէս նեղեալ տառապեցոյց զազգս մեր, և ել գնաց ի վերայ մարաց աղ-գին ի Կէրկէր լեառն (այն է Աղճա տաղ և ի Հռոմկլայ) և յաջորդ ամին դարձաւ և եկն կրկին ի Սեբաստիայ և առաւել ևս քան զյառաջ մեծամեծ վիշտս հասոյց նահանգիս. և յետ իբրև 70 աւուրց ընկեցեալ յիշխանութենէ քաղաքիս, ել և գնաց իշխանութեամբ ի Կարին. և յաջորդ ամին աքսորեցաւ ի Պուրսայ, և բարձաւ չարն ի միջոյ, ՌՄԿԴ 1815։ Յետ սորա ընկալաւ զիշ-խանութիւն քաղաքիս Ղալիպ բդեշխն, այր բարեբարոյ և մեղկարնոյթ, և ի դրան նորին երևելի էր Պօլսեցի սեղա-նաւոր Յակոբ աղա Պետրոսեան, որև եղ յիշատակ ի վանս արծաթեայ կանթեղ մի։

Յայսմ ամի եբաց տեսուչ Յօհան-նէս եպիսկոպոս դերկու դպրոցս. և հաս-տատեաց վարժարան մի ի գաւթի անդ-աւագ եկեղեցւոյն, որ կառուցեալ է յանուն սուրբ Աստուածածնին իբր մայր դպրատուն. յորում կարգեաց զվարժա-պետս ի մարզել զհամրակս ի գերա-դոյն գիտութիւնս արհեստից. և կրթել զմանկունս յընթերցումն գրոց։

Ապա ձեռն էարկ լինել զանխլա-բար՝ գործակցութեամբ հարազատին իւրոյ Կարապետ վարդապետի զարբոյ նշանի զաւագ խորանի զխաչկալն. և ետ դրուագաւ քանդակուածոյ չքնա-ղատեսիլս յօրինել և ոսկեզօծեալ բազ-մերփն երանգօք վայելչատիպ գեղգե-ղափայլս ճաճանչաւորել...[123]

ՌՄԿԵ 1816. Այսմ ամի եհաս վախ-ճան կենաց սեբաստացի Զաքարիայ վարդապետին միաբանի սրբոյ վանուցս. սա էր ճարտար բժիշկ, որոյ հռչակ և համբաւ տարածեալ էր առ ամենեսեան, վասնորոյ գային և ձրի առողջութիւն զտանէին ի նմանէ...

ՌՄՀ 1821. Նւ յաւուրս այսոսիկ ծագեցաւ շփոթ մեծ և աղմուկ անհր-նարին ի մէջ ազգիս և հեստելոց վասն բանի միաբանութեան. և վասն հրաւէր սիրոյ կոչեցեալ գրքուկին, զոր ամբոխ արարեալ ոմանք յազգէս դիմեն ի պատ-րիարգարանն, առ ի հարկանել և սպա-նանել զՊօղոս (պատրիարգն) կարծե-լով զոլ զնա ի կողմն հեստելոց, և հես-տեալ, որ և զօղեալ ի մէջ ցուոց ա-ռաստաղացն՝ և հազիւ հազ մազապուրծ ճողոպրեալ զանձն ազատի ի ձեռաց նո-ցա փախստեամբ։...

ՌՄՀ 1821։ Յայսմ ամի սկսա-նիւր մարտ պատերազմի Օսմանեան տէ-րութեան ընդ պարսիկս. և հետ զհետէ լինէին մրցմունք զօրաց. զի ի կողմն Պայազիտի լինէր մարտ ինչ՝ ուր պար-տեալ զօրացն օսմանցւոց ի փախուստ դառնան. ոմանք դերի վարին, և ո-մանք մերկացեալք յարձակին։

ՌՄՀԱ 1822։ Ի սոյն ամի ի կող-մանս Կարս քաղաքի զօրքն պարսից իբր ութ հազար հետևակ և չորս հա-զար այրուձիք պաշարէին զզօրս օս-մանցւոց. որք էին պակաս քան զմի հազարն. և զաւուրս հինգ պատերազ-մեալ և ոչ ընդունելով յօգնութիւն ուստեքէ, ոչ ի բդեշխէն Կարսայ, և ոչ ի Կաբնոյ, և ի պակասիլ վառօթոց անձնատուր լինէին, զորս մերկացու-ցեալ զոմանս արձակեն, և զոմանս գե-րի վարեն։

ՌՄՀԲ 1823։ Ապա սաստիկ հրա-

մանաւ զօրաժողով արարեալ արքային աայ ի ձեռս սպարապետին իւրոյ Րախուպ փաշային, և նախամարտիկ կարդէ ղանուանին ղայն Զափառօղլու Մէհմէտ փաշան, զոր բաղում զօրօք անցեալ ի Սեբաստիոյ գնաց ի Կարին և յամենուստ կուսէ հորդան տուեալ զօրաց հասանէ անդր իբր յիսուն հազար, և ըստ ոմանց մինչև եօթանասուն հազար, որ և բանակ հարեալ ի Թօփրախ Ղալայ կոչեցեալ տեղին սպասէն ժամու մարտին. իսկ ի խմբել պատերազմին այնչափ բազմութիւն զօրացն Օսմանցւոց՝ ոչ կարեն զդէմ ունել զօրացն պարսից դոնէ կէս ժամս, այլ թիկունս դարձուցեալ փախչիլ աճապարեն, յորոց զհետ մտեալ պարսիցն՝ զոմանս սպանանեն, զոմանս մերկացուցանեն. և զայլս գերի վարեն, և զայն ամենայն ահեղ կազմուածս և պատրաստութիւն ամօթ առնեն. և զամենայն կահ և զկարասիս սոցա՝ զվրան, զոսկի, զարծաթ, զձիս, և զջորիս, և զարջառ և զոչխար, զպարէն, զթնդանօթ, զվառօթ, զկնտակ և զկապար յափշտակեալ զրաւեն։

ՌՄՀԵ 1826։ Սուլթան Մահմուտ արքայն Օսմանցւոց՝ նեղեալ յապարասանութենէ զօրաց իւրոց, նոր ծառայ կոչեցելոց (էնիչերոց) վասնորոյ ի վերջին աւուրս մայիսի հանեալ զսանճաղի շէրիֆն, և զամենայն այլազգիս գումարէ ի կողմն իւր. և հրամայէ հարկանել և սպանանել զնոսա և բնաջինջ առնել, որք սուր ի վերայ եղեալ կոտորեցին զտնհամարս ի նոցանէ, և զանուն և զօճախ նոցա եբարձ, և հաստատեաց զայլ իմն զօրս Մեհմէտիէ տէմի պաշ կոչեցեալ որոց զօրապետք և զօրք կրթութիւնս պատերազմականս ուսանին օր աւուր ըստ սարասի Եւրոպացւոց։

Ցայս ՌՄՀԵ 1826 ամի եղև ազգային ժողովն Կոստանդնուպօլսոյ, յորում սահմանեցաւ ինչ ինչ բարեկարգութիւն, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսարանաց՝ և այլոց ժառանգաւորաց եկեղեցւոյս հայոց, որ և հաստատեն տասն արքեպիսկոպոսարանս. Ա. Տարօնոյ սուրբ Կարապետ։ Բ. Կեսարիոյ սուրբ Կարապետ։ Գ. Նիկոմիդեայ սուրբ Աստուածածին։ Դ. Սեբաստիոյ սուրբ Նշան։ Ե. Կարնոյ Մարկու վանքն։ Զ. Գաղատիոյ սուրբ Աստուածածին։ Է Տիգրանակերտի Բարձրահայեաց սուրբ Աստուածածին։ Ը. Եւդոկիոյ սուրբ Աննայ։ Թ. Ամասիոյ սուրբ Աստուածածին։ Ժ. և Վարագայ սուրբ Նշանն։ Զորս գլխաւոր Աթոռս յորջորջեն. և տասներեք եպիսկոպոսարանս ընդ սոքօք ստորագրեն։

Ցետագայ ամին, ՌՄՀԶ 1827 մայիս 11 եկն հրաման յարքայէ առ Քէօսէ Մէհմէտ փաշայն Սեբաստիոյ գնալ յԵւդոկիայ, և սանձել զապարասանութիւնս տաճկաց, զոր գնացեալ անդ՝ զոմանս սպան, զայլս աքսորեաց, և զկէսս տուգանեաց. և զմեծածախ շինուածս սրճարանաց նոցա կործանեաց և վերադարձեալ եկն ի տեղի իւր։ Ի սոյն միջոցի ի յունիսի 5 յառաջին ժամու յաւուր միաշաբաթու եղև սաստիկ սասանութիւն երկրի՝ իբր քառորդաւ ժամու, և բազում շինուածք խախտեցան և կործանեցան. բայց ողորմութեամբ Տեառն մարդոյ վնաս ոչ եղև։

Ցօհաննէս Սեբաստացու տապանագիրը

Արփի լուսափայլ պարծանք Սեբաստեան՝ ահա մթագնի սև ամպով մահուան,
Հոգւոյն պատգամաց փող ազդողական՝ կոչի յերկնային փողել հարսնարան։
Հովիւըն արթուն հօտին բանական՝ այժմ ի քուն մահու ննջէ յայս տապան։
Վեհս Ցօհաննէս մտօք խոհական՝ ի մանուկ տիոց տենչացող ուսման։
Տեառն Ցակոբայ յերկրէն Արմըտան՝ որ էր սուրբ ուխտիս տեսուչ ընտրական.
Նմա աշակերտ եղև գիտնական, ապա և յաջորդ նորին տեսչութեան։
Տուեալ զանձն իւր անխոնջ ջանութեան՝ նորոգեալ հիմանց զայս սուրբ մենաստան.
Գերազանց ցուցաւ վարուք սրբութեան՝ կացեալ առաջնորդ քսաներեք ամ.
Փոխեցեալ առ տէր արդեամբ բարութեան։ ՌՄՀԹ 1830։

Պատմութեանս օրինակողի յաւելուածը

Բ· Կարապետ

Ցետ վախճանի Ցօհաննու արքեպիսկոպոսին՝ հաճութեամբ մեծամեծացն Սեբաստիոյ, ընտրիր գէտ վիճակիս մեծի տէր Կարապետ բազմարդիւն վարդապետն Սեբաստացի, տեղապահ և փոխանորդ Արհւոյն հանգուցելոյ, և աշակերտ Ցակոբայ Արմտացւոյ. էր սա փորձառու և բնագէտ. մինչ զի միանգամ և եթ հայելով յերեսս մարդոյ՝ զորպիսի գոլն գուշակէր իսկոյն ըստ արժանահաւատ ականատեսից վկայութեան. զկնի ինչ ամայ կամեցողութեամբ վիճակայնոցն չոգաւ ի սուրբ էջմիածին. և ընկալաւ զեպիսկոպոսական բարձր աստիճան ի ձեռանէ Ցօհաննէս կաթողիկոսի Կարբեցւոյ, և վերադարձաւ ի վիճակն իւր ի Սեբաստիայ. խնամ տանելով բարւոքապէս բանաւոր հօտին Քրիստոսի. և յետ երկոտասանամեայ հովուութեան փոխի յաստեացս ի կաճառս սրբոց ի 1842 ՌՄՂԱ և մարմին հանճարեղ սրբազանին տան աւանդ հողոյ եկեղեցական ուխտք վանուցն սուրբ Նշանի՝ կից Ակնեցի Առաքել եպիսկոպոսի։

Իր արձանագրի պատճէն

Ձիւրդ շոյտ փոխի կենցաղոյս շրջան. զկեանս և զփառս ծածկեալ ի մթան.
Հոյլք առաքինեաց աստի ոչ զերծեան՝ թողին մատնացոյց զիւրեանց դամբարան.
Քաղաք Սեբաստիայ պանծայ առ յապան՝ դրեալ հայրենիք վեհիս ծննդեան.
Կարապետ բաբուն ընտիր խոհական, վարուք և բարուք համեղ քաղցրաբան։
Ի մանուկ տիոց ուխտիս սուրբ Նշան, բազմարդիւն և ժիր պարկեշտ միաբան.
Ցօհաննէս արհւոյն միշտ անզուգական, փոխանորդ խոհեմ եղբայր միակամ։
Ցետ նմին եկաց ամս երկոտասան. արթուն առաջնորդ ուխտիս սրբութեան.
Կոչեցաւ տերամբ ի կարգ սրբազան՝ հովեաց բարեպէս զվիճակս համայն։
Աւաղ, հանդիպմանս մինչ էաք ըստ մանկան, ի սուրբ գգուանս հօր մեր աննման.
Բազմարդիւն կենաց ընկալաւ վախճան, յեօթանասուն հինգ ամաց իւր լրման.
Հոգւով վերացաւ յերկնային խորան, մարմնով ի գաւիթս եդաւ յայս տապան։
Ցամի տեառն 1842 և հայոց ՌՄՂԱ։

Գ. Կարապետ

Զկնի վախճանի Կարապետ արքեպիսկոպոսի Սեբաստացւոյ՝ յաջորդէ նմա ներկայիս դէտ էվերակցի Կարապետ րաբունին. այր հմուտ և հեզաբարոյ. յետ քանի ինչ ամաց ըստ խնդրանաց վիճակայնոց ձեռնադրի եպիսկոպոս ի Ներսէս հինգերորդ հայրապետէ հայոց մեծաց ի սուրբ Գահն միածնաէջ. դառնայ ապա ի վիճակն իւր և ըստ իւրովսան կարողութեան հովուէ զհօտս իւր. և այժմ արժանապատիւ և աղգասէր փոխանորդ նորին տէր Պետրոս ծայրագոյն րաբունին, զընթէ զամենայն հոգս առաջնորդութեան և վիճակայնոցն յանձին ստանձնեալ ; համբերատար ժուժկալութեամբ կառավարէ անձնուիրաբար զժողովուրդս ի փառս Աստուծոյ, չթողլով նոցա կրել ինչ նեղութիւն յումեքէ, որով բերանք սրբոց սովոր են հանապազ օրհնութեամբ հուչակել զարարս բարեջան վարդապետիս։

ԺԴ. ԻՍԱՀԱԿ ՍԱՀՐԱԴԵԱՆ

Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։—
Որդիք որք ծնանին յարիցեն և պատմեսցեն զայս որդւոց իւրեանց...

Համառօտ պատմագրութիւն զանցից երևելեաց հանդերձ ժամանակագրութեամբն, որք ի կրկին Շիրակս և մասամբ իմն ի Ղարս, ի Կարին, ի Տփխիզ, ի Գանձակ և յԵրևան։ Ի Իսահակ Երիցուէ Սահրադեան Ղօշավանքցւոյ, որ և այժմ ի յԱլէքսանդրապօլ։— Ամենայն թիւք այսմ պատմագրութեան գնին ըստ տումարի Հայոց. եթէ ոք կամիցի կարօղ է ուղղել ըստ Թուականի Փրկչին։

Ի ՌՃԽԸ. ամի Հայոց եղև ընդ բազմատարած աշխարհ խաւարումն Արեգական։

Ի ՌՃՀԲ ամի. Հրամանաւ Թագաւորին օսմանեան, Իբրահամ փաշայն մեծաւ զօրօք եկեալ ի վերայ Տփխիսայ էառ զնոյն բայց ոչ արար աւելի աւերութիւն ինչ. և աւրբեաց սակաւ ամս և ի մեռանիլ փաշային անդ վերադարձան զօրք ի յաշխարհ օսմանեան։

Ի ՌՃՀԵ ամի Էարիֆ Էահմատ փաշայն, (զորմէ ասէին բնական գոլ հայ ազգաւ և ի գաղտ պաշտէ զհաւատս Քրիստոնէութեան.) եկեալ բազում զօրօք էառ զԵրևան. և խնամեալ սրբոյ Էջմիածնի պատուեաց զսրբազան Կաթողիկոսն։ Եւ գնացեալ անտի էառ և զՏփխիս քաղաք և անաի անցեալ էառ մեծաւ պատերազմաւ զքաղաքն Գանձակ բայց էր խնամակալ բընակչաց տեղւոյն։

Ի պատերազմին հարեալ թնդանօթովք փլաւ կաթուղիկէ եկեղեցւոյն. Եւ զկնի ամսոց ինչ ժամանակի Առաջնորդ քաղաքին Մարտիրոս եպիսկոպոս, այր մեծահաւատ և առաքինի խորհեալ առնէ զայս տնօրէնութիւն. յետ քանիցս անգամ խօսելոյ ընդ փաշային։ Զգեստաւորեալ եպիսկոպոսական զգեստուք և սուրբ խաչ և գաւազան վիշապագլուխ ի ձեռին՝ երկու վարդապետօք և մէկ քահանայիւ և միով սարկաւագաւ և քանի մի երևելի անձինք ի Հայոց. և խոյ մի եզջերաւոր պարարտ զարդարեալ զանազան երանգօք. ի ձեռն երկուց սպասաւորաց դիմէ ի պալատ փաշային և նա դիմեալ ի պատուհանէ պալատին հարցանէ ոյք են այսոքիկ. կամ զինչ այս կարգադրութիւն. գիտացեալ տանծանօթութիւն թէ. եպիսկոպոսն է Հայոց և նա յառնէ ի նստելոյն զի մի ի գալ եպիսկոպոսին ի շքոյն հարկեսցի կանգնիլ, որ չէ օրէն տաճկաց. վասնորոյ ճեմէ ի մէջ պալատին. յայնժամ

երկու սպասաւորքն յառաջոյ մուծանեն զխոյն զարդարեալ և եպիսկոպոսն հուպ նմին ողջունէ զփաշայն այսպէս. խաղաղութիւն կենացդ ճալիշան ճաֆանդամ. և նա վերադարձուցանէ զողջոյն ըստ իւրեանց մեծ յարգի ողջունի. ասելով Ալէքիւմայ Սէալամ Ռուհպան. որ է ասել դարձումն ողջունի քեզ հոգւոյ տէր կամ հոգևոր տէր. և հրամայէ բազմիլ ի դահոյս, և կրկին հարցանէ զողջունէն։

Յետ որոյ հարցանէ զինչ են քոյ խնդիր ի մէնջ Ռուհպան. ասէ հանդերձ խաղաղական ողջութեամբ ոչ համարձակիմ ինքնապէս խնդրել. այլ նախ կամիմ իմանալ զկամս ճալիշան ճաֆանդւոյս և ապա թէ պատշաճ իցէ խնդրեցից. հրամայեա ասէ զոր ինչ և կամիս. ապա յառաջի առնէ այսպէս.

Ի մեր յայս սահմանս որ ընդ իշխանութեամբ պարսից կամ վրաց. անարգել յորժամ կամիմք շինեմք զեկեղեցիս. բայց լսեմ ի սահմանս ձերդ հզօր Տէրութեան. բազում աշխատութեամբ և այն հրովարտակաւ թագաւորին հազիւ լինի շինել զնոր եկեղեցի. և կամ զաւերեալսն նորոգել։ Արդ խընդրեմ եթէ հնար է հրամայեսցես շինել զկաթուղիկէ եկեղեցւոյս մերոյ որ փըլաւ ի պատերազմին. ապա թէ ոչ չունիմ ինչ տրտնջել ի մեծ մտերիմ թագաւորի յաղթօղ Ճաֆանդւոյս. Հարցանէ Ռուհպան. զինչ այդ զարդարեալ գեղեցիկ խոյ. Ասէ եպիսկոպոսն մեծագին ընծայ Ճալիշան Ճաֆանդւոյս. վասն զի խնդիր ի մեծ է և հոգևոր. վասնորոյ պատշաճ դատեցայ հոգևոր զգեստուք հոգևոր պաշտօնէիւք և հոգևոր ընծայիւք յանդիման լինի Ճաֆանդւոյս։ Յայնժամ առատացեալ ի խնամոցն Աստուծոյ սիրտ փաշային հրամայէ. իմ գեր պատուելի Ռուհպան. եթէ ընդ երկայնութիւնս եթէ ընդ լայնութիւնս եթէ ընդ բարձրութիւնս որքան և կամք են քո շինեսցես զեկեղեցին. և թէ մեղապատկան իրք ինչ իցեն կամ պատահեսցին ծախք հրամայեսցես. և զխոյդ որ ասացեր ընծայ հոգևոր վասնորոյ և ես ընծայեմ եկեղեցւոյդ (անուն զորոյ յիշեցեր յառաջնում բանիդ լինիլ Յիւսուփ բաբայ, որ կարծիւ զօլ պատրուակեալ, իբր մերձաւոր ինքեանց Յօսէփ Հայր). զի զոհեսցես ի փառս Աստուծոյ և վայելեալ հանդերձ հոգևորականօք. և աղօթեսջիք վասն կենաց թագաւորիս մերոյ։ Յայնժամ ուրախութեամբ և ուղևորութեամբ Ղուկաս կոչեցեալ սպասաւորաց վերադառնայ յիւրն առաջնորդարան և սկիզբն առնէ շինութեան եկեղեցւոյն։

Ի ՌՃՁԵ ամի Շահթամազն եկն ի վերայ Ղարսայ և պատերազմեալ ընդ նոյն ոչ կարաց առնուլ և ի մերձենալ ցրտագին աւուրց, ապստամբեալ ի Ղարսայ և կամ յարտաքոյ Ղարսայ դարձաւ ի Պարս. սպառնացեալ միւս անգամ վերադառնալ մեծաւ պատրաստութեամբ։

Ի ՌՃՂԴ ամի կրկին եկն ի վերայ Ղարսայ բազում զօրօք. և պատերազմեալ Է օր իբրև ետես զամրութիւն քաղաքին և զգաց զպատրաստութիւն ռոճկաց զօրաց որ անդ, հրամայեաց բերել յԵրևանայ զբազում բեռինս բամբակաց որովք և այլ աշխատութեամբ բազմութեան զօրացն դարձոյց զգետն Ղարսայ յայլ ընթացս դէպ ի դաշտն Ղարսայ. զի անճարացեալ բնակիչքն լիցին անձնատուրք. իսկ բնակիչք Ղարսայ զգուշացեալ յառաջագոյն, արարին լիճս և խորս յընթացս ցամաքեալ գետոյն. որով և ապրեցան մարդիկ և անասունք

բուականապէս։

Իսկ Շահթահմազին (որև Նէադիր շահամի) ամենայնիւ գուն գործեալ ջանայր հնարիւք իմն աւելի քան զերիս ամիս առնուլ զքաղաքն. և իբրև ոչ յաջողեցաւ, կասկածեալ թէ գուցէ զայցեն ի վերուստ օսմանցւոց զօրք և դաեալ զզօրս իւր պարտասեալ ի յերկար աշխատութեանց, վասնորոյ ասպատակեալ ի տեղիս տեղիս և հրձիգ արարեալ զբազում շէնս և զարտորայս և վնասեալ երկրին բազմօք դարձաւ ի Պարս։

Ի ՌՃՂԷ ամի Ղարայ Վէզիր կոչեցեալ մեծ սպարապետն Օսմանեան մեծաւ զօրօք եկն յԵրևան ի վերայ յիշեալ Թահմազ շահին. ընդ որս եղև մեծ պատերազմ և անկան բազումք. բայց բազմապատիկ ի Պարսից։

Եւ զկնի երից աւուրց պատերազմելոյ պարտեցաւ կողմն պարսից. և հարեալ սպանաւ Թահմազ շահն և մեծաւ յաղթութեամբ տիրեաց Երևանայ Ղարայ Վէզիր փաշայն։ Օսմանցիք թէև խնամէին մասամբ իմն ազգին Հայոց. բայց յայնմ պատերազմի գերեցին ի Հայոց զբազում տղայս զօրիորդս և զհարսունս և անցուցին ի կողմն օսմանեան վասնորոյ անբերելի սուգ էհաս ծնողաց և փեսայից և լցաւ կոծաւ յերկիր բաց յայլ վնասուց։

Սակայն Ղարայ Վէզիր փաշայն և այլ մեծամեծքն օսմանցւոց ուր և պատահէին յուսադրէին զՀայս և ասէին բարոք լինիք այսուհետև ի շնորհէ թագաւորին մերոյ։

Ի ՌՄԻԳ ամի սկսաւ ժանտախտ ի Ղարս և ի սահմանս նորա և ևս ի Կարին. և մեռան բազումք վասնորոյ խնդրեցին ի սրբազան կաթուղիկոսէն Էջմիածնի, որև շնորհեաց զԱստուածամուխ զսուրբ Գեղարդն. ի գալ որոյ և ի մտանել ի քաղաքն և ի կատարել զպաշտօն Աստուածպաշտութեան և սուրբ պատարագի առ օրին բարձ ժանտախտն և յամենայն սահմանացն ծագելով լոյս ողորմութեան Աստուծոյ։

Ի ՌՄԼ ամի՝ կրկին յաճախեաց ժանտախտն ի Ղարս և ի Կարին բայց ոչ ըստ յառաջնոյն, վասնորոյ կրկին խնդրեցին ի Ղուկաս սրբազան կաթուղիկոսէն զսուրբ Գեղարդն որոյ ի շնորհելն և ի գալ սրբոյ Գեղարդին բարձաւ առ օրին ժանտախտն։

Յաւուրս կաթուղիկոսութեան Սիմէօն յոգներախտ կաթուղիկոսի Հերակլը խանն Տփխիսայ էառ զԵրևան և բազում ասպատակս սփռեաց ի կողմն Ղարսայ և եդեալ հարկս ի վերայ Երևանայ և տիրեալ յայնկոյս կոչեցեալ Շիրակայ և Փամբակայ դարձաւ ի Տփխիս. և լուեալ թագաւորին օսմացւոց և առ ի ստանալ զնոյն բարեկամ ի յապահովս առնել դեզերեայ սահմանս իւր առաքեաց նմա զընծայս պատկանաւորս, ընդ որոյ և Ղըլըճ և Ղափշուան կոչեցեալ պարգևս. որ է ոսկեպատեան թուր և ամզէն մեծագին զոր տան մեծահռչակ յաղթողաց միանգամայն և հրովարտակ ջատագովութեան. զի զօրօք լէկզեաց և վրաց յաղթեաց պարսից և արար ընդ՝ հարկաւ։

Իսկ ի ՌՄԽԳ ամի Խադում շահ կոչեցեալն եկն ի վերայ Տփխիսայ բազում զօրօք և առեալ զքաղաքն աւերեաց և գերեաց իսպառ։

ՌՄԽԲ ամի. բայց Գ ամօք յառաջ Գաւիթ Իմիրզայ կոչեցեալ որդին Հերակլայ բաւական զօրու եկն իբր ասպատակ ի Շիրակն Ղարսայ. որոյ բնակիչք լուեալ ամրացան ի քաղաքին և ի գիւղօրայս. վասնորոյ եկեալ ի վերայ Ղըզըլչախչախ գեղջ, որում Ամբարտակ

(զուլայ) ամուր էր յոր և ամրացեալք պատրաստութեամբ քանի մի գեղջ պատկան պատրաստութեամբ. ընդ որոց պատերազմեալ զերկուս աւուրս և անկան ի զօրաց նորա ի հրացանէ որ յԱմբարտակէն աւելի քան քսան անձինք. վասն որոյ կասկածեալ ի գալստենէ օսմանեան զօրաց, սփռեաց զասպատակս ի սահմանս Ղարսայ Շիրակայ, որ ինչ անկաւ ի ձեռս ոչխար կամ արջառ և ԺԴ կամ աւելի գերիս դարձաւ ի Տփխիս։

Եւ յետ աւերման Թիֆլիզ քաղաքին ի Խաղում շահայ, Հիւսէին Ալի խանն Երեւանայ խաղաղութեամբ վարէր ընդ Իբրահամ փաշային Ղարսայ. իսկ յետ մեռանելոյ Ցիւսէին Ալի խանին և յաջորդելոյ որդոյ նորին Մահմատ խանի. և Ղարսայ Լօման փաշայի ի սակաւ ամս եղե խաղաղութիւն ի մէջ երկուցն. և Ա[illegible] բէկն որ էր նահանգակալ Շիրակայ, վարէր խաղաղութեամբ, իսկ յետ սուղ ամաց անկաւ խռովութիւն ի մէջ երկուց երեելի բէկիցս յիշեալ Ալի բէկին և Խաթուն օղլի երից եղբարց. Մէտհմատ, Զախալ, և Ղէարաբէկայ. յետ բազում նենգելոյ իրերաց, սպանաւ Ալի բէկն ի Մահմատ բէկէն. վասնորոյ և երկրացիք հանդերձ երկրի բդեշխ Լօման փաշային կամեցան արտաքսել զՄէահմատ և զԶախալ բէկն ի յերկրէն. իսկ Ղաբայբէկն բնակէր ի Մաղսբերթ։ Եւ իշխէր բոլոր Շիրակայ, և երկու եղբարքն որ ի Ղարս զօրութեամբ նորին կամէին ընդդիմանալ բդեշխին և երկրացւոց, վասնորոյ հրամայեցաւ ի փաշայէն և ուզղեցին ի վերին ամրոցէ քաղաքին թնդանօթս ի վերայ տանց նոցա. յետ որոյ անճարացեալ թողեալ զընտանիս իւրեանց փախեան յԱրցախ առ Զաբիթ փաշայն և նա փաշայացուցեալ զՄահմէտ բէկն երեր ի Ղարս. իսկ Լօման փաշայն հրաժարեալ գնաց ի Կարին և անդ մեռաւ։ Եւ յիշեալ Մէահմէտ փաշայն տիրեաց վեց ամ. ի միջոցս յայնց ամաց էր խռովութիւն ի մէջ Մահմատ խանին Երեւանայ և Ղարաբէկին Մաղսբերթայ. որք գաղտ ի գողի հատանէին զգլուխս ժողովրդոց իրերաց. և յաւուրս նոցա փոխանորդեաց հրամանաւ Բարախան շահի Ցիւսէյին Աէարգէար և Հասան խան եղբայր նորա. ընդ որոց արարեալ խաղաղութիւն Ղէարաբէկին ապստամբելով մասամբ իմն ի յօսմանցւոց։

ՌՄԾէ ամի կամ ԾՁ. Քանզի յիշեալՄ էտհմէտ փաշայ եղբայր այս բէկի առնէր բարեկամութիւն ընդ ռուսաց տալով գյոլով ցորեն և գարի, բայց լի գնով. և գրէ առ մեծաւորն ռուսաց որ յայնժամ էր ի Գիւմրի որ այժմ Ալէքսանդրապօլ. թէ նուիրեալ եմ քաղաքս հանդերձ ինև Կայսրն ռուսաց և նա յուսադրէ նմա զբազում մեծութիւնս ի Կայսրէն յԱլէքսանդր Պայլովչէ. վասնորոյ և նա դրէ առ Կայսրն անձնատուր լինել փաշային հանդերձ քաղաքաւն. և ընկալնու հրաման գնալ երեք հարիւր զօրօք և նստիլ ի Ղարս. վասնորոյ գրէ զօրավարն ռուսաց առ Մէահմէտ փաշայն թէ ըստ քոյդ խոստմանց յայտնեցի Կայսրն. վասնորոյ ունիմ գալ երեք հարիւր զօրօք և դու ունիս երջանկանալ ի Կայսրէն մեծապէս։

Եւ յընթեռնուլ փաշային զայս փութացաւ պատասխանել այսպէս մեծաւ շտապաւ. մեծութեան քում յայտ լիցի. կանոն է մերս օսմանեան աշխարհաց. բանիւ և եթ բաց յամուսնոյ ընծայել բարեկամաց զամենայն գոյս մինչ զի և զկեանս. որ է քաղցրու-

թիւն իւր բարեկամութեան. ըստ որոյ և ևս ընծայեցի զանձնս և զքաղաքս. մանաւանդ զի քաղաքս ոչ է իմ, այլ թագաւորին. և զիարդ ես կարող եմ տալ. վասնորոյ խնդրեմ դմնց առնել զայդու յառաջադրութեամբ։ Եւ զայս նամակ փաշային զօրավարն ռուսաց արագ փօշտային յղէ առ կայսրն և ինքն պատրաստի զօրօք և թնդանօթովք երթալ ի վերայ Ղարսայ։

Ցայն աւուրս ի ՌՄԾԷ կամ ԾՁ ամի էր ի Ղարս Յօհաննէս արքեպիսկոպոսն Կարբեցի, որ զկնի նստաւ յԱթոռ կաթուղիկոսութեան ի սուրբ Էջմիածին. զոր կոչեալ Մէհմատ փաշայն հրամայեաց երթալ ընդ առաջ զօրացն ռուսաց ասաց խոստանալով այսպէս. եթէ դարձուցես զզօրս ռուսաց առնելով ընդ մեզ խաղաղութիւն, ունիմ տալ քեզ բազում բարիս. ապա թէ ոչ, մի տեսցես զերեսս իմ. զի չէ հնար ապրել քեզ։ Եւ նա եկեալ ի Ղօշավանք և անտի էանց ի Գիւմրի, և հանդիպեալ զօրավարին ռուսաց խօսեցաւ որ ինչ արժան էր ըստ իւրում հանճարոյ. բայց նա չեղև ունկնդիր. սակայն յոյժ բարոք լինէր լրումն գործոյն եթէ լուեալ էր եպիսկոպոսին. և հորդան տուեալ զօրացն եկն ի վերայ Ղարսայ. և ի միում աւուր էառ ղապաստան քաղաքին զՂարայտաղն և զերկուս թընդանօթս՝ որ անդ և մարտ եդեալ ընդ զօրսն որք ի Բայրամ փաշայ կոչեցեալ դուռն. և յաղթեալ և նոցա էառ և մէկ թնդանօթս. և մինչ նա պատերազմէր և դուռն գործէր և մերձ էր առնուլ զքաղաքն, էհաս սաստիկ հրաման կայսրն զի թէ առեալ ես իցէ զքաղաքն, թողեալ նոյնութեամբ վերադարձի. վասնորոյ մինչ զօրք օսմանեան պատրաստէին զամբութիւն քաղաքի իւրեանց հարեալ զքալարանն դարձաւ զօրավարն ռուսաց յայնկոյս Շիրակ և եղև օսմանցւոց մեծ ուրախութիւն։

Ի ՌՄԽԶ ամի Թագուոմ շահն առնու զբերթն Շուշւոյ. և մերձակայ քաղաքքն լինեն ամենեքեան հպատակ. և անհոգացեալ յայն կողմանց դրէ յԵրեւան Բաբախան Սէարդար եղբօր իւրում թէ հզօր բազկաւ իմով տիրեցի յայս կողմանց. վասնորոյ պատեհ ժամանակ է ինձ տիրել և մամիոյ օսմանցւոց. դու արիասցիս ի յապահովութիւն ամենայն տիրեալ տեղեաց մերոց. և ահա ես պատրաստ եմ ի չուել ի Կարին. և ծանուցանէ զայս խորհուրդ Շամախւոյ Սադղ խանին։ Եւ Սադղ խանն է իբրև ներքին խորհրդակից, որոյ տեսեալ թէ չունի դադար տալ զօրաց և ինքեանց հրապուրեալ զերկուս ներքին ծառայս խանին և նոքա յուսադրութեամբ նորին մտեալ ի ներքին սենեակ որոց ոչ արգելք մին ինոցանէ համարձակեալ հարկանէ զսուրն թափանց ի սիրտն. և ասեն թէ ասէ այնմ ժամու ղուռումսաղ խարապ էյլադն իրանի. և առեալ նոյն ծառային ի բազկացն զականակուռ բազպանսն և տայ Սադղ խանին. այսպէս բառնի չարն ի միջոյ։

Ի ՌՄԿԱ ամի սով սաստիկ անկաւ ի Ղարս ի պատճառս երաշտութեան և մասամբ իւր ի Կարին որոց օժանդակեաց Երևան և Եփրեմ ողորմած կաթողիկոսն կերակրեաց զբազումս. բայց անսովոր դոլով օդոյ տեղւոյն բազումք մեռան զորոց տայր զպատանսն յիշեալ երանեալ Կաթուղիկոսն և վարձս թաղողաց, և զկնի միոյ ամի եղև առատութիւն հացի ողորմութեամբ տեառն Աստուծոյ։

Ի ՌՄԾԶ ամի օսմանեան կոյր

Յիւսուֆ փաշայն բազմութեամբ զօրաց եկն ի Ղարս ի պատերազմ ընդ Ռուսաց որք ի Գիւմրի և գումարեաց ընդ զօրաց և զզօրս գտեալս ի Ղարս և ի սահմանս նորա՝ զքուրդս զբօզչալիս զՂարափաղս և զլազս և զհայս աւելի քան զերեսուն հազար և Մահմատ փաշայն Խաթունօղլի կարգեաց նախամարտիկ, որ ասի Չարխաջի. որք գրնացեալ յեզր Ախուրեան գետոյն յետ քանի մի աւուրց ի ԻԵ ին մայիս ամսոյ յանդէպ Գիւմ. մարտ եդին ընդ զօրքս ռուսաց և ոչ կարացեալ կալ ի դիմի պարտեցան օսմանցիք և կրկին պատրաստեալ դիմեցին ի վերայ ռուսաց. վասն որոյ զօրքն ռուսաց թողեալ զմի գունդ զօրաց ի պահպանութիւն ամրոցին Գիւմրոյ դիմեցին ի վերայ բանակին օսմանցւոց և կոտորեալ զբազումս ասին զբազմապատրաստ բանակս նոցա, և զօրքն օսմանեան ամրացան ի բերթին Ղարսայ։

Եւ զգացուցին մեծամեծքն Ղարսայ կոյր կոչեցեալ Յիւսուփ փաշայ սպարապետին թէ այս ամենայն վնասուց պատճառ է Խաթունօղլի Մէահմադ փաշայն և Ղէարաբէկ եղբայր. վասն որոյ նենգաւ կոչեաց սպարապետն զՄէահմատ փաշայն և ետ նմա գիր հրամանի կարգեալ զնա սիւրուջ զբազում. սահմանաց այս է զօրաժողով։ Ասէ նմա սկսեալ ի Կարնոյ մինչև ուր և կարասցես գումարեսցես զզօրս և տացես ի ձեռս եղբօր քոյ Ղարայ բէկի և դու մի դադարեսցիս յղել զօրս հետզհետէ. և գրէ բդեշխին Կարնւոյ ի հասանիլն անդ հատեալ զգլուխ նորին առաքեսցէ առ ինքն։ Եւ զգացեալ եղբօր նորին Ղարայբէկի փախնու ի ճանապարհին իսկ ի հասանել Մէհմէտ փաշային ի Կարին յայնմ աւուր Բաբայ փաշայն տեղւոյն հատեալ զգլուխ նորին յղէ առ Յիւսուֆ փաշայն ի Ղարս։ Եւ Ղարաբէկն փախնու ի յԱրցախ. յետոյ ամբանայ ի նախնի բերդն իւր ի Մաղսբեր, որոյ վերայ գումարին զօրք օսմանեան Գէալի և Հայթայ կոչեցեալ և անտի խանօք հանեալ յղեն ի յԱխըլցխա առ Բաբայ փաշայն և հատեալ զգլուխն յղէ առ Յիւսուֆ փաշայն։

Ի ՌՄՀԷ ամի խաչապանծ և Աստուածազօր զօրք ռուսաց հրամանաւ Քրիստոսապսակ ինքնակալ Կայսրն Նիկօլայ Պավլովչի մեծ Սպարապետն զօրաց, Պասկևիչ Ցաթմաշալ դենարալն բազմութեամբ յաղթօղ գնդից բազում զօրաց, և մեծամեծ թնդանօթւոց, և ամենապատկան առատ և հարուստ պատերազմական պատրաստութեամբ յետ առնլոյ ի պարսից զԳաւրէզ զԽօյ զՆախչուան և զԵրևան հորդան տուեալ խաչապանծ զօբացն էանց ի կողմն Օսմանեան, և եկն ի վերայ Ղարս քաղաքի և պատերազմեալ ընդ նոյն քանի մի օր, յոր աւուրս բազում զօրօք եկն ի Կարնոյ Քեօսայ փաշայն և ոչ կարացեալ ի դիմի հարկանել ռուսաց, սպասէր պատեհ ժամու և ըստուարացուցանելոյ իւրոյ բանակին. և մինչ նա զայն խորհէր, Պասկևիչ դենարալն զօրութեամբ Տեառն Աստուծոյ ի վերոյ դրեալ թուոյս և ի ԻԲ-ին յունիս էառ մեծաւ յաղթութեամբ զքաղաքն Ղարս. և ոչ արար կոտորածս խնայելով ըստ բարեսիրտ ողորմածութեան. յետ որոյ զի էառ զԱրցախ և Կարին, զորոց պատմութիւնս գրել աւելորդ վարկայ այն զի գրեն աւելի տեղեակքն հանդամանաց քան զմեզ։

Ի ՌՄՁ ամի ազգք Հայոց բնակեալք ի Կարին և ի շրջակայս նորա, ի Ղարս և ի շրջակայս նորա զաղթեցան

ի կողմն ռուսաց. ինձ թուի աներեւոյթ կոչմամբն Աստուծոյ եղև թէ այս չուել, որք և կալան զտեղի բնակութեան, ոմանք և մանաւանդ բազում հարնեցի յԱրցախ և ի յԱխալքալաք. և ոմանք ի յանկոյս կոչեցեալ Շիրակ որոյ գլուխ է Գիւմրի որ այժմ է մեծ և ամրապարիսպ բերդ և քաղաք այն է Ալեքսանդրապօլ և ոմանք ի Փէամբէակ և յայլ սահմանս ռուսաց բնակեալ ի խաղաղութեան։

Ի ՌՄՂ ամի օր ըստ օրէ երևեցաւ ժանտախտ ի յայս սահմանս մասամբ իմն ի Տփխիս, յետ սակաւ ամսոց ի յԱլէքսանդրապօլ և յամենայն գիւղօրայս սորա և բազումք մեռան. բայց ողորմութեամբ Տեառն և զգուշութեամբ եւրոպէական օրինաց, որ զգուշանա իբր իսկապէս ցաւ փոխադրական, զորո ստուգութիւն կարեմք գրտանել ի հին օրէնս դի որ ունէր ոք զցաւ փոխադրական և կամ ախտ բորոտութեան բացեալ ի բանակաց և ի բնակութեանց. և ի նորոյս ասէ Տէրն ոբում փորձիչն կամէր անձապաստան տալ ընկենուլ յաշտարակէն. ասէ տէրն. մի փորձեսցես զտէր Աստուած քոյ. և Սարգիս սուրբ վարդապետն եկեղեցւոյ գրէ մեզ ընկերին ոչ է ժանտախտ եթէ ի քեզ փոխադրեսցի. այսուամենայնիւ զոր ասացաք հաւատամք դի կարող է Աստուած ապրեցուցանել զհաւատացեալ յուսացեալս յինքեան և ի բորբոքեալ հրոյ, և յամենայն վտանգէ։

Ի ՌՄՂԴ ամի եղև մաղցացուն զոր խոլերայ կոչէին. որև վնասեաց ոչ սակաւ յորմէ մեռան բազումք, սկսեալ ի Տփխիսայ և հետզհետէ ընթացաւ ի յԱլէքսանդրապօլ և յամենայն սահմանս նորա մասամբ իմն երևեցաւ ի Ղարս. և ողորմութեամբ Տեառն փութով կարճեցաւ ժամանակ նորա ապա թէ ոչ, ոչ ապրիւր ամենայն մարմին։

Ի ՌՄՂԵ ի յամենազօր հրամանացն Աստուծոյ գոյացաւ մարախ ի սահմանս Գանձակայ. և ամ ըստ ամէ մինչև ցերիս ամս թխսեալ աճէր. թէ և բազմակերպ հնարիւք կոտորէին ոչ այնչափ օգտէր առնուլ զառաջս վնասուն. իսկ դկնի երից ամաց ճանապարհորդեաց ի Գանձակայ ի սահմանս Տփխիսայ, բայց ոչ այնչափ վնասեաց. և ի միւսում ամէ էանց յԵրևան. և անդ ևս սակաւ վնասեաց. իսկ ի ՌՄՂԶ ամի լրումն էառ ըստ մարգարէին ի վերայ կրկին Շիրակաց թէ Ասաց և եկն մարախ և խառնիճ դի և ոչ գոյր նոցա թիւ, և այլն որ դկնի. յառաջնում ամի եկեալ մեծաւ զօրութեամբ զմասն մի Շիրակայ, յերկրորդ ամի այնպէս յաճախեաց զի յառաւօտու մինչ տարածէր յերկրի ծածկէր զերկիր. և ի ջեռնուլ արեգական մինչ թռուցեալ վերանայր յօդս ծածկէր զերկինս. և ամբաքատակ արգելոյր դլոյս արեգականն, և ձայն թևոց նոցա իբրև զձայն յորդեալ հեղեղաց. վասնորոյ եկեր զամենայն արտօրայս. և այնպէս սպառեաց զամենայն խոտ անդոց զի ոչ մնաց ճարակ անասնոց. վասնորոյ բնակիչք այսկոյս և այնկոյս Շիրակայ հանդերձ ընտանեօք և առ ձեռն եկեալ ստացուածովք անցին ոմանք՝ ի Մուշ ոմանք ի յԱխալքաղաք, և ոմանք՝ յայլ տեղիս. իսկ ՌՄՂԶ կամ ի ՌՄՂԷ ամի կրկին վերադարձան տարագրեալքն ի զանազան տեղիս. բայց եղև մարախն և ի ՌՄՂԸ ամի. և կոտորէին վարձու զմարախն և փորեալ բազում գևրեզմանս, և կրշռով գնեալ ի կոտորելոց լցեալ ի վիհսըն ծածկէին յառաջ քան զհունձն. սկըսեալ իբր ի ԻԵ էն մայիս ամսոյ. վաս-

նորոյ այսու փութով և ողորմութեամբ Տեառն եկն ե սարեկ թռչունն. որով կոտորել ի մարդկանց ե ի թռչնոց մարախն վերջացաւ խսպառ. իսկ ի ՌՄՂԹ ամի խսպառ անհետ եղև յայսկոյս և յայնկոյս Շիրակայ. բայց յայնկոյս շիրակացիք որք ի կողմն օսմանեան ոչ արարին կոտորածս մարախաց, սակայն՝ ի միասին կրեցին դժրնասմն և ի միասին աղատեցան։

Արժան համարեցաք և զայս պատմութիւն զոր հայր Միքայէլն Ջամչեան վասն հեռաւորութեան տեղւոյն սխալ դրէ դայլոյ գովութիւն այլում. տալով ի յերրորդ դիրս իւրում. պատմութեան զոր ունիս դտանել ցանկիւ, Եղեայ կամ. Անանիա վարդապետ։

Գրէ Հայր Միքայէլ Ջամչեան այսպէս, Եղեայ վարդապետ Առաջնորդ Հոռոմոսի վանից (ընդարձակ պատմութեամբ) վանէ զասպատակաւոր լէակղիս և թափէ զաւար և գերիս կոտորմամբ բաղում լէակզեաց։

Պատմութիւն Եղեայ վարդապետի որոյ քեռ որդւոյ որդին մահտեսի Աստէֆան ծերունին իսկ տեսել եմ, որ պատմէր թէ պապի մեր Եղեայ վարդապետին գուժկան էհաս թէ ասպատակեցին զնախիրն և նա ԺԵ ձիաւորօք գնաց ի թափել. և ի դառնալ ասպատակաւորաց ի վերայ նոցա, դարձան սոքա ի փախուստ և հարեալ հրացանաւ սպանին ի յԻւչ Թէփայ տեղին և մերկեալ զհանդերձսն գնացին. և դերեզմաննորա է զանգագատն Ղօշավանից։

Եւ զայս պատմութիւն զոր ունիմք արժանաւոր գովութեամբ ի ըստոյդ պատմչաց գրել զԱնանեայ Ֆեռալջի կոչեցեալ վարդապետէ, յիշեալ պատմիչ Միքայէլն սմայ ընծայէ։

Սահակ վարդապետ ծերունի երբեմն Առաջնորդ ի Կաղզվան աւանի, վանիցն Թաթլոյ և Վարոսի. ի ժամանակս մերս գպրութեան ծերունին պատուեալ ի Յօհաննէս եպիսկոպոս յառաջնորդէ Ղօշավանից մօտ ժամանակկից գոլով պատմէ այսպէս.

Ի ՌԾՀ և Թ թուոջ հայկազեան, մինչ բազմիցս լէկղիկ ասպատակեալ տանէին ի սահմանացն Ղարսայ զգերիս և զայլ գոյս. վասնորոյ ամենայնիւ զգուշանային բնակիչք գիւղօրէից և ի գիւղս գիւղս ունէին զամրոց և զուլայս ամրանալ ըստ ժամանակին յերեսաց ասպատակաց զի թէ գնասցեն ոչխար և արջառք գոնէ դերի մի վարեսցին մարդիկ. և ասպատակաւորք թողեալ զամրացեալսն՝ ի ներս մղէին գըտանել զանպատրաստ տեղիս, վասնորոյ անցեալ ի Շիրակայ իբր հինգ հարիւր լէկզիք անցանեն ի կողմն Տիկոռայ ի հարաւակոյս Ղարսայ. և յաւուր կիւրակէի՝ ընդ առաւօտս ի մեծ գիւղն Տիկոռ Ճալամ, Մաւրակ և Բաշալի ասպատակեալ առնուն զգերիս զանասունս և զայլ ստացուածս դառնան մօտ ի յաւերակն Անի քաղաքի և իջեալ ի վերայ Չրոյն որ իջանէ ի յԱլաջւոյ դէպ ի յԱնի, եղեալ դէտս ի գլուխ ձորոյն և նոքա առեալ զիւրաքանչիւր գերիս և գոյս միան յանհոգս։ Իսկ գերծեալ ձիաւորք հասուցանեն զգոյժ ի մերձ գիւղօրայս բայց համբաւ նոցա զարհուրեցուցանէ զնոսին. և ամենայն ոք փութա զինքն ամրացուցանել. և հասանէ գուժս ի Բէշքիլիսայ կոչեցեալ վանքն որէ ի ձորն Տիկոռայ մերձ նըրմին պակաս քան զմիոյ ժամու ճանապարհ. և յայնմ. պահու գտանի պատարագիչ Առաջնորդն վանից Անանեայ

վարդապետն, որ 'յետոյ կոչի Քեալլաջի. և ի լինել աղմուկ խռովութեան ի վանքն մինչև հասանել ի սուրբ եկեղեցին ի ժամ. սրբազան պաշտամանն. հրամայէ պատարագիչն մի խռովել և մի երկնչել, այլ ասէ զայս և ես 'յուսացեալ 'յայն որ ասացն Ես ընդ ձեզ եմ. զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի. և ոչ թէ 'յաղեղն իմ 'յուսացեալ եմ. և ոչ սուր իմ. կեցուցանէ զիս այլ Աջ և բազուկ Տեառն. վասն որոյ հանգարտեալ սրտիւ ջերմեռանդ արտասուօք և աներկբայ հաւատոյ 'յուսով լրացուցանէ զսրբազան պաշտօն փրկական պատարագին և փութացուցանէ զգտեալ հեծեալսն և գտանի ոչ աւելի քան զքառասուն հեծեալս. և պատուիրէ հետևակ մարտակցաց դալ զկնի ըստ կարողութեան։ Եւ մինչ հասանէ ի ձորագլուխն Սօգուղլու կոչեցեալ դեղջրն, դէտ նոցին ձայնէ լէկզի զօրացն թշնամիք հասին. և նոքա չև ևս ելեալք ի ձորոյն հրնզեակ և եթ ձիաւորօք ի ձորագլխոյ սպառազինեալ Անանեայ վարդապետին լեալ նախամարտիկ առնու զառաջս զօրացն. և սաստկապէս ընթանայ որպէս հուր ընդ անտառս խռուաց. և հարեալ սպանանէ զբազումս մինչ ի հասանել միւս հեծելոց իւրոց. և ոչ տա դյառաջս փախչելոյ և առնէ կոտորածս շտապեալ ի փախուստ քան 'ի պատերազմ. և զերծան ոմանք ի ձորոյ զառի վայր. և ոմանք ի 'յայր որ բազում էին անդ և ոմանք որ աւելի քաջք զերծեալք ի կողմանց և հետևակ օժանդակք 'յիշեալ երանելի վարդապետին ոչ հասին միայն զի ժողովեցին զասպատակեալսն և զկապուտ լէկզաց։

Եւ հրամայեաց հատանել զգլուխս անկելոցն և կենդանի վիրավորացն և գտաւ աւելի քան զհարիւր և քսան գլուխս. և մնացեալք անձնապուր և եթ զերծան. և ժողովեալ զգլուխս նոցա ելից ի սակառս և 'յղեաց ի Ղարս առ առ Վէալի փաշայն. և ինքն դարձաւ ի վանս իւր և ասաց պարտաւոր եմ. և այսօր մատուցանել զգոհութեան պատարագ. և ի նոյն օրին երկու շաբաթօջ մատոյց կրկին զսուրբ պատարագն հանդերձ բազմութեամբ գերելոցն որք փրկեցան կրկին արեամբն Քրիստոսի. և ինքն ոչինչ փոյթ առնէր առնուլ պարգև ի փաշայէն. այլ ասէ մեծապէս պարգևատրեալ եմ. ի Քրիստոսէ Աստուծոյ իմմէ. սակայն՝ փաշայն լցեալ առատութեամբ սրտի առաքէ զմին ի մեծամեծաց քաղաքին Էահմատ Էաֆանդի կոչեցեալ. և հրաւիրեալ զնոյն վարդապետ տանի ի քաղաքն և ողջունեալ պատուով մեծարէ և ասէ. Մարհասայ որ է ասել օձատիպ ունօղ զաւազան անհնարին խայթօղ թշնամեաց. այնզի ունէր զաւազան 'ի ձեռին այստիպ բայց անգիտանամք զհարցեալ պատմչին թէ արդեօք ծայրագոյն եղեալ է եթէ եպիսկոպոս. որում ասէ փաշայն ես չեմ. բաւական պարգևատրել զքեզ այլ գրեմ. առ թագաւորն մեր սուլթան Մահմուտն. և նա ինքն որպէս և արժան համարի պարգևատրեսցէ զքեզ. պատասխանէ կամք քոյ են։

Եւ նա գրէ առ թագաւորն սուլթան Մահմուտ մեծաւ գովութեամբ. և զհինգ այր նախմարտակիցս իւր տայ. գրել ի կարգի գովութեան իւրում. ասելով թէ և սոքա ընդիս նախ մարտակցեցան։ Եւ ի տեղեկանալ թագաւորին 'յոյժ հաճի ի քաջութիւն նորին և գրէ առ Վէալի փաշայն. հարց ասէ զվարդապետն զի թէ փոխէ զհաւատ իւր ի մեր զէնս շնորհեցից նմա զերիս

Թուղս. (որ է նոցին ծայրագոյն փաշայութեան գրօշ) և կարգեցից զինքն փաշայ Ղարսայ մէալլիքեանայ. այսինքըն սեփական որդւոց յորդիս. ապա թէ ոչ զինչ և կամեսցի զայն շնորհեսցից։

Իսկ ի հարցանել փաշային զայս հրաման, պատասխանէ երանելին. փաշայ ոչ միայն ոչ յաղթիմք մեք ի հեշտալեաց աշխարհի որ են վաղանցուկք. այլ և ի դժնդակ տանջանաց և մահու ի վերայ սուրբ և անբիծ հաւատոյս մերոյ. զի նախնիք մեր անցանելով ընդ հուր և ընդ սուր ժառանգեցին զանուն աւելի բազմօք քան զմեզ. և միանգամայն զկեանս յաւիտենից. վասնորոյ և ես իսկ որ երեւացայ ի ձեղ իբր յաղթօղ բազմաց, երանելի համարիմ՝ քան զայնպիսի կեանս և զանուն. մեռանել ի ձեռն տկարի ումեմն այլազգինի, ի վերայ ե վասն անուան Քրիստոսի Աստուծոյ մերոյ.մանաւանդ մեծութիւն աշխարհի, մեզ սեաւ զգեստաւորեցելոցս ի գլուխ արհամարհէ. վասն զի հանդերձեալ աշխարհին մեծութեան ակն ունիմք և շնորհակալ եմք ի Թագաւորէդ։

Ապա ասէ խորհեաց ղու ինքնին ե զոր ինչ խնդիր կամիս յայտնեա մեզ և մեք գրեսցուք Թագաւորիս մերոյ, պատասխանի ետ երանելին. միշտ շնորհակալ եմք ի Թագաւորէն զի ունի խնամ յատկապէս ի վերայ ազգիս Հայոց. բայց որովհետև եզերեայ երկիր է Ղարս և ծայր սահմանի իւրոյ տէրութեան. հրամայեսցէ զի բնակիչ հայք Ղարսայ լիցին ամենայնիւ վստահ ի մէջ տաճկաց ի հանդերձս ի զէնս ի յերիվարս և ապահով քան զայլ քաղաք և թեթև ի հարկս արքայական և ի գլխահարկս որ խարաճ ասի։ Եւ վանքն իմ որ է Բէշքիլիսայ ամենայնիւ ազատ լիցի ամենայն հարկաց և մի լիցի ընդ իշխանութեամբ Աղայ կոչեցեալ տեարց։

Գրէ զայս խնդիր փաշայն հանդերձ այլով յայտարարութեամբ որ ի մասին սուրբ հաւատոյ. և հաճեալ Թագաւորին, առաքէ նմա հրովարտակ մեծ զոր կոչեն Ղէազգի Հիւմէին. այսու հրամանաւ. Անանեա վարդապետ Հայոց կոչեսցի Քէալլաջի. և վանք նորա լիցի ազատ յամենայն արքայական հարկաց. և մի ոք համարձակեսցի իշխել նմա. և պատկանեալ սահման վանիցն լիցի ազատ և իշխեսցէ ազգ Քեալլէաջի Անանեայ վարդապետի նոյն վանից. սեփական որդւոց յորդիս։

Եւ բնակիչք Ղարսայ Հայք լիցին վստահ քան զայլ աշխարհս. ի հանդերձս ի զէնս և թեթև ի հարկս և տացեն զգլխահարկս այս է զխարաճս իւրաքանչիւր արու ԺԶ փարայ որ է եղեալ յայնժամ մէկ ապասի Տփխիսայ. զոր հրաման կայր մինչև ի ժամանակս մեր այն է մինչև ի Թուական Հայոց ՌՄԿ և այնուհետև բարձաւ այդ կանոն. թէև ոչ աւելի քան զայլ երկիր օսմանեան. և Քրիստոսի Աստուծոյ ընդ Հօր և Հոգւոյն փառք յաւիտեանս ամէն։

Ծանօթութիւն

Անուն Ղարսայ փաշային Ցիւսուֆ փաշայ. բայց եղաք Վէալի փաշայ. սխալեալ եմ յայն զի սահման է օսմանցւոց զմեծամեծ փաշայս որք կրեն զերիս Թուղս (դրօշս) Վէալի, Վէազիր և Աէար էասկար կոչեն, բայց իսկական անուն նորա է Ցիւսուֆ փաշայ։

Մարհէասայ բառն թարգմանի այսպէս

Մար որ է օձ. Հէասայ որ է գաւազան։

ԻԵ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՄԺԴ 1765 յունիս 25. Թաթար խանն Ղրիմու եկն ի Կոստանդինուպօլիս առ ի հաճել զմիտս սուլթան Մուստաֆային բանալ պատերազմ. ընդ. ռուսս։

Յուլիս 16 Թաթար խանն գնաց ի Կոստանդինուպօլսոյ։

ՌՄԻ 1771 Հրկիզութիւն մեծ եղև ի Ղալաթիա, որ անեաց իբրև ժամս 16, ի բուռն բարեկենդանի գիշերին՝ սաստիկ հողմով և ձեամբ, որ և այրեցաւ եկեղեցին սուրբ Լուսաւորչի։

ՌՄԻԱ 1772 փետր. 12. ի Ղալաթիա մարտնչեցան լազքն ընդ նաւավարաց ընդ միմեանս մեծաւ քինախնդրութեամբ զաւուրս ինչ։ Իսկ յետոյ այրեցին զնոր գիւղն. և զկնի աւուրց ինչ հուր հարեալ այրեցին և ի Ղալաթիա զպալատն ղռանտաբուռի։

ՌՄԻԲ 1773 յունիս 3. առաքեցան դեսպանք առ ռուսս յօսմանեանց վասն հաշտութեան դեսպանքն Նեմցէյու և Կիրիտցի օսման էֆէնտին։

Օգոստ. 14. Բասենցի Ցարութիւն վարդապետ Նուիրակն սրբոյ Էջմիածնի ի Կոստանդինուպօլիս զկնի աւարտման գործոյն եղև առաջնորդ Պրուսայու. և անտի գնաց ի Վնէժ կամ. ի Թրէսթ ընդ իւր ունելով զարդիւնս սրբոյ Աթոռոյն. այլ յետոյ Սիմէօն կաթուղիկոսն գրրեաց դիր օրինաւոր առ. կայսրն. և նա իրաւամբ առեալ ի նմանէ զդրամսն յղեաց ի սուրբ Աթոռն. և զնա ինքն զԲասենցին արհամարհեալ ընկեց յեպիսկոպոսական պատւոյն. և զկնի այնր աղբեղայից հաւասարեալ, նման նոցա տայր զռոճիկն յարքունուստ. մինչև յետ ժամանակաց վախճանեցաւ անդ։

Սեպ. 13. Սարգիս եպիսկոպոս Սոռաֆեան Կոստանդինուպօլսեցի գնաց յարևմուտս։

Նոյեմ. 12. Սամուէլ եպիսկոպոսն գնաց յարևմուտս. և յետոյ ի ՌՄԻԴ Թուականին և հոկտ. 26 դարձ արարեալ եկն ի Կոստանդինուպօլիս. և յառաջին նուագ յելանելն յատեան յեկեղեցւոջ ի քարոզութիւն ժողովրդեանն, եդ բնաբան զբան աւետարանին՝ շօշափեցէք և տեսէք զի ես նոյն եմ։

ՌՄԻԳ 1774 յունվ. 10. մեռաւ սուլթան Մուստաֆայն և յաջորդեաց սուլթան Համիտն։

ՌՄԻԴ 1775 դեկտ. 20. ծնաւ որդի անդրանիկ սուլթան Համիտին. բայց մեռեալ. ըստ արդար իրաւանցն Աստուծոյ գրեթէ։ Քանզի յառաջագոյն հրաման ետուն նորոգել եկեղեցիսն հայոց և յունաց, և ի բողոքել շրջակայից տաճ-

կացն, հրամայեցին քակել. որոյ վասն բազում վնաս եհաս եկեղեցեացն յունաց, և մնացին կիսակատար. զի արգելեցին ի շինելոյ։

ՌՄԻԷ 1778 յունիս 29. վասն հերձուածոց արզուհալ կնքեալ ամրաստանութեան մատուցին արքային ի հրապարակ Բէշիքտաշին. և սկսաւ վէճն գրգռիլ։

Յուլ. 25. վախճանեցաւ Գասպար ամիրայ Մուրատեան ի ժամտախտէն ի Կոստանդինուպօլիս։

Օգոստ. 5. սուրբԵրուսաղէմի վէքիլ հաճընցի Սարգիս եպիսկոպոսն գրնացեալ ի Կոստանդինուպօլիս վախճանի անդ։

ՌՄԻԹ 1780 յունվ. 27. վախճանեցաւ քաջ նկարիչ պատկերահան տիրացու Ռափայելն այր երեելի։

Յունիս 14. Մուրհակ ամրաստանութեան մատուցին առ եպարքոսն ի Կոստանդինուպօլիս զի հրաման հանցէ դարձուցանել զեկեղեցիսն գաղատացւոց զոր կալեալ էին հերձեալքն ի մէնջ։

ՌՄԼ 1781 մարտ 25. գնացին ի քիւրէկն վասն հերձուածողութեան (1 կոյր Մինասն ի 26 փետր.) 2 խափամաճի Լօրէնն. 3 Վարդանն մանկավարժ. 4 Թիւլպէնտճի Յովսէփն. 5 Մահտեսի Քերօբէն. 6 դերձակ Սերօբէն. 9. 10. երկու եղբայրք Աբեկ և այլ ինչ անուն։ Իսկ յաւուրս համատանցի Յովհաննէս պատրիարգին գնացողք ի քիւրէկն են այսոքիկ. 1 Հանըմզատէն. 2 ախտէր Սուքիասն. 3 Պարոնզատէն. 4 և ոմն վաճառական ի միասին։ ծ Նիկողիմոսն. 5 Պայտառենց Գրիգորն. 7 ժամաշէն Մատաթիայն. 8 ոմն քիւրքճի. 9 Երկանենց Պետրոսն. 10 Սրմաքէշ պարոնն. 11 Կարնեցի վաճառական ոմն. 12 պօզուճի Սերօբէն. 13 Սրմաքէշ Հիւմրիւզն։ Իսկ բանտարկեալքն են այսոքիկ. Թառփօշճի Կոմիտասն. Ծռովիզեան Անտօնն և Զիլինկիր Պետրոսն։

Մայիս 2. տիրացու Գէորգ պատուելի այր զգօն հմուտ բազում լեզուաց եղեալ ի Կոստանդինուպօլսոյ գընաց ի սուրբ Էջմիածին։

7. Առաքեցաւ յարքունուստ Ղաբուճի պաշը ի Գաղատիա դարձուցանել զեկեղեցիսն ի հերձուածոց առ մեզ։

ՌՄԼԱ 1782 յունիս 23. տիրացու Գէորգն պատուելի դարձ արար ի սուրբ Էջմիածնէ ի Կոստանդինուպօլիս։

ՌՄԼԲ 1783 մայիս 4. Սահակ Նուիրակ եղեալ ի սուրբ Էջմիածնէ մտանէ ի Կոստանդինուպօլիս և նստի ի սուրբ հրեշտակապետ եկեղեցի։

Յունիս 19. օգն մարախլապատ և միգախառն սփռեալ յամենայն տեղիս արգել զճառագայթս արեգական, զի տեսանէր արիւներանգ շառագունեալ ի վերայ երկրի որպէս նորանշան իմն զարհուրելի մինչ ցաւուրս հինգ, և ապա այնուհետև օր յաւուր սկսաւ փարատիլ յետ ոչ սակաւ աւուրց. հանգոյն ամին և լուսինն զլոյսն ընդ աղօտ շառաւիղեալ ի մի բոլոր ամիսս. այս լինէր ի Կոստանդինուպօլիս։

ՌՄԼԳ 1784 օգոս. 30. երեք նաւք մեծամեծք և գեղեցիկք եկն յըՍպանիոյ ի Կոստանդինուպօլիս, բայց փոքր մի յառաջ քան զմուտ նոցին ի քաղաքն, եկեալ ի տեսիլն ահաւոր ի զնին արքունականաց և ռամկաց հանդերձ ծանրագին ընծայիւք. և ի հոկտ. 13 եղեալ գնացին։ Բայց անձինք ոմանք ի նոցունց արք որկրամոլք տեսեալ զյոլով բարութիւնս կերլեաց քաղաքին, թըրքացան առ ի մնալ անդէն. իսկ յելանելն նաւուց խնդրեցին զայնոսիկ ուրացօղսն և առին ի նաւսն անդ, և այն

ինչ ուղղեցան ի դնալ, զնոսա զամենեսին այլազգի հանդերձիւքն, զոր զանձամբ ունէին՝ կախեալ ի ձողից առագաստիցն՝ խեղաամահ արարին, զոր ակն յայտնի տեսին բազումք ի բնակչաց քաղաքին։

ՌՄԼԴ 1785 փետր. 10. ի Կոստանդինուպօլիս հողմն հարաֆային ուժգնակի շնչեալ կործանեաց զբազում նաւս մեծ և փոքր, և աւերեաց զտունս զոմանս, և կորոյս զբազում մարդիկ։

ՌՄԼԵ 1786 սեպ. 3. Ցայս Թուականիս կատարելապէս արգելին զգործածութիւն սրբագրեալ տօնացուցին, և զհնգեսին կիւրակէսն բարձին բաց ի գիւտի նշխարաց կիւրակէէն։ [124]

ՌՄԽԲ 1793 սեպտ. 26. սուրբ Երուսաղէմի պատրիարգ Յովակիմ արքեպիսկոպոսն վախճանի։

ՌՄԽԶ 1797 փետր. 1. Դանիէլ եպիսկոպոս միաբան սուրբ Էջմիածնի գնայ նուիրակ յՆլլադա ի Կոստանդինուպօլսոյ։

ՌՄԽԷ 1798 փետր. 18. ի Կոստանդինուպօլիս սուրբ Նշան եկեղեցի Ղուրուչէշմէի նորոգ շինեցաւ ի հիմանէ հոգաբարձութեամբ բարեպաշտ Զօպան ամիրային. և էօծ զնա Յովհաննէս եպիսկոպոս Կոստանդինուպօլսեցի ի տրնտեսի կիւրակէին։

ՌՄԽԸ 1799 մարտ 11. Զաքարիա եպիսկոպոս Կաղզուանցի միաբան սուրբ Էջմիածնի պատրիարգ Կոստանդինուպօլսի՝ վախճանի, որ էր պատկեր աւուրն ուրբաթ մեծի պահոց. սա վարեաց զիշխանութիւն պատրիարգութեան զամս ԻԵ. հանգուցին զսա մեծաւ հանդիսիւ բազմութեամբ ժողովրդոց ի սուրբ Նրշան եկեղեցի Ղուրուչէշմի։

Մարտ 14. ժողովեալ ապա երեելեաց ազգին յընտրութիւն նորոգ պատրիարգի, միաբերան համայն բազմութիւնն ետուն պատասխանի զԴանիէլ եպիսկոպոսն խնդրեմք մեզ պատրիարգ, (որ յաւուրսն յայնոսիկ եկեալ էր յՆլլադայէ և գտաւ ի Թաղումն Զաքարիայ պատրիարգի, յորոյ վերայ ասաց և քարոզ ղամբանական). ընդ այս բան ժողովրդեանն՝ հաճեալ երեելեացն, մահսէր արարին և առաքեցին ի դուռն բրդեշխին։

Սեպտ. 19. սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ երկու կողմի երկու եկեղեցիքն, որ ի Ղալաթիա, սկսան շինել. և ի 13 նոյեմ. օծ զնոսա Դանիէլ պատրիարգն մեծաւ հանդիսիւ, ընդ նմա էին և երեք եպիսկոպոսունք՝ Յովհաննէս, Պետրոս, և Յակոբոս։

ՌՄԾ 1801 մայիս 24. Աղամնի Կարապետ վարդապետ աշակերտ Զաքարիայ պատրիարգի վախճանի։

ՌՄԾԱ 1802 դեկ. 1. զկոնդակաբերն Դանիէլ կաթուղիկոսին Դրիգոր եպիսկոպոսն դաղատացի հանեալ ֆէրմանաւ ի սուրբ Դէորդ եկեղեցւոյ Կոստանդինուպօլսի, կամէին առաքել յաքսոր բայց ոչ յաջողեցաւ։

ՌՄԾԲ 1803 յունիս 25. զԳէորգ վարդապետ աբեղայն Սահակ նուիրակի, որ գնացեալ էր նուիրակ յԱնդրիանուպօլիս, աքսորեցին յԷջմիածին. ուրանօր անկեալ ի ձեռս Դաւիթ կաթուղիկոսի, եգ ի բանտի, և անդէն յաւէտ տառապեալ և ի սովոյ նուաղեալ վախճանի։

ՌՄԾԶ 1807 մայիս 8. Սահաթճի Բարդուղիմէոս Զէլէպին վախճանի ի Վարագայ սուրբ խաչի բարեկենդանի աւուրն, զոր ի նոյն օր անցեալ ամին բանադրեալ էր Դրիգոր պատրիարգն։

ՌՄԾԷ 1808 յունիս 23. Դանիէլ կաթուղիկոս ձեռնադրեաց զաբեղայն զՆերսէս վարդապետն՝ եպիսկոպոս։

1805 Յուլիս 5. տէր Առաքիւննոս անուանի քահանայ Թիֆլիզեցի՝ ձեռնտու Յովսեփայ անուանեալ կաթուղիկոսի ի յառաջադիմութիւն տպագրատանն և դպրատանն Նոր Նախիջևանու. և յետ վերադառնալոյն ի Հնդկաստանայ ի գործոց նպաստահաւաքութեան՝ որ վասն սոյն Յովսեփայ, ի Կոստանդինուպօլիս. և անդ ևս ձեռընտու լեալ կաթուղիկոսութեանն Դաւթայ, ապա վախճանի բնական մահուամբ ի սոյն թիւ։

1808 Հոկտ. 9. Վախճանի ի բերդըն Երևանայ Դանիէլ կաթուղիկոս. այն ինչ պաշարեալ պատեալ ունէին զօրք ռուսաց զայն բերդ։

1810 Ապրիլի 26. Աստուածատուր արքեպիսկոպոս աւարտեալ զգործ նուիրակութեան Եւդոկիոյ եկեալ եմուտ ի սուրբ Էջմիածին։

1810 Դեկտ. 2. Գրիգոր պատրիարգ զկնի աքսորանացն ի Կոստանդինուպօլսոյ ի սուրբ Էջմիածին ի ձեռս Դաւթի կաթուղիկոսի և անտի գնալոյ ի Տփխիս և վերադառնալոյ անդրէն յԷջմիածին ի տեղակալել Դանիէլի կացեալ ի ժամանակս ինչ անդէն վախճանի յետ տասն և հինգ աւուր հիւանդութեանն։

ՌՄԿԲ 1813 սեպտ. 6. Կոստանդինուպօլսեցիք երևելիքն ազգիս նկատելով զՅովհաննու պատրիարգի զանկարութիւն յիշխանութեան իւրում, որ անկեալ դնէր ի փքուռոյց ախտս վրշտամբեր, վասնորոյ ժողովեալ ի միասին գնան առ Յովհաննէս պատրիարգն, և առեալ ի նմանէ զթուղթ հրաժարանաց, կացուցանեն պատրիարգ զԱբրահամ վարդապետն Տաթևացի նուիրակն սրբոյ Էջմիածնի. այս երկոքին պատրիարգունք յետ այսոցիկ բանից կացեալ առ միմեանս զաւուրս վեց սեղանակցեալ իրերաց սիրով, եւ պատրիարգ պարգև նորոգ պատրիարգին զզմրուխտ մատանին ծանրագին՝ յոմանց պատրիարգաց առաջնոց յաջորդութեամբ առ ինքն հասեալ, և զգաւազանն, և զտասն կտոր գրեանս, և ապա ելեալ գնաց յՈւսկիւտար ի վանս սուրբ Երուսաղէմի, հոգալով զխաւորացն ազգիս զպիտոյս նորին ամսոյ յամիս 250 մառչիլ։

ՌՄԿԴ 1815 դեկա. 22. Ել ի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Աստուածատուր եպիսկոպոսն աշակերտ Ղուկաս կաթուղիկոսի գնալ ի Կոստանդինուպօլիս նուիրակ առ ազգն ըստ խնդրոյ Աբրահամ պատրիարգին և երևելի իշխանացն ազգիս և եմուտ ի Կոստանդինուպօլիս, և մնացեալ անդ զաւուրս ինչ, ել անտի ի վեճակսն նուիրակել զայն յառաջագոյն ըստ յառաջադրութեան իշխանացն և պատրիարգին, որ էր Պօղոս վարդապետ Անդրիանուպօլսեցի. և սկսեաց ի Պալըքէսէր Ղասապայէն կատարել զգործն իւր։

ՌՄԿԵ 1816 յունվ. 31. Թօխաթցի երբեմն Երուսաղէմի նուիրակ Իզնիմիդու և Պրուսայի դէտ կոչեցեալ Կարապետ եպիսկոպոսն վարեցին ի սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ Կոստանդինուպօլսի. և ժամանակ ինչ աստ անդ վարանեալ յետոյ փախեաւ ի Լիբանան։

Նոյեմ. 30. զՏաթևացի Աբրահամ պատրիարգն հանեալ յիշխանութենէ, կացուցանեն պատրիարգ զԵրուսաղէմի վէքիլ Պօղոս արհին. և Աբրահամու տան յետոյ զառաջնորդութիւն Մարզուանու։

ՌՄԿԶ 1817 մարտի 17. վէքիլ Յակոբոս վարդապետն Աքշէհիրցի յղեցին իշխանք ազգիս ի Կոստանդինուպօլսոյ ի Դամասկոս և անտի յԵրուսա-

զհետ հանդերձ նորոգ շնորհեալ խատտիշէրիֆիւ զոր շնորհեաց մեծափառ Մահմուտ արքայն սատտիկ իմն հրամանաւ առ բդեշխն Դամասկոսի, վի յայնմհետէ տարեկան տուրքն ազգիս մերոյ վասն Երուսաղէմի միայն քառասուն հազար դուռշ լիցի, և այլ ոչինչ աւելի քան զայն պահանջեսցէ։

ՌՄԿԵ 1816 նոյեմ. 30. ընկենուն զԱբրահամ պատրիարգ յիշխանութենէն. և փոխան նորա կացուցանեն պատրիարգ զվէքիլն սրբոյ Երուսաղէմի զԳօգոս վարդապետն Անդրիանուպօլսեցի, որ նորոգ վերադարձեալ ի սուրբ Էջմիածնէ ի Կոստանդինուպօլիս ձեռնադրեալ եպիսկոպոս, ընդ դէմ Աբրահամու։

ՌՄԿԶ հոկտ. 31. աւուր, զկնի երեկոյեան յերկրորդ ժամուն վախճանի Դաւիթ կաթուղիկոս ի սուրբ Աթոռն Էջմիածին. և Եփրեմ կաթուղիկոս ընդ եպիսկոպոսաց մեծաւ հանդիսիւ եկեղեցական դասուք տարեալ հանգուցանեն ի գաւիթ սրբոյն Գայիանեայ ի կարգըս շիրմաց հանգուցեալ հայրապետացն յերկրորդ աւուր նոյեմբեր ամսոյն։

ՌՄԿԷ 1818 օգոստ. 1. ի սոյն գիշերիս եղև հրդեհ մեծ ի Կոստանդինուպօլիս ի Ղատրղայ իւլիմանին և ի կէտիկ փաշայն, և այրելով եկն մինչև ի սուրբ Աստուածածին եկեղեցի պատրիարգական տևելով ժամս 23։ Ի սոյն այրեցան բազում տունք հայոց քան այլոց։

Օգոստ. 22. վախճանի Թէոդորոս պատրիարգ Երուսաղէմի՝ զորմէ գրեն միաբանքն առ պատրիարգն Պօլսոյ և յիշխանաւորս ազգիս և խնդրեն զոմն ի միաբանից իւրեանց պատրիարգ։

Սեպտ. 19. ժողովին վարդապետք և քահանայք և գլխաւոր իշխանք ազգիս և երևելիք յարհեստաւորաց ի պատրիարգականն եկեղեցի սուրբ Աստուածածնի, և յետ ընթեռնլոյ զգիրս միաբանից սուրբ Երուսաղէմի ի հանդէս ժողովոյն, ոչ հաճեցան իսկոյն ընտրել զոք ի պատրիարգութիւն, զի այն բան միաբանիցն թէ նզովիւք փակեալ է ի նախնեաց ոչ զոք կացուցանել պատրիարգ բաց ի միաբանից վանուցս, ի կասկածանս էարկ զգլխաւորս ժողովոյն. ուստի անդէն կացուցին ի դիմաց ազգին փոխանորդ զՑակոբոս եպիսկոպոսն Աքշէհիրցի և առաքեցին անդր ծանօթանալ մտաց միաբանիցն և այնպէս ազգ առնել ազգին. և ապա ըստ այնմ տնօրինել։

ՌՄԿԸ 1819 օգոստ. 20. զՏիւզեան Գրիգոր և Սարգիս պարոնայսն եդ ի բանտ զարփհանէ էմինին ի զարփահանէ անդր հրամանաւ տէրութեանն ի Կոստանդինուպօլիս. և յերկրորդ աւուրն քննեալ զհաշիւն զարփհանէին ի նոցունց, պարտաւորեցան տէրութեանն վճարելի զրամ, զորս առ ինքեանս կորզեալ էին, 20000 քէսէ. [125] զայս այսպէս տեսեալ տէրութեանն նոյն ընդ նոյն կնքել ետ զամենայն դրունս տանց նոցուն. և նոցին պարագայիցն՝ ազգականաց և այլոց. և ըմբռնեալ զմիւս եղբարսն նոցին պարագայիցն՝ զազգականն նոցին զերեծիլի ոմանս տարեալ ի զարփհանէն եդին ի բանտի. իսկ զբոլոր կանայսն քառասնիւ չափ ետուն ի պահեստ առ պատրիարգն հայոց, ընդ որս էր և մի կարգաւոր։ Յետ որոյ տէրութեանն մարդ կարգեալ ի վերայ տանց և ստացուածոց նոցին հանել ի վաճառ, թէ նիւթեղէն և թէ գոհարեղէն. և գտաւ ինչ բազում յոյժ առաւել քան զոր պարտէինն վճարել տէրութեան։

Եւ ապա ի 25 սեպ. զԳրիգորն և զՍարգիսն գլխատեցին ի պապահիւմայիւն կոչեցեալ դուռնն արքունական

որոց գիր Փնասուն էր այս։

«Իւչ տեօրթ սեննետէն պերու զարպ. հանէի ամիրէ մըմուլէրինին, ղաֆլէթ վէ փիշէլէրինտէն նաշի ճիպլիյէթլէրինտէ մերկիւզ օլան խըյանէթի իճրայի ֆէրսէթ պուլարաք եկիրմի պին քեսէտէն միւթէճավուզ աքճէի զիմմեթլէրինէ կէչիրուպ, եալըլար վէ խանելեր պինասի՝ վէ սայիր էնվայի սէֆահաթ վէ ինթիշամլէրինէ սարֆ իտէրէք պէյթիւլ մալի միւսլիմինի իթլաֆ վէ քէնտուլէրինաէն մաատէ միւթաալի քաթլերինին խանէլէրինաէ տախի քէնիսա պինա իտիւպ քաթոլիք րարապլէրի կէթիւրէրէք փայի թահթ սալթանաթի սէնիյէաէ ալինէն իճրայի այնի պաթիլէյէ ճէսարէթ իտէն՝ տիւզ օղլուլէրինտէն սէրքիս նամխայընըն պու վէճհիլէ ճէզայի սեղասի իճրայ օլունմայ իչէ լաշէյի մէնհուտէսի տիր»։ [128]

Իսկ զՄիքայէլ եղբայր նոցին և զՄկրտիչ հօրեղբօրորդին տարեալ ի յՆէնիքէօյ՝ հանին ի կախաղան ի դրունս ծովեզերեայ տանց նոցունց։ Վերադարձուցին և զՅակոբ եղբայր նոցին ի ծովագնաց ճանապարհորդութենէ (որ յաւուրսն յայնոսիկ ելեալ ի Կոստանդինուպօլսոյ ի պատճառս գրօսանաց գնայր դէպ ի Հռոմ) և բերեալ եդին ի բանտ առ միւս եղբարսն իւր. և զկնի սակաւ ժամանակի աքսորեցին զսոսա ի Կեսարիա քաղաք։

Օգոստ. 8. յաւուր կիւրակէի յանկարծ բազմութիւն խուժամուժ ամբոխից՝ էր որ օտարական եկամուտ, և էր որ նոյն իսկ Կոստանդինուպօլսեցի յառաջագոյն խորհրդով հրապուրեալ ի չարայոյզ արանց ոմանց, եկեալ խուռն բազմութեամբ զեղան յաւագ եկեղեցի և ի պատրիարգարանն առ ի ըմբռնել զպատրիարգն. իսկ պատրիարգին կանխաւ զգացեալ զայնը ամենայնէ, եւ փակել զդրունսն պատրիարգարանին, զի ժամ գիպուկ գտեալ զերծուսցէ զանձն ի վտանգէն. ապա ելեալ ի վերնայարկ սենեկին իւրոյ, և ընդ մի փոքր պատուհան ելեալ արտաքոյ իջանելով ընդ որմն ի տանիս տան տաճկի միոյ՝ որ էր կից ընդ շինուած պատրիարգարանին, և անտի ևս մերձ լինելով ընդ որմն ծառ մի, ընդ այն լռիկ իմն սողսկեալ էջ ի բակ անդր տանն, զոր տեսեալ տանտիկնաց այլազգւոյն, և գիտացեալ զեղելութիւնն առին ի ներքս։

Բայց բազմութիւնն զայսմանէ աստի ոչինչ զգացեալ՝ եկին կուտեցան ի պատրիարգարանն, և բացեալ բռնի զդրունսն յարձակեցան ի ներքս սենեկացն և որոնեալ աստ անդ ոչ գտին. ուստի ի մոլեգին բարկութիւն բրդեալ՝ հարին ապտակ ինչ սպասաւորացն հարցեալ թէ ուր իցէ պատրիարգն։ Եւ այսպէս սակաւ ինչ ընդ երկարել այսմիկ շփոթութեան, հասին անդէն զապթիէք ի վերայ բազմութեանն և զօրս միանգամ եղեն ձեռն ենաս կալան անզերծանելի. և այլոց բազմաց տեսեալ զայս փախուստ ետուն և ցրուեցան իւրաքանչիւրքն ի տեղիս իւրեանց սրտատրոփ երկիւղիւ և թաքեան յանծանօթ վայրս լռելեայն. իսկ զկալեալսն զգուշութեամբ տարեալ եդին ի բանտ. իսկ Պօղոս պատրիարգ տեղեկացեալ եթէ անդորրացաւ և խորտակեցաւ միջաբեկ վտանգն ի վերայ հասեալ՝ ելն և նստաւ ի տեղի իւր. և զինուորք սմանք կացուցան անդ պահապանք պատրիարգարանին. բայց վընասք մեծամեծք ծագեցան յետ այնուբիկ ամենևին սարսափելի. և ահարեկ արար զգրեթէ զամենայն հայկազունսն գտանեցեալս ի քաղաքի անդ. քանզի

կապեալքն ի բանտի, ի նեղ լծիլն ի կտտանս դանից և սպառնալեաց առ. ի առել զյարուցիչն խռովութեան այնր խորհրդոյ և զգլխաւորսն նոցին, մատնէին զոմանս՝ էր որ իրաւացի, և էր որ ամենևին ի տարապարտուց. կալան զԿեսարացի Կարապետ անուն սարկաւագ ոմն (որ նոյն իսկ էր արմատ ամենայն խռովութեան և յորդորիչ ամենեցուն յառաջագոյն ի տեղիս տեղիս զանազան ստայօդ բանիւք և խաբէական իմն հնարիւք) և արկին յորսայս խոշտանգանաց պատմել զստոյգն՝ եթէ ո՞ ոք յերևելեաց կալաւ զինքն առաջնորդ այսմ գործոյ ընդդէմ պատրիարգին. և յառաջն ոչինչ ասացեալ զումեքէ, լռելեայն առաքեաց զօտարական այր ոմն առ ոմանս անձինս ընդ որոց ունէր տեսութիւն զառաջին աւուրսն և խօսեցեալ իսկ էր զայլ և այլ բանս զպատրիարգէն, սպառնացեալ ևս նոցա զի գուն գործեսցեն ազատել զինքն. ապա թէ ոչ՝ մատնելոց եմ (ասէ) զձեզ իսկ նոքա զեկեալ այրն յետս դարձուցին կարի խստութեամբ բանից. և ապա յետ աւուրց ինչ կալան զերկու եպիսկոպոսունս. զԱստուածատուրն զսրբոյ Էջմիածնի գործակալն և զԵրեմիայն և զերևելի իշխանաւորս զխարաքէհեայ Աբրահամ ամիրայն. զաղա Պօղոսն Մարգարեան, զՊօղոս աղայն Կէլկէլեան և զՄկրտիչ աղայն Արփիարեան, զԳրիգոր աղայն Սախազատէ և զայլ ոմանս. հուսկ ապա և պատանի ոմն Ազարիա անուն (որ ի ժամանակս ինչ մտեալ էր յաշակերտութիւն սոյն պատրիարգիս և պատճառաւ իւիք յետոյ հրաժարեալ ի նմանէ) բերեալ ի պատրիարգարանն և պահեալ զաւուրս ինչ, զնա ևս եդուն ի բանտ։ Եւ զկնի անցանելոյ աւուրց երեմնից և աւելի ևս՝ արձակեցին ի բաց զերկու եպիսկոպոսունսն, և զիշխանաւորսն առաքեցին յաքսոր յայլ և այլ կղզիս, բաց ի Խարէքէհեայ Աբրահամ ամիրայէ, որոյ փոխան աքսորեցաւ Ազնաւուրեան Կարապետ քէհեայ ամիրայն ի Քիոս կղզի. քանզի գոլով նորա սառաֆ եգիպտական բդեշխին ազատեցաւ յետ վճարելոյն բազում դրամոց։ Եւս և արձակեցին յազատ զմասնաւոր անձինս ոմանս, յորոց մի էր եղբայրն վերոյիշեալ Երեմիայ եպիսկոպոսի։

Եւ մնացին ի բանտի անդ արք հինգ յորոց վերայ եղաւ վճիռ մահուան։

Առաջինն էր Գրիգոր Ամիրա Սախազատէ այր բարեպաշտ յեցեալ յալիս ծերութեան հանապազ հետամուխ ազգօգուտ գործառնութեանց, բարեշաւիղ ըստ ամենայնի ի վայելուչ գործս սուրբ հաւատոյն. զսա արկեալ տաճկաց ի տանջանս ստիպէին խօսիլ զոր ոչն գիտէր, և ցուցանել զայլս. բայց այրն երանելի տեսեալ զառաջակայ վըտանգն բազմաց անմեղաց ի ձեռն վատասիրտ չարչարեցելոցն և ինքն իսկ տկարացեալ ի տկար մարմին իւր անդէն ի խոշտանգանսն, արար պատասխանի՝ իմ են յանցանքն՝ և ոչ այլոյ ուրուք, ես արարի՝ և ոչ այլ ոք. ուստի զոր ինչ կամիք, արարէք փութով, և թէպէտ յոյս եդուն նմա ազատութեան առ աչս զի մի՛ նուազեալ մընասցէ ի ճանապարհի և վախճանեսցի, բայց և հատեալ վճիռ գլխատման, հեծուցին զնա ի ձի և առեալ տարան ի դուռն սուրբ Աստուածածին մայր եկեղեցւոյն պատրիարգարանի և անդէն եհատ դահիճն զգլուխ նորուն, և էր ժամ աւուրն իբրև իններորդ։

Զկեսարացի Կարապետ սարկաւագն

և զպատանին Ազարիա, որք յառաջագոյն տկարացեալ էին ի հաւատս ի տանջանսն անդ և յերկիւղէ մահուն, տարեալ ի Պարմաք քափուն հանդէպ իրերաց հանին ի կախաղան։

Զկեսարոցի էսկիճին տարին ի սէտէֆճինոցն մերձ ի չեմպերլի Թաշըն և ուրանօր հատին և զգլուխ նորին։ Իսկ զհինգերորդն զտէլի Պաղտասար կոչեցեալն սամաթիացի ածին ի Սամաթիա առ ի հանել ի կախաղան, որոյ հասեալ ի տեղի մահուն՝ խնդրեաց զջուր և յետ արբմանն և խնդրելոյ յամենեցունց զներումն որ անդն կային, և կարօտանօք համբուրելոյ զորդիսն՝ որք շուրջ զիւրև կային յազիողորմ արտասուս՝ կական բարձեալ հեկեկելով ողորմելի ձայնիւ, ինքնին էառ ի ձեռն զառասանն, որ կապեալ էր յախաւեղագէս անդր (սաչախ) կրպակին իւրոյ՝ մերձ յեկեղեցի սրբոյն Գէորգեայ, և արկ ի պարանոց իւր և կախեցաւ։ Զորս բարձեալ հայոց թաղեցին ի գերեզմանատունսն։

Ապրիլ 9. Կիրակոս կաթուղիկոսանն Կիլիկիոյ այն ինչ հասեալ էր ի գլխաւորել զգործ շինութեան եկեղեցւոյն՝ որ ի Սիս, բդեշխն Բեբիոյ դրեալ ի Կոստանդինուպօլիս առ տէրութիւնն զնմանէ՝ եթէ յապստամբութիւն խորհի. և ահա այս ութ ամ եղև զի պարապի ի շինութիւնս և ձեռնտու են ինքեան ազգ իւր. անուն եղեալ եթէ եկեղեցիս շինեմ, բայց պատրուակեալ հնարիւք կառուցանէ զամրոց մի մեծ անմատչելի աշտարակօք և բարձրաբերձ բըրգօք, միաբան ընդ իւր ունելով զՋէյթուն քաղաքի հայ բնակիչսն, որ յաւէտ յապստամբութեան կան քան եթէ ի հնազանդութեան մեծազօր տէրութեան ձեր. ըստ որում շահեալ է և զմիտս համազգեաց իւրոց՝ որ ի Կիւլիկիա. և հանդերձեալ իսկ է վտարանջել ի ձէնջ. ուստի եթէ ոչ փոյթ ընդ փոյթ կարճեսցի նա ի կենաց, ի վերջոյ զաշխատանս մեծ կրելոց եմք։ Ապաքէն առաքեցաւ յարքունուստ հրովարտակ առ Գերմանիկ քաղաքին բդեշխ ընդ ձեռամբ ածել զնա հնարիւք և անհրաժեշտ մահուամբ բառնալ զնա ի կենաց. և զեկեղեցին հանդերձ պարագայիւքն հիմն յարևու տապալել իբրև ամրոց ինչ ապստամբաց, և զբնակիչսն Զէյթուն քաղաքի մատնել անողորմաբար ի սուր և ի գերութիւն։ Ամենեւին ոչինչ ծանօթ զայսմիկ դաւադիր զրպարտութեանց Կիրակոս կաթուղիկոսն՝ մինչ շրջէր հանդարտաբար ի սահմանս բդեշխին Գերմանիկոյ յազգի իւրում ի պէտս նպաստից շինութեան եկեղեցւոյն, յանկարծ կոչեալ առ ինքն բդեշխն ծանոյց նմա զհրամանն արքունի. յայնժամ ըմբռնեալ յանհնարին երկիւղ, բանիւք բազմօք աղաչանաց և միջնորդու բարեկամաց տուեալ նմա ի ծածուկ զամենայն զոր ինչ ունէր առ ինքն առ ձեռն պատրաստ զոսկի և զարծաթ և զերևելի հանդերձս, և զայլ ևս յոլով արծաթ՝ զոր փութանակի ի հաւատացելոց անդր եղելոց ժողովեաց. որովք հազիւ հազ կարողացաւ հաճել զերեսս նորա՝ զի գրեսցէ սակս նորուն ի դուռն արքունի և սպասեսցէ մինչ ցդարձ պատասխանւոյն. որպէս զի և ինքն ժամանակ պարապոյ գտեալ, զեկուսցէ գրութեամբ առ երևելիսն ազգին ի Կոստանդինուպօլիս, զի ժամ յառաջ դարման գտանել մարթասցին այսմ դառնաղէտ վշտացս։

Ապա փութով հասեալ այս դառնաշունչ անակնունելի լուր անդր առ իշխանաւորսն յատուկ նամակաւ կա-

Թողիկոսին այնորիկ յապուշ կրթեաց զամենեսին, որք քաջագոտի արիացեալք զինու աստուածպաշտութեան և ազգասէր բարուք ընդ Պօղոս պատրիարգին բարեջան հոգունակութեամբ զհետ եղեն զտանել բարիոք տնօրէնութեամբ զելս իրացն առանց իմիք վտանգի. ուստի ամենեքեան առհասարակ՝ էր զի առանձին և էր զի միաբան խորհրդով շահեալ զմիաս երևելի նախարարաց տէրութեանն սակաւ ինչ զիջուցին զբորբոք բարկութեանն հրամանի։ Յետ որոյ արձակեցաւ ոստիկան ի դրանէն արքունի ի Գերմանիկ և հրովարտակ ընդ նմին. և ածին զկաթուղիկոսն ի Թագաւորեալ քաղաքն ի Կոստանդինուպօլիս, և տարեալ առ Ռէյիզ էֆէնտին և առ փոխանորդն եպարքոսին և առ այլ մեծամեծսն, հարցումն և քննութիւն արարեալ զամենայն պարագայիցն եղելոց. և քաջապէս հաստուլեալ անմեղ զրպարտութեան նորուն, առաքեցին առ պատրիարգն մնալ առ նա ի ժամանակս ինչ ցուցեալ և յոյս իմն ազատութեան յառաջիկայ վտանգէն։

1820 դեկտ. 2. Ելանէ Յակոբոս վարդապետ աշակերտ Յովհաննու պատրիարգի և վէքիլ Պօղոս պատրիարգի ի Կոստանդինուպօլսոյ գնեալ ի սուրբ Էջմիածին վասն ինչ ինչ հարկաւորաց ես և ձեռնադրել եպիսկոպոս, մտանէ անդ ի սուրբ Աթոռն յերկուս դեկտ. ամսոյն։

ՌՄՀ 1821 մարտի 7. Այն ինչ ազգ յունաց բարերջանկութեամբ աւուրց խաղաղացեալ համգչէր ընդ իշխանութեամբ հագարացւոց ի քաղաքս ի գիւղս և ի ծովեզերեայ տեղիս, և հարստացեալ օր աւուր պերճանայր խնդութեամբ բարեյաջող առից և արից գործադրութեամբ, յայտնեցաւ երկնեալն և յղացեալն ի միջի իւրեանց ամենայն մասամբ խորհուրդն ապստամբութեան ի վաղուց հետէ գիտութեամբ երևելեացն եկեղեցականաց և ժողովրդականաց. ապա անդ էր տեսանել ի բազմամբոխ քաղաքի սոսկումն սարսափումն և տագնապ տարակուսի իւրաքանչիւր քրիստոնէի. քանզի այն ինչ լուրն հնչեցաւ ի քաղաքի անդ և ստուգեցաւ ի դուռն արքունի, ել հրաման սաստիկ յարքունուստ զէն առնուլ ամենեցուն այլազգեացն և պատրաստ կալ հրամանի. ապա ի բանէ աստի գրեթէ նորոգ լցաւ քաղաքն մարդկամբ և մարդիկ զանազան զինու մեծ և փոքր, և հետ զհետէ կալան մեծամեծք յունաց և եդան ի բանտի և խուզեցաւ ամենեցուն տուն և գտաւ պատրաստութիւն զինուց բազում ձեռն արկին և ի տունս հասարակութեան ևս և հայոց, և որչափ էին զէնք պատերազմական առան յարքունիս, և յերևելեացն յունաց էր որ յաքսորս առաքեցան և էր որ խեղդեցան և գլխատեցան և ի ծովս ընկեցիկ եղեն։ Այս շփոթ սարսափելի տարածեցաւ և յամենայն սահմանս տէրութեանն, և արքունական հրամանաւ բերէին ի քաղաքաց քաղաքաց բազմութիւն արանց յունաց ի Կոստանդինուպօլիս և ի սուր անցուցեալ գծովս լնուին դիակամբք, և իւրաքանչիւր փողոց քաղաքին գոգցես նոր իմն սպանդանոց երևեալ, այսօրինակ ձգեցաւ գործ մինչև ի հինգ ամսաչափ ժամանակ, և հատաւ յոյս ամենեցուն և բարձաւ ակնկալութիւն կենաց ի մարդկանէ, զի ոչ լինէր յայնչափ ժամանակս առ և տուր վաճառաց և ոչ անցանել ումեք ընդ փողոց ինչ ի հարկաւոր պիտոյս. քանզի ուր և գտանէին սրիկայք զարս թէ ի յունաց և թէ ի հայոց անխտիր սրախո-

խոդ առնէին թէ ի ծովու և թէ ի ցամաքի։

Ապա զկնի այսը սկսան յապստամբեալ կղզիսն զօր առաքել ի սարկութիւն և ի նուաճումն կրկին։ Եւ կան յայս գործ տակաւին, որ է ցարդ հինգերորդ ամ։

ՌՄՀԱ 1822 օգոստ. 1. ի գիշերային պահու այն ինչ անցեալ էր ժամն յերկուս և կէս եղև շարժ սաստիկ ի Բերիա քաղաք, որ է Հալէպ. և աւերեաց զբազում տունս և զհաստահիմն շինուածս, մինչ գրեթէ ի չորից մասանց մինն հազիւ մնաց. և այն ևս խարխալեալ և անպէտ ամենևին։ Եղեն ընդ փլատակաւ բազում մարդիկ զրաւեալ այնպիսի զառն մահուամբ ի կենաց յամենայն ազգաց անդ բնակելոց. այր, կին, ծեր, տղայ, գոգցես երեսուն հազար, և աւելի ևս, բայց որք աճապարեալ զինքեանս ի պարտէզս և յընդարձակ հրապարակս ձգեցին, ազատեցան, որ գրէ ոմն ի զերծելոց անտի Կոստանդինուպօլսեցի՝ այս օրինակ և զիւրն ազատութիւն պատմելով, և թէ՝ այս 23 աւուրք են ցարդ և տակաւին ոչ դադարի երկիր ի շարժմանէն։

Եւ զի ի շրջակայ գիւղօրէից քաղաքիս ոչ սակաւ գեօղ և աւանս աւերեալ քանդեցան վնաս բազում գործեալ. յայսցանէ և գեօղ մի գոլով ընդ զառ ի վայր լերին միոյ ի սաստիկ շարժմանէն կործանեալ բոլորովին ելից զառաջիկայ ձորն ոչ ոք անդր եղելոց դերծեալ։

ՌՄՀԲ 1823 փետր. 17. յաւուր շաբաթու յերկրորդ ժամու աւուրն հրդեհ անկեալ ի թաղ ինչ Ղալաթիոյ ի վեր կոյս դէպ ի հիւսիս ի կողմանս Պէկօղլու իբրև սուրհանդակ յուժգնութենէ հողմոյն ճարակեալ զշինուածս և ևս առաւելութեամբ ելանէր ի վեր, այնքան, մինչ ասել բազմաց թէ ահա մերձեցաւ զխովին աւեր կողմանս շինուց իւրաքանչիւր ազգաց, բայց այն ինչ մերձ էր վախճան Տաճկաստանին և և սկիզբն հայոց ազգիս հիւանդանոցին շինուածոց և տանց, աստուածային իմն գոգցես տեսչութեամբ շրջեալ յանկարծ հողմոյն ի ներհակն կոյս առ մնացեալ շէնսն այլազգեաց քերելով զկողմամբ հայոց յաճիւն դարձոյց զամենայն ս զգեղեցկաշէն ապարանս և զմեծակառոյց մզկիթս նոցուն այլազգեաց մինչև սպառելով զամենայն վերստին եհաս յեզր ծովուն և անդէն լափեաց և զայն մեծածախ դեղեցիկ թօփխանէն Ղշլայ կոչեցեալ, յորում արքունական մարգիկ տեսուչք պատերազմական զինուց և գործադիրք նոցին բնակէին. էին անդ և բազմութիւնք թնդանօթաց, յորոց ոմանք ի հրոյ անտի պայթեցան։ Գրտանէր յայնժամ անդ և երեսուն հազար օխայ վառօդ, գտանելով անդէն վերակացուք զզօնք յառաջ քան զժամանել հրոյն ջրով և հողիւ զանգեալ ի տիղմ դարձուցեալ էին։ Ի հերկիզութեան աստ այրեցաւ աւելի քան զերեսուն հազար տուն։ Այս Ղշլայ շինեցաւ վերստին հրամանաւ արքային ըստ նըմանութեան առաջնոյն։

Յուլիս 1. Ի Կոստանդինուպօլիս յաւուր կիւրակէի յառաւօտեան պահուն ել հրդէհ ի Ղասըմփայ կոչեցեալ թաղն և սաստկացեալ հողմոյն յաճիւն դարձոյց զամենայն շէնս և զշինուածս այնր կողման թէ այլազգեաց և թէ հայոց. այրեցաւ և եկեղեցի սրբոյն Յակովբայ Զգօն հայրապետին այրեցաւ և արգելանոցն քիւըլէք կոչեցեալ տեղի յանցաւորացն։

Հրդեհեցաւ և նաւ մի մեծ ար-

քունական ի յեզր ծովուն և շարժեալ ի բնութենէ հողմոյն յառաջեցաւ այնպէս հրացեալ դէպ ի ծովեզերեայ տունս քաղաքին. յորմէ գրեթէ ամենայն քաղաքացիք սարսեալ դողացեալ ահաբեկ եղեն, երբ տեսին հրդեհեալ զայն ի վերայ ծովու. յայնպիսի հողմասաստ պահու, կասկածանս մեծ ունելով անցանելոյ ի կողմն իւրեանց, բայց ի գթութենէ տեառն վարեալ ի հողմոյ եկն դադարեցաւ ի փողոց Իսկէլէին Ֆէնէռու մինչև անդէն ամենևին ծախեցաւ հուրր և ընկղմեցաւ ի ծովն մնացուածք նորա։

Յուլիս 30. Պօղոս պատրիարգ Կոստանդինուպօլսի յԻւսկիւտար յերկուշաբաթի աւուր վարդավառի արար զընդունելութիւն քսան և չորս երևելի ամիրայից ազգիս ի պատճառս միաբան սիրոյ իւրաքանչիւրոցն ընդ միմեանս. և ի սոյն հանդիսի գրեցաւ թուղթ միաբանութեան և սիրոյ կալ իշխանացն ընդ միմեանս սիրով խաղաղութեան և յազգօգուտ գործս գտանիլ ամենեցուն կամակար յօժարութեամբ և հոգ տանիլ ամենայն հարկաւորացն՝ և յայսմ ետ իւրաքանչիւրոցն երդնուլ ի խաչ և յաւետարան, զի անխարդախ դիտաւորութեամբ լիցի խորհուրդ իւրեանց ընդ միմեանս, և ուղիղ սրտիւք արասցեն զոր ինչ ունին առնել որք և ստորագրեցին զայն և պահեցին առ իւրեանս։

Յուլիս 12. Ի Կոստանդինուպօլիս մայր եկեղեցւոյ տէր Մանուէլի ծուխ Էսկիճի Մկրտչի կինն՝ որ ի Պէկօղլու զերկու ուստր և զերկու դուստր ի միում նուագի ծնաւ որոց անուանքն՝ առաջնոյն Մարիամ, երկրորդին Կարապետ, երրորդին Կատարինէ, չորրորդին Յովհաննէս. զորս մկրտեաց յեկեղեցի սուրբ Երրորդութեան որ ի Պէկօղլու՝ նոյն եօթնեկի ժամարարն մականուանեալ Քէրէստէճի տէր Գրիգորն. և կնքահայր սոցին սանդալճի մահտեսի Եսայեայ որդի սալդալճի Նշանն, բայց յորում աւուր մկրտեցան, ի նոյն աւուր մի զկնի միոյ վախճանեցան, զորս աչօք իմովք իսկ տեսի յայն եկեղեցի գտանելով և իմ ընդ սրբազան հօրս ի գործ նուիրակութեան սուրբ Աթոռոյն Էջմիածնի։

Նոյեմ. 24. Յաւուր ուրբաթու արզուհալ ետուն արքայի վասն ոչ ընդունելոյ զՊօղոս պատրիարգն. և արքայն ստուգեալ եթէ այն առ նախանձու ինչ է, ետ աքսորել զՅարութիւն ամիրայն Նորատունկեան որ մակ անուամբ քեօռ Յարութիւն ասի. քանզի սա էր գլխաւոր գրողաց արզուհալին։

Պօղոս պատրիարգ Կոստանդինուպօլսի օր քան զօր ձանձրացեալ ի գործոց իշխանութեան և ոչ զօրելով յառաջացուցանել զբաղձանս իւր պէս պէս՝ խորհեալ ևս եթէ՝ գուցէ յաւուր միում անարգանօք հանցեն զինքն յիշխանութենէ, նախահոգակ եղև. և կոչեաց զգլխաւորսն ազգիս, և ծանոյց եթէ չեմ կարող այսուհետև կառավարել զազգն և տանիլ այսքան ծանրութեանց զի տկարութիւն անձինս նեղէ զիս. ուստի ահա նախապէս ասեմ ձեզ՝ ընտրեցէք զարժանաւոր ոք պատրիարգ ազգիս. և տեսեալ եթէ ստուգիւ կամովին հրաժարի ի պաշտամանէն, ոչ ինչ ասացին թէպէտ յայնժամ պատասխանի, այլ բան ետուն՝ զի եթէ հաճեսցի ընդ այն և տէրութիւն, ապա ընտրեսցեն զոմն։

Ի յաջորդ աւուրն գրեալ պատրիարգին զիստիֆայն՝ այն է գիրն հրաժարանաց առ տէրութիւնն և առաքեաց զայն ի ձեռն Յակոբոս եպիսկոպոս վէքիլին իւրոյ ի դուռն արքու-

նի, ընդ այս կոչեալ զպատրիարգն հարց և փորձ քննութեան արարեալ այն ինչ զտին կամովին հրաժարեալ դարձուցին յետս պատուով հրաման տուեալ ընտրել զոք պատրիարգ։

Հոկտ. 26. Ապա ժողովեալ երևելի ամիրայք և գլխաւորք արհեստաւորաց, միանգամայն վարդապետք և քահանայք յեկեղեցի սուրբ Աստուածածնի ընարեցին զնախկին գաղտնի ընտրեալն յոմանց երևելեաց գիտութեամբ սոյն պատրիարգի զտէր Կարապետ եպիսկոպոսն Մարզուանու. և անդէն Պօղոս պատրիարգ յոտին կացեալ կալաւ զձեռանէ նորոգ ընտրելոյն և նստոյց ի տեղի տալով զդաւազան զփիլոն և զմատանին զընկալեալն ի կաթուղիկոսէն յաւուր ձեռնադրութեան իւրոյ. և ապա միաբանական գրութեամբ ծանուցին ի դուռն արքունի. և ի յետևեալ աւուրն գնաց առ բդեշխն և զգեցաւ զխիլայն ընդ իւր և արք տասն և եկն եմուտ յեկեղեցի բազմութեամբ ժողովրդոց. և զքարոզ ինչ կարդացեալ ժողովրդոցն ըստ յարմարութեան, և ապա ել և մուտ ի պատրիարգարանն։

1822. Ցաւուր բարեկենդանի վերացման խաչին գտանելով Կիրակոս կաթողիկոս տանն Կիլիկիոյ առ. իշխողն նոյն կողմանց և հարկիւ բռնադատեալ ի նմանէ ըմպէ գիտութեամբ զմահաթոյնն ընդ սուրճի, և ուռուցմամբ մարմնոյն թիկանց և պայթուցմամբ ի տեղիս տեղիս՝ դեղնագոյն ջուրց հոսելով ի վիրացն, վախճանի զկնի երկուց ժամուց ի նոյն աւուր ի տանն նոյն չարին։

1823. Ի մեծի պահոցն մինչ էր ի սուրբ Երուսաղէմ ի վանս սուրբ առաքելոյն Ցակոբայ Աքչէհերցի Ցակոբ եպիսկոպոս միաբանն սոյն Աթոռոյ ըստ իւրն բնաբոյս բարուց, որպէս թէ ձանձրացեալ ի նոյն միաբանից, յառաջագոյն խորհրդակցեալ ընդ գաղղիացի եպիսկոպոսի միում գնայ ի մէջ նոցա և կրն առնու և ձեռնտուութեամբ նոյն եպիսկոպոսին լինի քօնցօլ Աքեայու հրովարտակաւ արքայի նոցին։

1824 մարտի 7. Այր մի Դաւիթ անուն տեղեաւ սալմաստցի, որ և երբեմն սպասաւոր ի սուրբ Էջմիածին Անդրէաս ծերունի արքեպիսկոպոսին. եկեալ աստ ի Կոստանդինուպօլիս տաճկացեալ էր վեց ամսաւ յառաջ. և այժմ կամելով ի գործ դնելով դիւրն չարութիւն արզ արար ի դուռն արքունի դատարանաց, եթէ ի գալստեան իմում յայս կողմանս Եփրեմ կաթուղիկոսն Էջմիածնի մարդ յղեալ կողոպտել ետ զիս ի ճանապարհին. և աւանիկ տումար ընչից իմոց, զորս ի ճանապարհին առին յինէն։ Արդ՝ աստ է փոխանորդ և վէքիլն Եփրեմ կաթուղիկոսին, որում ասեն նուիրակ Աստուածատուր մարասայ. ուստի դատ արարէք, և առէք զինչսն իմ ի սմանէ և տուք ինձ. յայս բան տարին ի դատարանն Ատամպօլ էֆէնտիին զնուիրակ Հայրն իմ. և մուրաֆայ եղեն. և յետ բազում բանից և հարցաքննութեանց, համոզողական բանիւ ասաց դատաւորն. ծերունի՝ կամիս զի տացուք սմա սակաւ ինչ և լռեսցէ. ասէ նուիրակն. ամենևին մինչև ցտակ մի վճարելի դմա չունիմ, այլ աստուածային իրաւանցն հլու և հպատակ կամ. և որ ինչ վճռէք ընդունելի են ինձ. յայս բան դարձուցեալ դատաւորին զերեսս իւր առ Դաւիթ անուն տաճկացեալն ասէ. քեզ ասեմ. ոչ եթէ ծերունիս այս չունի վճարել ինչ քեզ, այլ թէ և աստ գտցի ինքնին Եփրեմ կաթուղիկոսն չունի ինչ վճարելի մինչև ոչ

գացին կողոպտինչք քո։

Ապա յայսմ դատարանէ անյոյս եղեալ վերստին գնաց արզ արար ի դիւան Րէյիզ էֆէնտիին և պահանջէր զինչսն. իսկ սա ազդ արար պատրիարգին և զստուգութիւն իրին պահանջեաց. ուստի պատրիարգն և սրբազան Հայրս դրեցին ի սուրբ Էջմիածին. և նոքա առեալ ի Սարտարէն Երևանու թուղթ առ Ռէյիզ էֆէնտին ստուգութեան նորին ճշմարիտ վկայ և առաքեցին ի Կոստանդինուպօլիս որոյ օրինակն է այս։

«Նուիրեալ ոմն Էջմիածնայ երբեմն Դաւիթ անուն, զնա սակս գողութեան կամելով կաթուղիկոսն առաքել ի ձեռըն ուրումն զինակրի ի Սեան կղզի ապաշխարել, հնարիւք իւիք դերծեալ նորա ի զինակրէն անկաւ ի մզկիթն և ընկալաւ զհաւատ մեր, որ և Միրզայ Իւսիւֆ վերակոչեցաւ։ Մնալով նորա սատ ժամանակ ինչ պատճառեաց գնալ ի Հաճ յուխտ. որոյ յաղագս զգըրամս յոլովս ի հաւատակցաց մերոց ժողովեալ, զսոյն արար և ի Դաւրէժ. ուղղեաց զինքն ի Տփխիս. ուրանոր ծառայեաց իւր նախկին քրիստոնէութեանն. Զզուելին ի գործս վտարեցաւ անտի ի Ռուսաստան ուստի եկեալ է այժմ այդր մտաց որոյ վախճանն է խափել զոմանս և առնուլ դրամս, ապա մեկուսանալ ի գեղխութիւն ընդ իւրապիսեաց. բնաւին չունի նա զհաւատարմութիւն յիւրն գործառնութեան. և ըստ մեր իրաւանց այնպիսիք պատժոց են արժանաւորք, ուրեմն և նա։ Ողջ լեր։

Զայս թուղթ ընկալեալ Ռէյիզ էֆէնտիին պապանձեցոյց զնա. և ապա յետ երկուց ամսոց հարեալ ժանտախտիւ թաղեցաւ ի սանդարամետս։

Յունիս 6. Ջերմութիւն արեգականն կարի սաստկացեալ ի Կոստանդինուպօլիս կարի թալկացոյց զբազումս մարդիկ և մեռոյց յանկարծ մահուամբ չորս այր։ Երկուքն նաւավար ի նեղուց անդր ի մէջ նաւին ի ձգելն ղթի։ Եւ երկուքն լատին՝ որք դարձեալ ի վայրաց զբօսարանաց գային ի տունս իւրեանց՝ մինն անդէն ի ճանապարհին իսկ միւսն հազիւ ժամանեալ ի շէն իւր, եհան զհոգին։

Յուլիս 31. Նուիրակ Աստուածատուր արքեպիսկոպոս հայրն իմ բռնիւ պատրիարգին և գիտութեամբ ոմանց Ամիրայից եւ մեկնեցաւ ի Կոստանդինուպօլսոյ ի Պահճաճրք գիւղ հանդէպ Նիկոմիդայ քաղաքի մնալ անդէն յապահովի մինչև ծանուսցեն զբարիոքն ժամանակ դարձի։

1829 Յունիս 29. Յաւուր շաբաթու գիւտի նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին յաւարի առեալ կողոպտեցին հեծելազօրք Մարաց զվանս սրբոյն Յովհաննու Կարապետի՝ որ ի Տարօն և գրեթէ թողին ամայի, աւերակ և անբնակ ի միաբանիցն ամենեցունց։

1831 փետր. 13. Սերոբէ եպիսկոպոս հաստատեալն յառաջնորդութիւն Աստրախանայ մտանէ յԷջմիածին եկեալ յԵրևանայ՝ ուր յառաջ քան զաւուրս ինչ մտեալ էր՝ եկեալ ի Տփխիսոյ։ Ընդ նմա էր և ղէնէրալ Վասիլ Բէհպուտեանն կառավարիչն նահանգին Երևանայ։

Փետր. 17 Եւ աստէն խորհրդակցեալ ընդ սինօթին և սրբազնագոյն կաթուղիկոսին ի սոյն աւուր առաքին զրութիւնք յանուն կաթուղիկոսին առ իւրաքանչիւր առաջնորդս վիճակացն գալ և գտանիլ աստէն ի 15 մարտի և գումարիլ ժողով վասն ընտրութեան նորոգ կաթուղիկոսի։ Եւ ապա ինքն Սերոբէ եպիսկոպոս և ղէնէրալն յետ առաքելոյ

հրաւիրանաց գրութիւնսն ի նոյն աւուր դառնան աստի յԵրևան։

Փետր 23. Կարնոյ ժողովրդեան փոխադրելոցն ի Տայս Կարապետ արքեպիսկոպոս եմուտ յաթոռ այսր եկեալ ի Տփխիսոյ։

Մարտ 8. յութն մարտի յաւուր երկուշաբաթի երկրորդ շաբաթուն մեծի պահոց մտանէ այսր ի սուրբ Աթոռս Յովհաննէս սրբազան արքեպիսկոպոսն Տփխիսոյ ընդ իւր ունելով զՄինաս եպիսկոպոսն, զՍուքիաս վարդապետ առաջնորդն Շամախւոյ, զՑարութիւն վարդապետ առաջնորդն Սանահնոյ վանից։ Եւ զերկուս աւագ քահանայս, զտէր Մխիթարն [127] և զտէր Աբրահամ ափի Մէլիքով [128], Գրիգոր արքեպիսկոպոս Երևանայ։

14. Ի հետ զհետէ մինչև ց14 մարտի եկին ի սուրբ Աթոռս Նիկողայոս վարդապետ առաջնորդ գաղթական բընակչացն Նախիջևանայ. և Սարգիս վարդապետ առաջնորդ վանաց Նախավկային՝ որ անդ ի Նախիջևան։ Ազուլեաց վանաց Թօվմայ առաքելոյ առաջնորդ Սիմէօն եպիսկոպոսն և վանահայրն Սեւանայ. Սիւնեաց Տաթևայ վանաց արքեպիսկոպոս Սիմէօնն, Շամշաաինու Գրիգոր եպիսկոպոսն և Ստեփաննոս Ծաժակնեան արքեպիսկոպոս Շիրակայ գաղթական բնակչացն՝ որ ի Կարուց, միով քահանայիւ։

Եւ Սերոպէ արքեպիսկոպոս՝ որ էր յԵրևան ընդ Բէհպուտեան զէնէրալին եկն ի սոյն օր ի 14 ամսոյս այսր։

15. Ապա ի սոյն աւուր՝ յորում պայմանեալն էր սկսանիլ ժողովոյն, այսոքիկ յիշատակեալք և անդամք սինոթի Աթոռոյս և բոլոր միաբանութեան վարդապետք. և քահանայքն որ եկին ընդ եպիսկոպոսացն ի նոյն օր ժամ իբրև եօթներորդ հնչմամբ երից մեծի զանգակին ժողովեցան ի վեհարան անդր ուրանօր մտեալ Տեառն Եփրեմայ կաթուղիկոսի ողջոյն ետ ամենեցուն եղելոց և փոքր ինչ հասկացուցեալ հրամայեաց ատենադպրին ընթեռնուլ զթուղթ իմն յայտարարական առ ժողովեալսն ի դիմաց իւրոց. յորում ծանոյց մի ըստ միոջէ զտալն իւր հրաժարականն ի պաարիարգական պարտաւորութեանց. և զհաճիլ կայսերն ընդ այն և զհրամանն վասն ժողովոյ առնել կանդիտատս, այն է զերկուս արժանաւորս ընտրել վասն հայրապետութեան. և այնպէս ներկայացուցանել կայսերն. և ապա յառաջարկեաց հոգ ունել այսմ. և անդէն հրամանաւ սրբազնութեան նորին խօսեցաւ և Սերոբէ արքեպիսկոպոս բացայայտ ևս բանիւք ի նոյն միտս, և ազատ կամօք ամենայն ոք վասն օգտի Աթոռոյ և ազգի խորհեսցի վասն արժանաւոր ընտրութեան երկուց կանդիտացն և ի վաղիւն տացէ կամ առաջի արասցէ զիւր դատողութիւն և արձակեցաւ ժողովն։

Իսկ յերկրորդի աւուր ի 16 ամսոյն անդրէն նոյն անձինք բազմութեան ժողովոյն գումարեցան դարձեալ ի նոյն տեղի ի ծաղկեալն վեհարան. և խօսեցաւ Սերոբէ եպիսկոպոս և յետ փոքր բանից առաջի արար ժողովոյն զիւր դատողութիւն՝ մտաց անդէն ի վերայ նոյն առաջին երկուցն ընտրեցելոցն ի սինօթէն. և այսպէս սկսեալ ի վերուստ անտի մինչև ի խոնարհսն զնոյն ետուն բան դատողութեան մտաց իւրեանց. և ապա հրաւիրեալ զնորին վեհափառ օծութիւն՝ որում յայտնեցաւ միաբան հաւանութիւն ժողովոյն անդրէն ի վերայ նոյն երկուցն. և նա ևս զհաճութիւն իւր

ցուցեալ ընդ այն՝ ածան անդր առաջի վեհափառութեան նորին նոյն երկոքին ընտրեալքն տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոս և Վրաստանայ հայոց Յովհաննէս արքեպիսկոպոս՝ յորոց վերայ ասացաւ պահպանիչ աղօթիցն յօծելոյն և արձակեցաւ ժողովն։ Եւ պատրաստեալ գյայտարարական դրութիւնսն ժողովոյն վասն ընտրութեան յերրորդում նուագի ժողովեալ կնքեցին և ստորագրեցին։

Թարգմանութիւն բանի ասացելոյ ի պարսիկ լեզու ի Խոսրով Միրզայէ Թոռանէ շահին ի հրապարակական առենի ունկնդրութեան ի 10 օգոստոսի 1829 ամի, ի Ս. Պ. Բուրգ։

Գերազօր Թագաւոր Կայսր.

Անդորրութիւն Պարսկաստանի և սրբազան միաւորութիւնն՝ որ ի մէջ կայսերական մեծութեան Ձերոյ և մեծի տիրապետողին Իրանայ անգին հրամանատուի իմոյ և Հաւու՝ հակառակք էին հոգւոյ չարութեան։ Սա յարոյց ի Թէհրան գխումբս մոլեգնելոց՝ որք ի սկզբան այսր ամի կատարեցին զանլրսելի ապիրատութիւն՝ որում պատարագեցաւ դեսպանութիւն ռուսաց։ Դոյն օրինակ չարաշշուկ դիպուած խորախաւար մառախղով վշտաց մթացոյց զրովանդակ տուն մեր և զամենայն հաւատարիմ հպատակս նորա։

Սոսկալի եղև իրաւասէր սրտի Ֆէտ-Ալի-շահի մտածութիւնն՝ թէ ափ մի սինլիքորաց կարէ խզել զխաղաղութիւն և զմիաբանութիւնն ի մէջ նորին մեծութեան և մեծ ինքնակալին ռուսաստանի։

Նա հրամայեաց ինձ թոռինս իւրում աճապարել յաթոռանիստ քաղաքամայր այսր տէրութեան. նա աներկմիտ գիտէ՝ թէ ձայն իմ ձայն արդարութեան, դրաւեսցէ զբարեհաճութիւն կայսերական մեծութեան ձերոյ և անսասան արասցէ զբարեկամութիւնն ի մէջ երկուց գերավսեմ և քաջազօր Թագաւորաց յաշխարհի։

Ցանձն է ինձ յանուանէ հզօր հրամանատուի իմոյ աչաչել զՁեզ Թագաւոր մեծ՝ տալ ի մոռացօնս յաւիտենից զդիպուածն՝ որ հաւասարաչափ վիրաւորեաց զարքունիս ռուսաց և պարսից։ Սովիմբ ծանիցեն տիեզերք՝ թէ և ի նմանօրինակ զարհուրելի պատահարս երկու իմաստուն Թագաւորք խօսս արարին ընդ իրեարս անկեղծօրէն, և ամենայն տարակոյսք, ամենայն կասկած չքացան ի միջոյ, և ամենայնի եղաւ վախճան բաղձալի։

Իսկ ես ընտրեալս ի միջնորդութիւն վասն այսր ծանրակշիռ իրողութեան համարիմ զանձն իմ վերերևալ ի ծագ գերավսեմ բաղտի՝ արժանացեալ առաջի կայսերական մեծութեան Ձերոյ կատարելով զկամս նախահօր իմոյ հաստատել մշտնջենապէս զանդրդուելին համաձայնութիւն ի մէջ երկուց ազգաց՝ որոց նոյն ինքն նախախնամութիւնն առաջնորդէ ի փոխադարձ անտրխեղծ բարեկամութիւն։

Պատասխանական բան ասացեալ յայսմ ատենի ունկնդրութեան ի վիցէ գանցլերէ յանուն Թագաւոր Կայսերն։

Կայսերական մեծութիւն Նորա հրամայէ ինձ հաւատացուցանել բարձրութեան ձերում զայն լիակատար հաճութիւնն՝ որով լուաւ նա բանից ձերոյ և յայտարարութեան անկեղծ տրտմութեանն ի դիմաց Թագաւորի Ձերոյ։

Շահն մեծ ըստ վեհանձնութեանն իւրում չկարաց առանց զարհուրանաց հայիլ ի չարութիւնն՝ որոյ նպատակն էր խախտումն բարեկամութեան երկուց տէրութեանց նորոգ հաշտելոց։ Նա հանգիսացոյց զայս դեսպանութեամբ Ձերով դեսպանութեամբ՝ որ կարէ ցրել զամենայն ստուեր՝ որ միանգամ կարող է և իմացուցանել զփոխադարձ կապակցութիւն ռուսաստանի ընդ պարսկաստանի յետ այսքան վրշտաբեր անցից։

Հաւաստի կացուցէք զայսմանէ զմեծ շահն. ծանուցէք թէ անդրդուելի կամք են կայսերական մեծութեան Նորա ունիլ միշտ զխաղաղութիւն և հաստատել զօդ բարեկամութեան և դրացի հաշտութեան՝ յաջողակի նորոգելոյ ի Թուրքմանչայ։

Ընտրութիւն բարձրութեան ձերոյ ի մասին բանից այսոցիկ յոյժ հաճոյ եղև Թագաւոր կայսեր։ Հաճեսջիք հաւատալ այսմ ըստ այնոցիկ զգայութեանց՝ զորս յայտնեցի ես արդէն անուամբ ամենողորմ կայսեր իմոյ։

ԻԶ. ՂԵՒՈՆԴ ՏՈՍՊԵՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուին հայոց ՅՂԹ 950. Խոսրով եպիսկոպոսն Անձևացեաց հայրն սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ, մեկնէ զպատարագի խորհուրդս համեղ և բացայայտ ոճով։

Թուին ՆԼԲ 983. Փոխումն աստեաց երջանիկ Գաւիթ եպիսկոպոսի. առաջինի և հրաշագործ վանահօր Ապարանից սուրբ Խաչի վանուց ըստ վկայութեան գանձասաց Քերովբենց Յովաննէս վարդապետի։

ՇԷ 1058. Մահ Գետադարձ հայրապետին ի վանս Սեբաստիոյ, ըստ պատմութեան Յոհաննէս պատմագիր արք եպիսկոպոսի սեբաստացւոյ, որ ծաղկեցաւ ի մերս դարու։

ՇԻԴ 1075. Կատարեցան վկայական մահուամբ հարազատ եղբարքն սուրբ Գուհարինեանք ի Սեբաստիայ քաղաքի ի յԱլիբասան բռնաւորէն տաճկաց ըստ յայսմաւուրաց։

ՇԻԹ 1080. Աստմ. արքայ և Ապուսահլ Արծրունիք վախճանին ի Սեբաստիայ։

ՇԼԴ 1085. Վարագայ հայր Պօղոս լինի կաթուղիկոս ամենայն հայոց ի Մարաշ։

ՇԿԲ 1113. Սեանցի Մեղրիկ Գէորգ վարդապետն, որ ի Վասպուրական աշխարհէ յԱնալիւր դեղջէ, վախճանի յեօթանասուն ամաց ի Կիլիկիայ և թաղի ի վանս Գրագարկայ։

ՇԿԲ 1113. Գաւիթ Թոռնիկեան արք եպիսկոպոսն Աղթամարայ՝ առիթ առեալ զմանկական հասակ նորոգ կաթուղիկոսին հայոց, ապստամբեալ ընդվզի և լինի կաթողիկոս ի յԱղթամար կղզւոջն։

ՇԿԳ 1114. Գրիգոր կաթողիկոսն հայոց առնէ ժողով ի Կիլիկիա ի Սեաւլերին, և բանադրէ զԳաւիթ ապստամբ կաթողիկոսն, և զընդունողսն նորին։

ՇՂԹ 1150. Թէոդորոս աբեղայն, որդի Գուհարինէ վկայի նահատակի ի Սեբաստիայ։

ՈԺԶ 1167. Ընկուզիզաց Թումաս արքեպիսկոպոսի կատարումն ի Քանթըրպիր թագաւորանիստ քաղաքի. յաւուրս կիռ Մանուէլի կայսերն հռոմոց։

ՈԾ 1201. Մեռելյարոյց Աստուածատուր վարդապետն Արճիշեցի շինէ սուրբ Աստուածածին եկեղեցին. կենդանացուցանէ զմեռեալ պարսիկն զոր խեղդեալ էին ընկերակիցք իւր առ ի

ղրպարտելոյ զմիաբանսն Մեծոփայ. և ապա վախճանեալ թաղի ի նոյն մենաստանն։

Զ 1251. Վախճան վանական վարդապետին յԱղուանս ի վանս Խորանաշատայ, զոր ինքն էր շինեալ։

ԶԹ 1260. Շինումն նոր ի նորոյ Սալնապատայ սուրբ Կարապետ եկեղեցւոյն, որ է ի Տոսպ գաւառի. այս վանք այժմ սուրբ Գրիգոր յորջորջի ի յետնոցս։

ԶԼԳ 1284. Վախճան Տարոնեցի Ներսէս վարդապետին ի վանս Գլաձորոյ, որ էր աշակերտ և յաջորդ մեծին Վարդանայ արդիւնական վարդապետին։

ԶԽԹ 1300. Մխիթար քահանայ Սկեռացի հաստատուն փաստիւք ի դերև հանէ զանիրաւ պահանջմունս գլխաւորութեան փառասէր փափիցն Հռոմայ. զմատեան սորին տպագրութեամբ ի լոյս ընծայեցին միաբանական ուխտք սրբոյն Սագիմայ։

ԶԾԵ 1306. յաւուրս առաջնորդութեան վանիցն Ղազարու Աբրահամ առաջնորդի, որ ի Տարօն, Ղարբանդ խան ոմն, սաստիկ և չար հրաման հանէ ի վերայ քրիստոնէիցն՝ կամ դառնալ մոլար յօրէնս Մահմետի, և կամ թէ տալ սաստիկ տուրս և կրել նախատինս ի յուսս իւրեանց կապերտ հին. սիրով յանձն առին հաւատացեալք մերկանալ յընչից, և ոչ ի քրիստոսական հաւատոցն. իրրև ետես տնօրէնն եթէ ոչ կատարեցաւ չար ցանկութիւն սրտի իւրոյ, հրամայեաց ծառայից իւրոց ներքինացուցանել զքրիստոնեայս. և հանել զմին ի յաչաց նոցա յառակս նշաւանաց ամենայն մարդկան։

ԶԶԳ 1385. Ամենաւագ հայ վկայն Գերջանցի, որ էր ի Կառնաբերդակ գիւղէ, նահատակի քարկոծմամբ, անիրաւ հրամանաւ Ամիր Մահմուտ բռնաւորի, և անարդար վճռմամբ միր Հասան դատաւորի. ի մարտի 10. և արեգի 2 ին. ըստ ականատես պատմութեան ժամանակագիր Յովհաննէս վարդապետի։

ԶԶԶ 1387. Սասունցի Մխիթար վարդապետն վախճանի ի վանս Մեծոփայ ըստ ականատես վկայութեան Դանիէլ հռետոր ճգնաւորի, որ ճոխիմաստ բանիւ ի գիր էառ զախրալի վարս մեծ րաբունապետին այնորիկ։

ՊԼԳ 1384. Մազաքիա ճգնաւորն վախճանի ի սուրբ Կարապետի վանս Երնջակայ և թաղի անդ. էր սա յաշխարհէն հոնաց և ի մայրաքաղաքէն Ղրիմու. և դեղակուր եղև ի սանամօրէն իւրմէ, բանիւ երկաբնակ յԱղթամարայ առաջնորդաց. զի կին այն Աղթամարայ էր փռանկ դաւանութեամբ երկաբնակ։

ՊԼԳ 1384. Բուրխան դատին զԱստեփաննոս եպիսկոպոսն նահատակեաց, և զորբոց քառասնից վանս քակեաց ի Սեբաստիայ։

ՊԼԳ 1385. Թուրքն էառ զՈրոտն, և Կախիկ վարդապետն և Երեմիայ վարդապետն մեռան։

ՊԼԵ 1386. Լանկ Թամուրն էառ զՎան, և կոտորեաց աւելի քան զերիս հազար մարդիկս։

ՊԼԹ 1390. Ալմաստեցի Աւագ նահատակն կատարի ի Բաղէշ։

ՊԽԲ 1393. Զտէր Թորոս կաթուղիկոսն և զտէր Զաքարիայ կաթողիկոսն Աղթամարայ սպանին։

ՊԾԳ 1405. Գանձասաց Սիւնեցի տէր Առաքելի կենդանութիւն. էր սա քեռորդի Տաթևացոյն. և եպիսկոպոս Սիւնեաց վիճակին յետ վախճանի մեծ վարժապետին Գրիգորի։

ՊԾԷ 1408. Ղարայ Իւսուֆն հանդերձ Շմեշտինաւ արարին բազում աւերս յԱրճէշ, յԱրծկէ, ի Վան, և ի յՈստան, և ի միւս տարի Շմշտինի հեծեալքն եկին և այրեցին զՀատուան (գուցէ Գատուան) և բարկացեալ ամիր Եզտին գնաց և այրեաց զվաթսուն գիւղ ի Բաղիշոյ։

ՊԿԵ 1416. Կատարումն Ցիմար վրկայուհւոյ ի Վան քաղաքի. և այլք երկու ամ յետոյ գնեն. այսինքն ՊԿԷ 1418 թուականին։

ՊՀ 1421. Հապէշ նահատակք կատարին ի Խիզան և ամփոփին ի վանս Բարիձորոյ։

ՊՀ 1421 Ջաղատէն եկն յաշխարհս հայոց։

ՊՀ 1421. Վարդան Դատուանցի վկայական մահուամբ կատարի ի Բաղէշ քաղաքի յաւուրս Շամշադին բռնաւոր ամիրայի։

ՊՀԳ 1424. Արեկ ամսոյ 5 և մարտ 13. Հիզանցի Ստեփաննոս վարդապետ և Պետրոս քահանայն նահատակութեամբ կնքեալ են զկեանս իւրեանց ի Խիզան քաղաքի ընդ որս և մի ոմն Ստեփաննոս անուն կայտառ պարմանի, որ էր յերկրէն Խողձայ և ի Սորփ գեղջէ, սոքա յառաջմանէ ազգմամբ չարին անկեալ էին ի սուրբ հաւատոյս մերոյ, բայց ապա զղջացեալ զառաջին գործս իւրեանց զորս գործեցին. և հեղմամբ արեան մեկնեցան յաշխարհէ. առաջին երկուքն ի Խիզան վկայեցին. իսկ Ստեփաննոս պարմանին ի հայրենի գիւղն իւր Սորփ յետ ութն աւուր կատարման նոցին։

ՊՀԳ 1425. Խլաթեցի Ծերենց Գրիգոր մեծ րաբունապետն, վկայական կոչմամբ փոխի ի կենցաղոյս ի վանս Ցիպնայ ձեռամբ Ռօշկանցի Հուղկահարաց» ի մայիս ամսոյ 27. յաւուր հոգեգալստեան մեծի կիրակէին, ի փառս Քրիստոսի, և մարմին նահատակին Ցակոր վարդապետն Ղրիմեցի հրեղէն լեզուն մեծաւ հանդիսիւ ամփոփէ ի դիրս սրբոց ի Ծիպնայ սուրբ Ստեփաննոսի անապատն ի գաւառին Բզնունեաց ի սիրտ մեծի լերինն Մասիքայ, որոյ այժմ Սիփան անուն տան։ Սոյն Գրիգորի վարուց պատմութիւն և վերոգրեալ Ստեփաննոս և Պետրոս վկայից նահատակութեանց վէպս յօրինել է ժամանակագիր Առաքել վարդապետն. ինձ թուի թէ Առաքել Բաղիշեցի Երգասաց վարդապետն է, որ զՑովասափայ հնդկաց թագաւորի որդւոյ պատմութիւն չափականի յեղյեղելով նուիրեաց բանասիրաց ազգիս։

ՊՁԱ 1432. Ամիրդեկ նահատակն, որ էր յերկրէն Մոկաց ի գաւառէն Սպապերտու, ի գեղջէն որ Կողիս կոչի, կատարի վկայական մահուամբ ի նմին գաւառի, ի քիւրտ ամիրայէ տեղոյն, ըստ ականատես պատմութեան Ցովհաննէս քահանայի, գրեալ ի վերջ յաւետարանի միոջ զկնի յիշատակարանին, այն աւետարան է այժմ ի սուրբ Ցակոր եկեղեցին Վանայ։

ՊՁԶ 1437. Խլաթեցի Ցոհաննէս պատանին, որ մականուամբ Խոյլու յորջորջիւր, կատարի վասն Քրիստոսի վրկայական մահուամբ, յամսեան փետրվարի 22. ի տօնի հարիւր յիսուն հայրապետացն Կոստանդնուպօլսոյ. յաւուրս Սկզին ամիրապետին Խլաթայ և որդւոյ իւրոյ Իկլայի, յետ կատարման՝ Ստեփաննոս սրբազան արքեպիսկոպոսն առեալ զմնացեալ նշխարհս երանելոյն թաղէ ի ծոց եկեղեցւոյն Խլաթայ քաղաքին մեծաւ ուղարկաւորութեամբ։

ՊՁԷ 1498. շինէ զանձ ի վերայ

Վառվառայ Առաքել վարդապետն Բա-

ղէշեցի ի քաղաքն Մերաին։

ՊՂ 1441. Վարագայ Յոհաննէս եպիսկոպոսն գնայ ընդ այլ հարցն ի սուրբ կաթողիկէ յէջմիածինն՝ ի յընաբուԹիւն նոր կաթողիկոսին։

ՊՂ 1441. Լուսաւորչի աջն ի Սսայ գողացան և բերին յէջմիածին. և զԹորվիրապայ հայր տէր Կիրակոս կաթողիկոս օրհնեցին։

Ջ 1451. Երանելի Գրիգոր աբեղայն կատարի յԵրզնկայ քաղաքի հրով։

ՋԱ 1452. Ջիհան շայն էառ զԵզնկայն։

ՋԲ 1453. Սուլթան Մուհամատն էառ զըՍտամբօլն, ըստ պատմուԹեան ականատես Աբրահամ. վարդապետի։

ՋԺԲ 1463. Ահկի 3. և ապրիլ 20. Գլակայ վանուց առաջնորդ Յոհաննէս արհի եպիսկոպոսն վկայական մահուամբ փոխի յաշխարհէս ի կայանս արդարոց ի Բաղէշ քաղաքի. յաւուրս Ամիր Շարաֆ ամիրային բաբիշոյ, և Յոհաննէս արքեպիսկոպոսն քաղաքին յետ կատարման երանելոյն մեծահանդէս շքով Թաղէ զնա ի սուրբ Սարգիս յեկեղեցւոջն առաջի սրբոյ սեղանին։

ՋԺԸ 1469. Մահ անկաւ յամենայն աշխարհ. Նաղաշ վարդապետն զոգքն ասաց։

ՋԻԳ 1474. Խարբերդցի Գրիգոր քահանայի որդի Գաւիթ պատանին վասն ի Քրիստոս հաւատոցն հրով կատարի ի նմին քաղաքի ի յունվար 16 յաւուրն կիւրակէի։

ՋԻԵ 1476 յունվար 14. Հիզանցի սուրբն Սիրուն վկայական սուրբ մահուամբ փոխի ի կենցաղոյս ի մէջ քըսան և հինգ ամաց ծաղիկ հասակի, և բազում չարչարանաց բանտից և կապանաց տանելով կատարի ի վերայ քրիստոնէական սուրբ հաւատոյս մերոյ ի նմին քաղաքի, և սուրբ նշխարք երանելոյն ամփոփեն ի դիր հանգստեան յեկեղեցւոջն առաջի սրբոյ խորանին ի կաԹողիկոսուԹեան ԱղԹամարայ Տեառն Ստեփաննոսի։

ՋԼԲ 1483. Բաղիշու Գոմաց վանից առաջնորդն՝ Թումայ արքեպիսկոպոսն էր, ըստ վկայուԹեան Մակար գրչի։

ՋԼԲ 1483. Եւգոկիացի Թովմաս վկայն վասն ի Քրիստոս Յիսուս հաւատոցն կատարի մարտիրոսական մահուամբ ի ձեռաց անօրինաց ի նմին քաղաքի։

ՋԼԳ 1484 հոկ. 5. Սալմաստեցի Մուրատ չարչին վկայական անուամբ փոխեցաւ ի կենցաղոյս ի վերինն սիոն ի Վան քաղաքի ըստ ականատես պատմուԹեան Գրիգոր հռետոր վարդապետին Արճիշեցւոյ, որ և ներբողական չափականաւ պատուեաց զերանելին. քանզի ի սաւնացեալ ժամանակի բորբոքեալ Աստուածային սուրբ սիրոյն եղև պատարագ ընդունելի, հօրն բոլորեցունց, և բազում խոշտագանաց ժուժեալ քարկոծմամբ կատաբեցաւ ի պարոնուԹեան Շամիրամակերտի Ասլէյման բէկի, ի վաԹսուն ամեայ հասակի կենաց իւրոց. և մարմին նահատակին ամփոփեն ի հող առ դրան սուրբ Պօղոս հոյակապ եկեղեցւոյ։ Սա ի պատանեկուԹեան մինչ էր հնգետասանամեայ վասն ի Քրիսաոս հաւատոց դարձեալ բանտից և կապանաց տարեալ ի Թուին ՊՋԸ 1439. յաւուրս Ղլիճասլան պարոնին Վանայ և որդւոյ նորին Սէյիտ Ղասումին, համբերուԹեամբ իւրով զխոստովանող անուն ժառանգեաց. և ապա ի ծերուԹեան ի մոլեռանդ այլադենիցն կատարեցաւ ի նոյն ի փառս Քրիստոսի։

ՋԿԶ 1517 ապրիլ 7. Մարտիրոսական մահուամբ մեկնեալ է յաշխարհէ ի Համիթ քաղաքի Կողբեցի Խաչատուր սուրբ նահատակն Քրիստոսի. գլխատմամբ սրոյ և այրեամբ կնքեալ է զկեանս իւր։

ՋԿԶ 1517. Սուլթան Սէլիմն արար զմանչ ժողովեալն. մատնեցաւ սուրբ Թոքոս ՋԿԷ (Տիգրանակերտցի)։

ՋՀԱ 1522. Այրեցին զՊեխին որդի Սաֆարն վասն ի Քրիստոս հաւատոցն ի Սեբաստիայ քաղաքի։

ՋՀԴ 1524. Նոր վկայն Քրիստոսի սուրբ նահատակն Պուտախ, որ էր ի Մարաղայ քաղաքէն Պարսից կատարի մարտիրոսութեամբ ի Ցամիթ քաղաքի, բազում տանջանօք և ազգի ազգի խոշտանգանօք. հուսկ յետոյ բոցակէզ ճենճերանօք լինի Տեառն հաճոյական ողջակէզ. ըստ ականատես վկայութեան Մկրտիչ աբեղայի, որ էր լուսարար սուրբ Կիրակոսի եկեղեցւոյն, որ և գրեաց զպատմութիւն նորին։

ՋՀԴ 1525. Ամթեցի Խաչատուր նահատակն ի Նմին քաղաքի ի սէր սրբոյ օրինաց մերոց այրմամբ հրոյ վկայի՝ յետ բազում տանջանաց ի խուժանէ քաղաքին։

ՋՁԲ 1533. Առաքինի հայրապետ աբեղայն Տեոցայ սուրբ Դէորգայ վանուց վանական՝ որ է ի վիճակին Սեբաստիոյ, սակս զՔրիստոս Յիսուսն ոչ ուրանալոյ հրով ողջակիզեալ կատարի ի յանողորմ ազգէն տաճկաղէնից։

ՋՁԴ 1534. Սեբաստացի երանելի տէր Թադէոս քահանայն մեռանի ի վերայ քրիստոսական սուրբ հաւատոյս մերոյ ի ձեռաց անօրինաց հրամանաւ բդեշխի տեղոյն, քարիւ փայտիւ և սրով յետ բաղում բանտից և կապանաց։

ՋՁԴ 1535. Անմեղ և սուրբ քահանայն Շնքուռակ գեղջ՝ որ է մերձ Սեբաստիոյ, գաղանաբարոյ և մարդախանձ մահմետականք քաղաքին. բռնաբարեալ զերանելին ստիպէին յուրացութիւն և ոչ յանձն առնուլն հրով ողջակիզեցին կենդանւոյն ի հրապարակս քաղաքին։

ՋՁԴ 1535. Միբոյ նահատակ հայկազուն կատարի ի Լիմ կղզւոջն, ի ձեռաց անօրինաց։ Եւ այս է Խաչվիմի նորին պատճէն։ Աստուած ողորմի Միբօին, որ նահատակեցաւ յանօրինաց. թուին ՋՁԴ 1535.

ՋՁԵ 1536. Յօդոստոս 27 աւուրն մեծատոհմիկ խօջայ Կօքչայն Սեբաստացի վասն ի Քրիստոս հաւատոց անօրէն ազգն Հաքարու ազգի ազգի կրտտանօք նահատակեցին զերանելին ի նորին քաղաքի, որ յետ կատարման էջ լոյս յերկնից ի վերայ՝ ի նախատինս չարչարողաց և ի պարծանս քրիստոնէից։

ՋՁԹ 1540. Կարապետ վարդապետ աշխարհագէտ տայ գրաւոր տեղեկութիւն չափական ոճով 'ի վերայ մեծամեծ ազգաց՝ տէրութեանց՝ և աշխարհաց, ժողովրդոց և կլիմայից եայլն. այսու սկզբնաւորութեամբ։ Ի Կարապետ վարդապետէ արարեալ ոտանաւոր ի վերայ ամենայն աշխարհի, զոր և Նոյ յետ ջրհեղեղին արար երեք մասունս և բաժանեաց ի վերայ երից որդւոցն իւրոց, որոյ սկիզբն է այսպէս։ Եկայք Ադամայ որդիք արարած ամէն միաբան. եայլն։

Այն ոտանաւորի գաղափարութիւն ունիմ քովս Արապկերու հին ձեռագիրներէն օրինակելով՝ սակայն հեղինակի անուն ճանյատ չգրուելուն համար ես սխալմամբ Ամիրտօլվատ Ամասիացի հայ բժշկին տուած էի վերոյգրեալ հեգի-

նակութիւն, բայց յետոյ Վանայ մէջ սուրբ Վարդան եկեղեցւոյ հոմքասմեան բարեշնորհ տէր Կարապետ քահանայի քով եղած հին ձեռագիրէն աշխարհագրութեան բուն հեղինակն յայտնուեցաւ, որ է վերոյիշեալ Կարապետ վարդապետ։

ՋՂԵ 1546. Ալխասն եկն և տարաւ զԹոնդքարն ի Թաւրէզ ի վերայ եղբօրն, և տէր Թաւրիզու· շահ Թահմազ եկեալ աւետեաց զԹնուս, զԲասէն, զԱրզրում, զԴերջան, զԿեղի, զԲարերդ, զԵզնկան։

Ռ 1551. Զաքարիա երգասաց րաբունին ծաղկի ի Վարագ մատենագրութեամբ. էր սա եղբօր որդի Սահակայ արքեպիսկոպոսին, որ նախ քան զերկրորդ Մարգարայ արհին նստաւ յԱթոռն վարագայ՝ զՎարագն ասեմ. չքնաղ երգ սմա տայ Գրիգոր սարկաւագն Վարադեցի։

ՌԶ 1557. Կեղեցի Ղուկաս վարդապետն զհռոմայեցւոց տումարն ի յոտին հանեց։

ՌԺ 1561. Շամիրամայ ջուրն բերաւ ի Վան. այս մասին այսպէս գրէ Զաքարիա վարդապետ Վաբագեցի ակնատեսն յինքնաձեռնագիր մայր մաշտոցի իւրում, որ կայ այժմ ի Վանայ սուրբ Սահակ եկեղեցւոջս։ Ի սոյն ամի որ էր թիւն ՌԺ 1561 բերաւ ջուրն Շամիրամայ ի քաղաքս Վան, չորս ամիս բազում աշխատանօք երկիր և քաղաքն ի վերայ դատելով և ապա բերաւ ջուրն. ութ հազար սարակ ի քաղաքէն գնաց, թող զերկիրս և զայլս ի յօտար յաշխարհէ։

ՌԺԶ 1567. Կաֆայեցի սուրբ Նահատակն Պարոն լոյս վայելուչ պատանին կատարի վկայական մարտիրոսութեամբ ի վերայ ուղղափառ սուրբ հաւատոյս մերոյ ի նմին քաղաքի. յաւուրս թագաւորութեան սուլթան Սելումին. ըստ ականատես պատմութեան Վրդանէս վարդապետի, որ և ձեռամբ իւրով ամփոփեալ է զսուրբ Նահատակն ի դիր հանգստեան ի վանս Ցովակիմայ և Աննայի յառաջնորդանիստ մենաստան քաղաքին, և վախճան երանելոյն լեալ է ի յեօթն յունվարի։

ՌԺԶ 1567. Սարգիս ուխտաշրջիկ և հանրածանօթ եպիսկոպոսն վախճանի ի Վարագ։

ՌԻԸ 1579. Բրգութենց Ցոհաննէս գանձասաց բարունին ծաղկի ի վանս Եղիշէի։

ՌԼ 1581. Բարսեղ վարդապետ ժամանակագիր Վարադեցին ծաղկի ի Վարագ։

ՌԽ 1591. Գզիր օգլին եղև Շավալի քուրտ ազգաւ։

ՌԽԱ 1592. Սեաստու տաճիկ չարացաւ. և էառ սրբոյ Լուսաւորչի եկեղեցին։

ՌԽԱ 1592. Իբրահիմ փաշայն աւերեաց զԱմիթ հարկապահանջութեամբ։

ՌԽԴ 1595. Սեբաստացի երանելի Մեծատուր վկայն մեռանի բազմավիշտ խոշտանգանօք ի ձեռաց անօրինաց ի վերայ քրիստոնէական սուրբ կրօնի մերոյ ի յունիս 2 ի նմին քաղաքի, յարքեպիսկոպոսութեան Սեբաստիոյ Պետրոս եպիսկոպոսի։

ՌԽԶ 1597. Ցոհաննէս հանճարեղ և գրագէտ վարդապետն ծաղկի ի Վարագ։

ՌԽԶ 1597. Ղարայ Եազիչին եղև անուանի բռնակալ և Ջալալի։

ՌԽԹ 1600. Ղարայ Եազիչին չարչարեաց զՈւրհայ սաստիկ հարկապահանջութեամբ. և գլխատեաց քահանայ մի Աբրահամ անուն. և զայր մի տանուտէր Իսքանտար անուն։

ՌԾԵ 1606. Խիստ սով եղև Վան. չափազանց մարդիկ ջարդեցան ի սովոյն։

ՌԿԶ 1617. նոյեմբեր 18. Առաջին Շահ Աբաս Անդրէաս քահանայն նահատակեաց ի գիւղն Ագուլիս։

ՌՁԲ 1633. Մովսէս բազմարդիւն կաթողիկոսն ամենայն հայոց վախճանի ի սուրբ Էջմիածին։

ՌՁԳ 1634. Տէր Մինաս պատուական քահանայն և Ալաճաճեան Աէֆէր հայկազունն վասն քրիստոսական սուրբ օրինացն մերոց նահատակին ի Կոստանդնուպօլիս քաղաքի ցաւօք և մատնութեամբ զրպարտող Յունաց ոմանց։

ՌՁԶ 1637. Ակնեցի Սաֆար նահատակն ի վերայ սուրբ հաւատոյս մերոյ վկայեալ կատարեր է ի նոյն. ի հոկտեմբերի 24. ըստ ականատես պատմութեան Թամար սարկաւագին խեղդամահ սպանմամբ։ Բայց Բարսղամ սարկաւագ Աեբաստացի ժամանակագիրն յինքնաձեռագիր յայսմաւուրի իւրում զնէ կատարումն երանելոյն ի նոյեմբեր 20. և ասէ թէ հրով կատարեցաւ, ինձ թուի թէ երկու նահատակ լեալ են միևնոյն անուամբ. մի խեղդամահ կատարեալ, իսկ միւսն հրով ողջակիզեալ. զի պատմիչք երկոքին արժանահաւատք են և ականատեսք, զայս տարակոյսն ժամանակն կարէ վերլուծել։

ՌՁԷ 1638. Զաշ սուրբ Լուսաւորչին Փիլիպպոս կաթողիկոսն ի Նոր Ջուղայէ ածէ յէջմիածին։

ՌՂԱ 1642. Տիգրանակերտցի սուրբ Նիկողայոս վկայն կատարի բազում տանջանօք ի նոյն քաղաքի. և խորտակեալ զաջ երանելոյն առաջնորդ տեղոյն առեալ զնէ ի հիմն նորակառոյց սուրբ եկեղեցւոյն։

ՌՂԴ 1645. Պարոնտէր Գրիգոր պատրիարգ սրբոյ Երուսաղէմի վախճանի։

ՌՃԱ 1652. Տիգրանակերտցի Խաչատուր նահատակ յօգոստոս 20 և նաւասարդ 11 կատարի վկայական մարտիրոսութեամբ ի նմին քաղաքի։

ՌՃԴ 1655. յԱլիւր գիւղացի սուրբ Սիրուն վկայն վասն անուան Տեառն կատարի ի Վան։

ՌՃԴ 1655. Փիլիպպոս կաթողիկոսն վախճանի ի սուրբ Էջմիածին։

ՌՃԵ 1656. Մխիթար քաջ նահատակն Քրիստոսի կատարի ի Վան։

ՌՃԵ 1656. Աղգն քրտաց զայր ոմն քրիստոնեայ Աւետիս անուն ի Փիզան բերդն յաշխարհին Մարաց նահատակեցին. և տէր փառաւորեաց զնա երկնային լուսովն որ էջ ի վերայ նորա։

ՌՃԶ 1657. Փետրուար 27. Վախճանեցաւ Ջուղայեցի Սիմէօն վարդապետն ի Թոխաթ։

ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(Մարզուանի վանքի Մայր Մաշտոցից)

Յամի վեց հազար երրորդի վաթսուն երրորդի ամի լինելութեան աշխարհի ըստ եօթանասնից աւանդութեանց, յորում ամի Հռոմ թուականութիւն ՌԽ. և Զ. էր. և հայոց նոր տումարիս ՅԽԲ 893, կատարեցի զնուազ գրքուկս զայս. յառաջ քան զհինգ կաղանդին ապրիլի, որ օր ԺԶ 16 էր հոռոտի ամսոյ ի մեծի հինգշաբաթին ի վեցերորդ ժամու. ի թագաւորութեան հայոց Սմբատայ. որդւոյ Աշոտոյ Բագրատունոյ. ի տոհմէ կաթողիկոսութեան Տեառն Գէորգեայ Գառնեցւոյ. յորում ամի կործանեցաւ Դուին քաղաք ի շարժմանէ և բազումք մեռան. և եկեղեցիք տապալեցան. այս իրս գործեցաւ

վասն ծովացեալ մեղաց մերոց՝ և կատարեցաւ գրքուկս ի Սևան կղզւոջ դևղամեծ ծովակիս ի ձեռն իմ Ստեփաննոսի անարժան կրօնաւորի. և յետին կրօնաւորի. աշակերտ երիցերանելւոյ՝ սուրբ ճգնաւորին Քրիստոսի Տեառն հօր Մաշտոցի. յորոյ զազնուականութիւն լաւութեան վարուց նորա ի տղայական հասակէն մինչև ցօրս յորում զգիրս կատարեցի՝ ոչ կարեմ բովանդակ գգրով արկանել. այլ համառօտ բանիւ զեկուցից ձեզ. զի ուսեալք ի սակաւուց նախանձաւորք լինիցի շաւղաց հետոց նորա։ Սա էր ի տոհմէ քահանայական ի դեղջէ Եղեվարդայ՝ ի ժառանգաց մենաստանաց որ անուամբ սրբոյն Թէոդորոսի էր. և ի զօրանալ բանակութեան տաճկաց ի վերայ գաւառին. ելեալ հայր նորա ի տիս մանկութեան. և գնաց բնակեաց պանդխտութեամբ ի գաւառին Թոռից, և անդ կացեալ և ամուսնացեալ ծնաւ զգեղեցիկ ազատնին Քրիստոսի զոր պատմել սկիզբն արարեալ եմ հանդերձ և այլ եղբարբք և քերբք ուսուցանէր զորգիսն յուսումն Աստուածային՝ քանզի ինքն քահանայ էր, յետոյ ի վախճանիլ նորա յարեցաւ մանուկն Մաշթոց ի կրօնաւորսն ի ձեռն որոյ կոչի անունն Թէոդորոս. ի կրօտասսանին որ կոչի Մաքենոցք՝ ի գաւառին Գեղարքունիք. և ստացաւ վարս անսուաղականս պարկեշտս՝ ընդակերս անըստգիւտս և ճշմարտասէրս և վարժեցաւ ի պահս և յաղօթս. այլ գնաց բնակեցաւ հապա լերին յայս կղզւոջ իմաստուն և հանճարեղս լաւութեամբ, սիրողն ի Մարիամայ Սիւնեաց տիկնոջէ կանգնեալ զսա ուխտ. և ժողովեալ եղբարս Վասակայ Սիւնեաց իշխանին, յորում ունկընդիր եղեալ, յետոյ հաւատացաւ ասէ, եթէ յԱստուծոյ է հրամանս ես ոչ ընդդիմացայց. և շինեաց վանս և զարդարեաց վայելչական սպասիւք. և մեկնէր ևս ի մրգոյ և ի ջրոյ. և խըրատէր զամենեսեան ի նոյն կարգ. և բազում ի սուտ եղբարց նենգաւ կեղծաւորութեան և պէս պէս խարդախութեան տանէր. քանզի զամենեսեան սատանայ վառէր ընդդէմ նորա. այլ նա առաքինութեամբ տանէր ամենայնի, վասն յուսոյն իւրոյ զոր ունէր առ քրիստոս. ի խորհրդոցն զօրաւոր՝ առ հզօրսն աղօթէր, զի ընդ երեկսն և ընդ տիւն ինն կանոն կատարէր. և զայս ևս առացից շնորհ եղև նմա. քանզի փափագեալ մեծի լուսոյն նշանին Քրիստոսի և աղօթիւք հայցէր առնուլ յԱստուծոյ։ Եւ եղեալ ընդ աւուրս ընդ այնոսիկ իշխանն հայոց Աշոտ ի կողմանս վրաց, վասն ապստամբելոց ոմանց յելուզակաց առ եզերբ գետոյն հզօրի որ կոչի Կուր. դարձեալ խաղաղութեամբ ընդ այն ճանապարհորդէր առ եզերբ ծովակին՝ եկեալ գումարեցաւ ի տեղւոջ միոջ հանդէպ կղզւոյն որ կոչի բանակատեղ հայցէր տեսանել զերանելին Մաշթոց՝ որ իբրև զիրարս (տեսին) բազում ուրախութիւն եղև երկոցունցն. ապա յոյժ սիրեալ և մեծապէս ընկալեալ զնա՝ բարեպաշտ իշխանն Աշոտ, որ և թագաւոր իսկ եղև յետոյ. ապա շնորհէր երանելի հօրն Մաշթոցի զլոյս մշտնջենաւոր, զոր պսակեալ էր նմա արքային Ցունաց Վասլի. յոտն կացեալ և արտասուօք հանդերձ առեալ յինքն զսուրբ խաչն. զոր պնդեալ էր ոսկով, և զարդարեալ գեղեցիկ ընգելուզեալ մարգարտով. և առեալ եդ ի վերայ աչաց իւրոց և համբուրեաց. և երկիր պագեալ իշխանն համբուրէր զաջ նորա. և խօսէին ընդ միմեանս զհաւատոյ. և ապա հրաժարեցան ի միմեանց. իշխանն

գնաց ի ճանապարհ իւր և նա դարձաւ ի մենաստան իւր։ Եւ առ. զշնորհս զայս մեծ, որ բնակեալ էր ի վանս յայսմիկ յամս մետասանս, որ է անուամբ սուրբ Առաքելոցն եկեղեցիք երեք. և իբրև այնմ մեծի շնորհացն արժանաւորեցաւ, առաւելեաց յառաքինութիւն իւր. զի ի մէջ երկուց աւուրց հազիւ ճաշակէր զօգեպահ ընդիկն, այլ հաց և գինի այն էր նորա. որչափ ի մարմնոյ և յարենէ անեառն ճաշակէր։ Եւ յայսմ ամի յորում կարգեցի ղսակաւաւոր դրբումս էր ամք կենաց նորա սակաւ ինչ քան զվաթսուն ամ. իսկ որ մեկնեալ էր ի կերակրոց, և ի բոլոր իսկ հեշտութեանց մարմնոյ ԼԳ 33 ամք. և իշխանութեան տեղւոջս ԻԲ 22 ամք. քրիստոսի յոյս պատերազմելոյ զօրութեամբ նորա ի վերայ ճշմարիտ հաւատացելոց իւրոց առաւել ևս տացէ ոյժ հաստատութեան սովին բարի առաջարկութեամբ կատարել. և զորոշեալ ամս կենաց իւրոց՝ մինչև ըմբռնեաց (ըմբռնեսցէ) զպատրաստեալս յարքայութիւն։ Այս բան վարուց նորա զոր կարճառօտ և հարևանցի ասացի ճշմարիտ՝ յերկրս յոլով և զարմանալի թողեալ. զի մի կարի անհաւատալի թուեսցի ձեզ, և որ ցուցից ճշմարիտ է. զի որովք աչօք իսկ տեսի. և ի միտ առի զիրն, ոչ եթէ համբաւօք տեղեկացեալ։ Այլ դուք սոյն զունակի իմացարուք, և զայլ ևս բազմազան առաքինութիւն նորա, և նախանձաւորք սմին եղերուք. աղօթք սրբոյս այսորիկ հասցէ սակաւ ի մեզ և ի ձեզ. և սուրբ առաքելոց դասքն իւրեանց յամենաբարի և յարասէր ընդանական խնամօքն և հաստատուն պահեսցեն զուխտս զայս, որ յանուն իւրեանց կանգնեալ են ի ձեռս սուրբ հօրս Մաշթոցի. և ձեռնկալու եղև ամենայն վտանգաւոր աղօթիցն, և բազմահնար մեքենայիցն բանսարկուին. զի կատարեալք ի կամս Աստուծոյ միաբան հասցուք ի նպատակն վերին կոչմանն, յարքայութիւն քրիստոսի Աստուծոյ մերոյ. զի նորա են փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս ամէն։

ԻԷ· Ս· ԿԱՐԱՊԵՏԻ ՄԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ակնեցի Մինաս եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ ս. Կարապետի վանքը ինկած էր 50 ոսկի պարտուց տակ, որ կըհամնէր այն ժամանակի Մշոյ փաշայ Ալատին Պէկին. բայց անկարող լինելով վճարելու, օր մը երբ փաշայի կողմանէ հաշիւն պահանջողներ կուգան ի ս. Կարապետ, Մինաս եպիսկոպոս կը փախչի վանքիս մերձակայ մեշայի մէջ, որ փախչած տեղի անուն դեռ ցայժմ քիւրդի լեզուով կանուանուի «չայէ քէշիշ», որ է «Տէրտէրի ձոր»։

Իսկ սալեան պահանջողները ետ կը դառնան ի Մուշ Ալատին փաշային կըպատմեն առաջնորդի փախուստ։ Այն ժամանակ փաշան մարդ կուղարկէ Մինաս եպիսկոպոսին, կը տանէ ի Մուշ, և վարձատրելով զայն մէկ ճուպայով մը, վանքի պարտքն ալ կը բաշխէ։ Եւ երբ Մինաս եպիսկոպոսը կը դառնայ ի ս. Կարապետ, կսկսէ Խաչքակի կողմի պարիսպը ծայրէ ի ծայր հիմնարկել և շինել, նոյնպէս և վերի փակայի պարիսպներն և եկեղեցին։

Քիչ ժամանակէն այս շինութենէն զկնի, վիճակ կընկնի Մինաս եպիսկոպոսին ի ս. Էջմիածին երթալ կաթողիկոսութեան,[1-9] ուստի հարկ կը լինի իւր տեղ իւր ձեռնասուն արեղէն՝ Ներքին դաշտի Կիպնէ գիւղացի Յունան վարդապետը առաջնորդ կարգել ս. Կարապետի վանքին։ Բայց Յունան վարդապետի վրայ կը պատմեն թէ՝ շատ ըրթամիտ լինելով, ս. Կարապետի գերեզմանէն կը խնդրէ, և օրէօր կը յառաջանայ շնորհքով քարոզչութեան։

Սորա ժամանակ ես, պարտք կը շատանայ վանքին վրայ. Յունան վ. կստիպուի ի Պօլիս երթալ, եօթ տարի այնտեղ կըմնայ, և ս. Կարապետի համար զանձանակներ կը հաստատէ նորա պարտքը վճարելու և պակասութիւնները հոգալու։ Եւ ապա դառնալով ի ս. Կարապետ, գնաց ի ս. Էջմիածին եպիսկոպոս ձեռնագրեցաւ և եկաւ ս. Կարապետ. քանի մը տարիէն զկնի վախճանեցաւ։ Ասոր ժամանակի էր Մշոյ մէջ Մրխսուտ փաշէն, որոյ վրայ չիմացայ գործ մը պատմել, նոյնպէս և այլոց։

Յունան վարդապետին յաջորդեց Սասունցի Նըչէ գիւղացի Ասուա(ծ)ատուր վարդապետ. սորա ժամանակ մեծ երկրաշարժութիւն պատահելով, կը քանդուի վանք բոլորովին, նոյնպէս եկեղեցին։

Այս շարժի ժամանակ վանքի հարաւային կողմի սենեակներ այնպէս կը վերցնէ շարժ և կըձգէ մինչև ի Խո-

տաճարաց, որոց մէջ նստած կլլնի Խանամիրեան Մկրտիչ սարկաւագ, միւսն ևս Վարդան սարկաւագ, որոնք անվրնաս կը պրծնուն։ Բայց այս շարժ պատահելով ՌՄԼԳ 1784 Թուին Վարդավառի ուխտի բազմութեան օր, ուստի փլատակաց տակ կըմնան 32 անձինք և կը մեռնին։ Այդ շարժի պատճառաւ վանքիս քանդուիլը երբ կլսէ այդ ժամանակի Մուրատ փաշէն՝ կուգայ ի ս. Կարապետ չատրղ կը դարկէ վանքի մօտ և Աստուածատուր վարդապետի հետ ի միասին կաշխատեն վանք նորոգելու ի հիմանէ. ուստի կը յուղարկեն Բաղուեցի ուստայ Կորիկ Սրգօն և Բաղշեցի ուստայ Ղազար կը բերեն վանք շինելու, և այդ երկու ուստաներն են, որ վանք կը շինեն, թէ եկեղեցի, և թէ զանգատուն. այդ պատճառաւ Ասուատուր վարդապետը կերթայ Սասուն ժողովք անելով բաւականին օգուտ կըբերէ վանքին։

Գիւղացի քանի մը անձինք իմանալով կուգան կըմտնեն եկեղեցին, քիչ մը բան կը գողնան տանին և եպիսկոպոսական զգեստ. յետոյ կտանեն Ասուատուր վարդապետին ի սուրբ Յոհաննու վանք, և մատնողութեամբ Մուրատ փաշայի ձեռամբ եղունգներու մէջ ղամիշ մտցնելով կը չարչարեն ի տեղի նորա բարեաց. և յետոյ եօթ քիսայ պարտուց տեղ ղինք գրաւ կը տանին ի Կարին, և անոր տեղ առաջնորդ կընստի Աղբեղ[180] Յակոբ վարդապետն Պոլսեցի։

Այդ ժամանակ Կարնոյ մէջ մէկ հակառակ և անկարգ տէր Ցակոր քահանայ կը կլլնի, Աղպեղը կուղարկէ Խանամիրեան Մկրտիչ վարդապետին քահանայի փիլոնը առնելու։ Մկրտիչ վարդապետը կերթայ այնտեղ քարոզելու և այդ ժամանակ քաղաքի գլխաւորն էր Հաճի Պապան։ Նորա հաճութիւնով քաղաքի մէջ ժողովք ընելով եօթ քիսայ կը ժողովէ Ասուատուր վարդապետի պարտք կըվճարէ, և ղայն բանտէն հանելով, և նորա ամեն պիտոյքն իր կողմանէ հոգալով 200 ղուրուշ ալ կուտայ. կըբերէ հետ ի ս. Կարապետ։ Մէկ ժամանակ Ասուատուր վարդապետ կըմնայ ի ս. Կարապետ. և ապայ կերթայ ի ս. Յոհաննու վանք կըվախճանի։

Աղբեղի առաջնորդութեան թուականն է ՌՄԽԹ 1800 և այդ միջոցին 300 քիսայ պարտք որ վանքի վրայ ընկած էր, Աղբեղը կը վճարէ իւր կողմանէ։ Այդ ժամանակ երևելի քրդերն էին Մշոյ դաշտի Հասնանցի Հաճի Մահմուտի տղայք, Հաճի Սուլէյման, Շաւէշ, Ֆարըղ, Ըմրը, Տայի Մամատ Աղէն։

Այդ ժամանակ որ դեռ Մուրատ փաշէն չէր գնացած ի Տիարպէքիր, Պայազիտու Մահմուտ փաշէն զօրք ժողովեց Մշոյ երկիր գալու։ Մուրատ փաշան ալ իր գլխաւոր վերոյիշեալ էլի մարդիկ ժողովեց, գնաց անոր ընդ առաջ, Պուլանուխայ Ռըստամկէտուկ գիւղ կհանդիպին մէկ մէկու։ Եւ կռուի միջոցին կսպանուի Հաճի Մամուտի մեծ որդի Սուլէյման, ու Մահմուտ փաշէն ետ կը փախչի կըկին։

Բայց իրենց նոր գալու ժամանակ, երբ Մուրատ փաշայի խումբ կերթան, անոնցմէ շատերը կելնեն գեղի տներէն մէկի տանիքի վրայ՝ նայելու, և տունն կքանդուի, որով և իրենց յաղթութիւնը կը գուշակեն։

Ասկէց ետք Մուրատ փաշէն դառնալով ի Մուշ, Պատկանցիք՝ որոց գլխաւոր էլերն[181] էին այն կողմեր Շը-

դըվկանցւոց տուն, Ոըշկանցւոց տուն, որոնք 1700 տան չափ կային, կը լսէ որ իւր աշճին սպանւր էին—որ հայ էր—ոխ կպահէ, և յարմար ժամանակի սպասելով, օր մի իր էլի ազքար կժողովէ և ձայն կհանէ թէ Աճրմու (պարսից) վրայ կռիւ կերթայ, որպէս ղի Պաականցիք անհոգ մնան։ Ուստի այդպիսի հնարքով՝ գիշերով կերթայ Խաս գեղէն կանցնի, և Մշոյ վերէն Խաչառըղու սարի ճանապարհով՝ մէջ գիշերին յանկարծակի Պառկնցւոց վրայ կը յարձակի և 32 մարդու չափ կը սպանէ, «գլուխները կտրելով ի վրէժխնդրութիւն իւր աշճի Հայուն. օր ըսեր է ինքն թէ՝ «Ասոնք իմ Հայու համար են, որ ասոնք ալ անոր գլուխ այսպէս կրտըած են»։ Թողում ասել միւս սպանմունքներ և վնասներ որ տուաւ անոնց ու դարձաւ Մուշ։

Ասոր կոտորածութեան ձայն տարածուելով, Տիարպէքիրու փաշայութիւնն ալ յանձնեցաւ Օսմանեան տէրութեան սուլթան Աէլիմէն որ նա ևս լսած էր ասոր քաջութիւնը, որ յարմար դատեց Տիարպէքիրու փաշայութեան, վասնզի այն ժամանակ շատ ապստամբ և ասի [182] էր այն կողմեր, և ասոր տեղ Քէեապէկ [183] գրուեցաւ իւր եղբայր Ուսուֆ փաշէն Մշոյ մէջ։ Այդ ժամանակներ այնպէս սովորութիւն կար որ Մշոյ փաշաներ միշտ իրենց կողմէն մարդիկ կը յուղարկէին ս. Կարապետի վանքի առաջնորդներու քով, և անոնցմէ իրենց ուզած և ընծաներ կը տանէին։

Ուսուֆ փաշէն ալ օր մ' իւր մարդիկներէն Թաթար [184] մը կ'յուղարկէ Աղպեղ եպիսկոպոսի մօտ ակնկալելով ընծաներ ստանալու. բայց եպիսկոպոս զայն Թաթարը ծեծելով կը քշէ դուրս. և այն ալ կերթայ Ուսուֆ փաշային կ'պատմէ. նոյնպէս քանի մը մարդկանց թէ վանքի վարդապետներէն և թէ երևելի մարդիկներէն մատնողութեամբ [185] փաշան կ'յուղարկէ եպիսկոպոսին կր տանէ Մուշ, բուն բարեկենդանին և կ'ձգէ բանտ. և ինքն կը գրէ իւր եղբայր Մուրատ փաշային ի Տիարպէքիր, նա էլ կը գրէ թէ՝ արձակէ, և զինքն ալ խաբէութեամբ ընծաներով ճանապարհ դիր թող երթայ։

Եւ նա էլ իւր եղբօր խորհրդով կ'ընծայէ մէկ քուրակով, և իւր մարդիկներուն պատուիրելով հետ կ'դնէ որ տանին վանք, և ճանապարհին սպանեն ծածուկ կերպով։ Ուստի անոնք ալբերելով կուգան Կոմս գիւղ, իրիկուն ժաժանակ, Կոմսայ անուանի Մլքոյի տուն, բայց իւր հետ եղող քիւրդեր կ'ստիպեն զինք ելնել և այն օր երթալ ի սուրբ Կարապետ, ցերեկուան շոք պատճառելով։

Բայց իւր հետ Մուշէն իջացող Բարդողիմէոս վարդապետ և տէր Բարսեղ, Մլքօն կարդիլէ այն գիշեր իւր տուն այլ և այլ պատճառներով, ինքն տեղեակ լինելով քիւրտերու խորհրդեան, և կամակից նոցա կամաց։

Աղբեղ եպիսկոպոսն ալ իւր սպասաւորով և քիւրդերով կսկսին գալ ի սուրբ Կարապետ, և ներքին Փակահի ձորի ճանապարհով կբերեն Դսավ բուսած տեղ իւր սպասաւորով ի միասին կսպանեն։ 17 տարի առաջնորդութիւն ընելով մայիս 7 1856 թուին [186] կը նահատակուի, և կբերուի ի սուրբ Կարապետի վանք՝ եկեղեցւոյ եռև կը թաղուի։

Աղպեղ եպիսկոպոսէն ետք նստաւ առաջնորդ Աճամ Մինաս վարդապետ որ առաջնորդ լինելու համար Մուշն էր գնացած, և վերադառնալու ժամանակ ճանապարհին շընուորից [187] հիւանդանա-

լով, Խէյպեան գիւղի մէջ վախճանելով, բերեցին վանք Թաղեցին. և անոր տեղ առաջնորդ եղաւ Խանամիրեան Մկըրտիչ եպիսկոպոս վեց ամիս ժամանակ. և Պօլսէն հրաման գալով Մկրտիչ եպիսկոպոս գնաց ի սուրբ Ցովհաննէս. և անոր աեղ վանեցի Մկրտիչ եպիսկոպոս երեք տարի առաջնորդ նստաւ։

Եւ այդ ժամանակ Բաղիշեցի Վարդան վարդապետ, որ Պօլիս փոխանորդ նստած էր, առանց հրամանի Առաջնորդութեան անուն մը առնելով իւր վրայ, եկաւ Սկն և այն տեղի երևելի Փիլիպպոս ամիրայէն գիր մը բերեց Սէլիմ փաշային, թէ «այս վարդապետ առաջնորդ կարգես մինչև որ ես հրամանագիր մը բերել տամ»։ Ինչպէս որ մէկ տարիէն ետք եկաւ իւր հրամանագիր, և այն ժամանակ վանեցին քշեցին 'ի Վան. և նա էլ այն տեղէն գնաց Էջմիածին ժամանակ մը միաբան եղաւ, և ապա Կուրաւցէն վերջ ըերել տալով սուրբ Կարապետի վանք վախճանեցաւ։

Իսկ Վարդան վարդապետ, որչափ որ թէ դաշտի մէջ և թէ Պուլանուխ երևելի իշխաններ կային հետն առնելով գնաց Էջմիածին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ ու եկաւ։

Եւ այդ միջոցին պարսիկներ եկան Պուլանուխ, Խնուս, Վարդոյ և այն տեղի գերիներ արք, կանայք և այլն, ամենայն իրենց հետ առնելով եկան 'ի Մըշոյ դաշտ, Ցունոն գեղի մօտ իրենց չատրներ (վրաններ) զարկեցին նստան 1270 հայոց թուին 1821։

Ուզելով որ Մշոյ վրայ յարձակուին՝ որոյ մէջ լեցուած էին փախստական գեղացիներ իրենց ընտանեօք և ապրանքներով և Մշոյ մէջի մեծամեծ քըթեր դէմ կայնելով պաշտպանութիւն ըրեցին քաղքին։ Եւ անոնց երևելիներն էին, Խալըթի տնէն Ըմըր, Ֆարըղ, Աճամ, Իսօն, Ուրզկօն, Գըմուէլ, Նահմատ, Սըլէման, Ըհօն։

Պէլ պօլոց տնէն՝ Թըմըր աղէն, Հաճի Պէլօն, Օզման,[188] որոնք Սէլիմ փաշայի հետ ֆռանկ Նօրշնի դէմ մէկ մէկու հանդիպելով, սկսեցին կըռուել, և պարսիկներէն երկու երևելի խան բռնեցին բերեցին Մուշ, կուզէին սպանել. և Շահ յուղարկեց Սէլիմ փաշային որ իւր խաներ արձակէ, և ալ ֆնաս մը չտայ։ Բայց Սէլէմ փաշէն անոր ասաց. «թէ որ մեր այս երկիրներէն արած գերիներ կ'արձակես, ես ալ քո խաներ կարձակեմ։ Եւ ապա Շահ ընդունելով անոր ըսածը, Սէլիմ փաշային կանչեց իրեն մօտ, ուստի Սէլիմ փաշան ալ ելաւ գնաց Շահի մօտ, և անոնց զօրք կարգով կայնելով իրենց բաց թըրըրի տակով անցուցին Սէլիմ փաշային, և ապա Սէլիմ փաշան ներկայանալով Շահին, Շահը ընդունեց զինք, և անոր անուն փաշայութենէն փոխեց և Խան անուանեց, և իրեն մօտ մնացած գերիներ արձակեց, որովհետև մեծ մաս ալ Շահը յառաջուց յուղարկած էր 'ի Պարսկաստան, և Սէլիմ փաշէն գալով Մուշ՝ Շահի Խաներ արձակեց։

Այդ ժամանակ երևելի հայեր էին Մշոյ մէջ, Զորոյ թաղ՝ Մէլիք Նազըր Մօսէն, Մ. Զըքոն, Մաւէլի Փոստիկ։ Սուրբ Մարիանէի թաղ՝ Պէկենց Կիրակոս, և Քէշիշ օղլի եօթ եղբարք, Սէլիմ փաշի Խչօն, Մահմուտ պէկին Խըպօն, և իւր եղբայր Խչօն։ Եւ դաշտի մէջ երևելի էին՝ Կոմսայ Մլքօն, Սլիճնայ Կորկոն, Զիարաթայ Տէր Մկրտիչ, Խէյպեան, Հըխէն, և Մեզտի Գըգէն։

Իսկ Շահը Մշոյ երկրին ալ ֆաս

մը չտալով ետ դարձաւ։

Եւ այդ ժամանակ որ դեռ Պարսիկներն այստեղ էին, վանքի վարդապետները և ամենայն միաբանք ոչխարներով և տաւարներով փախան գնացին Բողի բերդ, և ոմանք ալ ճգնաւորաց քարեր կ'բնակէին։ Եւ երբ աճամ գընաց միաբանները վերադարձան վանք, և Կուրաւցին՝ որ քանի տարի առաջ Խրիմ Նուիրակ գնացած էր, այն տեղէն սուրբ Կարապետի պատկերը և մէկ մեծ սահաթ հետ բերած էր, որ ամեն մէկ սահաթին մէկ եղանակ կ'զարկէր և ձայն կ'հանէր, որ կար մէկ հասարակ դռան մը չափ, և 12 քիսայի առնուած էր. Սէլիմ փաշէն աչք ձգած էր այդ սահաթին, առաւ Վարդան վարդապետէն և տարաւ Մուշ, նոյնպէս եօթն ուղտ ես, որ Կուրաւցին Խրիմէն բերած էր՝ տարաւ Սէլիմ փաշէն։

Սոյն Կուրաւցի Պետրոս եպիսկոպոս՝ այս ժամանակ երեելի էր վանքի մէջ, որ սկսեց առաջնորդութիւն յափշտակելու համար հակառակիլ Վարդան վարդապետի հետ, ուստի այդ մասին միաբանութեան մէջ կողմնակցութիւն լինելով, Պետրոս եպիսկոպոս քանիմ' միաբաններով գնաց Սէլիմ փաշայի մօտ և առաջնորդութիւն առնելով եկաւ վանք և զՎարդան վարդապետ քշեց Մատնավանք, և ինքն սկսեց վանքիս հիւսիսային և արևմտեան կողմի սենեակներ շինել տալ, Սրտաձորցի-Կարնեցի Սղապապ և Սարհատ Բաղիշեցի ուստաներու ձեռամբ։

Եւ Կարնոյ Խալըպ փաշան որ սարազքար (սպարապետ) էր, խաբէութեամբ յուղարկեց Սէլիմ փաշային տարաւ Կարին և Սոկիւտլիւ ըսուած տեղ խեղդել տուաւ և անոր տեղ նըստաւ Սէլիմ փաշայի եղբայր Միրզայ փաշայի տղայ Աւտրահման փաշէն։

Եւ մէկ տարիէն ետք շատ մը ամբաստանութիւն անելով Կուրաւցու վրայ, Աւտրահման փաշայի ձեռքով կրկին հաստատեցին առաջնորդ զՎարդան վարդապետ, և Կուրավցին զաւղիաններով (ոստիկաններով) աքսորեցին 'ի սուրբ Յոհաննու վանք, և իւր անձնական ստացուածքները Սւշաղբիւրէն յափշտակեցին և տարան Մուշ փաշային։

Երկրորդ տարին Աւտրահման փաշէն գնաց Բաղէշ, այնտեղ այլ և այլ կարգեր հաստատելու, որովհետև այնտեղի կառավարութիւնն ևս իրեն ձեռքն էր այն ժամանակ, և երբ վերադարձաւ Զղուրաց Կեարմաւի վրայ, Ուսուֆ փաշայի տղայք որք չորս եղբայր էին, անոր վրայ պահապան լինելով գնացին առաջ և այնտեղ սպանեցին, և եկան Մուշ քանիմ' ամիս միասին նստան, իւրաքանչիւր իւր ուզածն ընելով։

Եւ ապա Կուրաւցիին հրաման գալով Կարինէն, ինքն գնաց այնտեղ և Մշոյ մէջ փաշայ գրուեցաւ Ղլաթայ Սմէտ Շեխ փաշէն, և Կուրավցին ալ Կարինէն հրաման առնելով եկաւ վանք իբրև փոխանորդ։ Որովհետև Վարդան վարդապետ կրկին Շեխ փաշի ձեռքով աքսորեցին Սրղնի վեց ամիս ժամանակ։ Եւ քանիմ' ամիսէն ետք Կուրավցու տեղ փոխանորդ եկաւ Կարնեցի Ջըխալ օղլի Ստեփան եպիսկոպոս, և նոյն աշնան Ստեփան եպիսկոպոսին հանեցին։

Եւ այդ ժամանակ Սէլիմ փաշայի աղջիկ, Մաւի խանըմ, Խիանցի Զօփոյի ձեռքով Շէխ փաշայի մնացած բերդ պարութով ձգեցին և այրեցին գիշերուան կէսին, և ձայն տարածուելով,

Կուրավցին իբրև քննիչ՝ ճիշտ իմացաւ որ Շեխ փաշայի բերդ քանդուեցաւ, և Շեխ փաշայի զօրքերը որ այդ ժամանակ ընկած էին դեղեր՝ Քեշիշ աղճասի [188] ըսուած հարկեր կ'ժողովէին Շէխի հրամանով, ահա անոնք ալ լսեցին և հրամայողն և հրամանակատարքն 'ի միասին կորան։ Եւ երկրի մէջ եղած քրդեր ժամանակ գտնելով, ամեն մէկ իւր կողմէն սկսեցին թալանել իրենց դէմ եղած հայ գիւղեր, աւերել և սպանել։

Եւ դարձեալ փաշայութիւն ընկաւ Ուսուֆ փաշային Էմին փաշին, և կրկին անգամ Պօլսէն հրամանագիր դալով Կուրավցին ալ առաջնորդ կարգեցաւ վանքին։

Իսկ Էմին փաշէն Ուռուսի գալը լսելով գունդ կազմեց Արփաչայ գնաց Ուռուսի դէմ։ Եւ այդ ժամանակ Կարնոյ Սէրազքարն ալ Ասադ փաշէն էր։ Իսկ Էմին փաշէն չկարողանալով դէմ դնել Ուռուսին, փախան ի Մուշ, և հրաման հանեցին իրենց էլ քրդեբուն, որ վանքին ձեռք չտան, բայց գեղեր ուր որ հանդիպեն թալնելու հրաման է։

Եւ Լուսաւորչի պահոց հինգշաբթի օր՝ Ռուս համնելով 'ի Կարին, Թօփ զարկեց մինարայի գլուխ շրջեց և անոնք ալ անձնատուր լինելով՝ բանալիներ յանձնեցին Ուռուսին, որոց գլխաւորն էր Բասքովիչ, և առաջնորդն էր՝ Կարնեցի Կարապետ եպիսկոպոս։

Իսկ Կուրավցին թէև մասամբ լըսած էր թալանելու հրաման, բայց ճիշտ կերպով տեղեակ չէր. ուստի Կուրավցին նոյն ժամանակի Խանամիրեան սարկաւագ Յարութիւնն յուղարկեց Քիւրդ հաճի Պելօյի մօտ ճիշտ կերպով տեղեկանալ, թէ թալանելու հրաման և թէ Ռուսի ի Մուշ գալ։ Եւ հաճի Պելօն ալ ըսած էր խալիֆային թէ. «Որովհետև ես այդ վանքի մէջ հաց ջուր եմ կերեր, չեմ ուղեր որ մէկ վնաս մը վանքին մէկ քարին անգամ պատահի, շիտակն ըսեմ, որ հաճի Մահմուտ Աղի տուն խորհուրդ ըրած են որ վանք պէտք է թալնեն. թէև Էմին փաշէն հրամայած է առայժմ վանքի թալնել թողուլ, մինչև որ տեսնեն Ռուս կուգայ, յայնժամ 'ի միասին թալնեն ու փախչեն, բայց անոնք մտիկ չեն աներ հիմակուընէ կ'սկսեն վանք թալնել։ Եւ իրիկուան ժամանակ Հաճի Պէլօն սարկաւագ հետն առած բերեց վանք վնաս մը չլինելու։ Եւ Հաճի Պէլօն ալ Կուրավցուն, Մարտիրոս եպիսկոպոսին, և Ղազար վարդապետին ալ պատմեց իրենց պատրաստութիւնը տեսնել, որ անպատճառ վանք պէտք է թալնուի։

Իսկ Մարտիրոս եպիսկոպոս և Ղազար վարդապետ ծաղր ընելով սարկաւագի վրայ չհաւատացին, որպէս թէ քիւրդ հացկատակութեան համար այդպէս կը խօսի, ուստի անհոգ մնացին։ Նոյն առաւօտ եկան քիւրդեր և վանքի պարխանայի (մթերանոց) ձիեր պարսպի տակէն առան գնացին. և կրկին անգամ սարկաւագին յուղարկեցին ձիտներու ետև բերելու, և անոնք ալ խաբէութեամբ ձիեր ետ դարձուցին, որ կարծիք չունենան թալնուելու։ Եւ Մինաս անունով մէկ մը յուղարկեցին Կինճայ Ամիրայի մօտ հարիւր թիւանքչի բերելու որ վանք պաշտպանեն, բայց անոնց գալը յետանալով, քիւրդեր եկան վանքի դուռ, ըսեցին. դուռը բացէք որ գանք ներս վանքին պաշտպանութիւն ընենք, որոց գլխաւորն էր Որշկօն իւր էլով։

Բայց Կուրավցին նոցա խաբէութիւնը իմանալով դռներ չբացեց, թէև Մարտիրոս եպիսկոպոս խորհուրդ կուտար բանալու․ և քիւրդերն ալ կ՚խոստանային երկրէն թալանած թէ անասունք և թէ ուրիշ բաներն ալ խաբէութեամբ յանձնել վանքին։

Կրկին անգամ քիւրդեր վերադարձան դաշտ, նոյն տեղէն թալանելով եկան վերի փակահ եղած և վանքէն դուրս եղած ամէն անասուններ առան գնացին, բայց դարկայ չրաց արաւ, ուստի վանքին եղած երեելի մասունքները և եպիսկոպոսական քանի մը զգեստները՝ եկեղեցւոյ դարաններու մէջ պահեցին հինգշաբթի օրը, և այն գիշեր Կուրավցին Մարտիրոս եպիսկոպոս, Խորոնցի Յարութիւն վարդապետ, վանքի երկու հատ երևելի մեծ պատկեր, մէկն սուրբ Աստուածածնայ արծաթեայ, և միւս սուրբ Կարապետի Մակարեայ, որոյ ոսկեջրի համար 12 քիսայ խարճուած էր, որ Կուրավցին երբեմն նուիրակ գնացած ժամանակ շինել տուած էր, իսկ Աստուածածնայ պատկերը վանք շինել տուաւ Կուրավցին Արզրում ուստայ Աղապապի ձեռամբ, նոյնպէս և մէկ օձաձև դաւազան։ Եւ այս երկուքն որ արժէին 200 քիսայէն աւելի, յանձնեցին սարկաւագ Յոհաննէսին, լաղ սարկաւագ Յոհաննէսին, սարկաւագ Յարութիւնին, և Պլէճեան Կարապետին, որ տանեն գիշերով մեշայի մէջ պահեն։

Եւ Կուրավցին վերոյիշեալ վարդապետներով մեշային մէջէն փախչելով գնացին Մուշ՝ օգնութիւն մը բերելու․ և շաբաթ օրը քիւրդեր սկսեցին վանքի չորս կողմ պատել մինչև եօթ հարիւր ձիաւորի չափ, և քանի մը վարդապետներ սկսեցին թիւանքով պաշտպանել զվանք։ Եւ ահա Սասունցի Ղազար վարդապետ, քաջասիրտ լինելով կամեցաւ թիւանքով զարնել անոնց երևելի Մահմոյ անունով քրդին, բայց միւսներ խորհուրդ չտուին անոնց թշնամութիւն չ՚գրգռելու համար․ ուստի Սասունցին դիտմամբ նշանելով ձիու տունախին (սմբակին) զարկեց։

Եւ ի վերջոյ երբ չկարողացան դիմանալ, միաբաններէն ոմանք փանճարներից, ոմանք պարսպէն չուաններով կախուելով ամէն մէկ կողմ սարերու, ձորերու և քարերու մէջ պահուեցան։ Բայց քրդեր դարձեալ կը գնային որ կ՚չարչարէին, որ կ՚սպանէին, որ կ՚խեղդէին, ինչպէս Կուրավցի Յոհաննէս վարդապետի սպասաւոր բռնեցին և ամորձիքներէն կախեցին և չարչարեցին։

Եւ այդ ժամանակ որ Կուրավցին իր հետ եղողներով Ջրիք գիւղն էր, և դեռ չէր իմացած դռներու բացուիլ և վանքի թալնուիլ, և ահա Ուսուֆ փաշայի տղայք գալով իրենց վրայ, զանոնք ալ այնտեղ թալնեցին, բացի Զաքարիայ վարդապետէն, որոնք իրենց հայր համարելով ձեռք չտուին։

Այդ լուր հասաւ Մշոյ Քոթանենց Մուրադ Աղային, նա էլ եկաւ վարդապետներ և Կուրավցին ազատեց տարաւ իր տուն․ նոյնպէս և գեղերէն շատ հայեր ընտանիքով փախան գնացին Մուշ․ և ամենի համար ալ պաշտպան էին Մշոյ հայեր և տաճիկները, որոնք բարեսրտութեամբ անոնց ամէն պիտոյք իրեցմէ կ՚հոգային թէ հացի կողմանէ և թէ ուրիշ բաներով։

Միաբանութիւնն ալ արդէն վանքէն փախած էին, և ահա քիւրդեր ամէն մէկ իւր կողմէն սկսած էր ներս մտնելու աշխատիլ, դռները ջարդեցին, և ներս մտածին պէս առաջին անգամ

վանքի պուղայ գոմէշ որ փռռնի (փուռ) կապած էր, արձակեցին, և մէկ փոքր ձագ ալ կար անոր մօտ, Հայդար Աղի Մամօն թրով զարկեց և երկու կտոր բրաւ, և հազար ոչխար ալ որ բակի մէջն էր, զուրս ըրեցին, և ամէնքն ձեռք ընկած իրեն կյափըշտակէր և կ'տանէր։

Եւ եկեղեցին ալ արդէն իւր խաչերու և զգեստներու գերութիւն տեսած էր, և վեց ամիս այդպէս ամայի մնաց վանք, դռներ բաց ամեն քիւրդերի համար, փակողն իրեն կ'աշխատէր, եկեղեցւոյ դուռ բաց էր, և քիւրդեր եկեղեցին ձիաներով լեցուած փշխըն (աղբ) ախոռի նման էր դարձած։

Բայց ամենի գլխաւորն այս է՝ որ մէկ շուն ալ սպանեցին և սուրբ գերեզմանի վրայ ձգեցին, եկեղեցւոյ սներ սկսեցին կտրել, որ եկեղեցին քանդէին, որոցմէ քանդելու աւելի կ'աշխատէր Խարապեկցի Նազէի Հլօն, որ ելած էին զանգակատան երկու սուն կտրած էին որ կաթողիկէն շրջէին։

Եկեղեցւոյ խաչերն որ հազարի չափ էր, սուրբ Գէորգ եկեղեցւոյ դարանի մէջ լեցուած, ղանոնք ալ գտան, որոնք մեծ մասամբ ակունքներով էին, և շատերն կուգային մինչև երեք հոխայ, երկու հոխայ, մէկ նուկի և աւելի պակաս, զորոնք կ'լեցնէին բեռներու մէջ, և պարսպէն ցած կ'լեցնէին և կը ջարդէին։ Երեք չորս շիշայ մեռոն կար պահուած Յօնան վարդապետէն մնացած, զանոնք ալ ջարդեր էին։ Դուրս եղած պղինձեր, որոցմէ չորսը հարիւր լիտր ջուր կը տանէին, որոնք բակի մէջ բուխերիների վրայ դրած էին միաբանները և փախած էին և թանով լեցուած էին. անոնց մէջ եկեղեցւոյ Աւետարաններ և ուրիշ հին արծաթապատ գրեանք կ'լեցնէին և կ'խառնէին։ Թողունք ասել այն ղըրքերը որ կտրտած՝ եկեղեցւոյ տախտ լցուցեր էին. և սենեակներու մէջի ապրանքներ, որ երկրացիներուն հետ փախուցած էին ի վանք ապահով մնալու, ամենքն ալ ի միասին տարան։

Եկեղեցւոյ սուրբ Գէորդայ մէջի ուրիշ պահարան մը, որոյ գուռը տանիքէն լինելով՝ քակեր էին և գտեր, և անոր մէջ ալ հին ժամանակէն ծերունի լուսարար. Բարսեղ վարդապետի ժամանակէն մնացած 50 խալիպ արծաթ, որ եօթ կամ ութ լիտր կը կշռէր, և զոր պահած է եղեր այն մրտքով, որ ժամանակին եթէ վանք քանդուի, անոնցմով շինեն, այս ամենքը կը յափշտակեն կը տանեն։

Մնացած էր միայն Աստուածածնայ խորանի դարան պահուածներն, որ մասունքներով խաչերով էին, այն ալ քիւրդեր ապա կ'պատմէին թէ Աստուածածնայ կողմի փանճարայէն մինչև սուրբ Կարապետի կողմի փանջարան, մէկ օձ մը երկարցած կերևար, որ գլուխ դրած էր մէկ փանջարան, պոչը մէկ, անոր երկիւղէն չէինք կարողանար այն տեղերն ալ մօտենալ, ուստի միայն անոնք ազատ մնացին։

Վանքի մէջն էր Տրգատայ պողպատէ ղրահ շապիկը, որ հնութենէն մնացած էր. այգ պաշտելի հնութիւնն և հայութեան պարծանքն ալ անօրինաց ձեռքով կորսուաւ 'ի փնաս հայութեան։

Կային շատ պատկերներ ալ եկեղեցին կախուած, անոնք ալ կտրտեր էին, նոյնպէս Դատաստանի մուշամպայ պատկերն ալ որոյ երկայնութիւնն կը լինէր 15 արշին և եօթ ալ լայնութիւն, զարմանալի գեղեցկու-

թեամբ և հնութեամբ շինուած, որ գրեթէ 50 քիսայի արժողութիւն ունէր. այդ պատկերն ալ Սահակցի քիւրդերն տարած էին։ Եւ վանքէս Եղիա վարդապետ Աւրցի, Յովսէփ վարդապետ, և խանձահամ. Պօլսեցի Յօհաննէս վարդապետ, քիւրդերը մերկացնելով, փախած գնացած էին Սահակ գիւղ, քիւրգերն որպէս թէ անոնց պատիւ ընելով կտրտած էին այդ պատկերը ե անոնց մերկութիւնը ծածկելու համար տուած էին անոնց։

Վերջապէս վանքին, թէ եկեղեցւոյ ե թէ դուրս եղած, տարածները, գրեթէ կը հասնէր երկու խազինայի արժողութիւն, ե այդպէս վեց ամիս ժամանակ, եկեղեցին, վանք անտէր մնացին, ե անտէր տեղը, երբ թշնամոյ ձեռք անցնի ինչ վիճակի կ՚հասնի, կարդացող թող իմանայ։

Միաբանութենէն այդ փախչելու ժամանակ, Խանամիրեան Մկրտիչ եպիսկոպոս, որ չէր կարողացել փախչել, ծերութենէն աչքեր վատացած լինելով, կերպ կերպ չարչարանքով տանջեր էին. նոյնպէս ե Զիարէթցի Մարգարայ վարդապետն ալ կ՚բռնեն կ՚չարչարեն կտանին մինչև Բալու, և այն տեղ թողնելով, կերթայ Բոծեղկոր, և այնտեղ մեչայի մէջ մնալով, անոր եղբայր կուգայ կտանէ Զիարէթ։ Վեց վարդապետ ալ թալնուած փախեր դըռնացեր էին Մուշ, Քէշիշօղլենց տուն և նա ալ կ՚տիրէր անոնց։ Այդ վարդապետներէն քանի մը հատ ալ գնացին Էջմիածին, որ այն ժամանակ Եփրեմ էր կաթուղիկոս, որ լսելով լացաւ և ըսաւ.

«Որդեակներ ես եղայ պատճառ այդ աւերմունքներուն, և ես եմ. պարտական Ամլորդւոյ (սուրբ Կարապետի) վանքին. իմ. մեղաց համար Աստուած պատժեց մեր Հայոց վանքը և ժողովուրդը»։

Վանքի տնտես կանայքն ալ քիւրդ Մամսն ժողվեց տարաւ Բաշու, որ բոբիկ հասուց մինչև Դոժլարէ րսուած տեղ իբրև գերի։ Կուրավցին ալ Մուշն էր, երբ իմացաւ որ, քիւրդեր չսելով Ուռուսի գալը՝ թողեր փախեր էին, և վանքի գոմէշներ թողուցած մերկիմէր(*) ուստի այդ տարաձայնութիւնը լսելով, իրեն քով եղած քանի մը միաբանները՝ ինչպէս սարկաւագ Յարութիւն, Պլէճեան Կարապետ, Արտօնցի Մարտիրոս, Ծգնաւոր Յակոբ, յուղարկեց որ երթան շիտակն տեղեկանան և գոմէշներ բերեն։ Ուստի անոնք ալ գալով, առաջի անգամ. ինչան այդ սուտ ձայնին տարածման, տեսան որ վարի փական կրբակ տրուած կ՚վառուէր. անոր համար ետ դարձան եկան Հերկերտ, և Պատկանցի քիւրդեր այդ միաբանները այն գեղի մէջ տեսնելով, եկան բռնեցին և շատ նեղութիւն տուեցին իբր թէ՝ արէք վանք մնացած ուրիշ ապրանք որ կայ ցոյց տուէք։ Եւ անոնց միտքն այն էր՝ որ այդ միաբաններն իրենց հետ տանէին Մաանավանք, անոնց ձեռքով դռներ բանալ տալ որ թալնեն։ Բայց Յարութիւն սարկաւագ երբ անոնց գլխաւորներու անունները տուեց, ալ ձայն չհանեցին արձակեցին զանոնք, և իրենք գնացին Մատնավանք թալանել։

Եւ այն տեղ քանի մը գեղի մարդիկ որ ժողոված էին, դէմ. դրեցին ներսէն և քանի մը մարդիկ սպանեցին, և քիւրդերն ալ պատանր ծակելով ներս մտան և շատ մարգիկներ սպանեցին. ինչպէս նաև Մարկոս վարդ. Ալաշկերտու Դիդամ. գիւղացին և սուրբ

Կարապետի Ջաղացպանը, ասոնք ալ միւսներու հետ նահատակուեցան։

Հերկետէն ելնող միաբաններն ալ հասան Մշոյ գաւառներու Ջրի վրայ, և այն տեղ հանդիպեցան իրենց՝ Էմին փաշէն իւր եղբայրներով, տեսաւ որ ամենքն ալ մերկ էին, հարցուցին թէ՝ դուք ո՞ր տեղէն էք. պատասխանեցին թէ՝ մենք սուրբ Կարապետի միաբաններն ենք. ըսաւ թէ՝ սուրբ Կարապետի հաց ձեղի հարամ եղնի, և հայհոյելով ըսաւ, դեռ խօսք կը տանէք ու կը բերէք։ Ու փաշայի եղբայր Խուրշուտ պէկ՝ մզրախով անոնց արանդամը ցոյց կուտար և ծաղր կանէր. ուստի Ցարութիւն սարկաւագն ալ բարկանալով ըսաւ. Մեք իմացանք թէ դուք մարդ էք, ու գձեղ մարդու տեղ դրեցինք, ու գձեզ ապաւէն բռնեցինք եկանք. հիմայ կ'տեսնենք որ դուք քիւրդերէն աւելի վատ կը վարուիք մեզ հետ, և անամօթ բաներ կ'ընէք»։

Ասոր վրայ անոնք ալ սկսեցին քիչ մը քաղցրութեամբ հարցնել, թէ վանք ի՞նչպէս է, անոնք ալ պատմեցին թէ, «Տօլվաթ ձեր գլուխ, վանք աւերեցին, փակահներ այրեցին, եկանք Խէյպեան մարդ մը սպաներ էին ձգեր շներուն. եկանք Ալի հուն Մուրատ գետ, մէկ կին մը սպաներ էին որ և առաջ ձգեր»։

Երբոր փաշան այս խօսքեր լսեց, իր ընկերներուն ըսաւ. Ելէք երթանք, ասոնց բերնէն կրակ կը թափի, և ըսաւ Աստուած ընողին չթողնէ, և միաբաններն ալ ըսեցին, Ամէն, Աստուածն ենք կանչեր որ ադոր պատճառ եղողն ալ մեր հալին համնի։ Եւ իրիկուն ժամանակ միաբանները գնացին Մուշ, մազարներու մէջ նստան, խապար յուղարկեցին Կուրավցուն, և Կուրավցին ալ ամէն մէկուն մէկ մէկ կտոր հանդերձ յուղարկեց. իրենց մերկութիւն ծածկեցին և գնացին Կուրավցուն ամեն բան պատմեցին. խեղճ Կուրավցին ի՞նչ պիտի ըներ, միայն կուլար և կը ցաւէր։

Մշոյ մէջ միաբանութիւնը և վարդապետներ տեսնելով որ ապրուստ չեն կարող ընել, ելան դնացին Արզրում. Կարնոյ Առաջնորդ Կարապետ եպիսկոպոսն ալ տեսնելով որ վարդապետներ մերկ են, ամեն մէկին մէկ մէկ ձեռք հանդերձ տուաւ. և միւս միաբաններն ալ սկսեցին մշակութիւն ընել և ապրիլ մինչև երկու ամիս ժամանակ։ Եւ Ուռուսը դեռ այնտեղն էր. հին շէնքեր կ'քակէր և անոր տեղ նոր նոր շէնքեր կ'շինէր, ինչպէս որ Երզնկայու դռնէն պատան քաշեց մինչև հասաւ բերդ. մինարէթ քանդեց, ուրիշ շէնքեր կը շինէր. և այն ձմեռ Ուռուս մնաց այնտեղ։

Կարապետ եպիսկոպոսն ալ գարուն որքան մերձակայ վանքեր կային, անոնց ամեն զարդեր, և հինգ հազարէն աւելի քաղաքացի տնեցիք, և Բասենէն շատերը հետն առնելով գնաց Ախըցխայ, Ախըրքեալաք և ուրիշ տեղեր բնակեցուց. ՌՄՀԲ. 1830 թուին Հայոց։

Եւ ապա միաբանութիւնն ալ մէկիկ մէկիկ դարձան և եկան Մշոյ դաշտ, ու Կուրավցին ալ դեռ Մուշն էր, և այնուհետև հրաման եղաւ Էմին փաշայից, որ վանքի մալ ուր որ տեսնան ետ առնեն. ուստի սկսեցին միաբանութիւնը պտրտել, և ամեն մէկն իր տեսած և ճանաչած թէ անասուն և թէ ուրիշ բաներ ետ առնել։ Ապա Կուրավցին յուղարկեց Խորոնցի վարդապետին վանք, որ եկաւ սկսեց մաքրել եկեղեցին և ուրիշ ապականութիւններ. Կուրավցին ալ ելաւ գնաց Աւէկեավր քիւրդ Էլ աղասի Ըմրրի քով, որ վանքին շատ

մը արծաթեղէննէր կային իրեն մօտ, անորմէ առնելու։ Նա էլ երեսուն սկիհի չափ բերեց ցոյց տուաւ, Կուրավցուն ըսաւ թէ՝ Անգիր թղթի մը վրայ կընիքդ զարկ, տուր ինծ, ես կուտամ. ասոնք տանես։ Կուրավցին ըսաւ. թէ որ զիս այս տեղ սպանես քեզ այդպիսի մօհր չեմ տայ, կուտա՞ս տուր, չես տայ, ես կրկին կերթամ։

Եւ ապա այն տեղէն վերադառնալով աւուր սահաթ մէկին Կուրավցին իւր ընկերներով հասան 'ի Խէյպեան, ապա ելաւ այն տեղէն գնաց Մուշ Էմին փաշի քով՝ որպէս թէ քիւրդեր կամք չունին բան մը տալու։

Էմին փաշէն ալ ըսաւ, 500 քիսայ փող կուտամ քեզի, դու ձեռք քաշէ. Կուրավցին ըսաւ. ես վանքի մալ, ազգի մալ քեզանէ կուզեմ, ես միայն տավաջի չեմ, ապա բոլոր ազգ քեզանից տավայ կ'ընէ, ե եթէ մեր ազգ և վարդապետներն բոլորովին վերջանան, ուրիշ քրիստոնեայք քեզանից տավայ պէտք է անեն։

Ուստի Էմին փաշէն ալ կանչել տալով քիւրդ Ըմըրին կ'պատուիրէր որ վանքի մալ տայ, թէեւ ակամայ կերպով։ Բայց Կուրավցին կ'ստիպէր Ըմըրի վրայ՝ մալեր տալ. Ըմըր բարկանալով, զանջալ քաշեց Կուրավցիին զարկելու Էմին փաշայի ներկայութեամբ։ Կուրավցին ալ ըսաւ Ը՛մըր, Ը՛մըր, այսուհետև իմ անուն Կուրավցի է, քո անուն Ըմըր, այսուհետև մենք մէկ տեղ մէկ երկրի մէջ հաց պէտք է չուտենք։ Ուստի Էմին փաշէն ալ սկսաւ թշնամանալ Ըմըրի հետ. անոր համար որ չյայտնուի թէ իր խորհրդով եղաւ այդ ամեն թալաններ և վնասներ։ Ըմըրն ալ փախաւ գնաց Խնուս, և այնտեղ բատակեցաւ։

Եւ Կուրավցին սկսաւ այս կողմ. այն կողմ գտած խաչեր և արծաթներ ժողովել միաբանութեամբ, և տարաւ Մուշ Նազըր Մուսէի տուն, և ապա բերեցին վանք, կըշռեցին ութ լիտր։ Իսկ այն երկու մեծ երևելի պատկերներ, երբ գնացին պահած տեղ նայելու, տեսան որ զանոնք ալ հաներ էին, և յետոյ իմացան որ Մամօն հանած էր, Խալիֆայ Յօհաննէսի եղբօր տղայք ցոյց տուած էին, այն պատճառաւ որ իրենց հայրը բռնած կ՛չարչարէին, ասոր համար տղայքն ալ ցոյց տուած էին։ Եւ Կուրավցին ալ ուխտ դրաւ իւր վրայ, որ մինչև այդ պատկերներէն մաս մը կամ նշան մը չգտնէ, ոչ գինի խմէ ոչ միս ուտէ. և այդպէս սկսեց փնտռել այս և այն կողմը. բայց միայն Աստուածածնայ շրջապատ արծաթը գըտաւ գլխաւոր քիւրդերու մէջ. և այդ շրջապատ այժմ ձգուած է սուրբ Կարապետի մեծ պատկերի վրայ։ Եւ ապա Կուրավցին Աստուածածնայ դարանն ալ բացեց, որ միայն ազատ մնացած էր, և նորա մէջ եղած մասունքներ, և զգեստներ ապահովութեան համար տարաւ Մուշ Նազըր Մուսէի տուն, և այն տեղ Էմին փաշէն առաջ գալով բացեց տեսաւ, և անոնցմէ առաւ մէկ հատ եպիսկոպոսական ընտիր շուրջառ, մէկ ոսկի սկիհ մը, մէկ ոսկիէ կանգեղ մը, որ միշտ գերեզմանի վրայ կ'վառուէր, և պէտք է ջարգէր իւր ձիաներուն ռաշմայ շինէր, ուստի տարաւ Բաղէշ ոսկերիչ Յարութիւնին տուաւ շինելու, բայց ոսկերիչ խաբելով՝ որպէս թէ ոսկի չէ, ձեռքէն առած, և ուրիշ արծաթներէ շինած՝ տուած էր իրեն, և այդ սկիհն յուղարկեց վանք իրեն յիշատակ։

Կուրավցին այն ձմեռ մնաց Մուշ

մինչև գարուն, և ապա քանի մը միաբաններով վերադարձաւ վանք, և Զաակի խթումին եղ չունենալուն համար ձիթով ճաշի խթում ըրեցին, հացն ալ սաճի վրայ կ'եփէին կուտէին փուռն քակուած ըլլալուն համար, և հաց ալ չունենալուն համար, յուղարկեցին Մըշուց հաց բերեցին, և կատուն անդամ որ կտրուած էր վանքէն, ղայն Մուշէն մէկ հատ բերեցին, և այդպիսով եօթ հատ ալ ոչխար գտան և մէկ քըռէծ։ Իսկ տասն հատ ոչխար ալ և մէկ մատակ, մէկ արապայ հինգ քիլայ ցորէն, Զիարէթու ռէս Նորատունկեան Դանիէլ տուաւ վանքին, և եկաւ իւր լուծքով ցորենները ալ ցանեց։

Եւ Կուրավցին ալ որ ցորեն բերելու համար գնացած էր 'ի Մուշ, վերադարձաւ վանք։

Եւ Էմին փաշէն ալ Քեշիշ օղլիի տղաներով Բաղէշն էր, Կուրավցին վանքին միաբան Ֆըրըշիկ Դաւիթն յուղարկեց Բաղէշ Քէշիշ օղլենց մօտ, անոնցմէ տեղեկանալ թէ ի՞նչ կայ, ի՞նչ չկայ։ Ուստի Քէշիշ օղլի Մարդար Աղէն թուղթ գրեց Կուրավցուն թէ՝ «Կոմսայ ռէս Մլքօն քեղի պիտի հրաւիրէ Զայուրմէն Էմին փաշային տեսութիւն ընելու, բայց վատ խորհրդով, ուստի իմացիր որ՝ դքեզ սպանելու համար կ'տանեն, հիմայ ընելիք դու գիտես»։

Եւ քանիմ՝ օրէն Մլքօն՝ ըսածին պէս իւր ծառան յուղարկեց Կուրավցուն քով, իբր թէ՝ Արի Էմին փաշին տեսութիւն ըրա. իսկ Կուրավցին նորա չար խորհուրդ արդէն իմացած ըլլալով, խապար յուղարկեց թէ՝ դու գնա ինձ Խաղետն գիւղ ես քիչ մը արծաթեղէններ ունիմ առնելու՝ կառնեմ, և ապա կուգամ կ'համնիմ քեղ։

Եւ օր ժամ տասին Կուրավցին իւր պատրաստութիւն տեսաւ, և գնաց Սահակ գիւղ, Իսի Ելէրէն Նամաթի Ըլու տուն. և նա էլ իր մարդերով հետն առած փախուստ տարաւ Կարին։ Եւ ղաթրճի Տօնէն ալ Սահակէն գալով, հարցուցին միաբանները թէ՝ Կուրավցին անցաւ Խազեանով գնաց Կոմս, որովհետև տեղեակ չէին անոր խորհուրդին, և երբ Տօնէն պատասխանեց թէ՝ Մէրկէմիրու ճանապարհով գնաց, միաբանութիւնն ալ խապար յուղարկեցին Մուշ թէ՝ Մլքոյէն մարդ եկաւ Կուրավցին կանչեց, և նա էլ վանքէն ելեր է, չգիտենք ու՞ր է գնացեր. բայց լսելով գիտենք, որ Կարին է գնացեր։

Այդ ժամանակ Կարին առաջնորդ չըլլալուն համար, Պօլսէն հրաման եկաւ Կուրավցուն որ առաջնորդութիւն ընէ թէ Կարնոյ և թէ սուրբ Կարապետի վանքին։ Եւ մէկ տարի անցնելէն գկնի Կուրավցին յուղարկեց փոխանորդ Զաքարիայ վարդապետին, որ սկսէ վանքի շինութեան պարապել։ Եւ Զաքարիան ալ սկսեց շինութեան, և ընդամենը Կուրավցին երեք տարի առաջնորդութիւն ընելով Կարնոյ մէջ, իրեն տեղ առաջնորդ գրուեցաւ Եդեսացի Յարութիւն եպիսկոպոս, և Կուրավցին ալ նստաւ վանքի հոգետուն երկու տարուան չափ։

Յարութիւն եպիսկոպոս սուրբ Կարապետի վանքի հաշիւն ուզեց Կուրավցիէն, այն տեղի երևելի Քէօսա օղլի Համբարձումը քանի հատ իշխաններով ըսեցին թէ՝ Դու որ եկած ես Երուսաղէմէն, և այն տեղէն ալ բաւական բաներ բերեցիր, միթէ՞ անոնք ալ քեզանից հաշիւ առա՞ն թէ ոչ, ապա թէ ոչ, դու ի՞նչպէս Կուրավցիէն հաշիւ կուզես, քանի որ Կուրավցին ինքն բոլորովին վանքին է։

Եւ այն տեղէն խապար յուղարկեց Կուրավցին և սկսել տուաւ սուրբ Ստեփանոսի տաճար շինելու, և Զաքարիայ վարդապետն ալ անոր հրամանով սկսեց այդ շինութիւնները, ե սուրբ Գերեզմանին վրայի փոքր կաթողիկէն մարմարեայ քարով շինեց։

Եւ ապա Ցարութիւն եպիսկոպոսն և Կուրավցին Կարնոյ մէջ իրարու հետ հակառակելով, Պօլիսէն հրաման եկաւ և Կուրավցին յուղարկեցին Վան առաջնորդութեան. և իրեն հետ գնացին վանքին միաբաններէն Մեսրովբ վարդապետ ե իւր եղբայր Յօհաննէս վարդապետ և տարի մը մնալով այն տեղ, կրկին Վանէն հրաժարեցուցին և յուղարկեցին սուրբ Կարապետի վանք կրկին առաջնորդ։ Եւ Կուրավցին սկսեց Գերեզմանի տաճարն ալ շինել տալ, որոյ ուստաներ էին և գլխաւորն Վանեցի ուստա Մարտիրոս, որ պարսպէն ընկաւ մեռաւ, և մնացին իրեն աշակերտներ, ե ուստա Նիկողայոս սկսեց իւր մեռած ուստայի տեղ անցնիլ ե տաճարներ վրացուցանել, որոց ծախքը 280 քիսայ եղաւ։

Եւ ապա Զաքարէն և Կուրավցին սկսեցին իրարու հետ հակառակիլ առաջնորդութեան վրայ, որ կուզէր Զաքարէն անոր տեղ առաջնորդ լինել։

Իսկ Ուրֆացի Ցարութիւն եպիսկոպոս հրաժարական տալով գնաց Ուրֆայ։

Բայց Կարնոյ երևելի իշխան Մուրոյի Կարապետ[140] Կուրավցու հետ թշնամի լինելուն համար, Զաքարիային առաջնորդութեան հրաման և նշան բերել տալով Պօլիսէն, Կուրավցիին աքսորեցին Առաքելոց վանք, և այն տեղէն ալ հանելով, կրկին ձմեռ ժամանակ քշեցին Վան, ե ճանապարհին հանելով Զարտախան ձիու վրայէն կ՚ընկնի, ոտներ ձեռքեր կ՚սառի, և կսկսի պատճառ եղողներուն անիծել։ Եւ այդպէս խեղճութիւնով գնաց Ոլաթայ Թեղուտ գեղ մնաց։

Այդ ժամանակ Շարիֆ պէկն ալ այն տեղն էր գործի համար եկած, երբ կ՚լսէ, կուգայ առաջ և ձեռքեր համբուրելով կ՚տանէ իւր մնացած խօնախ, և պատիւ ընելով կ՚ցաւի անոր վրայ, և կուլայ իրեն հետ խղճալով այնպիսի արժանաւոր մարդու մը վրայ և քանի մ՚ օր պահելով իւր մօտ, Ոութէի Ըմըր անունով քիւրդ մը կ՚յուղարկէ Զաքարիայի մօտ և կ՚աղաչէ, որ կրկին ետ դարձունէ զԿուրավցին՝ ըսելով թէ՝ Այդ մարդ ափսոս է, թէ և մեզ հետ ալ շատ ընկեր կայներ է, բայց մենք ալ չենք յիշեր իր ըսածները։ Եւ Զաքարէն ալ ըսաւ. Ես գիտեմ որ ինքն պէտք է բռներ դայն և ծով ձգեր, և փոխանակ այդպէս ընելու, ՚ի հարկէ կաշառք կերած է, կրկին կուզէ վանք բերել, և խապար յուղարկեց թէ՝ հնարք չկայ ետ դառնալու, որոշուած տեղ պէտք է երթայ։

Եւ երբ Ըմըր վերադարձաւ Շարիֆ պէկի քով ե յայտնեց Զաքարիայի ըսածները, ցաւելով եկաւ Կուրավցուն ըսաւ. Զաքարէն իմ ձայնին չլսեց, ուստի ել գնա Վան. նա էլ ողբալով և լալով գնաց Վան. մէկ տարի ժամանակ մնաց, ապա Պօլիսէն հրաման եկաւ իրեն որ երթայ Արզրում, ուրպէս զի այն տեղէն վանքի առաջնորդութեան հրաման կրրկին առնելով վերադառնայ վանք՝ Զաքարիայի տեղ։ Եւ երբ հասաւ այնտեղ, քիչ միջոց մը մնալով այնտեղ վախճանեցաւ 1845-ին, և առաջնորդութիւն մնաց Զաքարիայի վրայ։ Եւ քանի մը ամիսէն ետք, որ Մշոյ մէջ այդ ժա-

մանակ միլլաթպաշի էր մի հայ Ցովսէփ անունով, ու ինքն միաբանելով Շէրիֆ փաշայի հետ և Տիրացուի աղայ և Խնուսայ բերդցի Սարաֆ Էղօն, միասին եկան վանք, գնացին Զաքարիայի հետ՝ գերեզմանի վրայ երդում ըրեցին, որ ամենքն իրենց խըրրաքի [141] հաստատ կենան, ու Զաքարիան Պօլիս երթալով՝ թէ Շէրիֆ փաշայի համար ե թէ երկրի մասին աղէկն խօսայ, բայց Էղօն և միլլէթպաշին գնացին Պօլիս, իսկ Զաքարէն մնաց։

Ասոնք հասնելով Պօլիս, առաջին անգամ Շէրիֆ փաշայի վրայ գանգատեցին, ե երբ վերադարձան, ժամանակ մը ընցաւ միջոց, Շէրիֆ փաշէն ասոնց գանգատ իմացաւ, ե Միլլաթպաշի Ցօհաննէսն ալ յայտնի կերպով փաշայի մարդկանց դիմաց կ՚խօսար թէ՝ Մինչև երբ մնայ Շէրիֆ փաշի տունը. պիտի վերջացունեմ փաշայութիւնն։ Եւ յարմար միջոց գտնելով Ցովսէփին բռնեց, Զաքարիայ վարդապետին ալ պէտք է բռնէր, զի նա ևս Մուշն էր այդ ժամանակ, բայց մէկ երևելի կաթոլիկ մը իմանալով ծածուկ փսփսաց զինք. նոյնպէս և Տիրացուի Եղօն ալ փախաւ։ Եւ քանի ժամանակէն ետք մէկ աչք պատահմունքով կուրացաւ, Շէրիֆ պէկն երբ լսեց գայս, ըսեց թէ սուրբ Կարապետի վրայ ըրած երդումն է որ զիրենք կը պատժէ։

Եւ օր մը Շէրիֆ փաշէն Մշոյ այգիներ երթալով, այն տեղ Մշեցի երևելի հայերուն հացկերոյթի պատիւ ըրեց գինիով և այլ և այլ խորտիկներով, և վերջ ամենայնի հարցուց այդ մարգիկներէն թէ՝ Ոչխարի մէջ գտնուած գայլի վնասն (պատիժն) ի՞նչ է. անոնք ալ պատասխանեցին թէ՝ մահն է անոր պատիժ։ Անոր վրայ ինչպէս որ այն ժամանակներ սովորութիւն կար, անգիր թղթի վրայ կնիք կը պահանջէին, ուստի ասոնցմընէ ալ Շէրիֆ փաշէն կնիք առաւ։ Եւ Զաքարէն երբ լսեց գայս, խապար յուղարկեց Միլլէթպաշին բանտին մէջ՝ որ դեռ բռնուած էր, թէ՝ փախիր, կերպով մը քեղի պիտի սպաննեն. իսկ նա ըսաւ իրենց, Հէրն եմ անիծե, ինչու պիտի փախչիմ, և ինչպէս զիս պիտի սպաննեն։

Եւ Շէրիֆ փաշան օր մը գիշերով կերթայ բանդ, նոյն տեղ Միլլաթպաշին խեղդել տալով, չըպուխը լեցունելով և Միլլաթպաշին պատի դէմ նստեցունելով չըպուղ ձեռք կուտայ և կերթայ իր դիւան. ե իր չըպուղճիին կ՚յուղարկէ բանտ խապար բերել իրեն, թէ Միլլաթպաշին մեռեր է, և այդպէս ձայն կը տարածէ թէ՝ Միլլաթպաշին մեռեր է. և հայերը՝ որ ինչպէս լինելը գիտէին և բան մը չէին կարող ընել, գնացին հանեցին բանտէն, տարան թաղեցին։

Այդ ժամանակ Պօլսէն Ասատ փաշէն եկաւ, իբրև քննիչ երկրին ՌՄՀԸ 1829 թուին հայոց, և ինքն արդէն Բասենու մէջ Կուլու անունով գեղ մը ունէր, և Ռուսի գալու ժամանակ այն տեղ էր, Շէրիֆ փաշայի եղբայներէն մէկը՝ քիւրդ աղջկան մը հետ ակամայից պղծագործութիւն ըրած էին, ուստի նա ալ թշնամութիւն պահած էր Ալատին պէկի տան հետ, և աւելի այդ պատճառաւ Շէրիֆ փաշային տնով և եղբայրներով՝ որք էին Մուրադ պէկ, և Խուրշուտ պէկ, աքսոր յուղարկեց 'ի Վիտին։ Եւ ժամանակ մը Վիտին մնալով, վերադարձան 'ի Պօլիս։

Եւ մինչև հիմայ որ Զաքարիան առաջնորդութիւն ըրած էր, 1851 թուին կանչուեցաւ Պօլիս։ Զաքարիան

արդէն յառաջուց սկսած էր վանքի շինութեանց, ինչպէս՝ փուռն, և անոր սկսեալ առաջնորդարան, և սորա շարունակութեամբ եղած սենեակներ, մինչև Մինաս կաթուղիկոսի բուրջ, և այդ տեղէն ալ խաչքակի կողմի սենեակներ, մինչև ջաղարց շինած էր, նոյնպէս և վարժարան ալ ինք իր ծախսով 80 քիսայ տուաւ, և իրեն յիշատակ շինեց։ Եւ երբ ելաւ Պօլիս երթալու, իրեն տեղ փոխանորդ կարգեց Երևանցի Բագրատունի Կարապետ վարդապետ, և պատուիրեց ցորենի ամբարն ալ շինել։

Զաքարէն երբ հասաւ Պօլիս, Զիարէթցի Մինաս վարդապետ և Զիարէթցի Միրօյեան Առաքել վարդապետ արդէն գնացած էին Պօլիս գանգատելու համար Զաքարիայի վրայ։ Եւ երբ ամենքն ալ պատրիարքարան կը կանչուին, կը յուսային թէ Զաքարիան պիտի պատժուէր, բայց նա նոյն պահուն գանգատանաց գիր մը կուտայ պատրիարք ս. Յակոբոս եպիսկոպոսին, որով Առաքել վարդապետի վաբուց գէշութիւնք ցոյց կուտար։ Պատրիարք կարդալով դայն մէճլիսին կը յանձնէ, և ժողովականք մէկ մէկու տալով ամէնքն ալ կը տեղեկանան և իրարու նայելով ամենքն ալ կը զարմանան։

Եւ ապա պատրիարք բարկանալով Առաքել վարդապետի վրայ, ձգել կուտայ Փրկիչ, իսկ Մինաս վարդապետ կը դառնայ Արմաշու սուրբ Աստուածածնայ վանք։ Եւ քանի մ՚ օրէն ետք Առաքել վարդապետ Փրկչի մէջ կ՚վախճանի։

Իսկ Պօլիս գտնուող Մշեցի հայեր, ղբպաբտութեամբ մազմաթայ[142] տուեցին Ճէզայիր հայ Աղային, որ թագաւորական սարաֆ էր նոյն ժամանակ Պօլսոյ մէջ, գանգատելով Զաքարիայի վրայ, թէ՝ Զաքարէն վանքի եպիսկոպոսական շուրջառ տուած է Էմին փաշայի կընկան, հանդերձի համար, ուստի ատոնց գանգատ լսելով Զաքարիային ևս ձգեցին Փրկիչ։

Ապա Ճէզայիր աղան Զաքարիային ըսաւ թէ 300 քիսայ տուր կրկին զքեզ առաջնորդ կարգենք, յուղարկենք քո վանքն։ Զաքարէն ըսաւ. վանքն Ազգին է. ես մասնակից չեմ. լինիր 300 քիսայ տալու. ով կուզէ տալ, թող ինքն երթայ։ Ու այդ Զաքարէն 24 քիսայ փող ընծայեց սուրբ Փրկչի վարժարանի աշակերտաց հանդերձի, և ապա Փրկիչէն հանելով սիւրկիւն յուղարկեցին Արվազ. և վանքին փոխանորդ յուղարկեցին Պաստուրմաջի Կարապետ վարդապետ։

Մէկ տարին երբ լրացաւ, առարկայ բացուեցաւ իր և միաբանութեան մէջ, որ ինքն Կարինէն գալով երեսուն քիսայ ծախս բրած էր, և կուզէր վանք վճարէր, ուստի միաբանութիւնը չընդունելով, ինք գնաց, և ապա Մամիկոնեան Վարդան աղէն քնիրչ՝ և մէկ տարի ալ նա վանք մնալով, իբրև փոխանորդ Առաջնորդ եկաւ Մատթէոս վրդ.։

Եւ Մինաս վարդ. լսելով, Արմաշու վանքէն եկաւ, և երկուք միաբանելով՝ վանքիս միաբան վարդապետներ սիւրկուն արեցին, Մխիթար վ. Խանամիր Մկրտիչ վ. Ղունկիանոս վ. և Բարսեղ վ.-ն ալ խաբէութեամբ դուրս հանեցին, և ձիու վրայ գնելով, զաւթիաներով (ոստիկան) յուղարկեցին Վան յԱնապատներ։

Եւ ապա Զաքարէն ալ ինն ամիս մնալով 'ի Առվազ, 1853-ին դեկտ. ամսոյն վերադարձաւ 'ի սբ. Կարապետ,

Բայց Մինաս և Մատթէոս վարդապետներ գրելով Պոլիս կրկին հրաման բերեցին և Զաքարիային սիւրկիւն արեցին Տիարպէքիր (Տիգրանակերտ) Արղընի սուրբ Աստուածածին, որոյ Առաջնորդ էր Յակոբ եպիսկոպոս, և Բագրատունի Կարապետ վարդապետն ալ յուղարկեցին յԱլաշկերտ Իւչքիլիսայու վանք, և Կարապետ վարժապետն ալ գնաց Կարին։

Եւ ապա Զաքարէն ինն ամիս մնալով այնտեղ հրաման եկաւ երթալ Առաջնորդութեան Ուրֆայ քաղաքին, որոյ առաջնորդն էր Մարաշցի Յոհաննէս եպիսկոպոս։ Եւ երբ Զաքարէն գնաց այնտեղ, Յոհաննէս եպիսկոպոս գնաց իւր հայրենիքը։

Երեք տարի մնաց Ուրֆայ Զաքարիա վարդապետ և անտի գնաց ս. Երուսաղէմ . ուխտի, և վերադառնալով յՈւրֆայ, քանի մ'ամիսէն ետք եկաւ ի ս. Կարապետ, որոյ Առաջնորդ կարգուած էր Բագրատունի Կարապետ վարդապետ, որոյ հրաման եկած էր Պոլիսէն, Իւչքիլիսայէն վերադառնալ և Մատթէոսի տեղ նստել, քանի որ Մատթէոս հրաժարուած էր։ Եւ Զաքարէն տարիի մը չափ վանք նստելով, երբ նոյն միջոցին Բագրատունին վախճանեցաւ 1869-ին մայասուլի հիւանդութեամբ, բուն բարեկենդանի օրը, այն ձմեռ փոխանորդութիւն ընելով մինչև գարուն, որ ատեն առաջնորդութիւնն Ղարսեցի Կարապետ վարդապետին յանձնուելով, ինքն գնաց 'ի սուրբ Էջմիածին, եպիսկոպոս ձեռնադրուելու, բայց այն ատեն չյաջողելով, եկաւ Իւչքիլիսայու վանք մնաց մէկ տարի, և ապա կրկին գնաց, եղաւ եպիսկոպոս, եկաւ վանք ժամանակ մը մնաց, երբ փոխանորդ էր վանքին Մամիկոնեան Մամբրէ վարդապետ։

Ապա երկրի ռէս Կոմսայ Կրպէի, Ջիարէթցի Ղուկէի, և ուրիշ երևելի իշխաններու հետ՝ գնաց Կարին, երկրի ցաւերուն դարման տանելու, և այնտեղ երեսուն քիսայ ծախք ընելով, վերադարձաւ սբ. Կարապետ։ Բայց միաբանութիւնը՝ ինչպէս Մամբրէ վարդապետ, Մխոյեան Յոհաննէս վարդապետ, Մեսրովբ վարդապետ և այլք, չհաճելով այդ պարտք վճարելու, Կարապետ եպիսկոպոսն ելաւ գնաց Մուշ, և նոյն տեղէն գրելով վանք, Շահնազարեան Խորէն՝ որ վարժապետութիւն կընէր, և Արիստակէս, որ վանքի մէջ սարկաւագ էր, ծածուկ կերպով առանց միաբանի մը իմանալու կանչեց, և վարդապետ ձեռնադրեց, և ինքն գնաց Ղայսերու սբ. Կարապետի վանք, և Առաջնորդ կարգուեցաւ Խրիմեան Մրկրտիչ վարդապետ։

Իսկ Զաքարիա եպիսկոպոս գնալով ի սբ. Յոհաննու վանք, 12 քիսայ սբ. Յոհաննու վանքի պարտք տուեց, ու այնտեղ վախճանեցաւ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Միանգամ ընդ միշտ կարևոր ենք համարում յիշատակել, որ ներկայ հատորում Հայոց թուականի մօտ արաբական թուանշաններով նշանակել ենք նաև փրկչական թուականը ընթերցողին դիւրութիւն տալու նպատակով։

2 Հաւ։ Հաւը սարեկի մի տեսակ թռչուն է, որին Թիֆլիսցիք «տարր» են անուանում։ Տարրը բնակւում է Մասիս սարի փեշի վրայ սուրբ Յակովբի աղբիւրի մօտ և մորեխը ոչնչացնելու յատկութիւն ունի։ Երբ մի երկրում մորեխ է յայտնւում, տեղացի ժողովրդից մի քանի հոգի գնում են ս. Յակովբի աղբիւրի ջրից բերելու և այդ ջրի հետ գալիս է մեծ քանակութեամբ տարր, որ և դարմանալի արագութեամբ կոտորում է մորեխը, պարբերաբար իր արիւնոտ մարմինը լուանալով մօտակայ ջրի մէջ, որ արիւնի գոյն է ստանում այդ ժամանակ։ Սովորութիւն է որ այդ ջուրը մինչև տեղ հասցնելը չպիտի դրուի գետին, իսկ երբ հասնում են տեղ՝ մեծ թափօրով ընդունում են այն, դնում եկեղեցու սեղանի վրայ և նոյնպիսի թափօրով օրհնում դաշտերն ու անդաստանները։ Երբ 1865 թուին մորեխ երևաց Թիֆլիսի շրջակայքում, այն ժամանակուայ առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը ապրիլ 24-ի հետևեալ թղթով պատգամաւորներ էր ուղարկում կաթուղիկոսին, և խնդրում որ նա կարգադրէ առաջնորդել նրանց դէպի ս. Յակովբի աղբիւրը.

«Նախախնամողական Տեսչութիւնն երկնից յաղագս զգաստացուցանելոյ զմեզ ի խորին թմրութենէ մեղաց մերոց և վասն արդարապէս պատժելոյ զչարութիւն ժամանակիս, յայսմ ամի երևեցոյց 'ի տեղիս անդիս 'ի վիճակիս Վրաստանի զնշան և զհետս մարախաց. 'ի կարգի որոց և 'ի մերձակայ դաշտորայս Կուկիոյ և Հալուաբարի քաղաքամասանց Թիֆլիզոյ. ուստի բարեպաշտօն ժողովրդականք երկուց թաղիցն ընտրեալ 'ի միջոյ հասարակութեան զհամարնակիչսն իւրեանց զԱստուածատուրն Նախշունեանց, զՄնացականն Կարապետեան, զԱբէլն Բաղալեանց և զՄարտիրոսն Փրիդոնեանց առաքեցին բերել զբժշկարար ջուր օրհնութեան յաղբերէ սրբոյն Յակովբայ որ յոտս Մասեաց լերին, խնդրելով յինէն խոնարհաբար յայտնել Վեհափառութեան Ձերում զջերմեռանդ դիտաւորութենէ դիմելոյ նոցին այդր 'ի սուրբ Աթոռդ մեծ քահանայապետութեան Ձերոյ, առ 'ի բարեհաճիլ ընդ ձեռն որոց արժան դատիք հրամայել տանուտերոն Վաղարշապատու տալ նոցին զհմուտ ուղեցոյց անձինս 'ի վարձու, վասն անփոյթ տանելոյ զնոսին յաղբիւրն բժշկութեան և վերադարձուցանելոյ 'ի Վաղարշապատ։

Յանձն առնելով զժողովրդականս վիճակիս հայոց Վրաստանի, զանդս, զանդաստանս և պտղաբերութիւն նոցին օրհնութեան և մաքուր մաղթանաց Վեհափառութեան Ձերոյ, Ման ամենախոնարհ ծառայ..»։

Այդ թափօրի համար հետևեալ կարգաւորութիւնն է սահմանած երևի հէնց այդ ժամանակ, որի պատճէնը գտնւում է մեր դիւանում.

«Կարգաւորութիւն վասն մատուցանելոյ զջերմեռանդական մաղթանս աղօթից առ ամենակարողն Աստուած յաղագս բառնալոյ ղաշխարհաւեր մարախն երեեալ յերկրի մերում։

«Նախ՝ յելանելն յեկեղեցւոյն զկնի պատարագին յընդարձակ վայրի միում. կոտաբեն զանդաստան յիւրաքանչիւր տան յաւելլով «և պտղաբերութիւն տարւոյս» և ապա յետ պահպանիչի սարկաւագն կացեալ 'ի միջի, քարոզեսցէ ասելով,

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա։

Վասն գարձուցանելոյ Տեառն Աստուծոյ զցասումն իւր հասեալ մեզ վասն մեղաց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Վասն ջնջելոյ իսպառ զսովարեր մարախն ապականիչ անդաստանաց մերոց և այգեաց զՏէր աղաչեսցուք։

Վասն առաւել պտղաբերութեան նոցա 'ի շահաւէտութիւն որդւոց մարդկան և 'ի սպաս պաշտաման Տեառն Աստուծոյ և լինելոյ սահմանաց մերոց անվնասելի յամենայն անախորժ պատահարաց զՏէր աղաչեսցուք։

Վասն մեծացուցանելոյ և տարածանելոյ զԱստուածային մեծազօր հովանաւորութիւն իւր և զմեծ զողորմութիւն 'ի վերայ երկրի մերոյ և բնակչաց նորա հաւատարիմ. հպատակաց ինքնակալ մեծ կայսերութեան ամենայն ռուսաց զՏէր աղաչեսցուք։

Վասն հրեշտակական զինուորութեանց պաշտպանութեան յանձն առնելոյ զօծեալն իւր զամենաբարեպաշտ մեծ թագաւորն մեր զԱղէքսանդր Նիկօլաեվիչ և զամենայն ժողովուրդս նորա, և լինելոյ պաշտպան կենաց և առողջութեան նոցա և պարգևելոյ զառատ զբարութիւն իւր երկրպագուացս անուան իւրոյ զՏէր աղաչեսցուք։

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց զՏէր աղաչեսցուք։

Ողորմեսցի մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա։

Եւ ապա 'ի ծունկս անկեալ երգեն շարական։

1, Սուրբ Աստուած հայր անսկիզբն և այլն.

2, Սուրբ Աստուած որդիդ միածին և այլն.

3, Սուրբ Աստուած հոգիդ ճշմարիտ և այլն։

Եւ ապա Տէր ողորմեա հնգիցս կրկնութեամբ յերկուց դասակարգացն, և կցորդեսցեն նմին Միջնորդութեամբ եայլն. Զի գիտացաք եայլն. Արդ անկանիմք եայլն։

Վասն սրբուհւոյ եայլն. և զկնի սուրբ զԱստուածածին. ընկալ Տէր, Հայր մեր։»

3 Պատրկի վանքը Ուշտունեանց գաւառումն է Աստոս լերան կողքին Հին Հայաստանի Ոստան քաղաքի մօտ։

Պատրկի վանքի դարպասի մօտ պատի մէջ մի քարի վրայ այս արձանագրութիւնը կայ. «Շինեցաւ ՅԿՁ 917 թուականութեանս հայոց», արդեօք եկեղեցու շինութեան համար, թէ կից որևէ ուրիշ շինուածքի՝ յայտնի չէ։ Յայտնի չէ նոյնպէս, թէ ինչ էր վանքի սկզբնական անունը։ Վանքի երկրորդ նորոգութիւնից առաջ, որ եղաւ ՌՃԺԸ 1669 թուին, ասում են, որ ընդարձակ արձանագրութիւն է եղել տաճարի որմերի վրայ, բայց նորոգութեան ժամանակ, ինչպէս այդ անխիղճ սովորութիւնը կայ, վերացուել է, որով տաճարի շինողի անունը մնացել է անյայտ։ Այդ նորոգութիւնից առաջ էլ վանքը Ռշտունեաց հռչակաւոր վանքերից մէկն է եղած, ուր և հանգուցին Հայոց անզուգական պատմագիր Ամատունեաց Եղիշէի եպիսկոպոսի նշխարները։ Վանքը, Եղիշէ մարմինն այնտեղ ամփոփելուց յետոյ՝ անուանուեց ս. Եղիշէի վանք, իսկ յետոյ՝ երբ վերստին նորոգեց այն Վարդապատրիկ իշխանը՝ նրա անունով կոչուեց Պատրկի վանք։ Այժմ արդէն կոչւում է Զաբահան կամ տաճկերէն՝ Զաղըբ սուրբ Նշան, որովհետև դիպուածով մի այլազգի դիւահար բժշկուել է այնտեղ և այնուհետև միշտ տանում են այնտեղ դիւահարուած հիւանդներին և կապում մեր պատմագիր ս. Եղիշէի տապանի մօտ գտնուող սիւնից շղթայով։

4 Գաւաշ գիւղն այժմ աւերակ է և գտնւում է Նարեկի ու Ախավանքի մէջ տեղը։

5 Ընձաքը փոքրիկ հայ գիւղ է ս. Ցակովբի վանքի արևելեան կողմին մօտ։

6 Շաավանը ծովափի մօտ ս. Թովմայի վանքի կողմն է։

7 Դանձակ գիւղը գտնւում է Լուսապտուղ ս. Սահակի վանքի մօտ։

8 Դեղձիք գիւղը ս. Յակովբի արեւելեան կողմն է։ Այժմ այդ գիւղը քուրդ Դէվրիշ բէյի իշխանութեան տակն է։

9 Մոխրաբերդ գիւղը գտնւում է Աղթամարի լճափին Նոր գիւղի արեւելեան կողմը։

10 Բախվանցը Առտոսի շղթայի մօտ է՝ Փշավանքի հարաւակողմ։

11 Այս Յակովբ վարդապետը Սիմէօն կաթողիկոսի յիշատակարան գրող քարտուղարներից մէկն է։

12 Մնիրայ նշանակում է մզկիթի աշտարակ։

13 Հռոմոց փաթշահ ասելով ակնարկում է տաճկաց սուլթանին։

14 Սուրայ՝ նշ. միայն։

15 Ի լղար—յանկարծակի։

16 Յուժ ձգել—նեղը գցել։

17 Կարմիր գլուխ, կարմիր գտակ կամ կարմրագտակ անուանում են պարսիկներին։ Դեռ 1502 թուին գրած մի աւետարանի յիշատակարանի մէջ, որ գտնւում է Վանի ս. Պօղոս եկեղեցում, պարսից թագաւորի համար ասուած է «ի թագաւորութեան կարմիր գտակին, որ կոտորեաց զԱղ օլուն և փախստական արար. և ինքն դարձաւ ’ի թաղթն ’ի Թաւրէզ»։ Նոյնը և 1505-ին գրած Յայսմաւուրի մէջ (Աղթամար) «..ի դանութիւն զըզըլպաշին, որ կարմիր գտակ կոչի»։

18 Բազամսքին նշ. խառնիճաղանճ ամբոխ։

19 Ըռիաթ—հպատակներ։

20 Սուրգուն կամ սիւրկիւն անել—աքսորել։

21 Դրախտը մի պարտէզ է Վարագի մէջ։

22 Ջիտայ—չափի գաւառական անուն է։

23 Աւանց գիւղաքաղաքի։

24 Քիւրէքճի—թիավար։

25 Ապաճի—ասուէգործ։

26 Ղափուճի պաշի—դռնապան։

27 Պոստանճի պաշի—բոստանի, ագարակի կառավարիչ։

28 Խաֆթա—արքայական նուէր վերարկուն է։

29 Սուլֆ անել—հաշտեցնել։

30 Շուլլուխ—խառնիճաղանճ։

31 Թուականի սխալ է, որովհետև այս թուին Լանկթամուրը մեռած էր և գահի վրայ էր նրա որդի Շահռուխը։

32 Դահմանը պէտք է լինի դահմազ։

33 Այս Սարգիս վարդապետը պարապել է գրչագիրների ընդօրինակութեամբ. օրինակ ինձ յայանի է նրա դրած մի փոքր աւետարան, որ գտնւում է Կտուց անապատում և որի վերջը կայ այս յիշատակարանը. «Գրեցաւ լուսազարդեալ աւետարանս ի Թուականիս հայոց ՌՃԺԴ 1665 ի հայրապետութեան տեառն Եղիազարու կաթողիկոսի ի Կիպրոս կղզին, ընդ հովանեաւ սրբոյն Մակարայ, ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս տէր Սահակ քահանայի, ձեռամբ Սարգիս կրօնաւորի և առաաաձեռնութեամբ մահտեսի Յուսախանէ տիկնոջ»։

34 Թաւթիշ նշ. քննիչ։

35 Գօշամայ—սալարկ, սալայատակ։

36 Ալչախ—ստոր, անարգ. ալչախ ընկաւ՝ նուաստացաւ։

37 Մանսուպ—պաշտօն։

38 Փաւշ (քեաւշ) անել—քննութիւն կատարել։

39 Կափանլղ—փակուիլ, մթութիւն. կափանլղ եղև՝ իրարանցում ընկաւ։

40 Տաֆայ, սահայ—դարձեալ։

41 Մօհթասըր—անպարաաճանաչ։

42 Սարքալայ լաւանդ — ծայրագոյն լիրբ, գլխից ձեռք վեր առած։

43 Ալթմիշ եղի օրթէն—վաթսուն եօթը զօրամաս։

44 Տօնամայ—լուսավառութիւն, տօնաօնամայ նշանակում է նաև նաւատորմիղ։

45 Սդղի քասիդ—սուր բերան, հատու։

46 Սունաթ թօյի — թլփատութեան հանդէս։

47 Մաղրուպ—երեկոյ, արեւմուտք։

48 Էրիշ, երիշ—քայլուածք, յարձակում։

49 Մաթարիս—պատնէշ, պատուար։

50 Էգէստար—Այգեստանին տաճիկները անուանում են էգէստար։

51 Տօնմիշ—դառնալ, սառիլ։

52 Գամկալամիշ անել—ինչպէս նըշանակում է ընարել, իսկ այստեղ՝ կնիք դարկել, դաջել։

53 Ալչմիշ—բռնկել։

54 Բաղաթլամաք — լուսամուտները ապակիների փոխարէն թղթում էին. քաղաթլամաք ասելով ուզում է ասել լուսամուտների թղթերը։

55 Չարխի ֆէլագ—անիւ։

56 Ուշաղիք—տղաներ։

57 Ցաւայի—եաւա. գանդաղ, անհիւթ։ Այստեղ յաւայի՝ օդը բարձրացող։

58 Աթաշբազ—հրահրող։

59 Բօլուգ—գունդ։

60 Էրիշ—յարձակում։

61 Նաֆար—զինուոր։

62 Խզմաթքար և եդաչի—ծառայ և ձիապան, ձիու ետևից գնացող։

63 Եալաուզլի—ոսկեզօծուած։

64 Մէհթարհանայ—նուագանոց։

65 Գաշգայ—ուրիշ։

66 Ցուքմ և բուուրդում—վճիռ, հրաման։ Ցուքմ պէտքէ որ նշանակէ նաև դատ, ինչպէս այդ երևում է Լիմ գանուած մի ճառընտրի յիշատակարանից, որ աւելորդ չենք համարում առաջ բերել այստեղ.

«Ի ՇՀԸ 1129 ամին. փոխի յաշխարհէս մեծ վարդապետն Սարգիս, որ էր ի Փառիսոսիոյ. որդի քահանայի միոյ. և աշակերտ սորա Երեմիայ, որ և յասելն վարդապետին թէ լուռ լեր, ամս երեք լուռ եկաց ընդ միտս, և ընդ՚ Աստուծոյ խօսէր. որ և անձրև կոչեցաւ. և ընկերք սորա տէր Խաչատուր. և Գրիգոր. և Ցովհաննէս. և Սամուէլ. ամենեքեան սոքա Անեցիք...

ՇՀԸ. 1129. Փոխեցաւ ի Քրիստոս մեծ վարդապետն սարկաւագն ի Հաղբատ։

ՇՁ. 1131. Ննջեաց սուրբ Լուսաւորիչն՝ վարդապետն Գաւիթ Ալաւկայ որդին։

ՇՂ. 1141. Վարդապետն Կիրակոս կանոնագիր գրարկուն հանգեաւ ի Քրիստոս։

Ի սոյն ամի ՉԾ 1301 փոխեցաւ ի Քրիստոս սուրբ և առաքինի վարդապետն Գէորգ Սկևռացին։

Ի ՉՁԳ. 1334. ամին մեռաւ Բուսայիդ աղայն. և նստաւ Արփաղանն վեց ամիս. և եկեալ քեռին Բուսայիդին Ալի փաշայ նուին ի Բաղդատայ զԱրփախան եսպան. վասնզի քրիստոնեայ էր յառաջին վանորաց զարմէն. և ինքն իւրովի այլ նոր խան ետ Թուղթն Մուսի անուն. որ ոչ ելաւ և ոչ զարեցաւ. այլ Ալի փաշայն վարէր զհուքմն օրդուին տարի ու կէս. և արար հրաման քակել զեկեղեցիս. և քակեցին ի բազում տեղիս. ի Մուսուլայ մինչև ի Խլաթ և ի Սալմաստ. մինչ որ գնաց ի մօտն տէր Զաքարիայ Աղթամարայն կաթողիկոսն. և առպա եբարձ զչար հուքմն. և յաւուրս հնձոց մարտեաւ ընդ խաճիթ աղային. և սպանաւ ի սահմանս Հէրայ քաղաքին»։

67 Այեան—աւագանի, մեծաւոր։

68 Կալդր արաւ. 1, բարձրացնել. 2, զարթեցնել. 3, հայհոյանք։

69 Ջամուշչի—գոմէշ քշող։

70 Ենգիչար աղասի. ենիչերիների պետ. սաղ աղասի—աջակողմեան հրամանատար։

71 Գլիկ կտրել—փող կտրել։ Իսկապէս պլիկ նշանակում է պսպղուն. բայց ժողովուրդը պլիկ ասելով հասկանում է դրամ։ Նոյնիսկ պլիկ բառը այդ մտքով գործ է գրւում և ժողովրդականասացուածների մէջ. Կաբինի ժողովուրդը ասում է.

Ունիս պլիկ՝ իմ եարը դուն ես.
Չունիս պլիկ՝ իմ դևը դուն ես։

72 Սաֆար—պատերազմ։

73 Բայրաղ—դրօշակ։

74 Մուշապիր եկաւ մալին թաւթիշ անելու—քննիչ եկաւ գոյքերի քննութիւն կատարելու .

75 Մնինոս կամ Ֆինայ. լա. Calandra. տճ. բուղղայ րիթի. ուտիճների ցեղից մի փոքրիկ և թուխ կենդանի է, սաստիկ թըշնամի և ֆասակար ցորենին և առհասարակ ընդեղէններին. ձուերն ածում է ցորենի և ընդեղէնների հասկերի վրայ։

76 Այս երեք փաշաները՝ Ջափկուն Մահմատը, Մուրթուզան և Բաքըրը փոփոխուել են մէկ տարում։

77 Սրա ժամանակ տեղի ունեցաւ

վանի մեծ երկրաշարժը 1646 թուին, ապրիլի 2-ին, աւագ ուրբաթ գիշերը։

78 Խաատի շէրիֆ—նուիրական, թագաւորական հրովարտակ։

79 Տէրքէնաբ—լուսանցք։

80 Միբի—արքունի. միրի առնել յարքունիս գրաւել։

81 Մախթու—տուրք, հարկ։

82 Շուրութով պէրաթ—պայմանական, կարգին հրովարտակ։

83 Օրդու—բանակ։

84 Բուզնամէի սուրէթ — օրացոյցի պատճէն։

85 Թապի—հպատակ, ենթակայ։

86 Պէյթիմալ—անտէր մնացած գոյքի գրաւման պաշտօնատուն. իսկ զասամի նշ. բաժին։

87 Ֆէթվա — վճիռ, բացատրութիւն ըստ շարիաթի։

88 Շէր—դատարան, դատ, իսլամական օրէնսդրութիւն։ Շար—դրպարտութիւն։

89 Ջիֆթշիկ և չայիր — ագարակ և մարգ։

90 Այազմա—ուխտատեղի։

91 Ինճիթմիշ անել—ցաւեցնել, նեղացնել։

92 Իսկէլէյք և գուլիք—նաւամատոյցներ և մուտքեր։

93 Զապթ անել—զաւթել, գրաւել։

94 Իզեյէթ անել—նեղացնել, վշտացնել։

95 Աւարիզ—հարկի տեսակ է։

96 Թէքլիֆ—հարկ։

97 Միւսէլլիմ և վօյվօտայ — մզկիթի գլխաւոր և առաջնորդ։

98 Մուրասալայ—առաքուած, քարոզիչ։

99 Ճէրիմէ—տուգանք։

100 Բէհին—գրաւական։

101 Կէօմրիւք և պաճ—մաքսատուն և մաքս։

102 Հէվալէ անել—յանձնարարել, փոխանակագիր տալ։

103 Ջէքտիբէ—թիարան։

104 Էհսան—շնորհ։

105 Թէրսխանայ — նաւաշինարան, կենտրոնական բանտ։

106 Իլամ — վճիռ, կատարողական թերթ։

107 Զաւուշ պաշի—տասնապետից մեծ։

108 Հիւճէթ—ամրագիր, կալուածագիր։

109 Փիսկօպօսի մատենագիր — հնարաւոր չեղաւ իմանալ թէ այս ինչ մատենագիր է։

110 Միւֆտիներն ի քիւրէկ և ի չէքտիրէն—անիրաւները աքսորավայր և թիարան։

111 Քէշֆ — քննութիւն, գնահատութիւն։

112 Մուքաթայ — պատրիարքարանի տուրք։

113 Թէրճիման—թարգման։

114 Ալթի ճէմաէթ էսնաֆ - վեց արհեստաւորների ժողով։

115 Սայի—սուրհանդակ։

116 ԷՍՆԱՖՔ։ Առաջ ենք բերում այստեղ յիշատակուած ասնաֆութիւնների անունների հայերէն թարգմանութիւնը։

Սառաֆ—սեղանաւոր
Խոյումճի—ոսկերիչ
Տիւլպէնտճի—ծաղկարար (գաջող)
Հացագործ
Քէրէստէճի—փայտավաճառ
Քէմհաճի—գուցէ քէմանճի—սազ ածող
Սանտալճի—մակոյկ շինող
Քիւրքճի—մուշտակագործ
Թէրզի—դերձակ
Մինթանճի—բաճկոն կարող
Հին փարչաճի—հին կարկատան ծախող
Սահաթճի—ժամագործ
Պէզազ—մետաքսավաճառ
Օթուրախճի—հնավաճառ
Ղազանճի—պղնձագործ
Տիւրկէր—ատաղձագործ
Ֆիլճանճի—գաւաթ շինող
(փ) Սէստճի—գլխարկ կարող
Համամճի—բաղնեպան
Աշճի—խոհարար
Խայէխճի—թիավար
Մանկավարժ
Խըլըճճի—թուր շինող
Պէրպէր.—վարսավէր

Բարուճճի—մաշկակար
Չիլինկիր—փականակագործ
Ջուլհակ—ոստայնանկ
Խաւուխճի—գլխարկ կարող
Նոր փարչաճի—նոր կտորներ ծախող
Գօզմաճի—հնակարկատ
Տօղրամաճի—կարասի վաճառող
Սէտէֆճի—սատաֆ ծախող
Սրվաճի—գաշ քսող, սրող
Սատտճ—կաշուեղէն ծախող
Խօրասանճի—ծեփող
Ալչըճի—ալեբաստր քսող
Զարխճի—տրեխ կարող
Չեօմլէկճի—կաւէ աման ծախող, բրուտ
Ուլթիւճի—հարթուկ զարնող
Գիւքիւճի—թել ոլորող
Թարապխանաճի—ճիշտը թարապխանէճի.—թարափ՝ խաղ. թարապխանէ՝ նուագելու տուն, պանդոկ. թարապխանաճի՝ պանդոկապետ
Մանաւ—մեծ քանակով միրգ ծախող
Չիլփոշճի—անծանօթ բառ
Էսկիճի—փինաչի
Ղաղէզ—թել շինող
Ծիզմէճի—կօշկակար
Խափամաճի—աստառ կպցնող
Էքսէրճի—ուրագ շինող
Ղալֆախչի—կամիլաւկա կարող
Խաֆաֆ—պատրաստ ոտնաման ծախող
Թիւթիւնճի—ծխախոտավաճառ
Սրմաքէշ—ոսկէթելով բանող
Ախտէր—դեղավաճառ
Փէշտմալճի—գոգնոց գործող
Սօֆճի—սօֆ կոչուած կտոր շինող
Եէմէնիճի—եաման, որոշ տեսակ ոտնաման կարող
Պչախճի—զմելին շինող
Մախասճի—մկրատ շինող
Զպըխճի—ծխամորճ շինող
Էնֆիյէճի—քթախոտավաճառ
Թօմպախճի—թօքմաչի
Միսկճի—մետաղ հալող
Բժիշկ
Գախալ—մրգավաճառ
Քիթապճի—գրավաճառ

117 Թուլումպա—ջրհան

118 Էլաւուս անհասկանալի է։

119 Նոմոս—յուն. նշ. օրէնք։ Արքունական նոմոս նշ. արքունական օրէնք, հրամանագիր։

120 Բացագլուխք կոչւում են ափխաղները այն պատճառով, որ նրանք գլխարկ չունեն գլխներին, այլ գլխարկի փոխարէն գագաթին դնում են կլոր թաղիքի կտոր, որ երկու կաշուէ ծոպերով կապւում է կզակի տակ։ Այս ծածկոցը կոչւում է «փափանիկ»

121 Պատմիչը Շմաւոն կամ Սիմէօն համարում է միեւնոյն անձը. բայց կարծես դրանք զանազան անձեր են և միմեանց յաջորդող։ Սեբաստիայի ս. Նշանի վանքում պահուած ճաշոցի յիշատակարան գրողն ասում է Սիմէօնի մասին «արդ՝ գրեցաւ տառս 'ի թուականութեան ՋՁԲ 1333 ձեռամբ մեղաւոր և անպիտան գրչի Հայրապետի անարժան կրօնաւորի, ի մայրաքաղաքս Սեբաստիայ, և յառաջնորդութեան մերոյ Նահանգիս և սուրբ ուխտիս աստուածարեալ և սրբազան մեծ արքեպիսկոպոսի տէր Սիմէօնի, արթուն հովուի և արի հեղինակի...» Փիրգ.։

122 Այդ ձեռնադրուող Յօնանը հէնց ինքը Յօհաննէս Սեբաստացին է, աշխատութեանս հեղինակը։

123 Այս հատուածը անշուշտ յետոյ աւելացրել է մի ուրիշ անձ։ Ցիշուած խաչկալը, ինչպէս և միւս եկեղեցունը, այլ և փայտի քանդակագործութիւնները, ոսկէզօծութիւնը, ծաղկելը և պատկերազարդելը բոլորն էլ սեբաստացի մի քաջարուեստ նկարչի գործ են—մահտեսի Յօհաննէս Տօնիկեանի։ Ինչպէս որ Վանում մահտեսի Մարտիրոս Ճիտաչեանն է հռչակուած իբրև փորագրիչ, այնպէս էլ դա Սեբաստիայում։

124 Որովհետև Հայոց եկեղեցական տօնացոյցը Հայոց շարժական տարուայ վրայ էր հիմնուած և այդ պատճառով տօների կատարման ժամանակի մէջ շփոթութիւն էր առաջ գալիս, ուստի և անհրաժեշտ էր հիմնաւորապէս բարեփոխել տօնացոյցը. և այս մեծ գործը կատարեց Սիմէօն Երևանցի կաթողիկոսը ԺԸ դարի երրորդ քառորդում. Նա մտցրեց անշարժ տարին եկեղեցական տօնա-

կատարութեան մէջ, հաստատեց 532 տարուայ մշտնջենական շրջանը և մտցրեց տօնելի սրբերի շարքը Հայոց եկեղեցու նշանաւոր հայրեր Յովհան Որոտնեցուն ու Գրիգոր Տաթևացուն։ Եւ այդ նորոգուած տօնացոյցը Սիմէօնը տպեց իր բացած տպարանում նոյն իսկ իր շինած թղթագործարանի թղթի վրայ։ Բայց որովհետև վերջինները ուժգին կերպով մաքառել էին կաթոլիկութեան դէմ, ուստի և լատինամիտ հայերի թելադրութեամբ Պօլսի հայերը մի առ ժամանակ չգործածեցին այս «սրբագրուած տօնացոյց»-ը, այլ հնոյն էին վարում եկեղեցու ժամակարգութիւնը. բայց տաճկահայերը շուտով զգացին իրանց բռնած անյարմար գիրքը և սկսեցին գործածել այն։

125 Քէսէ կամ քէսայ—թուրք. նշ. քսակ։ Մէկ քսակը հինգ հարիւր ղուրուշ է կամ ռուսական գրամով մօտ 41 ռուբլի։

126 Դնում ենք այստեղ այդ յօդուածի թարգմանութիւնը.

Կայսերական գանձարանի պաշտօնէից անուշադրութեան և զեղծումների հետևանօք՝ իրենց բնաւորութեան մէջ տպաւորուած անհաւատարմութիւնը գործադրելու առիթ գտնելով երեք չորս տարուց ի վեր 20,000 քիսայից աւելի գրամ իւրացրին. տներ, ամառանոցներ շինեցին, մահմեդական հասարակութեան յատուկ հարստութիւնը շատ տեսակ շռայլութեամբ զեղխութեամբ վատնեցին, իրանցից զատ մի շարք անձանց յարաբերութիւնները կտրեցին, տների մէջ էլ եկեղեցի շինեցին։ Կաթոլիկ քահանաները բերելով յոյս կայսերական գահոյից անյայտացած կրօնքը գործածել համարձակող Տիւղեաններից Սարգիս անունով անհաւատարիմ հային այս պատճառով արժանի պատիժը տալու համար դիակը (մէնհուտէսի?) է։

127 «Դիւանի» Ժ. գրքում եր. 206 տպուած է «Կարգադրութիւն Թիֆլիսի Հայ եկեղեցիների արդեանց մասին» վերնագրով մի հատուած, որ մենք տպել էինք մեր ձեռքին ունեցած մի պատճէնից։ Այժմ մենք ձեռք բերինք նոյնի իսկականը, որից երեւում է, որ մեր տպածը միմիայն առաջին կէսն է. երկրորդ կէսը վերաբերում է այս տէր Մխիթարի գործունէութեան, ուստի և առաջ ենք բերում այստեղ.—

«Այսպէս և այսու օրինիւ և կանոնաւորութեամբ պարտի ճնալ եկեղեցիս այս զժամանակ ինչ. մինչև այց առնել Տեառն մերոյ և համայնից նախախնամողին, որ 'ի կարողանալ ժողովրդոց, և 'ի լնուլ հարկաւոր պակասութեանցն սրբոյ եկեղեցւոյս, յայնժամ ըստ վայելման ժամանակին լինելոցէ կարգ և սահմանք։ Արդ՝ և ոչ արժան իսկ էր զանց առնել զայսու, որ 'ի գալ և 'ի տիրել նոյն անիծեալ Աղամահմադ խանին զքաղաքս զայս, թէ զիարդ և որքան անտանելի տանջանս կրեաց սոյն եկեղեցւոյ Աւագ Քահանայ ծերունի Տէր Մխիթարն, մինչ զի 'ի նոցունց անօրինաց ձեռաց զվկայական մահ յանձնառեալ և զանուն քաջ նահատակութեան թողեալ յաշխարհի, և ոչ ցուցեալ ղպահեստ եղեալ զանօթսն սրբոյ եկեղեցւոյս, զերծուցանելով զայն 'ի յանօրինաց, և փոխանակ այնց՝ զանձն 'ի մահ մատնելով, զբարի անուն և զԱրքայութիւն ժառանգեալ, (որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի)։ Եւ արդ՝ այժմ զնոյն պահեստ եգեալն 'ի հաշուադրի նշանաւորեալ յականէ և յանուանէ. և 'ի ստորև ձեռագրեալ և կնքեալ. զհաշուագիրն յանձնեցաք երիցփոխ պարոն Զօրաբին և զանօթսն զերծուցեալ ընդ թղթոյս աւանդեցաք յիշեալ Տէր մխիթար Աւագ Քահանայի հարազատ որդի, և Աւագ Քահանայութեանն յաջորդ և տեղակալ Տէր Ստեփաննոս աշխատասէր և արիաջան քահանային, զի ըստ պատշաճի եկեղեցւոյն, հանգոյն երանելի Հօրն իւրոյ Տէր Մխիթար Աւագ Քահանային 'ի պաշտօնս և 'ի հանդէսս եկեղեցւոյն 'ի գործ ածցէ հաւատարիմ պահպանութեամբ գրեցաւ և եդաւ այս թուղթ, 'ի ՌՄԽԵ թուոջս, և 'ի յուլիսի ԻՋ։ Վերջ։»

128 Ափի-Մելիքեանցը այժմեան Աբամելիքեանցներն են. յայտնի է, որ հնում միմիայն իշխանական և նախարարական տոհմերն էին կոչւում ազգանուններով, իսկ ժողովուրդը՝ հայրանունով, պաշտօնի և տեղի անունով կամ կոչումով։ Այսպէս՝ Մելիքները կոչւում էին տեղի անունով. օրինակ Լօռու-Մելիքենք (այժմեան Լօռիս մելիքեան),

գիւղի ծայրին կամ գետափին ապրող մելիքները՝ Ափի Մելիքենք, որից և աղճատուելով՝ դառել է Աբամելիքեան։

129 Մինաս կաթողիկոսի ժամանակի անցքերը հրատարակելիս՝ աւելորդ չենք համարում տպել այստեղ և մի փոքրիկ գրուածք, որ կրում է այս վերնադիրը «1753 'ի ժամանակս Մինաս կաթողիկոսի»։ Ցաւուրս գարնան Պէհման խան պարսիկ ի Գանձակ եւ բերել զօրս յայլ և այլ տեղեաց ի լէզկեաց աւելի քան զքսան հազար հանդերձ լէզգեօնախումբ բազմութեամբն շարժեալ յանդուգն յարձակմամբ ի վերայ արարատեան գաւառիս. զան հարկանեն նախ աւերմամբ և գերութեամբ ի Ծաղնիձոր՝ սահմանակից Գեղարքունւոյ, ապա ի Գեղարքունի 'ի գիւղն Նորատուզ՝ յորում 'ի շրջակայից ժողովեալ էին բազմութիւնքն 'ի տանիս եկեղեցւոյն՝ որ կոփածոյ քարամբ էր կառուցեալ, 'ի ներս եկեղեցւոյն լուցեալ լուցկիս իբրև 'բաբելոնեան հնոց՝ յորմէ և ջեռուցեալ վիմացն տանեաց՝ իբր 'ի տապակի այրեն անձինք չորս հազար արանց և կանանց. ծերոց եւյլն տարեալ զգեր" և զաւ" ի սահմանս իւր. և վերդ" սեպ" յաւուրս հնծոց ուղղակի իջեալ ի գեղ' և անցեալ ընդ Եզուարգ, շրջապատեն զՕշական գիւղ. յորմէ ոմանք ամրացեալ ի տանիս եկեղեցւոյն՝ որ բարձրագոյն իմն էր, բայց գերեալքն եօթն հարիւր ութսուն և երեք անձինք մեծ և փոքր՝ յորոց մինն ղերծեալ գայ պատմէ զթեմս։ Եւ աստի անցեալ ի Կարբի գիւղաքաղաքն՝ որ լցեալ էր բազմութեամբ աւերեն, գերեն. և զերեք հարիւր անձինս 'ի տան եկեղեցւոյն կոտորեն և այրեն. և գրեթէ զայս նահանգ մինչև ցԳեղարքունի աւերեն անմարդաբնակ կացուցանեն։ Զայսոսիկ պատմեաց ծերունին քահանայ տէր Յովհաննէս Օշականցի՝ որ էր ամաց 84-ից։

130 Աղբեզ կամ Ախպեխ. թուրք. աղ—պըյըզ. նշանակում է՝ սպիտակ ընչացք կամ ճերմակ բեխ։

131 Էլ—ժողովուրդ, երբեմն շ. և երկիր։

132 Աս—ըմբոստ։

133 Քէհեաբէկ կամ քէթխուդա. նշ. վերակացու, գործակալ, հրամանատար։

134 Թաթար—սուրհանդակ։

135 Այդ մատնիչները մի օր մի կնիք են փորում եպիսկոպոսի անունով և խընդրագիր պատրաստում, որպէս թէ սա այդ կնքով կնքած մի խնդրագիր է լինում տուած իրանց էլի վրայ և այդ խնդրագիրը մատնիչները տալիս են Ուսուֆ փաշային։

136 Այս թուականն անշուշտ սխալ է. պէտք է լինի Հայոց 1256 թիւը, որ համապատասխանում է Քրիստոսի 1801 թուին և Սուլթան Սէլիմի թագաւորութեան ժամանակին, ինչպէս և այս պատմութեան հետագայ թուականներին։

137 Շնուորը հիւանդութեան անուն է։

138 Մշեցի տաճիկ Քօթանենց տունն ևս միացաւ քիւրդերի հետ քաղաքը պաշտպանելու համար։

139 Քէշիշ աղճասի—քահանայի տուրք։ Բացի այդ տուրքից այսպիսի մի սովորութիւն էլ ունէին նրանք. ինչ տուն որ մտնէին հաց ուտելու, իրանց հաց ուտելու համար վարձ էին ստանում տան տիրոջից, որ ասւում էր Աւայիդ։

140 Այս մեծահարուստ անձը Կ. Պօլիս է փոխադրւում իր բազմաթիւ ընտանիքով և 1858 թուին իր ծախսով հիմքից կառուցանում Գատը Քեօյի (Քաղկեդոնի) հայ եկեղեցին. և 1860-ին վախճանուելով թաղւում է նոյն եկեղեցու բակում, ուր յետոյ թաղւում է նաև իր որբախնամ կին Իւղաբեր խաթունը։

141 Ըըրար բառը պէտք է լինի ըխբար, որ թուրքերէն նշանակում է՝ խոստում։

142 Մազմաթա, մազպաթա. թուրք. կանոնադրութիւն։ Յիշատակուած Ճէզայիր հայ աղան՝ մեծահամբաւ Մկրտիչ ամիրայ Սարգիս Ճէզայիրլեանն է, յայտնի հարուստ, որ յետոյ փառքից ու հարստութիւնից ընկաւ և 1861 թուին մեռաւ Կ. Պօլիս նեղսակիր վիճակի մէջ։

ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Արաս 136
—շահ 48 62
Արդլմունիք 68
Արդուլլայ փաշայ 67
Արդրահման փաշայ 128 32
Արէթ Նախահայր 56
Արէկ 461
Արիկ եղբայր սանթալճի Գէորգի 281
Արութբէկ 144
Արուսահլ որդի Սենեքերիմ արքայի 383—5
Աբրահամ ամիրայ 471
—խափու օղլան 288
Աբրահամ կրօնաւոր
—առ̈ջն. Ղազարու վանից 493
—պատրիարգ 466
—վարդ. 497
—վարդ. Տաթևացի 465 66
—ք. 61
Ագուլիս գիւղ 503
Աղամ Նախահայր 56 500
Ադլ շահ 158
Ազապ աղենք 135
Ազատ խան 160
Ազարիայ պատանի 471—2
Ազնաւուրեան Կարապետ 472
Աթանաս երանելի 98
Աթշգահ 176
Աթրաբ քաղաք Արաբիայի 67
Ալաղին բէկ Մշոյ 509
—սուլթան 68
Ալաճաճեան Սէֆէր 503
Ալանաց գուռն 371
Ալաշկերտ 188 380 539
Ալաջայ 454
Ալատաղ գաւառ 22
Ալէքսան 56
Ալէքսանդրապօլ 451
Ալէքսանդր Պաւլովիչ կայսր ռուսաց 446
Ալէքսանոս վ. Զէյթունցի 400
Ալթունեց խօջայ Մարխաս 106
Ալթուն Քօփրու 23
Ալի աղա Յազարանցի 149
— — նախարար 52 129 33 34
— — նամաթի լաճ 129
Ալիբաս ամիրայ Աեբաստիոյ 386
Ալի բդեշխ Ապաի փաշայի որդի 414
— — Հէքիմ օղլի 415
— — կէնճ 415
—բէկ 147
Ալիխան Խամսայի 174 180 82
Ալիհուն Մուրաա գետ 527
Ալիղուլի խան 184
Ալիճն Ցորկոն 516
Ալի Մաղթուլ 127 208
—Մարգան 158 59
—Մուրատ 164 7 170 3 5 80
—Նազի խան 166
Ալիւր գիւղ 22
Ալի փաշայ Վանայ 65 6 508 11 17 18 25 26 30 31 34
Ալխաս Խօջայ 64 71 107 501
—Միրզայ
Ախալքալակ 451 52 528
Ախիջան աղայ 143 47
— — Ղարասաֆարեան 135
Ախլցխայ 450 528
Ախուրեան գետ 449
Ականց գ. 192
Ակկերման 58
Ակն 341 515
Ահմատ բէկ 133 144
—սուլթան 4

—փաշայ Խասաքի 139
— — Մալադ 143
Ահմէտ Ջաթրաֆիլ օղլի բդեշխ 204
—Տօոխճան 127 381
—քէհէ 132
Աղախան Դօբօյի 138
Աղայ Մահմաա Ներքինի 353
Աղաչար 390
Աղապապ Սրտաձորցի 517
Աղասի ենիչար 87 134 37
Աղաւնի Կարապետ վ. 464
Աղայ փաշայ 138 48 206
Աղաքամալ գ. 170
Աղբակոյ երկիր 111 44 89
Աղբեդ, Աղպեդ եպս. 511—3
Աղէքսանդր կաթ. 122 88
Աղթամարի կաթ. 105
—կղզի 1 2 4 6 10—5 4 5 55 58 61 142 47 492 94
— ցիք 54
Աղուանից աշխարհ,Աղուանք 41 42 70 135 493
Աղուպ բէկ 47
Աղսկայու Հասան փաշայ 206
Աղքրման տես Ակկերքան.
Աճամ Մինաս վ. 514
Աճըմ 513 16
Ամասիա 131 205 76 83
Ամբարաակ 444 5
Ամիտ 143
—Շէխ փաշայ 178
Ամէկ երկիր 22 24
Ամիթ ք. 62 124 96 200 502
Ամիր աղայ, որդի մէլիք Սօլթանի 32
Ամիրայ բէկ 25
Ամիրղօղլի, Ամիրտօլի վանք 54 73
Ամիր եղդի 58 495
Ամիրզա Շաղրուխ 3
—Ջհանշայ 6 12 14 17
—Սքանդար 1 3 4
Ամիրզեկ Նահատակ 496
Ամիր Համզայ Միրզայ, որդի Խուդապանտայի 35
—Մահմադ բռնաւոր 494
—Մուստաֆայ փաշայ 206
—Շարաֆ 22 494
—Ուսուֆ 204
Ամիրպակ 101
Ամիրպէկ Մանդուկենց 11
Ամիրտօլվոթ 500
Ամուկ 2
Այբարատ 47
Անալիւր գիւղ 492
Անանիայ Քեալաչի 453
Անատօլի 219 21 43 49 53
Անանիա առաքեալ 16
—արքեպ. Սեբաստիոյ 387 8 405 6
—կաթողիկոս 289
—վ. 453—5
— —Քեալլաչի 454—7
Անդրէաս արքեպս. 401 2
—ծերունի 482
—Գուղտանցի 414
—վ. 414
—— Գաղատիոյ 24 427
Անդրիանուպօլիս 341 464
Անի ք. 454
Անկոյսներ 139 50
Անկուրիայ 50 8 69 270 2 6 82 3 8 9
Անղալատ, քոյր Թումայ Մինասենցի 13
Աննա 502
—յեւդոկիոյ 377 434
—մայր Սամուէլի 263
Անոյշ Թագուհի 372
Անտօն Ծըռվիզեան 464
—պատժապարտ 407
Աշխան 78
Աշոտ իշխան 506
—Բագրատունի 504
—Թագաւոր 37—2
Աշուրենց Թաղ 143
Աշուրի լաճ 141
Ապազայ փաշայ 50 102 401
Ապազան սպայ 74
Ապազ 129 38
Ապարանի ս. խաչ 138
Ապկար խան 167
Ապումըռխ Մէհմէտ բդեշխ 428
Ապուսահլ Արծրունի 492
Ապօլֆաթի խան 161 3— 7
Առակ գ. 64
Առնաւուտ փաշայ 134
Առաքել եպս. Ակնեցի 408—12

—վ. 409 10
— —Բաղիշեցի 496 7
— — —երգասաց 496
— —Մուրադեան Անանհնեցի 372
— —պատմագիր 52 393 496
— —Սեբաստիոյ առջն. Ակնեցի 378 416
Առաքելոց վանք 533
Ասադ փաշայ 536
Ասիայ 68 354 57
Ասլան 390
—աղայ 107
—փաշայ 204
Ասպահան 48 9 62 124 58 9 60 2 7 70 -2 5 6 9—86
Ասորեստան, Ասորոց աշխարհ 70 228
Ս. Աստուածածին Ամասիոյ 434
—Բարձրահայեաց Տիգր. 434
—Գաղատիոյ 434
—Նիկոմիդիոյ 434
Աստուածապով 284 5
Աստուածատուր արքեպս. Եւդոկիոյ 465 84
—եպս. աշ. Ղուկաս կաթ. 466
— վ. 5 41 343 4
— —Արճիշեցի 492
— —Գործակալ 471
— —Դմպուկ 377 406 8
— —Յոհանենց 139
— —Սասունի Նըշէ գիւղից 510 11
—վկայ Սեբաստացի 407
Ասքանազեան ազգ 424
Ավգրահման 205
Ավշար օղլի 415
Ավտի փաշայ 127
Ավրէլա 3
Ատնականք 129
Ատոմ արքայ 384 5 491
—Մարզանենց 114 26
—միայնակեաց 5
—որդի Սենեքերիմ արք. 384
Արարացոց աշխարհ 70
Արամեան տուն, զրոհ 41 320
Արապկեր 500
Արապ Կոճայ 137
Արարատ աշխ. 45 397
Արարուց եկ. Վանայ 191
Արարք 138
Արղրում 39 50 61 72 102 3 20 32 5 9 46 50 97 279 81 501 28
Արիստակէս 540
Արծկէ 24 8 58 150 495
Արծրունեաց ք., թագ. 385 9
Արծրունիք 56
Արզուն 4 518 39
Արճէշ 22 8 41 5 58 123 8 42 5 91 495
Արմաշ 537
Արմտան 424
Արնավուտ գ. 285
Արշակ արքայ Հայոց 92
Արշակունիք 56
Արցախ 445 50 1
Արտամետ գ. 20 109 13 25
Արտաւիլ 131
Արփիարեան Մկրտիչ 471
Աւագ Սալմաստեցի նահատակ 494
Աւանց գ. 112 25 31
Աւեխու ս. Աստ. եկ. 54
Աւետիս 52 6 504
—Աստապատցի 45
—եպս. Աաղիմայ 326
—եղբ. Յովհ. Արճիշեցւոյ 29
—կաթողիկոս 49
—Կարմիր կաթ. Աղթամարայ 115
—Ոստանցի 63
—ք. Ջմշկայ 105
Աւէկեաւր քիւրդ 528
Աւթանտիլ 138
Աւթւանցիք 101
Աւշաղբիւր 518
Աւտալ բակ Ջուլամէրկու 145
Աւտալ խան 53
— —Բաղէշի 52
Աւտի բդեշխ 205
Աւտի Քարիմ 138
Աւտուլայ 204 379
—աղայ 132
—փաշայ Տաֆայ 131 56
— —Ջաթաջի 136
— —Քօրփիլի օղլի 129
Աւղըռահման փաշայ, որդի Միրզայ փաշայի 518
Աւրօլուզայ խան 179
Աքխարբէլ 261

Բաբա 120 449 50
—փաշայ 450
Բաբախան շահ 440 8
Բաբանիկ Աղով Մխիթարենց 145
Բաբերդ 39 72 500
Բաբիլոն որ է Բաղդատ 14 61 7 74 355
Բագրատունի Կարապետ Երևանցի 537 9
Բագրատունիք 56 372
Բալլի բուղուկ Մահմէգ բդեշխ Վանայ 205
Բալու 525
Բախվան գիւղ 8
Բաղդասար ծնող Ցովհաննէս կրօնաւորի 6
Բաղդատ 17 24—6 28 62 74 118 33 43 45 379
Բաղէշ 4 18 21 44 51—5 8 71 6 108 11 4 6 32 44 494—518 31
Բաղէր խան 171 2 3 7 8 18 2 6
Բաղի Ղուշխուն 171 74
Բայազիտ 142
Բայրամ քէհէ 130
—փաշայ 447
Բանլի Մուստաֆա փաշա 205
Բաշխերտ 3 91
Բաշու 526
Բաջալի 454
Բասէն 39 72 501 28 36
Բասրայ 116 7 8 623
Բասքովլիչ 519
Բաբաղամ սրկ. Սեբաստացի 503
Բարդուղիմէոս առ. 50 112
— —վանք 189
—առջն. Վարագայ 128
—վարդ. 514
— —Իգնիմիտցի 211
— —Շուշանցի 155 6
Բարիլոյս 213
Բարթենիոս 84 5
Բարիձորոյ վանք 495
Բարմայ, որ է Աղրակ 189
Բարսեղ աբեղայ 33
—առաջն. Ամթայ 51
—գծող 33
—Վարագեցի 33 34
—վ. 54 73 524 38
— —Բաղիշեցի 73
— —Վարագեցի 502
Բաքըր փաշայ Լէչկէր 64 125
— —Վանայ 107 203 4
Բերիա 197 397 477
Բերիայ բդեշխ Կ. Պօլսի 473
Բերկրի 22 43 119
Բզնունի 45
Բզնունեաց ծովակ 496
Բէկիջան 33
Բէկլար բէկ 20
Բէհպուդեան ղէներալ 484 5
Բէղլու 48
Բէլ 263
Բէշիքտաշ 261
Բէշքիլիսայ 454 57
Բինայ Էմին 140
Բինկան 425
Բիւզանդիա 101 105 345 55 427
Բոծեղկոր 525
Բողի բերդ 517
Բուբաեր 67
Բուզանդ ք. 211
Բուլանխ 380
Բուլղարացիք 70
Բուրայ ք. 68
Բուրխան ղատի 494
Բուրհան ղատի Սեաստայ 57 69
Բւգնիկ գիւղ 515
Բրահիմ 27
Բօղազիչի 145
Բօյադ Ահմատ բդեշխ 203
Բօյնի Ագրի բդեշխ 203

Գաբեղինաց երկիր 213
Գաբրիէլ 52
—մայիօր փրիմէր 358 67
Գալուստ 323
—ի Վաղրնգու 45
Գաղատիա 266—9 71 5 82 3 97 302 427 8 62
Գայիանէ 108
—եկ. 467
Գանձակ. Գեանջայ 11 359 79 440 52
—գիւղ 113
Գասպար ամիրայ Աղնաւուրեան 346 426
— Կոուան Նահատակ 404
Գաւաշ գ. Բծոնց 5 6 27
—երկիր 128

Գափի փաշայ 148
Գեաղ 172
ս. Գեղարդ 443 4
Գեղարքունի գաւառ 505
Գեանոեր պ. 187
Գետիկ 41
Գերմանացւոց կայսր 355
Գերմանիկ 474 5
Գեօրգի մայեօր սէքօնդ 359
Գիլր օղլի 124
Գէորգ 44 284 5
ս.—եկ. 464
ս.—զօրավար 5 53 141 473
ս.—Մողնւոյ 372
—եպս. Կիլիկեցի 326
—կաթ. Գառնեցի 504
—Մեղրիկ վ. Սեանցի 493
—Սանթալճի 281
—վ. 464
—տիրացու 462
—ք. 389
Գիլազ 379
Գիւմրի ամրոց, Ալէքսանդրապօլ 446—9
Գլաձոր 493
Գողգոթա սար 10
Գոմաշ վանք Բաղէշի 53
Գուլազան եղբ. Յովհ. Արճ. 29
Գուլազիզ տանուտէր 11
Գուլնաբաթ 184
Գուհարինէ, -եանք 386 491 2
Գումաշխան 73
Գումգափու 296
Գունայի 9 146
Գրիգոր 44 65 108 236
—աբեղայ 497
—առջն. Տիրամօրայ 140 1 6 9 50 2 5
—արքեպս. Գաղատացի 424 8 64
— — Երեւանայ 485
— — Սեբաստիոյ 427
—եպս. Սամշաւինու 485
— — Վանայ 188
—Լուսաւորիչ 62 9 91 411 58 84 97 502 3
Գրիգորիս կաթ. տղայ 387
Գրիգոր սուրբ 493
—Խլաթեցի 44
—կաթողիկոս 41 387 8 492
— — Աղբերկայ վ. 122
—Կեսարացի 51
—կրօնաւոր 9
—Մագիստրոս 383
—Նարեկացի 101 491
—Չպուխճի 330 2
—Պայտառենց 461
—Պատր. 427 64 5 504
— — Շղթայակիր 187
— — Անարծաթ 106
—սարկ. ս. Թագէոսի 46
— — Վարագեցի 501
—վարժ. 424
—վարդ. 45 219 20 498
— — Արճիշեցի 498
— — Կամախեցի 39 40
— — Հաղբատու 46
— — Վարագեցի 57
— — Տաթեւացի 43 5 7
—ք. 108 55
— —Տէր Շմաւոնեանց 373
Գօրգօենց թաղ 142

Դագօն 263
Դահմազ շահ 71
Դահման շահ 19 20 3 8 30 101
Դամաթ Յուսէն փաշայ 206
Դամասկոս 16 466 7
Դամուր ղափի 62 142
Դանիէլ արքեպս., կաթողիկոս 424 64 5
—եպս. Նուիրակ Իզմիրու և Ռումելու 341 46 47
—արքեպս. միաբան էջմիածնի 463 4
Դանիշման 386
Դաւթարտար քօսայ Խալիլ բդեշխ Վանայ 205
Դաւիթ 56 272 482
—Արքայակաղնցի 42
—արքեպս. Սեբաստիոյ 386
—Բաղիշեցի 41 2 56
—բանասէր 56
—եպս. 83 491
— — Աբեղեցի 86
—Թոռնիկեան Աղթամարցի 492
—Իմիրզայ որդի Հերակլի 444
—կաթող. 1 8 48 427 65 7
—Նահատակ 404

—որդի Խարբերդցի Գրիգոր քահ. 497
—որդի Սենեքերիմ արքայի 383
—վարդ. 46 56
Դարգազ երկիր 23
Դաւրէժ ք. տես Թաւրիզ
Դեղձի երկիր 11
Դերջան 39 72 493 501
Դէալի 450
Դէրինտէլ 261
Դիադին բէկ 53 78—9
Դիարբէկ 21 3 8
Դիլաւար բդեշխ Վանայ 203
Դիոնեսիոս 188
Դոժպարէ 526
Դուզանսզ 130
Դուին քաղ. 504
Դուշէթ 371
Դսաւ տեղ 514
Դրազարկ 492

Եալօվա նաւահանգիստ 307
Եգիպտացիք 70
Եգիպտոս 43 67 193 300
—ի սուլթան 390
Եգեսիա 405
Եզնկայ 39 71 2
Եէկէն Ահմէդ փաշայ 319
Ենիքիոյ 469
Ելլադիա 463 4
Եկատերինէ թագուհի 353 7 70 1
Եկեղեաց գաւառ 408
Եղեարդ գ. 505
Եղիազար եպս. լուսարար 215
—կաթ. 108 13—5 22
—վ. 86
Եղիայ Ցոծոպու 45
—վ. 453
— —Աւրցի 525
Եղիշէ պատմագիր 502
Եղիսէ Դուլխնչու 145
—Գրիգոր Մագիստրոսի աշ. 383
—Սերաստիոյ արքեպս. 304 5 417 8
Եուսուֆ փաշայ 333—5
Եպարքոս 286 96 300
Եռնկայ բերդ 128
Եսայի Երնջակցի 50 1
—մեծ վարժապետ 43
—որդի տէր Դալուստի 256
—վ. Կեսարացի 408
—Փէշտմալճի օղլի 272
Երեմիա 52 471
—Համթեցի 84
—եպս. 472
—վ. 494
Երեւան ք. 39 47 73 4 102 8 17 24 31 45 379 439 43 58 52 83—5
—այ աշխարհ 36
Երզնկայ 47 71 409 97 501 28
Երիձոր գաւառ 22
Երնջակի վանք 44
Երուսաղէմ 8 9 42 51 86 92 108 39 55 87 466—8 81
Եւդոկիա 215 340 41 96 409 25
Եւմիայ Մէհմէդ փաշայ 265
Եւտիքէս 97
Եւրոպացիք 434
Եփրեմ կաթողիկոս 448 68 82 6
— — Սսայ 325

Զարիթ փաշայ 446
Զայիմ Մուսայ բդեշխ 203
Զարսաղ գ. 307
Զաքարիա եպս. Կաղզուանցի 463
—կաթ. 12 14 58 494
— — Ջուղայեցի 397
—պատրիարք (Փօքուզեանց) 207—10 13 19 21 23 27 29 33 35 36 39 55 57 305 11 20 22 25 27 35 39 420 23 64 501
—վ. 533 40
—խաչ 141
—Վաղարշապատու 50 1
—Վարաղեցի 47 501
—Փէրրօ 263—5
Զաքի խան 161—5 7
Զգօն Հայրապետ ս. Յակոբայ եկ. 478
Զեբեդեայ առ. 80
Զենակայ բերդ 119
Զէյթուն 473—4
Զըքոն 516
Զիարէթ 525
Զինախ փաշայ 27
Զուրնաճի օղլի Միքայէլ 276

Զօֆճի խան 287 94

Էահմատ Էաֆսնաի 456
Էարիֆ Էահմատ փաշայ 439
Էղէստար 142
Էղգար կոյր 125
Էղգի ամիր 3 8 15
Էղրնկայ 18
Էլէղ փաշայ 74
Էլչի պէյ 290
Էհսար աղասի 141 42
Էմին 468
Էմին սաղաղասի 150
—Մահմատ բդեշխ 203
—փաշայ 151 519—20 29 31
Էմիրղէ օղլի Մաղաքիայ 302
Էջմիածին 10 47 49 50 52 55 59 61 62 64 69 85—8 108 13—5 17 23 24 39 40 88 347 97 421 25 27—30 39 443 59 62 64 65 67 80 82—4 97 503 10 15—25
Էնգիշահար 68
Էտիրնէ 37 341
Էսկիճի Մկրտիչ 479
Էսմա սուլթան 283—4

Ըհօ 516
Ըմբր 512 28—9
Ընձաքու ղաշա 11
Ըռաջաբ փաշայ 138
Ըռշտունեաց երկիր 6
Ըսպեր 39

Թագահ օղլի բդեշխ 203
Թադէոս առ. 46 53
— — վանք 118
—վ. 212 396
—ք. Սեբաստացի 295
Թաթար խան Ղրիմու 137 459
—ացիք 70
Թաթուլ 213 454
Թախթափօլատ 171
Թահմազ 133 6
—շահ 157 379 96 443 501
Թաղթայ սաղկալ 142
Թամար սարկ. 503
Թամուր, Թըմըր աղայ 141—3 516
—բէկ 15 16 147
—փաշայ 132 3 43—5 49 51
Թասու 146 379
Թաւրիզ 3 19 21—6 34—6 40 7 8 62 71—4 103 20 3 24 31—5 46 79 83
Թէհրան 159 70 6 7 82 487
Թէոդորոս աբեղայ 385 492
—կաթ. Ասայ 325
—կրօնաւոր 505
—պառր. 151 467
ս.—389
Թէոդուպօլիս, Արզրում 34
Թէրճիման պէկ 414
Թէրսխսանայ նաւահանգիստ 339
Թէքիրտաղ 40
Թիալէթ 370
Թիֆլիս, Թլֆիս 131 46 52
ս. Թոմայ առ. վանք 113 16
—Եւգոկացի 211 498
—վ. 299
Թոռի գաւառ 505
Թովմայ Մինասենց 1 6 7 12—14
Թորղումու ձոր 102
Թորոս 43
ս.—եկ. 37 499
—եղբ. Սմբատ արքայի 391
—կաթ. 494
—վ. Մելիտինոյ 42
Թուխայ ջուր 22
Թումայ աղայ 140
—արքեպս Արծկեցի 115
— — Բաղիշու Գոմաց վանից 498
—դարբին 27
—եղբ. Յոհաննէս կրօնաւորի 6
— — Տերուն աբեղայի 12
—կաթ. Աղթամարայ 115 7 22
—միայնակեաց 5 13
—վ. 69 113
— —Գանձակեցի 106
— —Մեծոփեցի 69
— —Քաջբերունեաց Աղիովտայ 46
Թումաս 44
—արքեպս. Ընկուուիղաց 492
—վ. Սեբաստացի 415
Թբէսթ քաղաք 460
Թօխաթ 101 378 466 504

Թօխմախ ռէս Միրաք 118
Թօսբաք օղլի 138
Թօփչոնք 140 4
Թօխմախ Միրաքէ 127

Իբրահիմ աղա Շաթր օղլի 109 25
—բդեշխ 412
—բէկ 118
—իշխան Շօշայ 356
— —Իսահանի 141
—շահ 158
—սուլթան 75
—փաշայ 28 74 134 395 439 45 502
—խաղիճի օղլի Արզրումայ 137 40 206
—քուրա 205
—քահեայ 130
Իգնատիոս Էրէց Համթեցի 381
—վ. 108
—ք. 128 30
Իզզէթ Մէհմէտ փաշայ 291 305 7 19
Իղնիմիդ 466
Իլգրում 58 69
Իկլայ որդի Սեադա ամիրայի 496
Ինճէ օղլի Օհաննէս 276
Իննեցենտիոս պապ 89 90 6
Իչղալէ ամրոց 161 2
Իսահակ 56
—արդար 381
—արքեպս 404
—Սահրադեան Ղօշավանքցի 439
—վ. 107 18
— —Մակուեցի 106
Իսաղ աղայ 107 39 40 42
Իսայ 137
Իսկալայ դուռ 146
Իսկէլէյի փեներու փողոց 479
Իսմայէլ խան որդի Սօֆատ խանի 172 79 80
— —Խամսայի 182
— —Զանգազի 183
—շահ 47
—Շաթըր օղլի 141
—փաշայ 115 9 20
— —Կօճայ 126 204 5
—ացիք 36
Իսմայիլ էֆէնտի 297
Իսքանտար 203 502

Իսօ 516
Իրըղի լաճ 141
Իւչքիլիսայ Բաղրեանդի 107 380 539
Իւսուֆ ամիրայ 426
—Միրզայ 483
—փաշայ Ջալալի 126 50
Իւսքիւտար 283 86 93 466 79

Լալա Կարա Միրաքենց 136
Լանկթամուր 26 56 8 69 103 7 23 494
Լատուան 58 495
Լաքաաի ազգ 170 81 4
Լեհաստան 74
Լեհաց թագաւոր 100
Լեռն արքայ 389 92
—թագ. որդի Օշնի 43
—իշխան 41
—մեծ իշխան հայոց 387 8
—պապ Հռոմի 273
—որդի Հեթումի 43
Լիբանան 466
Լիմ անապատ 48 56
—կղզի 48 56 187 500
Լուսաւորիչ 383
—ի աջ 10 123 24
Լօլօ ռէս 136
Լօման փաշայ 445 6
Լօռք 176
Լօրէն, Լօրէնցեան Ղափամաճի 278 461

Խաղըմ շահ 150 444 5 8
—փաշայ 150
Խաղեան դ. 531
Խաթուն օղլի 445 9
Խալըպ փաշայ Կարնոյ 517
Խալիլ աղայ 129—31 41 50
— —Ջամուշ օղլի 118 29
—դաֆտարտար 127
—փաշայ 143
Խանաղ 56
Խանամիրեան Մկրտիչ եպս. 525
— — սրկ. 511 15
— — վ. 511
—Յարութիւն սրկ. 519
Խանթուման 145
Խաչառըղու սար 513

ս. Խաչ վանք Ապարանի 491
Խաչատուր աբեղայ 37 8
—Ագուլեցի 54
—Ամթեցի 63 499
—արքեպս. 385
—մհ. Խաչկանց 150
— վ. 54
— —աշ. Բուժիկ Ցօմհ. 9
— —Ասպահանցի 49 51
— —Գողթան 49 58
—Տիգրանակերտցի 504
Խաչրակ 509
Խառապաստու Սուխարայ վանք 44
Խասգիւղ 339 513
Խարաճճի պաշի 306
Խարապէկցի Նազէի Հլօ 523
Խարէքէհեան Աբրահամ ամիրայ 472
Խափու օղլան 279
Խէյպեան 515 16 29
Խըդըկա Մարզուանի 69
Խիանցի Զօփօյ 518
Խիզան 22 1՛9 26 495
Խլաթ 3 4 21 277 8 495—6 534
Խնուս 39 72 501 15 29
Խոզձայ երկիր 495
Խոնդքար 501
Խոռաց ազգ 162
Խոսրով աղայ 34
—բդեշխ Վանայ 64
—եպս. Անձեացի 491
—Խան Մքրոյ 180 82
—Միրզայ 488
Խոտաճարակ 510 11
Խորանաշատ վանք 493
Խորասան 20 22 24
Խորասկան գ. 178
Խորոնցի Ցարութիւն 521
Խոր վիրապ 497
Խութէի Շմբր 534
Խումխափու 217
Խուրշուտ պէյ 527
Խրիմ 517
Խրիմեան Մկրտիչ վ. 540
Խօճայ Ալխաս 125
Խօյ 27 146 9 379 449 50
Խօշապ 63 104 15 16 18 20 24 32
—այ բերդ 128 31 17 8
Խօջայ Խանամիր 116
—Խաճիկ Գմաղացի 409
—Կօճկան 71
—Մաղաքէ 130
—Մարխաս 104
—Նիկողայոս 378
—Ջանգուլ 127
—Սաֆար Գահիճենց 127
—օգջայ 61
Խօսրոֆ 203

Ծերենց 44
—Գրիգոր Խլաթեցի 495
Ծերուն աբեղայ ս. Վարդանայ 12
Ծղակ 380

Կազկէ կոր 145
Կախէթ 370
Կախիկ վ. 497
Կակոս տնտես 33
Կաղզուան գիւղաքաղաք 213 347 454
Կամար 420
Կամրկապ գ. Ակնայ 416
Կայի լաճ 125
Կայմաղ փաշայ 141 3
Կապադովկիայ 68
Կապոյտ բերդ 6 14
Կասնաբերդակ գ. 493
Կասըմ էֆէնտի 141
Կատարինէ 479
Կաբակոմրուկ 37
Կարայ քէհէ 142 3
Կարապետ 24 9 479
—աղայ 306
—արքեպս. 485
— — Ակնեցի 420
— — Սեբաստացի 437
—եպս. Կարնեցի
— — Մարզուանի 481
—ընկեր Գրիգոր Տաթեւացու 47
—Կացու 128
—միայնակեաց 5
—Մոկացի 51
—սրկ. Կեսարացի 471 2
ս. —509 10 15

— — Երնջակի 494
— — Կեսարիոյ 434
— — Սալնապատի 493
— — Տարոնոյ 434
— վ. 33 47 107 16 500
— — Ապարանցի Կալոյ 153 6
— — Մոկաց 153—5
— — Պաստումաճի 538
—ախրացու 288
—Փարխնցի 53
—փիլիսոփայ Ջամալ մականուանեալ 33
Կարին ք. 279 81 431—3 43 44 48 50 51
85 511 17 19 32 38 39
Կարս ա. Ղարս
Կաֆայ 58 501
Կեղի 39 501
Կեսարիա 211 89 429 69
Կեցնայ երկիր 6
Կէլկէլեան Պօղոս 471
Կէմալմազ 419
Կիլիկիա, -եցիք 43 402 477
—ւոց թագաւորութիւն 50
Կինճայ ամիրայ 520
Կիպրոս կղզի 72 83
ս. Կիրակոս եկ. 499
— ժամհար 152
—կաթ. 46 50 6 9 497
— — Կիլիկիոյ 473 4 81
—կրօնաւոր 9
—պատմագիր 42
—Պօղոսենց 11
— վ. Ռշտունցի 46
Կիւրեղ Աղէքսանդրացի 98
Կորիկ Սարգօ Բաղուեցի 54
Կողիս գ. 496
Կոմս գ. 514
Կոմսայ Կրպէ 540
—Մլքօ 516
Կոնիա աշխարհ 39
Կոստանդին արքայ Հայոց Ծիւան 393
—կաթ. 42 43
— — Կեսարացի Գրօնագործ 392
—որդի Սենեքերիմ արքայի 383
Կոստանդնուպօլիս, Ստամպօլ 37 50 2 8 71
4 5 83 6 107 14 24 5 7 31 40 44 5 50
215 6 9 20 1 6 33—6 43 4 6 53 70 4
6 83 8 93 9 301 6 7 19 55 79 84 91 5
403 7—14 27 59 61 2—6 9 74 8 81 2
96 7 510 5 9 32 6
—սոյ ազգ. ժողով 434
Կովկաս լեառն 369 70
Կուլու գ. 536
Կումուշխան 62
Կամքասմեան Կարապետ ք. 501
Կօճայ Խօջայ Սեբաստացի 500
—Օմար փաշայ 125
Կօսկայ 315

Հագարաց ազգ, կայսր 64 355 500
Հաղրօյ աւան 198
Հալապ, Հալէբ, Հալէպ 16 71 101 477
Հաճի Մահմուա Համնանցի 512
—պապա 512
—պեկոյ 516 9
—փաշայ դուրճի 137
Համամ օղլի 135
Համատան 131 66 79 80 3
Համզան 425
Համիթ սուլթան 217 309
Համիտ արքայ 305
Հայդար Աղի Մամօ 523
Հայթայ 450
Հայկազեան ազգ, թագաւորութիւն 56 279
—տօմար 6 8 12
Հայկավանք 1 3 4 6 92
Հայոց ազգ 168 295 339 443 457
—աշխարհ 6 8 70 286
—եկեղեցի 80
—պատրիարք 291 5 300
Հայրապետ 11 33 53
—արեղայ 13 61 395
—կրօնաւոր 5
Հայք 10 62 4 7 275
Հանրմոատէ 461
Հապէլ 495
Հաջի Ալի Ռզա խան Քաղասնի 183
—Իւսուփ օղլի Օհաննէս 276
—Ղամբար Եթովպացի 178
Հասան աղայ Ալխան օղլի 128
Հասան խան 160 75 446
—փաշայ 128 274 6 8 82
— — Ազսկայու 141

— — Դալի 129
— — Կաթր 125
Հասրաթ բակ 149
Հաւուզ Ահմատ փաշայ 74
Հէթում հզր. Սմբատ արքայի 391
Հերակլ արքայ վրաց 145 356—8
—խան Տփխիսայ 444
Հերկերտ 526
Հբխէն 516
Հեշաա 2
Հէրմիրզէ օղլի Մաղաքիա 276
Հիզանցի սուրբ Սիրուն 497
Հիւսիսականք 70
Հիւսէյն փաշայ 38
Հնդկաստան 465
Հնդիկք 67
Հոգւոց վանք 105 91
Հուսէն էֆէնտի 74
—փաշայ 71
Հռիփսիմեանք 188
Հռոմ 20 61 9 71 4 9 87 328 469 504
Հռոմայեցիք 41 70
Հռոմայ պապ 50 493
Հռոմկլայ 43 383 431
Հրեշտակապետ եկ. Կ. Պօլսի 466
Հրէայք 67
Հօթուն քաղաք լեհաց 73
Հօյ 131

Ձորոյ թաղ 516

Մաղհօսէին խան 182 3 5
Մաղքթացիք 70
Մալադ 203
Մալաք Մահմատ փաշայ Վանայ 52 75 6
Մակար 498
Մակեդոն 316
—ացիք 70
Մակու բերդ 4
—երկիր 115
Մահմատ, Մահմէտ, Մահմուտ 67 203 493
—աղայ 139 40 520
—արքայ 467
—բէկ 446
— — Ջամուշ 125
—Բաքալի 203
—Բօյնի աղբի 203
—իշխան 3
—խան 445
— — Երևանի 446
—Հասան կաթըբ բդեշխ Վանայ 254
— — որդի Հասանայ դաջար 170
—Հիւսէին խան Զանգազի 183
—Շէխի 204
—Ուզուն 101
—Ջափկուն 203
—սուլթան 23 8 40 3 7 8 75 9 112 23 456
— — Կ. Պօլսի 51
—փաշայ 449
— — Արաբկերցի 132
— — Բալլի բուղուք 128
— — Գուրճի 115 26 204
— — Խաթուն օղլի 449
— — Կայայլի Կօզօղլի 125 204
— — Ջարքաղ 128
— — Պայազիտու 512
— — Տուրսուն 126 204
— — Քալաջի 129
Մահմէտի ազգ 35
Մահմոյ քուրտ 522
Մահմտան 25 119 29
Մաղազաճի օղլոնք 143
Մաղաքիա ճգնաւոր 44 494
—Ջէլէպի 84
Մաղս բերդ 445 6
Մամիկոնեան Մամբրէ վ. 540
—Վարդան 538
Մամօն քիւրդ 526 30
Մայարխան 158
Մանաճիհր 7
Մանթաշայ սօլթան 28
Մանծկերտ 117 26 379
Մանկասար եղբ. Յովհ. Արճիշեցւոյ 29
Մանուէլ կայսր Հռոմի 492
Մանուկ աղայ Ֆարջուլենց 150
Մանսուր 110 25
Մանօղլի փաշայ 74
Մաշադ 124
Մաշտոց գիրք 11
—Հայրապետ 504 8
Մասիքայ լեռներ, այժմ Սիփան 496
Մատաթիա ժամաչէն 461

Մատթէոս 44 227
—ուխտարանիչ 56
—պատր. Կ. Պօլսոյ 405
—Ջուղայեցի 45
— վ. 538 9
— — Սեաստու 71 393 4
Մատնավանք 517 26
Մար 38 44
Մարագ 501
Մարաղ գ. Պարսից 429
Մարաշ 492
Մարաց ազգ 112 430 31 84
—աշխարհ 70 189 504
Մարգարայ գ. Վանայ 116
Մարգարեան Պօղոս 471
Մարգար վ. Զիարէթցի 525
Մարզուան 466
Մարիամ 479
Մարխաշ Խօջայ 63
Մարխաս Զալապ 125
Մարկոս վ. Ալաշկերաի Դիդամ գիւղից 526
Մարմետ 137
Մարսուան 341
Մարտիրոս 44
—Արտօնցի 526
—արքեպս. 487
—եպս. 440 520
—խալիֆայ 152
—կաթ. Փշրուկ 55
—միայնակեաց 5
— վ. 117
— — Գաղատացի 106
—Վանեցի 533
Մաւելի Փոստիկ 516
Մաւի խանում 518
Մաւրակ 454
Մաքինայք 505
Մէլէք Մէհմէտ փաշայ 340
Մելիք Բարով 38
—որդի ղարայ Յուսուֆի 8
—Սօլխան Խօջայ 32
Մելիքսէթ, Մելքիսեթ 44 56
—արքեպս. Կ. Պօլսեցի, որդի Մինաս ք. 403 4
— — որդի Խաչատրի 400
—կաթ. 49
—հայրապետ 33
—վ. 37 49 377
Մելիք Նազըր 516
Մելքօյի տուն 514
Մեծատուր Սեբաստացի 502
Մեծոփ 43 5 493
Մեղտի Գրգէ 516
—Խօշապայ 108
Մեսրովպ վ. 53 5 114 299 533
Մերտին ք. 497
Մերտինոյ դաշտ 196
Մէհմէտ աղայ 283
— — ղափուճի պաշի 283 95
— — Երկայն 283
—Զառայ օղլի ի Վիտինու 417
— փաշայ 85 161 271 446 47
— — իդդէթի 281
— — ղարայ վեզիր 265
— — Զափան օղլի 429 33
— — Տէրէնտեցի 264 5
Մէհմէտիէ տէմիպաշ զօրք 433
Մէրկիմիրու ճանապարհ 532
Մըլքօն ռէս Կոմսայ 531
Մրխսուտ փաշայ 510
Մըսըր 43
Մրքրուտ սար 10
Մինաս արքեպս. Սեբաստիոյ 396 7
—եպս. 485
— — Ակնեցի 509 10
—կաթ. 537
—կոյր 278 461
—ոՃհ 520
—վ. 5 37 9
—ք. 105
Միջերկրացիք 67
Միրզայ Ռէբի 170 13
—փաշայ եղբ. Սէլիմ փաշայի 518
Միր Թալիր խան 184
—Մահմադ խան Խորասանու 184
Միրօյեան Առաքել Զիարեթցի 537
Միրօ Նահատակ 500
Միքայէլ 52
—ամիրայ 288 94
—եղբ. Տիւզեանի 469
—կաթ. Սեբաստացի 397
—պատմիչ 453 4
Մխիթար 44

—Գօշ 41 123
—կաթ. 393
—մեծ 42
—նահապետ 504
– սուրբ 64
— վ. 538
— —Մեծոփեցի 43
— —Նուիրակ Երուս. 115
— —Սասունցի 494
—Տաթեւու 45
—ք. Սկեւռացի 493
Մկրտիչ 11 38 44 7 469
—աբեղայ 429
—եպիսկոպոս Տեւոցայու ս. Գէորգայ վ. 400 1
—կրօնաւոր 5 9
—Հողեցի 47
— Ողբեկենց 47
—վ. 168 538
—Փայտարանցի 45
Մնինոս Թուչուն, ղըմըլ 196
Մոխրաբերդ 11
Մոկաց աշխարհ 27 496
Մշեցիք 535
Մշոյ դաշտ 512 15
—երկիր 512
—եպս. 55
— վ. Տաթեւացի 49
—Տփխեցի 45
Մովսէս 52
Մուհամաա սուլթան 58 68 9 71 2 497
Մուղան 131
Մուշ 21 8 139 44 452 509 10 12 13 17 20 25 30 35
Մուսայ 203
Մուսլի փաշայ Վանայ 64 107 25 204
Մուսուլ 134
Մուստաֆայ 130 7 8
—ամիր 140
—եղբ. Ահմատ սուլթանի 63
—Կարա կուլախ բդեշխ 127 32 205
—սուլթան 38 62 216 54 337 401 59
—փաշայ 379
— — բանլի 132
— — Շահսուվարօղլի 137 206
— — սինադ 136 7
—Քուչուկ 116
Մուտանայի նաւահանգիստ 301
Մուրատ (պարգև) 69 173
—բէկ 536
— — Արծկու 143
—որդի Մուհամատ սուլթանի 68
—չարչի Սալմաստեցի 498
—սուլթան 40 72 5 83 124
— — որդի Ահմատի 46
— — — Օսմանի 73
—փաշայ 511 14
Մուրատեան Գասպար ամիրայ 280
Մուրթազայ փաշայ 126 8 34 35 203 4
Մտրկու վանք Կարնոյ 434
Մօզտօք 357 70
Մօնթիուէ եպս. 96
Մօսկով 141 333 39
Մօտկան լեառ 52

Յակոբ 6 44
—աղա Պետրոսեան Պոլսեցի 431
—ամիրայ Կիւլապեան 3 46
—առաքեալ 481
—արքեպս. 397
— — Տինոյեանց 187
— — Աքշեհերցի 481
—դպիր 193
ս.—եկ. 108
—եպս. 539
—կաթ. 52 55 138 215
—ճգնաւոր 526
—պատրիարք 240 43 54
—Ջրբաշենց 145
—սուրբ 6 7 80
ս.—այ վանք 5 7 9 12 75 125 187 496
— վ. 15 49 168 221
— —Արմտանցի 420 35
— —Երզնկացի, աշ. Ներսէս կաթ. Սսոյ 404
— —Թիֆլիզեցի 211 16
— —Ղրիմցի 69 496
— —ճգնաւոր 44
, — —Մշու 211
— —Պալխճի 406 13

— —Պօլսեցի 54
— —Ջուղայեցի 51 52 63 64
— —Վաղնդու 45
Յակոբոս եպս. 340 464 480
—սարկ. 299
—վ. աշ. Յովհ. պատր. 475
— —Աքշէհերցի 466 8
Յակոփու չայ 140
Յամիթ 61 499
Հասան բագէնց թաղ 143
—կարայ 130
—Նաման աղի լաճ 129
Յասրաթ բագ 151
Յարութիւն աղայ Ղարասաֆարեան 150
—ամիրայ Թէվէքէլեան 408 10
—եպս. Եգեսիայի, Ուրֆայեցի 533 9
—Խալֆայեան 123
—Մոի տղայ 420
—ոսկերիչ 530
—սարկ. 526
—վ. 256
— — Բասենցի 459
— — Եզնկացի 419
— — Սանահնի 485
—տիրացու 306
Յեզդ (եզդ) 164
Յիւսէյն սարդար 445 6
Յիւսուֆ փաշայ կոյր 449 50
Յոհան վ. Որոտնեցի, Կանխիկ 8 44 69
Յոհաննէս 44 479
—արդար Մոկացի Պօղոսեանց 187 8
—արքեպս. 485
Յոյնք 41 67 333 85 7 95 503
Յովակիմ 502
—պատրիարք 320 463
—վ. Գեղամացի 329
Յովասափ թագ. Հնդկաց 496
—վ. Ղափանցի 106
Յովհան հոգաբարձու 44
Յովհաննավանք 54
ս. Յովհաննէս 515
—ամիրայ Լիմօնճեան 346
—արքեպս. Վրաստանի 487
—աւետարանիչ 14
—Բաղիշեցի 29 51
—Գառնեցի 42
--եպս. 343 46 464
— — Կ. Պօլսեցի 463
— — Սեբաստացի 326 90 3 424 29
— — ս. անապատի 401
— — Սսոյ 387 8
— — Վարդայ 497
—Խլաթեցի 494
—Խճկտոր 45
—Կաթ. Կարբեցի 9 17 19 41 389 436
— — Կայծակ Աղթ. 118
—կրօնաւոր 5
—մեծ իշխան 43
—Մեծոփայ 43 47
—Շահխաթունեանց 459 60
—Ուրհայեցի 9
—պատր. 251 427 61 5
— — Կօլօտ 408 18 20
—վ. 5 6 45 6 52 4 105 211 400
— — ժամանակագիր 494
— — Հերմոնայ վանից 45 6
— — Հրեշտակապետի 399
— — Սեբաստացի 398
— — Քերովբենց 491
—ք. Արճիշեցի 19 20 22 30 45
— — Ծղակեցի 379 80
—Քիպարեան 417
—Քիւլէկճեան 390
—Օձնեցի ս. Հայրապետ 372
Յովսէփ 535
—Անտիոքցի 41 387
—արքեպս. 37 75
—եպս. Սեբաստիոյ 385 6
—Թիւլպէնտճի 278 461
—կաթ. 51 425 65
- միայնակեաց 5
—Պօնտօի որդի 417
—վ. 525
— — Խառաբաստու 47
Յուդայ Իսկարիովտացի 298
Յունան Շամախու 45
— վ. Գամաթ 142
— — Կիպնէ գիւղացի 510
Յունոն գ. 515
Յուսէին բդեշխ ֆընտըխ 425
Յուսէն Ջամուշչոնց 150
—փաշայ 134 50

— — Աւտի Ջալալ օղլի 136
— — Թաղթայ սաղկալ 136
— — Մուսուլաղ 142
տ. Յուսկան որդւոյ եկ. 119
Յուսուփ զաբայ 3
Յոր 210
Յոհաննենց այդի 149
Յոհաննէս Աւանուց 127
—Բրգութենց 502
—արքեպս. Գլակայ 497
— — Կարբեցի 447
—եպս. Դօշավանից 454
— — Մարաշեցի 539
—երէց 89
—Կարմիր 45
—միլլաթպաշի 535
ս.—Մկրտիչ. Կարապետ 272 484
—պատմագիր 491
—վ. 502
— — Կուրնացի 518 26 28 32
— — Համատանցի 30 1 3 5
— — Մխօեանց 540
— — Պօլսեցի 525
Յօնան վ. 523

Նազար 139
—ալի խան 162
Նաղե 213
Նազի Մոսէ 530
Նահապետ կաթ. 115 7 21 22
Նաղաշ վ. 47 71 497
Նամաթ 130
Նաման աղայ 149
—փաշայ Քօփրի օղլի 139
Նապի Հասան 136
Նատր 157 354
Ներսէս 53
—Բաղիշեցի 53
—Ե. կաթ. 437
—Լամբրօնացի 41 387
—կաթ. 85 6 119
— — Ասոյ 401 2
—վ. 4 8 111 464
— —Տարօնեցի 493
Նէմցէ 333 4 9
Նրվան 2
Նիկիական կանոնք 98
Նիկոգիմոս 461
Նիկոլայ Պաւլովիչ կայսր 450
Նիկողայոս 533
—արքեպս. Սեբաստիոյ 390—2 401
ս.—եկ. 37 503
—Համթեցի 62
—Հողդարցի 415
—վ. 485
Նինուէ 196 7
Նիշլի Ալիփաշայ 125 204
ս. Նշան եկ. վանք 33 104 390
— — Վարագայ 434
— — Սեբաստիոյ 434
Նորատունկեան Դանիէլ ուէս Զիարէթի 531
—Յարութիւն ամիրայ 480
Նորխտն գ. 425
Նոր Նախիջևան 465
Նորշէն 145 516
Նոր Ջուղայ 62 503
Նուպիացիք 70
Նուրատ 53 79
Նօհ աղայ 118 29 30 32

Շարան, Շապան 117 25
Շաթէր օղլի 143 9
Շահ Արազ, Շահապաս 73 124 61 77 503
Շահապ դարբին 27
Շահաստան 401
Շահզադէ կին 403
Շահէն Սամարճի Աբրահամի տղայ 146
Շահթահմազ, Նէադիր Շահամի 443
Շահմէջիդ 173
Շահնազարեան Խորէն 540
Շահպազ բդեշխ 203
Շահպանտար Խօճայ Սահակ 115
Շահստան 379
Շահրուհ 10
Շամախի 448
Շամամ 27
Շամ աշխարհ 67
Շամզդին միր Խօշապայ 125
—պարոն 119
Շամիրամակերտ 61 76
Շամիրամայ ջուր 123
Շամշադի տես Շրմըշդի

Շամշուլտոյ բերդ 123
Շայէն բդեշխ 203
Շատախ 189 91
Շատվան 11
Շատօ 117 26
Շարաֆ ամիր 21 2 3
—խան 114
Շաբիֆ պէկ 534
Շաւալի քուրդ ազգ 502
Շաւէլ 512
Շէխ փաշայ 518 19
Շէկ Միրզայ 114 26
Շէրիֆ փաշայ 535
Շէքար աղայ 148
Շրտրվկանցոց տուն 512 3
Շիրազ 160 4 7 73 83 5
Շիրակ, Գիւմրի 444 45 48 51 54
Շխամիր 21
Շմաւոն վ. Աեբաստիոյ 394
— — Տաթեւու 46
Շմզգին տէր Բաղիշոյ 4
Շմշտին 495
Շնոհվոր ծնող Ցովհ. կրօնաւորի 6
Շնքուոկու գիւղ, Շնքուաակ 61 71 395 500
Շուշի 448
Շբուան 30 72
Շօշ, աշխ. Պարսից 48

Ոհրան որդի Օսման սուլթանի 68
Ոսկի քոյր Թումայ Մինասենցի 13
Ոստան երկիր, -ցիք 15 16 24 153
— ք. 2 4 5 6 15 54 58 110 495
Որմի 131 38 46
Որոտ, -այ գաւառ 43 494
Ուլամ 19 21 27
Ունկոուզաց թաղտ, որ է Պուտուն 71
Ուչթափայ կամ Իւչթէփայ 453
Ուռուղ 50
Ուսումէլի 219 21 49 53
Ուռուս տես ռուս
Ուսկուն դուստր Իսաղ աղայի 139
Ուսուֆ աղայ Լօթոնց 129 30
— — Կասապ օղլի 142
— Ղարայ 58
— փաշայ 518 9
— — Ղարսեցի 137
— — Զաթրաւիլ օղլի 116
— — Զալապի 129
Ուրֆայ 539 43

Չալանգլի Ալի փաշայ 125 204
Չալապլի 104
—Ուսուֆ բդեշխ 205
Չալիք փաշայ 136 206
Չախալ 445
Չաղկական Մահմէդ բդեշխ 204
Չամչեան Միքայէլ 453
Չանդռ 131 205
Չարաֆիլ օղլի 127 204
Չաբքաս Մահմեգ բդեշխ 205
Չարխաջի 449
Չաւուշ պաշա 280 91
—պաշենք 135
Չէլէպի Բարդուղիմէոս 464
Չէնկիլէր գ. 307
Չրխալ օղլի Կարնեցի 518
Չիլինգիր Պետրոս 462
Չիման Չալապի Արապկերցի 127
Չիչագ 132
Չղուրաց կեարմաւ 518
Չրթաւ օղլի 125
Չօմար 104 124
Չօպան աղայ 138
—ամիրայ 463
— — Հովուեան 346
Չօրս 119 20
Չօրտախան 534

Պահճաճրք գ. 484
Պաղտասար Սամաթիացի 473
Պայազատ 39
Պայազետի երեք խորան 425 32
Պայազիտի սուլթան 71 394
— —իլտուրում 69
—որդի Սուլէյման խոնդքարի 72
Պաշ վազիր 75
Պասկեւիչ ֆաթմաշալ 450
Պասրա տես Բասբայ
Պատկան, -ցիք 512 3
Պատրկի վանք 5
Պարիկ աղայ 140
Պարսից թագաւորութիւն 67

Պարսկաստան 157 9 60 385 442 3 87 516
Պարսք 517
Պետրոս ամիրայ Ակնցի 265
—առաքեալ 260
ս.—առաքելոյ եկ. 128 30
—բժիշկ Քեօթահեացի 272
—Գետադարձ 384 6 9
—եպս. 46 343 4 6 464 517
— — ս. Նշանի 399 400
— — Սեբաստացի 400 502
—Երկանենց 461
—իշխան 189
—ղըպզճի օղլի 272
—ուզուն 276
—պատր. Երուս. 151
—վ. Բերդումեան 330
—վարժապետ 53
—ք. 495
Պեղիրճու արտ 420
Պիչխուր 391
Պլէճեան Կարապետ 526
Պողոտայ 265
Պոռ. 71
Պուլանուխ 515
— այ Ռըստամ կէտուկ 512
Պուլուտ Նեռն 425
Պուտախ Նահատակ 499
Պուրհանատ 393
Պսակ կամ Սահակ եպս. Սեբաստիոյ 386
Պրոկղ 187
Պրուսայ 297 301 3 6—8 41 431 60 66
Պօղոս առաքեալ 59 255
ս.—եկ. 139 498
—Կաղզուանցի (ք.) 207 315 39
—հայր Վարագայ 492
—պատրիարգ 432 70 78 80 1
— — Երուսաղէմի 466
—վ. 272 99
— — առջն. Պանրմայի 270—2
— — Անդրիանուպօլսեցի 466 7
— — Պրուսացի 211
—ք. 156

Ջագայիրք 1:6
Ջալալի 124
Ջալիլ Սօղըըթենց 150
Ջահվար բդեշխ Վանայ 203
Ջաղաթայ 3
Ջաղատ 495
Ջամուշ օղլի 113 204
Ջանգաղի արաբ 179
Ջանփօլադ փաշայ 64 125
—օղլի 107 204
Ջաւաթ խան 359
Ջաֆար բէկ 142 204
—խան 164 7 8 172—84 6
—փաշայ 34 48
— — Վանայ 110 1
Ջղիր 145
Ջհանշահ 123 497
Ջհանշէն 10
Ջղալ օղլի, Վանայ փաշայ 36 124
Ջնձելենց հարս 27
Ջուղայ Նոր 168
Ջրիք գիւղ 522

Ռաջապ 128 205 6
Ռասուլ աֆանտի 142
Ռափայէլ տիրացու 461
Ռէիզ էֆէնտի 475 83
Ռէիս Մուրատ խան 180
Ռէճիպ պէկ Ջառայ օղլի 423
Ռըշկանցոց տուն 513
Ռըշկօ 520
Ռշտունեաց երկիր 7 8
—կայսր 446 8 87
Ռուսաստան 449 83

Սագեխ խան 161 72
Սադղ խան Շամախու 448
Սաթապատ 186
Սալտմաստ, Սալմաստ 111 32 3 46
Սալնապատի վանք 105
Սախաղատէ Գրիգոր աղայ 471 2
Սահակ 78
—աղայ Ղարաօաֆարեանց 140
—արքեպս. 501
—գիւղ 525 32
—եպս. Էջմ. Նուիրակ 326
—սուրբ 348
— վ. 55
— —աթոռակալ 52
— —Ակնեցի 409
— —ծերունի 454

— —կեսարացի 405
— —Նուիրակ 462 4
—ք. 139
Սահրաա 28
Սաղաթիէլ 11
Սաղիմ 270 493
Սամաթիա 316 21 29 473
Սամաղար 390
Սամուէլ 123
—արքեպ. Պուրսայու 420
—եպս. 460
—օղլի Մաղաքիայ 276
Սամսոնի բերդ 272
Սայի 290
Սանահնու վանք 372
Սանկիփարան դ. 176
Սասնայ լեառն 44
Սասուն, -ցիք 511 22
Սատաֆլի Հասան 203
Սաաեխ խան 163 6
Սարամիր Խօջեկանց 136
Սարաֆ Էղօ 535
Սարգիս 44 46 330
—արքեպս. Երուս. 392
— — Կիպրոսի 106
—գիրք 155
—Գաւթի որդի 256
—եպս. Սառաֆեան 460
—վէքիլ Երուս. 461
—Կայֆաճի 145
—ուխտաշրջիկ 502
—սարկ. 7 8
—Սորբեցի 43 255
—սուրբ 6 13 14 74 86 400 2 51
— — Նշան 141
— վ. առջն. Նախավկայի վանից 485
— — Արծկեցի 47
— — Էրզրումցի 403
— — Թէոդուպօլսի 52
— — Կաֆայեցի 106
— — Կիպրացի Ջօլախ 106
— — Կոփեցի 119
— — Ձորոյվանից 46
— — տեսուչ Աստապայ 44
— — Տիգրանակերտցի 81
— ք. 156
Սարի Օմար փաշայ 204 5
—փաշայ 139
Սարխօշ Իբրահիմ 203
Աարհատ Բաղիշեցի 517
Սարուսուն 28
Սարօղլի 422
Սաւուղ 330
Սաֆար 109
—Ակնեցի 503
—Գուշակենց 136
—որդի Պեխի 499
Սեան լեառ 492
Սեբաստիա տես Սեւաստ
Սելիմ 39
—աֆանտի 145
—փաշայ 134 515 6
—Սելում, Սէլիմ սուլթան 502 13
Սեղբեստրոս 81
Սեյլիմ սուլթան 64 71
—որդի Սուլէյման Խոնդքարի 72
Սենեքերիմ, նոյն և Յօհաննէս Թագաւոր Արծրունեաց Վասպուրականի 7 101 23 53 383
Սերօվրէ դրէչ 353
—դերձակ 461
—եպս. 484
—պօզուճի 461
—օթուրախճի 278
Սեւադ ամիրայ Խլաթայ 496
Սեան կղզի 483 515
Սեւաստ ք. 16 58 61 71 101 2 97 377 383 491 2 99
—ու աաճիկ 48
Սէլիմ Խօնդքար 353
—փաշայ 205
Սէյիտ աղայ 143
—Ղասում որդի Ղլիճ Ասլանի 498
Սէրթիլ պահար 264
Սըլէման 516
Սըվազ 538
Սըվաճի օղլի Յակոբ 276
Սիլահտար Խալիլ փաշայ 206
Սիմէօն 4 6
— ամիրայ տէր Մովսէսի որդի 346
—արքեպս. առջն. Սիւնեաց Տաթեւի վանից 485
— —եպս. առջն. Թովմայ առ. վանից 485
— —աստուածաբան 6
—կամ Շմաւօն արքեպս. Սեբաստիոյ 393

—եան վարդապետք Ապարանցի 156
—կաթողիկոս 138 47 215 318 421 44 60
— —Սեբաստացի 402
—կրօնաւոր 9
—Ուշտունցի 15 16
—Սիւնեաց 45
—վ. 6 10 11 15 50 191 504
Սիօն եպս. 3 83
Սինագ Մուստաֆայ փաշայ 206
Սինան տաճիկ 117
—փաշայ 124
— —Ջղալօղլի 203
Սիսղան 164
Սիս քաղաք 10 41 46 58 69 86 123 388 92 3 7 402 73 97
Սիրուն Ալիւրցի 63
Սիւլէյման բէկ Չափանօղլի 422
—Կոջայ 213
—փաշայ Արծկեցի 135 206
—որդի Մահմուտի 512
Սիւնեաց Մարիամ 505
—Վասակ 505
Սլէհման խան ղաջառ 179
Սղգայ գեղ 107
Սմբատ արքայ 391 504
Սմրղանդ 69 123
Սողոմ 318
Սոկիւտլու 517
Սորփ գիւղ 495
Սուլամիշ զօրապետ 391
Սուլէյման խոնդքար 71
—Շամիրամակերտի բէկ 498
—սուլթան 113 4 23 26 395
Սուլթան Համիտ 263 66 319 33 37
—Մուրատ 401
—Սէլիմ 337 40 429
Սուրբ Նշան եկ. Ղուրուչէշմէի 463
Սուվաղ 123 39 538
Ս. Պետերբուրգ 488
Սուքայ 390
Սուքիաս ախտէր 461
— վ. 111
—առաջն. Շամախոյ 485
Սպահան 120 45
Սպանիա 462
Սպարտայ Լակէգէմոն կամ Միսիթրա 428
Սպապերտ ղաւառ 496
Սպիտակ ծով 263 4
Ստամպօլ տես Կ. Պօլիս
Ստեփան ծերունի 453
— Նալպանտ օղլի 258 61 63
Ստեփաննոս 33 52 65 108 505
—արքեպիսկ. 496
— — Սեբաստիոյ 392 3 494
—Գաւաշեցի 11
—եպ. 12 57 58 69 518
—Թաւրիզու 45
—Խաժակնեան 485
—կաթ. 117
— —Աղթամարի 498
—միայնակեաց 5
—Սպահանցի 117
ս. Ստեփաննոսի Անապատ 496
—Վարագայ առաջն. 33
— վ. 46 49 116 28 91 270
— —Եւդոկիացի 415
— —Զմիւռնիոյ 52
— —Հիղանցի 495
— — Մոկացի 154
— —որդի Յուսիկ քահ. 33
— —փիլ, աշ. Յովհան Որոտնեցու 8 9
—քահանայ Թիֆլիզեցի 465
Սրմաքէշ Հիւմբուզ 461 2
—պարոն 461
Սօգուգլու ձորագլուխ 455
Սօլոմոն քնեազ Երկայնաբազուկ Արղութեանց 372
Սօղանլուխ գ. 360
Սօղբաթ օղլի 141 44
Սօֆի Իբրահիմ 203
ս. Սօֆիայի եկ. 387
Սօֆիայ քաղաք 37

Վազիր քէհեասի Աւգբահման 205
Վաթալի խան 138
Վաղարշապատ 88
Վաղնգու գիւղ 43
Վան 4 6 10 15 20 24 27 28 34 54 58 59 61 63—5 76 79 103—6 108—120 122 148 188 203 6 38 1 494 5 501 3 5 33
Վանական վարդ. 42
Վանայ բերդ 24
—դաշտ 20
Վասակ սպարապետ 92